Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary



ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆՑ

ԳԱՂՏՆԻՔ ԱՐԱԲԱՂԻ

ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆՑ

ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ

Ստեփանակերտ - 2018

ՀՏԴ 94(479.25):82-94
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 457

Վերահրատարակման հեղինակ՝
Նելսոն ԱՎԱՆԵՍՅԱՆ

Բեկնազարյանց Ապրես
Բ 457 Գաղտնիք Ղարաբաղի: Պատմական հուշագրություն/
Ա. Բեկնազարյանց.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս»
հրատարակչություն, 2018.- 336 էջ:

Գիրքը վերաբերում է Արցախի պատմության ամենակարևոր ու առանցքային իրադարձություններին, որոնք հիմնականում ծավալվել էին 18-րդ դարում, երբ հայ ժողովրդի արցախյան հատվածը օտար տերությունների նվաճողական նկրտումների ու արշավանքների դեմ կենաց-մահու հերոսական պայքար էր մղում՝ հանուն իր անկախ ու ապահով գոյատևման: Հեղինակը ոչ միայն ականատես, այլև այս գրքի գործող հերոսներից մեկն է: Նա իր հոր՝ Արցախի քաջարի զավակ Աբրահամ Բեկնազարյանցի հետ եղել է ամենուր և գրքի զգալի մասը գրել է հենց նրա թելադրանքով:

Գիրքը ունի պատմական մեծ արժեք և նախատեսված է ոչ միայն պատմաբանների, այլև՝ հայ ընթերցող հասարակայնության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25):82-94
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-0770-7 © Բեկնազարյանց Ա., 2018

ԱՌԱՋԱԲԱՆ

Արցախի պատմության ամենակարևոր ու առանցքային իրադարձություններին վերաբերող այս՝ հայրենաշունչ ու լուսապայծառ հերոսներով հարուստ գրքի էջերը տասնամյակներ շարունակ հայ ընթերցողի աչքերին կարոտ էին: Ու այդպես էլ կարոտ կմնային, եթե անդադար պայքարով ու արարումներով լեցուն մեր օրյա արցախյան իրականության մեջ չլինեին ժողովրդի պատմության արժեքը գնահատող պետական այրեր, ոչ թե փողի ու կապիտալի, այլ՝ առաջին հերթին ազգի ներկայի ու ապագայի մասին մտատանջվող բարեսիրտ գործարարներ, իրենց նիստ ու կացով հասարակ, բայց Հայրենիքի հանդեպ սրտի ու մտքի հատուկ կարողությամբ օժտված մտավորականներ:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի վերահրատարակման ոգեկոչողն ու նախաձեռնողը Արցախի Հանրապետության պետական նախարար Արայիկ Հարությունյանն է:

Անսահման արևշատություն նրան՝ ում անմիջական հանձնարարությամբ անցյալ տարվա նոյեմբերին սկսեցինք՝ առաջին հայացքից դյուրին թվացող, բայց իրականում շատ ծանրակշիռ ու պատասխանատու այս աշխատանքը:

Գրքի վերահրատարակման ողջ աշխատանքը, սկզբից մինչև վերջ, ֆինանսապես հովանավորել են՝ «Ֆերզիտ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Խաչատրյանը (արցախյան պատերազմում ճարտարի դաշտային հրամանատարներից է) և Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաքի բնակիչ, հայտնի գործարար ու բարերար, ծնունդով ճարտարեցի Համլետ Համբարձումյանը:

Աշխարհաբարով շարադրված այս գրքի նյութերը ժամանակակից հայերենի վերածելու համար թարգմանչական ու տեխնիկական մեծ ծավալի աշխատանք են կատարել բանասերներ Կարինե Բախշիյանը, Անի Խաչատրյանը, Լուսինե Էլյազյանը, Սաթենիկ Ավանեսյանը, իսկ գրքի էջադրման և տպագրական տեսքի բերման պատասխանատու աշխատանքն իրականացրել է Մնացական Ազիզյանը:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն առաջին անգամ տպագրվել է Սանկտ Պետերբուրգի Սկորոխոդովի անվան տպարանում, 1886թ-ին: Երկհատոր այս գիրքը տպագրվել է բարեպաշտ ծերունի Առաքել աղա Ծատուրյանի հովանավորությամբ:

Գրքի հեղինակ է նշված Ապրես Բեկնազարյանցը, սակայն, ըստ առաջաբանի հեղինակ և գրքի թարգմանիչ, հնագետ, գրող, հոգևորական Մակար Բարխուդարյանցի, առաջին հատորը թելադրել է Ապրեսի հայրը՝ Աբրահամ Բեկնազարյանցը, Ապրես Բեկնազարյանցն ուղղակի գրի է առել: Իսկ երկրորդը գրվել է հոր ու որդու խորհրդակցությամբ: Մակար Բարխուդարյանցը, ուշադրության կենտրոնում պահելով իրադարձությունների զարգացումները, համոզված է, որ այս պատմագրության հեղինակը, այնուամենայնիվ, հայրն է՝ Աբրահամ Բեկնազարյանցը: Եվ, ըստ ամենայնի, Բարխուդարյանցը չի սխալվել, որովհետև հայր Բեկնազարյանցը երկար ժամանակ Ներսես կաթողիկոսի մոտ է ուսումն առել, նրա մոտ մնացել, որտեղից էլ տեղեկացել է Ղարաբաղի հոգևոր և այլ անցուդարձերին:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի՝ գրաբարով գրված բնօրինակը կորսված է, իսկ Մակար Բարխուդարյանցի աշխարհաբար թարգմանությամբ տպագրված գրքից շատ չնչին օրինակներ են մնացել՝ տարբեր թանգարանների անկյուններում: Եվ, եթե հաշվի առնենք, որ տպագրությունից պատմական կարճ ժամանակահատված անց Արցախում, Հայաստանում և ամենուր տիրում էր խորհրդային իշխանության մթության շղարշը, ապա պարզ է դառնում, որ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն տասնամյակներ ի վեր մնացել և մնում է հայ ընթերցող հասարակայնության լայն շրջանակների համար անտեսանելի ու չընթերցված:

Այդ հիմա է, որ սույն գրքում արձանագրված իրադարձություններն ու պատմական փաստերը մեզ համար գաղտնիք չեն: Այն տարիներին դրանք համարվում էին իշխող խորհրդային բռնապետության կողմից արգելված գաղտնիք: Եվ պատահական չէ, որ գրքի վերնագիրն է՝ «Գաղտնիք Ղարաբաղի»:

Հենց այդ գրքի գաղտնիքներից են մեր պատմաբանները քաղվածքներ ու հղումներ կատարել՝ միջազգային տարբեր ատյաններում արցախյան ճշմարտությունը քոչվոր կեղծարարների ու պատմության «քաղաքակիրք» աչքակապների աչքը կոխելու համար:

Այսօր հույժ կարևոր է, որ այդ գաղտնիքներն ու պատմական ճշմարտությունները ներկա և գալիք սերունդները իմանան ոչ թե մեր պատմաբանների կատարած քաղվածքներից ու մեջբերումներից, այլ՝ անմիջական աղբյուրից ու ամբողջական տեսքով: Մեր խորին համոզմամբ, ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է, որպեսզի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն դպրոցական ծրագրերում իր ուրույն տեղն ունենա՝ նմանատիպ այլ պատմական ու գրական ժառանգությունների հետ միասին:

Այսօր մենք չենք կարող համեմատել և իրականում տեսնել, թե սրանից մոտ 150 տարի առաջ Մակար Բարխուդարյանցին որքանով է հաջողվել «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ձեռագիր գրաբարյան լեզվից նույնությամբ վերափոխել աշխարհաբարի, քանի որ, ինչպես նշեցինք, գրքի բնօրինակը կորսված է: Սակայն հմուտ հնագետ, գրող Մակար Բարխուդարյանցի արժեքավոր աշխատություններն իրենց մասնագիտական կատարելությամբ և պատմական ճշմարտացիությամբ միշտ էլ աներկբայորեն հավաստիության համոզմունք են դրոշմել ոչ միայն հայ, այլև օտարերկրյա քննախույզ պատմաբանների վրա:

Ոստի, մեզ մեզ մնում էր անկասկածելի վստահությամբ արդի հայերենի վերածել-թարգմանել ոչ միայն Ապրես կամ Աբրահամ Բեկնազարյանցի, այլ արդեն-իսկ նաև՝ Մակար Բարխուդարյանցի այս հրաշալի աշխատությունը: Իսկ թե մեզ որքանով է հաջողվել. դա հնարավոր է տեսնել, քանի որ առկա է համեմատության օբյեկտը՝ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն՝ Մակար Բարխուդարյանի թարգմանությամբ ու խմբագրությամբ:

Հաջողվե՞լ է, արդյոք, թե՝ ոչ, սիրելի ընթերցող, ինքդ դատիր:

Իսկ մեզ մնում է երախտիքի սրտառուչ խոսք հղել նրանց, ովքեր նախաձեռնեցին, հովանավորեցին ու անմիջականորեն իրականություն դարձրին այս արժեքավոր, ազգանվեր ու հայրենաշունչ մտահղացումը, ովքեր 2-րդ ծնունդը պարգևեցին «Գաղտնիք Ղարաբաղի»-ին:

Նելսոն ԱՎԱՆԵՍՅԱՆ
«Գաղտնիք Ղարաբաղի»-ի
վերահրատարակման հեղինակ

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ես Շուշիում բնակվում էի վարձով, Կընդ-Դանունց[1] Սարգսի տան միջակայքում: Սպասավորս արդեն գնացել էր, և ես տանը միայնակ էի: 1881 թվականի մայիսի 5-ն էր, կեսօրին մոտ: Բացվեց սենյակիս դուռն, ու ներս մտավ գրեթե հարյուրամյա ալեզարդ մի ծերունի, բարևեց հարգանքով և նստեց թիկնաթոռին:

Ծերունին բարձր և ուղղաձիգ հասակ ուներ, գեղեցկաձև գլուխ, պատկառելի կերպարանք, հրապուրիչ դեմք, թավամազ հոնքեր, մեծ-մեծ աչքեր, հաստ բեխեր և փառահեղ ճերմակ միրուք: Ինքը տակավին ժիր էր, բայց, ինչպես նշմարեցի նրա շարժուձևից, կասկածամիտ էր ու երկչոտ: Ծերունու ձեռքերը դողդոջուն չէին, ինչպես պետք է հատուկ լիներ նրա զառամյալ տարիքին, միայն գլուխն էր արդեն մազաթափ: Այդուամենայնիվ, դեռ անկորուստ էին մտավոր ու մարմնավոր կարողությունները:

Զգեստները հնամաշ ու կարկատած էին:

Ծերունին թևատակից հանեց թաշկինակով փաթաթած մի ծրար և այն ներկայացնելով ինձ, ասաց.

- Ես լսեցի, որ դուք իմ համագյուղացին եք և ծերունիներից հետաքրքրվում, ուսումնասիրում եք Ղարաբաղի պատմությունը, այդ իսկ պատճառով հարցուփորձելով գտա և եկա ձեզ մոտ: Արդեն համարյա մեկ դարի է մոտենում, ինչ ես մասունքի նման պահպանում եմ այս «Գաղտնիք Ղարաբաղի» ձեռագիր մասունքը: Սրա մեջ թե՛ վտանգավոր շատ գաղտնիքներ կան և թե՛ անգին գանձեր Ղարաբաղի պատմության վերաբերյալ: Բայց այսուհետ կյանքիս համար այլևս չեմ վախենում, որովհետև մահս մոտ է արդեն, և վերջին գլուխը գրել-վերջացրել եմ: Համագյուղացու սերն ինձ քաշել, ձեզ մոտ է բերել: Հայրենիքը քաղցր է, քաղցրագո՛ւյն է ծննդավայրը և սիրելի՝ համագյուղացին:

---

[1] Կընդ՝ նշանակում է միայնակ, Դանի՝ Դանիել. Միայնակ Դանիել:

Այժմ «Գաղտնիք Ղարաբաղին» վստահորեն ձեզ եմ նվիրում: Դուք դրա լեզուն նախ աշխարհաբարի փոխեցեք, ապա տվեք հրատարակության, որպեսզի հասարակության համար դրա լեզուն դյուրըմբռնելի լինի: Հիմա աշխարհաբարն է գրական լեզուն, այլ ոչ թե գրաբարը, որը շատերին է անհասկանալի:

Իմ վերջին սրբազան կտակն այս է. համբերեք ևս երկու տարի, նոր միայն հրատարակությանը տվեք, եթե միայն արժանի կհամարեք և կհարգեք կտակս:

Ապա ծերունին, «Հավիտյան մնաք բարյավ» ասելով, հեռացավ: Շատ ջանացի, թախանձեցի մնալ, ցանկացա պատիվ տալ, վարձատրել, իմանալ անունն ու ազգանունը, բայց... իզո՜ւր:

- Իմ վարձատրությունը կլինի այն, որ տպագրության տաք այս ձեռագիրը, իսկ հարգանքն ու պատիվը կլինի այն, որ ճշտությամբ կատարեք իմ կտակն ու պատվերը: Անուն-ազգանունս կիմանաք ձեռագրից:

Սրանք եղան ծերունու վերջին խոսքերը, և նա հեռացավ իմ բնակարանից:

Մի պահ մնացել էի ապշած, թվում էր, թե տեսածս երազ է կամ երազանման մի երևույթ:

Կարոտով բացեցի բոլոր թերթերը և անհագաբար կարդացի ծայրեծայր:

Գրքի ձեռագիրը կազմավորված էր, թղթերը կապտագույն և հաստ էին, գիրքը երկար ու լայն էր, և փետրագրչով գրված գրերը գեղեցիկ ու հեշտ վերծանելի էին:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն առաջաբան չուներ, իսկ գրքի գլուխները համարակալվել էին այբբենական տառերի հերթականությամբ՝ Ա. Բ. Գ. Դ.... և շարունակ:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն բաղկացած էր երկու հատորից: Երկրորդ հատորում ժամանակագրական կարգով, գեղեցկորեն դասավորված են թե՛ պատմական անցքերը, և թե՛ տարբեր մարդկանց կողմից գրված նամակները: Առաջին հատորում ընդհակառակն է երևում՝ այսինքն, այն սկսվում է 1795 թվականից և հետ տանում մինչև Աղվանի առաջին թագավորի ծագումը: Մեր կարծիքով, եթե սույն հատորի դասավորությունը ևս ժամանակագրական կարգով դրվեր, ավելի լավ կլիներ, բայց մենք նույնությամբ անփոփոխ պահեցինք:

Առաջին հատորը գրված է Աբրահամ Բեկնազարյանցի թելադրությամբ և իր որդու՝ Ալբերս Բեկնազարյանցի գրությամբ, իսկ երկրորդը՝ Աբրահամ Բեկնազարյանցի կարգադրությամբ և հոր ու որդու խորհրդակցությամբ:

Այսուամենայնիվ, պատմագրության ղեկավարը միշտ եղել է հայրը:

Պարզ երևում է, որ Աբրահամ Բեկնազարյանցը երևելի պատմագետ է եղել: Ավելորդ է ասել, որ պատմագիտական այդ հմտությունը փայլում է ոչ միայն նրա բոլոր գրույցներում և խորհրդածություններում, այլև՝ Աղվանից երկրի իշխողների անունների դասավորության մեջ: Հմուտ պատմաբանն Աղվանի պատմություններից և այլ ձեռագիր աղբյուրներից քաղվածքներ անելով՝ մատնանշում է, որ Աղվանից երկրները նախ կառավարվում էին թագավորներով, ապա՝ նախարարներով, կրկին՝ թագավորներով, ապա՝ իշխաններով և միայն հետո՝ մելիքներով: Առանձին-առանձին գլուխներում հիանալի դասավորությամբ նկարագրված են թագավորների ծագումը, ծննդաբանությունը և հաջորդականությունը. նախարարներինը՝ առանձին, իշխաններինը՝ առանձին, մելիքներինը՝ առանձին: Սակայն հարկ է նշել, որ ոմանց գործերը համառոտ նկարագրված են, իսկ ոմանցը՝ լռության մատնված:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն, ինչպես ամենաջինջ հայելու մեջ, ընթերցողների աչքի առջև պատկերում է այն բոլոր գաղտնի հարաբերությունները և քաղաքական ձգտումները, որոնք ունեցել են Ղարաբաղի հայ հարազատ-մելիքները միմյանց հետ, հարազատ-կաթողիկոսները և մելիքները Ռուսաց հետ, ռուսները հայերի հետ, ճրո-խանները ճրո-մելիքների հետ և սրանք նրանց հետ, Պարսից շահերը և շահ-ժառանգն Անդրկովկասի բոլոր խանների հետ և Հյուսիսային Դաղստանի հոգևոր և աշխարհիկ գլուխների հետ և վերջիններս՝ առաջինների հետ:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն պատմական անհերքելի փաստերով ապացուցում է հայերի ծայրաստիճան հավատարմությունը և թուրք ու պարսիկ խանների ու նրանց ժողովրդի ծայրաստիճան անհավատարմությունը Ռուսաց դահի հանդեպ: Շոշափելի փաստերով հաստատում է, որ Մելիք Ադամյան մելիք Մեժլումն Աղա-Մամատ-Շահին միավորվել և զինվել է ոչ թե ի դեմ ռուսների, այլ Իբրահիմ ճրո-

խանից և վրաց Հերակլ թագավորից վրեժ լուծելու նպատակով, քանզի նրանք նախապատրաստվում էին սպանել իրեն ու Մելիք-Ա-բով Գ-ին: Այսքանը մատնանշելով՝ ցույց է տալիս հայ քաջերի դյու-ցազնական քաջագործությունները, որոնք կատարվել են թե՛ ճըռ-խանների դեմ, թե՛ ռուս-պարսկական պատերազմներում, և թե՛ Հյու-սիսային Դաղստանում և այլուր:

Հեղինակի ամենագովելի հատկություններից մեկն էլ այն է, որ բոլոր նամակների և շահական հրովարտակների պատճենները նույ-նությամբ, ժամանակագրական կարգով զետեղել է «Գաղտնիք Ղա-րաբաղի»-ի մեջ, որպես անհերքելի և շոշափելի փաստեր:

Եղիշեի ոճի նման գեղեցիկ, գրաբար էին հեղինակի գրածները: Վատ գրաբար չէին մելիք Մեժլումից, մելիք Աբովից, մելիք Ադամ Բ-ից, Ներսես վարդապետից/կաթողիկոսից/, Տեր Աբրահամից, Մե-լիքսեթ եպիսկոպոսից և Աբրահամ Բեկնազարյանցից գրված նա-մակները: Իսկ մյուս մելիքներից և մասնավոր անձանցից գրված նա-մակներն ամբողջապես գրված էին Ղարաբաղի գեղջկական բարբա-ռով և ոճով, որոնք անհասկանալի էին հասարակությանը: Թերևս այս է պատճառը, որ վաստակաշատ հեղինակը հորդորելով իրա-վունք տվեց մեզ աշխարհաբարի փոխադրել «Գաղտնիք Ղարաբա-ղի»-ն, որպեսզի հասկանալի լինի հայ հասարակայնությանը:

Իմ կարծիքով, ցանկալի կլիներ նույնությամբ տպագրել տալ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն: Բայց այդ դեպքում հարկ կլիներ գրքի երկու ծավալի չափ ծանոթություններ ավելացնել Ղարաբաղի գյու-ղական բարբառային, խոսակցական, հասարակությանն «անմարսե-լի» բառերը բացատրելու համար: Ով կարդացել է «Արազը տարին կտարի» գիրքը, նա լիովին կհամոզվի, որ Ղարաբաղի գյուղական բարբառով և ոճով գրվածներն անմարսելի կերակուրներ են ոչ միայն ղարաբաղցի հայ հասարակության, այլ նույնիսկ գիտական ոլորտի մարդկանց համար:

Պարսկերեն և թրքերեն գրված նամակները թարգմանելու ժա-մանակ հեղինակը, որքան հնարավոր է, դրանք հայերենացրել է: Բայց դարձյալ տեղ-տեղ նշմարվում էին թրքական և պարսկական ո-ճի հատուկ ճապաղ և տաղտուկ ձևերը:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն կարող է մեծ լույս սփռել ոչ միայն Ղարաբաղի, այլև Ռուսաց Անդրկովկասի պատմության մութ իրա-

դարձությունների վրա, որոնք, գաղտնի կատարված լինելով, մնացել էին անհայտության մեջ:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն արժանի՞ էր լույս տեսնելու, թե՞ անարժան, պատմությո՞ւն է, թե՞ պատմական վեպ, ընտի՞ր գործ է, թե՞ ոչ, այդ վճիռները մենք թողնում ենք հմուտ պատմաբանների անաչառ քննադատությանն ու որոշմանը:

Մենք, մեր կողմից, առանց մի բառ անգամ ավելացնելու և պակասեցնելու, առանց նրա ոգին ու իմաստներն աղավաղելու, թարգմանեցինք:

Մեր կողմից ավելացրեցինք ծանոթություններ, ուր հարկ եղավ պարզելու որոշ բառերի և իմաստների մթությունները:

Այս ամենը հայտնելուց հետո, ցավոք սրտի, ստիպված ենք հայտնել նաև, որ «Գաղտնիք Ղարաբաղի»-ի բնագիրը կորսված է: 1884 թվականի օգոստոսի 30-ին Մահտեսի Բալա Զաքարյանցի տնից Դավիթ բեկ Գրիգորյանցի տուն փոխադրվելու ժամանակ, երեկոյան մութին, բեռնակիրների անզգուշության հետևանքով ծրարից ընկնում են ձեռագիրն ու հինգ տպված գրքեր՝ մի փոքրիկ «Սաղմոս», «Հացի խնդիր», «Կռվածաղիկ», «Ա. Հատոր ընդհանուր պատմության» և «Դյուցազնական աշխարհ»:

Հետևյալ առավոտյան, գրքերը տեղավորելիս, երբ իմացանք կորստի մասին, անմիջապես երեք մունետիկների միջոցով այդ մասին հայտարարեցինք քաղաքի բոլոր թաղերում և շուկաներում՝ մեծ պարգև խոստանալով գտնողին: Սակայն ապարդյուն անցան բոլոր փնտրտուքներն ու պարգևների խոստումները:

Մեր սիրելի ընթերցողներին այս ամենը հայտնելով, մնամ Հայոց խոնարհ ծառա՝

Մակար Վ. Բարխուդարյանց[1]

---

[1] Մենք մեր նախկին առաջաբանը չէինք փոխի, եթե կորսված չլիներ «Գաղտնիք Ղարաբաղի»-ի բնագիրը: Բնագրի կորստից, ցավոք սրտի, ստիպված փոխեցինք մեր նախկին առաջաբանը:

ԳԱՂՏՆԻՔ
ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՏՈՐ Ա.

«Ինչ որ մենք մեր աշխով պետանք ի ականջներով լսեցինք ականատես ի պեղյակ անյանցից՝ գրեցինք յեղհամար, որպէսզի, յեր նախնյաց վաքագործո-ղյո-նները կարդալով, խրախո-ովէք ի, հեպ-որդ լինելովնրանց օրինակին, որ-ի ի պաշտպանէք Հայ Եղը, Հայ Եկեղեցին...

Աղրե Բեկնազարյանց»։

Ա.

Ծնողներս բնակվում էին Ղարաբաղի Խաչեն գավառի Խնածախ գյուղում: Հայրս՝ Աբրահամ Բեկնազարյանցը, ուսումն առել էր Ներսես կաթողիկոսի մոտ, երկար ժամանակ մնացել այն-տեղ և պատմություններ սովորել Ղարաբաղի հոգևոր և աշխարհիկ կյանքի վերաբերյալ: Ներսեսը նախ Երից-Մանկանց վանքի կաթողիկոսն էր, իսկ հետո՝ Գանձասարի վանքի:

Հայրս վանքից դուրս գալուց հետո, նախ Ջրաբերդի Մելիք-Ադամի զինվորը, ապա զորավարը դարձավ, իսկ հետո ծառայությունը շարունակեց նրա որդի՝ Մելիք-Մեժլումի մոտ: Հայրս մի բարձրահասակ, գեղեցիկ և ուժեղ տղամարդ էր, առանց զենքի տեղից բնավ չէր շարժվում: Եկեղեցի գնալիս, անգամ կրում էր իր աղեղնաձև թուրը, մեծ երկսայրին, զույգ ատրճանակները, գեղեցիկ վառոդեղջյուրը և գնդակաշարանը: Իսկ քնած ժամանակ, թեև սակավ էր մնում տանը, զենքերը պահում էր բարձի տակ: Նա իր ծոցում միշտ պահում էր մի փոքրիկ սաղմոս, պղնձյա մի փոքրիկ թանաքաման, գրիչ, մի քանի սպիտակ թուղթ, մի քանի ամենակարևոր ու գաղտնի նամակներ և մի փոքր ձեռագիր պատմություն: Հայրս ձմռանը տանն էր լինում, իսկ գարնանը, ամռանն ու աշնանը՝ Գյուլիստանի, Ջրաբերդի և Խաչենի հարազատ մելիքների[1] ճրռ-խաների ու ճրռ-մելիքների դեմ մղված պատերազմներում:

---

[1] Հեղինակը հարազատ է անվանում այն իշխանությանը, որը ծագել և շարունակվել է շատ հնուց՝ որդվոց-որդի: Իսկ «ճրռ»-ը Ղարաբաղի լեզվաոճում նշանակում է՝ վայրի, չպատվաստված պտղատու ծառ. օրինակ՝ ճրռ տանձի, ճրռ խնձորի և այլն: Սակայն գրքի մեջ այս բառը գործածվում է կեղծ, շինծու և անհարազատ, խորթ բառերի նշանակությամբ, որովհետև այդ խաներն ու մելիքները ոչ թե իրենց պապերից էին ժառանգել տիտղոսները, այլ դրանք ձեռք էին բերել ավազակությամբ և իրենք իրենց խան կամ մելիք կոչել: Առայսօր Շուշիում գործածվում են Ճրռ-Մելիքենց, Ճրռ-Նազարենց և այլ նմանատիպ մականուններ:

Մայրս՝ Հերիքը, մեր գյուղացի Իսա-խանի[2] աղջիկն էր: Նա բարձրահասակ, գեղեցիկ և երկար ծամերով կին էր և միշտ զբաղված էր տնային գործերով: Երբ հայրս մեկնում էր պատերազմի, մայրս մեզ տանում էր իր հոր տուն, որտեղ մնում էինք մինչև հորս վերադարձը:

Ես մեծ եռանդով սովորում էի մեր գյուղի Աբրահամ[3] քահանայի մոտ: Սաղմոսը, Ավետարանը, Ժամագիրքը, Եղիշեն և Քերականությունն էին իմ դասագրքերը: Հինգ տարում ավարտեցի այդ գրքերը. վարժապետիս վկայությամբ հիմնավոր սովորել էի՝ մանավանդ, գրաբար քերականությունը: Սաղմոսի վրա սովորել էի վարժ կարդալ, Ժամագիրքը և Քերականությունն անգիր էի անում և արտասանում, իսկ Եղիշեն և Ավետարանը հաճախ կարդում էի և մեկ-մեկ վերլուծում՝ քերականության կանոնները լավ ըմբռնելու համար: Անունների և դերանունների բոլոր հոլովները, բայերի խոնարհումը պատասխանում էի և՛ գրավոր, և՛ բանավոր, քանի որ այդպես էր ուսուցչիս դասավանդման եղանակը:

1795 թվականի մարտի 20-ին մայրս մահացավ ծննդաբերության ժամանակ: Ութ օրից հետո մեռավ նաև իմ նորածին եղբայր Մեժլումը: Դժբախտաբար, ասես թե մորս հետ, մեռավ և իմ կարդալու ու գրելու եռանդը: Անօգուտ անցան հորս խրատները, խորհուրդները, հորդորները, խոստումներն ու սպառնալիքները՝ իմ մեջ գրի և ընթերցանության հանդեպ կրկին սեր առաջացնելու համար: Մորս մահվան կսկիծը ցամաքեցրել էր այդ սերն ու եռանդը:

Նույն թվականի մայիսին ամբողջ Ղարաբաղով մեկ, բերնեբերան թռչելով, տարածվեց գույժ այն մասին, որ «Ախտայ-Շահը[4] Խուտափերինի կամրջով անցել է Երասխ գետը, անթիվ

---

2 Հայ է և առայսօր ասվում է՝ Իսա-խանենց տուն:

3 Այս քահանան թեև վախճանված է, սակայն նրա անունը առայսօր փայլում է և հաճախ է հիշվում:

4 Աղա Մամատ-Շահը, որ Ղաճար Մամատ-Հասան-խանի որդին էր, ներքինի է եղել, որի պատչառով էլ մարդիկ նրան «Ախտայ» էին կոչում:

սարվազներով գալիս է Շուշին կործանելու և Ղարաբաղը կո-ղոպտելու: Ամեն մարդ թող տեսնի իր գլխի ճարը»:

Սոսկալի երկյուղն ու տագնապը պատեց Պարսից շահե-րի հաճախակի արշավանքների դառնությունները կրած Ղարա-բաղի հայ հասարակությանը: Երկար մտածելու ժամանակ չկար: Գյուլիստանի և Ջրաբերդի հայ հասարակությունն ամրացավ Ջրաբերդում (Ջրաբերդ էր կոչվում նաև գավառը): Խաչենի հյուսիսային ժողովուրդը պատսպարվեց իր անառիկ Կաչաղա-կաբերդում, որ կոչվում էր նաև Սաղսաղանի Ղալա: Իսկ հարա-վային մասը շտապեց Շուշի. այստեղ պատսպարվեց նաև Դիզա-կի և Վարանդայի ժողովուրդը: Շուշիի Իբրահիմ ճըռ-խանի հետ միացած էին հարազատ մելիքներ՝ Գյուլիստանի մելիք Աբով Գ-ն և Վարանդայի Մելիք-Շահնազարյանը, մելիք Ջիմշուտը և Խնձորստանի ճըռ-մելիք Միրզախանյանը, ճըռ-մելիք Ալլահ-վերդին և Գյուլ-Եաթաղի[1] ճըռ-մելիք Առստամն իր զորքերով: Ջրաբերդի հարազատ-մելիք Ադամյան Մելիք-Մեժլումը միացել էր Աղա-Մամատ-Շահի հետ:

Մեր գյուղի, Խնածախի ժողովուրդը ևս ամրացավ Շուշիի բերդում, որը երկու ժամվա հեռավորություն ուներ մեր գյու-ղից: Շուշին լի էր գավառացի ժողովրդի հոծ բազմությամբ:

Խեղճ գավառացին ստիպված էր ամեն ինչից առաջ Շուշի փոխադրել իր գերդաստանը և թշնամու հարձակումներից ա-պահովել նրա անվտանգությունը: Բայց այդ գերդաստանները պահելու համար ալյուր, ուտելիք էր պետք: Պատերազմը երկար տևելու դեպքում ժողովուրդը կարող էր սովից մեռնել: Եվ քա-նի դեռ Շուշիի և գավառի միջև ճանապարհներն ու հաղորդակ-ցությունները խզված չէին՝ ամեն ջանք գործ էր դրվել պաշար պատրաստելու և կուտակելու համար:

Ինչպես Շուշիի մերձակայքում ապրող գյուղացիները, այնպես և խնածախցի ու պայլուճեցի հայ քաջերը ձիերով իջան

---

[1] Ղարաբաղի բարբառում «գիլ» նշանակում է «գայլ», իսկ թուրքերեն «եա-թաղ»-ը՝ «որջ». այսինքն՝ «գիլ- եաթաղ» նշանակում է «գայլի-որջ»: Այժմ ևս այդ տեղը կոչվում է «Գյուլաթաղ»: Հասարակությունը այս մականունը տվել է թերևս ի նախատինս ճըռ-մելիքության՝ «Գայլի որջ»:

գյուղերը ալյուր և պաշարեղեն փոխադրելու Շուշի: Արծվի ա-
րագությամբ բերդից ոտքով վազեցի և Քարհատ կոչված տե-
ղում հասա հորս, ով այս ձիավորների մեջ էր: Հայրս ինձ տես-
նելուն պես բարկությամբ գոչեց.

- «Ապրե՛ս, այս ինչ երեխայություն է: Այդքան անզգա
գտնվեցիր, որ ժամանակի հրամայականի և թշվառ հորդ վշտա-
լի զգացումների այս պահին, այս վտանգավոր ժամին, հանդգ-
նելով, մինչև այստեղ վազեցիր միայնակ»:

- «Ավելի լավ եմ համարում պատերազմի դաշտում՝ քեզ
հետ մեռնել, քան թե բերդում միայնակ ապրել, առանց քեզ:
Հայրս էլ ես դու, մայրս էլ. բացի քեզանից ոչ ոք չունեմ Շու-
շիում»,-պատասխանեցի ես հաստատակամությամբ:

Վերջապես, ինձ ետ վերադարձնելու համար, հորս ինձ
տված ամեն մի հորդոր, խրատ, պարգև, խոստում, սաստում և
սպառնալիք ապարդյուն եղան, իսկ ես իմ համառության մեջ՝
անդրդվելի: Այս տողերը գրելով՝ ես կամենում եմ համառու-
թյանս, անհնազանդությանս պատճառը խոստովանել և հայտ-
նել ընթերցողներին: Մեռած էին մայրս և երեք եղբայրներս, ո-
րոնցից մեկն ինձնից մեծ էր, իսկ երկուսը՝ փոքր: Սերս ամփոփ-
ված էր միայն հորս մեջ: Ահա սա էր համառությանս միակ
պատճառը:

Մորեղբայրս՝ Օշափ Բաղդասարն իսկույն ինձ առավ և
դրեց ձիու գավակին, և սրընթաց հեռացանք: Հայրս ցավագին
ձայնով ասաց իր ընկերներին.

-Սիրելի՛ քաջեր, հավատացեք ինձ. այս տղան կամ ճակա-
տագրից մղվում է մահվան գիրկը կամ առաջնորդվում է դեպի
երջանիկ ապագա:

Ջրաղացները լի էին աղուններով. հարկ էր սպասել կար-
գի: Մեր գյուղացիները բաժանվեցին երեք մասի, որոնցից մի
մասն անընդհատ ալյուր էր պատրաստում, մի մասն այն փո-
խադրում էր Շուշի, իսկ երրորդը գյուղում պատրաստում էր
կորկոտ, ապուխտ, աղի ու ձվի հոգս անում, հավաքում ցրված
կովերը, եզները, երինջները՝ բերդ փոխադրելու համար: Երեք օ-
րում ամեն ինչ փոխադրված էր:

Չորրորդ օրը, որ ավելի երկյուղալի էր, ամենքս հավաքվեցինք գյուղում: Նախ Գայլ Օհանն ուղարկվեց Ծակ-Քարի բարձրությունից դիտելու թշնամու երևացող կողմը, որպեսզի, եթե վտանգ նշմարեր, իսկույն ազդարարեր: Ապա յուրաքանչյուր ոք իր տան երկաթե, պղնձե և փայտե ամաններն ու գործիքները, որոնք դասավորված էին տարբեր տեղերում, սկսեցին թաքցնել ստորեկրյա և դատարկ հորերում, հարդանոցներում և հավաքներում, որպեսզի չգտնվեն ասպատակների հետախուզության կողմից: Մարդիկ ամեն ինչ թաքցրած և հորերի բերանները չոր ու թանձր փոշի ցանած՝ պատրաստ էին վերջին բեռները բեռնել և Շուշի գնալ: Եվ ահա Գայլ Օհանը ոռնաց գայլի նման:

Ձիերն իսկույն բեռնվեցին և ամենքս փութով հասանք Ծակ-քար: Խնածախի արևմտյան կողմից, գյուղի եզրին կար բավականին բարձր լեռակ, որի գյուղահայաց լանջը խիստ ապառաժոտ էր, իսկ մնացած երեք լանջերը՝ թավախիտ անտառուտ: Միայն լեռնակի գագաթի վրա կար սքանչելի դիրքով մի գեղեցիկ սարահարթ, իսկ գյուղահայաց կողմի գագաթի մոտ՝ մի գեղեցիկ քարայր, որ կոչվում է Ծակ-քար:

Բեռներն իջեցրինք, ձիերը կապեցինք անտառի խորքում և ամենքս հավաքվեցինք Ծակ-քարում: Այդտեղից երևաց սարվազների ահագին բազմությունը, որոնց հետ տեղացի թուրքեր ևս կային: Այս զորքը մի հատուկ մարդու առաջնորդությամբ հասավ մեր գյուղ: Ես չէի վախենում այդ հրոսակներից, այլ, ինչպես տղայական հասակին է հատուկ, հավատում էի, որ միայն հայրս կարող է ամբողջ տիեզերքի դեմ կռվել և հաղթել: Մեզ հետ էին մեր գյուղի ամենաքաջ տղամարդիկ՝ Գայլ-Ուհանը, Կայծակ-Վանին, Տեով-Գասպարը, Քերվանդռան-Բրուտը, Զափար-Սարասարը, Ազնաուր-Ուհանը, Օշափ-Բաղդասարը, Կարկուտ-Սմավոնը, Քեանդուխտի-Խաչատուրը, Ասլան-Մանուչարը, Աժդահա-Անդրին, Զարպազան-Եուղուրլուն, Նեառաթեով-Աթան, Տեանմազ-Բելլուն, Պրախմազ-Օսեփը, Թոփուզ-աշղ-Ղարան, Փիղ-Առուշանը,

Շահմար-Ղավազը և Սենկեար-Ասրին, որին նաև Քոսակ Ասրի էին կոչում[1]:

Պալլուճեցի վաթսուն տղամարդ, որոնք ալյուր էին տանում բերդը, հանկարծակիորեն հանդիպեցին սարվազներին՝ մեր գյուղի տակի նեղուցում: Կռիվ սկսվեց: 300 սարվազ ջարդվեց, հայերից երկուսը սպանվեցին, իսկ մնացածները, ձիերը հեծնելով, փախան հետ և ազատվեցին:

Թեև մի քանի փոշնի ծառեր Ծակ-քարի գոյությունը անտեսանելի էին դարձնում, սակայն սարվազներից մի գունդ գալիս էր այս քարայրի վրա: Հայրս աճապարանքով ինձ տարավ քարայրի խորքը և պատվիրեց բնավ չշարժվել տեղից: Մի քանի րոպե անցած՝ լսեցի պատերազմի փողերի ձայները:

Բ.

Հայրս իր ընկերներին իրազեկեց, որ Իբրահիմ ճըռ-խանի մատը խառն է այս արշավների մեջ՝ ասելով, թե սարվազների առաջնորդը նույն ճըռ-խանի ներքին մտերիմ Խատամազն է, ով զորքն առաջնորդում է ուղիղ դեպի քարայրը: Իբրահիմ խանը, իմանալով, որ մենք եկել ենք ալյուր և պաշար փոխադրելու, հարմար ժամանակ գտավ և ուղարկեց իր հավատարիմ հպատակ թուրքերին մեզ կոտորելու, որոնք Սարու-Ճալլուեցիք, Աղտամեցիք, Քեապիռլեցիք և Ջիվանչիրեցիք էին: Պատճառները հետո կիմացվի: Հայրս հրամայելով՝ պատվիրեց.

-Տղե՛ք, պատրաստվեցեք և իմ հրամանին սպասեցեք. այնպես նշան արեք, որ պատերազմի դաշտում վիրավոր չթողեք, այլ՝ միայն սպանված:

Կրկին հնչեցին թշնամու փողերի ձայները և որոտացին հրացանները:

---

[1] Այս մականուններից շատերը մինչ այսօր մնացել են Խնածախում, ինչպես օրինակ՝ Գայլ-Ուհան, Բելլույանց, Եուղուրլուանց..., իսկ դրանց մի զգալի մասն էլ մոռացված է:

-Օ՜, կրակեցե՛ք, անվրեպ նշա՜ն, անկորուստ գնդա՜կ,- գո-չեց հայրս:

Պատերազմը հետզհետե սաստկանալով՝ բավական երկար ժամանակ տևեց: Ես ոչինչ չէի տեսնում, այլ միայն լսում էի գն-դակների վզվզոցները և հրացանի ձայները: Քանի որ Թշնամու տեղը լանջի տակ էր, իսկ մերոնցը՝ լանջի գլխին, հակառակոր-դի գնդակները քարայրի ապառաժներին զարկվելով՝ անօգուտ ոչնչանում էին, իսկ մերոնց գնդակները անվրեպ զարկվում էին նշաններին: Հետզհետե նվազեցին խլացուցիչ որոտումները և գնդակների սուլիչ ձայները: Բայց քարայրը լի էր ծխով և անա-խորժ վառոդահոտով, և ես խիստ նեղվում էի: Շունչս կտրվում էր օդի հեղձուցիչ ապականությունից, իմ վիճակն անտանելի էր: Հայրս ստեպ-ստեպ հրամայում էր.

-Դե՜, իմ քաջեր, արագ, արագ լցրեք և շուտ շուտ կրակե-ցեք. Թշնամին պարտվեց...

Հայրս ինձ քարայրից դուրս հանեց: Թշնամին արդեն պարտվել էր, բայց նրանցից մի գունդ ևս նույն տեղով գալիս էր մեզ վրա: Սպառվել էին մեր վառոդն ու գնդակը. մենք պետք է գնայինք անտառի խորքը, ամբարից վերցնեինք շատ վառոդ և գնդակ, միանայինք Պալլուճեցի մեր քաջերին և վերստին պա-տերազմեինք:

Աճապարելով հեռացանք քարայրից և շարժվեցինք դեպի վառոդամբարի տեղը, որը պատկանում էր միայն Խնածախ և Պալլուճա գյուղերին: Սոսկալի՜ տեսարան. այդտեղ մենք մեզ գտանք Թշնամու մի այլ գնդով պաշարված: Հետ դառնալ ան-կարելի էր. չկային վառոդ ու գնդակ: Մենք մնացել էինք երկու սրերի արանքում: Ծակ-քարը գրավված էր մեր ետևի Թշնա-մուց, իսկ անտառի մուտքը՝ առջևի Թշնամուց:Հայրս մի ակն-թարթում որոշեց իր անելիքը: Նեառաթեովը հորս ակնարկած մի նշանով իր վրա վերցրեց զորավարության պաշտոնը: Նա խրոխտ ձայնով գոչեց. «Տղե՛ք, հանեցեք թրերը, գլխատեցեք Թշնամուն: Խիտ արտերն այդպես են հնձում: Առա՜ջ, առա՜ջ, դեպի անտառն առա՜ջ, օ՜, առաջ»: Զարպազան-Եուղուրլուն ևս կրկնեց. «Առա՜ջ, առա՜ջ»: Սար ու ձոր ընկած արձագանքն

անդրադարձվելով բազմապատկեց «Առա՛ջ, առա՛ջ» բառերը: Կարծես, թե թշնամու գնդապետը հասկանում էր հայերեն, և իսկույն գոչեց պարսկերեն լեզվով, հրամայելով իր զորքին. «Խիտ, խիտ, խիտ առ խիտ»:

Թշնամու զորաշարքերը խտանում էին անընդհատ, մեր-ոնք սուսերամերկ հարձակվեցին խտացող այդ զորաշղթայի վրա, երկու մասի ճեղքելով, անվնաս անցան և հասան անտառ: Թշնամին զորքի թվով հիսուն անգամ ավել էր մեզանից և անկասկած, հավատում էր, որ մենք իր գերին ենք արդեն: Բայց վերջում նա սարսռաց այս թեթև հայ խմբի անակնկալ հարձակումից, ուժգին ընդհարումից, անդիմադրելի մղումից և արագաշարժությունից. սարահարթի վրա թշնամին մեծ կոտորածի էր ենթարկվել մեր կողմից: Սակայն հարկ է ասել, որ այս քաջագործությունն այնքան շուտափույթ կատարվեց, որ թշնամին մնաց բոլորովին ապշած և զարմացած:

Հայրս բնավ չմասնակցեց այս երկրորդ պատերազմին, որի միակ պատճառն այն էր, որ նա ինձ առնելով իր գիրկը նստել էր կաղնու ծառի տակ: Մեր այս թաքստոցը չնկատեց շփոթված թշնամին: Երբ վերջացավ երկրորդ պատերազմը, հայրս ինձ առնելով, տարավ գնդապետի մոտ ու իր բոլոր զենքերը մերկացնելով, դրեց նրա առաջ և ասաց թուրքերեն. «Բարի գնդապետ, միակ և սիրելի զավակիս սերը հանձնում է ձեզ Աբրահամ Բեկնազարյանցի զենքերը»: «Գնդապետն այնքան տմարդի չէ, որ ձեզ նման քաջ տղամարդու զենքերն առնի այսպես և քաջություն համարի: Եվ գնդապետը ձեզ հետ է դարձնում այդ զենքերը ձեր սիրելի զավակի կյանքի հետ միասին»,- պատասխանեց գնդապետը նույնպես թուրքերեն լեզվով:

Հայրս, որ իր կյանքում բնավ հաղթված չէր՝ հաղթվեց սիրո թելադրանքից և տկարաբար անձնատուր եղավ թշնամուն իմ կյանքը մահից ազատելու համար: Հորս նվաստության միակ առիթն իմ անհնազանդությունն էր: Այնուամենայնիվ, հայրս չափազանց ուրախ էր ոչ այնքան իր զենքերը կրկին հետ վերցնելով, որքան գնդապետի վեհանձնությամբ և իմ ազատությամբ:

Գնդապետը մի միջահասակ, գեղեցկադեմ, ազնիվ տղամարդ էր՝ համարյա 40 տարեկան:

Չեմ կարող չպատմել մի երևույթի մասին, որը սոսկալի երկյուղով ազդեց իմ սրտի, մտքի և երևակայության վրա. դա դիակների տեսքն էր: Սպանվածներից ոմանց գլուխները հեռացած էին մարմիններից, ոմանց գագաթներից մինչև պարանոցները երկու մասի բաժանված, ոմանց աջ ուսից դեպի ձախ կողմը, ոմանց ձախից դեպի աջ կողմն էին ճեղքված և շեղակի ու խառնիխուռն ընկած էին իրար վրա:

Գնդապետը նշմարելով իմ այս սոսկումը՝ հրամայեց հավաքել դիակները, հաշվել ու թիվը բերել իրեն, հետո վերցնելով ինձ և հորս՝ մեկուսացավ, որպեսզի իմ տեսադաշտից հեռացնի այդ երևույթը:

Ծակ-Քարի կողմից չէր երևում թշնամու հարձակված գունդը, քանզի երկնչելով այդ անմատչելի դիրքից՝ հետ էին քաշվել:

Հանկարծ ձիերի դոփյուններ լսվեցին այն կիրճում, որից գնդապետը սարահարթ էր բերել իր զորքը: Գնդապետը, կարծելով, թե հայ խումբն էր եկողը, ստվարացած զորքով հրամայեց պաշտպանողական դիրք բռնել: Բայց շուտով հանդարտվեց, երբ ճանաչեց Աղա Մամատ-Շահի սուրհանդակին:

Գ.

Եկող ձիավորներն էին Շահի սուրհանդակը, Մելիք-Մեժլումի սուրհանդակ Կաքև-Զաքին և Շեյթան-Թյունին: Առաջինը մի նամակ հանձնեց գնդապետին, իսկ երկրորդը՝ հորս: Ահա երկուսի պատճենները:

Աստծով
Աղա-Մա-
մատ խան:

«...Մեր սիրելի գնդապետ Հովհաններս Մելիք-Հայկազյանց. Մեր ամենասիրելի բարեկամ Մելիք-Մեժլումից լսեցինք,

որ այդ խաբեբա և անպիտան Սուլեյմանը և Իստամազը, որոնց հազարապետություն տալով, քեզ առաջնորդ կարգեցինք՝ Ջառ-չի-Փանահի որդի Իբրահիմ ճըռ-խանի կողմից նենգությամբ մեզ մոտ էին ուղարկվել, որպեսզի մեր իսկ հրամանով և զոր-քով կոտորեին Մելիք-Մեժլումի քաջարի զորքին, որոնք էին՝ Խնածախցիք և Պալլուճեցիք: Իբրահիմ ճըռ-խանը թշնամի է ինչպես մեզ և Մելիք-Մեժլումին, այնպես էլ այդ քաջերին: Մենք, չիմանալով նենգ Իբրահիմի խորամանկությունը և հա-վատալով նրանց իսլամական երդմանը՝ հազարապետության պաշտոն տվեցինք և քեզ առաջնորդ կարգեցինք՝ որպես ընիկ և ամեն ինչից հմուտ: Այժմ հրամայում ենք քեզ, որ փութով մեզ մոտ բերեք կալանավորված այդ անպիտան խաբեբաներին, քանզի նրանք նենգ Իբրահիմի ներքին բարեկամներն են և մեր անհաշտ թշնամիները: Ողջ-ողջ մեզ մոտ բեր, որ նրանց խա-բեությունը վարձատրենք արժանավայել պատիժներով:

Զգուշացրու կանոնավոր և անկանոն զորքերիդ՝ ամենա-փոքր վնաս անգամ չպատճառել հայ գյուղերին, մարդկանց և անասուններին, քանզի Հայոց ազգը շատ հավատարիմ և տի-բասեր ազգ է, բացի մի քանի անհավատարիմ մելիքներից, ո-րոնք խաբված են Ջառչի-Փանահի որդու խորամանկությունից: Աշխատիր շուտով գտնել և մեզ մոտ բերել Խնածախցի Ազրա-յել-Իբրահիմին և Պալլուճեցի Ղարախան-Յուզբաշուն իրենց զորքերով, որոնք Մելիք-Մեժլումի զորավարը և յուզբաշին են: Մեր պահանջած մարդիկ ճանաչում են մեր սուրհանդակի հետ եկող Կաքև-Զաքուն և Շեյթան-Թյունուն. այս մասին նամակ է գրված այդ քաջերի զորավարին, նաև՝ Մելիքին: Շուտով հետ դարձրու բոլոր կանոնավոր և անկանոն զորքերդ առանց ժամա-վաճառ լինելու և առանց ամենափոքր վնաս անգամ պատճա-ռելու հայ գյուղերին: Զգուշացի՛ր, մազի չափ չշեղվել մեր հրա-մաններից»:

«...Մեր ամենահավատարիմ և ամենասիրելի Ազրայել-Աբրահամ Բեկնազարյանց: Թերևս, գիտենք, որ Ղարաբաղի անհաշտ թշնամի Իբրահիմ ճըռ-խանի հետ միացած են Գյու-լիստանի Մելիք-Բեգլարյան Մելիք-Աբով Գ.-ն, Վարանդայի

Գ. Մելիք- Շահնազարյան Մելիք Ջյումշուդը, Դիզակի Մելիք-Բախտամյան մելիք ժառանգ Աբաս-Բեկը, Խնձորեստանի ճրռ-մելիք Միրզախանյանը, ճրռ-մելիք Ալլահվերդին և Բյուլ Եաթաղի ճրռ-մելիք Առստամն իրենց բոլոր զորքերով: Կասկած չկա, որ նենգ և խաբեբա ճրռ-խանի հետ միաբանված մելիքները հիմարաբար խաբված են ապագայի համար նրա տված սնոտի հույսերով: Սակայն ճրռ-խանների դավաճան քաղաքականության փորձն ակներև ցույց տվեց տարիների ընթացքում, որ նույնիսկ այդ ճրռխանությանը հաջողվեց այդպիսի խորամանկ և պատռիչ հույսերով երկպառակել հարազատ-մելիքությունը, թշնամի դարձնել միմյանց դեմ, ջլատել զորավոր ուժերը և տկարացնել տղամարդկանց զորությունը: Ճրռ-խանությանը հաջողվեց Ղարաբաղի հարազատ-մելիքություններին երկպառակել և ճրռ-մելիքություն ստեղծել, որպեսզի կյանք տա իր մահամերձ և հոգեվարք ապրող ճրռ-խանությանը:

Ճրռ-խանների սույն ազգակործան քաղաքականության հետևություններն անտանելի և անթափանցելի մնացին Գ. Մելիք-Շահնազարի և ճրռ-մելիքների անհեռատես քաղաքականությունից և կարճատես անխոհեմությունից: Շահախնդրության և փառամոլության տենչանքով մոլորված սույն օտարամոլ հայերն սկսեցին օտարամոլ գրկում սնուցել այդ վիժած խանությունը՝ դրա գոյությունը օգտակար կարծելով Ղարաբաղին: Բայց այս ճրռ-խանները ձգտեցին և ձգտում են սպանել հարազատ մելիքությունը, ստեղծել ճրռ-մելիքություն և այս ևս սպանելով՝ արմատավորել իրենց գոյությունը մեր սեփական հայրենիքում՝ Ղարաբաղում: Իբրահիմ ճրռ-խանն ուզում էր սպանել Աղվանի բազմադարյա հարազատ-կաթողիկոսությունը և հաստատել ճրռ-կաթողիկոսություն:

Բայց Աստծո ամենակարող զորությամբ այդ չի լինի երբեք, քանի որ Ղարաբաղը ծնել է ձեզ նման դյուցազուններ. քանի դեռ մեր սուրբ հայրենիքն իր ծոցում տակավին ունի հարազատ-իշխաններ, հարազատ-զավակներ և հայրենասեր հերոսներ:

Ղարաբաղի հայության և հարազատ-մելիքության քաղաքական շահերը մեզանից պահանջում են չհետևել այդ մելիքների օրինակին, չմիաբանվել մեր անհաշտ և ոխերիմ ճըռ-խանների հետ և չխոնարհվել նրանց պիղծ լծի տակ, որպես ստրուկ:

Մենք միաբանվեցինք Աղա-Մամադ-Շահի հետ, ի նկատի ունենալով հարազատ-կաթողիկոսության, հարազատ-մելիքության և սուրբ Հայրենյաց շահերը, կյանքը և կենդանությունը:

Այս Շահը փոփոխամիտ և իր տված խոստումը փոփոխողը չէ մյուս շահերի նման, այլ անփոփոխ և հաստատակամ է: Այս բարեկամ շահը երիցս կրկնեց անսուտ երդումը՝ ջնջել Ղարաբաղից ճըռ-խանությունը, ճըռ-մելիքությունը և հաստատել բազմադարյա հարազատ-կաթողիկոսությունը և մելիքությունն իրեն նախկին և անկախ բոլոր իրավունքներով: Նա բազմիցս երդվեց, որ բոլոր ճըռերը, իբրև քաղաքական հանցագործներ մաշվում են Շիրազի կամ Արտավիլի բանտում, ուր բանտարկված է տակավին Մելիք-Բախտամը, որին խոստացավ շուտով ազատել և վերադարձնել:

Ահա մեր սուրբ նպատակներն իրագործելու համար ժամանակը, որով վառված եք դուք՝ բոլոր քաջերովդ:

Երբ դուք Շուշիում էիք, մենք ձեր ետևից ուղարկեցինք Կաքև-Զաքիին և Շեյթան-Թևնիին, որպեսզի դուք գայիք մեր բանակը ձեր բոլոր քաջերով: Սակայն նրանք վերադարձան դատարկ և հայտնեցին, որ դուք և Ղարախան-Յուզբաշին ձեր բոլոր քաջերով գտնվում եք գյուղերում: Ստիպված ենք մանրամասն գրել ձեզ ամեն ինչ և ծանոթացնել ձեզ գործերի լրիվ հանգամանքներին:

Երկու ժամ առաջ Շահից լսեցի, որ Իբրահիմ ճըռ-խանի Աղտամի Սուլեյմանը և Սարուճալլուի Իստամագը մեզանից թաքուն ներկայացել են Շահին: Նրանք ձևացել են իբրև Շահին ամենահավատարիմ բարեկամ և Իբրահիմ ճըռ-խանի ոխերիմ թշնամի, որով Շահը խաբվեց և նրանց տվեց հազարապետության պաշտոն: Սրանք Շահին հավատացրին, որ Խնածախցիք և Պալլուճեցիք անհաշտ թշնամի են Շահին և բարեկամ բոլոր ճըռերին: Շահն ագիտակ լինելով, որ այդ դավաճանությունները հնարված

են Իբրահիմ ճըռ-խանից՝ բոլորովին համոզվում է, որ նրանք իրեն բարեկամ են, ոչ թե թշնամի. մանավանդ, երբ տեսնում է դրանց հետ միացած Սարուճալլուեցի, Աղտամցի, Ջիվանշիրցի և Քեապիռլեցի թուրքերը, որոնց թիվը 3000 է: Շահի հրամանով 2000 կանոնավոր և 2000 անկանոն սարվազներ ևս ուղարկվել է Խնածախը և Պալլուճան հիմնահատակ կործանելու:

Սարվազների գնդապետը Հովհաննես Մելիք-Հայկազյանցն է, որի հետ լավ կանեք, կանխավ ծանոթանաք: Գնդապետի նախնին Մելիք-Հայկազ Մեծն է, որը 1586 թվականին Պարսկաստանի մեծ Շահ-Աբասի օրով գաղթել է Քշտաղի Խնածախ գյուղից: Ուրեմն դա ևս մեր ազգից է: Շահը նրան ևս նամակ է գրել այս սխալ անցքի վերաբերյալ: Դա մի կատարյալ հայ տղամարդ է և ազնիվ բնավորության տեր անձնավորություն և միանգամայն մեր պապերի ազգակից:

Շահի կանոնավոր զորքի թիվը 55000 զինվոր է, իսկ անկանոնինը՝ բազմաթիվ: Ընդհանուր հրամանատարն ինքն է, իսկ երկրորդը՝ մենք: Շահի բանակն ունի 15 թնդանոթ, առատ վառոդ և գնդակ: Բանակը տեղակայված է Շուշիի բերդի արևելյան կողմին նայող սարահարթի վրա: Բանակի զորքի հետ միացած է Գանձակի Ջավատ-խանը 3000 հոգանոց զորքով, իսկ մենք 2000 հոգանոց զորքով ենք: Մեր զորքից 1000 զինվոր թողել ենք Ջրաբերդում՝ բերդը հսկելու և ժողովրդին պահպանելու համար:

Հարկ չենք համարում հիշեցնել ձեզ, թե որքան կարևոր է ձեր ներկայությունը մեզ մոտ, այսպիսի պարագայում, որից կախված է Ղարաբաղի հարազատ-մելիքության ճակատագիրը և բոլոր ճըռերի անկումն ու մահը: Ուրեմն, ամենահավատարիմ զորավար, աշխատեցեք ձեզ հետ միասին մեր բանակը բերել ձեր բոլոր և Ղարախան Յուզբաշի Պալլուճեցի քաջերին:

Խնածախցի և Պալլուճեցի քաջերի տղամարդկության ձիրքերը և անխախտ հավատարմությունը ներկայացրել եմ Շահին, ով փափագով սպասում է ձեր տեսությանը: Որքան կարելի է, արագացրեք ձեր գալուստը:

Ջրաբերդի իշխան՝ Մելիք-Մեժլում Մելիք Իսրայելյանց. հունիս, 1795թ.»:

Սույն նամակները բարեպատեհ առիթ տվեցին ծանոթանալու միմյանց հետ հորս և գնդապետին: Վերջինս շատ գոհ մնաց իր արարքից, որ թեև անծանոթ, բայց ազնվաբար էր վարվել հորս և իմ հետ և այժմ բնավ զգուշանալու պատճառ չուներ: Իսկ հայրս հայտնեց, որ գնդապետն իր ազնիվ վարմունքով արժանացել էր իր շնորհակալությանն ու վեհանձնությանը և արդեն վայելում էր իր անկեղծ համակրանքը և ցմահ բարեկամությունը: Մելիք-Հայկազյանցը, անկարող լինելով զսպել իր զարմանքը՝ բացականչելով հայտնեց, որ թեև Պարսկաստանում լսել էր Ղարաբաղի տղամարդկանց քաջության համբավի մասին, այսօր ևս դրա ականատեսը եղավ: «Եթե չափազանցություն չհամարեի,- ասաց նա,- ես այսօրվա իմ տեսած գործը ոչ թե դյուցազնական քաջագործություն, այլ հրաշք կանվանեի:

Ի՜նչ տղամարդկություն, ի՜նչ սիրտ, ի՜նչ արագաշարժություն, ի՜նչ ուժ և ի՜նչ զորություն: Թերևս, դուք սիրելի՜ Բեկնազարյանց, առաջին անգամն է ձեր կյանքում, որ անձնատուր եղաք ձեր թշնամուն. պատճառը հայտնի է»: «Այո՜, սիրելի Մելիք-Հայկազյանց, առաջին անգամն է, որ քաջությանս փառքը խոնարհվեց միակ որդուս կյանքի առաջ»:

Հայրս հետևյալ նամակը գրելով՝ հանձնեց Կաքև-Զաքուն և փութով ճանապարհեց. «Տե՜ր ի՜մ, հարազատ-իշխան Մելիք-Մեժլում Զրաբերդի. ստացա ձեր նամակը և բավարար մնացի նրա տեղեկություններով: Եթե հաջողվի, իմ մոտ եղած Խնածախցի և Պալլուճեցի քաջերին կհամոզեմ հետս բանակատեղդ բերելու:

Այսօր երկու սարսափելի պատերազմ մղեցինք. մեզանից ոչ ոք չի վնասվել, ամենքս ողջ ենք: Թշնամու կորուստը մեծ է, բայց սպանվածների թիվը դեռ հայտնի չէ:

Ժամանակը սուղ է, երբ գամ մանրամասն կպատմեմ ձեզ այսօրվա բոլոր անցքերի մասին:

Ձեր հլու զորավար՝ Աբրահամ Բեկնազարյանց:

Խնածախ, Ծակ-քար, հունիս 1»:

Հայրս խնդրեց Շահի նամակի հայերեն պատճենը, գնդապետը թարգմանեց հայերեն և հայրս մատիտով գրեց թղթի վրա: Մելիք-Հայկազյանցը զարմանք հայտնեց հորս նախապատրաստության վրա, ով իր մոտ միշտ թանաքաման, գրիչ և թուղթ էր պահում:

Ծակ-քարի վրա երկրորդ անգամ հարձակում գործող զորքը չերևաց, գնդապետը աճապարանքով փութաց փարատել իր մտատանջությունը:

Նա զմայլվեց՝ տեսնելով Ծակ-քարի անմատչելի ամրությունը, սքանչելի դիրքը և հիանալի տեսարանը:

Երկրոդ անգամ հարձակվող սարվազները չէին համարձակվում մոտենալ քարայրին. տեսնելով, որ նախորդ հարձակվողները ջնջված էին և բոլորովին հետ քաշված: Այժմ փարատվեց գնդապետի մտատանջության մռայլը՝ տեսնելով, որ ջնջված չէ վերջին գունդը:

Սակայն, հանկարծ լսվեցին փողերի ուժգին գոչումները և կրկին սկսվեց երրորդ պատերազմը: Հայրս ինձ հանձնեց գնդապետին, իսկ ինքը շտապեց դեպի անտառի կողմը:

Դ.

Խնածախցիք և Պալլուճեցիք միանալով և ամբարից առատ գնդակ և վառոդ առնելով՝ շտապում էին ազատել հորս և ինձ: Նրանք, կարծելով, թե գերի ենք ընկել, եկել էին ազատելու մեզ գերությունից: Այս էր երրորդ պատերազմի պատճառը: Հայրս, որ տեղի ունեցածը պատմել էր զորքին և դադարեցրել էր կռիվը, գնդապետին ներկայացրեց իր քաջերին՝ արտասանելով նրանց անունները և մականունները: Գնդապետը, թեպետ շատ ուրախացավ Խնածախցի և Պալլուճեցի քաջերին տեսնելով, սակայն ցավ հայտնեց ու ասաց, որ բոլորովին իզուր էր այդ երրորդ պատերազմը: Քեանդուխտի Խաչատուր Բարխուդարյանցը պատասխանեց գնդապետին չվշտանալ, ասելով՝ որ ի-

րենք չէին կարող համբերել և գերի տեսնել իրենց զորավարին որդու հետ: Իրենք անտեղյակ էին Շահի և մելիքի նամակներին և չգիտեին ճըռ-խանի դավադրության մասին, այդ ամենին անգիտակ լինելու պատճառով եղավ վերջին կռիվը և իմանալով իսկությունը՝ անմիջապես դադարեցրին պատերազմը:

Գնդապետին տված հազարապետների տեղեկությունից երևաց, որ առաջին պատերազմում շեհիտ[1] են դարձել 1504, երկրորդում 229, իսկ երրորդում՝ 366 մարդ, որոնց մեջ էին Սուլեյման և Իստամազ խարդախ հազարապետները ևս: Իսկ Շահի կանոնավոր սարվազներից 1210, իսկ անկանոններից 1461 մարդ, որոնց մեջ էին մի հազարապետ և ութ հիսունապետ:

Գնդապետը խիստ վշտացավ կոտորված զորքի այս մեծ քանակով, իսկ Պալլուճեցի զվարճաբան Պել-Ճամազը պակաս դատավ այդ թիվը, ինչպես նահանջ տարեթիվ և կոչեց. «Տղե՛ր, եկե՛ք, գնանք քառասուն սարվազ ևս կոտորենք, որպեսզի մեզանից ամեն ոք հիսունհինգ մարդ սպանած լինի, այլ ոչ թե հիսունչորս և կես: Հաշիվը ծուռ է նահանջ տարու նման: Սատկի անփող մարդասպանությունը, ով պետք է վճարի մեր փչացրած վառոդի և գնդակների համար»:

Սպանվածների քանակը, թերևս, չափազանցություն կերևա ընթերցողների համար, բայց մենք ճշտությամբ գրեցինք: Առաջին պատերազմում մեզ օգնել էր Ծակ-Քարի անմատչելի դիրքը, երրորդում՝ անտառի խտությունը, իսկ միջինում՝ անակնկալ և հուժկու հարձակումը, որոնց ականատեսը եղանք մենք:

Այն, ինչ Մելիք-Հայկազյանցը խնդրում էր հորիցս, ստիպեց բանակատեղի փութալ. Պրախմազ-Հովսեփն առաջարկեց բոլոր քաջերին «Սուլեյմանի խութ» անվանել սարահարթը, ուր թաղվածների մեջ էր և խարդախ Սուլեյման հազարապետը, և «Իստամազի ձոր»՝ ուր մյուսների հետ թաղված էր Իստամազը: Ամենը միաբան գոչեցին. «Սուլեյմանի խութ, Իստամազի ձոր»:

---

[1] Պարսիկները շեհիտ (նահատակ) են անվանում պատերազմների և շախսեի ժամանակ մեռածներին:

Իսկ զվարճաբան Պել-Ճամալն առաջարկեց «Ճամալի խութ»[1] անվանել Պալլուճայի հարավային մասին նայող լեռնակը. այդ-պես անվանեցին և այն:

Այդ անունները դրոշմվելուց հետո Քեանդխուտ-Խաչա-տուրն ասաց. «Տղե՛րք, շնորհակալություն ձեզ, որ այդ անուն-ները դրոշմեցիք այս տեղերի վրա: Այս սարահարթի և այն ձո-րի դիակների վրա ձևավորված հողաբլուրները և նրանց միջի ոսկորները կենդանաբարբառ պատմաբաններ են: Այդ անուն-ները և տեղերը մեր ապագա սերունդներին պատմելու են, ինչ-պես մեր քաջերի հիշատակի, այնպես էլ Իբրահիմ ճըռ-խանի դավաճանության և Շահի անմեղ զորքի թափած արյան մասին, որի պատճառը եղել են Սուլեյմանն ու Իստամազը, նրանց դիակները դրվել են բոլոր դիակների վրա»:

Երբ հասանք մեր գյուղ, շատ տներ այրված գտանք: Այր-ված տներից շատերը նոր էին շինված: Սուլեյմանի և Իստամա-զի զորքի թուրքերի մի մասը, որ կողոպուտի տենչանքով մնա-ցել էին գյուղում, այրել էին այդ տները: Բայց թաքցված իրերը մնացել էին անձեռնմխելի:

Որքա՜ն սրտաճմլիկ էր տների տեսարանը: Սյուներն էին մնացել լոկ ցցված. գերանները ածխահորի նման մխում էին փլ-ված հողերի տակ: Ամեն ոք ցավալի աչքով էր դիտում այդ տխուր տեսարանը: Մի քանի նորաշեն տներում դեռ ոչ ոք չէր հասցրել բնակվել, սակայն կրակը լափել էր այդ տները:

Պալլուճա գյուղն ազատված էր թե՛ հրդեհից և թե՛ խու-զարկությունից, քանի-որ այն կիրճը, որ գտնվում էր Պալլուճա և Խնածախ գյուղերի մեջ, Ծակ-Քար և Էլիաս[2] լեռնակների զու-գահեռական գծի հետզհետե նեղացած խորքում, մեծ սարսափ սփռելով՝ նահանջել էր տվել հրոսակներին: Հետևապես, ոչ

---

[1] Այդ տեղանունները նույնությամբ կոչվում է մինչ օրս, բայց այժմյան սերուն-դը չգիտի, թե ինչ պատճառով է այդպես կոչվում: Այժմ, այս պատմությունը որքա՜ն լույս կսփռի այդ մոռացության մեջ թաղված մութ հիշատակների վրա: Խութ կոչվում է լեռնակ:

[2] Թերևս՝ «Էլիաս»:

միայն անծանոթ սարվազները, այլև Սուլեյմանի և Իստամազի թուրքերն անգամ չէին համարձակվել անցնել այդ կիրճով:

Դժվար է նկարագրել այդ ամենը տեսնող տղամարդկանց ապրումները. այն տղամարդկանց, ովքեր արյուն ու քրտինք են թափել, ոսկոր ճաքեցրել և կառուցել այդ տները՝ կյանք վայելելու համար: Այժմ, երբ տեսան այդ վիճակում, բարկությունն ու ցասումը յուրաքանչյուր տղամարդու ներսում հրդեհ վառեց, որ տների կրակներից ավելի բոցավառվել ու լափում էր ամեն մի հայ տղամարդու ներսը: Յուրաքանչյուրն ուզում էր ժամ առաջ գտնել այրողներին և վրեժ լուծել: «Տղե՛րք,-ասաց Նեառաթեովը,-ավագ սուրբ նշանը վկա, իմ տունն այրողին սատանայի պես պետք է այրեմ դժոխքի կրակով»: «Կայենի անեծքը ժառանգեմ, եթե իմ տունը վառողի սրտի տունը չվառեմ գնդակով»,-պատասխանեց Շահմարը: «Հուդայի մեղսակիցը լինեմ, եթե տանս ատաղձներն ածուխ դարձնողի բոլոր ոսկորները ածուխ չդարձնեմ»,-կոչեց Զարպազանը:

Թեև գնդապետը ցանկացավ կասեցնել նրանց մտադրությունը, սակայն անօգուտ անցան նրա ջանքերը: «Մեր վճիռներն անհեղաշրջելի են և մեր երդումները՝ աննահանջելի»,-պատասխանեցին մերոնք միաբերան և սկսեցին հետախուզել կասկածելի վայրերը: Վերջապես Իբրահիմ ճրո-խանից նենգությամբ ուղարկված մարդկանց մի մասին գտան սարվազների մեջ, մի մասին՝ գոմերում, իսկ երրորդին՝ մարագներում և անմիջապես շրջապատեցին ու գլխատեցին թրերով: Իսկ փախած և գյուղի արևակողմի լկրթնու[1] անտառում սպանվածներն ամբողջապես այրվեցին: Անտառն ամեն կողմից առանձնացած էր, մեր քաջերը չորս կողմերից կրակեցին և այդ ահռելի կրակը լափեց անտառում գտնվողներին: Կրակից դուրս փախչողներն սպանվեցին գնդակներով: Եվ ահա այսպես ոչնչացան Իստամազի և Սուլեյմանի հետ եկած երեք հազար մարդիկ:

---

[1] Տեղական լեզվով՝ «Լկերթնի» են կոչում այն ծառերը, որոնք մինչև անգամ անտառներ են կազմում Խաչենի լեռնոտ մասերում: Այդ վայրի ծառերը սալորի ծառերից փոքր են և առատորեն տալիս են խաղողի փոքր հատիկների մեծությամբ սև պտուղներ:

Այրվողների գարշահոտությունը ապականել էր օդը, դժվար էր շնչել, քանզի կեսօրին էր եղել այս դեպքը:

Պալլուճեցի սպանվածները ամփոփվեցին մեր հանգստարանում: Քեանդուխտի Խաչատուր Բարխուդարյանցի առաջարկությամբ «Կոռուտ»[1] կոչվեց հրդեհի տեղը, ուր այնքան մարդիկ էին այրված այնտեղ:

Գայլ-Օհանը ոռնաց, և ամենքը հավաքվեցին ճաշելու:

Ե.

Ճաշից հետո կազմակերպվեց ժողով: Նախագահ ընտրվեց Քեանդուխտի Խաչատուրը, ով առաջարկեց ժողովին. «Մի քանի պարտադիր և հույժ կարևոր խնդիրներ կան ժողովով լուծելու.

Ճրռ-խանությունը և ճրռ-մելիքությունը ոչնչացնելու խնդիր,

հարազատ-մելիքությունը և հարազատ-կաթողիկոսությունը վերականգնելու խնդիր,

մեր ընտանիքների ապահովության խնդիր,

մեր ծառայությունը վարձատրելու խնդիր,

մեր կյանքի խնդիր,

Շահի և Մելիք-Մեժլումի հրավերը ընդունելու և մերժելու խնդիր:

Ահա այս խնդիրները պետք է լուծենք քննարկումների և բանավեճերի միջոցով, ինչպես նախկինում էին լուծվում նման կարևոր ու ծանրակշիռ հարցերը՝ զորապետական խորհուրդների ժամանակ: Միայն խնդրում եմ, ամեն ոք ձեզանից պետք է խոսի ազատ, կարծիք հայտնի պարզորեն, հեռատեսությամբ և նուրբ կշռադատությամբ»:

---

[1] Այդ տեղանքը մինչև օրս էլ կոչվում է «Կոռուտ»:

Բեկնազարյանց.- «Եթե Ղարաբաղի ճըռ-խանությունը և ճըռ-մելիքությունը մենք մեր ձեռքով ոչնչացնենք՝ շատ հեշտ է, իսկ եթե Պարսից շահերին կամ այլոց հույսին թողնենք՝ ծանրակշիռ դժվար լուծելի խնդիր է: Թեպետ Մելիք-Մեժլումը վստահորեն գրում է այս խնդրի մասին. «Շահը երիցս կրկնեց անսուտ երդմամբ ջնջել Ղարաբաղից ճըռ-խանությունը, ճըռ-մելիքությունը և ճըռ-կաթողիկոսությունը և հաստատել բազմադարյա հարազատ-կաթողիկոսությունը, հարազատ-մելիքությունը իրենց նախնի և անկախ բոլոր իրավունքներով», սակայն այս հանդիսավոր խոստման և երիցս երդման կատարումն ինձ անհավատալի է թվում: Բազմիցս պատմության մեջ կարդում ենք, որ մեծ-մեծ մարդիկ մեծամեծ երդմամբ և մեծամեծ խոստմամբ արձակել են անդառնալի հրամաններ և անհեղաշրջելի վճիռներ, որոնց հետևել են ամենամեծ ստախոսություններ և ամենամեծ աչքակապություններ: Այսպիսի վճիռները, հրամանները, երդումներն ու խոստումները կամ ցնդում են օդի մեջ, կամ մնում են թղթի վրա գրված՝ որպես անշունչ դիակ:

Ասածներս անհերքելի փաստելով ապացուցելու համար հեռվից օրինակներ բերելու կարիք չկա, այլ կարելի է՝ մոտ ժամանակներից: Անցյալի փորձերը պարզապես ցույց են տալիս, որ պարսիկ շահերը մեր երկրում միշտ պահպանել են ճըռ-խանությունը և նրանց գոյությունը, թեև վերջիններս նախկինում էլ միշտ թշնամի են եղել և միանգամայն վնասակար: Նադիր-Շահը, որը ստույգ գիտեր, որ Փանահը Սարուջալուեցի թափառական ցեղից մի աղքատ հովվի որդի էր, ում բարձր ձայնի պատճառով դարձրեց իր մունետիկը, սակայն ժամանակ չունեցավ պատժել այդ Ջարչի-Փանահին: Նադիր-Շահը սպանվեց իր իսկ մարդկանց ձեռքով՝ 1747 թվականին և նրան հաջորդեց իր եղբորորդի Ադիլ-Շահ-Սակավակյացը:

Ա. *Ադիլ-Շահը, որ հաստատ գիտեր, որ այս Ջառչի-Փանահը Նադիր-Շահի դեմ ապստամբ էր ու Ղարաբաղ էր փախել, երկար ժամանակ ավազակապետություն էր արել և վերջապես ինքն իրեն Շուշու խան էր անվանել, այս Շահը, որ անչափ զայրացած էր Ջառչի- Փանահի շահության դեմ գործած այս քա-*

դաքական հանցագործությունների վրա, եթե ճըռ-խանի և ճըռ-խանության պաշտպան չէր, ապա ինչո՞ւ, ի՞նչ պատճառով ճըռ-խանությունն ու Փանահ ճըռ-խանին կենդանի թողեց, որն էլ իր ճըռ-խանությունն ինքնահռչակեց 1749 թվականին:

Այդպես են վարվել նաև Ադիլ-Շահից հետո գահակալած մյուս բոլոր շահերը:

Բ. *Ուրմեցի Փաթալի-խանը, որ 1761 թվականին արշավեց Ղարաբաղ, կողոպտեց Տաթևի վանքի հարստությունը, այն աստիճան էր բարկացած Փանահ ճըռ-խանի վրա, որ մինչև անգամ Ղուրանի վրա երդվեց սպանել Փանահ ճըռ-խանին և պատռել նրա խանությունը հաստատող չինծու հրովարտակը, որը գաղտնի հնարքով ձեռք էր բերել, իբր թե Ադիլ-Շահից: Այո՛, Փաթալի-խանը նույն երդումը կրկնեց Ջրաբերդի Մելիք-Ադամի և Գյուլիստանի Մելիք-Հովսեփի ներկայությամբ ևս: Բայց, երբ սույն մելիքների օժանդակությամբ գրավեց Շուշին, դրժեց իր երդումը, ուրացավ խոստումը և փոխանակ Փանահ-ճըռ խանին սպանելու և նրա ճըռ-խանության կեղծ հրովարտակը պատռելու՝ ստացավ Փանահից տասնհինգ հազար թուման փող, պատանդ առնելով Փանահ-ճըռ խանի որդի Իբրահիմին՝ տարավ Ուրմի բերդը, ձեռնունայն թողեց հարազատ-մելիքներին՝ կենդանի թողնելով ճըռ-խանի գոյությունը:*

Գ. *Նույն Փաթալի-խանը սպանել էր Զենդ-Ասկերխանին, որի եղբայր Քեարիմ-խանը իր եղբոր վրեժը լուծելու համար 1762 թվականի հարձակվում է Ուրմի բերդի վրա, գրավում այն, Շիրազ տանում Իբրահիմին և իր եղբայրասպան Փաթալի-խանին. վերջինիս սպանում, իսկ առաջինին՝ ողջ պահում: Փանահ ճըռ-խանը, երբ լսում է, առնում է քսան հազար թուման փող և իր որդուն ազատելու համար ընծա տանում Քեարիմ-խանին: Փանահ ճըռ-խանը երկու տարի մնում է Շիրազում, բայց չի կարողանում ոչ իրեն ազատել Զենդ-Քեարիմ-խանի ձեռքից և ոչ իր որդի՝ Իբրահիմին: Փանահ ճըռ-խանը սատանայական խորամանկությամբ մեռած է ձևանում և դագաղում պառկում, որպեսզի, իբրև մեռյալ, Ղարաբաղ հասնի: Զենդ-Քեարիմ-*

խանն իմանալով այս սատանայության մասին՝ Փանահ-ճրռ-խանի փորը պատռել է տալիս, որ չհոտի մինչև Ղարաբաղ: Քանի որ Զենդ-Քեարիմ-խանն իր աչքով տեսավ այդ տոհմի խարդախությունը, քանի որ ողջ Փանահի փորը ճեղքել տալով սպանեց և նրա հետ՝ ճրռ-խանությունը ևս: Սակայն, եթե նա ճրռ-խանության բարեկամ չէր, ապա ինչ հարկ կար նենգությամբ սպանված նենգ հոր ամենանենգ որդի Իբրահիմին խան անվանել 1764 թվականին, խանության տիտղոսով Ղարաբաղ ուղարկել և ճրռ-խանության շղթան կրկին ամրապնդել: Ահա այս Իբրահիմ ճրռ-խանն է, որ այսօր ապստամբելով՝ կռվում է Պարսից շահերի հետ: Սա պատմական ճշմարտություն է այն մասին, որ այդ ճրռ-խաներին հաստատող շահերը ևս ճրռ-շահեր էին և ոչ թե հարազատ-շահեր, քանզի այդ ժամանակներում շահությունը հափշտակելու համար մեկ-մեկ սպանում և շուտ-շուտ գահակալում էին:

Այս պատմական, անհերքելի փաստերի հետևությունը շատ պարզ է: Աղա-Մամատ-Շահը ևս, թեպետ անսուտ երդմամբ մելիքին խոստացել էր ջնջել Ղարաբաղից ճրռ-կաթողիկոսությունը, ճրռ-մելիքությունը, ճրռ-խանությունը և հաղթանակով վերանորոգել հարազատ-կաթողիկոսությունը, հարազատ-մելիքությունն իրենց ազատ և անկախ իրավունքներով, սակայն հավատալին միայն այն է, որ ներկա Շահը ևս կհետևի իր նախորդներին, կսպանի Իբրահիմ ճրռ-խանին և խան կհաստատի նրա որդի Մեհտի-Ղուլին: Օտարը միշտ օտար է. Օտարը միշտ էլ ունի իր կեղծ քաղաքականությունը և գիտի գործիք դարձնել մեզ նման անքաղաքագետ, դյուրահավատ, պարզ ու խեղճ արարածներին: Ավելի լավ է, որ մենք մեր հույսը մեզ վրա դնենք, մեր ուժերը միացնենք և միացյալ ուժով կարգի բերենք մեր գործերը»:

Թոփուղ Աշուղ-Ղարա.- *«Խանությունը ջնջելու համար շահերի վրա հույս դնել չի կարելի: Նրանցից ամեն ոք ի նկատի ունի իր քաղաքական շահերը և ձգտումները: Նրանք հաճախակի մեզ խաբել և գործիք են դարձրել: Վերջնականապես, ըստ ամենի, համակարծիք եմ Բեկնազարյանցի հետ»:*

Պալլուճեցի Պել-Ճամալ.- «Քանի դեռ ճըռ-խաների մոտ գտնվում են այնքան դեղին և կլորիկ ոսկիներ, ահա այդ համեղ ոսկորը կրծելով, ինչպես ամենօրյա համեղ կերակուր՝ շահերը կենդանի են պահում ճըռ-մելիքությունը: Միայն մեր բոլոր գործերն են ձրի կատարվում: Սատկի՛ անփող մարդասպանությունը: Մեր վառոդի, գնդակի փողը ո՞վ պետք է վճարի»:

Կայծակ-Վանի.- «Եթե չմիաբանվեն ճըռ-մելիքները հարազատ-մելիքների հետ մեր նպատակն իրագործելու համար, այն ժամանակ ի՞նչ միջոց է ձեռնարկվելու»:

Նեառաթեով-Աբա.- «Առանց խղճահարության սպանել է պետք ինչպես ճըռ-խաներին, նույնպես և ճըռ-մելիքներին: Այդ ճըռ-մելիքներն են մեր ազգի տունը քանդողները, որոնք ճըռ-խաների հետ միաբանվեցին, հարազատ-մելիքության ուժը ջլատեցին և ճըռ-խանության գոյությունը Շուշիում կենդանի պահելով՝ գործիք դարձան սրանց ձեռքում և Հայոց ուժերով Հայոց դեմ պատերազմելով՝ տկարացրին հարազատ մելիքության տղամարդ ուժը և ուժ տվին ճըռ-խանության զորանալուն: Բայց, քանի որ մենք ողջ ենք Աստծով, չեն կարող զորանալ ո՛չ ճըռ-խանությունը և ո՛չ ճըռ-մելիքությունը: Ես ուխտել եմ իմ երկար թրին մատաղ անել Իբրահիմ ճըռ-խանին: Միայն թե այսուհետ մենք չենք լսելու այս մասին մեր հարազատ-մելիքների արգելիչ հրամանները, քանզի քանի-քանի անգամ մենք կարող էինք սպանել ճըռ-խանին, սակայն միշտ մեր այդ մելիքներն արգելել էն, ասելով՝ «Որդիք, մի՛ սպանեք, եթե սպանեք, Պարսից Շահը մեծ զորքով կգա և կավերի մեր երկիրը»»:

Պել-Ճամալ.- «Եթե բոլոր ճըռերը սպանողին վարձատրեն առատ փողով՝ Սուրբ- Վանեսը վկա, ես միայնակ կսպանեմ, իսկ եթե առանց փողի լինի, ինչպես այսօր, իմ թուրը չի շարժվի պատյանից: Անիծյալ լինի անփող մարդասպանությունը»:

Գայլ-Ուհան.- «Ռուսները քրիստոնյա են, կարծում եմ՝ բոլոր առումներով նրանք պարսիկներից լավն են: Թերևս, նրանք, որպես քրիստոնյա և որպես աստվածապաշտ, դեմ չեն լինի, որպեսզի մենք գոնե մեր ուժերով մեր բազմադարյա հարազատ-կաթողիկոսությունը և հարազատ-մելիքությունը

պաշտպանենք, որպես արդար և անբռնաբարելի իրավունք: Իմ կարծիքով, ավելի լավ է՝ հարցնել ռուսներին»:

Բեկնազարյանց.- «Օտարներից օգուտ սպասելը հիմարություն է: Ամեն կառավարություն ունի իր քաղաքական շահերը և միշտ ձգտում է հօգուտ իրեն ընդլայնել շահերը՝ մշտապես զանազան խոստումներով գործիք դարձնելով մեզ նման անհեռատես ու անքաղաքագետ հիմարների, իսկ վերջում գործը ավարտելուց և նպատակին հասնելուց հետո անկատար թողնել խոստումները:

Քանի-քանի տարիներ են անցել դրանից հետո, և մենք մեզ խաբում ենք այդ անպտուղ հույսերով: 1701 թվականից հետո մեր ազգասեր հարազատ-կաթողիկոսները /Աղվանից/, մելիքները, եպիսկոպոսները, վարդապետներն ու իշխաններն աշխատում են այդ հույսն իրագործել, բայց ապարդյուն են մնացել մինչ օրս: Աղվանա երկրի հարազատ-կաթողիկոսները և իշխանները նույն թվականին, Ղարաբաղում և Ուտյաց գավառներում իրենց ձեռքի տակ պատրաստ վիճակում ունեին յոթանասունութ հազար հայկական զորք: Նրանք Ռուսաց Պետրոս-Մեծ կայսեր մոտ ուղարկեցին ճարտասան Մինաս վարդապետին, Հնդկաստանցի Իսրայել Օրի իշխանին և մի քանի հայ նախարարազունների: Կայսրն իմանալով, որ այս հայ պատգամավորության նպատակն իր հովանավորությունը խնդրելն է Հայաստանի և, մասնավորապես, Աղվանա երկրի համար, մեծ սիրով ընդունեց հայ պատգամավորներին: Կայսրը, թեև այն ժամանակ ավելի շատ զբաղված էր եվրոպական պատերազմական խնդիրներով, սակայն այս պատգամավորության առաջարկության մեջ նկատում է մի ամենամեծ քաղաքական օգուտ. Աղվանա ժողովուրդը մի մեծ անջրպետ է Պարսից կառավարության դեմ, Հայաստանի ժողովուրդը, լինելով օսմանյաց և պարսից դեմ, կարող է ընդլայնել Ռուսաց տիրապետության սահմանները: Հայաստանի Ռուսաց պետությանը հրավիրելու պայմանների գլխավոր կետերը մոտավորապես հետևյալն էին.

Ա. *Հայքս ունենք յոթանասուն և ութ հազար զորք, որոնցից վաթսուն հազարը Ղարաբաղում է, իսկ տասնութ հազարը՝*

Ուտյաց գավառում: Անհրաժեշտության դեպքում կարող ենք հարյուր հազար պատրաստի զորք հանել:

Բ. Կայսրը կտա տասնհինգ հազար զորք, որը կառաջնորդի Հայոց զորքին՝ պատերազմներում:

Գ. Ռուսական զորքի բոլոր ծախսերը Հայաստանը պատրաստ կլինի հոգալ իր հաշվին, եթե այդ զորքը միանա հայ զորքի հետ:

Դ. Երբ Հայաստանը թոթափի Պարսից լուծը, կմտնի Ռուսաց պետության հովանավորության ներքո՝ պահպանելով իր հայկական իշխանությունն իր բազմադարյա իրավունքներով, այս շնորհների փոխարեն տուրք վճարելով Ռուսաց կառավարությանը:

Այս պայմանագրի բնագիրը մնում է Գանձասարի հնադարում, իսկ պատճենը գտնվում է Ռուսաց Կայսրության դիվանատան արխիվում:

Վերջապես, Կայսրն ընդունում է այս պայմանը և խոստանում է կատարել:

1711 թվականին Իսրայել Օրին Հաշտարխանում մահանում է ու նրա ողջ հարստությունը կողոպտվում է բարձրաստիճան պաշտոնակալների կողմից:

Հայոց և Ռուսաց մեջ եղած հարաբերությունների բոլոր նամակագրությունները գրված են ժողովների որոշմամբ: Հայ հոգևոր և աշխարհիկ կյանքի պարագլուխները միշտ հավաքվել են Գանձասարում, որը համարվում էր ժողովատեղի և, այնտեղ գաղտնի խորհուրդ կազմելով, պատասխանում կամ նորերն էին գրում, հատուկ հավատարմատարների ձեռքով Ռուսաստան ուղարկում, կամ պատասխանները ստանում:

Իսրայել Օրի իշխանի մահից հետո այդ պաշտոնը շարունակում է վերոնշյալ վարդապետը՝ գաղտնի գործիչներ տարածելով Ղարաբաղում, Ուտյաց գավառներում, Ատրպատականում և մինչև անգամ Արարատյան նահանգում:

Մինաս վարդապետի մահից հետո այդ պաշտոնը շարունակում են ուրիշները: Կայսրը, քանի-որ զբաղված էր քաղաքական ուրիշ գործերով, հայերին միշտ պատվիրում էր համբե-

րել և սպասել ամենահարմար ժամանակի: Այդ ժամանակ վրաց-ցիները ևս միանում են հայերի հետ:

Գանձասարի Եսայի կաթողիկոսը, որ պատրաստվելու նամակ է ստանում կայսրից, համախմբում է հայոց զորքին և Խաչն ու Ավետարանն առած՝ առաջնորդում Գանձակ, որտեղ նրան միանում է նաև Վրաց սակավաթիվ զորքը: Մինչդեռ զոր-քը սպասում էր, հանկարծ գույժ է հասնում, թե Պետրոս-Մեծն իր զորքի հետ եկավ մինչև Դերբենդ՝ Ղարաբաղ գալու համար, սակայն շտապ կերպով հետ դարձավ Ռուսաստան՝ ծովից վախե-նալու պատճառով: Ամեն ինչ անկատար է մնում և Պարսից շա-հերն ավելի են չարանում: Այս անօգուտ արշավանքը 1722 թվականին էր, որի անցքերը մանրամասնորեն պատմագրված է ականատես Եսայի-կաթողիկոսի կողմից:

Վերջապես, Ռուսաց այս կայսրը, որ խոստացել էր Հայոց ուժերով հայերին օգնել և հայերին Պարսից լծի տակից ազատել, Պարսից հետ կնքած մի դաշնագրությամբ գրավում է Դերբեն-դը, Բաքուն, Մազանդարան և Գիլան, իսկ մյուս դաշնագրու-թյամբ՝ 1724 թվականին օսմանցիներին նվիրում Շամախին, Նուխին, Ղարաբաղը, Վրաստանը, Արարատյան և Ատրպատա-կան նահանգները:

Պետրոս-Մեծը վախճանվում է 1725 թվականին և նրանից հետո գահակալում է Եկատերինա Ա. թագուհին: Նրա օրոք ևս ամեն ինչ ապարդյուն անցավ: Այդ ժամանակ Ղարաբաղի կա-թողիկոսի, մելիքների և ռուսների միջև հարաբերությունը կա-տարվում է Ջալապի-Քովխայի ձեռքով:

1728 թվականին վախճանվեց Աղվանի Եսայի հարազատ-կաթողիկոսը, բայց որովհետև Ջալալյան տոհմից էր, որոնց կա-թողիկոսությունը ժառանգական էր և արժանավոր եպիսկոպոս չկար, Երից-Մանկանց վանքի Ներսես ճըռ-կաթողիկոսը ժողովր-դի հաճությամբ Գանձասար փոխադրվեց նույն թվականին և համարվեց հարազատ-կաթողիկոսների շարքում:

Ներսես կաթողիկոսի օրոք, մենք արդեն գիտենք, որ Նա-դիր-Շահը Ռուսաստանից պատերազմով հետ խլեց այն բոլոր քաղաքներն ու գավառները, որոնք գրավված էին պարսիկնե-

ըից Պետրոս-Մեծի ժամանակ: Նադիր-Շահի թագադրության հանդեսին, որ կատարվեց Մուղանի-Դաշտում 1736 թվականին, ակամա ներկա են գտնվում Հայաստանի և Վրաստանի բոլոր հոգևոր և աշխարհիկ կյանքի պարագլուխները, որոնց մեջ էին Գանձասարի Ներսես հարազատ-կաթողիկոսը, Էջմիածնի Ընդ-հանուր Հայոց Կրետացի Աբրահամ կաթողիկոսը և Ղարաբաղի հինգ հարազատ-մելիքները:

Ահա հենց այդտեղ Պարսից Շահից մեծամեծ արտոնու-թյուններ և պարգևներ ստացան և պատվով հետ դարձան ոչ միայն Ընդհանուր Հայոց կաթողիկոսը և Աղվանա կաթողիկո-սը, այլ նաև՝ Դիզակի Մելիք-Աղվանը՝ Մելիք-խան և Ջրաբեր-դի Մելիք-Ալահ-Ղուլին՝ Մելիք-Ալահ-Ղուլի-Սուլթան տիտ-ղոսներով, որոնք հայ հարազատ-մելիքներ էին: Այսուամենայ-նիվ, Ներսես կաթողիկոսը և Ղարաբաղի հինգ հարազատ-մե-լիքները նախապատվությունը միշտ տալիս էին Ռուսաց կա-ռավարությանը, որպես քրիստոնյա տերություն:

Բայց հայոց և ռուսաց միջև այդ հարաբերությունները, որ հետո շարունակվեցին նաև Հովսեփ արքեպիսկոպոս Արղու-թյանցի կողմից, ոչ թե մազաչափ օգտակար չեղան, այլ քաղա-քականապես ամենամեծ վնասը պատճառեցին, մանավանդ Ղա-րաբաղի հոգևոր և աշխարհիկ իշխանություններին ճնշելու, ժո-ղովրդի մի մասին արտագաղթելու և մնացյալ ուժը տկարացնե-լու առումով:

Այս պատմական անհերքելի փաստերն ապացուցում են, որ սին հույսերով դրանց և այլոց առջև դեգերելն անօգուտ ժա-մավաճառություն է: Նմանօրինակ հարստությունից աղքատա-ցած և խղճալի մարդիկ երկար ժամանակ անօգուտ դեգերում են հարուստների առջև թախանձագին հայցելով. «Գու՛թ, ի սեր Աստծո, գու՛թ, խնա՛մք, գթությու՛ն, օգնությու՛ն և ողորմու-թյու՛ն...»: Եթե Աղքատ Ղազարոս Մեծատնիցը ողորմություն գտավ և օգուտ քաղեց, մենք ևս օգուտ կքաղենք և կշահենք օ-տար հարուստներից: Այնպես, որ՝ եկեք թողնենք այդ սնոտի հույսը»:

Քեարվան-Ղռան-Բրուտ.- «Տղե՛ք, ճըռ-խանությունը հղիացավ Գ. Մելիք-Շահնազարի արգանդում, Շուշիում և իժ օձի նման պատռեց իր մոր արգանդը[1], որջ գտավ Շուշիում՝ իբրև անմատչելի օձածակում, հանեց իր գլուխը այդ բարձրությունից, ցույց տվեց Ղարաբաղին իր թունալի ժանիքները, խան անվանեց իրեն և չարության ժանիքներով մահ սպառնացավ իրեն չընդունողներին: Հանցանքը մեր անհեռատես մելիքներինն է. մեզանից ամեն ոք միայնակ կարող էր ջախջախել այդ իժի գլուխը: Ոչ միաբանվելու հարկ կար և ոչ էլ բազմաթիվ աջակցության: Հանցանքը ոչ թե մեր տերությանն է, այլ՝ մեր անխոհեմությանը, որով կենդանի պահեցինք այդ վնասակար օձին»:

Թեով-Գասպար.- «Տղե՛ք, պարսիկ թովիչը /շահը/ եկել է այդ իժ օձը բռնելու և նրա թունավոր ատամներն արմատախիլ անելու: Ահավասիկ, հարմար ժամանակ է ճըռերին և ճըռ-խանություններին ոչնչացնելու: Այժմ ոչ Շահն է կարգադրելու մեզ մեր նպատակներն իրագործելու, ոչ էլ մեր հարազատ-մելիքները: Եկե՛ք ուրեմն, գնանք և միանանք այդ թովչի բանակին և մենք մեր ձեռքով կարգադրենք ամեն բան»:

Բացի հորից բոլորը միասին.-«Տղե՛ք, գնանք, գնանք... այդ ճըռ-կենդանիները կյանք են ընդունել հայերից, պետք է նաև մահ ընդունեն հայերից»:

Նախագահ.- «Ուրեմն, ընդունված են Շահի և Մելիք-Մեժլումի հրավերները, այժմ ուշադրություն դարձնենք հարազատ-մելիքության վերականգնման խնդրին: Պետք է ի նկատի ունենալ այս կետը. եթե շահն ապարդյուն հեռանալու լինի այստեղից, ինչ միջոցներ ձեռնարկել, քանի որ ներկա խնդիրը սերտ կապ ունի այս խնդրի հետ»:

Բեկնազարյանց.- «Այժմ խնդիրը պարզաբանվելով հանգում է բուն իր նպատակակետին: Բավական է, որքան խաբվե-

---

[1] Այս մի հին ավանդություն է Ղարաբաղում, որ, իբր թե իժ և վիշապ օձերը մյուս օձերի նման օձածուից չեն ծնվում՝ ըստ բնության օրենքի: Այլ գոյանում են եղջերուների փորում, ուր մեծանալով՝ ծակում են նրանց փորերը և աշխարհ ընկնում: Այս նմանությունն է ակնարկում:

ցինք օտարներից, որոնք սին հույսերով և սուտ երդմամբ մեզ քնացրին փափուկ բարձերի վրա, մեր թանկագին ժամանակներն իզուր ծախսեցին և մեր հայրենիքին այսքան վնաս պատճառեցին: Եթե Շահն ապարդյուն մեկնելու լինի, որը ես գուշակում եմ իմ փորձառությամբ, անմիջապես կործանվելու են բոլոր ճըռերը և Շուշի են փոխադրվելու բոլոր հարազատ-մելիքներն իրենց զորքերով: Հետո կործանվելու են հարազատ-մելիքների եսության միակ պաշտելի կուռքերը, մասնավոր բերդերը, որոնք կործանված կլինեն և սրանց երկպառակության ու անմիաբանության չաստվածները: Մանավանդ, երբ մենք՝ բոլոր զորականներս ոգևորված եռանդով, միաբան լինենք այս հանրօգուտ գործում, ապա լրիվ կատարած կլինենք մեր սիրելի հայրենիքի՝ մեզանից պահանջած պարտականությունը:

Մինչ այսօր մենք երբ կամենում էինք Ղարաբաղից արմատախիլ անել ճըռերը և ճըռությունը՝ մեր մելիքները միշտ արգելք էին լինում մեզ, ասելով. «Որդի՛ք, կարծես թե ժամանակն անգամ ճըռացել է, որ մեզ համար կարճ կյանք ունեցող ճըռ-շահեր են ծնվում, ինչպիսիք էին Ադիլ-Շահը, Զեքի-Խանը և Ալի-Մուրատխանը: Համբերեցե՛ք, որդիք, մի փոքր ևս համբերեցեք, Աստված ողորմած է: Հերիք է, ինչքան կաշկանդեցին մեզ մեր մեծերի այս անօգուտ հրամանները: Սիրելի՛ զորականներ, այժմ բոլորովին ազատ ենք, այժմ արգելք չկա և ոչ մի կողմից: Ամեն ինչ մեզ խոստանում է հաջողություն, միայն թե չտապենք օգուտ քաղել ժամանակի հաջողությունից»:

Զափար-Սարասար.- «Երբ մեր մելիքներն ունենան մի բերդ միայն, կդադարեն ներքին խռովությունները, կամբողջանան ցրված ուժերը, կամրապնդվեն ներքին սիրո և միաբանության կապերն ու դյուրին կլինի միացյալ ուժերով պատերազմել արտաքին թշնամու հետ»:

Պալլ.Ղարախան Յուզբաշի. -«Մանավանդ, եթե բոլոր զորականներս անքակտելի սիրով միաբանված լինենք և անդրդվելի հաստատակամությամբ գործենք, մեր այս մեծ նպատակն իրագործվելու է, և այն ժամանակ մեր մելիքները կամա, թե ակամա միասին կբնակվեն Շուշիի բերդում»:

Պալլ.Ալբեթյուն Բատի(Բաղդասար).- «Այժմ հարազատ-մելիքները մեծ սիրով և հաճույթյամբ կընդունեն մեր այս որոշումը, քանի որ թեև շատ ուշ, սակայն նրանք անցյալի երկպառակության փորձով համոզված են, որ դա խիստ ծանր է նստել Ղարաբաղի հայերի վրա»:

Նախագահ.- «Հարկ չկա ասել, որ մի բերդի միջոցով մի վայրում կամփոփվեն մեր նյութական, բարոյական և մտավոր ուժերը: Այն ժամանակ այս միաձույլ զորությամբ կարելի է հրաշքներ գործել, և մեր ցանկալի հայրենիքն անձեռնմխելի պահել արտաքին թշնամիներից: Ուրեմն, այժմ բանավիճենք և քննարկենք մեր ընտանիքների կյանքի ապահովության հարցը»:

Գայլ-Ուհան.- «Ինչպես Պալլուճեցիք, մեր բոլոր ընտանիքները և զավակներն այժմ գտնվում են մեր ոխերիմ թշնամի Իբրահիմ ճրռ-խանի և ճրռ-մելիքների ճանկում, Շուշի բերդում: Իսկ երբ սրանք լսեն, որ մենք ոչ միայն ամբողջապես կործանել ենք իրենց ուղարկած 3000 մարդկանց, այլ նաև միաբանվել ենք իրենց թշնամի Շահի հետ, երևակայեցեք, ինչ կլինի մեր ընտանիքների վիճակը»:

Աղնաուր-Ուհան.- «Ընդհակառակը, ես հաստատում եմ, որ այդ ճրռերը մեզանից լավ կպահպանեն մեր գերդաստաններ-ը և բնավ չեն հանդգնի վնասել մեր ընտանիքները ո՛չ հայտնի, ո՛չ գաղտնի ձևով: Նրանք, երբ կլսեն, որ մենք իրենց մարդկանց կոտորել, գաղտնի դավադրությամբ երևան հանել և իրենց թշնամու հետ միաբանվել ենք՝ իրենց ամեն կերպով մեղավոր կզգան, իսկ մեզ՝ ամեն կերպով անմեղ: Եթե մենք մեր գերդաստանը Շուշի փոխադրեցինք, այդ քաղաքականապես նշանակում է, որ մենք իրենց բարեկամ ենք համարել և ոչ թե թշնամի: Իսկ այժմ, նրանք այս ամենն իմանալով հանդերձ, ընկան իրենց լարած թակարդի մեջ: Ուրեմն, ոչ թե մենք ենք գնացել և միացել Շահի բանակին, այլ իրենց նենգությամբ իրենք են մեզ ստիպել դիմել այդ միջոցին»:

Ղարախան-Յուզբաշի.- «Քաջե՛ր, Ս.Վանեսը վկա, այդ ճրռերը մեր բացակայությունից ավելի են վախենում, քան ներկա-

յությունից: Տղե՛ք, հիշում եք, որ Իբրահիմ ճրո-խանը մի քանի պարկեշտ հայ կանանց և օրինավոր որդիների առևանգեց, որոնց մեջ էր և Կուսապատցի Ապրեսի աղջիկ Վարդ-Խաթունը, սակայն տասնապատիկը տուժեց: Փոխարենը մենք առևանգեցինք այդ ճրո-խանի վերջին կնոջը՝ Բալաքեանի Հիվմայի կամ Օմար-խանի Բիքա աղջկանն իր բոլոր նաժիշտներով և հայ առևանգած կանանցով և օրիորդներով, որոնց առևանգել էին մի գիշերվա մեջ: Հայ կանանց և օրիորդներին հանձնեցինք իրենց տերերին, իսկ Բիքային իր նաժիշտներով տարանք Կաչաղակաբերդ, ուր և պահեցինք երկու ամիս ու հետո կրկին վերադարձրինք Աղտամ, որտեղից առևանգել էինք: Այդ ժամանակ ճրո-մելիք Միրզախանյան ճրո-մելիք Ալլահվերդին, ճրո խանից, իբր թե ծածուկ, ստիպված օրական մեզ համար ուղարկում էր երկու ոչխար, տասը հավ, երկու կուժ գինի, օղի, պանիր, հաց և այլն:

Հետևապես, այժմ այդ ճրոները Շահից այնքան չեն վախենում, որքան՝ մեզանից: Եվ ահա այս է պատճառը, որ այդ ճրոները մեզ շտապ կերպով ոչնչացնելու նպատակով, ուղարկել էին այսօրվա երեք հազար մարդկանց, որոնք անմիջապես կոտորվեցին: Այժմ, այդ ճրոները շատ են խեղճացել մեր թրերի շնորհիվ և ձեռնթափ են եղել ամեն կողմից: Ու դրա համար ակամայից, նրանք ստիպված են լինելու մեզանից լավ խնամել մեր ընտանիքները»:

Նախագահ.- *«Այժմ բանավիճենք և քննարկենք մեր ծառայությունը վարձատրելու հարցը»:*

Բեկնազարյանց.- *«Մեր ծառայությունները վարձատրելու համար Մելիք-Մեժլումը որոշել է այս քանակությունը. «Անտարակույս, Հայրենիքը և ապագան պետք է վարձատրեն մեր և ձեր զոհողությունները և այս զոհողության հիշատակը, որպես հավերժական արձան, անկործանելի պետք է հարատևի ճշմարիտ հայ մարդկանց սրտերում դարեդար»:*

Պել-Ճամալ.- *«Եթե ես մեռնելու լինեմ այս պատերազմում, իմ ընտանիքը «դարեդար» ով կկերակրի: Իմ գերդաստանը կառավարվում է միայն իմ հրացանի ծակով. եթե ես մեռնեմ,*

հրացանիս ծակը կմնա «դարեդար» դատարկ հիշատակ, իսկ իմ ընտանիքը՝ «դարեդար» սոված, ծարավ, մերկ, կենդանի մեռյալ, հավերժական կմախք: «Դարեդար» ապրի ձրի ծառայությունը և անփող մարդասպանությունը»:

Պալլուճ. Փեհլան-Սագի.- *«Հայտնի երևում է, որ մեր Հարազատ-մելիքը մեր ծառայությունը և կյանքը վարձատրում է միայն զոհողությամբ»:*

Օշափ-Բաղդասար.- *«Մեզ համար ավելի լավ է հայության բարեկամ և Հայրենյաց պաշտպան մելիքի հետ բանակում քաջությամբ և զոհողությամբ մեռնել, քան թե հայրենյաց թշնամի ճըռերին դրամով ծառայելով կենդանի մնալ, շահամոլ, կեղտոտ մակդիրը ժառանգել և մեր բազմամյա քաջության վրա սև քող ձգել»:*

«Համաձայն ենք».-ասացին շատերը:

Աժդահա-Անդրի.- *«Կեցցե՛ս, Հայրենիքը ծերանում է և սակավ է ծնում մեզ նման քաջեր: Եթե մենք այսօր զոհողությամբ մեր ծնողին չօգնենք, ապա ե՞րբ պետք է օգնենք»:*

Զարպազան-Եուղուրլու.- *«Քաջության ծնողը Հայրենիքն է, սիրտը՝ դյուցազնության հնոցի և դյուցազնությունը՝ փրկության Հայրենյաց: Ղարաբաղի շնորհիվ մենք ունենք այս ամենը: Ուրեմն, տղե՛ք, էլ ո՞ր ժամին եք սպասում...»:*

Թեոնմազ-Բելլու.- *«Եվ աննկուն հաստատամտություն»:*

Պրախմազ-Հովսեփ.- *«Եվ բարակացավի նման բռնածը ձեռքից բաց չթողնելը»:*

Պալլ.Քեարփեթյուն-Տէտե.- *«Եվ ցավող ատամը քեարփեթյունով (երկաթե բռնիչով) քաշել ու նետելը»:*

Պել-Ճամալ.- *«Եվ մեր աղեղնաձև թրերով սպանելը, և մեր հազար գնդակից մեկի չչեղելը և մեր առանց փողի մարդասպանությունը և մեր ձրի հայրենասիրությունը և մեր անվարձ սատկելը և մեր կանանց՝ այրի և զավակների որբ մնալը: Աչքդ լու՛յս, Խանփեր, այսօր քո այր Ճամալդ վեց փանհաբատի /90 կոպ./ գնդակ և վառոդ փչացնելով՝ ձրի հարյուր թշնամի սպանեց: Մարդդ շահավոր առևտրի մեջ է, Խանփե՛ր: Սատկի անփող հայրենասիրությունը»:*

Խորհուրդը վերջացավ և մենք դիմեցինք դեպի Շահի բանակը: Խորհրդականների խոսքերը նույնությամբ գրվեցին. թերևս դրանք ապագայի սերունդներին օգտակար կլինեն:

Որոշվեց, որ Օշափ-Բաղդասարը, Զարպազանը, Քեարփեթյունը, Փեհլուանը, Ալբեթյունը, Պողպատը և Զափարն ալյուրը տանեն Շուշի, թողնեն այնտեղ և գան ու միանան մեզ բանակատեղում:

Զ.

Հարկ է բացատրել այդ խորթ և անսովոր մականունների պատճառները, որոնք ծագում են առել զանազան պատերազմներում և զանազան ժամանակներում՝ քաջերից յուրաքանչյուրի առանձնահատկություններից ելնելով: Այս մականուններից մի քանիսը հարազատ-կաթողիկոսներն են դրոշմել քաջերի բուն անունների վրա, մի քանիսը հարազատ-մելիքներն են կպցրել, մի քանիսը ճրո-խաները և ճրո-մելիքները, իսկ մի քանիսը՝ ժողովուրդը: Այդ անունների հետ կապված են պատմություններ, որոնք հարկ է համառոտ նկարագրել:

Բայց կան ուրիշ քաջեր, որոնք հիշված չեն այս քաջերի շարքում, ինչպես Քեալագեոզ-Առստամը, Ուզունդլիճ-Սային, Պանթմանդլիճ-Մարտին, Պաթման-Թոփուզ-Թեոսը, Անհաղթ-Ղազարը, Քաչալ-Մոսին, Քոսակ-Դիվգին, Գիժ-Մեքին, Թոխմախ-Սափարին, Զնտան-Ավթանդիլը, Շիր-Նասիբը, Պեպյուռ-Մախմուրը, Անգութ-Խաչին, Նեառ-Եղիազարը, Թիվլի-Արզումանը, Բասարքեչար-Գեափին, Դելի-Մահրասան, Դելի-Քեշիշը և այլն:

Կաքև տեղական լեզվով նշանակում է կաքավ, իսկ Զաքո՝ Զաքարիա: Նա ուներ կաքավի ընթացքի ձևով մի նուրբ և սրընթաց քայլվածք: Ահա այս հատկությունից ելնելով՝ Գանձասարի Ժ. Հովհաննես կաթողիկոսը դրոշմել է Զաքի անվան վրա Կաքև բառը և ընդհանրացրել Կաքև-Զաքի անունը:

Կաքև-Զաքին ընիկ Հաթերք գյուղից է և սուրհանդակի պաշտոն էր վարել Գանձասարի հարազատ-կաթողիկոսների, բոլոր հարազատ-մելիքների մոտ՝ ամենայն հավատարմությամբ և գաղտնապահությամբ:

Կաքև-Զաքին ուներ մի մահակ, որի մեջը դատարկ էր: Ձեռնափայտը բաղկացած էր երեք կտորներից, որոնք միանում էին պտուտակներով և կտորներն անհայտանում էին երկու կապերով: Աջը ոլորելով բանում էր, նամակները գետեղում մեջը և ձախը ոլորելով կրկին ամրացնում: Ահա Կաքև-Զաքին այս մահակով էր գաղտնի նամակներն անվտանգ հասցնում իրենց հասցեատերերին:

Գաղտնի ժողովները միշտ գումարվում էին Գանձասարում՝ բոլոր ճըռերից ծածուկ: 1785 թվականին Մեծ-պասի վերջին շաբաթում կայացավ մի գաղտնի ժողով Ժ. Հովհաննես հարազատ-կաթողիկոսի նախագահությամբ, որը հրավիրվել էր Կաքև-Զաքու միջոցով: Բացի Մելիք-Շահնազար Գ-ից, հրավիրված էին բոլոր հարազատ-մելիքները, զորավարները, յուզբաշիները և վանահայրերը, իբրև կաթողիկոսի զատկական պատարագին ներկա գտնվելու, որը սովորություն էր հնուց: Գումարված էին Խոթա[1] վանքի վանահայր Արծիվ-Թադեոս եպիսկոպոսը, Սուրբ-Հակովբ[2] վանքի Հակոբ վարդապետը, Պոկեսբերդի[3] (Պոկի ս. Գևորգ) Ալբեթյուն վարդապետը,

Եղիշ-Առաքել[4] վանքի Դելի Մահրասան, Ինն-մասի Վարդան վարդապետը, Հոռեկա վանքի[5] Ասլան–Մահրասա-Մեսրոպ վարդապետը, Գյուլիստանի Մելիք-Հովսեփյան Մելիք-Աբով Գ-ն, Ջրաբերդի Մելիք-Մեժլումը, Ջալալյանց Մելիք-Գրիգորյանը, Դիզակի Մելիք-Բախտամը, բոլոր ավագերեցները, մելիքազունները, զորապետները: Խնածախից ներկա էր

---

[1] Թարթառ գետի ձորում և Վերին-Խաչենում մի նշանավոր վանք է:
[2] Քոլատակ գյուղի մոտ, Վերին-Խաչենում մի նշանավոր վանք է:
[3] Ռև գյուղի վերև մի բարձր սարի գագաթի վրա՝ Խաչենում:
[4] Թարթառի ձորում, Ջրաբերդի սահմանում:
[5] Գյուլիստանի գավառում:

Աբրահամ քահանան, Քեանդուխտի Խաչատուրը և Աբրահամ Բեկնազարյանցը:

Ջատկի պատարագից հետո ժողովուրդը ցրվեց, փակվեցին Գանձասարի դռները, բոլոր ուխտապահները երդվեցին գաղտնի պահել ճըռերից այս ժողովի գոյությունը, և նախագահ Կաթողիկոսը՝ ոտքի կանգնած, արտասվախառն ողբով ու հետևյալ խոսքերով բացատրեց այս ժողովի շարժառիթը.

«Ղարաբաղի՛ հայ տղամարդիկ.

Ճըռ-խանությունը[1] մեր սուրբ Հայրենիքում գոյացավ 1752 թվականին: Այդ թվականից սկսած ձգտեց սպանել հարազատ-մելիքությունը և ստեղծել ճըռ-մելիքություն: Ճըռ-խանությունն իր մահամերձ գոյությանը կյանք տալու խորամանկ քաղաքականությամբ, նախ, որպես հենարան, իր կողմը գրավեց Վարանդայի Մելիք-Շահնազար Գ. Հիմարին և նրա աջակցությամբ հիմնեց Շուշին: Իսկ 1755 թվականին գլխատել տվեց Ջալալյան Մուլքի-Բեկի որդի Մելիք Ալլահվերդիին և նույն թվականին ստեղծեց Խնձորեստանի ճըռ-մելիքությունը, այն սկսելով ճըռ-մելիք Միրսախանից, որը մատնել էր նույն հարազատ-մելիք Ալլահվերդիին: Այնուհետև 1775 թվականին Փանահ ճըռ-խանի որդի Իբրահիմ ճըռ-խանը գաղտնի դավադրությամբ Դիզակի հարազատ իշխան Մելիք-Եսայու դեմ գրգռեց Գ.Մելիք-Շահնազարին և ճըռ Մելիք-Միրզախանին: Սակայն այդ պատերազմում ճըռ Մելիք-Միրզախանը կալանավորվեց և գլխատվեց Մելիք-Եսայու հուժկու թրով: Իբրահիմ ճըռ-խանը, ծածուկ նենգությամբ անընդհատ հետամուտ էր լինում գլխատելու Ջրաբերդի հարազատ-մելիքությունը: Այդ էր պատճառը, որ սույն ճըռ-խանից հրապուրված Ալլահվերդի-Յուզբաշյան Միսաելը, ով ճըռ-խանից խոստում էր առել մելիքության տիտղոսով իշխան լինել ամբողջ Ջրաբերդում, գնդակահարվեց նույն Մելիք-Մեժլումից՝ իր դավակից ընկեր, իր փեսա Հակոբ Յուզբաշու հետ միասին: Այն Միսայելը, ով կամենում էր Մելիք-Մեժլումի հետ սպանել հարազատ-մելիքությունը և ինքը

[1] Սկսված է Փանահ ճըռ-խանից:

մելիք դառնալ, այսպես սպանվեց ու այդ չարիքը մեջտեղից վերացավ:

Իբրահիմ ճրռ-խանն ամեն կերպ ձգտում է սպանել Աղվանի հարազատ-կաթողիկոսությունը և ստեղծել ճրռ-կաթողիկոսություն, ինչպես իր հայրն էր ստեղծել Խնձորեստանի ճրռ-մելիքությունը, որպեսզի հլու հպատակ լինեին իրեն՝ անարժանությամբ առաջ եկած այդ ճրռ-իշխանները:

Հարկ չկա ասել, թե հետզհետե ինչպիսի նորանոր չարիքներ էր մտածում այդ ճրռ-խանը: Այս ճրռը մտածում էր ամեն կերպ ջլատել մեր ուժերը, երկպառակտել զորությունը, խռովություն սերմանելով հային հայի դեմ հանել, խանգարել մեր ընտանեկան հանգստությունը և խաթարել մեր ապահովությունը: Եվ ոչ միայն այդ. այլ ճգնում է, ջանք ու եռանդ չի խնայում Ղարաբաղից ջնջելու հոգևոր և մարմնավոր հարազատ-իշխանություններին, որը մինչև օրս մեր նախնիները բոլոր վտանգներից պահպանել և մեզ են հանձնել:

Քանի որ Ղարաբաղում կան տակավին ձեզ նման դյուցազուն հայ զավակներ և հերոսներ՝ Աստծո կամքով կխափանվեն բոլոր ճրռերի չար ձգտումներն ու ձեռնարկները: Բայց դուք, սիրելի՛ զավակներս, պետք է գործեք համասիրտ, համակամ և համամիտ խորհրդով: Դուք պետք է միաբան լինեք, մանավանդ հանրօգուտ գործերում և ձեռնարկություններում: Դուք պետք է միացած ուժերով դիմադրեք Հայրենյաց թշնամու բոլոր ձեռնարկություններին, որ դրանք փչրվեն և անօգուտ ու ապարդյուն դառնան: Դուք ձեր ձեռքի հետ միացրեք ձեր սրտերը և ձեր խելքի հետ՝ ձեր զենքերը: Ահա այսպիսի միացյալ ուժով ամեն ինչ հաջող կընթանա:

Արդեն գիտեք, որ մեր նախնիները մի զորավոր դաշնակից ունենալու և Պարսից լուծը թոթափելու նպատակով գաղտնի հարաբերություն են հաստատել Ռուսաց կառավարության հետ: Այդ գաղտնի հարաբերությունը մեր և Ռուսաց կառավարության մեջ շարունակվում է Պետրոս-Մեծ կայսեր օրից սկսած: Բայց այժմ մեր բանակցությունները ծածուկ են ընթանում և այդպես է լինելու Եկատերինա Բ. կայսրուհու հետ՝ Արդու-

թյանց Հովսեփ արքեպիսկոպոսի միջոցով, որը Ռուսաստանում է և մեծ ջանքեր է գործադրում այս ուղղությամբ:

Այժմ ևս հույժ կարևոր է գրել և Եկատերինա կայսրուհուն ուղարկել մի հանրագրություն, որը հիմնված կլինի մեր նախնիներից շարունակած նույն պայմանների վրա, ինչի մասին գիտեք ամենքդ»:

Գրվեց հանրագրություն, ստորագրվեց բոլոր ժողովականների կողմից և այն, նախագահի կողմից առատ պարգևով հանդերձ, հանձնվեց Կաքև-Զաքուն որ տաներ և հանձներ Տփխիսի Հայոց Առաջնորդին՝ Արղությանցին ուղարկելու համար:

Ժողովականներն ուխտեցին այնուհետև միաբան լինել, երդվեցին ս. Գանձասարի տաճարով, Խաչով և Ավետարանով՝ գաղտնի պահել ճըռերից սույն ժողովի ու հանրագրության գոյությունը և ցրվեցին ս.Կաթողիկոսի օրհնությամբ:

Հանրագրության մեջ գծված էին, թե ռուսներն ինչ պայմանով պետք է տարածեին իրենց հովանավորությունը հայերի վրա, թե ինչպես պետք է հայոց ուժերով կործանեին ճըռ-մելիքությունը և թոթափեին Պարսից-լուծը և ինչպես պետք է հարազատ-մելիքությունը վերականգնեին իր բազադարյա, անկախ իշխանությամբ, իր նախկին, բոլոր իրավունքներով՝ Ռուսաց Թագավորության հովանավորության ներքո:

Այդ ժամանակ Իսրայել եպիսկոպոսը Գանձակում կաթողիկոս էր ձեռնադրվել Երից-Մանկանց վանքի վրա, որ Աղվանի հակաթոռ կաթողիկոսարանն է, ինչպես Աղթամարը՝ Էջմիածնի համար: Երից-Մանկանց վանքը կառուցված էր 1651 թվականին, Թարթառ գետի ձախ եզերքի մի լանջի վերևում՝ Գյուլիստան գավառի Խոտաշեն գյուղից մի քահանայի որդու կողմից, որի անունը Սիմոն էր: Վանքը շինող Սիմոնը ոչ թե ի փառս Աստծո է հիմնել այդ շինությունը, այլ ի փառս իր կաթողիկոսության և Հայոց Ղարաբաղի երկպառակության: Փառասեր տիրացու Սիմոնին հաջողվում է իր փառքի համար կառուցված վանքում կաթողիկոսանալ, որից սկսվում է ճըռ-կաթողիկոսությունը: Սիմոնին հաջորդում է Ներսես ճըռ-կաթողիկոսը, ով փոխադրվում է Գանձասար, իսկ Ներսեսին հա-

ջորդում է Իսրայել ճըռ-կաթողիկոսը, որը ևս նույն քահանայի ազգից էր:

Գանձասարում երդվյալ ուխտապահ հայերից մեկը՝ Ջալալյան Հովհաննես հարազատ-կաթողիկոսի հարազատ եղբայր Մուլքի-բեկը ժողովի գաղտնիքը հայտնում է Իբրահիմ ճըռ-խանին: Վերջինս անմիջապես նամակ է ուղարկում Գանձակ, որով Ամարասի հարազատ-կաթողիկոսությունը խոստանում է տալ Իսրայել ճըռ-կաթողիկոսին, եթե նա կարողանա Կաքև-Զաքուց խլել հանրագրությունը և ուղարկել իրեն՝ Շուշի: Հանրագիրը խլվեց և ուղարկվեց Իբրահիմ ճըռ-խանին և, ի վարձատրություն այդ ծառայության, Իսրայել ճըռ-կաթողիկոսը Գանձակից փոխադրվեց Ամարաս:

Կաքև-Զաքին այնուհետև, այլևս գործի չդրեց նույն ձեռնափայտը, այլ ուրիշ միջոց հնարեց ապահով նամակատարության համար: Դրա համար էր այս «Կաքև» անունը Հովհաննես կաթողիկոսը դրոշմել էր Զաքու անվան վրա: Կաքև-Զաքին այնուհետև մերթ խոնչայի մեջ էր ամրացնում նամակները, մերթ թոնրահացում և մերթ տրեխների կարկատաններում:

Շեյթան թուրքերեն կոչվում է սատանա, իսկ Թյունի՝ Հարություն անվան կրճատ ձևն է: Սա բնիկ Դիզակ գավառի Տող գյուղացի էր և վարել ու վարում էր լրտեսի պաշտոն բոլոր հարազատ-կաթողիկոսների և մելիքների մոտ: Շեյթան-Թյունին Շուշի բերդում, Խնձորեստան գյուղում և Ավետարանոց ավանում շրջանկատ աչալրջությամբ և գաղտնի դիտել ու դիտում էր բոլոր ճըռերի տեղաշարժերը, իմանում է սրանց չար մտադրությունները, ձեռնարկած ու ձեռնարկելիք քայլերը և հայտնում հարազատ-կաթողիկոսներին ու մելիքներին: Նա իր պաշտոնը կատարում է այնպիսի վարպետությամբ, որի վրա զարմանում ու ապշում են բոլոր հարազատներն ու ճըռերը: Նա գիտե բոլոր ճըռերից և նրանց լրտեսներից աննկատ մնալու հնարագիտությունը: Ամեն մի լրտեսություն կատարելու ժամանակ Շեյթան-Թյունին բոլորովին կերպարանափոխվում է: Երբեմն դերվիշ է ձևանում, երբեմն մոլլա, երբեմն ակնավաճառ, երբեմն զվարճաբան, երբեմն խենթ, երբեմն եպիսկոպոս, մերթ

վարդապետ, մերթ քահանա, մերթ մուրացկան, մերթ Շահից ու-ղարկված բանբեր և այլն:

Շեյթանը գիտեր հայերեն, վրացերեն, պարսկերեն և թուրքերեն հատուկ խոսել, ուներ ամեն ձևի հագուստներ, շինծու մորուքներ, որոնցով նա գործում էր համարյա թե անհավատալի հրաշքներ: Ահա այս պատճառով է Իբրահիմ ճըռ-խանը նրա վրա Շեյթան մականունը դրոշմել:

Շեյթանն անհավատալի հրաշքներ էր գործում իր լրտեսության պաշտոնում: Շատ անգամ Մելիք-Շահնազար Գ-ի հատուկ հագուստով, ձիով, մորուքով և նրա նման շարժվածքով ներկայացել էր Իբրահիմ ճըռ-խանին, Իսրայել ճըռ-կաթողիկոսին և ճըռ–մելիքներին՝ քաղաքական ծանրակշիռ խնդիրների մասին գաղտնաբար խորհրդակցելու պատրվակով: Ահա այդպիսի հնարագիտությամբ ամեն գաղտնիք, ձգտում և ձեռնարկություն ճըռերից քաղելով՝ այն հաղորդում է հարազատ-մելիքներին, որոնցով և խափանվում էին ճըռերի բազմաթիվ նենգ ծրագրերը:

Բայց վտանգավոր պարագաներում նա իր հետ միշտ տանում էր Մելիք-Շահնազար Գ-ի զվարճաբան Պըլը-Պուղուն[1], որն իր հայտնի առակախոսությամբ, զվարճախոսությամբ և սրախոսությամբ գրավում է հասարակության համակրությունը, մանավանդ բոլոր ճըռերի: Պըլը-Պուղին Շեյթան-Թյունու անունը փոխում է «Այր Աստծո, Ամբակում մարգարե»: Որպես մարգարե ս. Հոգու ազդեցությամբ նրանք նախօրոք իմանում էին թշնամու բոլոր խորհուրդներն ու գաղտնի ծրագրերը և իսկույն հաղորդում Հրեա թագավորներին: Այդպես և Շեյթանը՝ իր հնարագիտությամբ կանխավ իմանում է բոլոր ճըռերի ծածուկ մտքերը, ձգտումները և իսկույն հաղորդում հարազատ-մելիքներին:

Գիլ տեղական բարբառով նշանակում է գայլ, իսկ Ուհան՝ Օհան: Այս մականունը մեր զորախմբին կցված է իր իսկա-

---

[1] Նրա առակախոսությունները ցանկացողները կարող են տեսնել «Պըլը-Պուղի» առակագրքում:

կան անվան հետ: Մեր բոլոր պատերազմներում նա մեր դիտակետն էր և մեր փողը: Բարձրավանդակ տեղերից դիտում էր թշնամու դիրքը, քանակը, մոտենալը, հարձակվելը և գայլի նման ոռնալով՝ մեզ իմաց տալիս ամեն ինչի մասին: Փողի ձայնը զգաստացնում էր թշնամուն, իսկ գայլի ոռնոցը խաբելով՝ ապահովեցնում:

Բացի այդքանը, Գայլ-Ուհանն[1] ուներ երկու անզուգական հատկություն՝ գիշերատեսություն և սուր լսողություն: Գիշերն ամեն ինչ տեսնում էր, ինչպես մենք՝ ցերեկը: Մանավանդ, գայլի նման պատառոտում էր իր ձեռքն ընկած թշնամուն:

Կեծակ նշանակում է կայծակ, իսկ Վանի՝ Հովհաննես, կրճատված բառով: Նա ուներ մեծ արագաշարժություն: Հրացանի կռվից հետո, երբ սկսվում է սրակռիվը, իր հարվածի նշանակետ է ընտրում թշնամու գագաթը: Իր ծանրակշիռ թուրը կայծակի արագաշարժությամբ այնպես ուժգին է զարկում, որ սպանվածի գլուխը մինչև պարանոցը երկու հավասար կեսի էր բաժանում: Կայծակ մականունը նրա վրա դրոշմել է Գյուլիստանի Մելիք-Աբով Գ.-ն:

Թեով(դով) թուրքերեն նշանակում է առասպելական հրեշ-ամենահաղթ կենդանի, որը, ըստ Պարսից առասպելի, մենամարտել ու հաղթել է Ռուստամ-Զալին: Թեով-Գասպարն ուներ հաղթանդամ կազմվածք, անսահման ուժ, առյուծի սիրտ, պողպատյա բազուկներ և անդիմադրելի հարձակում: Ժողովուրդը այս մականունը դրոշմել է նրա այս առանձնահատկություններից ու ականատես լինելով նրա կատարած քաջագործություններին:

Քեարվանդռան՝ թուրքերեն ասել է, թե քարավան կտրող: Նա արհեստավոր բրուտ էր, իսկական անունն է Թյունի: Ուներ պարթևական հասակ, տրդատյան ուժ և ահարկու տեսք:

Իբրահիմ ճրռ-խանը մի անգամ լսելով, որ այս Բրուտ-Թյունին միայնակ գնացել է Քուր գետից ձուկ բերելու, նրա

---

[1] Մինչև այսօր Խնածախի ծեր մարդկանց բերաններում հիշվում է «Գայլ-Ուհան»:

հետևից հարյուր հիսուն թուրք է ուղարկում: Բրուտ-Թյունին տեսնելով, որ թուրքերը չտապում են իրեն սպանել, հաջողեց-նում է միայնակ կործանել թուրքերին և ձուկն առնելով՝ անվ-նաս վերադառնում է տուն: Այդ դեպքից հետո Իբրահիմ ճըռ-խանը նրան «Քեարվանղռան» է անվանում և այդպես էլ մնում է նրա մականունը:

Զափար՝ թուրքերեն նշանակում է կտրող, իսկ սարասար՝ պարսկերեն գլխից գլուխ: Այս մարդու առաջին անունը Թյու-նի էր: Փանահ ճըռ-խանը, բազմիցս լսելով նրա սանձահարող բնավորության մասին, անվանեց Ջլով[1] (սանձ):

Մի անգամ Իբրահիմ ճըռ-խանը, միանալով Մելիք-Շահ-նազար Գ-ի և Խնձորեստանի ճըռ-մելիք Միրզախանի զորքի հետ, Կուսապատում հարձակվեց Մելիք-Ադամի զորքի վրա: Այս սարսափելի կռիվը տեղի է ունեցել 1770 թվականին, ուր ներկա էր մեր այժմյա խումբը: Երկու բանակները կատաղաբար բախվեցին միմյան հետ, աննպաստ եղավ հրացանի կռիվը, մե-ռոնք սուսերամերկ հարձակվեցին: Ջլովը, կարծես թե հնձելով, վերացրեց թշնամու ձախ թևը, թրահար կոտորվեց նաև թշնա-մու աջ թևը: Մազապուրծ Շուշի փախան Իբրահիմ ճըռ-խանը, Մելիք Շահնազար Գ.-ն, ճըռ-մելիք Միզախանը և սարսափած փակվեցին բերդում: Բերդում ճըռ-խանը զարմացած գոչում էր.- «Զափա՛ր-Սարասա՛ր», այսինքն ձախ թևը ծայրեծայր կո-տորեց: Ահա այդպես Ջլով անունին դրվել է Թյունի անունը, իսկ Զափար-Սարասար մականվանը Ջլով բառը: Առաջին ա-նուններն են տեղի տվել վերջին մականվան: Նա Մելիք-Ադամի զորավարն է և արդյունավետ ծառայություններ է մատուցել բոլոր հարազատ-մելիքներին:

Ազնաուր՝ թուրքերեն քաջհաղթի նշանակություն ունի: Նա նախ Գյուլիստանի Մելիք-Հովսեփ Գ-ի զորականն է եղել, ապա՝ Դիզակի Մելիք-Եսայու: Նրա նախկին անունն Օհան էր, ժողովուրդը նրան մսեղ լինելու համար «փափուկ» մականու-

---

[1] Խնածախի ծերերն այդ գերդաստանին և՛ Ջլատենց են ասում, և՛ Սարասա-րենց:

նը կցեց նրա իսկական Օհան անվանը՝ կոչելով «Փափուկ-Օհան[1]»:

Մելիք-Եսայու օրով Երասխ գետի աջ ափերում բնակվող թափառական մահմեդականները, Իբրահիմ ճրռ-խանի ծածուկ թելադրությամբ, շարունակ խմբովի հարձակում, կողոպտում և ավերում էին Դիզակ գավառի հարավային և արևելյան մասերը: Այս սարսափելի մարդը՝ Փափուկ-Օհանը դարան է մտնում: Նա իր զորքը սփռում է Երասխի ձախ ափերում, իսկ ինքն՝ իր թիկնապահներով թաքնվում Խուտափիրինի կամրջի ձախ անցքում: Այսպիսով, խզելով ասպատակների ճանապարհն ու հաղորդակցությունը Պարսկաստանի հետ, նա բնաջնջում է այդ ավերիչներին և գավառն ազատում հրոսակների արշավանքներից: Հետևապես, նրա անունը «Ազնաուր» է հռչակվում այդ թափառական ցեղերի մեջ:

«Օշափ»-ը վիշապ օձի և առասպելական հրեշի նշանակություն ունի: Նա մեկն էր Մելիք-Ադամի ահարկու հազարապետներից, որն ահ ու սարսափ էր տարածում բոլոր ճրռերի վրա: Մելիք Շահնազար Գ-ն բազմիցս կրկնել էր. «Բաղդասարն Օշա՛փ է, օշա՛փ: Ա՛խ, եթե դու չլիներիր, հաղթած կլինեինք Մելիք-Ադամ Մելիք Իսրայելյանին»: Այդ օրվանից ժողովուրդը նրան Օշափ-Բաղդասար է կոչում:

Ասլան՝ թուրքերեն նշանակում է առյուծ, իսկ Մանուչար իր իսկական անունն է: Նա հազարապետության պաշտոն է վարել Դիզակի Մելիք-Եսայու, Խաչենի Մելիք-Ալլահվերդի Ջալալյանի, Գյուլիստանի Մելիք-Հովսեփ Գ-ի մոտ: Ասլան մականունը ստացել է Փանահ ճրռ-խանից դեռ իր երիտասարդ հասակում:

Նա ունի առյուծին հատուկ վեհանձնություն, աներկյուղ սիրտ, լայնալանջ կուրծք, աննահանջելի հարձակում, անդիմադրելի ուժգնություն և չափազանց ուժ: Բացի այդքանից, ունի ևս մի եզակի հատկություն, պատերազմական ամենանեղ և տագնապալի պահերին, առանց երկար մտածելու, իսկույն որոշում է թշնամուն հաղթելու միջոցը և, առյուծարձակ լինելով,

---

[1] Այժմ ծերունիները «Փափուկ Օհանենց» են անվանում այդ տունը:

շահում հաղթանակը: Ահա այս հատկություններից է ծագել նրա «Ասլան» մականունը:

Սմավոն՝ տեղական բարբառով Սիմեոն է նշանակում: Նա հրացանաձգության մեջ այնքան արագաշարժ է, որ իր գնդակ-ները պատերազմում կարկտի նման տեղում են թշնամու վրա: Արագաշարժ է և սրամարտի մեջ: «Կարկուտ» մականունը նրա վրա դրոշմել է Դիզակի Մելիք-Եսային:

Աժդահա, թեև թուրքերեն նշանակում է մեծ օձ, բայց փո-խաբերաբար օգտագործվում է որպես ամենաքաջ, իսկ Անդրի՝ Անդրեասի կրճատածն է: Այս բարձրահասակ, հաղթանդամ, ու-ժեղ և արիասիրտ տղամարդը ծառայել է մերթ Ջալալյան, մերթ էլ Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքներին: Նա միշտ սիրելի է եղել բոլորին՝ իր զարմանալի քաջությամբ և ամենահավատա-րիմ ծառայությամբ: «Աժդահա» մականունը նրան տվել է Հով-հաննես հարազատ-կաթողիկոսը:

Զարպազան՝ պարսկերեն նշանակում է թնդանոթ, իսկ Եուղուրլու՝ թուրքերեն՝ բախտավոր: Նրա մկրտության անունը Մարտիրոս էր, բայց ժողովուրդը կրճատելով՝ Մարտի էր կո-չում:

Նա Մելիք-Ադամի փորձառու զորապետն էր և ամենուրեք վայելում էր «Քաջահաղթ» փայլուն մականունը: Նրա մասնա-վոր հատկություններն են բարձրագոչ ձայնը և վստահ հարձա-կումը: Նրա գլխավոր հատկությունն այն է, որ պատերազմի ա-ռաջին մասում հանում է իր աղեղնաձև, մեծ թուրը և թնդանո-թանման ահեղագոչ ձայնով որոտում.- «Թու՛ր, թու՛ր քաշեցեք, սպանե՛ք, սպանե՛ք, դե՛ սպանե՛ք թշնամուն»: Դրանով նա խրա-խուսում է իր զորքին, որը ոգևորվելով նախահարձակ է լինում և, թշնամու զորքին ահաբեկելով ու կոտորելով, հաղթանակ տա-նում: Նա իր կյանքում դեռ պարտություն չի կրել:

«Զարպազան» մակդիրը նրա վրա դրել է Փանահ ճրռ-խանը, իսկ «Եուղուրլու»[1] *Իբրահիմ ճրռ-խանը:*

---

[1] Այժմ նրա հետնորդները կոչվում են «Եուղուրլուենց», իսկ երկրորդը՝ «Ա-թունց»:

Նեառաթեով՝աղճատված թուրքերենով նշանակում է յոթգլխանի հրեշ-թագավոր, իսկ Աթա՝ հայր, քաջերի հայր: Նրա անունը Սահակ է եղել, «Աթա» է անվանվել Մելիք-Շահնազարի, իսկ «Նեառաթեով»՝ Իբրահիմ ճրռ-խանի կողմից:

Նա ունի պարթևական հասակ, արտակարգ ուժ, անխախտ կամք, աներկյուղ սիրտ և հիանալի զինաշարժություն: Զորավարական պաշտոնով ծառայել է Ջալալյան մելիքներին, երբեմն էլ՝ Գյուլիստանի մելիքներին:

Տեոնմազ՝ թուրքերեն նշանակում է հետ չդարձող, Բելլու՝ հայտնի կամ հռչակված: Նա ևս ուխտապահ և դաշնակից հարազատ-մելիքներին ծառայել է զորավարության և հազարապետության պաշտոններով: Նա հասակով կարճ էր, հայտնի էր անձնվեր ծառայությամբ և կամապաշտությամբ: Նրա գլխավոր հատկությունն այն է, որ պատերազմից հետ չի կանգնում մինչև չհաղթի թշնամուն: Այս համառ հատկությունների համար նրան «Տեոնմազ» են անվանել Իբրահիմ ճրռ-խանի զինվորները, իսկ «Բելլու»՝ հենց ինքը՝ ճրռ-խանը:

Նա մասնակցել է այն բոլոր պատերազմներին, որը մինչև օրս մղել են հարազատ-մելիքները ճրռ-մելիքների և ճրռ-խանների դեմ:

Պրախմազ՝ թուրքերեն նշանակում է բռնածը ձեռքից բաց չթողնել, իսկական անունը Հովսեփ է: Նա Ջրաբերդի մելիքների զորապետը, հարյուրապետն ու հազարապետն է եղել, իսկ հետո Մելիք-Աբով Գ.-ի զորավարը: Նրա առանձնահատկությունն է, որ ցանկացած կռվում ամեն ջանք գործադրում է կոտորելու թշնամու զորավարին, հազարապետին, դրանով իսկ շփոթեցնելով և փախուստի դրդելով նրա զորքին: Եթե այսօր Ծակ-Քարի տակ նշմարած լիներ սարվազների հայ գնդապետ Մելիք-Հայկազյանցին, ողջ չէր թողնի: Նրա վրա մականունը դրել է Իբրահիմ ճրռ-խանը:

Թոփուզ՝ թուրքերեն նշանակում է գլուխը գնդաձև ձեռնափայտ, իսկ Ղարա՝ սև: Նա ունի կարճ հասակ, ջլապինդ կազմվածք, զորեղ բազուկներ, թխագույն դեմք և հիանալի ուժ: Նրա իսկական անունն Ասրի էր, որն Իսրայել անվան կրճատ-

ված ձևն է: Նա աշուղ էր, հանպատրաստից երգում էր հոգեբուխ և սրտաշարժ երգեր: Բայց երբ տեսավ հարազատ-մելիքների և կաթողիկոսների տագնապալից դրությունը, կրոնի, կյանքի և ժողովրդի ունեցվածքի անապահով վիճակը, Հայրենիքը պաշտպանելու եռանդով թողեց սազը և եռացող ավյունով զենքեր առած, դաշտ իջավ՝ հիշատակ թողնելով սույն նշանավոր խոսքերը. «Սազդ վեր դի՛ր[1], եարաղդ երկալ[2], Աշուղ-Ղարա, սազն ու խաղը ազգ չեն պահում, վախտը փոխվալ ա, եարաղդ կապի, մեյդան դուրս ե՛կ[3], ջրիդ խաղա[4], հայի դուշման սև ղոշունդ լոխ գոնդ ըրա[5]»:

«Թոփուզ» մականունը «Աշուղ» բառի հետ կցել է հայ հասարակությունը՝ հաշվի առնելով նրա կարճ հասակը և թրի արագաշարժ ելևէջները:

Փիլզ՝ նշանակում է փիղ, իսկ Առուշանը նրա անունն է:

1754 թվականին Փանահ ճըռ-խանը, միաբանվելով իր դաշնակից Մելիք-Շահնազար Գ.-ի հետ, մեծ զորքով հարձակվեց Խաչենի Ուլու-Պապ բերդի վրա, ուր ամրացված էր Ջալալյան Մելիք-Ալավերդին իր զորքով: Զորքի զորավարն այս Առուշանն էր:

Մելիք–Շահնազարի չար դիտավորությունն էր՝ Փանահ ճըռ-խանի միջոցով ջնջել Ջալալյան հարազատ-մելիքությունը և այդ դավառում հիմնել մի ճըռ-մելիքություն, քանզի տոհմային վատ հարաբերությունների պատճառով Մելիք-Շահնազար Գ.-ն ոխակալություն էր տածում Ջալալյան տոհմի դեմ:

Առուշան զորավարն իր զորքով դարանամուտ է լինում Պակեսբերդի կիրճում, որով Ուլու-Պապ էր անցնելու թշնամու զորքը, և, կոտորելով այդտեղով անցնող հայ ու թուրք միացյալ բանակի ամենամեծ մասին, մազապուրծ մինչև Շուշի է հալածում Փանահ ճըռ-խանին և չարագործ Մելիք-Շահնազարին Գ.-

---

[1] Վայր դիր:
[2] Զենքերդ վեր առ:
[3] Ասպարեզ դուրս եկ:
[4] Զենք և թուր շողացրու:
[5] Բոլորին կոտորի՛ր, գլխատի՛ր:

ին: Ահա այս տղամարդկությունը վարձատրելու համար նրան «Փիղ» մականունը տվեց Ջալալյան Մելիք-Բեքեան Մելիք-Ալ-լահվերդին:

Շահմար՝ պարսկերեն և քրդերեն նշանակում է օձերի թա-գավոր, իսկ դավալ՝ թուրքերեն՝ շեփորահար: Նրա իսկական ա-նունը Գրիգոր էր, բայց կրճատ Գյուգի էր կոչվում: Ղավալ ար-վեստական անուն է: Նա ծառայել է միայն Ջրաբերդի Մելիք-Ա-դամին և Մելիք-Մեժլումին:

Մեր զորախումբը Խնածախի պահպանությունը հանձ-նում է նրան և Քեանդուխտի-Խաչատուրին ու գնում պատե-րազմի, ապահով լինելով, որ նրանք դյուցազուն տղամարդիկ, կկարողանան բոլոր ճըռերի դավաճանություններից անվտանգ պահել մեր ընտանիքներն ու մեզ: «Շահմար» մականունը նրան տվել է Իբրահիմ ճըռ-խանը: Պատճառը՝ հետո:

Է

Հարկ է գրել մի ընդհանուր ակնարկ մեր պատմության ո-գին և անցքերը պարզաբանելու համար:

Պարսիկների, հռոմեացիների, հույների, օսմանցիների, թաթարների, աբխազների, վրացիների և դաղստանցիների չդա-դարող արշավանքները, որոնք մեծ վնասներներ պատճառեցին Հայաստանի բոլոր մասերում բնակվող հայ ժողովրդի կրոնա-կան, քաղաքական և բարոյական համազգային կյանքին, հա-մարյա թե անկարող եղան վնասել Մեծ և Փոքր Սյունիքի կյան-քին: Ղարաբաղի անտառապատ լեռները, անդնդախորը ձորե-րը, ահարկու կիրճերը, սեպաձև ժայռերը, անմատչելի քարայր-ները, թավախիտ անտառները, անառիկ բերդերը և բնությունից ստեղծված ամրոցները սոսկալի երկյուղ ազդելով թշնամիների վրա՝ անձեռնմխելի պահեցին մեր սուրբ հայրենիք Ղարաբաղը նրանց բոլոր հարձակումներից:

Ղարաբաղի լեռնոտ դիրքը, մաքուր օդը, վճիտ ջուրը և սննդարար կլիման բնակիչներին պարգևել են մի նահապետա-

կան և հատուկ կենցաղավարություն, ազատ կյանք, վայրագ բնավորություն, հաղթանդամ կազմվածք, զորեղ ուժ, աներկյուղ սիրտ, դյուցազնական արիություն և հիանալի զորավարական ունակություն:

Աղվանաց երկրում, որի արևմտյան մասն է Ղարաբաղը, հայկական իշխանությունը տևեց Սիսական Առանից մինչև մելիքները: Երբ մեռավ Աղվանաց թագավորությունը, իսկույն ծնվեց Նախարարությունը, երբ մեռավ այս Նախարարությունը, անմիջապես հարություն առավ Թագավորությունը, երբ սա ևս վախճանվեց, նույն ժամին ծնվեց Իշխանություն, որից հետո՝ եկավ Մելիքությունը: Այս ամենի հետ, Ղարաբաղից չպակասեց ինչպես քաղաքական իշխանությունը, նույնպես և կաթողիկոսությունը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս կաթողիկոսից սկսած մինչև Ջալալյան Սարգիս կաթողիկոսը:

Բայց երբ մեր երկրում գոյություն ստացավ ճըռ-խանությունը և այս ճըռ-խանությունը ծնեց ճըռ-մելիքություն, այն ժամանակ ծագեց ներքին երկպառակություն, խռովություն, սարսափելի արյունահեղություն և անվերջանալի պատերազմներ: Ահա այս բոլոր ներքին անկարգությունները տկարացրին Ղարաբաղի հարազատ-մելիքության ուժը և վնասեցին մեր քաղաքական, բարոյական և նյութական կյանքը, բայց՝ ոչ լրիվությամբ:

Ճըռ-խանությունը սկսվեց Ջառչի-Փանահից 1749 թվականին: Պարսկաստանի խորքերում բնակվող և թափառական կյանք վարող Սարուճալլու ցեղից մի աղքատ հովվի որդի էր Փանահը, որը Շահի մոտ կատարում էր մունետիկի պաշտոն և կոչվում «Ջառչի-Փանահ»: Մի օր նա ներհակաբար հրապարակ է հանում Նադիր-Շահի որոշած վճիռը և գլխատման երկյուղից ստիպված՝ 1747 թվականին փախչում Ղարաբաղ:

Ջառչի-Փանահը դիմում է Գյուլիստանի և Ջրաբերդի հարազատ-մելիքներին և սրանց հայտնում, որ ինքը պաշտպանության հույսով ապավինել է մելիքների հովանուն և ապրում է տագնապահար: Նույն թվականին իր մերձակա մարդկանց կողմից սպանվում է Նադիր-Շահը:

Շահի սպանության ավետիսն առնելուն պես՝ Ջառչի-Փանահը, նամակ գրելով, Ղարաբաղ է հրավիրում իր ցեղը, այսինքն Սարուճալլու ամբողջ թափառական ցեղը, որ հպատակություն խոստանալով մտնում է Խաչենի մելիքության իշխանության ներքո և ձմեռանոց հաստատում Սուլթանպուտի մոտերքում: Ջառչի-Փանահն իր ցեղից առնելով հարյուր թուրք ձիավոր՝ ամբողջ մի տարի ավազակությամբ է զբաղվում Ղարաբաղի դաշտային մասում: Հարազատ-մելիքները կանգնեցնում են ավազակությունը և կոտորում ավազակներին, բացի ավազակապետ Ջառչի-Փանահից, որը կերել էր այդ մելիքների հացը, աղը և վայելել նրանց պաշտպանությունը: Ահա սա է ողջ մնալու պատճառը:

Ջառչի-Փանահը, տեսնելով, որ ավազակությամբ ոչինչ չշահեց, դիմեց թուրքական հատուկ խորամանկության և խնդրեց, որպեսզի թողնեին իրեն նորոգել Պայաթ կոչված ավերակ բերդակը, որը հիմնված էր Աղվանաց թագավորությունների կողմից, և պատսպարվել նրա մեջ: Մելիքները մերժեցին այդ առաջարկությունը: Մելիք-Շահնազար Գ.-ն միջամտեց, որպեսզի ընդունվեն այս առաջարկությունները, բայց մելիքները պատասխանեցին, որ Փանահի այդ նպատակը խիստ վտանգավոր է Ղարաբաղի քաղաքական շահի համար և Մելիք Շահնազարին զգուշացրեցին՝ բոլորովին հեռանալ այդ ավազակապետից:

Սակայն Մելիք-Շահնազար Գ-ն, չլսելով մելիքների տված հորդորը, վեց հազար թումանով Շուշիի ստորին մասը ծախում է Ջառչի ավազակապետին՝ 1752 թվականին:

Ջառչի-Փանահ ավազակապետը Ղարաբաղում բնակություն հաստատելուց անմիջապես հետո ինքն իրեն «խան» անվանեց և դաշինք հաստատեց Մելիք-Շահնազար Գ-ի հետ, որը իր սեփական ամառանոցը ծախել էր Շուշիում:

Այս ինքնակոչ խանի նենգ ծրագրերի իրականացմանը ոչ պակաս նպաստեց նաև Պարսկաստանի Շահության երերուն դրությունը, քանզի Նադիր-Շահի սպանվելուց մինչև Զենդ-Քեարիմ-խանի գորանալը, Պարսկաստանն ուներ խառնաշփոթ կյանք և մի քանի կարճատև կյանք ունեցող ճըռ-շահեր, որոնք

շահ կոչվելու արժանի չէին: Սրանք պարզապես խաներ էին և խան էին կոչվում, այլ ոչ թե՝ շահ: Հետևապես, սրանց տված հրովարտակները հետագայում գրեթե չէին ընդունվում հարա-զատ շահերի կողմից:

Ղաճար ցեղից ծնունդ առած Մամատ-Հասան-խանը, որ Աղա-Մամատ-Շահի հայրն էր, երբ լսեց այս բերդաշինության լուրը, մեծ զորքով Պարսկաստանից Ղարաբաղ արշավեց Փա-նահ ճրռ-խանին սպանելու, Ադիլ-Շահի տված խանության ճրռ-հրովարտակը պատռելու և Շուշին մելիքներին հանձնելու: Հա-զարավոր տարիներ շարունակ Ղարաբաղում բնավ խան չէր նս-տել, մշտապես մելիքների իշխանությանն էր հանձնված այս երկրի կառավարությունը: Ահա այս էր Մամատ-Հասան-խանի արշավանքի պատճառը: Բայց այս խանը, երբ լսեց, որ Ուրմեցի Փաթալի-խանը զորանալով սպանել էր Ջենտ-Ասկեար-խանին, Դիզակի դաշտից ետ է դառնում և շտապում է Պարսկաստան՝ այդ դաշտում թողնելով մի քանի արճճի թնդանոթներ[1], որոնք Փանահ ճրռ-խանը փոխադրել տվեց Շուշի:

Փանահ ճրռ-խանը մեծ բախտավորություն համարելով այս թնդանոթների գյուտը, Մելիք-Շահնազար Գ-ի խորհրդով հետամուտ եղավ Խնձորեստան գյուղում ստեղծել մի ճրռ-մելի-քություն՝ իրենց դաշնակցական ուժը հարազատ մելիքների դեմ զորացնելու համար: Որպես գործիք սրանք օգտագործեցին խնձրիստանցի Միրզախանին, որը Ջալալյան Մելիք-Ալլահվեր-դու հարյուրապետն էր: Միրզախան չարագործն իր տանը ճաշի է հրավիրում Մելիք-Ալլահվերդուն, իբրև թե ի նշան երախտա-գիտության այն բարի վերաբերմունքի, որ իր նախնիները վայե-լել էին Ջալալյան տոհմից: Երեկոյան, ճոխ ընթրիքից հետո, երբ Մելիք- Ալլահվերդին կամենում էր քնել և արդեն շորերն էր հա-նել, այդ միջոցին կալանավորվում է և հանձնվում Փանահ ճրռ-խանի կողմից գաղտնի նախապատրաստված մարդկանց: Այս անգեն մելիքը զոհ է դառնում դավաճանության և ծածուկ սպանվում գիշերը: Միրզախան-Հուդան, ի վարձատրություն իր

---

[1] Այդ չուգունե ծանր թնդանոթները հետագայում անցան ռուսների ձեռքը:

մատնության, Փանահ ճըռ-խանից ստանում է մելիքություն և կոչվում ճըռ-մելիք Միրզախան, որից սկսվում է Խնձորստանի ճըռ-մելիքությունը: Ի նախատինք ճըռ-մելիք Միրզախանի՝ հասարակությունն այդ գյուղի Խնձորստան անունը փոխեց «Խնզիրստանի»:

Մամատ-Հասան-խանի մտադրությամբ տոգորված Ղարաբաղ է արշավում Ուրմեցի Փաթալի-խանը և հարազատ-մելիքների հետ գրավում է Շուշին: Փանահ ճըռ-խանին սպանելու և ճըռ-հրովարտակը պատռելու փոխարեն՝ նա բավարարվում է մեծ գումար վերցնելով և ճըռ-խանի որդի Իբրահիմին պատանդ տանելով իր հետ Ուրմի:

Փանահ ճըռ-խանը, երբ լսեց, որ Զենտ-Քեարիմ-խանը, իր Ասկեար-խան եղբոր սպանության վրեժը լուծելու համար, արշավել էր Ուրմի, այն գրավել, Փաթալի-խանին սպանել և իր որդի Իբրահիմին Շիրազ է տարել, մեծամեծ ընծաներով շտապեց Շիրազ: Փանահ ճըռ-խանը Զենտ-Քեարիմ-խանի հրամանով իր սատանայությանը համարժեք պատժով պատժվում է՝ փորահար սպանվում, իսկ Փանահի որդին՝ Իբրահիմը հաջորդում է հորը՝ նույն խանի հրովարտակով, 1763 թվականին:

Այսպես, Փանահ ճըռ-խանի բացակայությունից մինչև Իբրահիմ ճըռ-խանի դարձը տևեց երկու տարի և երեք ամիս, սակայն այդ ընթացքում հարազատ մելիքների հետ չմիաբանվեցին Մելիք-Շահնազար Գ-ն և ճըռ-մելիք Միրզախանը: Այս օտարամոլ, ազգամատնիչ, եսասեր և անհեռատես մելիքները, փոխանակ սթափվեին իրենց կատարած արարքներից և միաբանվեին Հայրենյաց պաշտպան հարազատ-մելիքների հետ, միացան Իբրահիմ ճըռ-խանի հետ և ուժ տվեցին նրա վնասակար ձգտումներին: Միացան սրա հետ, Հայոց ուժերով կռվեցին Հայոց ուժերի դեմ և տկարացրին հարազատ-մելիքության տղամարդկային ուժն ու զորությունը: Ամաչում եմ ասել, որ Մելիք-Շահնազար Գ-ն մինչև անգամ իր հարազատ աղջկան կնության տվեց Իբրահիմ ճըռ-խանին, որով վերջինս ավելի հանդուգն դարձավ, քան՝ իր հայրը: Այս եռոտանի ճըռերը ձգտեցին Գյուլ-Եաթաղում ստեղծել մի ճըռ-մելիքություն և սպանել

Զրաբերդի հարազատ-մելիքությունը՝ ի կործանումն Ղարաբաղի: Բայց դա նրանց չհաջողվեց:

Ահավասիկ, այս ներքին երկպառակությունն էր, որ ձգտում էր վնասել Ղարաբաղի քաղաքական, բարոյական և տնտեսական կյանքը, որոնց անկարող էին վնասել արտաքին զորեղ ուժերը:

Ահա այս ներքին երկպառակությունները բացեցին արյունահեղ պատերազմների ընդարձակ ասպարեզներ, որոնց մեջ ավելի բազմապատկվեցին հարազատ-մելիքների և հարազատ ժողովրդի ռազմագիտական հմտությունները, դյուցազնական քաջագործությունները և հաղթական հանդեսները: Հայրենիքը, Ազգը, Կրոնը պաշտպանելու անդիմադրելի եռանդը բուռն զորությամբ պատերազմի դաշտ մղեց համարյա թե բոլոր հայ հարազատ անհատներին: Մեր սուրբ Հայրենիքում զենք գործածելը բնական երևույթ դարձավ, պատերազմը՝ արհեստ, արյունահեղությունը՝ օրենք, մարդասպանությունը՝ մսագործություն, հափշտակումը՝ սեփականություն, իսկ բոլոր ճըռերին ոչնչացնելը՝ անհրաժեշտ ձգտում:

Մեր երկրում ստիպված կատարելագործվեցին հրացան, թուր, երկսայրի, վաղակ, վառոդ, գնդակ, վառոդեղջյուր, գնդակաշարան, փամփուշտ շինելու արվեստները: Ձիավարելը, արագ զինավարժությունը, նշանակետին անվրեպ զարկելը դարձել էին հասարակության սովորական արհեստներ, որոնց մեջ վարժ են ոչ միայն Ղարաբաղի հայ տղամարդիկ, այլ նաև՝ ծերունիները, պառավ և ջահել կանայք, պատանիներն ու օրիորդները:

Յուրաքանչյուր ճըռ իր կյանքում ոչ այլ ինչ էր, եթե ոչ իր բերդում, կամ իր տան մեջ բանտարկյալ հանցավոր: Բայց այն զանազանությամբ, որ բանտարկյալները մինչև իրենց գլխատման օրը բանտերում հանգիստ են լինում, իսկ ճըռ-խաներն ու ճըռ-մելիքներն իրենց ամուր բերդերում անգամ չունեին ո՛չ հանգիստ քուն, և ո՛չ էլ հանգիստ հաց: Սրանք ամեն րոպե գրեթե մահ էին ճաշակում և իրենց ընտանիքների հետ հազար անգամ թշվառ կյանք վարում, քան հարազատ-մելիքներն ու ժողովուրդը:

Իբրահիմ ճրռ-խանն իր կյանքն ապահովելու նպատակով՝ Պարսկաստանից Ղարաբաղ փոխադրել տվեց մի քանի թուրք թափառական ցեղեր, ինչպիսիք էին Ծակ-Քարի պատերազմում եղած թուրքերը: Այս թուրքերը բնակվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի դաշտային մասերում և հարկատու դարձան հարազատ-մելիքներին: Սրանք իրենց տված պայմանագրի համաձայն վճարում էին իրենց գլխահարկերը հողատեր մելիքներին և դրանից զատ հարկ էին վճարում ամառանոցների համար, ուր երթևեկում էին, քանզի Ղարաբաղի բոլոր հողերը պատկանում էին միայն հարազատ-մելիքներին և վանքերին: Այս գաղթական թափառականների աղերսագիրն ասում էր, որ Պարսկաստանի հողերն բավական էին իրենց անասունները սնելու, դրա համար դիմել էին հայ մելիքների հովանավորությանը, որոնց հողերը բերրի են և սննդարար անասունների համար:

Սակայն Իբրահիմ ճրռ-խանի գաղտնի նպատակն էր ստվարացնել իր ուժերը և, այդ թափառական ցեղերին գործիք դարձնելով, օգտագործել հարազատ-մելիքների ուժերի դեմ:

Թեև ճրռ-խանը զորացած էր Մելիք-Շահնազար Գ-ով, ճրռ-մելիք Միրզախանով և այդ թափառական ցեղերի գաղտնի աջակցությամբ, սակայն դեռ միաբան և զորավոր էին Դիզակի Մելիք-Եսային, Ջրաբերդի Մելիք-Ադամը, Գյուլիստանի Մելիք-Հովսեփը և Ջալալյան իշխանների հավաքական ուժերը:

Իբրահիմ ճրռ-խանը, կամենալով տկարացնել սույն հարազատ-մելիքների ուժերը, միաբանվեց իր կուսակից մելիքների և սույն թափառական ցեղերի հետ և սրանց հավաքական ուժերով նախ հարձակվեց Դիզակի բերդի վրա, բայց չարաչար պարտվեց Մելիք-Եսայուց և մեծ կոտորած տալով՝ հետ շպրտվեց:

Երկրորդ՝ հարձակվեց Ջրաբերդի վրա նույն ուժերով, սակայն Մելիք-Ադամի և Մելիք-Հովսեփի զորությունից համարյա թե բնաջինջ եղան թշնամու զորքերը:

Իսկ ճրռ-խանը, Մելիք-Շահնազարը և ճրռ-մելիք Միրզախանն Ամարասի կողմից փախչելով, մազապուրծ և սարսափա-

հար Շուշի հասան: Ասկերանը, թեև հիմնված էր Փանահ ճըռ-խանի կողմից, սակայն միշտ մնում էր մեր քաջերի գրավման ներքո: Ահա սրանց Ամարասով փախչելու պատճառը:

Երրորդ՝ մի քանի տարի հետո սույն ճըռ-խանն իր դաշնակից հայերով և գաղտնի աջակից թուրքերով ծածուկ հարձակվեց Գանձասարի վրա: Նպատակն էր բնաջինջ անել Ջալալյան իշխաններին, ուր ժողովված էին նրանք: Շեյթան-Թյունու ազդարարությամբ Յեխ-Զորի կիրճում դարանամուտ եղած հարազատ հայ զորքը կտրեց կիրճի երկու կողմերը, բնաջինջ արեց թշնամու զորքը, կալանվորեց Մելիք-Միրզախանին, իսկ ճըռ-խանը իր նժույգով փախչելով՝ ազատվեց:

Կալանավորվածները, Վասակի նման գրկելով Քրիստոսի խաչը և Ավետարանը, բազմիցս երդվեցին և ազատություն ստացան Մելիք-Ադամի հրամանով: Սրանք երդվեցին այնուհետև ո՛չ հարել ճըռ-խանին, ո՛չ միանալ նրա հետ և ո՛չ էլ հայոց ուժերով կռվել հայոց հետ. այլ միաբանվել հարազատ-մելիքների հետ և հավաքական, միաձույլ ուժերով ի չիք դարձնել ճըռ-խանի բոլոր մտադրություններն ու ծրագրերը:

Զորրորդ՝ ճըռ-խանը թեպետ բոլորովին տկարացավ, բայց երդմնազանց հայ մելիքների միաբանությամբ երկրորդ անգամ հարձակվեց Դիզակի Տող բերդի վրա: Զկարողանալով պատերազմով հաղթել Մելիք-Եսայուն, նա խորամանկորեն երդմամբ խոստացավ, որ ինքը եկել էր խաղաղության դաշինք հաստատելու և վերջ տալու Արցախի ներքին խռովությանը: Սակայն երդմնազանց խանը դրժեց իր երդումը, որին, սակայն, հավատալով՝ բերդից դուրս էր եկել Մելիք-Եսային: Գտիչ վանքում էր լինելու խաղաղության պայմանագիրը, որտեղ իջել էր քաջ Մելիք-Եսային: Այս դյուցազուն մելիքը, տեսնելով, որ դավաճան ճըռ-խանի թիկնապահներից մեկը չտապում է գլխատել իրեն, իսկույն հանում է իր թուրը և գլխատում թիկնապահին: Փախչելու ժամանակ իր աջ ազդրից գնդակով վիրավորվում է Իբրահիմ ճըռ-խանը, իսկ Մելիք-Շահնազարը երկու ծանր վերք է ստանում գլխից:

Շահի հրամանով Մելիք-Եսայուն հաջորդում է նրա որդի Մելիք-Բախտամը 1781 թվականին՝ հոր խաղաղ մահից հետո:

Այս անմարսելի վրեժը լուծելու համար՝ հարազատ-մելիք-ներն իրենց զորքով հարձակվեցին Ավետարանոցի վրա, կործա-նեցին Մելիք-Շահնազարյանների բերդը, կոտորեցին ճըռ-խանի և Մելիք-Շահնազարի զորքերը: Լեռնային ճանապարհով Շուշի փախան Մելիք-Շահնազարը, ճըռ-մելիք Միրզախանը, իսկ նրանց բոլոր գերդաստանները փոխադրվեցին Ջրաբերդ:

Երբ այսպես բոլորովին տկարացան ճըռերի ուժերը, նրանք, իրենց ուժաթափ տեսնելով, խոնարհվեցին, երդմամբ խաղաղության դաշինք հաստատեցին հարազատ-մելիքների հետ, խոստացան այնուհետև ձեռնամուխ չլինել նման անկար-գություններ: Դրանից հետո ետ ուղարկվեցին գերված ընտա-նիքները Ջրաբերդից: Դաշնագիրը պետք է ստորագրեին Շուշի բերդում:

Գանձասարի հայտնի հանրագիրը կալանավորվելուց ե-րեք ամիս հետո, 1785 թվականին, Իբրահիմ ճըռ-խանը գրում էր Մելիք Մեժլում Մելիք-Ադամյանին.

«Սիրելի՛ Մելիք-Մեժլում, այս նամակի նման նամակներ ենք գրել Գանձասարի մեծ խալիֆաթ Հովհաննես կաթողիկո-սին, Դիզակի Մելիք-Բախտամին, Գյուլիստանի Մելիք-Աբովին, Ջալալյան իշխաններին և բոլոր քեանդխուտաներին: Ահա մի օ-րինակ նրանցից գրում ենք և ձեզ: Թե՛ մելիքների և թե՛ խաներ-ից կողմից մինչև այսօր որքան հակառակություն, թշնամու-թյուն և արյունահեղություն արեցինք, ոչ միայն բավական է, այլև չափազանց է: Ատելությունը ծնում է մահ, իսկ սերը՝ կյանք և խաղաղություն: Ղարաբաղի ժողովրդի կյանքը և ա-պահովությունը խաղաղություն են պահանջում և՛ ձեզանից, և՛ մեզանից, այլ ոչ թե՝ պատերազմ և կոտորած: Հետևապես, ինչ-պես մենք ենք զղջացել մեր արածների համար, հուսանք, որ զղ-ջացել եք և դուք: Մենք ցանկանում ենք մշտատև խաղաղու-թյուն, ցմահ հաշտություն և անխզելի դաշնակցություն, մեր կողմից խոստանում ենք ամեն կերպ զիջողություն հանուն հա-սարակության: Մինչ այժմ կատարված ցավալի խռովություններ-

ին ընդմիշտ վերջ տալու համար, շատ ու շատ խնդրում ենք՝ առաջիկա կիրակի օրը կեսօրին բարեհաճեք մեզ մոտ, միասին կճաշենք և հետո կստորագրենք դաշնակցության պայմանագիրը. թե՛ մենք, և թե՛ բոլոր հրավիրյալները: Մելիք-Շահնազարը ևս մեզ մոտ է:

Թեև երբեմն թշնամի, բայց այժմ բարեկամ՝ Իբրահիմ խան: Հունիս ամսի 1, Շուշի»:

Որոշված ժամին Շուշի են գնում բոլոր հրավիրյալները, որոնց հետ ճոխ սեղանի շուրջը, ի նշան հաշտության, կեղծավորաբար գրկախառնվում, հուդայական համբույրներով համբուրվում է Իբրահիմ ճըռ-խանը:

Ճաշից հետո, անազնիվ Իբրահիմ ճըռ-խանն իր հյուրերին հրավիրում է նախ նորաշեն բանտը տեսնել և ապա՝ ստորագրել դաշնագրության պայմանագիրը բացօթյա, զվարճալի մի տեղում: Երբ բոլորը դիտում էին բանտը, նենգամիտ ճըռ-խանի հրամանով փակվում են բանտի դռները:

Քաջերի խումբը, որ գիտակցորեն դարանամուտ էր եղել Շուշիի հյուսիսային ձորում, Շեյթան-Թյունուց և Կաքև-Զաքուց լսում է այս բանտարկության լուրը՝ հունիսի 5-ին: Նրանց առաջնորդությամբ խումբը հասնում է Շուշու պարսպին: Կեսգիշերին Նեառատեովը մի մեծ քար է կապում պարանից, ներս շպրտում, նույնն է անում և Քեարվանդռանը, ու այդպես պարաններով բերդ են մտնում մեր քաջերը և շրջապատում բանտը: Քեանդխուտա-Խաչատուրի հրամանով, որ հրավիրյալների հետ ներկա չէր ճաշին, պահապան հերթակալների վրա, որոնք քնած էին, հսկում են Շահմարն ու Թոփուզը, բանտապետի դռան մոտ հսկում էին Տեոնմազը, Պրախմազը և Սանկեարը, իսկ մնացածները շարվում են բանտի դռան և լուսամուտների առաջ: Ի նշան գործողության՝ ոռնում է Գայլ Օհանը:

Տեովը և Նեառատեովը տեղից հանում են բանտի դռները, Փիղը, Ասլանը, Աժդահան և Կայծակը փշրում են բանտի լուսամուտների խաչաձև երկաթները և բանտը դղրդում է: Բանտապետը և բոլոր հերթակալ պահապանները գլխատվում են Ազնաուրի, Օշափի ու Կարկուտի թրերով, և բոլոր բանտար-

կյալ հարազատ-մելիքները, իշխանները և քեանդխուտաները ազատվում են:

Բայց, ավա՜ղ, թույնով վախճանվել էր Հովհաննես կաթողիկոսը, Պարսկաստան էր աքսորվել Մելիք-Բախտամը, իսկ մյուս մելիքներն ազատվել էին միայն դեղերի շնորհիվ: Վերցվեցին կաթողիկոսի ս. մարմինը և երկու մեռած քեանդխուտանների մարմինները:

Այնուհետև Քեանդխուտա-Խաչատուրը, Նեառատեովը, Սանկեարը և Տեովը բանտի դռները տարան-կախեցին Իբրահիմ ճըռ-խանի տան պարսպի դռնից և բերեցին բոլոր հրավիրյալների երեսուն ձիերը, ճըռ-խանի ու Մելիք-Շահնազարի ընտիր նժույգները, որոնք կապված էին ախոռում, ու գլխատեցին: Գլխատվեցին նաև ճըռ-խանի ձիապանները, Շուշու ավագ դռան դռնապանները և բոլորը բանտից ազատվեցին:

Բերդից հազիվ մի երկու հարյուր քայլ անցած՝ Մելիք-Մեժլումը մի սրտաճմլիկ և հակիրճ խոսքով շնորհակալություն հայտնեց քաջերին այս դյուցազնական արարքի համար և խորին ցավ՝ հանրագրության հետ մեկտեղ Մելիք-Բախտամի աքսորի համար: Հետո մի բուռ ոսկի տալով քաջերին՝ ասաց. «Սիրելի՛ Բեկնազարյանց (Աբրահամ), քսանհինգ քաջերով հետապնդիր և Մելիք-Բախտամին հետ բեր իր բերդը: Աստվա՛ծ ձեզ հետ»:

Ը.

Իբրահիմ ճըռ-խանը արտասովոր կարգի ճոխ ընծաներով իր կողմն էր գրավում Պարսից բռնակալների սիրտը, որպեսզի կարողանար պահպանել իր գոյությունը Ղարաբաղում: Բայց այդ ժամանակաշրջանում Պարսկաստանի տիրապետողները ոչ թե կանոնավոր թագավորներ կամ շահեր էին, այլ՝ սոսկ մարդասպաններ և երկրի խաղաղությունը խաթարող խաներ: Տիրապետությունը, Պարսկաստանի միայն մի մասում, բռնակալ

խանի թրի ավարն էր: Նադիր-Շահից մինչև Աղա-Մամատ-Շահի օրերը օրինավոր Շահ չկար: Այդ ժամանակահատվածում մեկը մյուսին սպանելով կամ կուրացնելով՝ խանությունը միմյանցից հափշտակում էին Շահ-Ռուհը, Ադիլ-Շահը, Ալի-Մուրատ-խանը, Զենտ-Ասկեար-խանը, Փաթալի-խանը, Զենտ-Քեարիմ-խանը, Ազատ-խանը և Աղա-Մամատ-Շահի հայր Մամատ-Հասան-խանը: Ահա այս է պատճառը, որ սրանք թագավոր չեն համարվում, ի թիվս Պարսկաստանի շահերի, այլ սոսկ խռովարար խաներ և անընդունելի են համարվում նրանց տված հրովարտակները:

Սոսկ ժողովրդականություն վայելողը Մազանդարանցի Աղա-Մամատ-խանն է, որ Շիրազում բանտարկված էր Զենտ-Քեարիմ-խանից, իր հավատարիմ մարդկանց քաջությամբ ազատվում է բանտից, նվաճում Պարսկաստանը, իր աթոռը հաստատում Թեհրանում և հարազատ-շահ ճանաչվում պարսիկ հասարակության կողմից:

Աղա-Մամատ-Շահն արդեն չափազանց բարկացած էր ճրռ-շահերի ճրռ-հրովարտակներով հաստատված ճրռ-խաների վրա, այդ թվում նաև՝ Իբրահիմ ճրռ-խանի վրա: Այս Շահը հետզհետե ջնջել և իրար հետևից ջնջում էր Պարսկաստանից ճրռ-խանությունը և ճրռ-օրենքները: Ղարաբաղը հեռու լինելով՝ հարմար առիթի ու հրահանգի էր սպասում, որ ոչնչացներ Իբրահիմ ճրռ-խանին՝ իր ճրռ-հրովարտակով հանդերձ:

Իբրահիմ ճրռ-խանը, որ հաստատ գիտեր այս ամենի մասին, առիթ էր որոնում Շահի բարկությունը մեղմելու և ընծաներով նրա բարեկամությունը շահելու համար, որպեսզի կենդանի պահի իր խանությունը և թուլացնի հարազատ-մելիքությունը: Առիթն ինքնին ներկայացավ: Անհերքելի փաստ էր հանրագրությունը, որով հանցավոր էին դիտվում Ղարաբաղի հոգևոր և մարմնավոր կյանքի պարագլուխները՝ Պարսկաստանի կառավարությունից ապստամբելու և Ռուսաց կառավարությանը հարելու համար: Քաղաքական հանցավոր էր համարվում Մելիք-Բախտամը՝ այդ հանրագրությունը ստորագրելու համար: Ճրռ-խանը մեծամեծ նվերներով և հայտագիր նամակով

Աղա-Մամատ-Շահին էր ուղարկել Մելիք-Բախտամին՝ հանրագրության հետ միասին:

Ստացվում էր այնպես, որ Մելիք-Բախտամի հետ Պարսկաստան էր գնում նաև Ղարաբաղի Հայոց անհավատարմությունը, կոտրված պատիվը, աղավաղված անունը և դրա համար պետք էր, որ այն ետ դարձվեր ճանապարհից, տեղ չհասներ:

Խուտափիրին կամրջի մոտ մի դիզակցի ձկնորսից իմացանք, որ չորս ժամ առաջ Պարսկաստան էր անցել Մելիք-Բախտամը: Անսահման զայրույթը չթողեց մեզ առանց վրեժ լուծելու դատարկ հետ դառնալ: Չորս օրից հետո հետ դարձան կալանավոր Մելիքին տանող քառասուն թուրք ձիավորները և չտապեցին Բերկիվչատի գետեզերքով հասնել Շուշի:

Մենք դուրս եկանք մեր դարանից, հետևելով՝ կտրեցինք կիրճը երկու կողմից և ամբողջապես կոտորեցինք այդ քառասունին ձիավորներին: Առանք քառասուն ձին, կողոպտեցինք սպանվածների զգեստները: Քեանդխուտա-Խաչատուրն ուրախությամբ կոչեց. «Տղե՜ր, ահա՜ մեր հանրագրությունը և երկու հարյուր թուման փող: Անշուշտ, Մելիք-Բախտամից պետք է կաշառված լիներ սպանված Շիրին-Յուզբաշին այս երկու հարյուր թումանով, որ սույն հանրագրությունը գաղտնի հանձներ հարազատ-մելիքներին»: -Որքա՜ն ուրախություն մեզ համար:

Կողոպուտները տանելով՝ (Հին) Նախիջևանում ծախեցինք, դրամները բաժանեցինք, աղքատներին առատ ողորմություն տվեցինք, Տաթևի վանքում ուխտ և աղոթք արեցինք, առատ նվերներ տվեցինք և վերադարձանք Խաչեն:

Մելիք-Ադամյան Մելիք-Մեժլումը, որ հանգուցյալ Հովհաննես կաթողիկոսի հարազատ քրոջ որդին էր, Մելիք-Աբովի հետ էր Ջրաբերդում: Նրանք բավական ուրախացան, հանրագիրն ընդունելով, սակայն առանց մոռանալու Մելիք-Բախտամին և Հովհաննես կաթողիկոսի մահվան կսկիծը: Կաթողիկոսական տեղապահ նշանակեցին Ջալալյան Սարգիս եպիսկոպոսին, մինչև կընտրվեր նոր կաթողիկոս:

Այդ ընթացքում Իբրահիմ ճըռ-խանն Իսրայել ճըռ-կաթողիկոսին Գաճակից Ամարաս բերել տվեց և անվանեց Աղվանաց կաթողիկոս, որը ոչ համակրվում էր ժողովրդի կողմից և ոչ հարգվում: Նրա հանդեպ նույն վերաբերմունքն ունեին նաև վանքի միաբանները, քանզի յուրաքանչյուրը նրան նայում էր որպես առաքելական մատնիչ Հուդայի:

Այս իրադարձություններից երկու ամիս անց Շեյթան-Թյունին Ջրաբերդում մելիքներին հայտնեց, որ Իբրահիմ ճըռ-խանը մի նամակ է ստացել Աղա-Մամատ-Շահից, որում հայտնվում է, որ Մելիք-Բախտամը բանտարկված է Արտավիլի ազատ իշխանների հատուկ բանտում: Բայց Շահը չէր ստացել Մելիքների քաղաքական հանցավորությունը հաստատող հանրագիրը: Շահը հրամայում էր Իբրահիմ ճըռ-խանին խուզարկել, ձեռք բերել և իրեն ուղարկել նույն հանրագրությունը կամ նրա սևագրությունը և Հայոց ու Ռուսաց մեջ եղած հարաբերությունների նամակագրությունները. ճըռ-խանը պատժվելու է և համարվելու զրպարտիչ, եթե չկարողանա փաստերով ապացուցել հավատարիմ Հայոց անհավատարմությունը:

Երկու հարազատ-մելիքներ իսկույն մի հանձնարարական նամակով պահանջեցին հանրագրության սևագրությունը և Հայոց ու Ռուսաց մեջ եղած բոլոր գրագրությունները կաթողիկոսական տեղապահ Սարգիս եպիսկոպոսից, որը Հովհաննես կաթողիկոսի հարազատ եղբայրն էր, և այն թաքցրեցին Ջրաբերդի մելիքարանի ստորգետնյա ու անհայտ ծածկապահարանում:

Այդ ժամանակ ճըռ-խանը պատժվել էր ամեն կողմից և մնացել չվար: Շիրին-Յուզբաշին սպանվել էր իր զորքով, անհայտացել էր հանրագրությունը, իսկ ինքը ստախոս և զրպարտիչ էր համարվում Շահի մոտ, իսկ ժողովրդի մոտ՝ խպառ զզվելի և ատելի, իսկ իր ստեղծած ճըռերի մոտ՝ ամոթահար և հուսաբեկ: Մանավանդ, որ Շահի կողմից ուղարկված հավատարմատարները ստիպում էին իրեն և հաճախ հիշեցնում Շահի հրամանը. «Եթե մեզ չհանձնես թղթերը, Շահը բանտից կազատի

Մելիք-Բախտամին և քեզ կբանտարկի, որպես խաբեբա և զրպարտիչ»:

Հարազատ-մելիքները Մելիք-Բախտամին մխիթարելու համար սոխի ջրով[1] մի նամակ գրեցին և Շեյթանի ձեռքով ուղարկեցին: Շեյթանը դերվիշի կերպարանք ընդունեց և գնաց: Ահա նամակի պատճենը. «Անմոռանալի՛ Մելիք-Բախտամ, բոլոր բանտարկյալները ազատվել են մեր քաջերի շնորհիվ: Միայն Հովհաննես կաթողիկոսը թույնով մեռավ բանտում և ամփոփվեց Գանձասարում: Հանրագրությունը մեր ձեռքին է: Ձեզ տանող քառասուն մարդիկ կոտորվեցին մեր քաջերի կողմից: 200 թումանը մեզ մոտ է: Ճըռ-խանը նեղ դրության մեջ է: Կաշխատենք ձեր ազատության համար: Գրաբերից կիմանաք մանրամասնությունների մասին:

Ո՛ղջ եղեք՝ հանուն Տիրոջ:

Մելիք-Մեժլում՝ իշխան Ջրաբերդի, Մելիք-Աբով՝ իշխան Գյուլիստանի»:

Անճարացած Իբրահիմ ճըռ-խանը լուրեր տարածեց Դիզակում, Խաչենում, Ջրաբերդում և Գյուլիստանում, որ Աղա-Մամատ-Շահն իրեն իրավունք տալով հրամանագրել է կալանավորել և որպես քաղաքական հանցավոր Պարսկաստան ուղարկել այն մարդկանց, որոնք ստորագրել են հանրագիրը: Բայց այս ևս անօգուտ անցավ, քանի որ հայերն ամեն տեղ կոտորեցին այդ անպիտան խաբեբաներին:

Այդ ընթացքում Ռուսաստանի կողմից երևաց օգնության մի հույսի նշույլ: Գաղտնի բանբերները հայտնեցին հարազատ-մելիքներին, որ Բուրնաշով զորապետը գալիս է Ղարաբաղ չորս հազար զինվորով: Ուրեմն, կազմակերպեցեք ձեր ներքին ուժերը և պատրաստ եղեք:

Վերադարձավ Շեյթան-Թյունին և պատմեց, որ իրեն հաջողվել է դերվիշի տեսքով մտնել Մելիք-Բախտամի բանտը՝

---

[1] Ասում են, որ հին ժամանակներում այսպես էին գրում ծածկագրությունը: Երբ թուղթը տաքանում է կրակով՝ պարզ կարդացվում է: Բայց թուղթը պետք է պահել լույսի դեմ, ապա կարդալ:

իբրև Քեալայից եկած իսլամ քարոզիչ: Հայրենասեր Մելիքը կարդացել է նամակը և ոչ այնքան ցավ է զգացել իր բանտարկության համար, այլ որախացել է, որ հանրագիրը մելիքների ձեռքն է հասել: Ինքը գաղտնի կաշառել էր Շիրինին, իսկ սա անգիտությամբ սպանվել է: Շահը հայտնել էր մելիքին, որ եթե ճըռ-խանը չկարողանա հաստատել իր զրպարտությունը, մելիքը կազատվի շուտով և կբանտարկվի ճըռ-խանը: Շեյթան-Թյունին մելիքից պատասխան նամակ չէր բերել զգուշության համար:

Իբրահիմ ճըռ-խանը, մի կողմից Շահի մարդկանցից նեղվելով, մյուս կողմից Բուրնաշովի մոտալուտ գալուստը լսելով, մեծ տագնապի մեջ էր: Ամեն կողմից հուսահատ՝ սկսեց վերջին ճիգերը գործադրել և երեք հազարանոց զորք հավաքել ճըռ-ըից, Բուրնաշովին դիմակայելու նպատակով, իսկ մյուս կողմից երեք հազար զորք գիշերով ուղարկեց Գանձասար՝ կաթողիկոսական և հնադարի բոլոր թղթերը, ձեռագրերը Շուշի փոխադրել տալու համար, որոնց մեջ, գուցե, լինեն իր որոնածները: Դրանց առգրավումը պիտի տեղի ունենար գիշերով, հանպատրաստից և միանգամայն գաղտնի՝ քաջերից:

Բայց հարազատ-մելիքները բոլոր ձեռագրերն ու թղթերը նախօրոք երեք մասի բաժանել ու արդեն թաքցրել էին, որոնց առաջին մասը՝ Գանձասարի և Խոթա վանքի մեջտեղում[1] գտնվող մի քարայրում, որի բերանը ամրացրել էին քարակիր պատով, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մի ստորերկրյա ու անհայտ քարայրում, իսկ երրորդը՝ Գյուլիստան գավառի Հոռեկա վանքի մոտերքում: Երեք մասի բաժանելու պատճառն այն էր, որ ոչ

---

[1] Այս մասի ձեռագիրները գտավ Քեոլանի ազգով Մաշտի-Մամատ-օղլի Քեալբալայի Հյուսեին անվամբ մի թուրք որսորդ և Բաղդասար սրբազանին քարայրը ցույց տալով՝ ստացավ պարգև: Քարայրից ելել են բավականին ձեռագրեր. մի ձեռագիր մաշտոց՝ գրված Ս. Մեսրոպի աշակերտ Ստեփաննոս վարդապետից, որն այժմ գտնվում է Էջմիածնի հնադարում: «Պատմություն Աղվանաց», գրված Եսայի կաթողիկոսից, որը տպված է Շուշիում կրճատված, իսկ Երուսաղեմում նույնությամբ ուրիշ շատ ձեռագրեր, որոնք անհայտացել են Շուշիի Առաջնորդարանից՝ Բաղդասար Սրբազանից հետո:

միայն ճըռ-խանն էր ցանկանում ոչնչացնել այդ ձեռագրերը, այլև Մելիք-Շահնազար Գ-ն և ճըռ-մելիք Միրզախանը, քանզի այդ ձեռագրերում անաչառորեն պատմագրված էին բոլոր ճըռերի և հարազատների արարքները: Այդ ձեռագիր պատմություններից նշանավոր էին Երեմիա կաթողիկոսի հորինած «Աղվանաց կաթողիկոսների պատմությունը», «Աղվանաց թագավորների ծագումը», «Ջալալյան տոհմի ծագումը՝ ի Վախթանգ թագավորազնի», ուր սկզբից մինչև իր ապրած օրերը շարունակել էին Ջալալյան Գրիգորիս և Եղիա[1] վարդապետներն ու նրանց հետնորդները. «Ժամանակագրություն անցյալից», որը Ղարաբաղում կատարված քաղաքական և եկեղեցական պատմությունն է, ուր հերթով գրված են բոլոր մելիքների գործունեությունները:

Եղիա վարդապետի կողմից է գրված «Թաթարների արշավանքը և Կաչաղակաբերդի պատերազմը»:

Իսկ Եսայի կաթողիկոսը գրել է «Ծագումը և պատմությունը Մելիք-Հայկազյանց Մելիք-Եսայանց, իշխողը Ջրաբերդի» գիրքը: Այս գրքի մեջ պատմվում է, որ այս մելիքների նախահայրը եղել է Մելիք-Հայկազ Մեծը, որը սերվել է Սիսական ազգից և իշխել Սիսիան գավառում:

Դարձյալ սույն Ջալալյան կաթողիկոսի կողմից գրվել են «Ծագումը և պատմությունը Մելիք-Աբովի, իշխողին Գյուլիստան գավառի» և «Հարաբերություն Հայոց ընդ Ռուսաց» պատմությունները, որտեղ ժամանակագրական կարգով զետեղված են 1727 թվականից Հայոց կաթողիկոսներից և մելիքներից Ռուսաց կառավարությանը և սույն կառավարությունից հայ կաթողիկոսներին և մելիքներին գրված բոլոր պաշտոնական գրությունների պատճենները: Այս ձեռագրի մեջ նույն կարգով գրված է յուրաքանչյուր նոր գահակալող կաթողիկոսի նամակագրությունների շարունակությունը:

---

[1] Սույն վարդապետների և նրանց գիտելիքների մասին գովեստով է խոսում Կիրակոս պատմագիրը՝ ի թիվս այլ վարդապետների, որոնք համախմբված էին Գանձասարի օծման հանդեսի առթիվ՝ 1140 թվականին:

Գանձասարի միաբան Մովսես վարդապետը Եսայի կաթողիկոսի հրամանով գրել է «Արցախի վանքերը և նրանց կալվածքը» ձեռագիրը, որի մեջ զետեղված են Փոքր Սյունիքի բոլոր վանքերը, դրանց արձանագրությունները, կալվածքների քանակն՝ իրենց սահմաններով, նվիրողների անուններն ու ազգանունները, նվիրատվությունների թվականները, այս կալվածքները վանքերի վրա հաստատող շահական ու մելիքական հրովարտակները և յուրաքանչյուր նոր գահակալող շահի կրկնակի վավերացնող արքունիքի հրովարտակները և դրանց հայերեն թարգմանությունները:

Դիզակի Գտիչ վանքի միաբան վանահայր Վարդան վարդապետը գրել է «Դիզակի և Վարանդայի մելիքների պատմությունը», «Մելիքների դյուցազնական քաջագործությունները» և «Փանահ ճրո-խանի և ճրո-մելիք Միրզախանի ծագումը», «Իսրայել ճրո-կաթողիկոսը և իր գործը»:

Ամարասի միաբան Եղիա վարդապետը գրել է «Հայ մելիքների սահմանները» անվամբ գիրքը, որում որոշակիորեն գծված են ամբողջ Ղարաբաղի սահմանները, Մեծ և Փոքր Սյունիքներն առանձին-առանձին, յուրաքանչյուր մելիքի տիրապետած գավառի սահմանները, բերդերի թիվը և նկարագրությունները, բնակչության թվաքանակը, գյուղերի անունները և ծխերը, զորքի քանակը և այլն:

Ղևոնդյանց անապատի վանահայր Ղևոնդ վարդապետը հորինել է «Մելիք Շահնազար Երրորդ» անվամբ ձեռագիրը, որում կարգով գրված են այս տոհմի ծագումը, երևելի գործերը, Երրորդ Մելիք-Շահնազարի ճրո-խաներին հարելը, բազմակնությունը, չարագործությունները և այլն:

Հարկ է ասել, որ այս ձեռագիր գրքերը ամենևին ընդօրինակված և ժողովրդի մեջ ցրված չեն, այլ հավաքված են Գանձասարի հնադարանում, որովհետև և՛ Մելիք-Շահնազար Գ-ն, և՛ Իսրայել ճրո-կաթողիկոսը բազմիցս հետամուտ են եղել անհայտացնելու այդ ձեռագրերը: Այդ միջոցին նրանք ուզում էին դիմել, որպեսզի իրենցից հետո պատմության մեջ չմնային իրենց վատ արարքները և ապագա սերունդներից ծածկեին ի-

րենց ամոթն ու նախատինքը: Այդ ձեռագրերը ոչնչացնելու նպատակին հետամուտ էին նաև բոլոր ճըռերը:

Ահա ձեռագրերը թաքցնելու պատճառները:

Թ.

Այդ օրերին, մի երեկո Շեյթան-Թյունին գուժեց, որ Ջալալյան Սարգիս եպիսկոպոսն իր վեց եղբայրների հետ միասին բանտարկված է Շուշիում՝ ճըռ-խանի կողմից: Վերջինս թեև շատ ջանացել է և խստիվ պահանջել հանրագրի սևագրությունը, բոլոր պաշտոնական գրությունները, որ եղել էին Հայոց և Ռուսաց մեջ, սակայն առաջինները մերժել էին: Այս պատճառով բանտարկված են Ջալալյանները:

Նույն երեկո, երկու ժամ հետո կիրճով ներս ենք մտնում Շուշի և կրակում ճըռ-խանի տան տանիքի տախտակամածին: Տունն անհայտանում է շրջածավալ բոցերի տակ: Հարևանները և բանտապետը շտապում են հանգցնելու հրդեհը. Սակայն մենք վերացնում ենք երկու պահապաններին, խլում բանտապետի սենյակների բանալիները և հեշտությամբ ազատում բանտարկյալներին:

Ճըռ-խանն իմանալով, որ այդ ամենը կատարվել է մեր խմբի կողմից, չի կարողանում մարսել այդ վիրավորանքը: Սակայն, չկարողանալով իսկույն վրեժ լուծել մեզանից, սուտ լուր տարածեց, իբր ինքը տաս հազար թուման փրկանք է ստացել Սարգիս եպիսկոպոսից և դրա համար նրան իր եղբայրների հետ ազատել քաղաքական կալանքից՝ ի պատիվ հայերի:

1787 թվականին Հարազատ-մելիքներից ակնկալած չորս հազար զինվորները Բուրնաշով զորապետի առաջնորդությամբ Տփխիսից մոտեցան Գանձակին: Գանձակ շտապեցին մելիքներն իրենց զորքերով, զորականներով, դրոշակներով հանդերձ և դիմավորեցին ռուս զորքին: Բայց, ավա՜ղ, ապարդյուն անցավ մելիքների հույսը, քանզի Բուրնաշովն այդ իսկ տեղում ստացավ

մի անակնկալ հրաման և շտապով հետ դարձավ: Հրամանագիրը հայտնում էր, որ պատերազմ է հասունացել ռուսների և օսմանցիների միջև և, որ շուտով սկսվելու է կռիվը: Ռուսաց կողմից երևացող օգնության հույսի նշույլն այդպես էլ հանգչեց՝ ճառագայթները մեզ դեռ չհասած:

Այդ ժամանակ Իբրահիմ ճըռ-խանն ազատ շունչ առավ և իրեն ամեն կողմից ապահով զգաց: Դատարկաձեռն հետ դարձան հանրագիրը և թղթերը պահանջող Շահի մարդիկ, իսկույն անհայտացավ ռուսական զորքը՝ Գանձակից դեռ Ղարաբաղ չմտած: Զքացավ մելիքների հույսը, թույնով մեռավ հարազատ-կաթողիկոսը, և Աղա-Մամատ-Շահը, միշտ զբաղված լինելով իր ներքին գործերով, այլևս չպահանջեց հանրագիրը: Այդ ժամանակ ճըռ-խանն իրեն շրջապատված զգաց իր կուսակից ճըռ-կաթողիկոսով, ճըռ-մելիքով ու նրանց մարդկանցով, ուստի նորից սկսեց հետամուտ լինել Ղարաբաղից հարազատ-մելիքությունը ջնջելու նպատակի իրագործմանը:

Այսուամենայնիվ, բնավ չվհատվեցին Մելիք-Աբով Գ-ն և Մելիք-Մեժլումը, այլ մեզ հանձնեցին Գյուլիստանը, Ջրաբերդը և Խաչենը, որոնք այդ ժամանակ մնացել էին հարազատ-մելիքների ձեռքում, և իրենք գնացին Տփխիս: Նրանք Տփխիսից նամակ էին գրելու Ռուսաց Եկատերինե Բ. Կայսրուհուն, որպեսզի վերջինս շտապեցներ իր օժանդակելու խոստման կատարումը: Նրանք նաև Տփխիսից Ղարաբաղ էին բերելու երեք հազար վրացի զինվոր, որը խոստացել էր դրացի քրիստոնյա Վրաց Հերակլ իշխանը, որը նաև թագավոր էր կոչվում: Վրացի զորքը օժանդակելու էր հարազատ հայ զորքին, թեև այդ օժանդակ զորքի գալն ավելորդ էր համարում մեր զորապետական խմբի ժողովը:

Այդ ժամանակ ճըռ-խանն իր ձեռքի տակ ուներ միայն վեց հազար զինվոր, որոնցից երկու հազարը պատկանում էր Դիզակի Մելիք-Բախտամյան մելիքի ժառանգ Աբաս-Բեկին, երեք հազարը՝ Մելիք-Շահնազարյաններին և հազարը՝ ճըռ-խան Միրզախանին: Իսկ ինքն ուներ հազար թուրք զինվոր, որոնք մնում էին Շուշիում: Բուրնաշովի արշավները դիմավորելու

համար հավաքվել էր երեք հազար թուրք զինվոր ևս: Այդ զորքից հինգ հարյուր լրացուցիչ ուղարկված էր Բալաքյանի Օմար-խանից, որը ճրռ-խանի աներն էր, հազարը բռնի հավաքել էր թափառական մահմեդական ցեղերից, իսկ հինգ հարյուրը՝ դրամով բերել էր տվել Օրտուպատից և Նախիջևանի խանից: Այս ամենը ճրռ-խանը հարազատ-մելիքներից գաղտնի էր արել: Մելիք-Բախտամի աքսորից հետո Դիզակի զորքն առաջնորդվում էր մելիքի ժառանգ Աբաս-Բեկի հրամանատարությամբ: Այս զորքը, բացի Դիզակի հայ հարազատ զորքից, տակավին մնում է ճրռ-խանի հրամանին պատրաստ:

Իսկ ես (Աբրահամ Բեկնազարյանց) ունեի հինգ հազար կանոնավոր զորք և երեք հազար անկանոն: Սույն զորքից երեք հազարը Գյուլիստանի Մելիք-Աբովինն էր, երեքը՝ Ջրաբերդի Մելիք-Մեժլումինը, իսկ երկու հազարը՝ Ջալալյան իշխանինը: Բայց շուտով դուրս եկան՝ Դելի-Մահրասան-Ավագ Վարդապետն իր օձածակից (նա ճգնում էր Թարթարի ձորի Եղիշ-Առաքել վանքի մի նեղ խցում) և Թյուլի-Արզումանն իր գայլի բնից, որը մի քարայր էր Երից-Մանկանց վանքի հարավային մասում: Սրանք հիմնականում զբաղվում էին բոլոր ճրռերից ուղարկված մարդկանց կոտորելով և սրանց ու ճրռերի գույքերը հափշտակելով: Գիշերները Դելի-Մահրասան, իր զգեստը փոխելով, միանում էր Թյուլի-Արզումանի խմբին, իսկ ցերեկները՝ վարդապետական հագուստով ջերմեռանդությամբ ճգնում, իբրև խստակրոն ճգնավոր:

Զորապետական խորհրդով կամավոր զորքը հարձակվեց տարեկան բերքերը հնձելու և կալսելու, բայց միշտ պատրաստ լինելու պայմանով, իսկ կանոնավոր զորքը բաժանվեց երեք զորագնդի:

Առաջին գնդին զորավար կարգվեց Ջափար-Սարասարը, իսկ նրա օգնական՝ Թյուլի-Արզումանը: Այս զորաբաժինը հսկելու էր Գյուլիստան գավառը:

Երկրորդ զորաբաժնի զորավար նշանակվեց Տեոնմազ-Բելլուն, իսկ օգնական՝ Դելի-Մահրասան, որը պահպանելու էր Ջրաբերդը:

Երրորդի վրա զորավար կարգվեց Աբրահամ Բեկնազարյանցը, նրան օժանդակ՝ գնդապետ Նեառռատեովը: Այս զորաբաժինը հսկելու էր Խաչենը Վարանդայից բաժանող սահմանագիծը: Այս զորաբաժնի մեջ էր նաև մեր Խնածախցի և Պալլուճեցի սեփական և հայտնի խումբը:

Բայց Ջալալյան Քեօրօղլի-Քեշիշը, որի մականունը դրոշմել է Իբրահիմ ճըռ-խանը, Ցեխ-Զորում հինգ հարյուր մարդով կարգվեց Խնձորստանի ճըռ-մելիք Ալլահվերդու շարժման վրա: Այս խմբի մեջ էր Ջալալյան Քեալլագեոզ-Առստամն իր քաջերով:

Ես (Աբրահամ Բեկնազարյանցս) մելիքների բացակայության պատճառով իմ մոտ պահել էի Շեյթան-Թյունուն և Կաքև-Զաքուն, մեկին՝ լրտեսելու, մյուսին՝ լուրերն արագ հաղորդելու, որպես սուրհանդակ:

Հարկ է նշել, որ ոչ մի ժամանակ այնքան սաստիկ աբյունահեղություն չի եղել Ղարաբաղում, որքան եղավ 1787-1794 թվականներին: Այդ ժամանակ հարազատ-մելիքների գավառների մուտքերն ապահովված էին կանոնավոր զորքերի հսկողությամբ և հարազատ ժողովուրդը վառված էր վրեժխնդրության չմարվող կրակով: Կարծես թե հարազատ ժողովուրդն ուխտել էր և ի մի ձուլվել՝ բոլոր ճըռերից վրեժ լուծելու ծարավով: Հայ ժողովուրդը, որ աչքով տեսել էր իր Հայրենիքի ներքին ավերումը, Հովհաննես հարազատ-կաթողիկոսի մահը, մելիքների բանտարկությունը, Մելիք-Բախտամի աքսորումը, Սարգիս Եպիսկոպոսի բանտարկությունը, ռուսական զորքի ապարդյուն հետ դառնալը, մելիքների բացակայությունը և ճըռերի դավաճանությունները, ոգևորվեց համասիրտ և համակամ այս միաբանությամբ, կտրեց իր հույսն օտարներից, այն խարսխեց միայն իր սեփական ուժի վրա և սկսեց հրաշքներ գործել: Գյուլիստանի ծերունիներն ու պատանիները, կալերում հատիկ կալսելը ընտանիքներին և տղեկներին թողնելով, զենքեր առան և ճըռերից ծածուկ միացան Ջափար-Սարասարի զորաբաժնին, Ջրաբերդինը՝ Տեոնմազի զորաբաժնի հետ, Խաչենինը՝ Քեօրօղլուն, իսկ Վա-

բանդայի ու Դիզակի ուխտապահ երիտասարդները՝ մեր զո-բաբաժնին: «Սրբե՛նք, մաքրե՛նք մեր սուրբ Հայրենիքը պիղծ ճըռերից»,-այս խոսքերն էին անընդհատ հնչում ոգևորված ծերունիների մեջ:

Նախ հարձակվեցին ամառանոցները չված մահմեդական-ների վրա, կոտորեցին թուրքերին, կողոպտեցին ձիերի երամակ-ները, ոչխարների հոտերը, կովերի ու եզների նախիրները և այդ ավարներով լցրին Խաչենը, Ջրաբերդը և Գյուլիստանը: Հե-տո հարձակվեցին դաշտային մասերի վրա և կոտորեցին այգե-կութի և կալի պատճառով մնացած թուրքերին, կողոպտեցին և ավարներով իրենց գավառները փոխադրեցին եզներ, ձիեր, տան կահ-կարասիներ և դրամներ: Փանահ ճըռ-խանի և Իբրահիմ ճըռ-խանի Պարսկաստանից Ղարաբաղ գաղթված մահմեդական ժողովրդի հինգ մասից երեքը կոտորվելով՝ ոչնչացան այդ ժա-մանակամիջուցում: Իսկ մնացած երկու մասը գտնվում էր Դի-զակի և Վարանդայի լեռնային և դաշտային մասերում, ուր մե-րոնք չէին արշավել: Այնուամենայնիվ, այդ մասերի վնասները ևս պակաս չէին, որ պատճառել էին այդ երկու գավառների ուխտապահ հայերը:

Մի օր Շեյթան-Թյունին Կաքև Զաքու հետ շնչասպառ մեզ մոտ հասավ և գուժեց, թե ճըռ-խանը մի քանի՝ օձիքները պատռած թուրքերից, որոնք փախել էին կոտորածներից, իմա-ցել է ամեն ինչ: Նա իր զորապետին պատվիրեց վերցնել իր բերդում գտնվող 2000 հոգանոց զորքը, գիշերը ծածուկ հար-ձակվել Ջրաբերդ գավառի վրա և ժողովրդին բնաջինջ անել: Նա պատվիրեց Ասկերանի նեղուցով չանցնել, ուր, անշուշտ, դարանամուտ է եղել Ազրայել-Իբրահիմը(Աբրահամ Բեկնա-զարյանց), այլ Մելիք-Միրզախանի գյուղի տակով անցնել Կուսապատ: Ճըռ-խանը հրաման ուղարկեց Դիզակի և Վա-բանդայի սահմանները պահող Մելիք-Շահնազար Գ-ին և թուրք զորավար Մահմատին, որ հարձակվեն Խաչենի վրա եր-կու հազար զինվորով և հիմնահատակ կործանեն, մանավանդ Խնածախ Գյուղը: Ճըռ-խանն իր սուրհանդակ Եորդա-Թաղին ուղարկել էր ճըռ-մելիք Միրզախանյան Մելիք-Ալլահվերդու

մոտ, որպեսզի վերջինիս լրտես Զաղալ-Մոսին[1] առաջնորդի այդ արշավներում:

Կաքև-Զաքու միջոցով, ինչ պետք էր, հաղորդվեց Քեռ-ըօղլի-Քեշիշին, որը Յեխ-Զորում դարանամուտ էր եղել, իսկ Պել-Ճամալի միջոցով, որ առանց դրամի չէր շարժվում իր տեղից, մի թուման փող տալով, հաղորդեց Տեոնմազին, որ իր զորքի մի մասը ուղարկի Ասկերան բերդակը՝ կիրճը կտրելու, իսկ ինքը մյուս մասն առած կկտրի Խաչենագետի անցքը, որտեղից մտադիր էր անցնել ճրռ-խանի զորքը: Շեյթանը կրկին ուղարկվեց Շուշի՝ լրտեսելու, իսկ մեր զորաբաժինը շտապեց խզելու Մազի-կամրջի կիրճը: Զմոռանամ ասել, որ մեր (Բեկնազարյանցի) զորաբաժինը համալրված էր Հաթերք, Վաղուհաս, Կճղոտ և Առաջաձոր գյուղերի ընտիր տղամարդկանցով:

Կեսգիշերին Գայլ-Օհանն իր գայլափողով բարձրավանդակից ազդարարեց թշնամու գալուստը: Կիրճի սկզբի և ետևի կողմերից սկսվեցին հարձակումները թշնամու վրա. հայ զորքերի ուժգին հարվածից մեծ կորուստ ունեցավ թշնամին, նրա մի մասը սրահար խողխողվեց, մի մասը, բարձր ժայռից գահավիժելով և գետնին ընկնելով, սատկեց, երրորդ մասին հաջողվեց փախչել և հալածվել դեպի Խաչեն, իսկ չորրորդ մասը, զինաթափ լինելով, գերի դարձավ:

Այս պատերազմում սպանվեցին հաթերքցի և առաջաձորցի տասը կամավոր հայ զինվոր, ազդրից մի թեթև վերք ստացավ Տեովը, նստատեղից՝ Զարպազանը և գլխից՝ Ազնաուրը: Բոլորն էլ թրի վերքեր էին, սակայն քաջերի համար՝ դա ոչինչ: Եթե գիշերվա մթությունն ու ամպամածությունը չլինեին՝ հայերից սպանվող չէր լինի:

Լուսաբացին մերոնք կողոպտեցին բոլոր սպանվածների զենքերը, վառոդը, գնդակը և դրամները, կոտորեցին գերիներին և բարձրից գետը թափեցին բոլոր դիակները: Այդ տեղի անունը կոչվեց «Զորավեժ»: Դիակների թմբից իմացանք, որ կոտորվել է 1304 թուրք զինվոր:

---

[1] Ճագար-Մովսես:

Կաքև-Զաքին հասավ Մազի-կամուրջը և պատմեց, որ Քեօրօղլի-Քեշիշին հաջողվել է Խնձորստան գյուղի մոտերում բնաջինջ անել այստեղից հալածված ճըռ-խանի զորքի մի մասը, ճըռ-մելիք Ալլահվերդու երկու հարյուր հայ զորքը, որը խառնված էր կիսաբեկ թուրք զորքին, ճըռ-մելիքի Զալաղան-Յուզբաշին[1], Զաղալ-Մոսին և սույն մելիքի մի ազգական, որը Ջրաբերդ էին առաջնորդում բեկյալ թուրք զորքին:

Մի քանի ժամից հետո հասավ Շեյթանը և հայտնեց, որ ճըռ-խանը ամենևին տեղեկություն չուներ իր 2000 կոտորված զորքի մասին և, որ Վարանդայի զորապետը բարվոք է համարել ցերեկով անցնել Շոշ գյուղով, որպեսզի գեթ արշալույսին գտնվի Խաչենագետի աջ ափում, որ ճըռ-խանը հրամանագրեց իսկույն գործադրել այդ որոշումը և որ քանի օր է, ինչ բերդում չէր երևացել Մելիք-Շահնազար Գ-ն:

Նախորդ հրամանները տրվեցին Կաքև-Զաքուն և Շեյթան-Թյունուն, իսկ մեր զորաբաժինը գնաց մեր գյուղը:

Շեյթան-Թյունին կրկին հայտնեց, որ ճըռ-խանը մեծ տագնապի մեջ էր՝ ճըռ-մելիք Ալլահվերդու երկրորդ սուրհանդակ Եալղուզաղ-Մանկուց[2] լսելով իր զորքերի ջնջվելը: Նա անմիջապես իր Վարանդայի զորավարին հրամանագրեց՝ զորքը շտապ փոխադրել Շուշի, այնուհետև նամակ ուղարկեց Տփխիս՝ Վրաց Հերակլ իշխանին, որ նա կալանավորի հայ Մելիք-Աբովին և Մելիք-Մեժլումին ու Շուշի ուղարկի նրանց որևէ խորամանկ միջոցով: Ճըռ-խանը նամակով Հերակլին այս ծառայության համար խոստացավ ամենամեծ վարձատրություն: Ճըռ-խանն իր բանակի բեկյալ ուժը վերականգնելու համար մտադիր էր կրկին այն թուրքերից, որոնք գտնվում են Դիզակի և Վարանդայի ամառանոցներում, զորք հավաքել և օժանդակություն պահանջել Դիզակի և Վարանդայի հայերից և ամեն ինչ անել Գյուլիստանի և Ջրաբերդի հարազատ-մելիքությունը ջնջելու և դրա փոխարեն ճըռ-մելիքություն ստեղծելու համար:

---

[1] Ուրուր թռչուն, որը չկարողանալով ուրիշ թռչուն որսալ՝ գողանում է հավի փոքր ձագեր:

[2] Միայնակ շրջող գայլ:

Շեյթանը վերստին ուղարկվեց Շուշի՝ պատվեր ստանալով շրջահայաց և ուշադիր լինել ճրռ-խանի բոլոր գործողություն-ների հանդեպ և ամեն ինչի մասին շտապ հաղորդել:

Ժ.

Հարկ չկա ասել, որ այդ ժամանակ Շուշու հաղորդակցու-թյունը Գյուլիստանի, Ջրաբերդի և Խաչենի հետ համարյա խզ-ված էր: Միայն դիտմամբ ճրռ-խանի լրտեսներին և սուրհան-դակներին էր թույլատրված անտառների միջով տագնապահար երթևեկել Խնձորստան՝ ճրռ-մելիք Ալլահվերդու մոտ: Իսկ Վա-բանդայի և Դիզակի հաղորդակցությունը Շուշիի հետ ազատ էր թողնվել:

Պել-Ճամալը վերադարձավ՝ իր հետ բերելով հարյուր քսան ընտիր ձի, շատ ոչխար և նոր պտուղներ, որոնք հայ զոր-քի համար խիստ կարևոր էին այն ժամանակ: Սակայն այդ Պե-լին դժվար եղավ գոհացնել առանց դրամական պարգևի:

Կաքև-Զաքին ուղարկվեց Տփխիս՝ հարազատ-մելիքներին Հերակլ իշխանի դավադրությունից զգուշացնելու համար:

Շեյթանը պատմեց, որ իրեն հաջողվել է Պլլը-Պուղու շնորհիվ, որպես Մելիք-Շահնազար Ներկայանալ Իբրահիմ ճրռ-խանին, ուր ներկա է եղել նաև Իսրայել ճրռ-կաթողիկոսը: Այս երեք անձանց մեջ մի խորհուրդ կայացավ, ընթերցվեց հետևյալ նամակը, որը գրել էր ճրռ-խանի բարեկամ Ջաֆարբեկը Գան-ձակից. «...Խա՛ն, ձեր թշնամի Ջավատ-խանը, ձեր բոլոր ձեռ-նարկությունները փչրելու նպատակով դաշնադրություն կա-պեց Տփխիս գնացող հայ մելիքների հետ: Նա որոշեց Գանձա-սարի Ջալալյան Սարգիս եպիսկոպոսին փոխադրել տալ Գան-ձակ և մելիքների հետ դառնալու ժամանակ, Ամարասում կաթո-ղիկոս օծել հիշյալ եպիսկոպոսի հակառակ Իսրայել կաթողիկո-սին: Հարկ չեմ համարում գրել, որ Ջավատ-խանի համար հեշտ կլինի մելիքների և կաթողիկոսի հետ նաև իր կողմը գրավել

Ղարաբաղի հայ ժողովրդին, որն անանջատ սրտով կապված է իր սիրելի մելիքների և կաթողիկոսի հետ: Թե ինչպիսի խոր արմատ է ձգված հայերի սրտերում, թե ինչպես են նրանք կամենում անխզելի պահպանել ինչպես հայ մելիքության շղթան, այնպես էլ Ջալալյան տոհմի կաթողիկոսությունը, դուք դրա մասին քաջ գիտեք»: Խորհուրդում գաղտնաբար որոշվեց.

«Ա. Երկու հազարանոց զորքով Գանձասարից Շուշի փոխադրել Սարգիս եպիսկոպոսին և Գանձասարի բոլոր ձեռագիր թղթերն ու թանկագին անոթները, որոնց մեջ, անշուշտ, կլինի հանրագրի սևագիրը:

Բ. Մահադեղով քնացնել Սարգիս եպիսկոպոսին, նրա հետ նաև՝ Ջալալյան ազգի կաթողիկոսությունը:

Գ. Հերակլ իշխանին վերստին նամակ գրել մի հատուկ հավատարմատարի ձեռքով և Մելիք-Աբովին ու Մելիք-Մեժլումին կալանավորված Շուշի բերել ու մահադեղով ուղարկել այն աշխարհ:

Դ. Գյուլիստանի և Ջրաբերդի ժողովրդի կեսին փոխադրել Վարանդա և Դիզակ՝ առաջին գավառների ուժը տկարացնելու հեռատեսությամբ:

Ե. Մելիքի բեկին 1000 թումանով կաշառել և սրա ձեռքով սպանել տալ Ազրայել-Իբրահիմին[1], որը միշտ ձախողում է խանական բոլոր ծրագրերը»:

Շեյթանն ավելացրեց, որ Սարգիս սրբազանի թունավորության որոշմանն ուժ է տվել Իսրայել ճըռ-կաթողիկոսը, իսկ Ազրայել-Իբրահիմի սպանման խորհրդին՝ ինքը Շեյթանը, որպեսզի Շուշուց դուրս բերելով կոտորել տար երկու հազար զորքին և Մյուլքի ճըռ-բեկին: Շեյթանը մատնանիշ է արել, որ Ազրայել-Իբրահիմն այժմ գտնվում է Կուսապատում:

Մի քանի խոսք Մյուլքի ճըռ-բեկի մասին:

1780 թվականին մահացավ Մելիք-Ադամը և Ջրաբերդում նրան փոխարինեց որդին՝ Մելիք-Մեժլումը, որի յուզբաշիներից մեկն էր Գյուլ-Եաթաղցի Ալլահվերդի-Յուզբաշին: Վերջինիս

[1] Աբրահամ Բեկնազարյանցի մականունն է:

որդի Մուսայելը և փեսա Հակոբ-Յուզբաշին հետապնդում են սպանել Մելիք-Մեժլումին: Այս դավաճանությունը գաղտնի որոշված է լինում Իբրահիմ ճըռ-խանի և Ալլահվերդի-Յուզբաշու մեջ: Բայց, ինչպես գիտենք, արդեն կաշառված դավաճաններ Մուսայելը և Հակոբ-Յուզբաշին սպանվում են Մելիք-Մեժլումից: Իսկ Ալլահվերդի-Յուզբաշին ճըռ-խանի կողմից Գյուլ-Եաթաղի վրա ճըռ-մելիք է նշանակվում: Մելիք-Մեժլումը դավաճանության գաղտնիքն իմացել էր Շեյթան-Թյունուց, որից ոչ մի գաղտնիք չէր պահվում, և որոշում է կոտորել դրանց՝ Մուսայելի և Հակոբի բոլոր սերունդներին: Ալլահվերդի-Յուզբաշին իր Մյուլքի թոռան հետ, որը սպանված Մուսայելի որդին էր, այդ կոտորածից փրկվում է և մազապուրծ Շուշի փախչում: Ալլահվերդի-Յուզբաշին ճըռ-խանից ճըռ-մելիքություն ստանալով՝ բնակվում է Գյուլ-Եաթաղում, որից հետո կամենում էր նրա տեղը նստել Մյուլքին: Բայց այս ճըռերն անվամբ էին միայն եղել Գյուլ-Եաթաղի ճըռ-մելիքներ, ուր հասարակությունից սարսափելու պատճառով բնավ չէին նստում, այլ միշտ բնակվում էին Շուշիում՝ ճըռ-խանի մոտ:

Կաքև-Զաքու բացակայության պատճառով առաջաձորցի Քաչալ-Սագին, որպես առօրյա սուրհանդակ ուղարկվեց Զափար-Սարասարին իմացնել տալու, որ նա իր զորաբաժնով Գանձասարից Գանձակ փոխադրեր Սարգիս սրբազանին՝ իր բոլոր միաբաններով: Շեյթանն ուղարկվեց՝ Քեօրօղլուն պատվիրելու Ցեխ-Զորից Գանձասար քաշվել և կանխավ նախապատրաստել Սարգիս սրբազանին: Ազնաուրը մի քանի քաջերով ուղարկվեց՝ կտրելու Քարհատի կիրճի ճանապարհը և կոտորելու Մյուլքուն իր ընկերների հետ:

Տասնհինգ ժամից հետ դարձավ Քաչալ-Սագին, որի անունը Պել-Ճամալը փոխեց և դրեց «Քեօհլան-Սագի»՝ որպես արագավազ: Հետ դարձավ և Ազնաուրը, որը Ասկերանում սպանել էր Մյուլքուն՝ իր ընկերներով: Տփխիսից վերադարձավ և Կաքև-Զաքին ու պատմեց, որ մելիքները թուղթ էին գրել Ռուսաց թագուհուն, թե Հերակլ իշխանը խոստացել էր օժանդակ զորք տալ: Նրանք, լսելով ճըռ-խանի դավաճանության բաց-

հայտումը՝ գոհ էին մնացել ու զգաստ, մելիքները շատ էին ուրախացել Հայոց քաջագործությամբ, որ կատարվել էր իրենց բացակայության ժամանակ և նրանք շուտով կվերադառնան Գանձակ:

Կամենալով մի խաղ խաղալ ճըռ-խանի գլխին՝ մինչև Գանձասար անարգել ճանապարհ տրվեց գիշերով ճըռ-խանից ուղարկված 2000 հոգանոց զորքին: Այս զորքին հետևեց մեր զորաբաժնի (Աբրահամ Բեկնազարյանցի) մասը: Թշնամու զորքը, փոխանակ Գանձասար գնալու, Վանք գյուղի[1] տակով աճապարեց Կճողուտ, քանզի Խնձորստանի ճըռ-մելիք Ալլահվերդու լրտես Տոյտաղ-Քեսին (Արագիլ-Գասպար) և ճըռ-խանի լրտես Հաճի-Լենկլենկ-Մուստաֆան, որոնց մականունները դրոշմել էր Պել-Ճամալը, թշնամու զորավարին հայտնել էին, որ Եպիսկոպոսը գնաց դեպի Թարթառի ձորը: Թարթառ գետի կիրճում ոռնաց Գայլ-Օհանը՝ «Դա՛րձ» ազդարարելով իր գայլափողով: «Դա՛րձ»,-կրկնեց Զափար-Սարասարը թշնամու զորքի առջևից: Սկսվեց սարսափելի պատերազմը, ջնջվեց թշնամու ամբողջ զորքը, որը մնացել էր երկու հայ զորքերի սրերի միջև: Թշնամու զորքի վրա առջևից կրակ բացեց Զափարի զորաբաժինը, Քեօրօղլունը՝ կիրճի երկու կողմերից, իսկ քաջերինը՝ ետևից:

Կողոպտվեցին դիակների զգեստներն ու զենքերը, գետը նետվեցին բոլոր սպանված թշնամիները, միմյանց բարի ճանապարհ մաղթեցին հայ զորաբաժինները և Պել-Ճամալի առաջարկությամբ «Երկու հազար» անվանեցին թշնամու ջնջված տեղը: Սարգիս սրբազանն իր միաբաններով Զափարի միջոցով առաջնորդվեց Գանձակ, իսկ քաջերի և Քեօրօղլու զորաբաժինները հետ դարձան իրենց տեղերը:

Երբ Գանձասար հասանք, արտասվաթոր ջերմեռանդությամբ համբուրեցինք վանքի բեմաքարերն ու սուրբ կաթողիկոսների շիրմաքարերը և շնորհակալ եղանք Աստծուց՝ մեզ պարգևած հաղթանակների համար: Սուրբ Կարապետին, որի անվամբ շինված է Գանձասարի վանքը, բարեխոս խնդրեցինք

---

[1] Գանձասարի մոտերքում մի հայաշեն գյուղ է:

երկնքից, որ միշտ այսպես հաղթություն պարգևեր, որ փառաւորեինք իր սուրբ անունը: Իսկ Պել-Ճամալը չնորհակալ եղավ Աստծուց, որ մեծ բաժնով կողուպուտ էր ստացել և խնդրեց նրանից, որպեսզի անպակաս աներ այդպիսի արդյունավետ կողոպուտները: Վանքի դուռը փակեցինք, դռնատակի քարը համբուրեցինք և, հրաժեշտի ողջույն տալով, հեռացանք:

Մեր բացակայությունից օգուտ քաղելու նպատակով ճըռ-խանը երկու հարյուր հոգանոց զորք ուղարկեց Խնածախ և Պալլուջա գյուղերը՝ հիմնահատակ կործանելու: Բայց Քեանդ-խուտա-Խաչատուրը և Շահմար-Ղավալը, որոնք զգուշության համար գյուղում էին թողնվել, այդ մասին Շեյթանից իմանալով, հավաքեցին երկու գյուղերի մնացած տղամարդկանց և կոտորեցին զորքը (200): Իսկ Տեոնմազն իր զորաբաժնով Ասկերանում կոտորել էր այն (1000) զորքը, որը ճըռ-խանից ուղարկված էր Ջրաբերդ՝ գավառն ավերելու և ժողովրդին Վարանդա ու Դիզակ փոխադրելու համար:

Շեյթանը հայտնեց, որ Իբրահիմ ճըռ-խանը զորականի այս մեծ կորստի վրա զարմանալով գոչել և հաճախ էր կրկնում. «Արդարև, Ազրայե՛լ է, Ազրայե՛լ, Շահմա՛ր է, Շահմա՛ր, Տեոնմա՛զ է, Տեոնմա՛զ, Զափա՛ր է, Զափա՛ր»:

Այդ ժամանակ Իբրահիմ ճըռ-խանը վերին աստիճանի հուսահատության մեջ էր ընկել և բոլորովին սրտաբեկ էր: Ջնջված էր իր հինգ հազար երեք հարյուր հոգանոց զորքը, որոնց չորս հազարը թուրք էր, իսկ մնացածը վարանդեցի, դիզակցի և խնձորստանցի հայեր: Կրկին զորք խնդրեց Մելիք-Շահնազար Գ-ից, Դիզակի մելիքի ժառանգ Աբաս-Բեկից, Ղարաբաղի թափառական մահմեդականներից, Բալաքեանի, Նախիջևանի և Միշկինի խաներից, սակայն բոլորից ստացավ բացասական պատասխան: Անճարակությունից ստիպված ճըռ-խանը մի քանի մահմեդական կարդացողների ուղարկեց Երասխի աջ եզերքում բնակվող պարսիկ ցեղերի մոտ, որպեսզի նրանք վերջիններիս Ղարաբաղ հրավիրեն այն ավերելու համար: Դրանք Շահ-Սևանի, Աղջաբեդի և Միշկինի մահմեդական ցեղերն էին, որոնց քարոզում էին Իբրահիմ ճըռ-խանի ուղարկած մահմեդականները.

«Գյուլիստանի և Ջրաբերդի հայ մելիքները Տփխիս փախան Բուրնաշովի հետ: Դիզակի Մելիք-Բախտամը մաշում է Արտա-վիլի բերդում, իսկ Մելիք-Շահնազարը ծանր հիվանդ է: Այժմ երկյուղ չկար և ոչ մի կողմից: Քրիստոնյաների ապրանքները ձեզ հալալ են: Ուրեմն, հարձակվեցեք և ավերեցեք Ղարաբաղը: Տերը միայն Իբրահիմ խանն է, որ այսպես կամենում է հարս-տացնել ձեզ և այլն»:

Ճրո-խանը, տեսնելով, որ ոչինչ չշահեց այս ձեռնարկած գործից, ինքնագիր նամակներ գրեց այդ դրացի խաներին և դրամով զորք խնդրեց: Սակայն սա ևս ապարդյուն եղավ: Հետո գրեց նաև Աղա-Մամատ-Շահին, թե ինչ հարկ կար իրենից պա-հանջել հանրագրությունը կամ դրա սևագրությունը, իբրև փաստ հայ մելիքների անհավատարմության, եթե այդ մելիք-ներն իրենց զորքով և դրոշակներով միացան ռուս զորքի հետ և հետ դարձան նրանց հետ Տփխիս և Գանձակի Ջավատ-խանն անգամ, անցավ ձեր այդ թշնամի մելիքների կողմը: Բայց այս գանգատը ևս մնաց առանց հետևանքի:

Այս ժամանակ ճրո-խանն ուներ միայն հինգ հարյուր թուրք զինվոր, որոնք Շուշիում բերդապահ էին: Այս զորքը բերդում անգամ ընկճված էր և հուսահատ: Այս պատճառով սրանցից երկու հարյուրը, դասալիք դառնալով, փախան Պարս-կաստան և բերդում մնաց միայն երեք հարյուր բերդապահ:

Ճրո-խանին բոլորովին ուժաթափ անելու համար՝

Նախ. Քեսրոզլու միջոցով, որ անհաշտ թշնամի էր Մե-լիք-Միրզախանի տան հետ, Ջալալյան Մելիք-Ալլահվերդու մատնության պատճառով կալանավորված Մելիք-Ալլահվերդի Մելիք-Միրզախանյանը Երից-Մանկանց վանքը փոխադրել տվե-ցինք իր կնոջ հետ միասին: Հափշտակվեցին սույն ճրո-մելիքի բոլոր շարժական գույքերը և սպանվեցին սրանց մի քանի ազ-գականները, միայն սրա որդի փոքրիկ Ղահրամանին փախցրե-ցին ճրո-խանի մոտ՝ մեր քաջերի թույլտվությամբ:

Երկրորդ. Ամարասի Իսրայել ճրո-կաթողիկոսին փոխադ-րել տվեցինք Հոռեկայ վանքը, որպես աքսոր:

Երրորդ. Խնձորստանում մնացած սակավաթիվ հայ ճըռ-զորքն ուղարկեցինք Զափար-Սարասարի մոտ, որ խառներ իր զորաբաժնին:

Չորրորդ. Այդ ճըռերը, որպես հարազատ հայության դեմ ծանր հանցանք գործած մարդիկ՝ թողեցինք, որ մեծ հսկողության տակ ապաշխարհեին իրենց մեղքերը:

Հինգերորդ. Կամեցանք պատժել և ամենահանցավոր Մելիք-Շահնազար Գ-ին, որն ի սեր Իսրայել ճըռ-կաթողիկոսի, նորոգել էր Ամարասի վանքի պարիսպը, որպես իր մեղքերի քավում, բայց այդ ժամանակ հիվանդ էր: Սակայն նպատակահարմար գտանք նախ իմանալ նրա դրությունը՝ Շեյթանի միջոցով:

Երեք օր հետո, մեզ մոտ՝ Խնածախ եկավ մի փառահեղ, ալեզարդ, ծեր անծանոթ վարդապետ, որն ազգու քարոզով գովեց քաջ խմբի ազգասիրությունը, հայրենասիրությունը և կրոնասիրությունը՝ հիշելով հայ նախնիների դյուցազնությունները, գովաբանեց հարազատ-մելիքների բացակայության ժամանակ հայ քաջերի Հայրենիքը պաշտպանելու սիրավառ եռանդը և տարածելով իր բազուկները՝ օրհնեց Պալլուճեցի և Խնածախցի քաջերին և նրանց թրերը:

Ամենքը համբուրեցին նրա աջը, բացի Պել-Ճամալից: Սևազգեստ վարդապետը հանեց իր կնգուղը և չինծու մորուքը: Սա Շեյթան-Թյունին էր, որի անունը Պել-Ճամալը փոխեց «Սարգիս-Պուխարեցու», իսկ Պելը-Պուղու անունը, որ սարկավագի հագուստով էր՝ «Ճըռ-Սարկավագ»:

Շեյթան-Թյունին հայտնեց, որ ինքն, իբրև Երուսաղեմի պատվիրակ, քարոզել էր Դիզակի և Վարանդայի ժողովրդին՝ բնավ զորք չտալ ճըռ-խանին, այլ հավատարիմ մնալ հարազատ-մելիքներին, հարազատ-հայությանը, հայրենի քաջասրտությանը և Ղարաբաղի քաջահամբավ հայ տղամարդկանց:

Ավետարանոց ավանում Շեյթան-եպիսկոպոսին խոստովանում է Մելիք-Շահնազար Գ-ն իր բոլոր մեղքերը, սուրբ Երուսաղեմին նվիրում հինգ հազար թուման դրամ(15000 ռուբլի) և Շեյթանին հարյուր թուման, ապա վախճանվում՝ 1791 թվականին: Մելիք-Շահնազարը երկար ժամանակ հիվանդու-

թյամբ պառկած էր անկողնում, նրա մահից անմիջապես հետո Շեյթանն, առնելով դրամները, հեծնում է վախճանված մելիքից չնորհված ձին և հեռանում Ավետարանոցից:

Պըլը-Պուղին հագավ իր աշխարհիկ հագուստը, իսկ հիսուն հազար թումանը, ժողովի որոշմամբ, ուղարկվեց Սարգիս սրբազանին՝ պահելու: Քեօրօղլին իր զորաբաժնով Մազի-կամուրջը փոխադրվեց, իսկ Շեյթանն ուղարկվեց Շուշի:

ԺԱ.

Կարևոր է մի քանի տեղեկություն տալ այդ ժամանակի հայ զորքի և ճըռ-խանի դրության մասին:

Հայ զորքն այդ ընթացքում մելիքներից՝ ծախսելու համար տված գումարը չէր ծախսել: Զորքի ուտելիքն ու հագուստը գոյանում էր ավարներից և սպանված թշնամիներից: Հրացանները սարքում էին Գյուլիստանի գործարանում և Լյուլեսազ գյուղում, իսկ թուր, երկսայրի, վառոդ, գնդակ և ատրճանակ պատրաստում էին Զրաբերդի և Խաչենի գործարաններում, Խնածախցի և Պալլուճեցի քաջերի համար վառոդն ու գնդակը պատրաստվում էին Ծակ-Քարի ետևի անտառում, որը կոչվում է «Խմհատ», կամ «Քոլավաթ»:

Ծախս կատարվում էր միայն երկաթի, պողպատի, կապարի և ծծմբի համար:

Ճըռ-խանի վիճակն այդ ժամանակ անտանելի էր: Մեռած էր իր խորհրդատու Մելիք-Շահնազար Գ-ն, աքսորված էին և իր խորհրդական Իսրայել ճըռ-մելիք Միրզախանյանը, ճըռ-մելիք Ալլահվերդին, իսկ Աղա-Մամատ-Շահը խիստ կերպով շարունակում էր պահանջել հայ մելիքների հանցավորությունը հաստատող հանրագիրը: Դրամով զորք տալու խնդրանքը մերժել էին այն խաները, մահմեդականները և կուսակից հայերը, որոնց դիմել էր ճըռ-խանը, խզված էին բերդի հաղորդակցությունները գավառների հետ, սարսափահար դողում էր բերդում մնացած փոքրաթիվ զորքը, իր վրա բեռ էին դարձել Գյուլ-Եաթաղի ճըռ-

մելիք Առստամի և Խնձորստանի ճրո-մելիքի ընտանիքները և իր կենդանի մնալուց երկբայացած էր Իբրահիմ ճրո-խանը: Նա այդ ժամանակ ոչ այլ ինչ էր, եթե ոչ բանտարկյալ և սարսափահար գերի:

Ճրո-խանն անձնական զինարան և վառոդարան չուներ, այլ ամեն ինչ թանկ գնով գնում էր հայերից, բայց այդ միջոցին արգելված էր ճրո-խանի վրա ոչ զենք ծախել և ոչ նռնակ ու վառոդ:

Մի գիշեր կիրճով ներս մտան Խնածախցի և Պալլուճեցի քաջերը, կոտորեցին հիսուն գիշերապահների, որոնք հսկում էին ճրո-խանի տան պարսպի շրջապատը, և մի թուրքերեն գրված տախտակ կախեցին ճրո-խանի դարպասի վրա, ուր գրված էր. «Ճրո-խան, խելոք կաց. եթե հանդգնես այսուհետև չափիցդ դուրս գալ, շուտով կուտես գիշերապահներիդ հացից և ինքդ կսպանվես նրանց պես: Մենք կարող էինք սպանել քեզ, մեր ճանկում էիր, ուրիշ անգամ կտեսնվենք, եթե չես ուղղվի.

Ազրայել-Իբրահիմ,

Նեառռատեով-Աթա,

Տեով-Գասպար»:

Մելիքների բացակայության ժամանակաընթացքում այս բոլոր հաջողությունների պատճառն այն է, որ ամբողջ հայ հարազատ զորքը կառավարվում էր մի հրամանատարի (Աբրահամ Բեկնազարյանց) հրամանով, որը միշտ նշանակվում էր զորապետական խորհրդով: Շատ անգամ հարազատ-մելիքները, հակակարծիք գտնվելով, գործում էին առանձին-առանձին և նման անհամաձայնությունը հույսով սպասված հաջողություն չէր բերում, ինչպես եղավ այս դեպքում:

Այս ամենահաջող ժամանակին, այն է՝ 1794 թվականին, Մելիք-Մեժլումից և Մելիք-Աբով Գ-ից գրված մի հրամանագրից Գանձակ հրավիրվեց ողջ հայ հարազատ զորքը: Զորապետական ժողովը Կաքև-Զաքու ձեռքով դիտել տվեց այդ մելիքներին, որ այդ միջոցին խիստ վտանգավոր էր հայ զորքի Շուշուց հեռանալը և ճրո-խանին զորանալու ժամանակ տալը: «Հրամայում ենք ձեզ շտապ Գանձակ գալ ողջ զորքով»: Մելիք-

ների սույն հրամանից ստիպված՝ Գանձակ չտապեց հայ զորքը, Խնածախում, Պալլուճայում, Ասկերանում և Յեխ-Զորում թողնելով պահապան զորք, որ հսկեր ճըռ-խանի գործողությունները: Խնածախի պահպանությունը հանձնվեց Քեանդխուտա-խաչատուրին, Շահմար-Ղավալին, Ասկերանինը՝ Նեառատեվոլին, Կայծակին և Զարպազանին, Պալլուճայինը՝ Ալփաթյունին, Խոզպատին և Քեարփաթյունին, իսկ Յեխ-Զորինը՝ Քեօրօղլուն:

Ջրաբերդի Կուսապատ գյուղում մելիքները ստացան պատերազմական գործողությունների այն բոլոր հաշիվները, որոնք կատարվել էին իրենց բացակայության ժամանակ: Մելիքները նախ գրկախառնվեցին և համբուրվեցին երեք զորաբաժինների զորավարների հետ: Հետո երախտագիտորեն, ոտքի կանգնած իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին բոլոր հայ հարազատ զորքերին, որոնք դյուցազնորեն պաշտպանել էին Հայրենիքը ճըռերի դեմ և փշրել սրանց զորությունը: Ապա, յուրաքանչյուր զորականի շնորհեցին երկու թուման դրամ, որոնք լրիվությամբ նրանք հետ տվեցին մելիքներին՝ պատճառաբանելով, որ իրենք բավարարված են հափշտակած կողոպուտներով, բացի Պել-Ճամալից, ով հետ չտվեց իր բաժինը:

«Տփխիսից մի նամակ գրեցինք,-պատմեց այդտեղ Մելիք-Մեժլումը,-Ռուսաց Եկատերինա Բ. Կայսրուհուն, որը հատուկ թղթատարով ուղարկեցինք Արղությանց Հովսեփ եպիսկոպոսին՝ թագուհուն ներկայացնելու: Կաքև-Զաքին ճըռ-խանի դավադիր նամակից առաջ հասավ Տփխիս, որից իմացանք ամեն ինչ: Հերակլ իշխանը մեծ սիրով ընդունեց մեզ և խոստացավ երկու հազարանոց զորք տալ իբրև օժանդակ, այն պայմանով, որ մենք՝ հարազատ մելիքներս մնայինք իրեն դաշնակից և բարեկամ: Բայց երբ ստացավ ճըռ-խանի նամակը, ճաշի պատրվակով մեզ հրավիրեց իր մոտ: Դավաճանության հոտն զգալով՝ մենք գնացինք այդ ճաշին, առանց հանձնելու մեր զենքերը: Ճաշից հետո Հերակլի ակնարկով կամեցան կալանավորել մեզ, բայց մենք քաջաբար ազատվեցինք: Մեզ համար ցավալին ոչ այնքան հեթանոս ճըռ-խանի տմարդությունն էր, որքան քրիստոնյա Հերակլ իշխանի հակաքրիստոնեական արարքը: Մենք արդեն մեր

զորքով բավարար էինք. ուղղակի՝ քրիստոնյա իշխանի հավատարմությունը և անհավատարմությունը փորձելու համար խնդրեցինք այն երկու հազար վրացի օժանդակ զորքը: Մե՛ծ տարբերություն Ջավատ-խանի, Իբրահիմ ճըռ-խանի և Հերակլի միջև:

Աղա-Մամատ-Շահը մի նամակով հայտնում է, թե ինքն անձամբ գալու և պատժելու է ինչպես Իբրահիմ ճըռ-խանին, նույնպես էլ Հերակլ իշխանին և իր հետ Ղարաբաղ է բերելու անմեղ զոհ Մելիք-Բախտամին, որի ազատության մասին կանխավ խնդրել էինք իրենից: Շահը հայտնում է, որ Իբրահիմ ճըռ-խանն անկարող է եղել հանրագիրը գտնել և Պարսկաստան ուղարկել:

Իսկ Մելիք-Բախտամը գրել է, որ ինքը բանտից նամակով ապացուցել է Շահին իր անմեղ բանտարկությունը և ճըռ-խանի զրպարտությունը և, որ Շահը մերթ ընդ մերթ խստիվ պահանջում է ճըռ-խանից այն հանրագրությունը, որն իբրև անհերքելի փաստ էր հաստատելու հայ մելիքների ապստամբությունը Պարսկաստանի գահի դեմ:

ԺԲ.

Արդեն Գանձակ էր հրավիրվել Ջալալյան Սարգիս եպիսկոպոսը՝ կաթողիկոս օծվելու, որպեսզի Ջալալյան բարեհամբավ և արդյունավոր տոհմից չպակասեին ինչպես կաթողիկոսությունը, այնպես էլ մելիքությունն ու թագավորությունը:

Բացի մելիքներից, Գանձակ էին հրավիրված բոլոր եպիսկոպոսները, վարժապետները, ավագերեցները, քեանդխուդանները և Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի, և Դիզակի ժողովրդական առաջնորդները: Հրավիրված էր հարազատ զորքը, որպեսզի օծման հանդեսը փառավորեին:

Երբ հայ մելիքները և զորքը Գանձակ մտան, նրանց դիմավորեցին Գանձակի երևելի հայերը, ինքը՝ Ջավատ-խանը ե-

պիսկոպոսներով, քահանաներով, վարդապետներով և սարկա-վագներով քաղաք ընդունեց եկող հայերին:

Օծման հանդեսը կատարվեց 1794 թվականին, մեծ շքեղությամբ: Երգեցողության մեծ փայլ տվողը Ջալալյան Դանիել-բեկի որդի դպիր Բաղդասարն էր[1], որը հիանալի ձայն ուներ:

Օծման ժամանակ ներկա էին հինգ եպիսկոպոս և վեց վարդապետ: Ըստ եկեղեցական կանոնի և օրենքի, հարկ էր տասներկու թիվը լրացնել: Ազնիվ Ջավատ-խանը լրացրեց այդ պակաս թիվը՝ ի շարս վարդապետների և հրավիրվեց կանգնել եպիսկոպոսների շարքում:

Ջավատ-խանի և մելիքների առաջադրությամբ մի շաբաթ հետո նոր օծված կաթողիկոսի կողմից սարկավագ և վարդապետ ձեռնադրվեց նույն դպիր Բաղդասարը:

Հարկ չկա ասել, որ ժողովուրդը «Կենդանի նահապետ» գեղեցիկ մականունը տվեց նոր օծված կաթողիկոսին, որը դեռ իր եպիսկոպոսության ժամանակ հանրագրի գոյությունը չհայտնելու պատճառով այնքան ծեծված էր ճըռ-խանից: Սարգիս կաթողիկոսը վերին աստիճանի սիրված էր ժողովրդի կողմից: Ահա այս էր պատճառը, որ ժողովուրդը խառնվել էր օծման հանդեսը փայլեցնելու համար: Այդտեղ էր Վարանդայի Մելիք Շահնազարյան Մելիք-Ջումշուտը:

Մելիք-Ջումշուտը Մելիք-Շահնազար Գ-ի հարազատ և անդրանիկ որդին էր: Մելիքների նախնիների սովորություններ-ի տրամադրությամբ, որը դարերի սրբագործությամբ օրենք էր դարձել, հոր մահից հետո մելիքությունը ժառանգում էր վախճանվածի անդրանիկ որդին: Մելիք-Շահնազար Գ-ի մահից հետո իրավմամբ պետք է հաջորդեր Ջումշուտ-բեկը, որն իր հոր անդրանիկն էր և ծնված հարազատ կնոջից: Սույն Մելիք-Շահնազարի օրինավոր կինը Դիզակի Մելիք-Եսայու դուստր Սոնա խանումն էր, որից ծնվել էին Ջումշուտ-բեկը և Հյուրզատը, ում Մելիք-Շահնազարը, ի նախատինք Մելիք-Եսայու, կնության էր

---

[1] Բաղդասար մետրոպոլիտն է:

տվել Իբրահիմ ճըռ-խանին: Աղա-Մամատ-Շահի հրովարտակով Ջումշուդ-բեկը հաջորդեց իր հոր Մելիք-Շահնազար Գ-ին: Բայց Իբրահիմ ճըռ-խանը, կամենալով Վարանդայում ստեղծել մի ճըռ-մելիքություն, արհամարհեց Շահի հրովարտակը, Հյուրզատի թախանձանքը և մելիքության կանոնը: Նա հանդգնաբար Մելիք-Հյուսեին Բ. տիտղոսով մելիք անվանեց ճըռ-Հյուսեին-բեկին, որը ծնված էր Մելիք-Շահնազար Գ-ի ապօրինի կնոջից: Սակայն այս ճըռ-մելիքը շուտով սպանվեց Մելիք-Ջումշուտից, ով քաջությամբ նման էր իր մորեղբայր Մելիք-Եսայուն:

Այդ օրից սկսած Մելիք-Ջումշուտն անհաշտ թշնամի դարձավ Իբրահիմ ճըռ-խանի տան հետ և սերտ բարեկամ՝ հարազատ մելիքների: Հարազատ հայ զորքն այդ ժամանակ միաբանված էր Դիզակի մելիքի ժառանգ Աբաս-բեկով, Գյուլիստանի Մելիք Աբով Գ-ով, Ջրաբերդի Մելքի-Մեժլումով, Ջալալյան իշխանազուններով, Վարանդայի Մելիք-Ջումշուտով և իրենց ժողովրդով: Ահա, այս է պատճառը, որ Մելիք-Ջումշուտը և Աբաս-բեկը ևս շտապել էին Գանձակ՝ օծման հանդեսին:

Հետո Մելիք-Աբով Գ-ն, Մելիք-Մեժլումը և Մելիք-Ջումշուտը հայտնեցին ժողովրդին, որ իրենք որոշել էին մի շարժական գաղթականություն հաստատել Տփխիսի և Գանձակի կողմերում, որպեսզի մոտ լինեին և միանան եկող Ռուսաց զորքին և մոտիկից նամակագրական հարաբերություններ ունենան Ռուսաց կառավարության հետ՝ մանավանդ, երբ կար մի գաղտնի նպատակ: Մելիքներն, ինչպես ռուսական կառավարությունից, նույնպես էլ Ջավատ-խանից էին ստացել պայմանագրությունները: Ջավատ-խանն իր դաշնակիցներին զորացնելու հեռատեսությամբ՝ ժողովրդին ընդունելու գործում ուժ տվեց մելիքների առաջարկությանը:

Ծանր էր ժողովրդի համար Հայրենիքից հեռանալը, սիրած կաթողիկոսից և հարազատ-մելիքներից բաժանվելը: Վերջապես, Գյուլիստանի ժողովրդի և զորքի մի մասը Մելիք-Աբով Գ-ի հետ գնաց Բորչալու, որը Տփխիսի մոտերքում էր: Ջրաբերդի ժողովրդի և զորքի մի մասը գնաց բնակվելու Գանձակի մոտ գտնվող Շամքորի լեռնամասում: Մելիք-Մեժլումը մնաց Գան-

ձակում՝ հսկելու Ջրաբերդի և գաղթած մասի ժողովրդին: Վա-
րանդայի ժողովրդի և զորքի մի մասը Մելիք-Ջումշուտի հետ
գաղթեց Տփխիսի մոտերքում գտնվող Լոռի գավառ: Սարգիս
կաթողիկոսը ևս իր միաբանության կես մասով գաղթեց Սանա-
հինի վանքը:

Իսկ պալլուճեցի և խնածախցի քաջերը վերադարձան
հայրենիք մնացած ժողովրդով և զորքով հանդերձ, ասելով.
«Սիրելի՛ մելիքներ, Ղարաբաղի մայրական սերը չթողեց մեզ
գաղթել օտար երկրի խորթ գիրկը, որի դառը փորձն արդեն վա-
յելել ենք՝ փախչելով կալանավորությունից: Մնաք բարով և
դուք, հայ զորականներ, որ պաշտպանեցիք ձեր ծնող Հայրենի-
քը և այժմ բաժանվում եք նրա գրկից»:

Մի քանի խոսք Պալլուճա և Խնածախ գյուղերի բնակիչ-
ների և այն մասին, թե այս գյուղացիները Ջրաբերդի մելիքու-
թյան հպատակ լինելով՝ ինչ պատճառով են բնակվում Խաչենի
հարավային մասում և ճրռ-խանի օձաբնի մոտ:

Այս երկու գյուղերի գյուղացիները Ջրաբերդի Մելիք-Ի-
րայելյան Մելիք-Ադամի զորքերից ամենաքաջ և ընտիր զոր-
քերն էին: Իբրահիմ ճրռ-խանն ամեն հնարք գործ դրեց ջնջելու
այս քաջերին, որոնք փչրել էին իր բոլոր ձեռնարկները: Բայց
տեսավ, որ անկարելի է իր նպատակին հասնել՝ Մելիք-Շահնա-
զար Գ-ի միջոցով հետամուտ եղավ գաղտնի կաշառել այդ քա-
ջերին և իր կողմը գրավել նրանց՝ Մելիք-Ադամի ուժը տկարաց-
նելու հեռատեսությամբ: Մելիք-Շահնազարը գաղտնի Քեանդ-
խուտա-Խաչատուրին հանձնեց հետևյալ պայմանագիրը, որը
վավերացվել էր Իբրահիմ ճրռ-խանի կողմից: Գլխավոր հոդ-
վածներն էին.

Ա. Ջրաբերդից Խաչեն տեղափոխվող քաջերին տալ երեք
հարյուր թուման՝ իբրև նոր շինության ծախս և հին կարասի-
ները նորերի մեջ փոխադրելու վարձ:

Բ. Արևելքից Կարկառ գետակը, հյուսիսից Խոջալլու գե-
տակը, հարավից՝ Վարարակնը և արևմուտքից՝ բարձր լեռների
գագաթնագիծը Մելիք-Ադամի քաջերինն է: Այս տեղերը, որ
նախ Ջալալյան մելիքների սեփականությունն է, հետո Խնձորս-

տանի մելիքներինը՝ այժմ քաջերի սեփականությունն է՝ որդվոց որդի:

Գ. Ոչ Իբրահիմ-խանն իրավունք ունի քաջերից և սրանց սերունդներից պահանջել տուրք, գլխահարկ կամ տասանորդ, ոչ էլ այս խանի սերունդներն ու ճրռ-մելիք Միրզախանյաններ-ը:

Դ. Ոչ ոք իրավունք չի ունենա այս քաջերից զորք կամ զորադրամ պահանջել:

Ե. Միայն թե այդ քաջերը բնավ չմասնակցեն մելիքների պատերազմներին կամ էլ զինվեն ու ընդդեմ դնան խանին:

Գաղտնիքը հայտնվեց Մելիք-Ադամին, որը խիստ օգտակար գտնելով ներկայի և ապագայի համար, ծածուկ խորհուրդ տվեց քաջերին ընդունել և շուտով տեղափոխվել՝ ասելով. «Քանի ես ողջ եմ, Իբրահիմ ճրռ-խանը չի կարող համարձակվել և Մազի-Կամրջից այս կողմ անցնել: Այժմ ձեր ներկայության կարիքը չունեմ, երբ կունենամ Ջեյրան-Ծատուրի միջոցով ձեզ կիմացնեմ: Դուք, քաջե՛ր, այս տեղափոխությամբ ամենամեծ ծառայությունն եք անելու Ղարաբաղի հայերին: Բնակվելով Շուշիի մոտ՝ կարող եք գաղտնի հսկել ճրռ-խանի բոլոր շարժերը, ծանոթանալ Շուշու կիրճերին և ծակուծուկին ու ամեն ինչ հայտնել հարազատ-մելիքներին:

Իմ մահից հետո տեղս տեղակալելու է իմ սիրելի Մեժլում-բեկը, որ դեռ անփորձ երիտասարդ է, որին և հանձնում եմ ձեր խնամքին ու պահպանությանը: Իսկ ձեզ, քաջե՛ր, կտակում եմ իմ քաջությունը, հայրենասիրությունը և ազգասիրությունը: Ձեզ եմ հանձնում իմ Մեժլում-բեկին: Ճշմարտություն սիրող Աստված զորավիգ լինի ձեզ՝ պաշտպանելու ճշմարտությունը և անիրավությունը պատժող անկաշառ դատավորը պատերազմում ձեզ ուղեկից լինելով՝ օգնի ձեզ Ղարաբաղից ջնջել անիրավներին իրենց անիրավություններով հանդերձ: Տերը ձեզ հետ, սիրելի՛ որդիներս»: «Մեր ամենասիրելի՛ Հայր, Մելիք-Ադամ, քո քաջ որդիներն ուխտում են Աստծո և քո առաջ՝ ցմահ հավատարմությամբ պաշտպանել հայ կրոնը, հայ եկեղեցին, հայ հայրենիքը, հայ հարազատ-մելիքությունը և հայ ազգը»,- պա-

տասխանեցին քաջերը և, մելիքի ձեռքերը համբուրելով, հեռացան մելիքարանից:

Պայմանագիրը գրված էր Իբրահիմ ճըռ-խանի հրամանով, վավերացված էր նրա հատուկ կնիքով և Մելիք-Շահնազարի վկայությամբ՝ «Վկա եմ՝ Մելիք-Շահնազարս» 1770 թ. մայիսի 2-ին: Մելիք-Շահնազար Գ-ն, որ ուխտի պատրվակով Երից Մանկանց վանքն էր եկել, Քեանդխուտա-Խաչատուր Բարխուդարյանցի և Նեառատեով-Աթայի ներկայությամբ քաջերին հանձնեց այդ պայմանագիրը և խոստացած բոլոր դրամները և անձամբ առաջնորդեց մեզ Պալլուճայի և Խնածախի տեղերը՝ մեզ հանձնելով վերոհիշյալ սահմանները:

Մեր նախնիները Մելիք-Հայկազյանց Մելիք-Եսայու հետ Քշտաղի Խնածախ ավանից Ջրաբերդ են գաղթել 1686 թվականին: Մելիքի հետ գաղթող երկու հարյուր երեսուն տնից հարյուր ընտանիք բնակություն են հաստատում Ջրաբերդի «Դաստակերտ» ավանում: Ջալալյան Երեմիա կաթողիկոսի գրած «Աղվանաց թագավորների ծագումը» և Եսայի կաթողիկոսի «Ծագումը և պատմությունը Մելիք-Հայկազյանց Մելիք Եսայու՝ իշխողը Ջրաբերդի» ձեռագիր պատմության մեջ հիշատակված է, որ Աղվանից Վաչագան Գ. թագավորը մի քաղաք է կառուցել և իր սիրելի դստեր անունով քաղաքի անունը Դաստակերտ կոչել[1]: Ահա այս ավանում բնակվել են մեր քաջերի նախնիները՝ Մելիք-Եսայու որոշմամբ, որի նախնի հայ բնակչության մեծ մասը քաշվել էին դեպի Վերին Խաչեն և այդ քաղաքը բնակիչների սակավության պատճառով ստացել է ավանի ձև:

Դաստակերտը, Թարթառ գետի ձախ եզերքում գտնվելով՝ պատկանում էր Գյուլիստանի մելիքությանը: Բայց, որովհետև այս դրացի մելքիները խիստ համերաշխ են եղել, Դաստակերտը համարվել է Ջրաբերդի թեմ:

---

[1] «Եվ դուստր Խնչիկ անունով, տղայի հասակով, սիրելի արքայի(Վաչագան Գ-ի), որի անվամբ կառուցվել էր մի դաստակերտ» («Մովսես Կաղանկատվացի, գլ. ԻԲ): Այժմ այդ ավերակը կոչվում է «Դեաստեկյուլ»:

Բայց թե քաջերը ինչու ստիպված թողեցին այս ջրարբի, տեսարանով գեղեցիկ և դիրքով սքանչելի Դաստակերտը և գաղթեցին Խաչեն՝ հայտնի է: Պատճառը ճրո-խանի գորանալը, Ճրո-մելիքների բազմանալը, հարազատ-մելիքների երկպառակությունը, գաղտնի դավադրությունն է: Քաջերն առերես հայտնեցին, իբրև իրենք ձանձրացել են երկար պատերազմներից, բայց իրենց բուն նպատակն էր գաղտնի փչրել բոլոր ճրոների ամեն մի ձեռնարկություն:

Քաջերը խորհուրդ արեցին ու որոշեցին երկու մասի բաժանվել և կառուցել միմյանց խիստ մոտ երկու գյուղեր, բայց այն պայմանով, որ քաջագույնները բնակվեն Շուշիի կողմում: Վճռվեց գյուղերը կառուցել այժմյան Պալլուճայի և Խնածախի տեղերում՝ թե՛ տեղերի և թե՛հարմարության պատճառով:

Պալլուճայից վերև կառուցվեց Ալուխանա[1] շենը՝ քսան ընտանիքից բաղկացած, իսկ Խնածախից վերև՝ Ջամիլ շենը՝ նույնպես քսան ընտանիքով: Կարկառ գետակից սկսած մինչև արևմտյան բարձր լեռները թանձր և վաղեմի մեծ կաղնի ծառերով անտառ էր, մինչև անգամ Պալլուճա և Խնածախ գյուղերը հիմնելու ժամանակ տան սյուները և գերանները կտրված էին այդ անտառից:

Միևնույն թվականին Դաստակերտից Խաչեն գաղթեց հարյուր քսան ընտանիք, որից յոթանասունը բնակվեց Պալլուճա նորաշեն գյուղում, իսկ հիսունը՝ Խնածախում: Պալլուճան առաջ կոչվում էր «Մեծ Խմհատ», իսկ Խնածախը՝ «Փոքր Խմհատ», որ նշանակում է անտառից կտրված:

Պալլուճա անվանակոչությունը ծագել է Ղարախան յուզբաշու «Պալլու» տատի անունից, որն ամեն խոսողի հետ հաճախ գործածում էր «ճան» բառը: Այս երկու բառերի միավորությունից է ծագել Պալլուճա անունը: Շատ չանցած Փոքր-Խմհատ անունը ևս տեղի տվեց Խնածախ անվան:

---

[1] Ալուխանա շենն այժմ ավերակ է, որի բնակիչները հետո միացել են Պալլուճացիների հետ: Իսկ Ջամիլուն, որ նույնպես ավերակ էր՝ 1858 թվականից սկսած Խնածախից գաղթելով բնակվում են ութ ընտանիք հայեր:

Ճրռ-խանը տեսնելով, որ իր քաջերը միշտ գաղտնի օգնում էին հարազատ-մելիքներին, մանավանդ իր սուրհանդակներն ու լրտեսները, և զորքերից շատերը կոտորված էին քաջերից, սաստիկ զայրացավ, որոշեց քաջերից ևս գլխահարկ առնել և միանգամայն բնաջնջել տալ Պալլուճան և Խնածախը: Այդ ժամանակ Խնածախը հաղորդակցություն ուներ Շուշու, Ջամիլի, Պալլուճայի և Ասկերանի հետ նեղ և օձապտույտ կածաններով և ուղիներով, որոնք անցնում էին խիտ անտառների միջով:

Թե՛ քաջերը, և թե՛ Ալխունաց ու Ջամիլի տղամարդիկ կոտորեցին այդ կածաններով արշավող ճրռ-խանի երեք հազարանոց զորքը, որը գալիս էր կործանելու Պալլուճան և Խնածախը: Վերջին անգամ ջնջված գնդի գնդապետը ողջ պահվեց, ում այս պատվերը տալով Շուշի արձակեց Շահմար-Ղավալը. «Քեզ ուղարկող ճրռ-խանին կասես. Ճրռ-խան, դու Պարսկաստանից հայ գլուխ չես բերել, որ մեզանից գլխահարկ ես պահանջում, Շահմար-Ղավալը մի կտոր անգամ քեզ չի տա, որ աչքդ քցես: Դու՛ հետապնդեցիր հիմնահատակ կործանել Պալլուջան և Խնածախը, բայց ջնջել տվեցիր քո երեք հազարանոց զորքը»: Ճրռ-խանը գոչում էր զարմացած. «Աճապա՜, քյաֆուր. Շահմար-Ղավալ հեչ վերմազ խանա զեկ»: Այնուհետև այս գյուղի անունը Թուրքերեն կոչվեց «Խանազեյ», իսկ հայերեն «Խանածախ», կրճատված՝ Խնածախ:

Այդ թվականներին քաջերի երկրագործությունը տակավին Դաստակերտի դաշտերում էր, որից տարեկան բերքերը բեռներով և փոքրիկ սայլակներով փոխադրվում էին նորաշեն գյուղերը: Ճրռ-խանը, հարմար ժամ համարելով, մերթ ընդ մերթ ծածուկ զորքեր էր ուղարկում: Այսուամենայնիվ, բոլորն էլ ջնջվում են:

Վերջապես ճրռ-խանն անճարացած խորհրդի է կոչում Մելիք-Շահնազար Գ-ին, որը պատասխանում է. «Խնածախի և Պալլուճայի քաջերն այնքան համամիտ են, համակամ, հանդուգն և արյունարբու հրեշներ են, մինչև անգամ՝ թռչունները սարսափից չեն թռչում դրանց օդում և գիշատիչ գազանները չեն համարձակվում անցուդարձ անել դրանց անտառներով: Մի

մեծ սխալ գործեցինք այդ հրեշներին Ջրաբերդից մարդածախ որջերը փոխադրելով: Առածն ասում է. «Կաքավի ձվից ելած ճագը հավ թուխսկանի կրթկրթոցին ականջ չի դնի»: Ավելի լավ է քաղցրությամբ վարվել դրանց հետ, թերևս կարողանանք մի կերպ որսալ սիրաշահելով և սպասել մի ամենահարմար ժամանակի»: Մելիք-Շահնազարի սույն խոսքերով վերջացան ճըռ-խանի կողմից հայտնի կամ գաղտնի հարձակումները:

ԺԳ.

Այժմ կրկին շարունակենք պատմության թելը:

Սարգիս կաթողիկոսի օծման պատճառով, մինչ հայկական զորքի ուժը համախմբված էր Գանձակում, Իսրայել ճըռ-կաթողիկոսը և ճըռ-մելիք Ալլահվերդին կաշառքի ուժով աքսորից փախել էին, առաջինը՝ Ամարաս, երկրորդը՝ Խնձորստան:

Ճըռ-խանին զորական օժանդակություն խոստացողներից ոչ ոք չէր կատարել իր խոստումը, մինչև անգամ նրա աներ Օմար-խանը: Հարազատ-մելիքների կողմն էին անցել Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդն իր զորությամբ և մելիքի ժառանգ Աբաս-Բեկը: Բոլորովին տկարացել էին ճըռ-մելիք Ալլահվերդու զորական ուժը և թուրք թափառական ցեղերի տղամարդկային ուժերը, որոնք թեև ամբողջապես հարկատու և հպատակ էին Ղարաբաղի հինգ հարազատ-մելիքներին, սակայն ծածուկ օգնում էին ճըռ-խանին ռազմական և դրամական ուժերով, մելիքներին հայտնի և ճըռ-խանին գաղտնի հարկ վճարելով: Վերջապես, փշրված էր ճըռ-խանի զորությունը, Ղարաբաղից Պարսկաստան էին փախել և տակավին փախչում էին կոտորածներից մնացած թափառական մահմեդականները և այլևս ճըռ-կաթողիկոսը և ճըռ-մելիքը ելումուտ չէին անում Շուշի: Լրիվությամբ ուժաթափ էր ճըռ-խանը և մերթընդմերթ լսում էր Աղա-Մամատ-Շահի դեպի Ղարաբաղ արշավելու մասին:

Այդ ժամանակ հարազատ-մելիքները, որ շարունակ դիմում էին Ռուսաց կառավարությանը և հայտնում Շահի արշավանքի մասին՝ տեղեկություն էին ստացել Ռուսաստանից, թե շուտով Տփխիս է հասնելու ռուսական զորքը՝ Շահի արշավանքն արգելելու համար: Այս պատճառով ճըռ-խանը վերին աստիճանի հուսահատված էր՝ Ռուսաց և Աղա-Մամատ-Շահի սրերի մեջ տեսնելով իրեն և թափառական ցեղերի մնացորդը:

Իբրահիմ ճըռ-խանը, դաշտաբնակ թափառականներին այդ երկու սրերից ազատելու հեռատեսությամբ և Ջրաբերդի, հարավային Խաչենի, Դիզակի և Վարանդայի հայ ժողովրդին ճնշելու խորամանկությամբ, քաջերի խմբակները ջնջելու աճապարանքով, Քուր գետի աջ եզերքի թափառական ցեղերը բռնի փոխադրել տվեց Թարթառ գետի ձորը[1]:

Իր ցեղի մնացած մասը և Աղտամեցուց կեսը փոխադրել տվեց Շուշի և բնակեցրեց բերդի ստորին մասում[2], որտեղ բնավ մահմեդական չկար:

Խաչենի դաշտային մասինը տեղափոխեց Կարկառ գետակի ակունքների ձորերը[3]:

Վարանդայի և Դիզակինը տեղափոխեց և բնակեցրեց Հաքեարի գետի ձախ լանջերում[4]:

Ինչպես այս պատմությունից տեսանք, բոլորովին զսպված էին այս ցեղերը մելիքների իշխանությունից: Բայց ցավալի է տեսնել, որ սրանք 1820 թվականից մարդասպանությամբ, հափշտակությամբ և գողությամբ սարսափելի վնասներ են պատճառել ոչ միայն հայ հասարակությանը, այլ նույնիսկ Ռուսաց կառավարությանը...: Նույնպես և քեոլանիները:

Սույն թափառականները փոխադրվեցին ոչ թե կամքով, այլ ճըռ-խանի կիսով չափ թախանձանքից ու կիսով չափ բռնությունից ստիպված և ակամա զորք տվեցին նրան: Ճըռ-խանն

---

[1] Այժմ կոչվում է Քեոլանի՝ անտառաբնակ:

[2] Այդ մասում նշմարվում են Հայոց եկեղեցիների ավերակների նշանները:

[3] Բուն Կարկառինը «Խալիբալու» է կոչվում, այժմ և օժանդակինը՝ «Զարսլու»:

[4] Այժմյան անվամբ կոչվում են «Ալիկանլու» և «Չայլու»:

ասել էր, թե այդ տեղափոխությամբ նրանք ազատվում էին թե՛ մոտալուտ արշավանքների կոտորածներից, և թե՛ ունեցվածքի հափշտակությունից:

Թեև այդ ժամանակ քաջ խմբի երկու թևերը՝ Շեյթանն ու Կաքևը բացակա էին մելիքների հետ, սակայն առաջինի տեղը բռնեց Ճամալը, իսկ երկրորդինը՝ Վանին: Առաջինի անունը Պել-Ճամալը փոխեց «Հայ-մարդ», իսկ երկորդինը՝ «Ըլբաստրակ-Վանի», որ տեղական բարբառով նշանակում է նապաստակ: Հայ-մարդը ճըռ-խանի բռնությունից ստիպված՝ առերես ընդունում է մահմեդականությունը և Շուշիում խորհրդական դառնում ճըռին: Նա քաջերին իսկույն գաղտնի հայտնում էր ճըռ-խանի բոլոր ծածուկ խորհուրդները և նպատակները:

Ճըռ-խանի այս թաքուն նպատակն Ըլբաստրակի ձեռքով բոլոր ուխտապահներին հայտարարելն էր: Այդ ժամանակ Մելիք-Ջումշուդն Ավետարանոց էր վերադարձել և միանալով մելիքի ժառանգ Աբաս-բեկի և սրա հորեղբայր Ավան-բեկի հետ՝ ցիրուցան արեց Հաքեարի գետի ձախ ափերի մահմեդականներին՝ կոտորելով ու գերելով շատերին: Քեորօղլու խմբի հետ միացած Դելի-Մահրասան և Թյուլի-Արզումանը կոտորեցին Թարթառի ձորում բնակություն հաստատողներին, իսկ քաջերի խումբը՝Կարկառ գետակի ակունքներում բնակվողներին:

Թեպետև տեղափոխված մահմեդականների նոր բնակրանները պատսպարված էին մութ անտառներով, խոր ձորերով, ցից ժայռերով և շղթայաձև բլուրներով, բայց այդ տեղերը դեռ անծանոթ էին նոր բնակիչներին և քաջատեղյակ հայերին, մանավանդ՝ քաջերին:

Բոլոր կողոպտված դրամներն ուխտապահ հայերն իրենց էին հատկացնում, իսկ ոչխարները, կովերը, եզներն ու ձիերը՝ հանձնում հայ զորքին: Թալանված գորգը, կարպետը և մյուս բրդեղեններն ուղարկվում էին մելիքներին:

Իբրահիմ ճըռ-խանի լրտեսները, որոնք շրջում էին, մանավանդ, հարավային Խաչենում, հայտնում էին ճըռ-խանին,

որ պալլուճեցի և խնածախցի քաջերը կոտորում են անտառնե-
րը, բացում խմհատներ, արտավայրեր, շինում գոմեր, մարագ-
ներ, կալեր և կալապաններ: Անհրաժեշտ էր գործել գաղտնի ոչ
թե երկյուղից, այլ՝ ելնելով խոհեմությունից: Քաջերը ցերեկնե-
րը զբաղվում էին այդպիսի գործերով, իսկ գիշերները, խաբե-
լով ճըռ-խանին, ու քնացնելով նրան՝ կամաց-կամաց ոչնչաց-
նում էին Կարկառ գետակի ակունքներում նոր բնակություն
հաստատող մահմեդականներին, որոնք խիստ մոտ էին Շուշի
բերդին:

Իսկ Իբրահիմ ճըռ-խանը, հաստատ իմանալով, որ այդ
ամենն արվում էր հայ քաջերի ձեռքով և սաստիկ զբաղված լի-
նելով իր ներքին կազմակերպությամբ, չլսելու էր տալիս ամեն
ինչ:

Քանզի այդ ժամանակ 1795 թվականի մարտ ամսի վեր-
ջերն էր, որ լսվում էին Աղա-Մամատ-Շահի և Ռուսաց արշա-
վանքների մասին, և Իբրահիմ ճըռ-խանն անբացատրելի նե-
գության և տագնապի մեջ էր: Այդ երկու զորեղ թշնամիների
հետ պատերազմելու կամ դիմադրելու զորություն նա չուներ,
բեկված էր իր զինվորական ուժը, թշնամի էին բոլոր դրացի
խանները և ծայր աստիճան իրենից զզված ու հեռացած էին հայ
մելիքները: Բացի դրանից, տեղական հայ տարրը, որից նա
սարսափում էր ինչպես ներքին զորավորագույն թշնամուց,
միանալու էր կամ իր այս թշնամուն, կամ մյուս: Մեռնելու է
թե՛ ինքը և թե՛ իր խանությունը: Իբրահիմ ճըռ-խանը ճգնեց
իր հետ միաբանեցնել հարազատ-մելիքներին, որով միաբան-
վելու էր հայոց տարրը և որով ամրապնդվելու էին Ղարաբա-
ղի ներքին ցրված ուժերը՝ հավաքական միությամբ ի մի ձուլ-
վելով:

Այդ միջոցին հարազատ-մելիքներն արդեն Մելիք-Աբով
Գ-ի նախագահությամբ ժողով էին գումարել Ջրաբերդում՝ ո-
րոշելու, թե ում հետ էին միանալու. Ռուսաստանի, թե Աղա-
Մամատ-Շահի և ինչպիսի քաղաքականություն էին բռնելու
այդ միմյանց թշնամի երկու տերությունների մեջ: Երկու հա-
կառակ կարծիքներ երևան եկան: Մելիք-Մեժլումն առաջար-

կեց միանալ Աղա-Մամատ-շահի հետ, Ղարաբաղից ջնջել ճըռ-խանությունը և ճըռ-մելիքությունը և ապա միանալ Ռուսաց հետ և առանց պատերազմելու առաջնորդել Շուշի, հավելելով. «Այսպես և դյուրին ճանապարհ կլինենք բացած ռուսների համար և կիրագործենք մեր նպատակները»: Իսկ մյուս հարա-զատ-մելիքներն ընդհակառակն առարկելով՝ առաջարկեցին միանալ Իբրահիմ ճըռ-խանի հետ, որն արդեն քանիցս թա-խանձել է միաբանվել իր հետ, դիմադրել Աղա-Մամատ-Շահի զորությանը և սպասել ռուսների գալստյանը, որպեսզի չվշ-տացնեն սրանց սրտերը: Եզրակացությունն այն էր, որ Ռու-սաց կառավարությունը, քրիստոնեական լինելով, Պարսիկ կա-ռավարությունից ավելի արագությամբ կջնջի այդ ճըռ-խա-նությունը:

Հետևապես, իրենց անհաշտ թշնամի ճըռ-խանի հետ միանալով՝ Շուշի մտան Գյուլիստանի Մելիք-Աբով Գ-ն, Վա-ռանդայի Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանը և Դիզակի մելիքի ժառանգ Աբաս-բեկը: Բայց Ջրաբերդի Մելիք-Մեժլումը չհավանեց սրանց որոշումը և չմիաբանվեց ճըռ-խանի հետ: Բայց հարկ է ասել, որ այդ միաբանության մեջ կար Արղթու-նյանց Հովսեփ եպիսկոպոսի մատը, որը մելիքները թաքցրեցին Մելիք-Մեժլումից:

Այդ օրերին Գյուլիստանի ժողովրդի մեծ մասը Մելիք-Ա-բով Գ-ի հրամանով վերադարձավ Գյուլիստան, իսկ Տփխիսի կողմերում մնացած մասի վրա առօրյա իշխան կարգվեց Մելիք-Բեգլար Բ-ի որդի Փրեյտին-բեկը: Սա իր մելիք հոր մահից հետո իրավամբ պետք է իշխեր Գյուլիստանի ժողովրդի վրա, բայց քանի որ անչափահաս էր, մելիքության ղեկը հանձնվեց իր հո-րեղբայր Մելիք-Աբով Գ-ին: Կառավարության հանձնարարու-թյամբ Փրեյտին-բեկը, Մելիք-Ջումշուդը Ջրաբերդի գաղթա-կաններին անհովիվ չթողեցին:

ԺԴ.

Գնդապետ Մելիք-Հայկազյանցը խնդրեց հորս՝ գրառել այս բոլոր պատմությունները, քանի որ զմայլված էր հորս բերանացի պատմելով: Նա խնդրեց այստեղ զետեղել նաև իր ազգատոհմի պատմության համառոտագրությունը ևս, որ անմահանար «Գաղտնիք Ղարաբաղի»-ի մեջ: Մելիք-Հայկազյանցը պատմեց. «Այժմ մեր տանը գտնվում է մի ձեռագիր, որը մեր պապ Մելիք-Հայկազը գրել է տվել Մելիքսեթ անունով մի եպիսկոպոսի, և վերջինս առաջաբանում գրել է.

«Մելիք-Հայկազյանց Մելիք-Հայկազի խնդրանքով գրեցի այս պատմությունը[1] ստուգապատում Իսպահան քաղաքի, որտեղ դառը և վայրագ կյանքի արժանացանք Շահ-Աբաս Մեծի կողմից, ինչպես իսրայելցիք Ասորեստանում և Բաբելոնում: Սրանց մեջ կախեցինք սուրբ կտակարանը Տեառն Աստծո ...»: Պատմությունը ցույց է տալիս, որ մեր նախկին պապը սերված է եղել Գեղամի Սիսակ որդուց, որն իշխել է Սիսական-Սիսիան գավառի վրա: Սիսակի սերունդներից ծագել են Սիսական նախարարությունը, հետո Սյունաց նախարարությունը, և հետո Սիսական մելիքությունը, որի առաջին մելիքը Մելիք-Հայկազ Մեծն էր: Ահա այս անունից է ծագել Մելիք-Հայկազյանց տոհմանունը:

Մելիք-Հայկազն օսմանցիների բռնություններից և ծանր հարկավճարություններից ստիպված՝ թողնում է իր հայրենի Քշտազի Խնածախ գյուղը և 1586 թվականի սեպտեմբերին գաղթում Պարսկաստան: Նույն ժամանակ, միևնույն պատճառներով գաղթում են նաև Աղվանից գավառներից Բրետիս գյուղի Մելիք-Բաբկենը, Քոչիզ գյուղի Մելիք-Փաշիկը, Դիզակ գավառի Մելիք-Սուճումը, Խաչեն գավառի Ջալալյան Ջալալ-բեկն իր Հասան և Վարազ եղբորորդիներով, Հաթերք

[1] Այս պատմությունը թերևս լույս չի տեսել, կամ մեր ձեռքը չի անցել:

գյուղի Օղլան-Քեշիշն իր Ղալաբեկ եղբոր հետ, Ոսկանապատ[1] գյուղի երկու եղբայրները՝ Նազար-Բեկը և Սարուխան-բեկը, Ուտի գավառից Սուլթան-Նուխու Դավիթ յուզբաշին, Նիժ գյուղաքաղաքի Առստամ յուզբաշին, Վարդաշենի Խաչան յուզբաշին, Զեակեամ գավառի Քոչարի յուզբաշին, Պարտա քաղաքի Վաչե յուզբաշին և պատմագիր Մելիքսեթ եպիսկոպոսը:

Աղվանից սույն գավառներից ժողովրդի մի մասը, տեսնելով, որ իրենց վերջին ապավեն մելիքները, բեկերն ու հարյուրապետներն օսմանցիների անխիղճ բռնությունից խույս են տալիս, գաղթում է սրանց հետ Պարսկաստան՝ թողնելով իր ցանկալի հայրենիքը: Իսկ Զեակեամ գավառի Մելիքգատա գյուղացի Մելիքսեթ եպիսկոպոսը, որ նախ Գանձասարի միաբանն է եղել, կանխավ իմանալով այդ իշխողների Հայրենիքը թողնելու մտադրությունը, սրտաշարժ քարոզներով կամենում էր մտափոխել նրանց գաղթելուց: Բայց երբ տեսնում է, որ բազմությունը չի լսում և գաղթում է, ինքն էլ է գաղթում նրանց հետ՝ նրանց Պարսկաստանում անհովիվ չթողնեու ազգասիրությամբ: Ձեռագիրը հաճախակի եմ կարդացել, մանավանդ անգիր եմ արել նրա առաջաբանը: Ահա իր գրածը.

«Եթէ աստանօր զօրինակ առցուք մեզ զԵրեմիաս, ոչ ինչ վրիպեսցուք ի ճշմարտութենէ: Քանզի որպէս հայրենասէրն և ազգասէրն ի մարգարէս Երիմիաս նախ գուն գործեաց քարոզելով արգելուլ զմնացորդս ժողովրդեան իւրոց յիջանելոյ յերկրէն Աւետյաց յանասնապաշտ երկիրն Եգիպտոսի, ապա իբրև ետես թե ոչ լսէ ժողովուրդն և աճապարէ փախչիլ յԵգիպտոս յերեսաց աշխարհաւէր Նաբուգոդոնոսորայ արքային Բաբիլացւոց և ամայանայ հայրենիքն ի հարազատ բնակչաց իւրոցն՝ այնժամ՝

[1] Այս ազգանունները և տեղանունները հիշված են նաև Առաքել վարդապետի պատմության Դ.գլխում: Ենթադրելի է, կամ Առաքել պատմագիրը համառոտագրել է նույն ձեռագրից, կամ Մելիք-Հայկազը Առաքել պատմագրին հետևելով՝ Մելիքսեթ եպիսկոպոսին մանրամասն գրել է տվել իր ազգաբանության ծագման հետ և այս գաղթականության անցքերը:

գուն գործեաց աստուածասաստ սպառնալեօքն[1] յետս կասեցու-ցանել զժողովուրդն, զի մի հպեսցին յայն ազգ և յայն երկիր, որ մայր էր կռապաշտութեան, յորմէ ազատեալ էր Տեառն Աստուծոյ մեծամեծ սքանչելեօք ի ձեռն Մովսիսի և պատուիրեալ էր նոցա՝ զի մի՛ դառնալ անդրէն: Հուսկ ուրեմն յորժամ՝ ետես մարգարէս թե ոչ ինչ շահեցաւ՝ յայնժամ՝ և ինքն, մղեալ յանզուսպ ազգասիրութենէ՝ առ ոտս եհար զանդառնալի վճիռս Աստուծոյ և հետիոտս չոքաւ յԵգիպտոս զկնի ժողովրդեան իւրոյ, զի մի՛ մնասցե ժողովուրդն լքեալ և անհովիւ: Նոյնպէս և մեք նախ գուն գործեցաք յորդառատ բանիւք արգելուլ զժողովուրդս՝ չթողուլ զհայրենիս իւր և գաղթել յօտարութիւն, և իբրև տեսաք թէ ժողովուրդն անլուր եղև բանից մերոց և տաղակացեալ ի ծանրութենէ հարկացն աշխարհաւեր Օսմանցւոցն և աճապարէ ի Պարսկաստան՝ ապա յուշ ածաք նմա զքաջութիւնս նախնեաց մերոց, զմոգակրօն դենս Պարսից, զ բռնութիւնս ատրուշանապաշտ Յազկերտի և զնահատակութիւնս Վարդանանց, որպէս զի մի՛ թողուցուն զդրախտավայր երկիրն Հայկայ և գաղթիցեն ի նորն Եգիպտոս ի Պարսկաստան: Եւ իբրև տեսաք զի բազմութիւն ժողովրդեան մերոյ փութայր ի Պարսկաստան՝ յայնժամ հետի չոքաք և մեք զկնի նոցա ողբալով, զի մի՛ անհովիւ մնասցէ բանաւոր հօտն Սրբոյն Գրիգորի և մի՛ մատնեսցի ի ձեռս գիշատիչ գայլոց[2]»:

Հայ գաղթականները մեծ սիրով ընդունվում են Շահ-Աբաս-Մեծից և պատվասիրվելով բնակվում շահանիստ Իսպահան քաղաքում, ի նշան հարգանքի շնորհված գեղեցիկ բնակարաններում: Ինչ իրավունքներ որ ունեցել էին իրենց հայրենիքում՝ Եպիսկոպոս, մելիք, բեկ և յուզբաշի, շահական հրովարտակներով հաստատվում են Պարսկաստանում: Ամեն ոք կառավարում է իր հետ գաղթող ժողովրդին այդ իրավունքով, հավաքում գլխահարկ և մի թեթև տուրքի հետ վճարում արքունի գանձապահին, իսկ մնացածը վերապահում իրեն: Շահից իրավունք է

---

[1] Երեմիա, Գլ. ԽԲ. 15-17, Գլ. ԽԴ. 27-30:
[2] Պահելով գրաբարը՝ կամեցանք ճաշակ տալ ընթերցողներին:

տրվում հայ մելիքներին որպես անդամ մասնակցել արքունի բոլոր խորհուրդներին, ժողովներին և դատերին: Մի առանձին հրովարտակով բոլոր հայ գաղթականների վրա հովիվ է կարգվում Մելիքսեթ եպիսկոպոսը: Սա լիազոր իրավունք է ստանում ազատորեն կատարել Հայոց եկեղեցական արարողությունները, կրոնական ծեսերը և սովորական հանդեսները: Շահի առանձին շրջաբերական հրովարտակները սարսափելի մահ են սպառնում քրիստոնեական արարողությունները ծաղրողներին և հայերին մազ անգամ վնասողներին:

Պատմագիր Մելքիսեթ եպիսկոպոսին, իր պատմությունն ավարտելուց հետո, հաջողում է հայրենիք վերադարձնել Աղվանա երկրից բոլոր գաղթածներին, բացի մեր պապ Մելիք-Հայկազնից:

Բայց Շահ-Աբասն այս բարությունն արել է ոչ թե առաքելություն գործելու նպատակով, այլ, այսպիսի հոչակավոր բարերարությամբ, գթասիրտ հյուրընկալությամբ, պատվասեր մեծարանքով և կրոնական ազատություն տալով, դրացի երկրների ազգերը դեպի իրեն քաշելու, թշնամիների երկրները դատարկելու և իր երկրի բնակչությունը բազմացնելու հեռատես քաղաքականությամբ:

Հետզհետե Պարսկաստան են լցվում Հրեաստանից հրեաներ, Ասորեստանից, Հայաստանից, Վրաստանից, Աղվանից շատ քրիստոնյաներ, որոնցից շատերը նեղված էին օսմանցիներից, Ջալալիներից և Պարսկաստան մղող պարսիկ գոռ սրերից, որոնք ապաստարան են գտնում Իսպահան քաղաքում՝ շլացած Շահի նենգ բարեսրտությամբ և կեղծ հյուրասիրությամբ: Իսպահանը լցվում է գաղթական ժողովրդի հոծ բազմությամբ:

Հայ ժողովուրդը թե՛ Պարսկաստան տեղափոխվելիս, և թե՛ Իսպահանում մեծամեծ զոհեր է տալիս: Կրոնամոլ մոլլաներն աշխատում են թե՛ զրպարտությամբ և թե՛ կաշառքով շատ հայեր պարսկացնել: Սակայն Օղլան-Քեշիշը մեծ դեր է խաղում, վարպետությամբ և ուժով կրոնամոլ մոլլաների և անիրավ դատավորների ճանկերից ազատում է շատ հայերի:

Ահա այս է համառոտ բովանդակությունն այն ձեռագիր պատմության, որի անունն է «Հայերի գաղթականությունը Պարսկաստանում»:

Շահ-Աբաս Մեծի մահից հետո գահակալում է Շահ-Աբաս Բ-ն: Սա, տեսնելով, որ Իսպահանը բավական չէ այդ ահագին գաղթականներին Իսպահանի գետի մյուս ափում պահելու, զետեղում է քրիստոնյաներին և հրեաներին առանձին-առանձին (1655), քաղաքներից գաղթածներին քաղաքատեղի տալով, իսկ գյուղերից գաղթածներին՝ գյուղատեղի:

Հայերը Շահի հրամանով տեղափոխվում են մի այլ տեղ, ուր և կառուցում են քաղաք: Ամեն մի քաղաքից գաղթած ժողովուրդ կամենում էր իր հայրենի քաղաքի անվամբ անվանել այս նոր քաղաքը, որի մասին ծագում է երկար վիճաբանություն: Վերջապես, Ջուղայից գաղթած հայերի թախանձանքներին զիջելով՝ «Նոր Ջուղա» են դրոշմում նոր քաղաքի անունը(1659):

Իսկ մեր պապ Մելիք-Հայկազը, խիստ սիրելի լինելով շահերին՝ մնում է Իսպահան քաղաքում: Մեծ Շահ-Աբասի օրից մեծամեծ և բարձր պաշտոնյաներ են վարել Պարսից արքունիքում, ինչպես մեր Մելիք պապը, նույնպես էլ նրա բոլոր հետնորդները, որոնք բարի անուն են թողել ինչպես Հայոց սրտերում, այնպես էլ արքունիքի արձանագրությունների մեջ: Պատճառը անմնացորդ հավատարմությունն է, որ հաջորդող շահերը բարձր պաշտոնների մեջ ընդունում են մեր տոհմի զավակներին, որոնք առհասարակ կոչվում են Մելիք-Հայկազյանց ազգանվամբ:

Ես վեց տարի է, որ ներկա Շահի մոտ ծառայության մեջ եմ: Թեև շատ արյունահեղ պատերազմների մեջ եմ մտել, հաղթել, քաջի անուն հանել և գնդապետի աստիճանի բարձրացել, սակայն անկեղծորեն խոստովանում եմ, որ ձեր քաջերից շատ ու շատ ցածր եմ թե՛ փորձառությամբ, թե՛ քաջասրտությամբ և թե՛ ուժով:

Ահավասիկ, պատմեցի մեր նախնիների և մեր պատմությունը, որը խնդրում եմ զետեղեցեք ձեր պատմության մեջ՝ ի գիտություն մեր ապագա սերունդների»:

Մազի-կամրջից ալյուրավորները բաժանվեցին դեպի Շուշի, իսկ սարվազները քաջերի հետ՝ դեպի բանակատեղի: Հայրս շատ ջանաց ինձ Օշափ-Բաղդասարի հետ Շուշի ուղարկել, իսկ ինքն ապահով գնալ Մելիք-Մեժլումի մոտ, բայց անկարելի եղավ: «Հա՛յր իմ, ես կյանքումս շահ տեսած չեմ, ցանկանում եմ տեսնել, թե շահն ինչպիսի մարդ է».-քանիցս կրկնեցի այս խոսքերը՝ թախանձելով, որ հայրս ինձ էս տաներ իր հետ: Այս աղաչական խոսքի պատճառով ամենքը ծիծաղեցին ինձ վրա:

Հորս մի ակնարկի նշանով, իմ մորեղբայր Օշափ-Բաղդասարն ինձ առավ իր ձիու գավակը և արշավելով ինձ հեռացրեց հորից՝ չնայելով իմ լաց ու աղաղակին: Գնդապետը սրնթաց քշելով իր ձին՝ առավ ինձ իր ձիու գավակին և հետ դարձավ դեպի սարվազները՝ չլսելով անգամ հորս արգելիչ խոսքերը: Հայրս մի վերջին ճիգ էս թափեց ինձ հետ դարձնել, բայց գնդապետն առարկեց. «Եթե Շահը լսի, որ այս Ապրես տղան փափագել է իրեն տեսնել և ես չեմ տարել՝ ոչ միայն կհանդիմանի ինձ, այլ կպատժի, մանավանդ, երբ լսի որ ցանկացողը եղել է Աբրահամ Բեկնազարյանցի որդին»: Դրանից հետո հայրս ստիպված թողեց ինձ՝ զորքի հետ գնալ բանակատեղի:

Բանակատեղին գտնվում էր Շուշիի արևելահարավ մի սարահարթի վրա, որը Շուշիի ստորին մասի մակերևույթից բավականին բարձր էր և որի եզերքով, բերանները բերդի կողմը շարված էին տասնհինգ հատ միջակ թնդանոթներ, իսկ հակառակ կողմում կանգնած էին զորքի տաղավարները: Կային և ութսուն առանձնացած տաղավարներ, որոնց մեջտեղում, առյուծադրոշմ դրոշի տակ փողփողում էր Շահի գունավոր տաղավարը: Վրաններից քառասունը պատկանում էր Մելիք-Մեժլումին, քսանը՝ Ջավատ-խանին, իսկ մնացածը՝ Շահի խոհանոցը, սպասավորանոցը և թիկնապահանոցն էին:

Գնդապետի հրամանով հնչեցին վերադարձի շեփորները, իսկ բանակի կողմից՝ դիմավորող փողերը, ինչը հնուց սովորություն էր Պարսկաստանում: Հայ քաջ խմբին, Ջավատ-Խանին և Մելիք-Մեժլումին դիմավորեց Շահից ուղարկված մի պատվա-

վոր անձ: Մելիք-Մեժլումը Շահի դիմաց կանգնեցրեց իր քաջերին, մի քանի խոսքով անուն առ անուն գովաբանեց սրանց անձնվեր ծառայությունները, քաջագործությունները և հավատարմությունները, մասնավորապես՝ հորս ձիրքերը: «Պարսից գահի համար,- պատասխանեց Շահը,- անմոռանալի են հայերի կատարած նախկին ծառայությունները: Հայ քաջերի քաջը մեծ նշանակություն ունի այժմ: Պարսից Գահակալն իր նախորդներից ավելի լավ գիտի վարձատրել իր հպատակներին, մանավանդ, հավատարիմ հայ ժողովրդին, մասնավորապես Մելիք-Մեժլումի քաջերին, որոնց աջակցությունն արդեն վայելում ենք: Պարսից արքունիքի արձանագրությունների հարուստ էջերը գրավող հայ ազգի հավատարմությունը դարեդար փայլում է ինչպես խասի ու ալմաստի նման: Անվարձ չեն մնալու և ձեր քաջությունն ու ծառայությունները»:

Խոնարհություն անելուց հետո, հայ քաջագնդի մեջ ինձ պատահմամբ տեսավ Շահը և գնդապետից իմացավ, որ ես Աբրահամ Բեկնազարյանցի որդին եմ և իրեն տեսնելու փափագով եմ այստեղ եկել: Իսկույն հետ կանչել տվեց հորս և մելիքին, ինձ գրկելով ասաց. «Սիրուն և անմեղ փոքրիկ, դու այդ մանկական հասակում ցանկացել ես Շահին տեսնել: Աղա-Մամատ-խանն այնքան ապաշնորհ չի, որ քո այդ ազնիվ փափագն ըստ արժանվույն գնահատել չիմանա: Դու այսուհետև Աղա-Մամատ-խանի հոգեկիր որդին ես, բայց այն պայմանով, որ դու անխախտ պահես քո պապենական հավատը, լեզուն»: Հետո իմ Ապրես անունը փոխեց ու անվանեց «Ալլահվերդի», իբր թե Աստված պարգևեց իրեն մի որդի Աստվածատուր անունով: Ապա պատվիրեց իր դերձակին կարել իմ համար վայելուչ հագուստներ: Ինձ համար ամենօրյա ուտելիք նշանակել տվեց և գանձարանից ամսական տասը թուման թոշակ, ապա ինձ հանձնեց մելիքի խնամքի հովանավորությանը:

Մելիք-Մեժլումը, որ գիտեր գեղեցիկ խոսել ու գրել պարսկերեն, թրքերեն և արաբերեն, հորս կողմից պարսկերեն լեզվով Շահին խորին շնորհակալություն և անմոռաց երախտագիտություն հայտնեց՝ ինձ ցույց տված բարեսրտության համար:

Շահը մելիքից պահանջել և ստացել էր Իբրահիմ ճըռ-խանի բոլոր չարագործությունների հաշիվը, նույնպես էլ Ծակ-Քարի պատերազմների հաշիվը: Շահն այդ անհերքելի փաստերով բոլորովին համոզվեց և ակներև տեսավ, թե ճըռ-խանը որքան թշնամի է եղել Պարսից կառավարությանը և Փոքր Սյունյաց հարազատ-մելիքությանը: Որքան Շահը վշտացավ իր զորքի կոտորվելով, ոչ պակաս ուրախացավ ճըռ-խանի նենգ կամավորների ջարդվելով և հայ քաջերի հրաշագործությամբ: Գահակալը զայրացած հոխորտաց. «Ջառչի-Փանահի քոսոտ տղան այն աստիճան հանդգնեց, մինչև անգամ Աղա-Մամատ-խանին նենգությամբ գործիք արեց և կոտորել տվեց շահական զորքը: Այլևս այդ նենգ արարածի չարագործություններն ապացուցող վկաների կարիքը չկա, քանի որ այդ ամենի վկան Շահն է, մենք ենք: Երդվում եմ մեծ Իմամ Ալու սուրբ անվամբ և Պարսից բոլոր շահերի գերեզմաններով՝ կոտորել Իբրահիմին ու նրա ողջ արու և էգ գերդաստանը, նրա կուսակից բոլոր խաբեբաներին և նրանց գլուխները թնդանոթի գնդակների պես շարել տալ Շուշու բերդի ավագ դռան գլխին, իսկ այս ամենի գլխին՝ Իբրահիմ ճըռ-խանի գլուխը»:

Մելիք-Մեժլումը չափազանց ուրախացավ Շահի այս անսուտ երդմամբ: Հայրս առանձին հուշեց մելիքին այն բոլոր պատմական և անհերքելի փաստերը, որոնք մեջ էր բերել Կոռուտի ժողովում և ավելացրեց. «Մելի՛ք, հիշեցեք Ռուսաց Գրիգոր Ալեքսանդրովիչ մեծ իշխանի երդմնավոր հրամանը, որ 1783 թվականին արձակեց՝ իսպառ ջնջել ճըռ-խանությունը Փոքր Սյունիքից և զորացնել հայկական իշխանությունը, հարազատ-մելիքությունը, իր անկախ բոլոր իրավունքներով: Մեծամեծ և քաղաքագետ մարդիկ, հաճախակի շողոքորթելով, անթերի խոստումներ տալով, անսուտ երդումներով հավատացնելով և շքանշաններ բաշխելով՝ խաբում և գործիք են անում մեզ նման անքաղաքագետ արարածներին: Իսկ երբ կատարում են իրենց գործերը՝ այնուհետև քամին տանում է երդում, խոստում և հավատ: Անթերի հավատը պարտադրում է միայն անթերի զղջում և անթերի քաղաքական ցավ: Այսուամենայնիվ, հարկ է առանց հավատալու արթուն լինել և զգաստությամբ օգուտ քա-

ղել ժամանակի բերածից և ուրախանալ այն ժամանակ, երբ կհաջողվեն նպատակները»:

Շահը Մելիք-Մեժլումին չնորհել էր հետևյալ արտոնությունները և պայմանները, որոնց պայմանագիրը վավերացվել էր շահական կնիքով և իսկական ստորագրությամբ:

«Ա. Մելիք-Մեժլումն ամեն ժամանակ, առանց արգելքի իրավունք ունի ազատ ելումուտ գործել Շահի մոտ:

Բ. Ինչ խնդիր առաջարկելու լինի՝ Շահի կողմից կկատարվի անպատճառ:

Գ. Շահական գանձարանը հանձնված է մելիքին՝ ըստ պահանջման հարկի ծախսելու կարիքների համար, որքան Շահը կմնա Անդրկովկասում:

Դ. Քանի Շահը կլինի այս նահանգում, պետք է գործի մելիքի և Ջավատ-խանի խորհրդակցությամբ:

Ե. Շահը կզգուշանա Սյունաց հայ ժողովրդին վնաս տալուց թե՛ իր, և թե՛ ուրիշ արշավանքներում:

Զ. Շահը պարտավորված է ոչնչացնել ճըռ-խանությունը և ճըռ-մելիքությունը Փոքր Սյունիքից և վերահաստատել հարազատ-մելիքությունը իր դարավոր անկախ իրավունքներով, ինչպես արել էր Նադիր-Շահը 1736 թվականին:

Է. Փոքր Սյունյաց հարազատ-մելիքները պարտավորված կլինեն ամեն տարի Պարսից արքունիքի գանձարան վճարել այն գումարը, որը սահմանված է Նադիր-Շահից:

Ը. Ճըռերին մահվամբ պատժելու ժամանակ, հայ հարազատ-իշխաններից ոչ ոք չի պատժվի նրանց հետ, իբրև ճըռ-խանի կուսակից նկատվելով, որոնք ակամայից էին միացած և ոչ կամովին:

Թ. Մելիք-Աբովն ու Մելիք-Ջումշուդը կընդունվեն ի շարս հարազատ-մելիքների, շուտով ազատվելու էր Մելիք-Բախտամը, և Ջալալյան ազգից մի մելիք հաստատվելու էր Խաչենի վրա:

Ժ. Շուտով կրկին Պարսկաստան կքշեն այն մահմեդական թափառականներին, որոնք Ղարաբաղ են բերվել Փանահ և Իբրահիմ ճըռ-խաներից»:

ԺԵ.

Արշալույսի դեմ ալյուրավորները միացան զորքին:

Հայ զորքը քնում էր բացօթյա տեղերում և ոչ թե վրաններում:

Մելիք-Մեժլումն այցելեց հայ քաջերին սույն սրտաշարժ խոսքերով. «Խնածախցի և Պալլուճեցի քաջեր, փորձառու և հավատարիմ զորականներս. Շնորհակալություն ձեզ, որ մելիքների բացակայության ժամանակ տղամարդորեն պաշտպանել եք մեր Հայրենիքը:

Շնորհակալություն, որ ընդունել եք մեր հրավերը և եկել: Ձեր արյունը կենդանարար ցող է Հայրենյաց համար և ձեր քաջությունը՝ անառիկ շրջապարիսպ մեր եկեղեցու և կրոնի համար: Ձեր գործունեությունը կյանք է հայ հարազատ-իշխանության և ազգի համար ու ձեր վերքերով կբուժվեն Հայրենյաց վերքերը: Ժամանակը հղի է, շուտով ծնվելու է ձեր փառքի հաղթանակը, որով կպսակվեն դյուցազնական քաջագործությունները»: Իսկ Պել-Ճամալը պատասխանեց. «Մելի՛ք, մեր երեխաներն առանց փողի մնացին տանը, սատկի՛ առանց փողի մահվամբ այլոց կյանք տալը...»:

Մելիքը սովորականից առատ ամսական թոշակ բաժանեց իր զորքին ու բոլոր քաջերին, իսկ Պել-Ճամալին՝ առատագույն և հրամայեց ուտեստ պատրաստել բանակի համար: «Մելի՛ք, եթե ամեն շաբաթ այսքան դրամ տալու լինեք՝ Շահի զորքերն անգամ կջնջեք».-ասաց Պել-Ճամալը և մելիքի քսակակիր սպասավորի վրա դրոշմեց «Խազնա-Մուքի» անունը, որ նշանակում է Գանձ-Միքայել:

Հորս կարգադրությամբ Պել-Ճամալը երեք հարյուր հայ և թուրք զինվորներով գնաց՝ պաշար փոխադրելու, իսկ Քեանդ-խուտա-Խաչատուրը և Ալփեթյունը գաղտնի բերդը մտան գիշերով, յուրաքանչյուր քաջի բաժին թոշակը հանձնեցին իրենց ընտանիքներին և հետ դարձան:

Պատերազմը տակավին սկսված չէր:

Հայրս Շահի դիվանից բավականին թուղթ բերել տվեց և ասաց ինձ. «Սիրելի՛ որդյակ իմ Արսեն, ես ցանկանում եմ, որ դու լինես «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը, որպեսզի քո անունը ևս անմահանա հայ պատմագիրների շարքում՝ հայ քաջերի հիշատակների հետ միասին: Դու բավականին արագ ես գրում. հոգ չէ, որ գրածներումդ սխալներ կլինեն, սրբագրելը հեշտ է: Ասածներս կգրես և հետզհետե կատարվող եղելությունները ևս կավելացնես ժամանակագրական կարգով, և կդառնա մի կարևոր պատմություն, քանզի մեր Հայրենիքում այժմ պատմագիր չկա: Այս պատմությունը գրվեց գնդապետ Հովհաննես Մելիք-Հայկազյանցի խնդրանքով՝ սկսվեց Ծակ-Քարի պատերազմից, նույն պատվելի գնդապետի առաջարկությամբ, այսուամենայնիվ, գրքիս Ա. Հատորի Զ. գլխից սկսած մինչև ԺԳ. Գլուխը (և ԻԲ. գլխից մինչև ԻԸ. Գլուխը) հորս ծոցի ձեռագիր պատմության հետ զգուշությամբ համեմատվելով գրվեցին, որպեսզի ճիշտ լինեին: Հայրս իր ձեռագիր պատմության առաջին մասը (այն է՝ գրքիս ԻԲ-ԻԸ գլուխները) ընդօրինակել էր Ներսես կաթողիկոսի մոտ Գանձասարում եղած ձեռագիր պատմություններից, իսկ վերջին մասը(Զ-ԺԳ) հեղինակել էր՝ ինքը՝ լինելով ականատես»:

Մի քանի օրում անընդհատ գրեցի հորս ասածները, երբ հասա այս տեղը՝ հայրս գրել տվեց հետևյալ նշանաբանը և սրա ընդօրինակությունը զետեղել տվեց ձեռագրիս ճակատում. «Հայաստանի՛ զավակներ, ինչ որ մենք մեր աչքով տեսանք և ականջներով լսեցինք ականատես անձանցից, գրեցինք ձեզ համար, որպեսզի ձեր նախնյաց քաջագործությունները կարդալով՝ խրախուսվեք և նրանց օրինակին հետևող լինեք, դուք ևս պաշտպանեք ձեզ հանձնված Հայ-Ազգը, Հայ-Եկեղեցին... Ապրես Բեկնազարյանց»:

Կազմվեց մի խորհուրդ Շահի նախագահությամբ, ուր ներկա էին և Մելիք-Մեժլումն ու Ջավատ-խանը: Որոշվեց.

Առաջին. հնազանդության հրավիրել ճրո-խանին և սպասել մինչև տասն օր:

Երկրորդ. ամեն կողմից անմիջապես խզել բերդի հաղորդակցությունը գավառների հետ:

Երրորդ. եթե մինչև տասն օր հնազանդության նշույլ չերևա՝ գնդակոծել բերդը:

Շահի կողմից երկու պատգամավոր ամեն օր երթևեկում էին Շուշի: Պատգամավորներից մեկը գնդապետ Մելիք-Հայկազյանցն էր, որ թե պարսկերեն լավ գիտեր և թե թուրքերեն, իսկ մյուսը Շահի երկրորդ սենեկապետն էր, որ գիտեր միայն պարսկերեն, բայց խոհեմ և խաղաղասեր անձ էր: Պատգամավորները Շահի այս պատգամը տանում, միշտ դատարկ ետ էին դառնում: «Ամբողջ Իրանը խորին հնազանդությամբ ողջունում է Պարսկաստանի գահակալ Աղա-Մամատ-Շահին, որի մարդասեր հովանավորության ներքո իր բոլոր ստորադրյալները վայելում են խաղաղ կյանք, ապրուստի ապահովություն և չրջակա թշնամիներից ազատություն: Ղարաբաղը, որ Պարսից հովանավորության տակ մի գավառ է, որի գավառապետ մելիքները հաստատվում են Պարսից Շահությունից, պարտավոր էր իր Գահակալին ցույց տալ սեր և հնազանդություն և ոչ թե ատելություն և ապստամբություն: Արդեն ամբողջ Գանձակն ու Ղարաբաղի կեսը Ջավատ-խանին և Մելիք-Մեժլումին քաղաքավարի հնազանդությամբ ցույց տվեցին իրենց սերն ու հարգանքը և այժմ վայելում են մեր փոխադարձ բարեկամությունը: Միայն Շուշին անկարող կլինի իր ձեռնարկած ապստամբությունից և անհնազանդությունից օգուտ քաղել: Եթե Շուշին կամենում է ապրել, թող իր կյանքը որոնի կատարյալ հպատակության մեջ»:

Սակայն անխախտ համառության մեջ մնացին ճրռ-խանը և նրան հարող հարազատ և ճրռ-մելիքները: Դադարեցվեցին պատգամավորների երթևեկությունները, բոլորովին խզվեցին բերդի հաղորդակցությունները գավառների հետ, սաստկացավ երկարատև պաշարումը և բանակն անշարժ մնաց իր տեղում:

Սակայն պալլուճեցի և խնածախցի հայ քաջերի ծածուկ հարաբերությունները երբեք խզված չէին բերդի հետ, այլ հինգ-հինգ, վեց-վեց տղամարդ բերդի հարավային մի ծանոթ կիրճով, ամեն գիշեր ելումուտ էին անում Շուշի, գաղտնի հոգում իրենց

ընտանիքների կարիքները, լրտեսում բերդի անցուդարձը և պատմում հորս: Հարկ չկա ասել, թե սրանց հետ երթևեկում էր Շեյթան-Թյունին: Սրանք հայտնում էին, որ բերդի հասարակությունը խիստ նեղվում էր ջրի պակասության պատճառով[1]: Ջրհորները սակավ էին, իսկ բազմությունը՝ մեծ: Ճրո-խանը չափազանց վշտացած էր ոչ միայն իր երեք հազարանոց կամավոր զորքի կոտորվելու համար, այլ իր գաղտնի դավադրության երևան գալու համար: Բայց Մելիք-Աբովի և Մելիք-Ջումշուդի խորհրդով քահանաները, թաղապետները, քեանդխուտաները խնամքով հոգում էին ժողովրդի կարիքները, մանավանդ, քաջերի ընտանիքների, որպեսզի ներքին խռովություն չծագեր: Պատրաստում էին վառոդ և գնդակ:

Հագած պարսկաձև նոր հագուստ, ներկայացա Շահին և ինչպես կանխավ ինձ պատվիրել էր հայրս, համբուրեցի իմ բարերար Գահակալի ձեռքը: Շահն ինձ հանձնեց իր մոլլային՝ պատվիրելով, որ որքան կարելի է շուտ ուսուցաներ ինձ գրել, կարդալ և խոսել պարսկերեն: Ես սկսեցի եռանդով սովորել այդ լեզվով կարդալը, գրելը և հետզհետե խոսելը:

Պել-Ճամալի զորագունդն ամառանոցներից բանակ փոխադրեց քսան հազար ոչխար, ութ հազար այծ, տաս հազար արջառ, յոթ հազար երինջ, հինգ հազար եզ և ութ հազար ձի: Այս զորագունդը Շահի հրամանով կոտորել էր ամառանոցում վեց հազար թուրքի՝ ճրո-խանի դավաճանությունը պատժելու համար: Վարանդայի գյուղերից նույնպես փոխադրում էին պատրաստի հաց և ուտելիքներ: Քեօրօղլին ևս ուղարկվել էր Շահի և Մելիքի համար որսալու եղջերու, փասյան, կաքավ և նույն թափառականներից հափշտակած սուրբ կենդանիներ Ղիրղի-Պուղու[2] ձեռքով:

---

[1] Այն ժամանակ բերդում հոսող ջուր չի եղել, բայց այժմ դրսից բերված աղբյուրներ կան:

[2] Ղիրղի նշանակում է բազե: Այս մականունը թերևս առնված է Պողոսի արագաշարժությունից: Մինչև հիմա գավառներում գործ է ածվում այս ոճը.«Ղիրղու նման հասավ, հետ դառավ». Այսինքն բազեի նման հասավ և հետ դարձավ:

Հարկ չկա գրել, որ Շահի զորքերն անգամ խորոված էին ուտում հաճախ, ինչը երբեք չէին տեսել:

Շուշին հիմնված է չորս կողմերից առանձնացած մի բարձրադույն սարահարթի վրա: Ամրոցն արևմտյան կողմի լեռներից անջրպետված է մի լայնատարած և անդնդախոր ձորով, որի միջով հոսում է բուն Կարկառ գետակը և բաժանում է Խաչենը Վարանդայից, հարավային լեռներից անջատված է բարձրադիր ապառաժներով և նույնպես լայնատարած ձորով, արևելյան կողմից բաժանված է բանակատեղից մի նեղ, խորնագունդ ձորով, որի միջով սահում է Կարկառ գետակի օժանդակը և միանում բուն Կարկառին Մազի-կամրջի տակով, իսկ հյուսիսային կողմից, սարահարթի գառիվայրից սկսած ամրացած է բրգաշատ, թանձր և բարձրադույն պարսպով: Շուշու մակերևույթը զգալի ձևով թեքված է դեպի արևելյան հյուսիս և իր երկայնության դիրքով ունի երեք ձորակ և վեց լանջ, որոնց վրա կառուցված են տները: Շուշին կարելի է երեք մասի բաժանել՝ ստորին, միջին և վերին: Ստորին մասի կեսում բնակվում էին մի քանի մահմեդական և հայ բնակիչներ, միջին մասում՝ միայն հայեր, իսկ վերին մասը՝ բոլորովին անմարդաբնակ էր:

Ահա այսպիսի մի սարսափելի, բնությունաստեղծ և անառիկ ամրության հետ գործ ունեին Շահը, Մելիքն ու Ջավատխանը:

Խորհուրդ արվեց, մի վերջին փորձ ևս անելով՝ վերստին դեսպաններ ուղարկվեցին և երբ այս ձեռնարկը ևս ապարդյուն անցավ, հունիսի տասնհինգից սկսած երեսուն օր ռմբակոծվեց Շուշին: Սոսկալի՜ տեսարան: Երբ միանվագ կրակում էին թնդանոթները, ցոլացող կայծակնաշղթա էր առաջանում: Միաձայն պայթյունից սոսկալի շառաչմամբ պատռվում էին խտացած օդի ծալքերը, սարսափելի որոտմամբ դղրդում էր սար ու ձոր, և ալեկոծված օդի ճնշումից սարսռում էր բանակատեղին:

Ավերակ դարձավ բերդի ստորին մասը, հիմնահատակ կործանվեց ճըռ-խանի տունը, բայց բերդը բնավ չպատասխանեց և ոչ մի անգամ գնդակ չարձակեց: Բնության այդ հրաշալի ձեռակերտը լռելյայն պատերազմում էր պաշարողների կող-

մից, որով պաշարյալներն ավելի հաստավեցին իրենց համառու-թյան մեջ:

ԺԶ.

Դադարեցվեց անօգուտ ռմբակոծությունը:

Շահը խիստ տրտում և հուսահատ էր, գարնան բոլոր զվարճություններն անբավական էին այդ տրտմությունը և հու-սահատությունը փարատելու:

Շուտով կազմվեց մի զորապետական խորհուրդ:

Շահն ասաց. «Փոխանակ այդ անպիտան ճըռերի հետ կռ-վելու՝ ավելի լավ է ուղղակի դրանց պաշտպանող բնության հետ կռվել: Եթե մեր ութսուն հազարանոց զորքից ամեն մեկն օրա-կան տասը քար ձգեր, բերդը բանակատեղիցս անջրպետող ձո-ը կլցվի և ոտքով Շուշի կմտնենք: Մենք Աստծով նվաճեցինք ամբողջ Իրանը, փշրեցինք բոլոր ճըռերի քթերը և ճըռությունը, հաղթական անուն ժառանգեցինք Ասիայում, Եվրոպայում և Աֆրիկայում: Բայց այժմ մի ճըռից հաղթվելը մեծ անպատվու-թյուն է: Եթե մենք հաղթված լինեինք մեզանից զորեղ կայսրից և թագավորից, այսքան չէինք ցավի»:

Մելիք-Մեժլում.- «Այս լեռան ձորը փոխադրել տալու խորհուրդը հուսահատական է, այս միջոցը ոչ միայն կհափշտա-կի մեզանից մեր թանկագին ժամանակը, այլև ճըռերին կպատ-ճառի ամենամեծ ուրախություն: Շուշին չի կարող երկար ա-ռանց գրավելու մնալ, քանզի ո՛չ պաշար ունի և ո՛չ էլ ջուր: Մի փոքր համբերություն ևս, այն ինքնին անձնատուր կլինի»:

Ջավատ-խան.- «Շուշին չի կարող երկարատև առանց գրավելու մնալ, որը պաշարված է այսպիսի դիրքով: Ո՛չ ձորը լցնելու և ո՛չ էլ զուր վառոդ ու գնդակ վատնելու հարկ կա: Բերդում ո՛չ մի ամսվա հաց կա և ո՛չ ջուր:

Բերդը պաշարումով կգրավվի շուտով»:

Աբրահամ Բեկնազարյանց.- «Շուշին ո՛չ պաշարմամբ կգ-րավվի, ո՛չ թնդանոթաձգությամբ, ո՛չ սրով և ո՛չ համբերու-թյամբ, այլ ներքուստ»:

Շահ.- «Բոլորովին անհավատալի՛ բան»:

Բեկնազարյանց.- «Մենք շատ անգամ գիշերով Շուշի ենք մտել: Կարող ենք ժամադիր լինել Շահին, որ Մելիք-Մեժլումի և Ջավատ-խանի հետ հինգ հազար զորքով որոշյալ ժամում Շուշիի բերդի ավագ դռան դրսում կլինի: Քաջերովս գիշերով գաղտնի կմտնեմ Շուշի, դուռը ներսից կբանանք և Շահին կհանձնենք Շուշին լրիվությամբ: Ահա այս է ներքուստ գրավումը:

Բայց, որովհետև նախորդ պարսիկ խանները կամ ճըռ-շահերն իրենց սուտ երդումներով, խոստումներով և սուտ պատվով ցամաքեցրել են մեր հավատը, հետևապես և ներկա Շահը պետք է, որ բարեհաճի ավելացնել Մելիք-Մեժլումին տված պայմանների վրա հետևյալ հոդվածները՝ վավերացնելով շահական կնիքով.

ԺԱ. Արքունի հրովարտակներով վերստին վավերացնելով՝ հաստատել Արցախի ողջ ժողովրդին հարազատ-մելիքների վրա, ինչպես եղել են դարավոր ժամանակներից:

ԺԲ. Ճըռ-մելիքությունը և ճըռ-խանությունը խսպառ ջնջելուց հետո՝ այլևս Ղարաբաղում չհաստատել ո՛չ մահմեդական խան և ո՛չ հայ կամ թուրք մելիք, բացի հինգ հարազատ-մելիքներից:

ԺԳ. Արքունի հրովարտակով և կնիքով հաստատել վանքապետական հողերը վանքերի վրա, ինչպես նաև կալվածքները և հանքերը, որոնք հաստատված էին մինչև հիմա բոլոր շահերից:

ԺԴ. Մի հատուկ հրովարտակով շտապ ազատել Մելիք-Բախտամին, վերստին ազատություն տալ և Հայոց եկեղեցու ծոցը վերադարձնել Մելիք-Ավանյաններին, որոնք Իբրահիմ ճըռ-խանի բռնությունից ընդունել էին մահմեդականություն:

ԺԵ. Որ Շահի կողմից խստիվ պատվիրվի Երասխի աջ ափերի խաներին, որպեսզի զսպեն նրանք իրենց հպատակներին ավազակությամբ Ղարաբաղ արշավելուց:

ԺԶ. Հաղթության վերջում Ղարաբաղից կրկին Պարսկաստան փոխադրել տալ բոլոր մահմեդական ցեղերին, որոնք Փա-

նահ և Իբրահիմ ճրո-խանների թելադրանքով Ղարաբաղ էին եկել և մեր «Արցախ» հայրենիքի անունը չկարողանալով արտասանել՝ «Ղարաբաղ»[1] էին կոչել: Սրանք թեև հարկատու և հպատակ են հարազատ-մելիքներին՝ այնուամենայնիվ ավազակաբարո են և անուղղելի»:

Շահը չափազանց գոհ մնաց հորս ճշմարտախոսությունից և վերջնականապես համոզվեց, որ պետք է գրավել ներքուստ, այլ ոչ թե՝ արտաքուստ:

Գրվեցին հրովարտակները և պայմանաթուղթը, վավերացվեցին շահական կնիքով ու ստորագրությամբ և հանձնվեցին Մելիք-Մեժլումին: Ապա որոշվեց Շուշին թողնել առանց գրավելու մինչև Կաքև-Զաքու վերադարձը, ով ուղարկված էր Մելիք-Աբովյան Փրեյտուն բեկի մոտ՝ Տփխիս, մի ստույգ տեղեկություն բերելու ռուսների խոստացած օժանդակ զորքի արշավանքի մասին: Կաքև-Զաքին սպասվում էր ժամ առ ժամ:

Շահը, որ հաճախ լսած էր հորս հավատարմության և անձնվեր ծառայության մասին, ցանկացավ մի առյուծադրոշմ շքանշան տալ՝ որպես վարձատրություն Ծակ-Քարի քաջության և Շուշիում անելիք ծառայության: Բայց հայրս քաղաքավարությամբ մերժեց՝ պատճառաբանելով, թե պատվանշանը վերաբերվելու է միայն իր անձին: Իսկ, երբ Շահը կատարի իր խոստումները, այն ժամանակ Արցախի յուրաքանչյուր անհատի սրտում կախած կլինի երախտագիտության շատ շքանշաններ:

Իր ստանձնած գործը գլուխ հանելու համար, հայրս իր մի քանի ընկերների հետ երկու անգամ գիշերները գաղտնի Շուշի գնաց:

---

[1] Միևնույն իմաստն ունեն Արցախ և Ղարաբաղ բառերը: Արցախ անունը ծագել է Սար-ցախ (լեռնոտ և անտառոտ) դիրքից: Բայց հետզհետե «ա» տառը գեղչվելով՝ կոչվել է «Արցախ»: Ղարաբաղ (Սև -այգի) անունը ծագել է Քուր գետի աջ եզերքի լայնատարած անտառից, որը այգի կարծելով՝ նորեկ մահմեդականները զարմացմամբ կոչել են «Ղարա-բա՛ղ»: Վերջին անունը նոր է, մինչդեռ առաջինը շատ հին է:

ԺԷ.

Հետևյալ երկու նամակների ընդօրինակությունները նույնությամբ զետեղում ենք այստեղ, որպեսզի մեր պատմությունն ամբողջանա և ընթերցողները ծանոթանան ներքին դրությանը և քաղաքականությանը:

«Ողորմած Մելիք-Մեժլում.

Մենք՝ ստորագրյալներս բացարձակ խոստովանում ենք մեր հարց ու մեղքերը: Թե՛ մեր հայրերը, և թե՛ մենք չարաչար սխալվել ենք՝ հարելով ճըռ-խաներին, ապագայում օգտակար համարելով Հայրենյաց՝ սրանց ազգակործան քաղաքականությունը: Այժմ զղջմամբ խոստովանելով մեր հանցանքները՝ պարզ հայտնում ենք, որ չարաչար սխալվել ենք և ներկայումս, թողնելով Շահին և միաբանվելով նրա թշնամի ճըռ-խանի հետ, մանավանդ քանիցս անգամ անհարգաբար ու դատարկ հետ դարձնելով Շահի բանբերներին և համառելով մեր կամավոր կամապաշտության մեջ:

Այո՛, չափազանց սխալված ենք մեր հարցի հետ. փոխանակ օգտակար լինելու, ավելի վնասակար եղանք ազգային միաբանական ուխտին, Եկեղեցու պայծառությանն ու ժողովրդի հանգստությանը: Հավետ փառասիրության տենդով թշնամու կողմն անցել, նրա տկարությունը զորացրել, նրա մահամերձ կյանքը կենդանացրել և հեթանոսաբար աջակցել ենք նրա ազգակործան քաղաքականությանը, որը շատ թանկ նստեց Արցախի վրա: Վերջապես, թեև ուշ, այժմ զգում ենք, որ Հայրենիքը մեր ձեռքով է հավետ ավերակ դարձել, քան թե ճըռ-խաների, որոնց ձեռքում, մենք, հիմարաբար գործիք դառնալով, որպես բահ, մուրճ, կացին փլուզել ենք Արցախի Հայոց նյութական և բարոյական տունը:

Այս տողերը մեր կատարածի զղջման ապացույցներն են: Մենք այժմ անսահման փոշմանել ենք անցյալի համար, բայց երդմամբ ուխտում ենք դեթ այսուհետ օգտակար լինել Հայ-բենիքին: Ուխտում ենք, այսուհետև միաբանվել հարազատ-մելիքների հետ և միացյալ ուժերով ցմահ մարտնչել ճըռ-խա-նի հետ, որից գաղտնի գրեցինք այս նամակը:

Այժմ մենք համոզված ենք, որ Իբրահիմ ճըռ-խանի խա-նությունը հաստատելը կամ բոլորովին ջնջվելը կախված է միայն Պարսից շահերի կամայականություններից: Հետևապես, քանի որ այս աստիճան բարկացած է Աղա-Մամատ-Շահը, կասկած չկա, որ նրա գլխի հետ թռչելու է նաև նրա ճըռ-խա-նությունը, ուրեմն և մեր գլուխների հետ՝ մեր ճըռ-մելիքու-թյունը:

Եթե այս վիճակում անձնատուր լինենք՝ ավելի վատ, իսկ եթե չլինենք՝ էլ ավելի վատ մեզ համար, քանզի առաջի-նի վախճանը մեր մահն է, իսկ երկրորդինը՝ մեր ողջ գերդաս-տաններինը: Բայց, եթե Շահն առանց մեզ գնահատելու և Շուշին գրավելու հեռանա, մենք անկասկած գիտենք, որ Ազ-բայելի խմբի ձեռքից ո՛չ ճըռ-խանը կազատվի, ո՛չ իր գեր-դաստանը և ո՛չ էլ ճըռ-մելիքներս՝ մերոնցով հանդերձ:

Ստուգելով հավատացե՛ք, ողորմած Մելիք, որ այժմ ճըռ-խանը, և նույնիսկ մենք ոչ այնքան Շահից ենք վախե-նում որքան այդ խմբից, մանավանդ Ազբայել-Իբրահիմից: Բերդում, պաշարված օրից մինչև այսօր, գիշերները հաճախա-կի են երևացել բոլոր քաջերը, բացի Ազբայել-Իբրահիմից, սա-կայն երկու գիշեր է, նա ևս երևում է: Այն կիրճը, որով նրանք ելումուտ են անում, ամբողջ մի ամիս է, որ առանց գիշերա-պահի է մնում: Դրանք առաջին գիշերը սպանել են հինգ հեր-թական թուրքի, երկրորդում ՝ տասը, քսան և հետզհետե մինչև երեք հարյուր հայ և թուրք զինվոր են կոտորել: Այս պատճառով ոչ ոք չի համարձակվում հսկել այդ տեղը՝ ո՛չ հայ, ո՛չ թուրք:

Թեպետ ճըռ-խանը գիշերապահներին և իր թիկնապահ զորքին խստիվ պատվիրեց, որպեսզի հետևեն դրանց և կիր-ճից դուրս գալու ժամանակ կոտորեն, սակայն իզուր անցան բոլոր հրաման, զգուշություն և ձեռնարկություն: Ամենաքաջ թուրք զինվորներն անգամ սարսափում են դրանց անուններ-ից և, նույնիսկ անառիկ բերդում, փախչում դրանց ստվեր-ներից:

Ճըռ-խանը ճարահատյալ խոստացավ մելիքություն տալ նրանց, ովքեր կսպանեն այդ քաջերին: Բայց հայ և թուրք զինվորները, գաղտնի խորհրդակցելով, միաբերան հայտնեցին ճըռ-խանին, որ ապարդյուն են մնում իրենց բոլոր հսկողու-թյունները, քաջերի ստվերներն անգամ չէին կարողանում տեսնել: Այսպիսով, խաբեցին ճըռ-խանին և մնացին ազատ:

Երեկ առավոտ ճըռ-խանի այժմյան տան դռնից մի տախտակ կախված տեսանք, որի վրա մեծ-մեծ տառերով թուրքերեն գրված էր.«Ճըռ-խան, ճըռ-մելիքներ, մեր ճանկից ազատվել չեք կարող, անօգուտ են ձեր ճիգերը: Մենք Աստծո արդար վրեժխնդրության գործիքներն ենք: Ձեր անիրավու-թյունները մահվամբ պատժելու համար Աստծուց ուղարկված հողեղեն հրեշտակներ՝ Ազրայել, Տեով, Նեառռատեով»:

Ճըռ-խանի տան գիշերապահներն անգամ, որ ահից մի-ասին ենք մնում, փախել էին, որոնց հաճախակի տված եր-դումներից ճըռ-խանը համոզվեց, որ նրանցից ոչ մեկը չի տե-սել իր գիշերապահներին: Սրանց փորձը բազմիցս տեսնող ճըռ-խանը հավատում էր, որ այդ քաջերը երկրագնդի ամենա-երևելի աչքակապներն են, այդ արվեստի մեջ կատարելագործ-ված՝ մանավանդ Շեյթան-Թյունին:

Մեր և ճըռ-խանի վիճակներն անտանելի են: Փարավո-նի նման ժամ առ ժամ սպասում ենք մեր իսկ մահվան: Քա-ջերդ ոչ մի արգելք չունեին բնաջնջելու ոչ մեզ, որ խանին և ոչ էլ մեր բոլորիս ընտանիքները:

Վերստին խոստովանում ենք, որ մենք մեղանչել ենք ընդդեմ Աստծո, ընդդեմ Եկեղեցու, ընդդեմ հարազատ-մելի-

քությանն և ընդդեմ հայության: Եթե մեր հանցանքները ձեզ կստիպեն կտտամահ անել մեզ, թող մեր ընտանիքների անմեղությունն արգելի ձեր ձեռքերը թաթախել նրանց անմեղ արյան մեջ, եթե մեր զղջումը թողության չարժանանա ձեր կողմից, գոնե մեր մատաղ մանուկների թախանձանքն արժանանա ձեր գթությանը, խնայողությանը և ողորմությանը:

Մենք ոչ համարձակություն ունենք ձեզանից բան խնդրել և ոչ իրավունք ունենք մեր խնդիրներն ընդունել տալ ձեզ: Ձեզանից խնդրում ենք մեր ընտանիքների և զավակների կյանքը, համոզել Շահին, ով լսում է ձեզ, նախ տանել Տփխիս, ապա բերել այստեղ: Թերևս, մինչև այն ժամանակ, երբ կիջնի Շահի բարկությունը և կազատվի մեր ընտանիքների կյանքի հետ և մեր կյանքը: Տփխիսից վերադարձին Շահն իր առջև բաց կգտնի բերդի դռները՝ թեև քաջերի համար միշտ բաց են:

Մեր ահուդողով սարսափահար ընտանիքները խնդրում են ձեզանից, եթե կարելի է, պատվիրել Ազրայելին և իր խմբին՝ գթալ, խնայել իրենց արյունակից քույրերին, մանուկներին և տղաներին:

Ողորմած Մելիք, չենք նկարագրում պաշարումից կրած սոսկումը, երկյուղը և անտանելի նեղություններն ուտելիքի և խմելիքի պակասության պատճառով:

Ողջ լինեք ի Տեր:

Ձեր մեղավոր, բայց զղջացող եղբայրներ՝ Մելիք-Ալլահվերդի, Մելիք-Առստամ: 1844, հուլիս, Շուշի»:

«Հարգելի զորավոր Աբրահամ Բեկնազարյանց.

Ժողովրդին իշխողները շատ անգամ ժամանակի անդիմադրելի պահանջներից ելնելով՝ ստիպված են լինում խոնարհվել քաղաքական բուռն հոսանքների առաջ և ակամա ընտրել երկու չարյաց փոքրագույնը, թեև միակերպ դառն են երկուսի մրուրները: Արղությանց Հովսեփ արքեպիսկոպոսի և կոմս Զուպովի մեզ գրած գաղտնի նամակները թելադրում էին

մեզ չմիանալ Ռուսաց կառավարության թշնամի Աղա-Մամատ-Շահի բանակին: Մենք, երկու չարյաց փոքրագույնն ընտրելով, ակամա ընդունեցինք Իբրահիմ ճրռ-խանի թախանձալի աղաչանքը, թեպետ Իբրահիմ ճրռ-խանը մեր անհաշտ թշնամին է և մենք՝ իր, սակայն կշռադատեցինք, որ այս որոշմամբ թե՛ Ռուսաց կառավարության սիրտը վշտացրած չենք լինի, որին հարել ենք, և թե՛ մեզ համար ավելի հեշտ կլինի թոթափել տկար ճրռ-խանի զորությունը, քան թե Աղա-Մամատ-Շահի զորեղ զորությունը:

Պարզ հայտնի է, որ մենք, այս միջոցն ընտրելով, նպատակ ունեցած չենք լինի և չէինք կարող ունենալ՝ անջատվել հարազատ-մելիքներից և հարել ճրռ-խանի և ճրռ-մելիքների քաղաքականությանը, այլ խոհեմությամբ գործել՝ աչքի առաջ ունենալով Հայրենյաց օգուտը: Առածն ասում է.«Սատանայի հետ եղբայր եղի՛ր, մինչև կամրջից անցնես»: Ահա այս է մեր սույն միջոցն ընտրելու նպատակը: Ժամից ժամ մենք սպասում ենք Ռուսաց կողմից գալիք օժանդակ զորքին, որի գալուստը մոտալուտ է: Ձեր շնորհիվ ինքնին ոչնչացված են ճրռ-խանի և ճրռ-մելիքների զորությունները: Մենք մտադիր ենք լիովին թոթափել Պարսից լուծն Արցախից ու Մեծ Սյունիքից և այս մասին պայման ենք կապել Ռուսաց հետ, որոնց օժանդակ զորքը հասնելու է շուտով: Ահա հենց այս կարծիքով, վերջին ժողովում երկու մելիքներս բաժանվեցինք Մելիք-Մեժլումից, ուր ներկա էիք նաև դուք: Մենք հաստատ գիտենք, որ սիրելի եղբայր Մելիք-Մեժլումն ուխտել է վրեժ լուծել մեր երեք ոխերիմ թշնամիներից՝ Իբրահիմ ճրռ-խանից, ճրռ-մելիքներից և Հերակլ իշխանից, որոնք իսկապես արժանի են պատժի: Ստույգ գիտենք, որ Մելիք-Մեժլումը հաստատակամ, անխախտ որոշման և տոկուն բնավորության տեր անձնավորություն է և, թերևս, չափազանց նեղացած կլինի մեզանից: Այո՛, վշտացած է մեզանից, իսկ առաջ անչափ սիրով էինք, մինչև անգամ միացած էինք անանջատ սիրո շաղկապով: Բայց այս դեպքում, հակակարծիք քաղաքական նպա-

տակ ունենալով՝ բաժանվեցինք ոչ թե ատելության պատճառով, այլ տարբեր քաղաքականությամբ, տարբեր սիրո և օգտի հեռատեսությամբ ու տարբեր նպատակով: Մինչ օրս մեզանից ամեն մեկը նպաստավոր է համարել իր բռնած ուղղության հետևանքները:

Հարկ չկա ասել, թե մենք ըստ ամենայնի համամիտ ենք Մելիք-Մեժլումի ձեռնարկած վրեժխնդրության նպատակին, բայց ոչ Պարսից Շահին հարելու նպատակին, որը հակառակ է տղամարդկության պատվին: Քանի որ մենք մի անգամ հակվել ենք դեպի Ռուսաստան, պետք է մինչև վերջին շունչը պատերազմել հանուն այդ կողմնորոշման՝ մնալով իբրև կատարյալ տղամարդ: Միայն թե գնահատվի այդ տղամարդկությունն ըստ արժանվույն: Կարող է, որ մենք այս անխախտ որոշմամբ սխալված լինենք, իսկ Մելիք-Մեժլումը՝ անսխալ: Այս սխալը կամ ճիշտը կորոշեն Ռուսաց և Պարսից ապագա քաղաքականությունները:

Հարգելի՛ զորավար, պարտք համարեցինք հուշել ձեզ մի ամենասոսկալի և մոտալուտ վտանգ, որ համընդհանուր մահ է սպառնում Արցախի հասարակությանը, որ կլինի համաճարակը և սովը: Արցախի արտերն անբողջապես մնացել են կանգուն՝ առանց հնձելու: Հին հացը վերջացել է, իսկ նորը լափում են մարդկանց հացի թշնամիները՝ տարբեր տեսակի թռչուններ, մկներ, մրջյուններ ու նաև՝ տոթակեզ արևը: Ձեր քաջերը կոտորեցին թուրքերի բոլոր սուրբ կենդանիները և ավար վերցրեցին անսուրբ կենդանիներին: Ձեր քաջերի փոխադրությամբ մնացած սուրբ կենդանիները կերակուր դարձան շահական բանակին, իսկ անսուրբները՝ անշուշտ կփոխադրվեն Պարսկաստան: Բերդը փոխադրվածներն արդեն կերվել են պաշարողների կողմից: Գյուլիստանի, Ջրաբերդի և Խաչենի սուրբ կենդանիների կեսն արդեն ոչնչացված կլինեն. ահա այդ կեսն է միայն ամբողջ Արցախի ապավենը, ցանելու, կթելու միակ հույսը: Եթե պաշարումը երկարատև լինի, կոչնչանա այդ կիսամեռ հույսը ևս, այն ժամանակ մեր խեղճ ժո-

ղովրդի վիճակն ի՜նչ կլինի, երևակայեցե՜ք, սոսկալի՜ մահ: Եթե Շահի բանակը շուտով Տփխիս տեղափոխվի, ժողովուրդը գոնե կկարողանա գարնանացանը ձեռք բերել, ինչպես նաև արտերից մնացած բերքը, որը, թերևս, որպես սերմացու կդառնա առաջիկա տարվա ապրուստի համար:

Բացի այսքանը լսեցինք, որ դուք մտադիր եք բերդը շատ շուտով Շահին հանձնել: Մենք, անկասկած, հավատում ենք այս բանին, բազմիցս ականատես լինելով ձեր հրաշագործություններին: Դուք ձեր քաջերով անկարելին կարելի եք դարձրել և կշարունակեք դարձնել: Ձեր հանրածանոթ քաջագործությամբ և դյուցազնական հնարագիտությամբ, որը մինչ օրս վայելել ենք անսահման ուրախությամբ, Շուշին մի գիշերում կհանձնեք Շահին: Սրա անհերքելի ապացույցը ձեր գիշերվա հրաշագործությունն է, որով սարսափահար են ճըռ-խանը, ճըռ-մելիքները, սակավաթիվ զորքը և ամբողջ քաղաքը: Ամենքն անբացատրելի երկյուղով պաշարված՝ սրտատրոփ սպասում են բերդի ուժաթափ զորության կործանմանը և Շահի անգթությանը:

Ամենասիրելի՜ զորավար, մենք խնդրում ենք ձեզանից, որ դուք համոզեք Մելիք-Մեժլումին՝ նախ Հերակլից լուծել իր վրեժը և ապա՝ ճըռերից: Ձեզ դիմելու պատճառն այն է, որ մենք կասկածում ենք, որ Մելիք-Մեժլումը կմերժի մեր առաջարկությունը, բայց հույս ունենք, որ ձերը չի մերժի: Խոնարհաբար խնդրում ենք նաև, ի սեր Քրիստոսի, որ մեր այս աղերսանքը և թախանձանքը ճնշում և բռնություն գործ դնի ձեր վրա: Ձեր քաջահաղթ զորությունը թող այս անգամ հաղթվի գթությունից և մարդասիրությունից: Ձեր հաղթանակի փառքն այս անգամ թող նսեմանա Արցախի կյանքի առջև և բարձր համբավը խոնարհի ժողովրդի ազատության առջև: Ժողովրդի կյանքը նախապատիվ է մասնավոր փառքից և հասարակության մահը՝ մահ Հայրենյաց:

Մենք չենք ասում, թե Հայրենյաց կյանքը վրդողող ճըռերը կենդանի մնան, այլ ուզում ենք ազատել ժողովրդին, որ

չպատժվի ճըռերի պատժով և մեղքով: Մանավանդ, եթե դուք միայնակ կարող էիք և կարող եք պատժել ճըռերին՝ առանց վնասելու հասարակությանը: Դուք կարող եք երևակայել, որ ձեր սրերի շնորհիվ ամեն մի նեղություններից ազատված հայ ժողովուրդը կզոհվի սովի սրից, եթե անկատար մնան մեր խնդիրները: Տփխիսից վերադարձի ճանապարհին բերդի դռները բաց կլինեն Շահի առջև:

Մենք փորձով գիտենք, որ դուք մեզանից շատ բարձր եք ուսմամբ, խոհեմությամբ, հեռատեսությամբ, ռազմագիտությամբ և ազգօգուտ բարեմասնությամբ: Գիտենք նաև, որ ձեր հեռատեսությունից բնավ չի վրիպի կեսն անգամ մեր այս գրածներից: Հետևապես, երբեմն ոչ թե մենք ենք մեզ խրատողը, երբեմն աղաչողը, մերթ հորդորողը և մերթ սպառնացողը, այլ ժողովրդի տագնապալի վիճակը, տրոփող սրտերը և ձեր հանդեպ ունեցած անսահման սերը:

Ղոնտաղսաղենց տանը ճըռերից գաղտնի կազմվեց մի խորհուրդ, ուր և որոշվեց այս նամակը գրել ձեզ:

Լիահույս ենք, որ մեր թախանձանքները չեն մնա թղթի վրա: Ողջ լինեք՝ ի Տեր:

Իշխան Գյուլլիստանի Մելիք-Աբով Գ.

Իշխան Վարանդայի Մելիք-Ջումշուտ»:

Այս նամակը ևս կրում էր նախորդի թվականը:

Հարկ չկար գրել մի այլ նամակի պատճեն, որին ստորագրել էին Դիզակի, Վարանդայի և Խաչենի հարավային մասի բոլոր պաշարված քահանաները, իշխանազունները, քեանդխուտաները և առաջակա անձինք, ընդ որում՝ այն երկու նամակների իմաստի կրկնությունն էր:

ԺԸ.

Մենք հաճախ մեր ականջներով լսել ենք ընթերցողներից շատերի գանգատները Խորենացու պատմության համառոտագրության մասին, որով անհագուրդ է մնում հետաքրքրասեր ընթերցողը: Ահա այս է պատճառը, որ մենք հանձն առնելով մեծ նեղություն, հերթով սույն պատմության մեջ զետեղեցինք և զետեղում ենք նամակների պատճենները, ժողովների որոշումները և ժողովրդի անունները, որպեսզի ընթերցողները հագենան, ծանոթանան ժամանակի ուղուն և, լիուլի գաղափար կազմելով, կարողանան անաչառապես քննադատել այս պատմությունը և նրա մեջ գործող անձանց արարքները: Հարկ չկա ասել, թե միակողմանի գրված պատմությունը կբերի միակողմանի քննադատություն: Անաչառ քննադատը կարող է շոշափել այն փաստերը, որոնք մենք խառնում ենք իր շուրջը և անկողմնակալ վճիռ կայացնել:

Մելիք-Մեժլումը ստացավ Կաքև-Զաքու ձեռքով և Տփխիսից սպասած նամակը, որ հետևյալն է.

«Մեր սիրելի՛ եղբայր, հարազատ Մելիք-Մեժլում.

Նամակը, որ գրել էիր հունիսի 20-ին, ստացա. ահա պատասխանը.

Ա. Վրաց Հերակլ իշխանն արդեն լսել է Աղա-Մամատ-խանի Պարսկաստանից Արցախ անցնելը:

Բ. Հերակլ իշխանը պատմական փորձերից անկասկած հետևություն է անում, որ Աղա-Մամատ-խանը կարշավի նաև Տփխիսի վրա:

Գ. Հերակլ իշխանն այդ արշավների գույժը վաղուց հայտնել է Ռուսաց կառավարությանը և օգնություն խնդրել:

Դ. Ռուսաց Եկատերինե Բ թագուհին խոստացել է շտապ Վրաստան հասցնել օժանդակ զորք և Տփխիսն ազատել Աղա-Մամատ-խանի մուտք գործելուց:

Ե. Հերակլ իշխանը, հույս դնելով Ռուսաց զորավոր ուժի վրա, պատրաստել էր իր վերակազմավորված զորքը:

Զ. Իմերեթի Սոլոմոն իշխանը խոստացել է հինգ հազարանոց զորքով Հերակլ իշխանին օգնության շտապել, որն արդեն կազմ ու պատրաստ է:

Է. Ռուսաց օժանդակ զորքը դեռևս տեղ չի հասել, թե երբ կհասնի, անհայտ է, թագուհին հաստատ խոսք է տվել շուտով ուղարկել: Այս տեղեկությունները քաղեցի նույն Հերակլ իշխանից, որ տակավին չգիտի Շահի հետ կապած ձեր դաշնադրությունը և ձեր նրա հետ միաբանվելը: Ձեր հարցերից երևում է, որ Շահն արշավելու է նաև Տփխիսի վրա: Կխնդրեմ Կաքև-Զաքու ձեռքով կանխավ ինձ իմացնել այդ արշավանքի մասին, որպեսզի ժողովրդիս առնելով՝ ամրանամ լեռներում: Խնդրում եմ նաև, սկզբից պատվիրել Շահի կանոնավոր և անկանոն զորքին՝ վնաս չպատճառել քրիստոնյաներին:

Շատ ողջույն ձեզ և քաջերիդ: Ողջ լինեք ի Տեր:

Գյուլիստանի և Ջրաբերդի հայ գաղթականների վշտալի գաղթական՝ Փրեյտուն Մելիք-Բեգլարյան: Տփխիս, հուլիս»:

Նամակի լուսանցքում գրված էր. «Նամակիս ուշանալու պատճառը Հերակլ իշխանի բացակայությունն էր, որ նոր վերադարձավ որսորդությունից»:

Սույն երեք նամակների բովանդակությունը Շահից գաղտնի քննարկվեց մելիքի և հորս միջև: Հայրս հայտնեց, որ ճրռ-մելիքների նամակները լի է կեղծավորությամբ և խաբեբայությամբ, ինչպես իրենց ամեն ինչը կեղծ է, կեղծ է նաև դրանց գղջումը, դարձը և մեղանչը: Վատթար մարդկանց միակ ապավենը կեղծ երդմամբ իր հակառակորդին խաբել ու նեղությունից ազատվելն է, իսկ հետո ավելի չարագույն չարիքներ թափել ուխտապահ մարդկանց գլխին, ինչպես արել է Վասակ Սյունին: Ճրռերի նամակը գրված է ճրռ-խանի խորհրդով:

Հարազատ-մելիքների և ժողովրդի նամակների մեջ կան ճշմարտություններ, բայց փոքր ինչ չափազանցված, ինչպես մեռելների անթաղ մնալը, հացի պակասությունը և այլն:

Փրեյտուն-բեկի գրածները բոլորովին ճշմարիտ են:

Մելիք-Մեժլումը հայտնեց, թե ինքն ըստ ամենայնի համամիտ էր հորս փորձառու կարծիքին, միայն թե ինքը կամե-

նում էր հարգել ժողովրդի և հարազատ-մելիքների թախանձանքը և իսկույն ևեթ Շահի բանակն առաջնորդել Տփխիս, նախ վրեժ լուծել Հերակլ իշխանից և ապա Շուշի դառնալ, քանի դեռ Տփխիս չէր հասել Ռուսաց զորքը: Նա արդեն Շուշին համարում էր իր ճանկում, բայց Տփխիսը՝ չէ:

Հայրս վշտացած պատասխանեց Մելիքին. «Առածն ասում է,-«Այսօրվա գործը վաղվան մի թողի, քանզի չգիտես, թե վաղն ինչ կլինի»: Գործը, որ կարգադրված է ապագային թողնել, նշանակում է անձամբ քանդել: Եթե ժամանակի թուրն այս րոպեին գլխատում է երեք օր առաջ Շահի տված խոստումը և դժվարությամբ ձեռք բերված գործի հաջողությունը, ապա չի՞ կարող արդյոք ապագան կարճ միջոցում սպանել ճրռերին ոչնչացնելու խորհուրդը: Մեր բազմամյա երկունքն այսօր ծնում է արու զավակ, եթե թողնենք ապագային, ապա արգանդից կվիժի: Երեք օրը մեծ տարբերություն չէ, այս գիշեր Շուշին հանձնենք Շահին, կատարենք մեր խոստումը, հաշտեցնենք հարազատ-մելիքներին Շահի հետ, վերջացնենք մեր հաշիվները ճրռերի հետ և ապա գնանք Տփխիս: Այս ամենը երեք օրվա գործ է: Ապագային թողնելով գործը՝ մեծ վտանգ եմ նշմարում, ինչպես ձեր անձի, այնպես էլ հարազատ-մելիքության դեմ»:

Վերջապես հայրս ակամա զիջեց Մելիքի թախանձանքներին:

Շահն իսկույն ևեթ համաձայնեց նախ գնալ Տփխիս, հետո վերադառնալ Շուշի: Հետո ասաց հորս. «Մենք բավարարված ենք քո հրաշագործությամբ, քանզի քեզ հետ բերդ գնացող մեր Մուստաֆա թիկնապահը պատմեց այն հրաշագործությունների մասին, որ դու գործել ես: Դու արդեն կատարել ես քո խոստումը և այսուհետև մեր աջ ձեռքն ես: Արդարև, «Ազրայե՛լ» ես դու: Այժմ մենք քո անունը կոչում ենք «Հրաշագործ-Ազրայել», որպեսզի այն անպիտան ճրռ-խանի անունը չգտնվի քո վրա»:

ԺԹ.

Ամառանոցներից բանակատեղի բերված ձիերից ընտրված լավագույնները Շահը վերցրեց և ուղարկեց Պարսկաստան, իսկ մնացածը շնորհեց Մելիք-Մեժլումին և նրա զորքին: Ավար վերցված ձիերի թիվը հասնում էր մինչև յոթ հազարի, որից երեք հազարը վերցրել էր Շահը:

Հայ զորքն այդ ձիերով կազմել է հեծելագունդ, որի առջևից գնում եր Պել-Ճամալը՝ Շահից ստացած շքանշանը կրծքին:

Շահն այցելեց Ջրաբերդի և Գյուլիստանի բերդերը և գոհ մնաց իրեն դիմավորած հայ հոգևորականների և իշխանների հարգալից ընդունելությամբ: Մի օր մնաց այդ բերդերում, նույնպես և Գանձասարում՝ մեծարանք ընդունելով Մելիք-Մեժլումից և Ջավատ-խանից:

Կաքև-Զաքին Գանձակից ուղարկվեց Տփխիս, որ Փրեյտուն-բեկին իր ժողովրդով քաղաքից դուրս հանել տար: Կաքև-Զաքին իր վերադարձին հայտնեց, թե Հերակլ իշխանը Հայրենիքը պաշտպանելու համար զենքի էր հրավիրել բոլոր ազնվական դասերին և ճորտերին, բայց սրանք մերժել էին՝ պատճառաբանելով Հերկալի թուլամորթությունը և կանացի երկչոտությունը: Կաքև-Զաքին ասաց նաև, որ Սոլոմոն իշխանը երեք հազարանոց զորքով Տփխիս էր իջել օժանդակելու, Հերակլը և բոլոր ազնվականներն Իմերեթի ամրոցն էին փոխադրել իրենց գերդաստանները: Տակավին չէր հասել ռուս օժանդակ զորքը, և Հերակլը ամրացնում էր Տփխիսի բերդը:

Խրամ գետի մոտ իր հոգևորականներով Փրեյտուն-բեկը դիմավորեց Շահին և, ստանալով մելիքության հրովարտակը, կոչվեց Մելիք-Փրեյտուն:

Սեպտեմբերի տասնմեկին, առավոտյան վաղ Շահի բանակը հանդիպեց Հերակլ իշխանի բանակին: Հազիվ էր սկսվել ճակատամարտը, երբ հորիզոնից փախչող ասուպ աստղերի նման՝ փախչելով անհայտացավ վրացի զորքն իր իշխանով: Հերակլը և

Սոլոմոնը, առանց հետ նայելու, իրենց թիկնապահների հետ փախան մինչև Կախեթի ամրոցը: Կոտորվեցին բավական վրացի զինվորներ, իսկ մնացածները նապաստակի նման փախչելով՝ ազատվեցին: Պարսկական բանակը մտավ անպաշտպան Տփխիսը, որը կառուցված էր Քուր գետի աջ և ձախ ափերի վրա:

Բանակը երկու մասի բաժանվեց. Շահը Ջավատ-խանի առաջնորդությամբ բաղնիքների կողմից մտավ Հերակլի պալատը, իսկ մյուս մասը՝ Սոլոլակ փողոցով: Պալատում Մելիք-Մեժլումը և Ջավատ-խանը Շահից խնդրեցին, որ քրիստոնյաներին վնաս չտա:

Ի.

Պալատը թափուր էր բնակիչներից, բայց ոչ զարդերից և շքեղությունից:

Պարսից փառասեր Գահակալը, փոխանակ գոհ լիներ այս հաղթական փառքով, չափազանց դժգոհ էր:

Տրտմությունը հետզհետե փոխվեց բարկության, բարկությունը՝ սոսկալի սպառնալիքների, սպառնալիքները՝ անդառնալի մահավճռի: Այդտեղ Շահը գոչեց զայրալից որոտմամբ. «Եթե Շահ ենք, ուր է մեր պատիվը, եթե հաղթող ենք, ուր է մեր փառքը: Բացի պատերազմում սպանած վրացիներից, մենք քաղաքում ոչ ոքի չսպանեցինք: Ինչ պատճառով մեզ չդիմավորեցին կղերը, իշխանը և ազնվական դասը, ինչպես դիմավորել էին հայերը Ջրաբերդում, Գյուլիստանում, Գանձակում և Խրամում: Պետք է հրամայեմ ջնջել վրացիներին»: «Բարեխնամ Շահ, ողորմած եղեք քրիստոնյաներին.-պատասխանեցին Մելիք-Մեժլումը և Ջավատ-խանը՝ շտապելով Շահի անդադար բարկությունն իջեցնել,- այս շփոթ պահին ո՛չ կղերական դասն է հանցավոր և ո՛չ էլ ազնվական, այլ Հերակլ իշխանը՝ անազնիվ ազնվականը, ով անշուշտ պաժվելու է: Եթե կղերական դասն իմանար, որ իշխանը փախել է պատերազմից և Շահն անարգել մտնում է քաղաք, անշուշտ կդիմավորեր ձեզ, ուրեմն

այդ դասը ներողամտության է արժանի և ոչ թե պատժի»: Շահը խոստացավ ներել, եթե այդ ընթացքում գոնե դիմավորեն իրեն:

Եվ ահա տփխիսաբնակ հայ հոգևորականները և առաջականներն այցելեցին Շահին և, նրանից պահովություն ստանալով, մեկնեցին: Սակայն վրացիներից ոչ ոք չերևաց, Մելիք-Մեժլումը շտապեց հայ հոգևորականների ձեռքով ազդարարել վրացիներին, որ կատարեն այդ պարտավորությունները և վերստին պատճառ չտան Շահի բարկությանը: Վրացի կղերը և ազնվական կարծեցյալները միշտ պատասխանում էին. «Եթե մենք Շահի դիմացը ելնենք՝ նա մեզ, անկասկած, կոտորել կտա, քանի որ չափազանց բարկացած է Հերակլ իշխանի վրա»: Շահը վրացիների այս արարքն ընդունեց իբրև Ռուսաց կողմից իր դեմ նյութված արհամարհանք: Այս թյուր կարծիքը նրա գաղափարից հեռացնելու համար ապարդյուն անցան Մելիք-Մեժլումի և հորս բոլոր ճիգերը:

Վերջապես, Շահը ներքին և անդառնալի վճիռ արձակեց՝ կոտորել վրաց կղերականներին և ազնվականներին, ժողովրդին Պարսկաստան փոխադրել և հրամայեց ավար առնել քաղաքի բնակիչների գույքերը:

Վրացի ազգն ունի նապաստակի երկչոտություն և կրիայի դանդաղություն: Ժողովրդից շատերը կարող էին հեշտությամբ փախչել ազատվել, միայն թե կամենային: Քաղաքն անպարիսպ էր, և Տփխիսը շրջապատված չէր պարսկական զորքով: Ամեն ոք ազատ էր իր ուզած կողմից խույս տալու և հեշտությամբ ազատվելու, մանավանդ գիշերներին: Բացի այդ նրանք ծանոթ էին բոլոր ուղիներին, իսկ շահական զորքը՝ ոչ: Հայ քաջերը միշտ հեշտացնում էին վրացիների փախուստը, բայց վերջիններս, ինչպես ասացինք՝ երկչոտ էին և դանդաղ ու միանգամայն անլուր խրատներից և անզգա իրենց իսկ օգտից:

Բուն Տփխիսից Հավլուապար տանող կամրջի վրայից, Շահի անողորմ հրամանով հետզհետե Քուր գետի մեջ նետվեցին շատ վրացի ազնվական, կղերական և ժողովրդական մարդիկ: Շատերը լողալ իմանալով՝ ջանացին ազատվել, բայց գնդա-

կահար եղան գետի ափերում երկուստեք շարված սարվազնե-
րից: Իսկ Շահը կամրջի վրա նստած զվարճանում էր այս ցավա-
լի տեսարանով:

Տասն օր անընդհատ տևեց սրածությունը, կողոպուտը,
ավարառությունը և գերեվարությունը: Հրապարակները և փո-
ղոցները լի էին գերի ընտանիքներով, իսկ շատ տների բակեր՝
սպանվածներով, որոնց թիվը դժվար էր ճշտել: Կիկերոնի ճար-
տասան գրիչն անգամ անզոր էր նկարագրել սպանվողների ա-
ղիողորմ գոչյունները, թավագլոր ցատկումները և սրանց մեր-
ձավորների սուգը և կոծը:

Հրապարակներում և փողոցներում խումբ-խումբ խառն-
ված և ոչխարի նման միմյանց փաթաթված էին գերի զավակ-
ներն իրենց մայրերին, եղբայրները եղբայրներին, հայրերը որ-
դիներին և քույրերը քույրերին: Կարծես թե բնությունը մյուս
ցեղերին իր գեղեցկության ձիրքերից զրկել և կովկասյան այս
ցեղին է միայն գեղեցկություն շռայլել, մանավանդ իգական սե-
ռին, որը հրաշալի երգերով գովաբանում էին աշուղները և
զարմանում տեսնողները: Թխագույն սարվազներով շրջապատ-
ված այդ գեղեցկուհիները թոշնում էին արեգակի հրակեզ ճա-
ռագայթների տակ, ինչպես թփերից պոկված վարդեր: Հիացած
էին սարվազները սրանց սքանչելի գեղեցկության վրա և զար-
մացած ասում էին միմյանց. «Ի՜նչ հրաշալի գեղեցկություն,
հրեշտակայի՜ն դեմքեր»:

Հերակլի պալատի բակում դիզված էին կողոպտված եկե-
ղեցական ոսկեղեն և արծաթեղեն անոթներ, զարդեր, խաչեր և
ոսկեթել զգեստներ ու տնային նույնանման իրեղեններ, թան-
կագին կահկարասիներ: Քսակներով պատրաստ էին հարուստ-
ների տներից ավեր վերցված ոսկիներն ու արծաթները:

Թեև Շահի կարգադրությամբ սարվազներ էին դրված
Հայոց թաղերի և տների վրա, որպեսզի վնասներից ազատ
մնային, այսուամենայնիվ պակաս չվնասվեցին հայերը՝ տալով
կոտորած և գերի: Հայ սպանվածների մեջ քաջերի ուշադրու-
թյունը գրավեց Հարություն վարդապետը, որ շատ սիրելի է ե-
ղել հորս և Թոփուզ-Աշուղին:

Հարություն վարդապետի հայր Մահտեսին Հալապ քաղաքից գաղթում է Տփխիս, ուր ամուսնանում է Հավլուապար թաղում մի աղջկա հետ, որից ծնվում է Հարություն անվամբ որդին: Հարությունն ուսում ստանալուց հետո սովորում է իր հոր ջուլհակության արվեստը, յոթ տարի պաս պահելուց հետո գնում է Յոթնատուն Մշո Սուլթան Սուրբ Կարապետ վանքն ուխտի, որից ստանում է աշուղության լիակատար շնորք և վերադառնալով՝ դառնում ականավոր բանաստեղծ:

Հարությունն իր աշուղական անունը փոխում է Սայաթ-Նովա, որը նշանակում է նոր-որսորդ: Հետո ամուսնանալով ունենում է որդիներ և թողնում է իր սիրած քյամանչան ու ընտանիքն այս խոսքերով. «Կհագնեմ մազեղեն, կհագնեմ շալը, կերթամ ման կգամ վանքերը մեկ-մեկ», ապա գնում է Հաղպատի վանքը, ուր վարդապետ ձեռնադրվելով՝ Հարություն վարդապետ անունով մտնում է միաբանների շարքը:

Նա այդ օրերին, գտնելով Տփխիսում՝ մտնում է բերդի եկեղեցին աղոթելու, հասնում են անիծյալ սարվազները և ստիպում ուրանալ Քրիստոսի լույս հավատը, դուրս գալ եկեղեցուց և ընդունել Մուհամեդի կրոնը: Սակայն Սայաթ-Նովա Հարություն վարդապետը սարվազների թրերով նահատակվում է եկեղեցում արտասանելով այս խոսքերը. «Եկեղեցուց դուրս չեմ գա, Քրիստոսը չեմ ուրանա»:

Նահատակի հոգին ավանդած ժամանակ հասնում է Թոփուզ-Աշուղ-Ղարան Նեառատեովի և Պել-Ճամալի հետ: Սրանք վառվում են վրեժխնդրության կրակով և եկեղեցու բակում կոտորում 99 սարվազի: Պել-Ճամալն այս թիվը քիչ համարելով՝ կրկին բացում է եկեղեցու պարսպի դուռը, ներս առնում բավականին սարվազներ և կրկին կոտորում, ուր Պել-Ճամալը կոչում է. «Այս անիծյալ հաշիվը միշտ պակաս է գալիս՝ ընդամենը 259 սարվազ ենք կոտորել»: Հարկ չկա ասելու, որ սարվազների կոտորումը գաղտնի մնաց Շահից:

Թոփուզ-Աշուղ-Ղարան մի քանի հայ քահանաներով բերդի եկեղեցու գավիթում ամփոփել տվեց նահատակ Սայաթ-Նովա բանաստեղծ վարդապետի մարմինը: Իսկ հայրս, այս ազգա-

յին քաղցրաբարբառ երգչի անունը և այս պատմության մեջ անմահացնելու համար՝ կամեցավ, իբրև խոսուն արձան, կանգնեցնել հետևյալ երգը՝ Թոփուզին երգել և ինձ գրել տալով:

«Արի՛, ինձ ականջ կալ, ա՛յ դիվանայ[1] սիրտ,
Հայա[2] սիրե՛, ադաբ[3] սիրե՛, ար սիրե՛.
Աչխարհքս քունն ըլի, ինչ պիտի տանիս.
Աստուած սիրե՛, հոգի սիրե՛, յար սիրե՛:
Էն բանն ասա՛, վուր[4] Աստծո շարքումն է.
Խրատները գրած «Հարանց վարքումն» է.
Երեք բան կա հոգու, մարմնու կարգումն է՝
Գիր սիրե՛, ղալամ[5] սիրե, դավթար[6] սիրե՛:
Ե՛կ, արի՛ սիրտ, մե կենայ դու մէ[7] դամաղի[8]
Հալալ մտիկ արա՛ հացի ու աղի.
Հենց[9] բան արա՛ մարդ վրեդ չծիծաղի.
Խրատ սիրե՛, սաբր[10] սիրե՛, շար[11] սիրե:
Հպարտություն չանիս, դուր[12] կու գաս Տերիդ.
Խոնարհություն արա՛ քանց քեզ դեվերիդ[13].
Աստուած դիփուններն[14] մե հոգի էր էդ[15].
Աղքատ սիրե՛, ղոնաղ[16] սիրե՛, տար[17] սիրե:
Սայաթ-Նովա[18] երնի՛կ քեզ, թե էս անիս,
Հոգուդ խաթրի մարմնուդ ումբրը[19] կես անիս.
Թէ վուր կուզես, դատաստան չը տեսնիս՝
Վանք սիրե՛, անապատ սիրե՛, քար սիրե[20]»:

Շահը հրամայեց կրակ տալ Հերակլ իշխանի պալատը և մի քանի տներ, ապա շտապ հեռացավ Տփխիսից յոթանասուն հազար վրացի և հայ գերիներով, առատ գանձով և ավարով:

---

[1] Խելագար: [2] Ամոթխածություն: [3] Համեստություն: [4] Որ: [5] Գրիչ: [6] Տետրակ: [7] Մի: [8] Միակերպ դրության մեջ վատը: [9] Այնպես: [10] Համբերություն: [11] Արդարություն: [12] Հաճո կլինի Աստծուն: [13] Խոնարհություն անել քեզանից փոքրերին: [14] Ամենքը, բոլորը: [15] Հոգով հավասար ստեղծեց Աստված: [16] Հյուր: [17] Օտարական, պանդուխտ: [18] Սայեաթ՝ նշանակում է որսորդ, իսկ նովա՝ նոր. իմաստն է երգերով առաքինություն որսացող նոր որսորդ: [19] Կյանքդ: [20] Սույն ակնավոր բանաստեղծի երգերը տպված են «Սայաթ-Նովա» անուն երգարանում:

ԻԱ.

Շտապ հեռանալու պատճառն այն էր, որ իզուր չպատերազմեր Ռուսաց կողմից սպասված զորքի հետ:

Սողանլու կոչված տեղից, Մելիք-Մեժլումի միջնորդությամբ՝ գերիներից Տփխիս վերադարձան տասներկու հազար վրացի և հայ գերվածներ բոլոր եկեղեցական անոթներով և զարդերով հանդերձ: Մելիքը պատվիրեց Հերակլին հաղորդել հետևյալ խոսքերը. «Անազնիվ իշխան, դու ցանկացար Իբրահիմ ճրռ-խանի ձեռքը մատնել Վրաստան օգնության դիմած երկու հայ ազատ մելիքներին: Մելիք-Մեժլումը Շահի գերությունից ազատեց քո տասներկու հազար գերիներին և եկեղեցիներիդ թանկագին սպասավորներին: Իշխան, Տփխիսի կործանման պատճառը և Պարսկաստանը գերի գնացող ժողովրդի մեղքը քո մեղքերի մեջ որոնի և ոչ թե Մելիք-Մեժլումի անմեղության մեջ»:

Թ՛ե ազատվածների և թե՛ գերիների մեջ կային և շատ հայեր:

Մինչդեռ շողշողուն հույսերով բանակը մոտենում էր Գանձակին, Շուշի արշավելու՝ Շահը շնորհակալությամբ հանդերձ հայտնեց Մելիք-Մեժլումին. «Ահավասիկ ձեր թշնամիների մի մասին մենք պատժեցինք, կգնանք մահվան պատիժներով պատժել և մյուսին՝ Ջառչի-Փանահի տղային իր անվանած բոլոր ճրռերով»: Մելիք-Մեժլումը պատասխանեց. «Բարեխնա՛մ Շահ, ես կատարեցի իմ պարտքը և կատարելու եմ: Իսկ դուք կատարել եք ձեր ազնվությունը և կկատարեք: Հերակլը թերևս, միայն մեղանչել էր իմ անձի դեմ, իսկ Իբրահիմ ճրռ-խանն իր ճրռերով հանդերձ մեղանչել է ամբողջ Պարսկաստանի և Սյունիքի դեմ»: Շահն ասաց. «Այո՛, ծանր հանցավորները կպատժվեն ծանր պատիժներով»:

Եվ մինչդեռ զորականների ուրախությամբ լցված սրտերով և Շահի տված խոստմամբ շտապում էին Շուշի՝ հանկարծ Շահը Պարսկաստանից մի նամակ ստացավ, որը հայտնում էր,

որ մեծ ապստամբություններ են սկիզբ առել Ղանտահարի և Հերաթի կողմերում: Հարկ էր շտապել Պարսկաստան:

Շահը մելիքին հայտնեց, որ ինքն ստիպված էր շտապել Պարսկաստան և իր հետ տանել հորս և ինձ:

Նա խոստացավ առաջիկա գարնանը կրկին հետ գալ, գրավել Շուշին և կատարել իր խոստումները:

Առանձնացած ժամանակ մելիքն ասաց հորս. «Ամենասիրելի՛ զորավարս, ծանր է ինձ մերժել Շահի առաջարկությունը, և ծանրագույն՝ քեզ իմ ձեռքից բաց թողնել ու քո ներկայությունից զրկվել: Սակայն ոչ պակաս օգուտ է հարազատ-մելիքության համար՝ Շահի մոտ ունենալ քեզ նման մի անձի, ում միջոցով մենք կարող ենք հարաբերություն ունենալ Շահի հետ: Երկար փորձերից հետո իմ հույսը ռուսներից բոլորովին կտրվել է: Հետևապես, խորհուրդ եմ տալիս քեզ գնալ Շահի հետ»: Հայրս պատասխանեց. «Մեծ ցավ է ինձ համար հայրենիքս թողնել այս վիճակում, մեծագույն ցավ՝ գաղթել Հայաստանի բազմադարյան թշնամի Պարսկաստան և ամենամեծ ցավ՝ ձեզ անպաշտպան թողնել ու հեռանալ: Քարեր զարկեցինք իշամեղուների բներին՝ Հերակլին և ճրո-խանին, որոնք բզզալով պետք է հարձակվեն ձեր և Հայրենյաց դեմ: Մանավանդ, մեծ վտանգի մեջ է ձեր անձն այդ երկու ոխերիմ թշնամիների սրերի միջև: Ես չեմ հիշում Շուշին առանց գրավելու թողնելու մասին իմ գուշակությունները, որոնք իսկությամբ կատարվեցին այսօր: Ահա ընդունեցի ձեր և Շահի առաջարկությունները, միայն խնդրում եմ ձեզանից, այսուհետև միշտ հետևել Քեանդխուտա-Խաչատուրի և Նեառռատեովի խորհուրդներին ու, առանց նրանց հետ կանխավ խորհրդակցելու, ոչ մի բան չանել»:

Շահը Մելիք-Մեժլումին նվիրեց մի առյուծադրոշմ շքանշան, երկու ջորաբեռ ջխտանոց[1] արծաթ և երկու քսակ ոսկի, նույն չափով էլ տվեց Ջավատ խանին:

Բայց առաջինը չընդունեց: Նա բոլոր ճրռերի ջնջումը գերադաս համարեց, քան թե այդ դրամը: Միայն ընդունեց շքան-

---

[1] Վրացիների թագավորների կտրած միաձույլ 40 կոպեկանոց դրամ:

չանը և պատճառաբանեց, թե ինքը բավարարված կլիներ միայն ճրուերին ջնջելով՝ անձամբ Շահի կողմից: Առատորեն դրամ բաշխեց և հայ զորքին, մանավանդ՝ քաջերին: Զենք գրում Պել-Ճամալի հայտնած նեղվածությունները մելիքի մասին, երբ նա վերանձնաբար հետ դարձրեց Շահի նվիրած դրամները:

Շահը շնորհակալությամբ հանդերձ, հրաժեշտի ողջույն տալով Մելիքին և Ջավատ-խանին՝ հեռացավ Գանձակից: Դժվարին է նկարագրել Մելիքի, հորս և ամբողջ հայ զորքի փոխադարձ տված ողջույնները: Երկարատև եղավ բաժանումը, մեկ առ մեկ փարվեցին միմյանց և լաց լինելով բաժանվեցին: Մելիք Հայկազյանցը չմոռացավ համբուրել նաև ինձ: Հայրս մի քանի ազդու և ոգևորիչ խոսքերով քաջալերեց իր սրտաբեկ զորքին՝ հուսադրելով, որ մոտ ժամանակում, Շահն Աստծո ամենակարող օգնությամբ հետ է դառնալու Արցախ:

ԻԲ.

Հայրս միակերպ տխուր էր: Հայրենյաց ցավը խառնված իմ ցավի հետ՝ կրծում և ուտում էր նրա միտքը, սիրտը, հոգին:

Երբ հասանք Երասխ գետի ձախ ափը, հայրս համբուրեց հողը և ինձ ևս համբուրել տվեց: «Ապրե՛ս, որդի, ամեն մարդու համար սուրբ է իր հայրենիքը, ուրեմն և մեր Հայրենիքը մեզ համար: Մի բուռ հող վերցրու, որդի՛ս, կապիր թաշկինակիդ մեջ և միշտ քեզ հետ պահիր: Երբ մի օր կարժանանաս այստեղով Հայրենիքդ անցնելու պատվին, վերստին իր տեղը կթափես այդ հողը»: Ես կատարեցի հորս հրամանը, որը գաղտնի մնաց բանակից: Այս բաները գրելով, մենք միտք չունենք վիպական ձև տալ մեր պատմությանը, այլ պատմելով՝ կենդանի պատկերացնել ինչ որ եղել է և իրական է: Լալով Պարսկաստան անցանք Խուտափիրինի կամրջով:

Մեր սկսածն ավարտելու համար հարկ է վերստին շարունակել մեր պատմությունը, նախ Մեծ և Փոքր Սյունիքի սահմանները որոշելով, և ապա հինգ մելիքության:

Ղարաբաղի, այսինքն Մեծ և Փոքր Սյունիքի ընդհանուր սահմանը հարավից Երասխ գետն է, որ բաժանում է Փայտարանը (այժմյան Պարսկաստանը) Ղարաբաղից, արևմտյան սահմանը Երասխից Գեղարքունիք ձգված լեռնաշղթայի գագաթնագիծն է, որ Ղարաբաղն անջատում է Արարատյան նահանգից, հյուսիսից Մռով սարի գագաթնագիծը և սրանից բխված Քուր գետը թափվող Թի գետը, որ թուրքերեն Քիվլակ-չայ է կոչվում, որոնք զատում են Գանձակի սահմանն Արցախից, իսկ արևելյան կողմից Քուր գետը, որը որոշում է Արցախն Ուտի գավառից:

Դիզափայտից դեպի Գեղարքունիք ձգվող լեռնագոտին զատում է Մեծ Սյունիքը Փոքր Սյունիքից կամ Արցախից:

Բնության հիանալի կարկինն Արցախը երկու մասի է բաժանել՝ լեռ և դաշտ: Արցախի արևմտյան մասն ընդհանրապես լեռնոտ է, իսկ արևելյանը մի գեղեցիկ, բերրի և ընդարձակ դաշտ, որի հետզհետե նեղացած և դաշտալեզվակ ձևացած ծայրը հասել է Տփխիս, իսկ մյուսը լայնածավալ տարածվել է Կուր և Երասխ գետերի ու Արցախյան լեռների մեջ: Ամբողջ դաշտը ոռոգվում է Արցախի, Գանձակի և Երասխից վեր առնող Արքայառուի ջրերով: Արքայառուն սկզբում կառուցել է Վաչագան Գ. թագավորը, որի պատճառով անվանվել է «Արքայառու», որը հետո նրա քույր խաթունը նորոգել է տվել, և կոչվել «Խաթունարխ»[1]:

Ամբողջ Մեծ և Փոքր Սյունիքները կազմում են Աղվանաց երկրի արևմտյան մասը:

Արցախը կամ Փոքր Սյունիքն իր բնական դիրքով բաժանված է հինգ գավառի, ուր հաջորդաբար նստում են հինգ հարազատ-մելիքներ, որոնց նախնիները ծագել են Աղվանաց Գրիգոր թագավորից:

Առաջինն է Դիզակ գավառը, որի հարավային սահմանն է Երասխ գետը, արևմտյանը՝ այս գետին խառնվող Հագեարի գե-

---

[1] Այժմ այս առուն ավերակ է և անջուր, եթե նորից կառուցվի, կարող է մեծամեծ օգուտներ մատակարարել:

տը, հյուսիսայինը՝ Դիզափայտից արևելք երկարած լեռնագոտին իր գետակով, իսկ արևելյանը՝ Քուր գետը:

Այս գավառի բերդերն են՝ Դիզափայտ, որը կառուցված է համանուն սարի գագաթին, ուր դիզված փայտերի մեջ այրված են բազմաթիվ հայ նահատակներ. Դող՝ այսինքն թշնամի դողացնող բերդ, որ հիմնված է Դող գյուղաքաղաքի արևմտակողմ մի ձվաձև բարձրացած սարի գագաթի վրա. Տումի, որ Դող բերդի արևմտյան մասում է. Կավաք բերդակ, ուր նահատակվել են Յակովը և Իրավափառը: Ահա այս բերդերում նստելով՝ Դիզակ գավառի ամբողջ ժողովրդի վրա տիրել են Գրիգոր Թագավորի փոքր թագավորազն որդին և նրա սերունդները:

Երկրորդ գավառը Վարանդան է, որի հարավային սահմանն է Դիզակի սահմանագիծը, արևմտյանը՝ Քիրս լեռը, որ Դիզափայտ լեռնաշղթայի շարունակությունն է, հյուսիսայինը՝ բուն Կարկառ գետակը, իսկ արևելյանը՝ Քուր գետը:

Այս գավառի մասնավոր բերդերն են. Սոս բերդը՝ մի բարձր սարի գագաթին, Աղջկաբերդը՝ մի ժայռի գլխին, որն այժմ կոչվում է Ղըզ-ղալա, Մավաս բերդակը, որը հին մելիքների գերեզմանոցն է և Ավետարանոցը, որը Մելիք-Շահնազարյաններն են յուրացրել՝ այն նորոգելով:

Երրորդն է Խաչենը, որի հարավային սահմանն է Կարկառ գետակը, արևմտյանը՝ Գեղարքունյաց լիճը և Արարատյան նահանգը՝ Մեծ Սյունիքից բաժանող լեռնաշղթայի գագաթնագծին, հյուսիսայինը՝ Մռով սարը, Հաթերք գյուղը՝ այս գյուղի դիմացից Առաջաձոր գյուղը ձգված լեռնաշղթան և Խաչենագետը, իսկ արևելքից՝ Քուր գետը:

Սրա բերդերն են՝ Ուլուպապ բերդը, Պտկեսբերքը(Պտկի Ս. Գևորգ) վանքի մոտ, ընությունից ստեղծված կաչաղակաբերդը[1], Խոխանաբերդ կամ Թարխանաբերդը, Հանդաբերդը, Հավքախաղաց բերդը[2], Ականաբերդը և Գարդման բերդը Մռով սարի վրա:

---

[1] Թուրքերեն անվամբ «Սաղսաղանի ղալա»:
[2] «Լաչին-ղալա»:

Վախթանգ Թագավորազնի սերունդները, բնակվելով այս բերդերում՝ իշխել են Խաչեն և Ջրաբերդ գավառների վրա: Բայց այս բերդերը պատմական մեծ նշանակություն ունեն, մանավանդ Կաչաղակաբերդը, ուր պատերազմել է Ջալալ-իշխանը Թաթարների հետ:

Ջալալ-Դոլուն ավետիս են տվել, ասելով. «Կնեկդ խոխան պերալ ա» (Կինդ երեխա է բերել): Իշխանն ի պատիվ երեխայի «Խոխանաբերդ» է անվանում այս բերդը: Երեմիա կաթողիկոսը «Հլու-պապ» է կոչում Ս. Գևորգի մոտի բերդն ի պատիվ իր հեզահոգի և հլու պապի, որը հետո կոչվեց «Ուլու-պապ»:

Չորրորդ գավառն է Ջրաբերդը, որի հարավային սահմանն է Խաչենագետը, արևմտյանը՝ Մռով սարը և Հաթերք գյուղը, հյուսիսից՝ Թղրին գետակը, որ խառնվում է Թարթառին և նույն Թարթառը, իսկ արևելքից՝ Քուր գետը:

Այս գավառի բերդերն են Ջրաբերդը, Կուսապատը և Ադամաբերդն Ինն-Մաս վանքի մոտ, որը հիմնվել է Մելիք-Ադամ[1] Առաջինից: Այս բերդերին տիրապետելով՝ Մելիք-Իսրայելյանները իշխել են ամբողջ Ջրաբերդ գավառի ժողովրդի վրա:

Հինգերորդ գավառն է Գյուլիստանը կամ Թալիշը, որի հարավային սահմանը Թարթառ գետն է, արևմտյան մասը՝ Մռով սարի արևմտյան ջրվեժները, հյուսիսայինը՝ Թիգետը (Քյուրակ-չայ), իսկ արևելյանը՝ Քուրը:

Այս գավառի բերդերն են՝ Գյուլիստանի բերդը, որի անվամբ Գյուլիստան է կոչվում ամբողջ գավառը և Հոռեկայ ամրոցը Հոռեկայ վանքի մոտերքում: Սրանց մեջ նստելով Մելիք-Աբովյաններն իշխել են այդ գավառի ամբողջ ժողովրդի վրա:

---

[1] Ա-ով սկսվող բառերի վրա տեղական ժողովուրդն ավելացրել է Հ տառը: Օրինակ, Ադամ՝ Հադամ, անդ՝ հանդ, արբած՝ հարբած, անդաստան՝ հանդաստան և այլն: Նույնպես ի և ո-ով սկսվողների վրա: Օրինակ, ինչ՝ «հինչ ես ասում», ուր՝ «հոր ես քինամ» և այլն:

ԻԳ.

Եվ որովհետև Արցախը կազմում է Աղվանաց երկրի արևմտյան մասը, որովհետև մելիքությունը ներկայացնում է Աղվանաց թագավորության փառավոր անցյալը, տխուր ներկան և ամենատխուր ապագան, որովհետև մելիքությունը ծագել է Աղվանաց տան թագավորության, նախարարության և իշխանության շղթայից, հարկ է նախ սկսել այդ շղթայի առաջին օղակից և կարգով շոշափել այդ օղակները մինչև վերջին մելիքը: Եվ այս ամենն ընդօրինակում ենք հորս ծոցի ձեռագրից, որն արտագրված է «Աղվանից պատմություն» ձեռագրից և մեր կանխավ հիշած ձեռագրերից:

«Աղվանից սահմաններն էին. արևելքից՝ Կասպից ծովը, հարավից՝ Փայտակարանը, արևմուտքից՝ Գեղամա լիճը և Վրաստանի սահմանը, իսկ հյուսիսից՝ կովկասյան լեռները և Ուտյաց գավառը:

Աղվանն ունեցել է իր ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի, աղի, նավթի և այլ պատվական հանքերը: Նշանավոր են Աղվանի սուրբ և անսուրբ չորքոտանիները և թռչունները, ձկներն ու ձկնհավկիթները:

Աղվանի ժողովուրդը քրիստոնեական հավատը և կրոնը ընդունել է Տեառնեղբայր Հակոբոս Առաքյալից եպիսկոպոս ձեռնադրված Եղիշ եպիսկոպոսից՝ մասնավորապես, իսկ սուրբ Գրիգոր Լուսավորիչից՝ ընդհանրապես: Իսկ հայերեն գիրն ու դպրությունը, ուսումը և կրթությունը, եկեղեցական արարողությունը՝ Ս. Մեսրոպի ձեռքով[1]*:*

Աղվանաց ժողովուրդը նախ կառավարվում էր նահապետներով, ապա թագավորներով, ապա նախարարներով, կրկին թագավորներով, ապա իշխաններով և հետո մելիքներով: Այս

---

[1] Աղվանաց ժողովուրդն ունեցել է և իր հատուկ լեզուն, որը տեսնվում և լսվում է Նիժ և Վարդաշեն գյուղաքաղաքներում, այն կոչվում է Ուտի կամ Ուտերեն բարբառ:

բոլոր իշխողներն ունեին իրենց հատուկ զորքը, զորավարը և պատերազմական ռազմամթերքը: Աղվանից իշխողները մեծ մասամբ ազատ և անկախ իշխում էին իրենց ժողովրդին, բայց երբեմն ընկնում էին Պարսից իշխանության տակ՝ տարեկան մի որոշյալ տուրք վճարելով և պահպանելով իրենց անկախ ազատությունը: Բայց Պարսից իշխանության տակ ընկած ժամանակ մինչ այսօր իշխողները հաստատվում են Շահերի կամ թագավորների հրովարտակներով: Աղվանից իշխանական միևնույն իրավունքները ճանաչում, հարգում և միանգամայն վավերացնում են նաև այդ երկիրն արշավող արաբ, հույն, թուրք և թաթար իշխանավորները:

Աղվանը, գտնվելով Պարսից, Հունաց, Արաբացուց, Հոնաց, Վրացուց, Թաթարաց և Լեկզիների արանքում՝ պակաս պատերազմներ չէր մղել և Հայաստանից ոչ պակաս էր նահատակներ ու զոհ տվել: Տղամարդորեն պահպանել է իր ազգային կյանքը, եկեղեցին և կրոնը, միացնելով կաթողիկոսական աթոռը թագավորական, նախարարական, իշխանական և մելիքական աթոռների հետ, վանքերը և միաբանությունը մարմնավոր կառավարության հետ, ուսումը և կրթությունը զորքի հետ, խաչը և ավետարանը՝ զենքի հետ և հոգևոր խորհուրդներն ու ժողովները՝ մարմնավոր խորհրդների և ժողովների հետ:

Աղվանն իր առանձին կաթողիկոսները և թագավորներն ունենալով հանդերձ՝ միշտ ընդհանուր Հայոց թագավոր և ընդհանուր Հայոց կաթողիկոս է ճանաչել:

Հայկազյանց, Արշակունյանց, Բագրատունյաց, Ռուբինյանց թագավորներին և Էջմիածնում, Դվինում, Անիում և Կիլիկիայում նստող կաթողիկոսներին: Բացառություններն աննշան են եղել: Կրոնական և քաղաքական ծանր խնդիրների հանդիպած ժամանակ՝ առաջինները միշտ դիմել են վերջիններին և ամեն դժվարին խնդիր լուծել ժողովներով:

Աղվանից կաթողիկոսների ընտրությունն առհասարակ որշում էր իր ընդհանուր ժողովուրդը, իսկ ընտրյալներն օծվում են ընդհանուր կաթողիկոսներից և Աղվանից հաստատված կաթողիկոսից: Իսկ մարմնավոր գահակալությունը, ըստ ասիական

վաղնջական սովորության, ժառանգական է եղել անդրանիկու-թյան կարգով: Բայց երբ հաջորդող անդրանիկ գահակալն ան-չափահաս, անկարող, թերամիտ է եղել, հաջորդել է վախճան-վողի եղբայրը կամ փոքր որդին: Իսկ երբ գահակալն արու զա-վակ չի թողել, այն ժամանակ հանգուցյալի դուստրն ամուսնա-ցել է մի այլ հայ թագավորազն իշխանի հետ, որը շարունակել է այդ պաշտոնը:

Ինչպես վկայում են «Աղվանից պատմությունը» և մյուս պատմությունները, Աղվանցիները սերվել են Սիսական ցեղից, որը Հաբեթի հետագա սերունդներից է եղել:

Աղվանից անվամբ երեք թագավորություն է եղել, որից առաջինը Սիսական Առանից է սկսել ու շարունակվել, աթոռա-նիստը եղել է Կապանքը, Դերբենդը, Պարտան, որից ծագել է այժմյան մելիքությունը: Երկրորդը ծագել է նույնպես Սիսա-կան ազգից, աթոռանիստ ունենալով Բաղք-Ղափանը, որ կոչ-վում է «Թագավորություն Բաղուց»: Իսկ երրորդը ծագել է Բագրատունի ազգից, որը հաստատվել է Լոռի և ուրիշ քաղաք-ներում և համարվում է Բագրատունյաց թագավորության մի ճյուղը: Ահա, բուն Աղվանից թագավորները:

Աղվանից[1] թագավորները

Ա. Առան Սիսական, Հայոց Վաղարշակ թագավորից հաս-տատված.

Բ. Քաջն Վաչագան Ա. Արշակունի ազգից.

Գ. Վաչե Ա. » » .

Դ. Ուռնայր. » » .

Ե. Վաչագան Բ. » » .

Զ. Միհրավան. » » .

---

[1] Պատմության մեջ հաճախ գործ են ածվում «Թագավոր Աղվանից» բառերը, որոնք շփոթում են ընթերցողները շատ անգամ: Այս որոշակի գծված Աղվա-նից, Բաղուց, Լոռու թագավորությունները բավական փարատում են ընթեր-ցողների վարանումները և մատնանիշ են անում բուն Աղվանից թագավոր-ներին:

Է. Սատոյ. » » .
Ը. Ասա. » » .
Թ. Արսվաղեն կամ Եսվաղեն. » .
Ժ. Վաչե Բ., որը հիմնում է Պարտա քաղաքը.
ԺԱ. Վաչագան Գ. Բարեպաշտ.

Սասանեան հիմնական նախարարներ

Հայոց 590 թվականին Պարսից Որմիզդ Բ. Թագավորը սպանվում է իր աներոջ երկու որդիներից՝ Բնդոյից և Վստամից: Սպանվածի որդի Խոսրովն ապավինում է Հունաց Մորիկ կայսրին, ամուսնանում նրա դստեր հետ, թագով պսակված վերադառնում Պարսկաստան և թագավորում: Խոսրովը, իր հոր մահվան վրեժը լուծելու համար կոտորել է տալիս Բնդոյի և Վստամի հետ նրանց ողջ ցեղը և բոլոր այն մարդկանց, որոնք մասնակից են եղել սպանությանը:

Խոսրովի հարազատ եղբայր Միհրանը Լս, մասնակից լինելով այդ եղեռնագործությանը, Պարսկաստանից փախչում է Հոներին ապավինելու, բայց Պարտայի մոտ Խոսրովից մի նամակ է ստանում, մտածում իր կյանքի ապահովության մասին և Պարտայի մոտ կառուցում Միհրավան գյուղաքաղաքը, ապա ամուսնանում Վաչագան Գ-ի ազգից Վարդուհի անունով մի օրիորդի հետ: Միհրանը, այցելության պատրվակով, մի օր գնում է Գարդման[1] բերդը, դավաճանությամբ կոտորում Վաչագանյան տասներկու նախարարների, կորզում ավագ նախարարությունը և իշխում Աղվանաց վրա:

Ա. Միհրանից ծնվում և իշխում է
Բ. Արմայելը. Արմայելից
Գ. Վարդը. Վարդից

---

[1] Այս Գարդմանը գտնվում է Շամախու Գարդման դաշտի վերի ծայրում, որն այժմ կոչվում է «Կեավուր-Ղալա»: Այս մյուս Գարդմանի հետ շփոթելու չէ, որը գտնվում է Մռով սարի գագաթներում:

Դ. Քաջ Վարդանը, որն ընդունում է քրիստոնեական հա-վատը և մկրտվում Աղվանից Վիրոյ կաթողիկոսի ձեռքով և Կովկաս սարի տակ հիմնում մի ավան և իր անվամբ կոչում Վարդաշեն: Վարդանով կրկին շարունակվում է քրիստոնյա նախարարության շղթան:

Քրիստոնյա նախարարներ.

Ա. Քաջ Վարդանից ծնվում և նախագահում է

Բ. Վարդ Ա. Վարդից

Դ.Վարդ Բ., որից

Ե. Վարազ-Գրիգոր Բ., որից ծնվում են Վարազ-Պերոժը, Ջիվանշիրը, Յեզուտ-Խոսրովը և Վարազման: Բայց քանի որ Ջիվանշիրն ավելի ընդունակ էր կառավարչական իշխանու-թյուն ղեկավարելու գործում՝ հայրը մահից առաջ նրան է հանձ-նում նախագահության կեսը: Ջիվանշիրը ծաղկեցնում է և իր անվամբ «Ջիվանշիր» հորջորջում այն գավառը, որն այժմ կոչ-վում է Ջիվանշիր, Գյուլիստան և Թալիշ, սակայն նա վախճան-վում է անզավակ:

Զ. Ջիվանշիրին հաջորդում է իր եղբայր

Է. Վարազ-Պերոժը, որից ծնվում է և տեղակալում է

Ը. Վարազ-Տրդատը, որից

Թ. Վարդան Գ., որից

Ժ. Ներսեհ Դժնդակը, որն իր սաղավարտի վրա ուներ մի վարազաձև, ահարկու քանդակված պատկեր., որից

ԺԱ. Գագիկը, որից

ԺԲ.Ստեփանոսը, որ Վարազ-Տրդատի հետ սպանվում է Ներսեհ-Դժնդակից Դատի վանուց ձորում, ահա այս է «Դժն-դակ» կոչվելու պատճառը:

Գագիկի կինն ունենալով միայն Ապրամ անվամբ մի դուստր՝ գիշերով փախչում է Խաչենի բերդը (Կաչաղակաբերդ) և դստերն ամուսնացնում Բագրատունի Սմբատ իշխանի թո-ռան՝ Ատրներսեհի հետ:

Ինչպես սիսական նահապետական շղթան պատվաստվում է Արշակունյաց շղթայի օղակին Քաջ Վաչագան առաջինով, Արշակունի Վարդուհին Սասանեան օղակին՝ Միհրանով, այնպես էլ այդ օղակի շղթան, Ասպրամը պատվաստվում է Բագրատունյաց տոհմի օղակին՝ Ատրներսեհի հետ:

ԺԳ. Ատրներսեհը[1] կառուցում է Հանդաբերդը[2] և իր պալատը հաստատում Վերին Խաչենում ջերմուկների կողմում: Նրա անդրանիկը՝

ԺԴ. Գրիգոր Ա. կառուցում է Հավքախաղաց[3] բերդը և իր իշխանությունն ավելի զորացնում այդ անառիկ բերդով, որից ծնվում և հաջորդում է

ԺԵ. Սահակ-Սևադա, որ քաջ տղամարդ լինելով՝ տիրում է Գարդման, Քավսա և Փառնա գավառներին և սկսվում է տարածել սրանց մեջ գիր, դպրություն և ուսում: Սահակ-Սևադայից՝

ԺԶ. Գրիգոր Բ. որ նաև Գուշատակ էր կոչվում, որից

ԺԷ.Փիլիպոս, որից

ԺԸ. Սևադա Ա., իսկ սրանից Հովհաննեսը, որը Սենեքերիմ է կոչվում ևս: Վերջինս իր բնական հանճարով, ռազմագիտական տաղանդով և կառավարչական խորագիտությամբ, հա-

---

[1] Այս նախարարներից մի քանիսը կոչվում են թագավորներ, ինչպիսիք են Ջիվանշիրը, Ատրներսեհը, Սևադան և այլն: Թերևս, սույն Ատրներսեհի մասին է ասում Հովհաննես պատմաբան կաթողիկոսը, որ փախել է Արաբացիների Յուսուֆ ոստիկանի երեսից. «Փախյալ, հալածյալ շրջեցի քաղաքից քաղաք՝ կողմս Աղվանից մեծ իշխան Սմբատի և նրանց թագավոր Ատրներսեհի»: (Յով. Կաթ. Գլ. ԽԴ)

[2] Այս բերդը, որ գտնվում է Տաք Ջրերի կողմերում՝ չորս կողմից առանձնացած և խիտ բարձրացած, միակտուր ժայռի վրա է: Ունի միայն մի նեղ և դժվարատար մուտք: Այս միապաղաղ ժայռի գագաթը բավական ընդարձակ է և անմատչելի, որի մեջ կա մի խորանդունդ հոր: Տակավին նշմարվում են քարուկիր պարսպի բեկորները:

[3] Հանդաբերդի նման մի բերդ է, որ այժմ կոչվում է «Լաչին-Ղայա»: Գագաթի և գետնի միջև կա մի ահագին քարայր: Աթաբեկյանց բարեհամբավ Ասլան բեկը հետաքրքրությունից շարժված՝ վերից չուանով քարայրն է իջեցնում Գալուստ անվամբ հաթերքեցի մի մարդու, որը հայտնեց, թե հնուց մնացած շատ մեծ և դատարկ կարասներ կան քարայրում: Այդ կարասները պահված են պատերազմների համար ջրի պաշարներ պահելու նպատակով:

ջողվում է Պարսից կառավարության միջոցով ձեռք բերել Աղվանից թագավորությունը և թագը, որ վաղուց մեռել էր[1]:

Ա. Սենեքերիմ թագավորից ծնվում և իշխում է

Բ. Գրիգոր թագավորը[2], որով կրկին մեռնում է Աղվանից թագավորությունը: Գրիգոր թագավորից ծնվում են երեք որդիներ՝ Վախթանգ թագավորազնը, Սմբատ թագավորազնը և Վասակ թագավորազնը:

Իշխանաց և մելիքաց Ջալալյան տոհմը

Ա. Վախթանգ թագավորազնին[3] տեղակալում է իրեն անդրանիկ

Բ. Հասան Մեծը[4], որը ծնվել էր Քուրդ իշխանի Արզու դստերից. Հասան Մեծին տեղակալում է

---

1 Բեկնազարյանցը հետևել է Մովսես Կաղանկատուացուն, որի մեջ կարգով երևում են այս ազգահամարները: Հարկ չկա ասելու, որ Բեկնազարյանցն առանց այս փաստերը մեջ բերելու, չէր կարող օրինավոր ցույց տալ մելիքների ծագումն իբրեն հարազատ հետագաներ Աղվանից իշխողներին:

2 Իսկ Մատթեոս Ուրհայեցին գրում է 1085 թվականին: «Էին և այլ թագավորներ Հայոց և Դարբանդ աշխարհին…, որոնք անարատ և սրբակրոն թագավորներ էին, հիշատակի սուրբ պատարագ էին մատուցվում աստվածասեր թագավորներին, որոնց անուններին էին. Վաչագան և Գուշատակ որդի նեռին, Փիլիպե որդի Գուշատակի, Սևադա որդի Փիլիպեի, Սենեքերիմ որդի Սևադայի, Գրիգոր որդի Սենեքերիմի, որ դեռ կենդանի էր, մինչև գրեցի այս մատենագրությունը»: Թերևս արժանավորներն ընտրվել են և պատարագում հիշվել:

3 Կարևոր համարեցինք զետեղել ծանոթությանս մեջ մեր ձեռքում գտնված արձանագրություններից մի քանիսը, որոնք խիստ կարևոր են: «Շնորհիվ ամենակարող Աստծուն և Միածնի Որդուն, նրա Հիսուս Քրիստոսի և պարգևած ամենասուրբ Հոգուն, ես Արզու խաթուն աղախինը Քրիստոսի, դուստրը մեծ իշխանաց իշխանի Քրդին (Մարաստանից Հայաստան փախած, քրիստոնեության հավատը մկրտությամբ ընդունած, Բագրատունի թագավորական ցեղից մի օրիորդի հետ ամուսնացած, Արագածի հարավային ստորոտի Վարդենիս գյուղում բնակություն հաստատած և նախարարության աստիճան բարձրացած «Քուրդ» անվամբ մի իշխան) և ամուսին Վախթանգ թագավորազնի, տեառը Հաթերքի և Վերին Խաչենի, հուսով կառուցեցի սուրբ կաթողիկոսարանի դիմաց հանգստարան իմ անդրանիկ զավակի Հասանի և Գրիգորի, ով դեռահաս վախճանվեց…»1214: Դաղի վանքին կից հանգստարանի արձանագրությունն է:

4 Աստծո կամքով ես Հասան որդին Վախթանգի, տերը Հաթերքի և Հանդաբերդի, Խաչենի և Հավքախաղացի՝ շատ պատերազմներով հաղթեցի թշնամիներին Աստծո օգնությամբ և ունեցա վեց որդիներ, բերդ, գավառ, դրանից հետո եկա վանք(Դաղի) իմ եղբայր պարոն Տեր Գրիգորի մոտ…Շատ աշխատեցի և կանգնեցրի սուրբ նշանը (խաչքարը) հոգուս համար...» և այլն:

Գ. Վախթանգ Սակարը, որ ամուսնացած էր քուրդ Իշխանի[1] Սարգիս որդու Խորիշահ դստեր հետ.

Վախթանգ Սակարից ծնվում է

Դ. Ջալալ Դոլա Հասան[2], որն ամսուսնացել էր Մեծ Սյունիքի Տարսայիճ իշխանի Մամքան[3] դստեր հետ, որից ծնվում և հաջորդում է

Ե. Աթաբեկ Ա., որից

Զ. Պարոն Ջալալը, որից

Է. Աթաբեկ Բ-ն, որից

Ը. Այտին բեկը, սրա փոքր եղբայր

Թ. Աղբասան, որից

Ժ. Հատիր մելիքը, որից

ԺԱ. Մեհրամ բեկը, որից

ԺԲ. Ջալալ բեկը[4], որից

ԺԳ. Վելիջան բեկ Ա., որից

ԺԴ. Բաղդասար բեկը, որից

---

1 Այս Քուրդ իշխանին չի կարելի շփոթել մյուս Քուրդ իշխանի հետ, քանզի Վախթանգի թագավորազնի աներ Քրդից ծնվել են Վաչեն, Վաչեից՝ Հասանն ու Թայիրը և սրանցից սերվել են Հասանյան և Թայիրյան ազգատոհմերը: Իսկ Վախթանգ Սակարի աներ Քրդից առաջ եկել են Զաքարե և Իվանե սպասալարները: «Հավուրս թագավորության Լևոնի՝ Հայոց արքայի էին հարատևել երկու եղբայր, որդիք Սարգիս բարեպաշտ իշխանի, որդին Վահրամի, որդին Զաքարիայի, (որդին քրդի), որ հավատացյալ էին քրդերի: Առաջինի անունը Զաքարիա էր և երկրորդինը՝ Իվանե:

2 Հանուն ամենասուրբ Երրորդության…ես Աստծո ծառա, Ջալալ Պոլա հասան, որդի Վախթանգի, թոռը Մեծ Հասանի, բնակավոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհին, թագավոր հոգևասահման նահանգի: Իմ հայրը իր վախճանին անդարձ կտակով հաստատեց ինձ ու մորս `Խորիշահի, որ դուստր է մեծ իշխանաց իշխան Սարգսի, Գանձասարի եկեղեցու մոտ գերեզմանատուն կառուցել, որը սկսվեց 1216 թվականին՝ մեր բարերար Աստծո օգնությամբ: Դեպի արևելք ու Երուսաղեմ, լուսամուտի առջև չոքեց մայրս ու հանգավ Քրիստոսի լուսո վկայությամբ և այդտեղ թաղվեց: Ավարտումը եղավ 1238 թվականին: Մաչեղ և Հարչանտուս գյուղերում հոգացինք միաբան: Պատարագ տվեցինք հորս՝ Վախթանգի, մորս՝ Խորիշահի, եղբայրներիս՝ Զաքարեի, Իվանեի, պապուս՝ Հասանի, Մամքանին՝ իմ կենակցի: Կատարվեց օծում(1240)….Արձանագրություն Գանձասար վանքից:

3 «Ես՝ Մամքան քագուհի, ամուսինը՝ Ջալալ Դոլի և թոռը՝ Բաղուց թագավորի (Լիպարիտի), այսինքն/Մեծ/ Սյունիքի. կառուցեցի եկեղեցի Վաճառ գյուղում 1251 թվականին: (Տաթև վանքում `հարավային սյան վրա):

4 Ջալալ բեկը նա է, որ Մելիք Սուճումի և Մելիք Հայկազնի հետ Պարսկաստան գաղթեց Մեծ Շահ-Աբասի օրով, բայց վերադարձավ Խաչեն:

ԺԵ. Վելիջան բեկ Բ., որից
ԺԶ. Մյուլքի բեկը, որից
ԺԷ. Մելիք Գրիգոր, որին հաջորդում է փոքր եղբայրը
ԺԸ. Մելիք Ալլահվերդին.
ԺԹ. Մելիքբեկ Մելիք-Գրիգորյան
Ի. Դանիել բեկը, որից ծնվել է Բաղդասար վարդապետը[1]:

ԻԳ.

Գյուլիստանի մելիքների ծագումը.

Գրիգոր թագավորի Սմբատ որդին, քաջ տղամարդ լինելով՝ իր մեծ եղբայր Վախթանգ թագավորազնից սեփական ժառանգություն է ստանում Գեղարքունիքի ծովի կողմերը, հիմնում է Սոթ կամ Զոդ գյուղաքաղաքը և իր բնակությունը հաստատում այդ կողմերում:

Ա. Սմբատից ծնվում և յուրայիններին իշխում է
Բ. Վախթանգը[2], Վախթանգից՝
Գ. Հասան[3] Ա., Հասան Առաջինից՝
Դ. Ղարա Գրիգորը[4], Ղարա Գրիգորից

---

[1] Վելիջան բեկը հետո եպիսկոպոս, մետրապոլիտ և Արցախի առաջնորդ դարձավ և արդյունալի կյանքով, գործերով փոխվեց առ Աստված:

[2] «Աստծո կամքով ես՝ Վախթանգ, որդին՝ Սմբատի և ամուսինը՝Նանայի….Դադի վանքի և խաչի լի հույսով» և այլն:

[3] «Մամա թագուհի, ամուսինը՝ Հասանի, թոռը՝ Կիուրիկի (Լոռին թագավորող, ազգով Բագրատունի Կիուրիկե թագավոր) թագավորի ավագությամբ ես և այր իմ… 631թ. Դադի վանքում կանգնեցրինք խաչս:

[4] «Դոփ բարեպաշտուհի, դուստր Սարգսի իշխանաց իշխանի, սա ուներ ամուսին, բարեպաշտ իշխան Ղարա Գրիգորը և որդի՝ քաջ և հաղթող զորավար և մեծ իշխան Հասանը՝ տերը Ականայի, Հանդաբերդի, Սոթեի, Շաղվաքու և այլ բազում գավառների: Եվ առավել սիրում էր Ծար գյուղը, հայրենիքը և պարգևները: Սա ուներ կին՝ Մամքան, դուստրը քրդին և որդին բարի Գրիգորի և ամուսինն իր Ասփա դուստր կոմսի Տարասայիճի, իշխեցողի Սյունաց և բազում փարթամացույց…Դադի և Խաթրի վանք: Որդի Գրիգորի Վահրամ, սրա որդի Սարգիսը, սրա որդի Հասանը: Եվ այս Հասանի Դոփա ցեղը, որոնք են. Շահանշեն Ուլուբեկանց պապ. Աղբուբեն Այտինցուց պապ. Ջհանշեն Ջհանշենցուց պապ: Որդի Հասանի Աղբոդեն և որդի սրա

Ե. Հասան Բ. որ կոչվում է և Քաջ Հասան, որից

Զ. Գրիգոր Բ. Իշխան[1], որից

Է. Վահրամը, որից

Ը. Սարգիսը, որից

Թ. Հասան Գ., որից ծնվում են երեք որդիներ, Շահնաշեն, Աղբուղեն և Ջհանշեն, որոնք դառնում են մի մի ազգատոհմի իշխաններ:

Ա. Աղբուղեն, որից

Բ. Տուրսունը, որից

Գ. Այտինը: Սա գնում է Ջհան Շահի մոտ, երեք տարի մնում Թավրիզում և Պարսկաստանում, ուր ոչ միայն հաջողում է ձեռք բերել վանքերը, վանքապատկան կալվածքները և իր ազգի սեփականություններն ազատող հրովարտակներ՝ այլև ստանում է յուզբաշության տիտղոս, այսինքն՝ առանձին զորք պահելու իրավունք և 1455 թվականին վերադառնում հայրենիք:

Եվ որովհետև այդ ժամանակներում Օսմանցիք զորանալով տիրել էին Կոստանդնուպոլսին ու նրա շրջակայքին և մտադիր էին հետզհետե ընդարձակել իրենց տերության սահմանները՝ Ջհան Շահը Արարատյան նահանգում և Աղվանից երկրում որոշում է ստեղծել մի նոր «Մելիք» և «Յուզբաշի» անվամբ իշխանություն, որպիսին կար Հագարացուց մեջ: Ջհան Շահը, իր տերությունը և երկիրը պահպանելու և իր ուժն Օսմանցիների և Հագարացիների դեմ ամրապնդելու հեռատեսությամբ՝ տեղական հայ իշխաններին և իշխանազուններին անվանում է «Մելիք» և «Յուզբաշի»: Արարատյան նահանգում, Մեծ և Փոքր Սյունիքում հաստատում է «Մելիք» տիտղոսը, իսկ Շամախու և Նուխու ու այլ գավառներում՝ «Յուզբաշի» տիտղոսը: Վավերական հրովարտակներով, որդուց որդի հաստատում է մելիքությունը, յուզբաշությունն՝ իբրև ժառանգական նախկին իշխանական սահմանների վրա:

---

1 Սույն իշխանի մասին է գրում Կիրակոս պատմագիրը. «Ապա սկսան երթալ առ նա (առ Սարթախ ղանն Թաթարաց) ամենայն թագաւորք և թագաւորազունք և իշխանք... որք զրկեալ էին ի հայրենեյաց իւրեանց... և նա տայ զիւրաքանչիւր զգաւառս, և զհայրենիս և զիշխանութիւնս... ընդ որս էին մեծ իշխանն Խաչենոյ Ջալալ... և իշխանն Գրիգոր, որ ծեր էր յայնժամ. և... (տայ) զհայրենիս, զոր հանեալ էին ազգն Թուրքաց և Վրացւոց»:

Մեծ և Փոքր Սյունաց «Իշխանությունը» տեղի է տալիս «Մելիքության» և «Յուզբաշության[1] 1458 թվականին, Ջհան Շահի կարգադրությամբ, ինչպես և ուրիշ տեղերում:

Այտին Յուզբաշին իր դիվանագետ, ուժեղ, սրտոտ և հաստատակամ հատկություններով ինչպես սիրելի է եղել Ջհան Շահին, նույնպես էլ սիրելի է եղել և նրա որդի Հասան Ալի խանին, որն իբրև փոխարքա էր Նախիջևանում: Այտին յուզբաշին, որպես պապենական սեփականություն Շահից ժառանգություն ստանալով Նիժ և Սոլթան Նուխի ավանները՝ իր ընտանիքի հետ փոխադրվում է Նիժ, Շահի և փոխարքայի վավերաթղթերով:

Ժողովուրդը մեծ սիրով ընդունում է իր նորընտիր յուզբաշուն, համախմբվում սրա շուրջը, ճանաչելով և հարգելով նրան որպես իր կառավարչի՝ թագավորների թագավորազուն ցեղից: Այտին յուզբաշին իր պաշտոնը կատարում է ամենայն արժանապատվությամբ:

Ա. Այտին յուզբաշուց ծնվում և հաջորդում է

Բ. Ղարա Հասան յուզբաշին, որից

Գ. Վարդան յուզբաշին, որ ընդարձակում է իր սահմանն իր թրի ուժով, որից

Դ. Դավիթ յուզբաշին, որ Մելիք-Սուճումի հետ գնում է Պարսկաստան և կրկին հետ դառնում, որից

Ե. Աբով յուզբաշին, որ Սև Աբով է կոչվում նաև: Սա իսպառ գզված Ջալալիների[2] ավերմունքներից՝ Ջալալյան Մելիք-

---

[1] Մելիքների և Յուզբաշիների աստիճանները, իրավունքները և իշխանությունները տարբեր են: Մելիքը իշխում էր մի ամբողջ գավառի վրա՝ իբրև իր պապենական սեփականության վրա և ունենում է իր սեփական զորքը, դրոշակը, հարյուրապետը, հազարապետները, ժողովուրդը և որոշյալ գլխահարկը և իր հատուկ զորավարը: Իսկ յուզբաշին, մելիքի իշխանության տակ՝ ուներ իր նեղ շրջանը, այն է՝ իշխում էր երկու, երեք, կամ ավելի գյուղերի վրա, պահում էր չափով զորք, դրոշակ և ինքն էլ զորավար էր:
Մելիքությունն Արցախում ապրել է 1458-1830 թվականներին և ապա մեռել…:

[2] Ջալալիներն Օսմանյան կառավարությունից ապստամբած ելուզակներ էին, որոնք 1000-10000 և ավելի մարդկանցով հարձակվում և քարուքանդ էին անում մանավանդ Հայաստանը, որի մասին գրել է Առաքել պատմագիրը. «Կոտանդնապոլսի մերձակայքից մինչև Երևան քաղաքը, Բաղդատայից մինչև Դամուր, Ղափուն…ավեր և ապականություն դարձրին»:

ների խորհրդով թողնում է Նիժը և իր հիսուն տուն-ազգական-ներով 1600 թվականին տեղափոխվում Ջիվանշիր գավառը: Ա-բով յուզբաշին քիչ ժամանակում փայլում է քաջությամբ: Ջա-լալյանների օժանդակությամբ նորոգում է Ջիվանշիր իշխանի Ջիվանշիր և Հոռեկայ բերդերը և շրջապատում գավառը հայ հասարակությամբ: Ապա հաջողում է ձեռք բերել մելիքություն և կոչվում է

Ա. Մելիք-Աբով Ա.: Սա Ջիվանշիր բերդում կառուցում է մի բուրաստան, որի սքանչելի և հոտավետ վարդերից ծագում է Գյուլիստան անունը: Մելիք Աբով Ա-ից ծնվում և հաջորդում է

Բ. Մելիք Բեգլար Ա., որից

Գ. Մելիք Աբով Բ., որը Կաղ Աբով է կոչվում նաև: Սա առևանգում է Գանձակի Մեմեթ-խանի Ղամար դստերը, մկրտել տալիս և սրա հետ ամուսնանում օրինավոր ամուսնությամբ: Ա-պա հաջորդում է

Դ. Մելիք Թամրազը, Մելիք Աբով Բ-ի եղբայրը, քանզի մելիքի ժառանգ Հովսեփը տակավին անչափահաս է լինում:

Ե. Մելիք Հովսեփ, որդի Մելիք-Աբով Բ-ի, որից

Զ. Մելիք Բեգլար Բ., որից հետո սրա եղբայր

Է. Մելիք Աբով Գ.

Ը. Մելիք Փրեյտուն Մելիք-Բեգլար երկրորդ:

ԻԵ.

Մելիք-Շահնազարյանների ծագումը.

Մելիք-Շահնազարյանները սերվել են Ղարա Գրիգորի սե-ռունդներից, Հասան Գ-ի Շահանշե որդուց, որ բնակվում էր Սո-թե կողմերում:

Ա. Շահանշե, որից

Բ. Ուլու բեկը, որից

Գ. Հախնազարը, որից

Դ. Աբովը. որից

Ե. Միրզան, որ Ջհան Շահից[1] մելիքության հրովարտակ ստանալով կոչվում է Մելիք-Միրզա: Սա պատերազմներում ելել է քաջահաղթ, անաչառ՝ դատերում և արդար վճիռ կայացնելու համար կոչվել է «Արդար Մելիք-Միրզա»:

Ա. Արդար Մելիք-Միրզայից ծնվում է և հաջորդում է

Բ. Մելիք-Բեկ Ա., որից

Գ. Մելիք-Բալասան, որից

Դ. Մելիք-Բեկ Բ[2], որն իր ապարանքը Սոթից փոխադրում է Մազրա, որ երկու մղոն հեռու է Սոթից[3]:

Մելիք-բեկ Բ-ից ծնվում և հաջորդում է

Ե. Պարոն Մելիք-Շահնազար[4] Ա., որին հյուր գալով Մեծ

---

[1] Սա արաբների պատմության մեջ կոչվում է «Ջահան Ամիրա, Ջահան Փաթիշահ»: Ըստ արաբական կարծիքի, Ջահան փաթիշահը Մահմետ Ս. մարգարեի ցեղիցն էր, «Ջահան Ամիրա» տիտղոսով զորացավ, Արաբիայից արշավեց Պարսկաստան, կոտորեց Լենկ Թեմուրի հաջորդ գահակալին ու նրա սերնդին և իրեն հրապարակեց ամբողջ Պարսկաստանի վրա «Ջահան փաթիշահ» (Տիեզերակալ կայսր): Իսկ ոմանք ասում են, թե ազգով «թաթար էր»:

[2] «Կանգնեցաւ սուրբ խաչս (խաչքար) բարեխօս հարազատ մեծ իշխանին Մելիք Բեկի և Հախնազարին, յամի նեղութեան Շահ Թահմազին սա փոխեցաւ առ Քրիստոս»: (Մազրա գյուղի եկեղեցու մոտ):

[3] Մեր նախնիները պատմությունը պահպանելու համար, որոշել են կառուցել խաչքարեր, մահարձաններ, վանքեր, եկեղեցիներ, մանավանդ Մեծ և Փոքր Սյունիքում: Դրանք ոչ միայն ջերմեռանդ բարեպաշտության արտաքին նշաններ են, այլ նաև խոսուն քարեր և անմահ պատմաբաններ: Սույն ծերունի, պատմական քարերը պատմում են իրենց այցելուների դարավոր անցյալի պատմությունը, մատնանիշ են անում մի ազգատոհմի, մի գերդաստանի անունները, նահապետ իշխանի գործերը, ժամանակի բռնակալների անգթությունները, հալածանքները և այլն: Մասնավորապես Սոթեի, Մազրայի, Խոթի ու Գանձասարի խաչքարերը շիրմաքարերը և արձանագրություններն են, ինչպես տեսանք և տեսնելու ենք: Այդ ալեոր քարերը փարատում են պատմագիրների տարակուսությունները, հնախույզների վարանմունքը և լուծում են պատմական շփոթությունները:

[4] «Այս է հանգիստը Պարոն Մելիք-Շահնազարի(Առաջին), որ տեր և իշխան Գեղամա երկրի, մեծաշուք և աստվածասեր իշխան էր նա, բարվոք ծերությամբ փոխվեց առ Քրիստոս, թագավորությամբ Շահ Աբասի, 1606 թվին»: (Մազրայի հանգստարանում):

«Աստծո կամքով մենք հինգ եղբայրներս, ես՝ Պարոն Մելիք Շահնազարս, Մայիլ բեկը, Տաթլու բեկը, Միրզա բեկը, Մելքոն բեկը. մայրը մեր՝ Խանումը: Կանգնեցված է խաչ բարեխոս մեր հոր՝Մելիք բեկին»: «Այս է հանգիստը պարոն Եավրի բեկի, որդի Պարոն Մելիք Շահնազարի/Ա/ անողորմ մահվամբ փոխվեց»:

Սույն արձանագրությունից պարզ երևում է, որ մելիքները կրել են իրենց բուն անունների հետ «Իշխան», «Հարազատ», «Մելիք», «Պարոն» պատվանունները ևս, իսկ իրենց եղբայրները և որդիները՝ «Բեկ»:

Շահ-Աբասը ոչ միայն պատվի է արժանանում է այդ գերդաստանի կողմից, այլև կրկին հրովարտակով[1] որդոց որդի հաստատում է մելիքությունն այդ իշխանազն սերնդի մեջ և շնորհակալությամբ մեկնում Մազրայից: Մելիք-Շահնազար Ա. որդի չթողնելով՝ հաջորդում է սրա եղբայրը

Զ.Է. Մելիք-Միրզա-Բեկ Բ., որից ծնվում և հաջորդում է Մելիք-Բաղին: 1638 թվականին թաթարները Թաթար-խանի առաջնորդությամբ հեղեղի նման ողողում և ապականում են Արարատյան երկիրը[2]: Բայց այդ հրոսակները բուն Արարատյան երկիրն ավերելու չէին եկել, այլ Օսմացիներից օգնություն խնդրելու, որոնք այդ ժամանակ Պարսկաստանի հետ պատերազմ ունեին Բաբելոնի դեմ: Սակայն որովհետև Արարատյան երկիրը պատկանում էր Պարսկաստանին՝ ավերեցին, քանդեցին և հետո հեռացան: Բ. Մելիք-Միրզաբեկյան Մելիք-Բաղին չկարողացավ այլևս համբերել այդ ավերները՝ Ջալալյան իշխանների խորհրդով 1638 թվականին Մազրայից տեղափոխվում է Վարանդայի Ավետարանոց գյուղն իր գերդաստանով հանդերձ և բնակություն հաստատեց Ավետարանոցում[3]:

Մելիք-Բաղին իր հետ Արցախ բերած ժողովրդի մի մասին զետեղում է Շոշ գյուղում, մի մասը՝ Ավետարանոցում, իսկ մնացած մասը բաժանում է մի քանի գյուղերի վրա Ջալալյանների խորհրդով, ամեն մի գյուղի տասն ընտանիք կցելով, իսկ բոլոր մելիքազուններն Ավետարանոցում է զետեղում:

---

[1] Եթե հնարավոր լիներ մի վայրում հավաքել շահերից մելիքներին և Աղվանից կաթողիկոսներին տրված հրովարտակների ճիշտ թարգմանությունները և առանձին գիրք ստեղծելէ՝ երևելի գործ կլիներ:

[2] «Թվին 1638…Սուլթան Մուրադը գնաց Բաղդադի վրա պատերազմելու.. և …առավ Բաղդադ քաղաքը: Դարձյալ սույն թվականին թաթարներն եկել են երկիր Արարատ»:

[3] Այս գյուղը և բերդն Ավետարանոց է կոչվում, իսկ թուրքերեն՝ «Չանախչի»: Իբրև թե Ավետարանոց կոչվելու պատճառն այն է, որ Վաչագան Գ., որն առերես ուրացել էր քրիստոնեական հավատը, հետո զղջալով՝ առել Քրիստոսի ավետարանը, այստեղ երկար ճգնել և ապաշխարհել, դրա համար Ավետարանոց կոչվեց և գյուղը, և բերդը: Բայց սա ստուգելու կարիք ունի:
Չանախչի կոչվելու պատճառն է՝ այս գյուղի հին ժողովուրդն մեծմասամբ խառատ են եղել և բրուտ, որոնք փայտյա և կավե ամաններ էին պատրաստում:

Մելիք-Բաղին թե իրեն, և թե իրեն հանձնված ժողովրդին շրջապատող թշնամիների հարձակումներից զերծ պահելու հեռատեսությամբ՝ Վարանդայի բնիկ ժողովրդի օժանդակությամբ նորոգում է Ավետարանոց բերդը և և իր ապարանքը հաստատում այդ բերդում:

Ը. Մելիք-Բաղուց[1] ծնվում և հաջորդում է Մելիք-Շահնազար[2] Բ., որ քաջամարտի և արդարադատ է անվանվում, որովհետև նա Արցախից խպառ հալածել է կովկասցիներին, որոնք շարունակ արշավում էին Փոքր Սյունիքի վրա, և արդարադատ է եղել վճիռ հաստատելում:

Մելիք-Շահնազար Բ-ից ծնվում և հաջորդում է

Թ. Մելիք-Հյուսեյն[3] կամ Հյուսեյն Ա., որ հաղթող է ասվում ևս, քանի որ նա կոտորել է շատ օսմանցի զորքերի: Սրանից ծնվում են երեք հարազատ եղբայրներ՝ Միրզա-բեկ, Հովսեփ-բեկ և Շահնազար-բեկ:

---

[1] «Այս է տապանը Մելիք Բաղու, որդի Մելիք Միրզաբեկի,թվ.1644 նոյեմբեր»: «Սուրբ խաչը հիշատակ է Մելիք Բաղուն և իր կողակից Մարիամին ի դուռն Ամարասի(այժմ Ավետարանոց)թվին Հայոց 1661»:

[2] «Աստծո զորությամբ շինվեց սուրբ եկեղեցի (Հիրհեր գյուղի) դառն ու նեղ ժամանակին: Եկած երկիրն Աղվանից և ավերված բազում տեղից, թագավորության Շահ Սուլեյմանի (Շահ-Սեֆի Բ. որդի Շահ-Աբաս Բ-ի) իշխանության երկրի Վարանդայի Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին (Բ-ին) և օժանդակությամբ Օվաննեսի …1673 թվին»:

Ընթերցողներին թողնելով «Դաղտնիք Ղարաբաղի» և «Խամս.Մելիքության» մեջ եղած տարբերությունները՝ միայն կամենում ենք հիշեցնել ընթերցողներին մի քանի սխալներ անձնավորությունների և ժամանակի նկատմամբ: Մելիք-Բաղին Մելիք-Միրզա-բեկ Բ-ի որդին է, և ոչ թե Առաջինը: Մելիք-Բաղին տեղափոխվեց 1638-ին, և ոչ թե 1682-ին, որն այդ ժամանակ արդեն վախճանված էր: Մելիք-Հյուսեյն Ա-ն Մելիք-Շահնազար Բ-ի որդին է և ոչ թե Առաջինը:

[3] «Այս է տապան Մելիք Շահնազարի (Բ-ի) ւրդի Մելիք Յուսէինին (Առաջնոյն) թվին ՌԵՁԵ (1736):
«Ոգեմ բանս գովեստի ի վերայ Մելնք Յուսէինի,
Զոր գրեցի յայս տապանի: Սա էր տէր երկրին Վարանդի,
Երեսուն և հինգ մասն գեղի. սա էր հացով, սեղանով լի,
Ողորմէր ամեն ազգի, կերպարանօք էր գովելի:
Սա ո՛չ ետ հարկ թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի.
Թագ և պարծանք Հայոց ազգի. պատերազմեաց հետ Օսմանցի.
Յոյժ կոտորեաց ազգէն Տաճկի»:

Ժ. Մելիք-Հյուսեյնին հաջորդում է Մելիք-Միրզաբեկ Գ-ն, իր հոր անդրանիկը, որ սակավակյաց էր և կոչվում: Մելիք-Միրզաբեկ Գ.-ն, կամենալով իր հոր Մելիք-Հյուսեյն Առաջինի օրինակին հետևել և հարկ չվճարել Պարսկաստանին, գլխատվում է Նադիր Շահի հրամանով, հետո տեղակալում է

ԺԱ.Մելիք-Հովսեփ սակավակյացը, գլխատվածի եղբայրը, Նադիր-Շահի վավերական հրովարտակով: Շատ չանցած Մելիք-Հովսեփը գլխատվում է կամ, ըստ ուրիշների, սպանվում Աբելի նման իր հարազատ եղբորից, Շահնազար-բեկից: Այս պատճառով ժողովուրդը նրա վրա դրոշմել է «Դահիճ Մելիք-Շահնազար» անունը:

ԺԲ. Նահատակ Մելիք-Հովսեփին տեղակալում է Մելիք-Շահնազար Գ[1]:

ԺԳ. Ապա տեղակալում է Մելիք-Հյուսեյն Բ. սակավակյացը, որը ծնվել էր Մելիք-Շահնազար Գ-ի ապօրինի կնոջից, սպանվում է Մելիք-Շահնազար Գ-ի օրինավոր ամուսնուց ծնված Ջումշուդ-բեկից:

ԺԴ. Մելիք-Ջումշուդը Մելիք-Շահնազար Գ-ի հարազատ որդին է:

ԻԶ.

Դիզակի մելիքության ծագումը

Մենք արդեն իմացանք, որ Ջալալյանները, Աբովյանները և Շահնազարյանները ծագել են Գրիգոր թագավորի երկու որդիներից՝ Վախթանգ արքայազնից և Սմբատ արքայազնից:

Իմացանք նաև, որ ամբողջ Փոքր Սյունիքի իշխանները Գրիգոր թագավորի երեք հարազատ որդիներն էին: Այժմ պարզենք, թե որտեղ մնաց Գրիգոր թագավորի կրտսեր որդի Վասակ արքայազնը և թե ովքեր էին Դիզակի և Վարանդայի նախ-

---

1 Սխալվել է Մակար Վ.Բարխուդարյանցը Մելիք-Շահնազար Գ-ի զվարճաբան Պըլը-Պուղուն հատկացնելով Մելիք-Շահնազար Բ-ին:

կին իշխանները:

Վասակ արքայազնը, որպես ժառանգության սեփական բաժին, իր եղբայրներից ստանում է Դիզակ և Վարանդա գավառները: Այն իր մեջ ընդգրկում է՝ Դող բերդը, Ավետարանոց բերդը, Սպիտակ բերդը՝ Հադրութ գյուղաքաղաքի մոտ և Դիզակ բերդը: Եվ հենց վերջինիս մեջ էլ նա սկսում է բնակվել: Նա շատ էր սիրում այդ բերդը, քանի որ իր հայրն էր կառուցել: Բացի այդ էլ, այդտեղի օդի մաքրությունը, դրսի գեղեցկությունը, ժամանակի խռովախույզ ոգին և բերդի անառիկ ամրությունն աննման էին:

Վասակ արքայազնը, իր սեփական գավառը բերդերով և ժողովուրդը իր հատուկ զորքով ու զորավարով ապահովելուց հետո, կամենում է ունենալ իր ազգի տոհմական հատուկ գերեզմանատունը, ինչպիսիք ունեին Վախթանգյանները և Սմբատյանները: Բայց Վասակ արքայազնը վաղաժամ զրկվում է կյանքից և նրա ժողովուրդն ու գերդաստանը պարուրվում են անմխիթար սգով: Նրա հետնորդներից Սարգիս և Վարդան վարդապետերը հիմնում են Գտիչ անունով վանքը: Վանքը կարմիր տաշած քարից էր և համարվում էր եպիսկոպոսարան: Շրջապատում կառուցում են գեղեցիկ կացարաններ: Վանքի տեղն ու դիրքը շատ նման էր Գանձասարի վանքին: Եվ քանի որ Ամարասը համարվում էր կաթողիկոսարան, այդ իսկ պատճառով հիմնում են այդ առանձին վանքը:

Իսկ ոմանք, որոշ ժամանակ անց, հիմնում են Սպիտակ Խաչ անունով վանքը՝ Հադրութ գյուղաքաղաքի մոտ: Ժողովրդի խնդրանքով և կաթողիկոսի թույլտվությամբ եպիսկոպոսարանն Ամարասից տեղափոխվում է Սպիտակ Խաչ: Սա այն խաչն է, որն ըստ ավանդության, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, կախել է Աղվանքի Գրիգորիս կաթողիկոսի վզից: Գրիգորիս կաթողիկոսի մահից և Ամարասում թաղելուց հետո, այդ խաչը ևս բերում են Ամարաս, որտեղ էլ մնում է: Այս վանքը եպիսկոպոսարան դարձնելու համար, հասարակության խնդրանքներից ելնելով՝ հուշագրով հաստատում են Աղվանքի Ներսես Գ, Հովհաննես Թ, Սիմեոն Դ, Երեմիա Բ և Եսայի Ա

կաթողիկոսներին հաջորդող եպիսկոպոսները առաջնորդ նշանակելով[1]*:*

Որոշ ժամանակ հետո մելիքները Ծովատեղ գյուղի մոտ Ավետարանչաց անվանմամբ «Քառախորան» գերեզմանոց են կառուցում, որտեղ էլ թաղված են նախկին մելիքների մարմինները: Բայց այս Քառախորանի գլուխը Մելիք Շահնազար Գ-ն քանդել[2] *տվեց Ջալալյանների դեմ տածած թշնամանքի պատճառով:*

Հորից որդի իշխաններ

Ա) Վասակ արքայազն
Բ) Վախթանգ
Գ) Ավան
Դ) Ջաբրայել[3]
Ե) Աբաս
Զ) Իշխան [4]
Է) Բարխուդար
Ը) Ջալալ
Թ) Խումար[5]
Ժ) Վելիջան

---

[1] Սպիտակ Խաչը մինչև 1808 թվականներն մնում էր Սպիտակ Խաչ վանքում, որին ուխտի էին գալիս ոչ միայն հայ, այլև պարսիկ և թուրք ուխտավորներ: Վանքի վերևի մասում կար մի արձանագրություն, որ վերաբերվում էր զանգակատանը, որն ավելի վաղ է կառուցվել քան հենց վանքը: Զանգակատունը կառուցվել է 1735 թվականին: Դա այն երբ Թահմազ խանը, ի հիշատակ Սուրաբի որդի Հովհաննես եպիսկոպոսի կանգնեցնում է այդ զանգակատունը: Վերջին կաթողիկոսներին տրված հուշագրերից դեռ մնում են վանքում:

[2] Քառախորանի ավերակները դեռ նշմարվում են:

[3] Կարող է հենց նրա անունով է անվանակոչվել «Ջաբրաիլ» գավառը:

[4] «Ես Աբասի որդի Իշխանս կանգնեցի զխաչս ի փրկութիւն որդւոյ իմոյ Բարխուտարայ... թվին ՉՂԵ» (1246):

[5] «Ես Խումարս, որդի Ջալալին կանգնեցի զխաչս ի փրկութիւն որդւոյ իմոյ Վէլիջանին... թվին ՋԻԷ» (1478):

Մելիքներ

Ա) Մելիք- Պապի

Բ) Մելիք-Աղամ[1]

Գ) Մելիք-Փաշա կամ Փաշիկ[2]

Դ) Մելիք-Սուճում[3]

Ե)Մելիք-Ավան Ա-ն, չկարողանալով դիմադրել Ջալալի-ների ավազակազորքի անընդհատ հարձակումներին և ավե-ումներին՝ 1607 թվականին հիսուն հայ ընտանիքով Դիզակից գաղթում է Վրաստան: Վրացական կառավարությունից բնա-կության տեղ է շնորհվում Մելիքին, Արտու գյուղում, այն պայ-մանով, որ Մելիք-Ավանը տարեկան մի քիչ հարկ վճարեր Վրաստանի թագավորական գանձարանին, օգներ պատերազմի ժամանակ, և իր բոլոր մելիքական իրավունքներով իշխեր իր հետ բերած ժողովրդին:

Մելիք-Ավանի խոհեմ, ազնիվ, քաջ և արդար հատկանիշ-ներն ինքնին գրավում էին շրջակա գյուղերի հայ ժողովրդի ու-շադրությունը: Հետզհետե ավելանում է Մելիքի ժողովրդի թի-վը և նա Լորի գյուղաքաղաքում կալվածքներ է ստանում: Մե-լիք-Ավան Ա (1)-ն վախճանվում է, թողնելով բարի համբավ և ե-րեք որդի՝ Բախտամ-բեկ, Սուճում-բեկ և Դավիթ-բեկ:

Զ) Մելիք-Բախտամ Ա (1)-ն հաջորդում է իր հորը, իսկ Սուճում-բեկը և Դավիթ-բեկը ՌՂԷ (1648) թվականին Վրաց-պարսկական պատերազմում սպանվում են Կախեթում Վրաց

---

[1] «Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մելիք Աղամ որդի Մելիք Պապին, որդ-ւոյ Նախիջանայ (՞), թոռանց որդւոյն Թոմասին, որդւոյ մեծ իշխանին Աւա-նայ, կանգնեցաք զխաչս ի փրկութիոն նախնեաց մերոց... թվին ՌԺԵ» (1566):

[2] «Ի հայրապետութեան Յովհաննիսի, յառաջնորդութեան (իշխանութեան) Մելիք Փաշա խանին (հայ է և սորա յետագայներից կան այժմ) ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս... թվին ՌԻԵ» (1576): (Ծովատեղի քառախո-րանում):

[3] Նա Մելիք Հայկազի հետ գաղթեց Պարսկաստան, բայց հետո վերադարձավ Արցախ: (Առաք. պատմ. գլուխ Գ-):

Թահմազ թագավորի թագաժառանգ Դավիթ որդու հետ:

Մելիք-Բախտամ Ա-ի որդի Ղուկասը, հակառակ իր հոր կամքի, ձեռնադրվում է որպես քահանա: Շատ չանցած մահանում է նրա կինը և նա գնում է Սանահին, ստանում է վեղար, և ճգնավորի կյանք վարում:

Մելիք-Բախտամ Ա-ն վախճանվում է և նրան փոխարինում է

Է) Մելիք-Ավան Բ-ն՝ Ղուկաս վարդապետի որդին, որ ծայրաստիճան վշտացած լինելով վրացիների նախանձության և կալվածատիրական կռիվների պատճառով՝ 1716 թվականի աշնանն ընտանիքի և ժողովրդի հետ վերադառնում է Դիզակ և նորից ժառանգում այդ երկիրը: Մելիքը բնակություն է հաստատում Դող ավանում, իսկ նրա հայր Ղուկաս վարդապետն Աղվանքի կաթողիկոսին վանահայր է նշանակում Գտիչ վանքում: Նորոգում է վանքի կաթողիկեն և կացարանները:

Մելիք-Ավանը կազմակերպում է իր գավառի ներքին ուժերը: Ժողովուրդը միանգամից հալածում է Արաքսի աջ ափից ճախն անցնող ասպատակ մահմեդականներին: Իր քաջությամբ սարսափ է տարածում շրջակա թշնամիների վրա: Վարանդայի և Դիզակի ժողովուրդը ապահովվում է արտաքին հարձակումներից: Մելիք Ավանն Արցախի բոլոր մելիքների, իշխանների և Էջմիածնի Աբրահամ Գ (3) Կրետացի կաթողիկոսի հետ 1736 թվականին Մուղանի դաշտում ներկա է դառնում Նադիր Շահի թագադրությանը: Շահը շատ է սիրում Մելիք-Ավանին, նա անգամ Շահից ստանում է «Եղբորորդի» կոչումը և «Մելիք-Ավան-խան» տիտղոսը: Մելիք-Ավան-խանին հաջորդում է իր որդին:

Ը) Մելիք-Արամը[1]*, Շահը նրան նույնպես սիրում էր: Մե-*

---

[1] «Այս է տապան քաջազօր իշխան Մելիք Եգանին - (Մելիք-Աւան-խանի) որդի Պարոն Մելիք Արամին, ւր շատ սիրական էր Նատիր Շահին, յառաջ վախճանեցաւ հայր սորին, ւր շաբաթ ուներ Նատիր Շահին. Մելիք եղաւ այս մուհալին (գավառին)»:

լիք-Արամին հաջորդում է իր կրտսեր եղբայր

Թ) Մելիք-Սային կամ Եսային[1]: Նա իր նախնիներից ա-վելի քաջ էր և կարողացավ սարսափ տարածել ոչ միայն շրջա-կայքի արտաքին թշնամիների վրա, այլև՝ ճըռ- խաների, ճըռ-մելիքների, ճըռ-բեկերի վրա, մանավանդ Մելիք-Շահնազար Գ-ի վրա: Նրանից հետո մելիքական գահը ժառանգում է

Ժ) Մելիք-Բախտամ Բ (2)-ն, ով այժմ դժբախտաբար տանջվում է Արտավիլի բերդում: Իսկ նրա ժառանգը՝ Աբաս - բեկն էր:

ԻԷ.

Զրաբերդի մելիքության ծագումը

Մելիք Հայկազը 1586 թվականին Քշտաղի Խնածախից գաղթում է Պարսկաստան: Նրա անդրանիկ որդին՝ Հայկ բեկը, չցանկանալով հեռանալ իր հայրենիքից և ժողովրդից, մնում է Խնածախում և ժողովրդի ընտրությամբ կառավարիչ նշանակ-վում: Քիչ ժամանակ անց Հայկ բեկը Շահ Աբասից ստանում է իր մելիքությունը հաստատող հրամանը և ստանձնում է իշխա-նության ղեկը:

Ա)Մելիք Հայկն իր հնազանդությամբ, անվեհեր քաջասր-տությամբ, դյուցազնական ուժով, անվեհեր քաջասրտությամբ և աննկուն հաստատակամությամբ ոչ միայն սարսափ է առա-ջացնում արտաքին, ավերիչ թշնամիների վրա, այլ նաև վայե-լում էր ժողովրդի համակրանքը: Նա կրկնապատկում է իր կա-նոնավոր զորքը, բարեկամական հարաբերություններ է հաստա-

---

[1] «Այս է տապան մեծ իշխանին, Սայի անուն մեծ Մելիքին. Կարգեալ իշխան Նատիր Շահին, լգ (33) ամ տիրեաց Տիզակ երկրին. Արար բազում քաջու-թիւն և յաղթութիւն: Ընդ անօրինաց էր հակառակ. Իսուր մաշէր զթշնամին: Ինքն պարթև և զօրաւոր. Քան զառաջինսն էր ահաւոր. Մինչ վաթսուն և վեց ամաց եէեալ. Ի յաշխարհէս վերափոխեալ: Վախճանեցաւ թվին ՌՄԼ (1781):

տում սահմանակից իշխանների հետ, Խաչենի Ջալալ բեկի, Դիզակի և Վարանդայի Մելիք-Սուճումի, Գեղարքունիքի Մելիք-Շահնազար Ա-ի և Նախիջևանի Ամիրգունա[1] խանի հետ:

Մելիք Հայկը, խորհրդակցելով Մեծ Սյունյաց մելիքների հետ, ամբողջ հայկական զորքը բաժանում է վեց զորագնդի: Մեծ Սյունիքը թշնամական հարձակումներից ազատ և անկախ պահելու հեռատեսությամբ՝ առաջին զորագունդը սահմանապահ է նշանակում այն կիրճում, որը բաժանում է Նախիջևանի սահմանը Մեծ Սյունիքից, երկրորդը դրեց Ղազանչու սահմանակիրճում, երրորդը՝ Երասխաձորի և Ղափանի գետաձորի կիրճերում: Չորրորդը Մեծ Սյունիքը Փոքր Սյունիքից անջատողն էր, հինգերորդը Վերին Խաչենի և Գեղարքունիքի սահմանագծի վտանգավոր տեղերում էր: Նշանակում է արագընթաց սուրհանդակներ և դեսպաններ, թե սահմանապահ զորքերից և թե իշխողներից՝ կարևոր տեղեկություններ ստանալու և հաղորդելու համար: Բայց վեցերորդ զորաբաժինը անընդհատ հսկում էր իրականացնում Մեծ Սյունիքի գավառներում:

Այս իմաստուն կարգադրությամբ նա Մեծ և Փոքր Սյունիքը ազատում է Ջալալիների մուտք գործելուց, որոնք անընդհատ արշավանքներ էին կատարում: Նաև պաշտպանում է Մեծ և Փոքր Սյունիքը Օսմանյան երկարատև պատերազմներից և մշտական հարձակումներից: Քերողլին, ով մտնում էր հենց նույն Ջալալիների մեջ, չի կարողանում մուտք գործել Մեծ և Փոքր Սյունիքի տարածք և չէր կարողանում ճիշտ արտասանել «Մելիք-Հայկ» անունը և զարմացած էր քաջության վրա, նրան «Մելիք-Հայկազ» է անվանում: Քերողլուի արտասանած այս անունը տարածվում է հասարակության մեջ, մանավանդ, Թուրքիայում և Պարսկաստանում: Մելիք-Հայկից ծնվում և փոխարինում է

Բ) Մելիք-Իսրայելը, ով հարգելով իր հոր կտակը, վճարում է Պարսից հարկը և իր թշնամիների թիվը պակասեցնելու

---

[1] Ամիրգունա խանն ավելի շատ լինում էր Երևանում, քան Հին Նախիջևանում:

նպատակով միշտ պահպանում է բարեկամական հարաբերու-թյունները սահմանակից իշխանների հետ: Մելիք-Իսրայելից ծն-վում և նրան հաջորդում է

Գ) Մելիք Եսային, որ իր նախնիների լավ հատկանիշների հետ, նաև շատ գեղեցիկ է լինում: Ունենում է մեծ-մեծ աչքեր և երկար, ձևավորված բեղեր: 1686 թվականին Շահ-Սեֆի Բ-ի կողմից Սուլեյման-Շահը ուղարկում է հարկահավաք Նազի խա-նին, ով հյուր է լինում այս մելիքին: Հայերին հատուկ ձևով, արժանի ձևով պատվում և մեծարում են հյուրին, բայց ապե-րախտ խանը, ինչպես հատուկ է պարսիկների մեծ մասին և դա անգամ երկրորդ բնավորություն է դարձել նրանց մոտ, փոր-ձում է բռնաբարել մելիքաժառանգ Ադամ բեկ գեղեցիկ պատա-նուն: Մելիք Եսային իսկույն հանում է թուրը, մաս-մաս կտրա-տում այդ անբարոյական հարկահավաքին, հափշտակում է նրա հավաքած գանձը, իր հետ վերցնում ամբողջ մելիքական գեր-դաստանը և գիշերը լեռնային ճանապարհով ապաստան գտ-նում Ջալալյանների մոտ: Մելիքի հետևից գաղթում է նաև 330 հայ ընտանիք:

Այս մասին իմանում է և հարկահավաքի զորքը, ցերեկով հետապնդելով փախստական Մելիքին, հասնում է Թարթար գե-տի ափ: Զորքը հասնում է նրանց հետևից, սակայն գաղթող հա-յերը, որ քաջ տղամարդիկ էին, թաքնված են լինում: Այստեղ էլ հենց ջնջում են հարկահավաքի ամբողջ զորքը և անվնաս հաս-նում Ջալալյանների մոտ: Ջալալյանները ոչ միայն մեծ սիրով ընդունում են իրենցից ապաստան խնդրող հայ մելիքին և ժո-ղովրդին, այլև ի սրտե ամբողջ Հաթերք գյուղը իր շրջակայքով նվիրում են նրանց, որպես բնակության վայր, իսկ Հավքախա-ղացը, որպես անառիկ բերդ և ապահով ապաստան: Ջալալյան-ները խոստանում են նաև պաշտպանություն, և այդ պաշտպա-նության համար խոստանում են չխնայել ոչ կյանքը և ոչ էլ ա-ռյունը:

Մելիք Եսային, ուրախանում է այսպիսի անակնկալ ըն-դունելության համար: Նա շնորհակալ է լինում և սկզբում իր ժողովրդի հետ բնակվում է Հաթերքում: Իսկ երբ Պարսից շահե-

րի կողմից չի տեսնում սպասված վրեժխնդրության վտանգը, երկար ժամանակ անց Ջալալյանների խորհրդով իջնում է Հաթերքից և բնակություն է հաստատում Ջրաբերդ գավառում: Զգուշության համար մելիքը բնակվում է Ջրաբերդում, իսկ նրա հետ գաղթած ժողովրդի մի մասն իր ընտանիքի հետ բնակեցվում է իրեն մոտիկ գտնվող բերդում, իսկ մյուս մասը բնակեցվում է Դաստակերտում: Մելիք-Եսայուց ծնվում և փոխարինում է

Դ) Մելիք-Ալլահ-Ղուլին, քանի որ նրա մեծ եղբայրը մահացած է լինում: Այս մելիքն էր, որ մյուս մելիքների հետ ներկայացավ Նադիր-Շահի թագադրմանը և մեծ իրավունքներով հանդերձ նրանից ստացավ Մելիք-Ալլահ-Ղուլի-Սուլթան տիտղոսը: Նրանցից ծնվում և հաջորդում է

Ե) Մելիք-Ադամ (Ա)-ն: Նա իր պալատը Ջրաբերդից տեղափոխում է Ինն Մաս վանքի մոտ: Նրանից

Զ) Մելիք-Մեջլումը, իսկ նրանից՝ մելիքաժառանգ Ադամբեկը:

Մենք ամենևին չենք խոսելու ճըռ-մելիքների և ճըռ-բեկերի ազգաբանությունից, նրանք արժանի չեն այդ ամենին, մենք մի ամփոփում անելով կվերջացնենք մեր պատմությունը:

ԻԸ.

Պատմությունից մենք գիտենք, որ կամաց-կամաց ծնվում և մահանում են Հայկազյան, Արշակունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Աղունյան, Կյուրիկյան, Բաղյան և Ռուբինյան թագավորությունները: Մենք տեսանք, որ Մեծ և Փոքր Սյունիքում տարածվում է հայկական իշխանությունը: Տեսանք նաև, որ ամբողջ Փոքր Սյունիքի և Գեղամա գավառները, պապենական իրավունքով պատկանում էին Վախթանգ, Սմբատ և Վասակ արքայազն եղբայրներին: Տեսանք նաև, որ իրար հետևից Արցախ համախմբվեցին, Մելիք-Աբովը՝ Նիժից, Մելիք-Եսային՝ Խնածախից, Մելիք-Բաղին՝ Գեղամա Մազրա գյուղից, իսկ Մե-

լիք-Ավանը՝ Վրաստանից:

Թեև այս հավաքները տարբեր ժամանակներում են տեղի ունենում, այնուամենայնիվ, նախապես մտածված, խորհրդակցված և որոշված էր, ուղղակի միայն արտաքին դեպքերն արագացրին դրանց գումարումը: Միայն Մեծ և Փոքր Սյունիքում դեռ կար «Հայկական իշխանություն», որը որպես «Աստծո կեղծ օրհնություն», փուշ էր դարձել թշնամիների աչքում:

Պարսից շահերը, Ջահան Շահից մինչև Աղա-Մամատ-Շահը հեռատես քաղաքականություն ունեին: Հայկական իշխանությունը՝ այդ «Կեղծ Աստվածային օրհնությամբ» մելիքությունը, որն արդեն բավականին հզոր էր իր նյութական և բարոյական ուժերով, կարող էր լուրջ խոչընդոտ լինել Պարսկաստանի թշնամիների համար: Եվ ընդհակառակը ճըռ-շահերը, Մսիհ-բեկից մինչև Զենտ-Քյարիմ-խանը ուզում էին ոչնչացնել «Հայկական իշխանությունը»:

Թաթարները, լեզգիները, օմանները, պարսիկները և մինչև անգամ հարևան քրիստոնյա վրացիները ցանկանում էին վերացնել այս «Աստծո կեղծ օրհնության» իշխանությունը և մելիքությունը...: Մելիքությունը հայտնվում է թշնամիների և վատ դրության մեջ: Արցախը դառնում է բոլորի ուշադրության կենտրոն, և յուղալի պատառ հափշակության համար: Ահա այսպե՜ս:

Միայն այս «Կեղծ օրհնության» իշխանությունը և հայրենիքը պահպանելու համար, պետք էր հավաքել արյունակցական ցրված ուժերը և ներքին միաբանությամբ պայքարել արտաքին թշնամիների անընդհատ հարձակումների դեմ: Հայրենի անառիկ բերդերը միմյանց անկեղծ օգնություն էին խոստանում:

Սա է պատճառը, որ Արցախի մելիքների գահերեց Ջալալյանները բոլոր մելիքներին հաճախ հրավիրում էին Արցախ: Եվ նույն պատճառով է, որ Գյուլիստանի, Ջրաբերդի, Վարանդայի և Դիզակի տեղաբնիկ հայ ժողովուրդը, փոխանակ դիմադրեր նոր եկող մելիքներին, ընդհակառակը՝ մե՛ծ սիրով ընդունում, պատվում և զորք էր տալիս նրանց:

Կարիք չկա ասել, որ այս նոր հյուր եկած մելիքներն ի-

րենց մեջ պայմանագիր ունեին, որը ցույց էր տալիս ամեն մեկի սահմանը, և որով էլ անխախտ էր մնում նրանց միաբանությունը: Թեև ամեն նոր մելիք գիտեր իր իրավունքներն ու պարտականությունները, սակայն հարկ է լինում մի ժողով անցկացնել:

1714 թվականին Գանձարանում ժողով է անցկացվում, որտեղ ներկա են գտնվում Խաչենի Մելիք-Գրիգոր Ջալալյանը, Կիրաստանի Մելիք-Հովսեփը, Մելիք-Աբովյանցը, Վարանդայի Մելիք-Հովսեփ Ա-ն, Ջրաբերդի Մելիք-Եսային, Մելիք-Հայկազյանը և Դիզակի Մելիք-Ավան Բ-ն, ով մելիքների հրավերով Լոռուց գալիս է և հայտնում իր տեղափոխման պատճառը: Բացի մելիքներից ժողովին ներկա են լինում մելիքների որդիները, զորավարներ, եպիսկոպոսներ և զորապետեր: Աղվանից Եսայի կաթողիկոսի նախագահությամբ ժողովում որոշում ընդունվեցին, և ստորագրվեցին հետևյալ կանոնները.

Ա) Աղվանքի կաթողիկոսը կընտրվի ժողովրդական ընտրությամբ և կհաստատվի Սբ. Էջմիածնի կաթողիկոսի հրամանագրով:

Բ) Ըստ դարավոր ավանդույթի՝ Աղվանքի կաթողիկոսը պետք է ենթարկվեր Էջմիածնի կամքին, հայության միաբանությունը պահպանելու համար:

Գ) Եթե Ջալալյան տոհմից և ազգից չգտնվեր արժանի կաթողիկոսի թեկնածու, կաթողիկոս պետք էր ընտրել դրսից:

Դ) Որդիաբար հնազանդվել Աղվանքի կաթողիկոսին և սիրով ընդունել նրա հոգևոր կարգադրությունները:

Ե) Մելիքական գավառի նշանավոր եպիսկոպոս կամ վարդապետ կընտրվեն տեղի ժողովրդից և մեծերից: Նրանց վկայագրով և հանրային քննարկման դնելով կներկայացվի Աղվանքի կաթողիկոսին:

Զ) Ամեն նշանավոր եպիսկոպոս իրավունք ուներ միայն իր կարգավիճակին համապատասխան հրամաններ արձակելու:

Է) Եթե ամեն գավառում պետք լինեին վարդապետ, քահանա, սարկավագ և դպիր, նշանակված եպիսկոպոսները նախ պարտավոր են նամակով նախապես զեկուցել Աղվանքի կաթո-

ղիկոսին և ապա նշանակել նրա հրամանով:

Ը) Ամեն մի եպիսկոպոս պետք է հոգար իր և իր վանքի խնդիրները, պետք է ձեռնադրեր խելացիներին և ոչ թե տգետներին:

Թ) Վանահայրերի ընտրությունը կախված է միաբանությունից և Աղվանքի կաթողիկոսի հաստատումից:

Ժ) Հանցանք կատարած եպիսկոպոսի պատիժները սահմանում էր կաթողիկոսը, իսկ վարդապետների, սարկավագների, վանահայր եպիսկոպոսների և քահանաների պատիժը կախված էր ձեռնադրված եպիսկոպոսից: Բայց պատիժները լինելու էին միայն նախազգուշացումներից հետո:

ԺԱ) Յուրաքանչյուր մելիք պարտավոր էր գահերեց ճանաչել Ջալալյան մելիքներին, թե հայտնի և թե գաղտնի ժողովատեղի ընդունել Գանձասարի վանքը: Ամեն զորավար պետք է հնազանդվեր իր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իր զորավարին, և ամեն զինվոր իր գնդապետին:

ԺԲ) Յուրաքանչյուր մելիք պարտավորվում է պահել 3000 հոգանոց կանոնավոր զորք, փորձառու զորավար, հավատարիմ սուրհանդակներ և սպառազինություն:

ԺԳ) Յուրաքանչյուր մելիք պարտավորվում է արթուն հսկել իր սահմանները և եթե հանկարծ վտանգ կգա թշնամու կողմից, պետք է անմիջապես հաղորդեր մյուսներին:

ԺԴ) Եթե մի մելիք որոշեր դուրս գալ իր սահմաններից և այլ մելիքի իրավունքները խախտեր, կպատժվեր ժողովի ժամանակ, մյուս մելիքների կողմից որոշված պատժով և 10000 թուման տուգանք պիտի վճարեր ընդհանուր մելիքական գանձարանին և առանձին էլ կմարեր տուժած մելիքի վնասը:

ԺԵ) Ամեն մելիք պարտավորվում է ամուր պահել ներքին սիրո և միաբանության կապը, արտաքին ուժերի դեմ միաբան կռվելու համար:

ԺԶ) Մե՛ծ կամ փոքր պատերազմները կսկսվեին մելիքների, զորավարների և գնդապետերի որոշելուց հետո, անակնկալ կամ հանկարծակի պատերազմները բացառություն կհամարվեին:

ԺԷ) Նա, ով կդավաճաներ հայրենիքը կամ կրոնը, լիներ մելիք, զինվոր թե ժողովրդից, կպատժվեր կրոնական և մելիքա-կան ժողովի կողմից որոշած պատժով:

ԺԸ) Ոչ այլազգի իշխանների հետ խնամիական կապեր հաստատել, և ոչ մի երկպառակտություն նրա հետ թույլ չտալ:

ԺԹ) Եթե պետք լիներ դիմել ավելի ուժեղ պետություննե-րին՝ օգնության նպատակով, դա պետք է արվեր կրոնական ժո-ղովի որոշմամբ, նախապես քննարկելով բոլոր պայմաններն ու պահանջները:

Ի) Յուրաքանչյուր մելիք պարտավորվում է հայրենիքի բարօրությունը բարձր դասել իր գավառի շահերից, և իր գավա-ռի շահերը բարձր դասել իր անձնական շահերից և ցանկու-թյուններից:

ԻԱ) Մելիքներից ով որ համարձակվեր օրինական կնոջից բացի ուրիշ ապօրինի կին պահել, և դրանով իսկ օրինակ ու գայթակղություն լինել, արհամարհեր եկեղեցու օրենքը, որպես պատիժ կարժանանար արդար վրեժխնդրության:

ԻԲ) Ամեն մելիք պարտավոր էր նշանակել, թե ով կգլխա-վորեր իր զորքը պատերազմի ժամանակ, պետք է խրախուսեր քաջարի զորքին և զորահրամանատարին:

ԻԴ) Մելիքներից ով որ կհամարձակվեր այս կանոններին և հայրենիքին հակառակ գործեր և կրոնի թշնամու կողմն անցել, նրա հետ միանալով հայրենիքի խաղաղությունը վտանգի տակ դնել, հային հայի հետ թշնամացնել և արյունահեղություն առաջացնել, մահապատժի կենթարկվի, մյուս մելիքները կգրա-վեին նրա բերդը և ամբողջ ունեցվածքը:

Բոլորը ստորագրում են կանոնների բնօրինակը և հավե-լյալ հինգ օրինակները: Յուրաքանչյուրը վերցնում է մեկական օրինակ և համբուրելով տաճարի խորանը՝ հեռանում են:

Վախթանգյան կամ Ջալալյան բարեհամբավ տոհմը, Մուլքի-բեկ դավաճանից բացի, ոչ միայն պահպանում է այդ կանոնները, այլև գործով է ապացուցում:

Ջալալյանները թողնում են անառիկ բերդեր[1], բազմաթիվ վանքեր[2], եկեղեցիներ, մատուռներ, որոնք իրենց արձանագրություններով խոսուն ու հավերժական հիշատակներ են: Եվ ոչ միայն այսքանը, նրանք որպես հիշատակ թողեցին նաև արծաթի, պղնձի և ջաղացքարի հանքեր, ընդարձակ ամառանոցներ, ընդարձակ վարելահողեր, նվիրեցին նաև հանքային ջերմուկի ամբողջ պաշարը:

Այս ամենը միայն թղթի վրա չի գրված, որ ժամանակի ընթացքում կեղծվեին, այլ նաև փորագրված են մի վանքի, եկեղեցու կամ խաչքարի վրա իրենց անվանումով:

Ջալալյանները ազգին նվիրված ջերմեռանդ եկեղեցականներ են, անձնուրաց կաթողիկոսներ[3], ազգասեր և պատմաբան եպիսկոպոսներ, ընտիր վարդապետեր, սարկավագներ, դպիրներ, քահանաներ, ուսուցիչներ, որոնց ջանասիրության շնորհիվ Արցախում պահպանվել են կրոնն ու լեզուն:

Ջալալյանները չնայելով, որ իշխանությունը կախված է նախարարությունից, մելիքությունը՝ իշխանությունից, բեկությունը՝ մելիքությունից, այնուամենայնիվ, մեր ազգին նվիրել են բարեպաշտ թագավորներ, ազգասեր նախարարներ, դյուցազուն իշխաններ, պաշտպանող մելիքներ, անպարտելի զորավարներ, հզոր գնդապետեր և քաջ զինվորականներ, ովքեր անգամ իրենց մահի գնով պաշտպանել են հայրենիքը պարսիկների, արաբների, թուրքերի, հույների, թաթարների, հոների և լեզգիների հարձակումներից և իրենց քաջությունը որպես կտակ հանձնում են մեզ:

Արքայազն Սմբատը ևս ահագին ժառանգություն է թողել:

---

1 Այժմ բերդերն ու պալատներն ամբողջությամբ ավերակ են:

2 Ցանկալի է տեսնել այդ գեղեցիկ և սքանչելի վանքերը, որոնք անցյալ, դառը ժամանակ շատ գեղեցիկ էին, իսկ հիմա կամաց-կամաց անշքանում և կարծես քայքայվում են, քանի որ համախմբող չկա: Միակ պատճառն այն է, որ այդ վանքերը գեղեցկացնող վանքապատկան կալվածատերերի մեծ մասը գերի են վերցված թուրք կեղծ բեկերի կողմից, իսկ մյուս մասը դեռ վիճահարույց է:

3 Ինչպես Աղվանքի թագավորները, նախարարներն ու իշխանները, ժամանակի անդիմադրելի բռնություններից խուսափելու համար իրենց գահը Դարբանդից տեղափոխել են Պարտավ, Գարդման և շատ այլ տարածաշրջաններ, այդպես էլ և կաթողիկոսանիստը Դարբանդից տեղափոխվում է Քիս (Քիշ), Ամարաս, Պարտավ, Ճալեթ, Գարդման, Գանձասար և Գանձակ:

Նա թողում է Խոթավանքը, Խաթրավանքը, Դադիվանքը և շատ կալվածքներ: Թողել է անառիկ բերդեր, վանքապատկան ընդարձակ կալվածքներ, եկեղեցիներ և գյուղեր: Ազգին տվել է հարազատ նախարարներ, իշխաններ, մելիքներ, բեկեր, եպիսկոպոսներ, վարդապետեր, քահանաներ, հզոր զորավարներ, ովքեր իսկապես հետևում էին կրոնական և զինվորական պահանջներին:

Այդպես էլ Աբովյան ազգատոհմը, սկսած Մելիք Աբով Ա (1)-ից մինչև Մելիք Աբով Գ (3)-ն: Այս ազգատոհմը Ջալալյաններիի և մյուս մելիքների հետ համամիտ էին, համակամ, համախորհուրդ և սիրով ամեն հարցում:

Վասակ արքայազնի հետնորդները, սկսած մելիքաժառանգ Աբաս-բեկից, ոչ պակաս են ծառայել Արցախին՝ իրենց իշխաններով, վանահայրերով, վանքերով, բերդերով, զորքերով և տղամարդկային քաջությամբ:

Ջրաբերդի Մելիք-Հայկազյանները ոչ միայն պատվով պահեցին «հարազատ» բառի նշանակությունը, այլև մինչև վերջին շունչը հավատարիմ մնացին Արցախին՝ նվիրելով աննկուն մելիքներ, բազմաթիվ անգամներ հաղթանակած զորավարներ, անպարտելի զնդապետեր, և հայրենիքի պաշտպան զինվորներ:

Այդպես էին նաև Շահանյանների հետնորդները՝ Մելիք-Շահնազարյանները, բացի Մելիք-Շահնազարյան Գ-ից, մեր ազգին նվիրել են արդարադատ կառավարիչներ, հայրենասեր դյուցազուններ, անձնվեր զինվորականներ և հզոր զինվորներ:

Սակայն չպետք է մոռանալ, որ Մելիք-Շահնազարյան բարեհամբավ տոհմին նախատինք բերեց եղբայրասպան, սրբապիղծ, անբարոյական, թրքամոլ, հայրենավաճառ և դահիճ Մելիք Շահնազար Գ-ին: Նա, վերը թվարկված կանոններին հակառակվելով, ատելի դարձավ հարազատ մելիքության համար: Փոխանակ պաշտպաներ հայրենի Արցախը, նա ենթարկվեց ճըռ-խանին: Անառակ վարք ուներ, արհամարհում էր կրոնավորնավորներին, դրանով իսկ օրինազանց և զզվելի դառնալով հասարակության համար:

Մելիք-Շահնազար Գ-ն հաճախակի գնալով Փանահ և Իբրահիմ ճըռ-խաների մոտ, նրանց հարեմի մեջ շատ կանայք, հարճեր, աղախիններ տեսավ: Նրանցից վատ օրինակ վերցնելով, սկ-

սեց բազմակնություն թույլ տալ, արհամարհելով քրիստոնեությունը, Հովհաննես (Աղվանքից) Ժ կաթողիկոսի խրատներն ու եպիսկոպոսների քարոզները:

Մելիք-Շահնազար Գ-ի հարեմը լի էր մանավանդ պարսիկ կանանցով: Նրա օրինական կինը միայն Դիզակի Մելիք-Եսայի դուստր Սոնա խանումն էր, ումից էլ ծնվել էին Մելիք-Ջումշուդը և Հուրզադը, ում բռնի ուժով տվել էին Իբրահիմ խանին, որպես անարգանք Մելիք-Եսայի դեմ: Սոնա խանումը ևս արտաքսվում է: Մելիք Շահնազարը միանգամից ատելի է դառնում: Նա սկսում է ավելի շատ սիրել իր թուրք կանանցից ծնված ապօրինի զավակներին: Դրանից հետո նա սրով սպանեց Մելիք Ջումշուդին:

Մելիք Եսային սարսափելի անարգանք զգաց, տեսնելով իր սիրելի դստերը արտաքսված և սիրելի թոռանը սպանված, իսկ մյուս թոռանը՝ Հուրզադին թուրք անօրենների ձեռքը տված:

Մելիք Եսային սիրելի է լինում բոլոր մելիքների կողմից, քանի որ նա տղամարդկայնորեն պարսիկ ավազակների անընդհատ հարձակումներից ազատել էր Արցախի մուտքը՝ Դիզակը:

1781 թվականին Գանձասարում գումարված մելիքական ժողովում՝ որոշվեց վրեժ լուծել Մելիք Շահնազար Գ-ից: Հարցը վերածվեց կրոնականի: Կրքերը թեժացան և բարկությունները բորբոքվեցին: Ժողովի որոշմամբ ամբողջ զորքը հարձակվեց Ավետարանոց բերդի վրա, բերդը կիսաքանդ եղավ, Մելիք-Շահնազարի բոլոր թուրք և հայ ապօրինի կանայք սպանվում են, իսկ մելիքարանը՝ ավերվում: Մելիք-Շահնազարին հաջողվում է գաղտնի դռնով փախչել իր սիրելի Հուսեյն-բեկի հետ: Հուսեյն-բեկը մելիքաժառանգ էր և միասին գնում են Շուշի:

Հարկ է նշել, որ այդ պատերազմից ոչ մեկը չմեռավ, բայց մելիքի արարքից ահավոր հիասթափված էին զորավար Բաղին, գնդապետներն ու ժողովուրդը: Այս պատճառով գնդակ չարձակեցին ոչ մեզ վրա և ոչ էլ հարազատ զորքի վրա: Մելիք-Շահնազարի Բաղի զորավարը Շեյթան-Թյունու ձեռքով այս մասին գաղտնի հրաման էր ստացել հարազատ մելիքների կողմից:

Ա. հատորի վերջ

ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՏՈՐ Բ.

ԻԹ.

Երբ Թավրիզ հասանք, հայրս զորավար նշանակվեց Շահի կողմից: 10000 զինվոր վերցնելով գնաց Հերաթի և Ղանդահարի ապստամբությունները ճնշելու: Հորս հետ էր նաև գնդապետ Մելիք-Հայկազյանցը: Իսկ Շահը հաղթանակ փառքով մտավ Թեհրան, որն աթոռանիստ քաղաքն էր:

Շահի հրամանով պարսիկ ուսուցիչս Շուշիի բանակատեղից սկսած ուզում էր ինձ պարսկերեն խոսել, գրել ու կարդալ սովորեցնել: Հորս բացակայությունը մի սրտաճմլիկ տխրություն էր բերել սրտիս, որն էլ խոչընդոտ էր իմ առաջադիմության համար: Նկատելով, որ օտարության և տխրությանս պատճառը իմ անհնազանդությունն է, սկսեցի ավելի հաճախակի կարդալ Գյուլիստան դասագիրքս և ճանճրացած ժամանակներս ընդօրինակել: Եվ այսպես շարունակելով, ընդունակություններս ավելի լավացան, այդ սիրտ մաշող տխրությունն ինձանից հեռացավ և ես առաջադիմեցի ձեռնարկածս գործերում:

Իմ բարերար Շահը շատ էր ուրախանում, երբ իր հետ պարսկերեն էի խոսում և գեղեցիկ արտագրում: Դրանից հետո Շահը իր հոգևոր առաջնորդին հրամայեց կամաց-կամաց ինձ էլ ընդգրկել թագավորական հրամաններ, պարբերականներ և գաղտնի նամակներ գրելու գործին, որպեսզի ես այդ գործում հմտանայի և հետագայում դառնայի նրա գաղտնի նամակագիրը:

Հայերենս անուշադրության չէի մատնել, և ինչպես հայրս էր պատվիրել, երբ գիշերներն առանձնանում էի, որպես կրոնագիրք, Աստվածաշունչ էի կարդում, որպես պատմություն սովո-

րեցնող գիրք՝ Եղիշե և որպես աղոթագիրք՝ Նարեկ (Մատյան ողբերգության):

Հորս հրամանով այսուհետ ամեն ինչ կնկարագրեմ, բացի պատմական կարևոր փաստերից և Ղարաբաղին վերաբերվող մասերից, որ մեր նշանաբանի նյութերն են:

Հայրս վերադարձավ և պատմեց հետևյալը.

«Սիրելի Ապրես, միանգամից ճնշեցինք Հերաթի և Ղանդահարի ապստամբությունները: Տեղական ապստամբ խաները պատերազմում սպանվեցին: Եվ Շահի հրամանով նրանց հաջորդեցին իրենց որդիները: Թշնամու զորքից սպանվեց 8000 մարդ, իսկ Շահի զորքից 1000 մարդ: Իմ կարծիքով, եթե Շահի զորքը բավականաչափ դրագետ գործեր պատերազմում, այդքան մարդ չէր սպանվի: Այնուամենայնիվ, Շահը գոհ մնաց իմ այս ծառայությունից և ինձ հայտնեց Մելիք-Բախտամի ազատվելու բարի լուրը»:

1796 թվականին Գանձակի Ջավադ-խանը հայտնում է Շահին, որ Իբրահիմ-խանը, Հերակլ իշխանը և Բեյլոկանի խանը գաղտնի միավորվել են, ուզում են գաղտնի ապստամբություն բարձրացնել, հարձակվել Գանձակի վրա, իրենից ու Մելիք-Մեջլումից վրեժ լուծել: Ասում է նաև, որ ինքը զգուշության համար չի թույլատրում Մելիք-Մեջլումին բացակայել Գանձակից: Եվ հայտնում է նաև, որ նրանք ևս գաղտնի պատրաստվում են դիմակայելու միացյալ թշնամիներին:

Իսկ Մելիք-Մեջլումը շնորհակալություն էր հայտնում Շահին, Մելիք-Բախտամի բարեհաջող Ղարաբաղ հասնելու համար, պատմում էր Խնածախի ու Բալուջայի քաջերի գործած հրաշագործությունները ճըռ-խաների դեմ և խնդրում էր Շահից՝ արագացնել իր երկրորդ արշավանքը, հասկացնելով, որ քաղաքական հանգամանքները փոփոխական են: Նա ցանկանում էր, որ Շահը իրեն թույլ տար անմիջապես Ղարաբաղ վերադառնալ և այն կիսատ գործն ավարտել, որին նա անհամբեր սպասում էր:

Շահը պատասխանեց նրանց երկուսին էլ: Նրանք լավ էին պատրաստվել, ավելին՝ իրենց էին միացրել նաև Վերին Խաչենի,

Զրաբերդի և Գյուլիստանի հայ ժողովրդին, և հայտնի քաջերին, որպեսզի դիմադրեին այդ եռոտանի թշնամուն: Շահն էլ իր կողմից 20000-անոց զորք էր ուղարկելու:

Նույն թվականին Դերբենդի, Ղզլարի, Բաքվի և Շամախիի խաները միաձայն նամակներով հայտնում էին Շահին, որ Ռուսական կառավարությունն Անդրկովկասում իր դիրքերը վերականգնելու համար պարբերականներ է ցրում: Դրանցով հասարակությանը հայտնում էին, որ Ռուսական կառավարությունը «Հանուն Անդրկովկասի քրիստոնյաների ազատության, զենք է բարձրացնում Պարսկաստանի դեմ»: Հայտնում էին, որ այդ արշավանքի հրամանատար է նշանակվել Վ. Ա. Զուբով եռանալը[1]: Ասում էին, որ եթե Շահը զորքը չհեռացնի, Զուբովը շուտով կգրավի Պարսկաստանը: Այս ամենի մասին հայտնվում է՝ ապագա պատասխանատվությունից խուսափելու համար:

Շահը, ով արդեն ծանոթ էր ռուսական Եկատերինա Բ. թագուհու վտանգավոր հիվանդությանը, միաձև նամակներ գրեց խաներին, հորդորեց ամբողջ ուժերով դիմադրել Զուբովի արշավանքներին և ասաց, որ շահական զորքը պատրաստվում է արշավել Զուբովի դեմ: Նամակում ասվում է նաև, որ արդեն 20000-ոց զորք ուղարկվել է Ղարաբաղ, հետն էլ ավելացնում է «Քանի Աղա-Մամադ խանը ողջ է, ռուսներին չի հաջողվի ամրապնդվել Անդրկովկասում»:

Ջավադ-խանը տեղեկացնում է Շահին, որ ավելի շուտ թվարկված երեք թշնամիները հարձակվեցին Գանձակի վրա, բերդի պաշարումը տևեց երեք ամիս, հարազատ հայ դյուցազունները պաշտպանեցին բերդն այդ երեք միացյալ թշնամիներից: Հերակլ իշխանը, Իբրահիմ խանը և իր անները հաղթելու հույսը կորցրին և հաշտություն առաջարկեցին: Թշնամիների կողմից պատանդ վերցվեցին Իսրայել կաթողիկոսի հորը՝ Ապրես-Աղային: Այս նենգամիտ ծերունի պատգամավորը հաշտության պայմանների մասին խոսելիս, հանկարծ իր հագուստի

[1] Այս աշխատության մեջ մե՛նք չցանկացանք փոխել հեղինակի օգտագործած բառը, թեև այն սխալ էր: Եարանալ՝ նշանակում է գեներալ:

տակից հանեց թաքցված ատրճանակը, միանգամից զարկեց Մելիք-Մեջլումի կրծքին և մահացու վիրավորեց: Այդ դավաճանն անմիջապես սպանվեց Քյանդխուդա-Խաչատուրի կողմից: Թշնամին չկարողացավ տղամարդկայնորեն հաղթել, դիմեց այդ ստոր ու անարդար քայլին, որը հատուկ է վախկոտ ու թույլ մարդկանց: Այդ դավաճան ծերունին հին վրեժ ուներ Մելիք-Մեժլումի դեմ: Քանի որ նա չարագործի հորը՝ Իսրայել կաթողիկոսին թույլ չէր տվել դառնալ Գանձասարի և Աղվանքի կաթողիկոս, իսկ իր փեսա Մելիք-Առուստամին թույլ չէր տվել դառնալ Ջրաբերդի մելիք[1], մահացավ Շահի սիրելի Մելիք-Մեջլումը: Մելիք-Մեջլումի մահից հետո, որպես Ջրաբերդի իշխան, պետք է նշանակվեր մելիքաժառանգ Ադամ-բեկը, սակայն նա ապրում էր Գանձակում: Թշնամին մելիքին սպանելով ցանկանում էր հեռանալ: Քյանդխուդա-Խաչատուրը, Նյառաթյովն, Դալի-Մահրասան և Թյուլի-Արգումանը, վառված Մելիք-Մեջլումի վրեժով, նույն գիշեր գազանի նման հարձակվում են թշնամու զորքի վրա և անխտիր կոտորում քնաթաթախ զորքին: Հերակլը, Իբրահիմը և նրա անները դիմեցին փախուստի: Այդ փախուստն արգելելիս սպանվեցին մի քանի քաջեր, մեր կողմից մահացել էր Մելիք-Մեջլումը: Արդեն ամենուր լսվում էր Զուբովի արշավանքի վատ նորությունը:

Իսկ Քյանդխուդան այդ ամենն ասելուց հետո, հայտնում է հորս թե Լեզգիների փախուստը դիմագրավելու ժամանակ սպանվում է Թոփուզ-աշուղ-Ղարան, Քյարբեթյունը, Թիլի-Արգումանը և Դալի-Մահրասան: Առաջին երկու քաջերի դիակները տեղափոխեցին իրենց գյուղերը, իսկ վերջին քաջերի դիակները Ջավատ-խանն ամփոփել տվեց Գանձակի մայր եկեղեցում՝ որպես հայրենասեր նահատակներ: Այդ գիշեր թշնամու կողմը տվեց 3000 զոհ: Հերակլը փախավ մինչև Տփխիս, առանց ետ նայելու, Իբրահիմը փախավ մինչև Շուշի, իսկ նրա անները՝ մինչև Նուխի: Այդ պատերազմի ժամանակ Խնածախի և Բալու-

---

[1] Ապրես աղան Իսրայել կաթողիկոսի հայրն է և Առուստամ մելիքի աներն:

ջայի ժողովուրդը, նախազգուշական նկրտումներով դուրս էին եկել գյուղերից և բարձրացել թավ անտառները:

Մելիք-Առուստամն իր զորքով և Խնձորեստանի մելիքի մի մասը միացել էր ճըռ-խանի զորքի հետ:

Միևնույն թվականին, նույն խաների կողմից պարսկական արքունիքը կրկին նամակներ ստացավ, որոնք հայտնում էին, որ Զուբովը Դերբենդից մինչև Գանձակ ընկած տարածքը գրավել է, այդ արշավանքի ժամանակ ամենամեծ դերն են ունեցել հայոց Արղության արքեպիսկոպոսը, տեղի հայ իշխանները և հայ տղամարդիկ: Ռուսական զորքն առանց արյուն թափելու հայերի շնորհիվ տիրացավ Անդրկովկասին և, որ այդ հայերին պատժել էր պետք, որ իրենց իսկական տիրոջը թողած, Ռուսական կառավարությունն էին ընդունում:

Շահը գրել տվեց նույն կարճ նամակը և ուղարկեց բոլոր խաներին. «Քանի դեռ Աղա-Մամադ-Խանը ողջ է՝ ռուսները չե՛ն կարող հաստատվել Անդրկովկասում»:

Մելիք-Աբով Գ-ն գրել էր հորս, որ Քյանդխուդա-Խաչատուրը և Նյառաթյովը նամակ ստանալով Արղության եպիսկոպոսից, հավաքվել էին Կուր գետի աջ ափին և իրենց խմբով միացել Զուբովի բանակին, իրենց խմբով միացան նաև Քյորօղլին և Դիզակի մելիքաժառանգ Աբասը: Մելիք-Աբով Գ-ն անձամբ զորավար լինելով, բոլոր համախմբված հայերին ուղարկում է, որպեսզի Ղարաբաղից միանգամից հալածեն և հանեն Աղա-Մամադ-խանի ուղարկած քսան հազարանոց զորաբանակը: Իր պատմելով՝ Գանձակի Ջավադ խանը ոչ միայն առանց պատերազմի իր հնազանդությունը հայտնել էր Ռուսաստանին, այլև հենց նույն Զուբովին հյուրընկալում և մեծարում է իր մոտ, Զուբովը Եկատերինա Բ-ի կողմից խնջույքի ժամանակ հայտարարեց ի լուր հանդիսականների. «Ղարաբաղի հինգ հարազատ մելիքները շուտով Ռուսական կառավարությունից կստանան այն անկախ իշխանությունը, որը հենց թագուհին է խոստացել շնորհել»: Իբրահիմ ճըռ-խանը, խորամանորեն ձևանալով Ռուսաստանի հավատարիմ բարեկամ և Պարսկաստանի ոխերիմ թշնամի, Զուբովի մոտ, որպես

հնազանդության նշան, ուղարկում է իր որդի Ֆեթիհին: Զուբովն էլ Իբրահիմի համար, որպես նվեր, ուղարկում է մի տուփ ոսկի, իսկ Մոլլա-Փանահի[1] համար՝ մի թանկարժեք գավազան: Զուբովը չարաչար սխալվում էր՝ հավատալով ճըռխանի հպատակությանը, և անգամ ընծաներ էր տալիս: Մելիք-Աբովը Զուբովին իր բանակի հետ անձամբ էր Շուշի բերել և բազմաթիվ ծառայություններ մատուցել Ռուսական կառավարությանը: Զուբովը բազմիցս խոստացել էր, որ վարձահատույց կլինի Մելիք-Աբովի արածի համար, որ մանրամասն ամեն ինչի մասին կպատմի Եկատերինա թագուհուն և այլն և այլն:

Իսկ Պել-Ճամալը գրել էր հորս. «Սիրելի Բեկնազարյան, Հայոց արքեպիսկոպոսը, մելիքները, քաջերը և ամբողջ զորքն աշխատեցին և արյուն թափելով քաղաքներ գրավեցին ու դատարկ խոսքերով վարձատրվեցին, իսկ Ճըռ-խանն ու Մոլլա-Փանահն առանց աշխատելու վարձատրություններ ստացան: Ապրի՜ Զուբովը: Թող կորչի Զուբովի խոսքով վարձատրությունը: Փամփուշտների և վառոդների փողերը նույնպես կորան մեր աշխատության հետ»:

Դերբենդի Շեյխ-Ալի-խանը հասավ Թեհրան և Շահին պատմեց հետևյալը. «Ձեր համաձայնագրի համեմատ դիմադրեցի Զուբովին, երբ Դերբենդը գրավեցին, փախա Բաքու, իսկ երբ Բաքուն էլ գրավեցին և ինձ բանտարկեցին, կարողացա ձիուս հետ փախչել և այստեղ հասնել»:

Սույն թվականի վերջին Շահը մի նամակ ստացավ Շամախիի Մուստաֆա խանից, որով նա հայտնում էր, որ Զուբովը հայոց հոգևոր և աշխարհիկ գործիչների ձեռքով ամբողջ Անդրկովկասին տիրելուց հետո, այժմ ձմեռում է Սալյանում: Նա իր գրված քաղաքներում բերդապահ զորք է թողել ու գարնանը պատրաստվում է նույն հայերի աջակցությամբ հարձակվել և գրավել Արարատյան նահանգը: Զուբովի բանակում շատ ռուս-

[1] Այն ժամանակ Շուշիի թուրքերի հոգևոր առաջնորդն էր:

ներ չկային, այդ հաղթանակների կերտողները հայեր էին և հայտնում էր, որ հիմա է ամենահարմար ժամանակը, որպեսզի Շահը հարձակվի Զուբովի բանակի վրա և բնաջնջի այն:

Նույն օրը Բաքվի Հուսեյն-խանը հայտնում է, որ 1796 թվականի նոյեմբերի 6-ին մահացավ Ռուսաստանի թագուհի Եկատերինա Բ-ն: Հայտնում է նաև, որ Ռուսաստանի նոր թագավոր Պողոսը Զուբովին հրամայել է՝ թողնել իր գրավված երկիրը և զորքի հետ միասին վերադառնալ Ռուսաստան:

Լ.

1797 թվականի մարտի 10-ին պարսկական բանակը Շահի հրամանատարությամբ ուղևորվեց դեպի Սալյան:

Հարկ չկա հիշեցնելու, որ ես այդ ժամանակ կենտրոնացել էի ուսմանս վրա և կարծես թե հորս բացակայությունը այլևս չէր թողնում ինձ վրա այն ազդեցությունը, որով արթնանում էին իմ բոլոր զգացողությունները: Ինձ հաջողվեց սովորել Հակոբ անունով մի հայ կաթոլիկ ուսուցչի մոտ: Ուրմի քաղաքի կառավարությունը նրան ուղարկել էր այստեղ՝ որպես պատիժ: Ըստ ամբաստանագրի՝ այս ուսուցիչը թերահավատ հայերի կաթողիկոսությունը դարձրել էր խռովախույզ, գրգռվող, հեղափոխական և իր գաղտնի քարոզներով տեղի քրիստոնյա ժողովրդի ու կառավարության մեջ խռովություններ էր առաջացրել և այնպես արել, որ ժողովուրդը Պարսկաստանի դեմ ապստամբեր: Շահը, շատ զբաղված լինելով քաղաքական և պատերազմական գործողություններով, ժամանակ չունեցավ կամ պատժելու, կամ էլ հարցաքննությամբ արդարացնելու ու ազատելու: Այդ պատճառով էլ ուսուցիչը մնացել էր բանտարկված, հենց նրա մոտ էլ գնում էի սովորելու:

Պարսկաստան տեղափոխված հայ և վրացի գերիները բնակություն էին հաստատել Թավրիզում ու նրա շրջակայքում, իսկ մի փոքր մասը՝ Թեհրանում: Վրացիները զգալի կերպով պարսկանում էին, մահմեդական կրոնն ընդունելով, իսկ հայերը՝ ընդհակառակը. պահպանում էին իրենց կրոնն ու լեզուն, եկե-

ղեցիներ էին կառուցում և իրենց երեխաներին քահանաների ձեռքով կրթում: Դժվար չէր գուշակել, որ վրացիները, մահմեդականություն ընդունելով, շուտով կձուլվեին պարսիկներին: Իսկ հայերը՝ դիմադրելով կպահպանեին իրենց ազգությունը, կրոնը, եկեղեցին և լեզուն:

Ինչպես իմ բարերար Շահը կարգադրել էր, ես ամեն շաբաթ երեկոյան, կիրակի առավոտյան և կեսօրին մեր եկեղեցին էի գնում, աղոթում, հաղորդություն ստանում և վերադառնում:

Շահի պալատում ամենասիրվածը ես էի: Շահի երկու քույրերը, պարսիկ և վրացի աղախիններն ինձ մեծ սիրով էին սիրում, փայփայում և գուրգուրում:

Չեմ կարող չհիշել մի կարևոր հանգամանք. այն է՝ միմյանցից թաքուն հայ ուսուցիչս քարոզում էր ինձ ընդունել Պապի գերիշխանությունը, պարսիկ ուսուցիչս սովորեցնում էր Մուհամեդի լուսավոր կրոնը և զրադաշտականությունը, իսկ վրացի աղախինները սովորեցնում էին հունադավանությունը և վրացերենը: Թեև հայրս նախապես զգուշացրել էր, որ զգույշ մնամ այո կամ ոչ պատասխանելուց, այնուամենայնիվ (ինչ թաքցնեմ մեղքս), հայ ուսուցչիս պատասխանեցի. «Ավելի լավ է հայ մեռնել, քան փոփոխականության մեջ ապրել», պարսիկ ուսուցչիս ասում էի. «Դու պարտավոր ես ինձ պարսկերեն սովորեցնել, և ոչ թե՝ կրոնափոխություն», իսկ վրացի Թամար և Էլիզա աղախիններին.՝ «Դո՛ւք ավելի լավ կանեիք ձեր շահամոլ և փոփոխական ազգականներին մահմեդականություն արգելեիք, քան տանջվեիք՝ ինձ հունադավան դարձնելու վրա»:

Հայրս վերադարձավ Ղարաբաղից և պատմեց հետևյալը. «Պարսկական բանակը դեռ Արաքսը չանցած, Զուբովը արդեն վերադարձել էր Ռուսաստան: Բալաքիա խանը և Մելիք Առուստամը փախել էին Դաշբուլաղ գյուղը, իսկ Հերակլ իշխանը՝ Կախեթի խորքերը: Ճրո-մելիքների փախուստը, Զուբովի հեռանալը և Մելիք-Մեջլումի սպանությունն ավելի բարկացրին Շահին, Ղարաբաղը միայն նրան պիտի ենթարկվեր:

Շուտով Մուղանի դաշտում Շահին դիմավորեցին Գանձակի Ջավադ-Խանը, Շամախու Մուստաֆա-խանը և Նուխու

Սալիմ-խանը, ովքեր փորձում էին Շահի բարկությունը կենտրոնացնել միայն Իբրահիմ-խանի վրա, որ չարության սկզբնապատճառն էր:

Հենց Շահը հասավ Աղդամ, կոտորել տվեց Աղդամի թուրք երևելիներին, ովքեր ճրո-խանի համախոհներն էին և այրել տվեց խանի տունը, որը նա կառուցել էր տվել ձմեռելու համար: Շահի անգութ հրամանով այրեցին մի շարք արտեր: Իմ և Ջավադ խանի խնդրանքները դրա վերաբերյալ ապարդյուն անցան:

Կաքև-Զաքու ձեռքով Մելիք-Աբովին նամակ գրեց, որ նա շուտով գա և դիմավորի Շահին, բայց նա փախել և ապաստանել էր Ղարաբաղի լեռներում: Միայն Մելիք-Ջումշուդը Խնածախի և Բալուջայի քաջերի հետ, ցանկանալով Շահին արագ դիմավորել, մեզ հետ հանդիպեց Ասկերանի կիրճում: Նրան ևս նամակ էին ուղարկել Շեյթանի ձեռքով: Առաջ եկող զինվորները, նրանց փախստական կարծելով, սրի հարվածով վիրավորում են Մելիք-Ջումշուդի գլխի աջ հատվածը, բայց Նյառաթյովի խմբի և Շեյթան-խանի օգտագործած պարսկերեն լեզուն ազատում է մելիքին, ում ստացած վերքն անվտանգ էր: Պել-Ջամալը և Պրախմազը մի քանի զինվորներ են սպանում:

Շահը Շուշի մտավ հայ և թուրք հոգևորականների երգերով, նրան դիմավորեցին օրենքով, բերդի պարիսպներից դուրս, հայ և թուրք հոգևորականների երգերով, և հանդիսավորությամբ գնաց դեպի Իբրահիմ Ճրո-խանի տուն: Շահի առաջին գործն էր շահական հրովարտակով որպես մելիք հաստատել Ադամ-բեկ Մելիք-Մեջլումյանին և Աբաս-Բեկ Մելիք-Բախտամյանին: Առաջինը նշանակվեց Ջրաբերդի իշխան, իսկ երկրորդը՝ Դիզակի իշխան: Երկուսն էլ պարգևատրվեցին գեղեցիկ պատվանշաններով:

Սովորական այցելուները մեծ պատվով ընդունեցին Շահին, քաղցր խոսակցությամբ, նրան սիրաշահեց, մխիթարեց ամբողջ հասարակությանը, ավելի մեծ սիրով ընդունեցին այն այցելուները, ովքեր նրան անպատվել էին, նրա առաջ փակելով բերդի դռները: Վերջիններս իրենց մեղավոր էին զգում Շահի

առաջ: Նրանց գլխավորում էին Խնձորեստանի ճրռ-մելիք Ալ-լահվերդին, բերդի թուրքական հոգևոր առաջնորդ Մոլլա-Փա-նահը, ճրռ-խանի համախոհ զինվորական թուրքերը, ովքեր Շա-հի կողմից հրավիրվեցին ամեն օր, կեսօրից երկու ժամ առաջ գալ և առանց վախենալու խոսել իր հետ:

Մի օր Շահի կողմից հրավիրվում են բոլոր կասկածելի մարդիկ և միանգամից կալանավորվելով բանտարկվում են: Հա-ջորդ օրը ճրռ-խանի զինվորները խողխողվեցին նրա հրամանով: Հանցագործներին շարեցին բերդի արևելյան կողմում գտնվող մի սարահարթի վրա, որը գտնվում էր թուրքական փողոցի հա-րավային կողմում՝ բերդի ներսում: Այնուհետև պայտած ձիերը սրընթաց արշավեցին այդտեղ գտնվող մարդկանց վրա և, այդ-պես բոլորին կոտորեցին այնպես, ինչպես ցորենը՝ կալում: Հենց սա էր նրա հրամանը:

Ամեն օր ու գիշեր հարազատ մելիքները գալիս ճաշում էին Շահի հետ և գնում: Նրանք էին Գ. Մելիք-Շահնազարյանը, Մելիք-Ջումշուդը, Մելիք-Մեջլումը, Մելիք-Ադամը և Բախտա-մյան Մելիք-Աբասը: Շահը վերջին ընթրիքի ժամանակ իր հարա-զատ մելիքներին հայտնեց հետևյալը. «Մենք պարտավոր ենք կատարել մեր երդումն ու խոստումը, որ տվել ենք շատ սիրելի հանգուցյալ և սիրելի Մելիք-Մեջլումին և Ազրայել-Իբրահիմին: Այսօր հատուկ հրամանով կոտորեցինք Ղարաբաղը ավերողնե-րից կեսին, իսկ մնացած մասը վաղը կջնջենք և կվերականգնենք Ղարաբաղի հարազատ-մելիքության նախկին, դարավոր և ան-կախ իրավունքները: Հիմա ներկա եք Ջրաբերդի, Վարանդայի և Դիզակի մելիքներդ, լսելով ձեր և Ջավադ խանի խնդրանքը Մե-լիք-Աբով Գ-ին կրկին հաստատեցի որպես Գյուլիստանի մելիք: Մնում է միայն մելիք նշանակել Խաչենի մելիքին: Ջալալյան տոհմից, ժողովրդի կողմից ընտրված թեկնածուին մենք անմի-ջապես կնշանակենք, դրանով ամբողջացնելով հինգ մելիքու-թյունների թիվը:

Քանի որ Իսրայել կաթողիկոսի մահը չեք ուզում, ձե՛ր խնդրանքով նրան կաքսորենք Աղթամար կղզի և Սարգիս Ջա-լալյան կաթողիկոսին կտեղափոխենք Գանձասար և նրան իր

պաշտոնում կհաստատենք նոր հրամանով: Աստծո օգնությամբ կպատժենք և՛ Հերակլին, և՛ Ջառչի-Փանահի որդի Իբրահիմին ու Առստամին: Կրկին երդվում ենք Աստծով և շահերի սուրբ գերեզմանով՝ այդ դավաճաններին իրենց ամբողջ արական և իգական սերնդով հանդերձ սպանել այն մահով, որով սպանվել են Գանձասարի անմեղ Հովհաննես կաթողիկոսը, Դիզակի հարազատ Մելիք-Բախտամը, մեր ամենասիրելի Մելիք-Մեջլումը և շատ ուրիշ անմեղ մարդիկ:

Այժմ Ղարաբաղը և Շուշիի բերդս Ձեզ եմ հանձնում հետևյալ պայմաններով.

Ա) Հինգ մելիքներդ էլ պետք է միշտ հավատարիմ մնաք պարսկական գահին:

Բ) Դուք պարտավոր եք տարին մեկ անգամ հարկ վճարել պարսկական արքունիքին, այն հարկահավաքի ձեռքով, ով կներկայացնի ձեզ շահի կնիքով կնքված փաստաթուղթը:

Գ) Ձեզանից յուրաքանչյուրն ունենալու է իր մասնավոր բերդը, իսկ Շուշին կլինի Ձեր բոլորի մելիքանիստ քաղաքը: Որպեսզի ձեր մեջ երկպառակություններ, ներքին խռովություններ և առանձին խմբավորումներ չլինեն:

Դ) Հինգ մելիքներդ առանց խտրականության հավասար եղբայրներ եք: Ձեզանից ոչ ոք մյուսից մեծ չէ: Հետևաբար՝ ձեր զորքը, գանձը, գույքն ու ժողովուրդը պատերազմի ժամանակ պետք է միասին գործեն:

Ե) Թե՛ ներքին և թե՛ արտաքին գործերը պարտավոր եք միասին համաձայնեցնել և միասին ըստ դրա գործել:

Զ) Հարկ եղած դեպքում կարող եք ձեր միջից մի դատավոր ընտրել և ամեն մի դատաստան, որոշում, վճիռ և ընտրություն ժողովով անցկացնել:

Է) Ձեր ունեցած առանձին գումարը պետք է մտնի հասարակական գանձարան: Գանձարանի գումարով հինգ մելիքների համար պետք է կառուցվեն հինգ միաձև տներ և ձեզանից յուրաքանչյուրը գանձարանից հավասար քանակությամբ գումար պիտի ստանա: Թող ձեր մեջ միշտ հարատևեն սերն ու միաբանությունը: Դրամաբաժանումը լինելու է ձեր ընտրած ժամա-

նակ, որպեսզի խռովություններ չծագեն:

Ը) Գանձարանի ելքը և մուտքն ամեն տարի հնարավորինս կանոնակարգելու է և ժողովրդից գլխահարկ է պահանջվելու:

Թ) Այն մելիքը, ով այս ինն կանոններին կհակառակվի՝ մելիքների կողմից կարժանանա որոշված պատժի:

Այս պայմանագրից գրվեցին երկու օրինակ, կնքվեցին Շահի և մելիքների կնիքներով ու ստորագրություններով: Մի օրինակը մնաց Շահի մոտ, իսկ մյուսը՝ մելիքների մոտ:

Նոր նշանակված մելիքների կնիքները կրում էին «Ադամ բեկ» և «Աբաս բեկ» անունները:

Հարազատ մելիքները խորին շնորհակալություն հայտնեցին Շահին և խոստացան ճշգրիտ ենթարկվել այդ պայմաններին:

ԼԱ.

Այդ առավոտ Շահը սովորականից ուշ արթնացավ: Երբ մելիքները ներքին սենեկապետ Սափառլի-բեկից հարցրին պատճառը, նա համարձակ պատասխանեց. «Շահին սպանել եմ»: Ոչ ոք չհավատաց, բայց Սափառլի չարագործը ներս մտավ ու հանեց Շահի կտրած գլուխը, ցույց տվեց բոլորին, և այն հրապարակ նետեց:

Շահի գլխատման լուրը բերնեբերան տարածվեց բոլոր փողոցներում: Քաջասիրտները արագ ներս մտան և հափշտակեցին ընծա բերված բոլոր իրերը, իսկ պարսկական զորքը թաքուն փախավ Պարսկաստան, հազիվ կարողանալով իր հետ բերել Շահի երկրորդ սենեկապետ Աբաս-բեկին, ով գլխատման ոճրագործության մասնակից էր կասկածվում:

Սարսափելի է, իմ սիրելի որդյակ Ապրես, սարսափելի:

Այսպես, ուրեմն Շահի հետ գլխատվեց նաև Ղարաբաղի հարազատ մելիքության գլուխը՝ անկատար թողնելով որոշված ամեն ինչ»:

1797 թվականին Աղա-Մամադ-Շահին հաջորդեց Ֆաթալի-Շահը, որ ժողովրդի կողմից ստացել էր Բաբա-Խան-Շահ ան-

վանումը:

Սպանված Շահի երկու քույրերը ներկա Շահից պահանջեցին իրենց եղբորը սպանող չարագործին, ցույց տալով, որ այդ ոճրագործությունն ուղղակիորեն վերաբերվում էր ամբողջ Պարսկաստանին և պարսկական գահին: Ֆաթալի-Շահը անմիջապես հրամանով դիմեց, և Իբրահիմ խանից պահանջեց շահասպան դավաճանին, սպառնալով, որ եթե վերջինս հրաժարվի ուղարկել նրան, ապա շահը կջնջի Ջառչի-Փանահի ամբողջ սերունդը:

Երբ չարագործ Սափառլի-բեկը հասավ Թեհրան, ենթարկվեց հարցաքննության: Ահա նրա խոստովանությունը. «Ամեն տարի Շուշիի Իբրահիմ-խանը Շահից թաքուն ինձ համար, որպես նվեր մեծ գումար և այլ արժեքավոր իրեր էր ուղարկում, բայց նպատակն ինձ անհայտ էր: Երբ հասանք Շուշի, Մոլլա-Փանահը, ով մինչև բանտարկվելը հաճախակի այցելում էր Շահին, թաքուն ինձ սովորականից քառապատիկ ավելի գումար տվեց և հայտնեց այդքան շռայլ նվերների նպատակը, որն էլ այն էր, որ ես այդ նվերների դիմաց պետք է սպանեի Շահին, նրա բերած մահաթույնով»: Մոլլա-Փանահն ավելացրեց. «Սափառլի-բեկ, դու մի մարդ սպանելով, ազատելու ես հազարավոր անմեղ մարդկանց մահից, իսկ քո ամենամեծ նվերը իմ մոտ է, մի արկղ լիքը ոսկի, որ Իբրահիմ-խանն իմ մոտ որպես ավանդ է թողել, այն պայմանով, որ դու թույնը տաս Շահին, փախչես այդտեղից, խանի հետ Շուշի վերադառնաս և այդ հարստությունները հանգիստ վայելես»: Խոսելուց հետո Մոլլա-Փանահն ինձ գաղտնի տարավ իր տուն: Ցույց տվեց ոսկով լի արկղերը և հանձնեց բանալիները:

Ես Մոլլա-Փանահին խոստացա ամեն ինչ կատարել, երբ Շահն անգթորեն վարվի բոլոր նրանց հանդեպ, ովքեր կասկածելի էին թվում նրան:

Երբ Վարարակն[1] գյուղում, Շահի հրամանով սպանվեց 200 մարդ, Վարանդայի Աշան գյուղում Շահի հրամանով անգ-

[1] Հորդառատ աղբյուր, որ այժմ կոչվում է «Խանքենդի»:

թորեն սպանվեցին 300 թուրք տղամարդիկ, Շուշիում նույն հրամանով ջախջախվեցին 300 մուսուլման, և երբ հենց նույն օրը պիտի ոչնչացնեին ևս 300 մուսուլմանների, որոնց մեջ էին մտնում Իբրահիմ-խանի ամբողջ գերդաստանը և Մոլլա-Փանահը՝ թուրք հայտնիների հետ միասին, որոշեցի Շահի ոտքերն ընկնել և խնդրել, որ վերանայել տալ այդ անմարդկային որոշումը կամ գոնե սարսափելի տանջանքներից ազատել այդ խեղճ հանցավորներին: Հանցավորներին գլխավորում էին Մոլլա-Փանահը՝ իր մի քանի ծառայողներով, Մելիք-Ալլահվերդին, Մելիք-Միրզախանյանը իր զինվորական դասով և Իբրահիմ խանի կողմնակից Միրզա-Ջամալն իր համախոհներով և մի քանի մահմեդականներ՝ իրենց համախոհներով:

Երբ Շահը պատրաստվում էր քնել, ծնկաչոք ոտքերն ընկա և աղերսեցի պատիժները փոխել բանտարկության: Իսկ Շահը փոխանակ ընդուներ կամ մերժեր իմ առաջարկը, բարկացավ.

«Սարսափելի է, վաղը հրամանը կատարելուց հետո սպանվածների գլուխները պետք է կանգնեցնեմ բերդիս գլխավոր դարպասին, իսկ քո անպիտան գլուխը պետք է այդ գլուխների գագաթին դնեմ, քանի որ դու համարձակվում ես մեր անխախտ որոշումը հեղաշրջել, և աննահանջելի հրամանից հրաժարվել:

Ես իմ փորձից գիտեի, որ Աղա-Մամադ-Շահի վճիռն անփոփոխ էր: Գիտեի, որ նրա բերանից դուրս թռած խոսքը միայն մահը կարող էր խափանել: Ուրեմն, ես ևս հետևյալ օրը պիտի մեռնեի: Այդ իսկ պատճառով սպանության միտքն ավելի հաստատվեց իմ մեջ:

Կես գիշերին կամաց մոտեցա Շահի անկողնուն, կտրեցի նրա գլուխը, մի շշով հավաքեցի արյունը: Լուսաբացին գլուխը շպրտեցի հրապարակ և հեռացա ինձ համար նախատեսված ձիով: Քարխուտ կոչվող վայրում մի քարի վրա նույն արյունով

---

[1] Այդ արյան հետքերը մինչև հիմա էլ երևում են Քարհատի հին ճանապարհի վերևում կախված մեծ քարի վրա: Ժողովրդական ավանդազրույցները և արյան կարմիր հետքերն ապացուցում են այդ եղելության ճշմարտությունը:

նշան[1] արեցի և փախա Իբրահիմ-խանի մոտ:

Իբրահիմ խանը, երբ լսեց Աղա-Մամադ-Շահի սպանության լուրը չափազանց ուրախացավ: Շուտով հասանք Շուշի, նա ինձ հանձնեց ոսկով լի արկղը և առաջարկեց իր ազգականներից մի հարս ընտրել: Բայց որոշ ժամանակ անց այդ առաջարկությունն ինքնին ոչնչացավ, քանի որ ոտնաձև պայտերով պայտել տվեց ոտքերս և ինձ ուղարկեց Պարսկաստան՝ հակառակ իմ խնդրանքների և իմ արած լավության դիմաց: Նա միշտ իմ արտասվախառն աղերսանքներին այսպես էր պատասխանում. - «Ինձ հրամայված է քեզ պայտած ուղարկել Ֆաթալի-Շահին»:

Ահա հստակ պատմեցի ամեն ինչ և արդեն պատրաստ եմ պատիժս կրելու:

-Սպանության գործում ո՞վ քեզ աջակցեց,- հարցրեց Աբաս-Միրզան, որ Ֆաթալի-Շահի թագաժառանգ որդին էր:

-Ոչ ոք,-պատասխանեց չարագործը:

-Որտե՞ղ են քեզ տրված ոսկիները:

-Իբրահիմի մոտ են, արկղով: Արդար Իբրահիմ խան.....:

-Աբաս-բեկը քեզ հետ մեղսակից չէ՞ր սպանության գործում:

-Ամենևին ոչ, նա բոլորովին անմեղ է:

Շահասպանի դիակը մի քանի օր կախված մնաց կախաղանից և ապա պատի տակի փոսում ծածկվեց հողով: Իսկ Աբաս-բեկը ազատվեց բանտից:

Ֆաթալի-Շահին այսքանն էլ բավական էր, և նա կրկին անգամ անպատիժ թողեց իսկական հանցագործ Իբրահիմ-խանին և Մոլլա-Փանահին:

ԼԲ.

1798 թվականին հայրս հարազատ մելիքներից հետզհետե

նամակներ ստացավ: Ահա այդ նամակների համառոտագրությունները:

Դիզակի Մելիք-Բախտամյան Մելիք-Աբասը գրում էր, որ իր հորը՝ Մելիք-Բախտամին մահաթույնով սպանած Իբրահիմ-խանը հիմա էլ ուզում է իրեն սպանել: Ասում էր, որ նա իր հոր ներկայության կարիքը շատ էր զգում: Նա ուզում էր Ազրայել-Իբրահիմին որպես իր զորավար տեսնել: Դա ելնում էր և Ղարաբաղի ընդհանուր շահերից: Հույս ուներ, որ իր առաջարկությունն ավելի շատ հոր հավանությանը կարժանանար, քան՝ մերժմանը: Ղարաբաղում սաստկացել էր ահռելի սովը և շատ մարդկանց կյանքեր էր խլում:

Տփխիսից Մելիք-Ֆրեյդոնը գրում էր, որ Եկատերինա Բ թագուհու մահից անմիջապես հետո ռուսական գահը ժառանգել է Պողոս Ա կայսրը 1796 թվականին: Ինքը՝ Մելիք-Ֆրեյդոնը, Մելիք-Շահնազարյանը և Մելիք-Ջումշուդը գահակալությունը շնորհավորելու նպատակով ներկա էին ամբողջ Ղարաբաղի հայության կողմից: Պողոս Ա-ն կրկնեց իր նախնիների տված խոստումը Ղարաբաղի հարազատ մելիքությունը վերակազմավորելու վերաբերյալ: Սարգիս Ջալալյան հարազատ կաթողիկոսը, Մելիք Աբով Գ-ն, ինքը և Մելիք-Ջումշուդը ճըռ-մելիքների արարքներից հիասթափվելով, որոշել են մինչև Ռուսաստանն իր խոստումը կատարելը, մի ժամանակավոր և շարժական գաղթականություն հաստատել Լոռի և Բորչալու գավառներում: Գաղթականության պայմանագիրը մի առանձին հրամանով կայսրը հաստատել էր հայ հարազատ մելիքների և վրացի իշխանների միջև: Այդ մելիքներն իրավունք ունեին Ղարաբաղ փոխադրվելու ժամանակ իրենց գավառների կալվածքները վաճառել որպես սեփականություն: Սարսափելի սովի պատճառով շատ ժողովուրդ Ղարաբաղից դուրս է գալիս՝ ինչպես այլ վայրեր, այնպես էլ Տփխիս, Լոռի, Ղազախ և այլ գավառներ: Վրաց Հերակլ իշխանը մահացել է 1798 թվականին և նրան հաջորդել է Գեորգի (Գևորգ) իշխանը և Գաղթականության պայմանագիրը հաստատող Կայսերական հրամանը շուտով հասնելու էր Գեորգի իշխանի ձեռքը:

Մելիք-Ադամից գրված նամակն արժանի եղավ ամբողջու-

թյամբ այստեղ տեղադրելու համար: «Սիրելի Բեկնազարյանց, Ղարաբաղ վերադարձավ Իբրահիմ-խանը, մելիք Առստամի հետ: Նա սկսեց մեկ-մեկ եղջյուրները հանել, բայց ձեր քաջերը քնած չեն, այլ փչրում են նրա ձեռնարկած ամեն քայլ, որ կորստաբեր էր Ղարաբաղի համար:

Ղարաբաղում սաստիկ սով առաջացրին Աղա-Մամադ-խանի կրկնակի արշավանքները, Հերակլի, Իբրահիմ-խանի, Զուբովի արշավանքները, արտերի հրդեհվելը, և անասունների Պարսկաստան տեղափոխելը: Իսկ երկարատև երաշտը մեզ համար ժանտախտ բերեց, որին զոհ գնացին շատերը: Մեծ և Փոքր Սյունիքի 315.000 բազմամարդ բնակիչներից անգամ կեսը չի մնացել: Գյուլիստանի, Ջրաբերդի, Ստորին Խաչենի, Վարանդայի և Դիզակի ժողովրդի մեծ մասը գաղթեցին, իսկ Վերին Խաչենը, Զառիստանը, Կապանն ու Մեղրին համարյա թե ամբողջությամբ դատարկվել են բնակիչներից, նրանցից շատերը մեռել, շատերն էլ գաղթել են:

Ահա այն հաշիվը, որ հնարավորինս չափ կարողացա ձեռք բերել:

---

[1] Այս և բոլոր թվերը գրված էին հայերեն տառերով, որպեսզի ընթերցողին հասկանալի լինի՝ մենք փոխեցինք թվանշաններով:

[2] Մենք 1872-ին Տաջիկստանի Նիկոմեդիա և 1878 թվականին Զմյուռնիա քաղաքում, շրջագայելու ժամանակ չմոռացանք ուսումնասիրել քաղաքների և գյուղերի հայկական եկեղեցիների հին հիշատակարանները և հանգստարանների տապանաքարերը: Այցելուներին մատնանշում էին հատկապես Զմյուռնիա հանգրվանած գաղթականների հանգուցյալների շիրմաքարերի արձանագրությունները որոնք ցույց էին տալիս գաղթականների գավառների և գյուղերի անունները. Ղարաբաղի Ղափան, Մեղրի, Կալեր, Աշան, Կճողոտ, Հացի, Հաղբութ և այլն: Զմյուռնիայի Տենզիլ գյուղում մենք հանդիպեցինք հարյուր տարեկան պառավների, որոնք իրար հետ խոսում էին Ղարաբաղի ներկայիս գեղջկական բարբառով: Հիշյալ թվին, մեր ուսումնասիրության ժամանակ, Զմյուռնիայում կար մոտ 15000 արու անհատ: Տաջիկստանի հայ գաղթականները պահպանել են իրենց հայությունը և կրոնը, բացի մի քանի հազար կրոնափոխ եղած հայախոս կաթոլիկ և բողոքական հայերից:

[3] Պարսկաստանից գաղթածներց մեծ մասը վերադարձել է Ղարաբաղ, իսկ մյուս մասից ուղղակի տեղեկություններ չունենք:

20105[1]		ընտանիք սովի և ժանտախտի զոհ դարձան,
26500	տուն	գաղթեց Տաջիկստան[2]
15000	տուն	գաղթեց Պարսկաստան[3]
18000	տուն	Լոռի և Բոլնիս՝ մելիքի մոտ[1]
15000	-,,-	Ղազախ ու Շամշադինի կողմերը[2]
13000	-,,-	Վրաստանի և այլ կողմեր[3]
12000	-,,-	Շամախի[4]
12000	-,,-	Նուխի[5]
10000	-,,-	գաղթեց Կախեթի կողմերը[6]
6000	-,,-	Ռուսաստան
5000	-,,-	Հնդկաստան
3000	-,,-	Լեհաստանի և Հունգարիայի հայկա-կան կողմերը
2000	-,,-	Մոլտա-Վալաքիայի կողմերը[7]

---

1 Ամենամեծ մասը մելիքների և Սարգիս կաթողիկոսի հետ կրկին մտան Ղարաբաղ, իսկ փոքրամասնությունը մնացել է գաղթած երկրում:

2 Այսպես էլ և Ղազախ և Շամախի մասերը:

3 Վրաստանի կողմեր գաղթածները կորցրել էին իրենց մայրենի լեզուն, խոսում էին վրացերենով, բայց «Ներսիսյան» դպրոցի տված ուսման շնորհիվ, հիմա սկսել են հայերեն խոսել, մանավանդ այնտեղ սովորող ուսանողները, աշակերտներն ու աշակերտուհիները:

4 Շամախի գաղթած մի քանի ընտանիք բողոքական դարձան:

5 Նուխի գաղթածներից մի փոքր մասը հունադավան դարձան, իսկ ամենամեծ մասը պահպանելով իր հայությունը՝ բնակվեց Սեոկիթլու, Եազուբլու, Դաշբուլաղ գյուղերում:

6 Այդ գաղթականների կեսը վերադարձել են Ղարաբաղ, իսկ մնացածների մեծ մասը թեև իր մայրենի լեզուն թողած վրացերեն է խոսում, այնուամենայնիվ պահպանել է իր հայությունը, որից էլ նոր սերունդը սկսել է հայերեն խոսել:

7 Լեհաստան և Հունգարիա գաղթածներից մի մասը կաթոլիկ դարձան, իսկ Մոլտո -Վալաքիա՝ գաղթածներից պահպանեցին իրենց հայությունը և լեզուն, ինչպես նաև գաղթեցին Դուբեր, Հոտորինքա, Ճրջովա, Սուչովա և այլ քաղաքներ:

8 Ճառի (Զաքաթալա) կողմերն գաղթածները կորցնելով իրենց Լեզուն, «Ենիկիլով» անվանվեցին, որոնց մի մասը վրացերեն է խոսում, իսկ մյուս մասը՝ թուրքերեն: Վրացերեն խոսողները 1855 թվականին ցանկացան նորից Հայ եկեղեցու ծոցը մտնել, բայց ստիպված վրացական բռնությունների պատճառով հունադավանություն ընդունեցին: Թե վրացերեն խոսողների և թե թրքախոսների ազգանունները վկայում էին որ նրանք հայ են, օրինակ՝ Թորոս -Օղլը, Կարապետ- Ուշազ, և այլն:

2250	-,,-	Ճառի կողմերն[8]
2100	-,,-	Ասորեստան
2090	-,,-	Արարատյան նահանգ
1050	տուն	Հունաստանի չգիտեմ՝ որ կղզիները

Անողորմ սովից և անգութ ժանտախտից մեռնողներ շատ եղան: Բայց թե ինչ միջոցների են դիմում, սովի անդիմադրելի բռնությունից ստիպված, սովալլուկ տղամարդիկ և կանայք, թե ինչպես են ապրում մնացյալը, թե ինչպիսի մահով են մեռնում և ինչպես թաղվում, այդ մասին ոչինչ չեմ գրում, խնայելով արդեն իսկ պանդխտության ցավով լցված ձեր հոգիները և ճնշված սրտերը:

Ձեր քաջերից ժանտախտից մահացան Խնածախի Պրախմազը, Ջափար-Սարասարը, Քյարվանդռան-Բրուտը և բալուջեցի մի քանի քաջեր: Քյորօղլին հիվանդ է:

ԼԳ.

Բոլոր խաների թվում՝ Իբրահիմ խանը ևս շտապեց շնորհավորել Ֆաթալի-Շահի գահակալությունը և խորին ցավակցություն հայտնել Աղա-Մամադ-Շահի սպանության համար, այդպես էլ վարվեց նաև Մոլլա-Փանահը: Իբրահիմի և Մոլլայի ուղարկած նվերներն ու նամակները նման չէին մյուս խաների նամակներին: Այնտեղ կար կեղծ շողոքորթություն, իսկ նվերները ճոխ ու շռայլ էին:

Ֆաթալի-Շահը իր նախորդների նման պատերազմասեր ու փառասեր չէր, այլ սիրում էր խաղաղություն հաստատել հարևան թագավորների և խաների հետ, իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդը և ազգը կառավարում էր որպես խնամող հայր: Շահերից ոչ մեկ Ֆաթալի-Շահի չափ ողորմած, մարդասեր, ներող, հպատակասեր և խնամող չէր, նամանավանդ՝ հայերի նկատմամբ: Այնուամենայնիվ, այս Շահը վայելքներ շատ էր սիրում, այնպես որ՝ նախորդի հակապատկերն էր

ներկայացնում: Կանացի սենյակները լի էին բազմաթիվ պարսիկ, թուրք, օսմանցի, լեզգի և վրացի կանանցով, սպիտակամորթ և սևամորթ աղախիններով: Պալատի ծախսերը միլիոններ էր կազմում: Իսկ Ֆաթալի-Շահի թագաժառանգ որդին, Աբաս-Միրզան՝ փառասեր էր, պատերազմասեր, հայրենասեր, նախանձախնդիր, հաստատակամ և եռանդուն երիտասարդ էր, ով հետզհետե շահեց հասարակության սերը և համակրանքը: Պարսկաստանի ներքին և արտաքին գործերը համարյա թե նա էր ղեկավարում, այդ իսկ պատճառով հակառակ իր հոր կամքին՝ կրկնապատկեց ռազմամթերքի և զինվորների թիվը:

Ներկայիս Շահը անկարեկից չէր Ղարաբաղի սոված ժողովրդի նկատմամբ, այլ նա մարդասիրաբար շտապեց հարազատ Մելիք-Ադամին և Մելիք-Աբասին, դրամ, ցորեն, գարի, կով, եզ, ոչխար, ձի, ջորի, գոմեշ և այծ ուղարկել, որպեսզի սփոփեր Ղարաբաղում մնացած հայության վիշտը: Իսկ Իբրահիմ խանին նամակով խստիվ հրամայեց սիրալիր վարվել հայերի հետ, հիշեցնելով, որ Աղա-Մամադ-խանի սպանության, սովի, համաճարակի, ժանտախտի և բազմաթիվ գաղթերի միակ մեղավորը նա էր:

Ֆաթալի-Շահը իր նախորդների նման սիրեց ինձ և հորս: Վերջինս բազում անգամներ է ազատություն խնդրել Ֆաթալի Շահից, որպեսզի հայրենիք վերադառնա, բայց անկարելի եղավ այն ստանալ, քանի որ Աբաս-Միրզան միշտ մերժում էր պատճառաբանելով. «Ղարաբաղում գործեր սկսելու համար ես քո ներկայության կարիքը շատ ունեմ, իսկ շահական արքունիքը՝ քո որդի Ալլահվերդու, գաղտնի նամակներ գրելու և խորհրդակցությունների համար»: Հայրս նամակներով հայտնեց անկարողությունը և Մելիք-Ադամ Բ-ին և Մելիք-Աբասին և մյուս հարազատ մելիքներին:

1800 թվականին Մելիք-Ադամը գրում է հորս. «Ղարաբաղի հարազատ մելիքների և հայ հասարակության կողմից հարգանքի արժանացրեք և շնորհակալություն հայտնեք բարեխնամ Ֆաթալի-Շահին, դրամական և մյուս օգնությունների համար, որոնց շնորհիվ ոչ միայն սովն ու ժանտախտը վերանա-

լու եզրին են, այլև այս տարի առատ հունձք ենք ունենալու:

Մելիք-Բախտամյան Մելիք-Աբասը սպանվեց Իբրահիմ-խանի դավադրությամբ և նա թաքնվեց Տող ավանում, բայց Քյանդխուդա-Խաչատուրը և Նյառաթյով-Աթան իրենց քաջերի հետ միասին լուծեցին հանգուցյալի վրեժը: Գիշերը նրանք գաղտնի հրդեհում են խանի տունը, կոտորելով նրա 500-անոց զորքը և հափշտակելով նրա գանձարանի դրամները: Իբրահիմ-խանը, նրա թուրք զորականները հետամուտ եղան գաղտնի մի գիշեր ոչնչացնել Խնածախի և Բալուջեցի բոլոր քաջերին և այդ երկու գյուղերը: Բայց քաջերը Շեյթան Թյունու միջոցով իմա-նալով, նախօրոք արագ գնացին Քարահատի կիրճ, այնտեղ դա-բանակալեցին և այդ զորքը նույնպես ոչնչացրին: Իբրահիմ-խանն իր թիկնապահներով, 800 սպանվածներ թողնելով Քարա-հատում, փախչում, վերադառնում են Շուշի և մի կերպ ազատ-վում քաջերի ձեռքից: Առստամի զորքից, որ օգնության էր ե-կել իր սիրելի Իբրահիմին, ևս սպանվում է 100 հայ տղամարդ, իսկ Իբրահիմն ու Առստամը ազատվում են:

Հարազատ մելիքների բարեկամ Ջավադ-խանը Գանձա-կից Գյուլ-Յաթաղ մի քանի քաջ թուրք տղամարդկանց ուղար-կելով՝ սպանել տվեց Առստամին և այսպես նա նույնպես լուծեց հանգուցյալ Մելիք-Մեժլումի վրեժը, որով էլ արմատախիլ եղավ Գյուլ-Յաթաղի մելիքությունը: Հիմա միայն մնացել է Խնձրիս-տանի մելիք Ալլահվերդի Միրզախանյանը, ով վախի վախի ազ-դեցության տակ քաջերին էր մտերիմ բարեկամն, իսկ առ երես՝ ճըռ-խանին»:

Հայրս Մելիք Ադամ Բ-ին գրած պատասխանի մեջ իր ու-րախությունն ու շնորհակալությունը հայտնեց, իմանալով, որ արդեն Շահի հրամանով իր հոր փոխարեն, որպես Դիզակի իշ-խան, նշանակվել էր Ղահրաման-Բեկ Մելիք-Աբասյանը՝ Մելիք-Ղահրաման տիտղոսով:

Կարիք չկա կրկին անգամ ասել, որ մի քանի տարիներ ի վեր պատերազմների պատճառով Պարսկաստանի և Ռուսաստա-նի քաղաքական հարաբերությունները խզված էին: Եվ քանի որ Պարսկաստանը Ռուսաստանի մայրաքաղաքում դեսպան չու-

ներ, այդ իսկ պատճառով կարևոր համարվեց, որ շահական արքունիքը մի քողարկված դեսպան ունենար հենց ռուսական պալատում: Այդ գաղտնի դեսպանը պետք է լավ ռուսերեն իմանար, լավ պարսկերեն, ունենար խորամանկություն և լիներ միանգամայն հավատարիմ ու վստահված: Այս պաշտոնի համար ամենահարմարը Սուլին էր: Սուլին ազգությամբ վրացի էր, մանկուց վրացերեն և պարսկերեն գիտեր, հետո Ռուսաստանում ռուսերեն լավ գրել, կարդալ սովորեց, ապա Աղա-Մամադ-Շահի ժամանակ Տփխիսից գերի ընկավ Պարսկաստան, ընդունեց մահմեդականություն, թլպատվելով ստացավ Հուսիկ հայկական անունը, հետո ուխտի գնաց Քերդողա և Քերդողացի-Հայտար անվանվեց: Նրա անունը Նիկոլ էր, երբ դեռ պարսկացած չէր, շատ էր օգտագործում «Սուլի» բառը, որ նշանակում էր հոգի, այդ պատճառով էլ նա ստացավ Սուլի մականունը: Աբաս-Միրզան 10000 թումանի հնդկական ընտիր ակնեղեն հանձնելով Սուլիին՝ ուղարկեց Պետերբուրգ:

Ֆաթալի-Շահն Անդրկովկասի բոլոր խաներին միաձև հրամաններ ուղարկեց, որով հրամայում էր նրանց թողնել բռնապետական հին ոգին և հայ քրիստոնյաների հետ սիրալիր վարվել, եթե մինչև անգամ ռուս պաշտոնյաները և լրտեսներն ամեն ջանք գործադրեն, հայերի սրտերը նվերներով, խոստումներով, տիտղոսներով գրավելու համար: Պետք է անել ամեն ինչ, որպեսզի նրանք չկարողանան հեղաշրջել կամ խախտել հայերի սրտերն ու մտքերը: Իսկ Իբրահիմ-խանի բաժնում ավելացնել տվեց հետևյալ խոսքերը. Ոչ այնքան Շահի անխոհեմ արարքներն են պատճառը, որ Ղարաբաղի մելիքությունը սառել է պարսկական գահի հանդեպ և Ռուսաստանի գիրկն անցնել, որքան քո հոր և քո կոպիտ և տմարդի վերաբերմունքը...»:

ԼԴ.

1801 թվականին Սուլին գրում է Աբաս-Միրզային. «Ողջ

և առողջ տեղ հասա, ակնեղենս լավ գնով վաճառվում է: Շատ շուտ մտերմացա և հարաբերություններ հաստատեցի բարձր դասակարգի ընտանիքների և կառավարության խորհրդարանում ձայն ունեցող աստիճանավոր անձանց հետ: Ակնեղեն վաճառելու պատրվակով մտել եմ մինչև անգամ Ռուսական կայսերական գերդաստան, և պալատական ընտանիքների մոտ:

Ռուսաստանի կառավարությունը հատուկ հրամանով իր տերությանը միացրեց Վրաստանի թագավորությունը: Այդ միացման պատճառը, իբր թե հիմնված է Ռուսաստանի կայսերն ուղղված Վրաստանի և Կախեթի նախորդ թագավորների նամակների վրա, որտեղ ասվում էր. «Վրաստանի և Կախեթի թագավորությունները Ձեր հովանու տակ վերցրեք», իբր թե Պարսից շահերի հաճախակի հարձակումները և անգութ բարբարոսությունները ստիպել են այդ երկու թագավորներին դիմել Ռուսաստանին և իրենց նամակներում ի միջի այլոց գրել այդ բառերը: Այս հնարքը հեշտ ճանապարհ է բացում Ռուսաստանի առաջ, իր երկրին միացնել ոչ միայն Անդրկովկասը, այլև ամբողջ Արարատյան նահանգը: Ահա այս է տեղացի քաղաքագետների ներքին համոզմունքը: Վրաստանը և Կախեթը Ռուսաստանին միացնող հրամանը ուղարկվեց Թիֆլիս:

Պողոս կայսրը վատառողջ է, արքունի բժիշկները ասում են, որ վտանգավոր հիվանդություն է:

Յոթ հազար թուման արժողությամբ ոսկի եմ ուղարկում բանբերիս հետ, երբ ստանաք շատ շուտ ակնեղեն ուղարկեք ինձ, բայց ադամանդները մեծ լինեն, քանի որ շատ յուրահատուկ են և թանկարժեք: Քյալբալայի-Հայդար»:

Ադամանդներն անմիջապես ուղարկվեցին նամակ բերողի հետ, որ Շահի հավատարմատարներից մեկն էր:

Այս թվականին հայրս Մելիք-Աբովից ստացավ մի երկար նամակ, որով նա տեղեկացնում էր, որ ռուսական կառավարությունից Վրաստանի և Կախեթի փոխարքա էր նշանակվել Կավալերսկին, որ այդ փոխարքան այժմ նստում էր Տփխիսում և արդեն վարում էր իր պաշտոնը, որ Մելիք-Ֆրեյդունը Պողոս Ա կայսրից պատվավոր մեդալ էր ստացել, և տարեկան 1000 մա-

նեթ թոշակ, իսկ Մելիք-Ջումշուդը նույնանման մեդալ և տարեկան 2000 մանեթ թոշակ, որ այդ թոշակները մինչև մելիքների մահը ամեն տարի վճարվելու էին արքունի գանձարանից, որ Վրաց Գեորգի թագավոր-իշխանն այնքան ազնիվ է վարվում հայ ժողովրդի հետ, որքան նրա հայր Հերակլը՝ անմարդկային, որ ինքը կայսերական հրովարտակի համաձայն, Գեորգի իշխանից գնել է Բոլնիսն՝ իր սահմաններով, Մելիք-Ջումշուդը Լոռի գավառն՝ իր սահմաններով և Բորչալուի մնացած կեսը, իսկ Մելիք-Ցրեյդունը՝ մյուս մասը, որ յուրաքանչյուր մելիք իր գաղթած ժողովրդի հետ ապրում էր իր սեփական տարածքում: Լեզգիները Բեյլոկանի Օմար-խանի առաջնորդությամբ հարձակվել էին Վրաստանի և Կախեթի արևելյան մասերի ուղղությամբ, ահագին վնաս էին պատճառել, գերեվարել և կոտորել: Ախալցխայի լեռնային և վայրենի ցեղերը ևս հարձակումներ էին գործում Վրաստանի վրա, որ հարազատ մելիքներն իրենց զորքերով օգնել էին վրացիներին, և մեծ ջարդ էին տվել թե՛ լեզգիներին, և թե՛ Ախալցխայի լեռնականներին, որ Վրաստանի և Կախեթի նախկին թագավոր իշխանները պարսիկների, լեզգիների, Ախալցխայի լեռնականների գաղտնի հարձակումներից և հայտնի արշավանքներից ձանձրացած՝ ակամա դիմում են Ռուսաստանի կառավարությանը, խնդրելով, որ վերջինս իր կայսրության հովանու տակ առնի Վրաստանի և Կախեթի թագավորությունները, որ Վրաստանը և Կախեթը Ռուսաստանի հետ միացնող Պողոս Ա կայսեր հրովարտակը ընթերցվեց Տփխիսում, ի լուր վրացի իշխանների և ժողովրդի, որ հրովարտակը կարդացին այն օրը Սբ. Սիոն եկեղեցում, որտեղ արդեն դագաղում հանգչում էր Վրաց Գեորգի թագավոր-իշխանի դիակը, որ այս զուգադիպությունը տեղի է ունեցել 1801 թվականի փետրվարի 18-ին, որ Հովսեփ Արղության արքեպիսկոպոսը, որ ազգի հավանությամբ ընտրվել էր որպես Սբ. Էջմիածնի կաթողիկոս, փոխարինելու Ղուկաս Կարնեցի հանգուցյալ կաթողիկոսին, ով Կոստանդնոպոլսում օծվելու պատճառով հալածվեց Սբ. Էջմիածնի միաբանների կողմից, որ նա շատ հուզիչ խոսել էր Գեորգի իշխանի դագաղի վրա, որ այս նորընտիր կաթողիկոսա-

ցուն անձամբ էր ղեկավարում և լացելով թաղում թագավոր-իշխանի մարմինը, որ նույն գերեզմանում թաղված էին նա և Վրաստանի ու Կախեթի թագավորները ևս, որ անակնկալ և անհայտ մահով մահացել էր և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը՝ նորընտիր կաթողիկոսը, ով համարյա Էջմիածին չէր էլ հասել, նա հանկարծ մահացավ և թաղվեց Տփխիսում, որ այս լուսահոգին մեռնելուց առաջ հարազատ մելիքներին պատվիրել էր, որ այսուհետ առանց վհատվելու դիմեն Պետերբուրգ՝ Մինաս-Աղա Լազարյանցին, ինչպես նրան էին դիմում այդ տարածքում, որ Վրաստանի և Կախեթի թագավորությունները Ռուսաստանի կառավարության հետ միացնող այդ հրովարտակը մեծ հուզմունք, խռովություն և ատելություն տարածեց բոլոր իշխանների սրտերում, որ Վրաստանի և Կախեթի իշխանները բողոքեցին Պողոս Ա կայսերը, որ կայսեր կողմից մի քանի իշխաններ ստացան շքանշաններ և մշտական թոշակներ, որ, այնուամենայնիվ, չեն դադարել իշխանների բողոքները, հուզմունքներն ու խռովությունները, և որ հարազատ մելիքները կարոտով ողջունում են հորս:

Սույն թվականի (1801) մարտի 12-ին Սուլին նամակ է գրում Աբաս-Միրզային. «Այսօր վախճանվեց Պողոս Ա կայսրը, և գահակալեց Ալեքսանդր Ա կայսրը, որի մասին ասում են, որ խաղաղասեր է: Երկու վաշտ զորք մի քանի թնդանոթներով ևս ուղարկվեց Թիֆլիս: Ռուսաստանն արագորեն պատերազմի է պատրաստվում: Որքան կարողացա պարզել, պատերազմը երկկողմանի է լինելու, այն է՝ ռուսական կես զորքը Կասպից ծովեզրյա քաղաքները գրավելով, հասնելու է Բաքու, մյուս կեսը Գանձակը, Շուշին, Նուխին և Շամախին գրավելով միանալու է Բաքվում առաջին զորաբաժանմանը, այս հետևությունը հաստատում է այն գաղտնի որոշված պատերազմի նախագծով, որն արդեն պատրաստել էր ռուս ռազմագետների խորհուրդը:

Քարեղենները ստացել եմ, 5000 թուման ոսկի դրամ ուղարկեցի, լրաբերից կստանաք, քիչ ուղարկելուս պատճառն այն է, որ ես ավելի շատ փորձում եմ քաղաքական գաղտնիքներ ձեռք բերել և Ձեզ շուտ հաղորդել: Ձեր ամենահավատարիմ

ծառա Քյալբալայի-Հայդար»:

Աբաս-Միրզան անմիջապես նամակներ ուղարկեց Անդրկովկասի բոլոր խաներին, որ բերդերը ամրացնեն, ներքին ուժերը կազմակերպեն և պատերազմի պատրաստվեն: Այդպես գրեց նաև Հյուսիսային Դաղստանի բոլոր լեզգի խաներին, և գաղտնի դաշինք կնքեց նրանց հետ, խնդրելով, որ անընդհատ հարձակումներ անեին ռուսական այն սահմանների վրա, որտեղից ռուսները պատրաստվում էին մուտք գործել Անդրկովկաս: Իսկ ինքը շուտափույթ Պարսկաստանում և Երևանում պատրաստել տվեց սովորականից ավելի ռազմամթերք:

Այդ ժամանակ հայրս Աբաս-Միրզայից կրկին հրաման խնդրեց Ղարաբաղ վերադառնալու համար, սակայն նորից մերժում ստացավ նույն պատճառաբանությամբ: Վերջապես ակամայից ստիպված համակերպվեց մնալ Պարսկաստանում:

Մի քանի օր հետո Աբաս-Միրզան հորս համար կարդաց հետևյալ նամակը:

«Ողորմած Աբաս-Միրզա, Պարսկաստանի արժանի գահաժառանգ: Նամակս գաղտնիք է, ստացա Շահի նամակը, խոստովանում եմ, որ թե ես և թե հայրս հանցավոր ենք Պարսկաստանի և Ղարաբաղի առաջ, մանավանդ Շահի առաջ: Այժմ ես զգում եմ մինչև այժմ բռնած իմ վտանգավոր դիրքը, որով ոչ միայն Ղարաբաղի ու Գանձակի բարկությունը շարժեցի, այլև ամբողջ Իրանի: Երդվում եմ բոլոր սուրբ իմամների գերեզմաններով, այսուհետ ցմահ հավատարիմ հպատակ մնալ և անքակտելի բարեկամություն հաստատել ուղղափառ Պարսից շահերի հետ և անհաշտ թշնամի լինել այլադավան և անհավատ ռուսների հետ:

Ղարաբաղի քաջ հայերի՝ ինձ տված վնասներն անթիվ և անհամար են, բայց և այպես այդ նյութական, բարոյական և անձնական[1] վնասների պատճառները ես գտնում եմ մինչ այդ

[1] «Անձնական» բառով ցանկանում է հասկացնել իր այն զորքերը, որոնք ջախջախվել են հայ քաջերի կողմից: Ծանոթագրություն հեղինակից:

իմ բռնած անփորձ և ոչ ճիշտ կառավարման և քաղաքականու-թյան մեջ: Հույս ունեմ, որ իմ այս ի սրտե զղջումը կարժանա-նա Ձեր անհիշաչարությանը, քան՝ վրեժխնդրությանը:

Պարտքս եմ համարում տեղեկացնել Ձեզ այն, որ Խնածա-խի և Բալուջայի քաջերը ինչ վնասներ են հասցրել և դեռ հասց-նելու են ինձ, այդ ամենը կատարվում է Ազրայել-Իբրահիմի խորհրդով, ով այժմ գտնվում է Ձեզ մոտ՝ Ղարաբաղում: Այս խոսքերը բավական են ամեն ինչ բացահայտելու համար: Պարս-կաստանի և Ղարաբաղի համար նրա մահն ավելի պատվավոր կլինի, քան կենդանությունը:

Սով ու ժանտախտ էլ չկա:

Ձեր ամենախոնարհ ծառա Իբրահիմ-խան»:

Կարդալն ավարտելուց հետո Աբաս-Միրզան գլուխը շար-ժեց և գոչեց.

«Զարմանալի հիմարություն. Իբրահիմը մի կողմից խոս-տովանում է իր և իր հոր գործած ծանր մեղքերը և աղաչանքով ներեղություն է խնդրում, իսկ մյուս կողմից մուր է քսում Բեկ-նազարյանցի նման մի անմեղ և հայրենասեր անձնավորության վրա, ում միշտ սիրել է ինչպես Աղա-Մամադ-Շահը, այնպես էլ մեր հայրն ու մենք: Այդ ազգի հիմարությունը հաստատում է պատմությունը: Ջառչի-Փանահը, որ ցանկանում էր խաբել Զենդ-Քյարիմ-խանին, վերջինս պատռել տվեց նրա փորը և իս-կապես մեռած ուղարկեց Ղարաբաղ, իսկ հիմա նրա հիմար որ-դի Իբրահիմը մեզ հիմար կարծելով, ջանք է անում մեր ձեռքով դավաճանությամբ սպանել Ազրայել-Իբրահիմին, որպեսզի ինքն իր ուզած դերը խաղա Ղարաբաղում: Իրոք՝ զարմանալի հիմա-րություն...»:

ԼԵ.

1802 թվականին Մելիք-Ադամ բեկը գրում է հորս. «Սի-բելի Բեկնազարյան, սովը փոխվել է առատության, իսկ ժան-տախտը՝ առողջության: Իբրահիմ-խանը սպանված Մելիք-Առս-

տամի փոխարեն Գյուլ Յաթաղում որպես իշխան հաստատեց նրա եղբորորդի՝ Մելիք-Առուշանին: Մելիք-Առուշանը Մելիք-Առստամի հակապատկերն էր, արտաքուստ Իբրահիմին էր հարում, իսկ ներքուստ՝ հարազատ մելիքներին և հայ քաջերին: Ա-թարբեկյան Վանի-Յուզբաշին, որն, ինչպես գիտենք, Ջրաբերդի Կուսապատ գյուղից է՝ մի քաջ, հավատարիմ և հայրենասեր անձնավորություն է, ով այժմ մեր զորավարն է: Ձեր քաջերը դյուցազնաբար պաշտպանում են Խաչենը թշնամիներից և Իբրահիմ-խանի ոտնձգություններից, Քյորօղլին և Վանի-Յուզբաշին իրենց զորքերով Ջրաբերդ և Գյուլիստան գավառները, մնացած ժողովրդի վրա իշխում են Մելիք-Աբով Դ-ի բացակայության պատճառով: Մյուս կողմից Գանձակի ազնիվ Ջավադ-խանը նույնպես օժանդակություն է ցույց տալիս: Հիմա ես ապրում եմ Իբրահիմի նենգություններից և հարձակումներից ազատ:

Դիզակի Մելիք-Ղահրամանն իր ընտանիքով գաղթեց Տփ-խիսի կողմերը, որտեղից էլ իշխում է Դիզակի և Վարանդայի վրա: Մելիքի գաղթելու պատճառը Իբրահիմի անհաշտ թշնամանքն է, որը Մելիք-Եսայուց սկսած տարածվում է այդ տոհմի և տան զավակների վրա: Լավ չէ Դիզակն ու Վարանդան անիշխան թողնելը, եթե հնարավոր է՝ խնդրում եմ շուտով այդ գավառների իշխան նշանակեք Մելիք-Աբասյան Բաղր-Բեկին, ով մի քաջ ու ազնիվ երիտասարդ է:

Մշտապես հիշում են Ձեզ՝ ազնիվ Ջավադ-խանին և Ձեր բոլոր քաջերին: Աստծո օրհնությամբ ողջ լինեք»:

Բարեխնամ Ֆաթալի-Շահը մի առանձին հրամանով Դիզակի վրա մելիքության տիտղոսով իշխան հաստատեց Բաղր Բեկին: Հրամանն ամրագրում էր իշխել Վարանդա գավառին այնքան, մինչև հարազատ Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը կվերադառնար:

Այս տարվա վերջին ամսին Սուլին Աբաս Միրզային գրեց հետևյալը. «Ռուսաստանի կառավարությունը գաղտնի խորհրդակցությամբ որոշեց իրագործել հետևյալ որոշումները.

Ա) Վրացական իշխանների սրտերը գրավելու և մտքերը

հանդարտեցնելու համար, թոշակները ավելացնել և հետզհետե շքանշաններ պարգևել:

Բ) Վրաստանի և Կախեթի ժողովրդի սերը ռուսական գահի նկատմամբ արթնացնելու համար, անհրաժեշտ էր զորք ուղարկել և երկիրը ազատել շրջակա թշնամիներից:

Գ) Ռուսաստանի գահի պատիվը բարձրացնելու և ռուսական գերիշխանությունը Պարսկաստանի և շրջակա ազգերի վրա տարածելու համար անհրաժեշտ էր Անդրկովկասի շուտափույթ գրավումը:

Դ) Որևէ մի ձևով կայսեր կողմը քաշել Անդրկովկասի հայերի սրտերը, որով ավելի կհեշտանար այդ երկրի գրավումը:

Ե) Անդրկովկասը գրավելուց հետո նվաճել նաև Հյուսիսային Դաղստանը, որով էլ միանգամից կվերջանային այդ լեռնականների հարձակումները, կխզվեր Պարսկաստանի և Օսմանյան տերության հետ կապը և խաղաղություն կլիներ:

Զ) Պարսկաստանի դեմ սկսվող պատերազմի հրովարտակում գրվելու է. «Ռուսաստանը սուր է բարձրացնում թշնամիների դեմ, Անդրկովկասի քրիստոնյաների ազատության համար»:

Երկու վաշտ զորք ևս ուղարկվեցին Վրաստան: Երևի շուտով կհայտարարեն պատերազմի հայտարարման հրովարտակները»:

Աբաս-Միրզան խաներին նույն հրամանները տվեց, նրանց հայտնելով այդ գաղտնիքը:

1803 թվականին Քյանդխուդա-Խաչատուր Բարխուդարյանն Խնածախից գրում է հորս. «Այս նամակը գրել տվեցի Ձեր նախկին ուսուցիչ Տեր Աբրահամի ձեռքով, Ձեր սիրելի Աշտարակեցի Թորոս սարկավագը, որ վարդապետ է ձեռնադրվել Ներսես[1] անվանումով՝ Էջմիածնի կողմից նվիրական պատրվակով այցի էր ուղարկվել: Նա շրջեց Շամախի, Նուխի, Գանձակ քաղաքներում, և ապա մեզ այցելեց Ջրաբերդում: Որտեղ Շեյթանի

[1] Ներսես Ե կաթողիկոսը այդ ժամանակ նոր էր ձեռնադրվել:

և Կաքև Զաքու կողմից հրավիրված էինք՝ ես, Նյառաթյովը, Քյորօղլին, Վանի-Յուզբաշին և օտար մելիք Առուշանը (վերջինս մեր կամքին հակառակ հրավիրվել էր Մելիք Ադամից): Ներսես Վարդապետը, ինչպես ամեն տեղ գաղտնի քարոզում էր, մեզ էլ քարոզեց, ում գլխավոր խոսքերն հետևյալն էին. «Հայկ դյուցազնի քաջասիրտ զավակներ, ժամանակը հղի է, և շուտով կծնվի Ղարաբաղի և Հայաստանի փրկությունը: Ղարաբաղի սահմաններում Ռուսաստանի զորքի երևալը և ասուպ աստղերի նման անհետանալը, գիտեմ տխրեցրել է ձեզ, բայց ռուսական զորքը շուտով կհայտնվի Անդրկովկասում բևեռային անշարժ աստղի նման: Պատրաստեցեք ձեր զենքերը, Ղարաբաղի քաջեր, պատրաստվեցեք ձեր ամբողջ զորությամբ աջակցելու ռուսական զորքին, որի արշավանքն արդեն պատրաստվում է Տփխիսում: Այս անգամ ձեր աշխատանքն անվարձ և իզուր չի լինի, այլ պսակվելու են հայրենիքին օգտակար վարձատրությամբ: Ալեքսանդր Ա ողորմած կայսրը, խոստացել է կատարել իր նախորդների տված խոստումները, որոնց քաջ ծանոթ եք: Պատերազմի դաշտում ես ձեզ միայնակ չեմ թողնի, այլ մի ձեռքով Քրիստոսի խաչը կառնեմ, իսկ մյուս ձեռքով Աստվածաշունչը և անձամբ ձեզ կառաջնորդեմ: Այս տպավորիչ խոսքերը արթնացրեց լսողների հույսը, քաջացան սրտերը, զորացան բազուկները, եռացին արյունները, վառվեցին եռանդները և փառավորվեցին հոգիները:

Պել-Ճամալը, որ ներկա էր, այս վարդապետին տվեց մի խորհրդավոր անուն, այն է. «Ըստուծախոս Մոսես[1]»:

Բոլոր քաջերը բարևում են Ձեզ, Քյանդ. Խաչ. Բարխուդարյան»:

Իսկ Սուլին գրում էր. «Ռուսական զորքը ուղարկվեց Վրաստան, բայց քիչ են: Անդրկովկասյան բանակի զորավար է նշանակվել ազգությամբ վրացի Ցիցիանովը, ասում են, որ նա մի հիմար, անհմուտ և հպարտ մարդ է: Կարգադրել են, որ Ցի-

[1] Աստվածախոս Մովսես:

ցիանովի բանակի պակասորդը լրացնեն Վրաստանի և Ղարաբաղի մելիքների զորքերով, և Բաքվի, Շամախիի, Նուխիի, Գանձակի, Ղարաբաղի, Թիֆլիսի շրջակայքի և Արարատյան նահանգի հայերով:

Հայ մելիքները և Ներսես անունով մի վարդապետ հաճախ նամակներ են գրում և Մինաս աղա Լազարյանցի միջոցով ռուսական կառավարության հետ պայմանավորվում և բանակցում, ինչպես արդեն գիտեք նրանք շուտվանից են բանակցում, սա է պատճառը, որ ավելի շուտ չասացի Ձեզ:

Կասկած չհարուցելու համար ամեն կիրակի հաճախում եմ Ռուսաստանի մայր եկեղեցի և ջերմեռանդ աղոթում: Այս տարբերակը, շատ է օգնում իմ նպատակներին: Արտաքնապես բարեպաշտ վրացի եմ, իսկ ներքուստ՝ մուսուլման, Քյալ. Հայդար»:

Այդ ժամանակ հայրս մի կարճ նամակ ստացավ Մելիք-Աբով Գ-ից, որով նա հայտնում էր, որ ռուսական փոքրաթիվ զորքը հետզհետե կուտակվում է Տփխիսում, թե պատերազմն անխուսափելի է, թե հարազատ մելիքները, իրենց զորքերով և շատ հայ կամավորականներով, կազմ ու պատրաստ էին միանալու ռուսական զորքին, թե այդ կարգադրությունը տվել էր Ներսես վարդապետը, որ պայմանագրով համաձայնվել էր ռուսական կառավարության հետ, թե Վրաց Հերակլ իշխանի որդի Ալեքսանդր իշխանը[1] *ապստամբել է Ռուսաստանի դեմ և, 3000 վրացի երիտասարդների իր կողմը գրավելով, պատրաստվում է միանալ պարսկական զորքին:*

Պարսկական 20000 զինվորից բաղկացած զորքը Փիրզուլի-խանի զորավարությամբ շարժվեց դեպի Գանձակ, նրանց հետ էր նաև հայրս:

---

[1] Այս պատմության մեջ Հերակլը որոշ տեղերում գրված որպես թագավոր, իսկ Ալեքսանդրը արքայազն, իսկ որոշ տեղերում էլ իշխան և իշխանազն: Մենք դա այդպես էլ անխախտ թողեցինք:

ԼԶ.

Զպետք է մոռանալ, որ խաղաղասեր Ֆաթալի-Շահը պատերազմ չէր ուզում, այլ փորձում էր մի կերպ ամեն ինչ հաշտությամբ ավարտել, բայց քանի որ Պարսկաստանն ավելի շատ հարգում էր Աբաս-Միրզային, քան՝ Շահին, Շահն այդ պատճառով Թեհրանից տեղափոխվեց Թավրիզ, պատերազմի մասին տեղեկություններ ստանալու համար: 1804 թվի առաջին ամսին, հայրս գրեց ինձ հետևյալ նամակը և կարգադրեց. «Իմ ամենասիրելի, նամակների կրկնօրինակները ամբողջությամբ դրեք «Գաղտնիք Ղարաբաղ»-ի մեջ՝ ըստ հերթականության:

Գանձակը, որ պաշարված էր Ցիցիանովի զորքի կողմից, գրավվեց հունվարի 1-ին: Ազնիվ Ջավադ-խանը և իր քաջ որդիները սպանվեցին գրավման ժամանակ: Թեև Ներսես վարդապետը, Մելիք-Աբով Գ-ն և Մելիք-Ադամ Բ-ն շատ էին փորձում համոզել Ջավադ-խանին, որ վերջինս, բերդը հանձներ Ցիցիանովին՝ առանց իր կյանքը վտանգի ենթարկելու: Պատճառաբանում էին, թե Ջավադ-խանը, շատ լավություն է արել իրենց և հայերին, որ երախտագիտությունից դրդված բարեկամաբար խորհուրդ են տալիս լսել և իր կյանքը ազատել փորձանքից, բայց խանը պատասխանում է, որ ինքը Աբաս-Միրզայից հրաման է ստացել մինչև մահ կռվել և բերդը ռուսներին չհանձնել: Ռուսական բանակին միացել էին նաև հայերը, նրանք էին՝ Մելիք-Ջումշուդը, Մելիք-Ֆրեդյունը, Գ.Մելիք Աբովյան Առստամ-բեկը և Վանի-Յուզբաշին իրենց զորքերով:

Միացել էին նաև Քյանդխուդա–Խաչատուրը, Նյառատյով Աթան և Քերողլին՝ իրենց քաջերով: Տփխիսի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը խաչը վերցրած, իսկ Աշտարակեցի Ներսես վարդապետը վերցրած Աստվածաշունչը՝ այդ հսկա բա-

[1] Նա Մամաթ Հասան աղայի որդին էր, ով երբեմն անվանվում է նաև Ջաֆար Ղուլի խան:

նակը առաջնորդում էին դեպի Գանձակ:

Պարսկական բանակին օգնում էին Իբրահիմ խանը, իր թոռ Ջափար-Ղուլի-Բեկը[1] և Նախիջևանի խանն՝ իր զորքով: Երբ պարսիկները հաղթվեցին, Իբրահիմ-խանը տեսավ, որ Ղարաբաղի հայ ուժերը միացել էին ռուսների հետ, տեսնելով, որ իր հույսը փչրված է, մտածում է, որ այդ հայերը ռուսներին են հանձնելու Անդրկովկասի բանալին՝ Շուշիի բերդը՝ նկատելով նաև, որ օգնելով Պարսկաստանին, թշնամի է դառնում ռուսների համար, դիմեց խորամանկության: Իր թիկնապահներով դուրս եկավ պարսկական զորքի կողմից և արագ հասավ Քյուրակ-Զայ, դեպի Շուշի գնացող հաղթական բանակի առաջ և Շուշիի բերդի բանալիները հանձնեց Ցիցիանովին՝ հետևյալ պայմաններով.

Ա) Պարտավորվում է ռուսական գանձարանին ամեն տարի վճարել 8000 ոսկի և 500 զինվոր պահել Շուշիում:

Բ) Պարտավորվում է կերակել այդ զինվորներին այն պայմանով, որ ամբողջ ծախսը հոգար արքունի գանձարանը:

Ցիցիանովը գավեշտանքով ընդունեց այս պայմանները, մտածելով, թե խանը ինքնուրույն է իրեն դիմել, այլ ոչ թե հայերի վախից դրդված: Ահա այսպես, առանց պատերազմի գրավեցին Շուշին և 500 ռուս զինվոր գնացին և նստեցին բերդում: Ցիցիանովի բանակը շարժվեց դեպի Երևան նույն հայ միացյալ զորքով և Ներսես վարդապետի առաջնորդությամբ: Պարսկական պարտված զորքը դիմեց և միացավ Աբաս-Միրզայի բանակին, որի հրամանատարը հենց թագաժառանգն էր: Հետզհետե միացան նաև վրաց Ալեքսանդր արքայազնը, երեք հազար վրացի, Լեզգի Նուրի-Շեյխը՝ 3000 լեզգի հեծելազորով և Իբրահիմ-խանի կողմից ուղարկված 2000 թուրք ձիավորները:

Ցիցիանովը մտադիր էր նաև գրավել Երևանը, այդ քայլով նա գրված կդառնար ամբողջ Արարատյան Նահանգը: Ցիցիանովը, արհամարհելով փորձառու Քյանդխուդա-Խաչատուրի և Նյառաթյովի խորհուրդը, անպաշտպան ու անապահով թողեց Տփղիսի և Երևանի հաղորդակցությունը:

Ցիցիանովի այս անզգուշությունը, ոչ միայն մեծ վնաս պատճառեց ռուսական, այլև՝ հայկական զորքին, քանզի Երևանը պաշարվեց ռուսական զորքով, իսկ ռուսական զոր-քը՝ Աբաս-Միրզայի զորքով: Պաշարումը տևեց նույն թ-ի հուլիսի 24-ից սեպտեմբերի 2-ը:

Ընդհատվեց Տփղիսի և Երևանի հաղորդակցությունը պարսկական զորքով: Վերջացավ նաև ռուսական զորքի ռազ-մամթերքն ու ուտելիքը: Ռուսական զորքի համար միայն բաց էր մնացել Սբ. Էջմիածնի վանքի հետ հաղորդակցությունը: Վանքն էլ հենց ամենամեծ ծառայությունը մատուցեց ռու-սական զորքին: Այդ ծանր դրության ժամանակ բացեց իր ամ-բարները և պաշարված ռուսական զորքին տվեց հաց, գինի, օղի, ոչխարների հոտերը, կովերի, եզների, երինջների և արջառների նախիրները: Վերջապես, սպառվեցին և Էջմիած-նի պաշարները: Ռուս և հայ զորքին ներքուստ մահ էր սպաս-վում սովից, իսկ արտաքուստ՝ պարսկական սրից: Զարմացավ Ցիցիանովը, սարսափեց, Աբաս-Միրզան ևս զարմացավ: Քյան-դխուդա-Խաչատուր Բարխուդարյանցը, Նյառաթյով-Աթան, Վանի-յուզբաշին, Քյորօղլին և Գ.Մելիք-Աբովյան Առստամ-բեկն՝ իրենց քաջ զորքով 2 անգամ ճեղքելով պարսկական զորքի ամուր շղթան, Տփխիսից ռուսական բանակին են փո-խադրում թնդանոթ, ռազմամթերք և առատ պաշարներ: Ա-բաս-Միրզան իմանալով, որ այդ հանդուգն զորքը երրորդ անգամ էլ պիտի գնա պաշար բերելու՝ Բամբակի ձորի կիրճ ուղարկեց Ռուսաստանի անհաշտ թշնամի Ալեքսանդր ար-քայազնին, Փիր-Ղուլի-խանին և իր 5000 զորքը: Շեյթան Թյունու միջոցով իմանալով, Ներսես վարդապետն այս ան-գամ 500 զինվոր, Մոնդրեզոր գնդապետին ապահովության համար նույնպես միացրեց հայոց զորքին: Բամբակի ձորում ոռնաց Գյուլ Ուհանը, հնչեցին ռուսական փողերը և սկս-վեց պատերազմը: Մոնդրեզորը, փոխանակ հետևեր Նյառա-

1 Մոնդեզորի գերեզմանը գտնվում է Բամբակի ձորի Սարալ գյուղի մոտ:

թյովի խորհրդին, լեզուն չհասկանալու պատճառով սկսեց պաշտպանողական դիրք գրավել իր զինվորներով հանդերձ, ինչպես հատուկ է կրթված զինվորականին: Իսկ հայկական զորագունդը, կրկին անգամ ճեղքելով պարսից շղթան, հասավ Տփխիս: Այդ կռվում սպանվեց Մոնդրեզորը[1] 400 զինվորներով, սպանվեցին 50 հայ զինվորներ և վիրավորվելով գերի ընկավ մելիքաժառանգ Առստամ բեկը՝ իր 3 թիկնապահներով, թշնամու ձեռքն ընկան նաև 3 ռուսական թնդանոթներ, վառոդ, հրացաններ և 100 զինվոր: Պարսկական զորքից սպանվեց մոտ 1200 մարդ:

Վերջապես Ցիցիանովը ստիպված թողեց Երևանի պաշարումը և առանց այդ քաղաքը գրավելու վերադարձավ Գանձակ, օձի բերանում թողնելով Էջմիածնի միաբանությունը և Արարատյան նահանգի ժողովրդին: Բեկնազարյանց»:

Արարատյան նահանգից կամաց – կամաց շատ գերիներ բերեցին Թավրիզ, որոնց մեջ էին՝ Էջմիածնի Դանիել կաթողիկոսը, մելիքաժառանգ Առստամ-բեկը, որի գլխի աջ կողմը վիրավորվել էր թրի հարվածից և գնդակից, իսկ ձախ ազդրը վիրավորվել էր երկսայր հրացանից: Աբաս-Միրզայի նամակը այս տեղեկություններով հանցավոր էր ճանաչում. «Հայոց կաթողիկոսը հանցավոր է ռուսամետ քաղաքականություն վարելու համար, Արարատյան նահանգի և Անդրկովկասի հայերին Պարսկաստանի դեմ ապստամբեցնելու համար և Էջմիածնի հարստությունով ռուս և հայ զորքին շռայլորեն կերակրելու համար: Մելիքաժառանգը մեղավոր է ոչ միայն Ռուսաստանին աջակցելու, այլև մեր զորքը ջարդելու, Տփխիսից Երևան մեր թշնամի բանակի համար ռազմամթերք և պաշար փոխադրելու համար: Արարատյան նահանգի ժողովուրդը մեղավոր է, քանի որ օգնում էր ռուս զորքին: Բարեպաշտ շահը շատ տխրեց իր անփորձ որդու արածների համար, որ հայոց վեհափառ կաթողիկոսը և Արարատյան նահանգի հայ ժողովուրդը Պարսկաստան փոխադրվում է միայն իր բարկության կրակը վրեժխնդրությամբ հանգցնելու համար: Դանիել կաթողիկոսը մեծ ըն-

դունելության, հյուրասիրության և պատվի արժանացավ Շահի կողմից: Մելիքաժառանգն իսկույն հանձնվեց արքունի բժիշկներին բուժվելու, իսկ ժողովրդին բաժանեցին ապրելու արդեն իսկ հայաբնակ գյուղերում: Դրանից հետո Ցաթալի-Շահը ոչ միայն կարևորություն չտվեց իր որդու գրածին, այլև շտապեց խնամել, պատվել և սփոփել հայոց կաթողիկոսին, Առստամ-բեկին և ժողովրդին, որպեսզի մոռացնել տար նրանց կրած ցավը և վիշտը:

Այս թվականին պարսից զորքը ձմեռեց Արաքսի աջ ափին, իսկ ռուսական զորքը՝ Ղարաբաղում ու Գանձակում և պատրաստվում էին գարնանը կրկին պատերազմելու:

ԼԷ.

1805 թվի գարնանը Պարսկական 20 000-անոց զորքը Փիր-Ղուլի-խանի գլխավորությամբ կրկին արշավեց Ղարաբաղի վրա: Զմոռանամ ասել, որ քաղաքական տեսանկյունից Աբաս-Միրզայի համար Շուշին ամենամեծ նշանակությունն ուներ և համարվում էր Անդրկովկասի գրավման բանալի: Աբաս-Միրզան իմանալով, որ Ցիցիանովը Շուշին լավ ամրացրել է, որոշում է իր ամբողջ ուժերը ներդնել և գրավել Շամախին և Բաքուն: Նա որոշել էր մի հարվածով ձեռք բերել Շուշիի բերդը: 2 ամենահարմար իրավիճակները նպաստում էին Թագաժառանգի նպատակին. դրանք էին՝ ռուսական ուժերի բացակայելը Ղարաբաղից և Իբրահիմ-խանի գաղտնի նամակները: Իբրահիմը հաճախ էր թաքուն գրում թագաժառանգին, թե Շուշիում միայն 500 զինվոր կա, բերդապահը գնդապետ Լիսանեվիչն էր, թե Ցիցիանովը մտադիր էր իր զորքով հեռանալ Գանձակից և գրավել Շամախին ու Բաքուն: Ասում էր նաև, որ ինքը հնազանդություն է խոստացել, բայց ոչ ի սրտե, որ ինքը հայկական

կողմից ստիպված, առանց ցանկության Շուշին հանձնել է Ռուսաստանին, որ ժամանակն էր մի լավ խաղ խաղալ հայերի ու ռուսների գլխներին, որ այդ խաղը ամբողջությամբ ինքն էր խաղալու, գիշերը Շուշիի դռները բացել տալով և բերդը պարսիկներին հանձնելով, դրանից հետո իր թոռ՝ Ջափար-Ղուլի-բեկին գաղտնի ուղարկելու է Արաքսի ձախ ափը, պարսկական զորքին առաջնորդելու ուղիղ դեպի Շուշի: Մենք թողեցինք Աբաս-Միրզայի և Իբրահիմ-խանի գաղտնի նամակների կրկնօրինակումը, որոնք չափազանց շատ ու երկար էին, և այսքանը գրելով սահմանափակվեցինք...:

Արաքսի աջ ափից հայրս գրել էր ինձ հետևյալ նամակը. «Սիրելի Ապրես, այդ պատմության մեջ տեղավորիր նաև այս նամակը: Ջափար-Ղուլի-բեկի առաջնորդությամբ պարսկական զորքը հասավ Թառնագետ[1] բերդակը: Փիր-Ղուլի-խանը այդ բերդակում 100 բերդապահ գինվոր թողեց: Հետևելով պապի գաղտնի նամակի խորհրդին՝ ինքը մնացած զորքով շտապեց դեպի Շուշի: Գրավեց այդ դատարկ բերդը և այնտեղ զորք թողեց, որպեսզի միանգամից խզի Գանձակի և Շահի հաղորդակցությունը, որ իր զորքի հարաբերություններն ազատ լինեն, որպեսզի տեղը տեղին կարողանար օգուտ քաղել ռազմավարական հեռատեսությամբ: Պարսկական զորքը, Ղարաղաճ[2] հասնելով, հանգստացավ, քանզի մութն արդեն ընկնում էր և Փիր-Ղուլի-խանը սպասեց Իբրահիմ-խանի գաղտնի խորհրդագրին: Առավոտվա կողմ լսեցի Գայլ–Ուհանի գայլափողի ձայնը, քիչ

---

[1] Այս փոքրիկ բերդակը 3 անուն ունի՝ Տիգրանակերտ, Թառնագետ և Շահբուլաղ: Հայոց Տիգրան արքայի կողմից կառուցվելով կոչվում էր «Տիգրանակերտե: Երկրորդ անունն ստացել է, ըստ ավանդության Աղվանքի թագավոր Վաչագանի ճգնելուց, ով բերդի արևմտյան կողմում մի մատուռ է կառուցում և երկար ժամանակ ճգնում: Մատուռի վրա գրված է լինում մեծատառ «Մե: Որպես թե Վաչագան Գ-ն առանձնացել է տատրակի նման և գտել իր թառելու տեղը, հենց դրանից էլ առաջացավ «Թառնագետե անվանումը, որ այստեղ օգտագործվում է: Երրորդ անվանումն էլ ստացել է բերդակի ներքևում բխող առատ աղբյուրներից, որ թուրքերեն կոչվում է «Շահբուլաղե (աղբյուրների թագավոր):

[2] Ասկերանից ներքև, թուրքական «Կոռուտե այժմ ևս այդպես է կոչվում:

հետո լսվեցին նաև ռուսական փողի ձայները: Սարսափելի պատերազմ սկսվեց և տևեց յոթ օր: Այս կռվում վիրավորվեց ռուսական զորքի գնդապետ Գարեգինը, մի քանի ռուս և մի քանի հայ զինվորներ: Պարսկական զինվորներից մոտ 500 մարդ մահացավ և 200 հոգի էլ վիրավորվեցին: Հայերը, չնայելով, որ ռուս գնդապետը վիրավորված է, արիաբար կռվելով պաշտպանում էին այդ մի բուռ ռուսական զորքը պարսից ահագին բազմությունից, չնայելով նրանց ուժին ու զորությանը: Գ. Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը Շեյթան–Թյունու միջոցով իմացավ Փիր-Ղուլի այս արշավանքի մասին և նախապես ազդարարեց Նեսվետաեվին Տփխիսից Շուշի լրացուցիչ զորք ուղարկել: Գնդապետ Գարեգինը, ով Գանձակից էր միացել այդ 400-հոգանոց ռուսական լրացուցիչ զորքին, Մելիք-Ջումշուդին խնդրեց հայկական զորքը առջևից ուղարկել, հայտնելով, որ առանց հայկական զորքի առաջնորդության՝ խիստ սարսափելի է ռուսական զորքի տեղափոխումը: Մելիք-Ջումշուդի կարգադրությամբ առջևից ուղարկվեցին Վանի-Յուզբաշին, Քյորօղլին, մելիք Առուշանը իրենց զորքերով և մի քանի քաջերով: Այս հայկական և ռուսական զորքն անտեղյակ լինելով Թառնագետի գրավումից, գիշերը անցնում է նրա տակով և շտապում հասնել Շուշի: Փիր-Ղուլի-խանը, որ որոշել էր 8 օրում ջնջել Թշնամուն, գրավել Ասկերանի բերդը և իր դիրքն ապահովել, արշալույսին շատ զարմացավ, երբ տեսավ Թշնամու զորքը փախչելիս: Նա թողեց Ասկերանի գրավումը և սկսեց հետապնդել Թշնամուն: Թշնամին փախել և հասել էր Թառնագետ: Բերդակի պաշարումը տևեց 10 օր, ռուսական զորքի հացն ու ռազմամթերքը վերջանում են: Վանի-Յուզբաշին իր քաջերով, բերդակի գաղտնի դռնով 4-րդ գիշերը դուրս է գալիս և Կուսապատից հաց փոխադրում, որով նրանք դիմադրեցին 6 օր ևս:

9-րդ օրը Շեյթան-Թունին մուրացկանի հատուկ հանդերձանքով ներկայացավ Փիր-Ղուլի-խանին և պարսկերեն լեզվով պատմեց, թե ինքը, որպես գաղտնի լրաբեր ուղարկվել է Իբրահիմ խանի կողմից: Ասում էր, որ Խանը Մելիք-

Զումշուդի և Քյանդխուդա-Խաչատուրի գաղտնի խորհրդով ենթարկվել էր խիստ հսկողության: Այս պատճառով նա չկարողացավ նամակ գրել, այլ ուղարկեց իրեն: Բերդի հայերն ու ռուսները դեռ տեղեկություն չունեն այդ պատերազմի մասին: Խանը պատվիրում էր թաքնվել և կոտորել այդ թշնամի փոքրաթիվ զորքին, կրկին գրավել Շահբուլաղի բերդը, Ասկերանի բերդում բերդապահներ թողնելով, ապահովել իր կապը և մնացած զինվորներով արագ գնալ դեպի Շուշի: Խանը պատրաստվում էր նախօրոք բացել տալ Շուշիի դուռը և բերդը հանձնել Պարսկական զորքին: Եվ եթե նա կատարեր այս կարգադրությունը, Պարսկաստանը կտիրեր բերդին և ամբողջ Անդրկովկասին:

Շեյթան-Թյունին նույն օրը հեռացավ և պատվեր ստացավ խանին հայտնել, որ նրանք ճշգրիտ կատարելու էին նրա բոլոր որոշումները: Դուք գիտեք, սիրելի Ապրես, թե Շեյթանն ում համար էր դեր կատարում: Նույն գիշեր Գայլ-Ուհանը ոռնաց. այստեղ էր կանչում: Թաքուն մոտեցա բերդի գաղտնի դռանը և այն բաց գտնելով ներս մտա, պատմեցի Շեյթանի քողարկված գալու մասին և խորհուրդ տվի գիշերով փախչել և բարձրանալ լեռները և այնտեղ սպասել լրացուցիչ օգնության: Կարճ ժամանակով հանդիպեցի Վանի-Յուզբաշու, մելիք Առստամի, մելիք Առուշանի, Կայծակ-Վանու, Բելույան-Ասրու, Զարպազան-Յուգուրլուի հետ և կասկած չհարուցելու համար շտապ վերադարձա տեղս: Թվարկված քաջերից բացի, քաջեր կային նաև Շուշիում: 10-րդ օրվա առավոտյան, ռուս հերթապահի ձայնի փոխարեն լսվում էր Զարպազանի սարսափելի գոչյունը «պահապա՜ն, պահապա՜ն»: Պարսից 5 թնդանոթների արկերից փշրվեցին բերդի դռները, ամենասկզբից թուրը ձեռքին ներս մտան հայոց արյան ծարավ Ջափար-Ղուլի-բեկը և զինվորների բազմությունը, բայց ներսում ոչ մի մարդ չկար: Զարպազանը սատանայի արագությամբ անհետացավ գաղտնի դռնից: Փիր-Ղուլի-խանը Ջափար-Ղուլի-բեկի առաջնորդությամբ մի քանի հազար զինվոր ուղարկեց փախչողների հետևից և այդ

օրը նույն տեղում սպասեց: Հետևյալ օրը հետ փախած ե-կան և բանակին միացան Ասկերանը գրավող հազարավոր զորքն ու Ջափար-Ղուլի-բեկի զինվորները: Նույն դերով հայտնվեց Շեյթանը և Փիր-Ղուլի-խանին պատմեց հետևյալը. «Մելիք-Ջումշուդը, հայ զինվորների փոքրիկ մասը Շուշիում բերդապահ է թողել, Իբրահիմ-խանի վրա կրկնապատկել ե-ղած հսկողությունը և Վարանդայի, Խնածախի, Բալուջայի քաջ զորականները, մի քանի ռուսական զորքի հետ խառն-ված, գալիս են ձեզ վրա»: Ջափար-Ղուլի-բեկը պատմեց, որ փախչող ռուսները Մելիք-Առուշանի և Վանի-Յուզբա-շու շնորհիվ Կուսապատում զորացել են՝ հայերի մատակա-բարած հացով, գինիով, մսով, օղիով և այլ առատ բարիքնե-րով: Մելիքները և Յուզբաշին, Մելիք-Ջումշուդի հրաման-նով, հավաքվեցին ու ամրացան Ջրաբերդում: Մելիք-Ադամ Բ-ի զորքը ևս միացավ ռուսական զորքին: Ահա գալիս է Մելիք-Ադամը ևս՝ ի մի կուտակած հայ և ռուս զորքի հետ:

Շեյթանը վերադարձավ Շուշի:

Շուտով պատերազմը սկսվեց: Պարսկական զորքը պարտ-վեց, անցավ Արաքս գետի աջ ափը և բավականին կոտորված զորք թողեց պատերազմի դաշտում: Իսկ հաղթողները ռուսներն ու հայերն էին: Այդ մասին դեռ կվկայեն ապագա ռուս պատ-մագրությունները, եթե պատմաբաններն անաչառ լինեն և տե-ղեկություն տվողներն էլ՝ անկողմնակալ: Ես առողջ եմ և համ-բուրում եմ քեզ: Քո սիրելի հայր Բեկնազարյան»:

Նույն թվականին Նուխու և Շամախիի խաները Աբաս-Միրզային հայտնում են, որ Ցիցիանովը գրավել է Նուխին և Շամախին, ռուսական զորքի հետ միացել էին տեղացի հայերը՝ հանրաճանաչ ռուսասեր Հովհաննես կաթողիկոսի ա-ռաջնորդությամբ: Այս հոգևորականը ամենամեծ դերն է կա-տարել ի օգուտ Ռուսաստանի և ի վնաս Պարսկաստանի՝ քա-ղաքները գրավելու գործում: Ցիցիանովը պատրաստվում է առաջիկա տարում արշավել Բաքվի վրա:

ԼԸ.

1806-ի սկզբին հայրս արդեն Թավրիզում էր: Նա ներկայացավ Շահին և խնդրեց Մելիք-Աբովի, Դանիել կաթողիկոսի, Առստամ-բեկի ազատությունը, հիշեցնելով, որ կաթողիկոսի երկար բացակայությունը վնաս էր հայ ազգին և պարսկական կառավարության համար: Հրամանը խսկույն տրվեց, Կաթողիկոսը վերադարձավ Սբ.Էջմիածին, իսկ մելիք-ժառանգ Առստամ-բեկը, հակառակ Շահի բարի կամքի, գլխատվեց Աբաս-Միրզայի հրամանով և ամփոփվեց Թավրիզի մայր եկեղեցու մուտքում: Հայրս խորին ցավ զգաց, որ չկարողացավ Մելիք-Աբովի և բոլոր հարազատ մելիքների հանձնարարությունները կատարել և Առստամ-բեկին ողջ ազատել ու վերադարձնել իր հորը: Ահա այն երգի բնագիրը, որ գրել և երգում էր հայ հերոս Առստամ-բեկը, այս երգը նա մի մխիթարական նամակով ուղարկել էր Մելիք-Աբով Գ-ին, իսկ կրկնօրինակն այստեղ ինձ գրել տվեց, որպեսզի հայ հերոսի սրի հետ ամրանա և նրա գրիչը:

«Մունետիկը բարձր ձայնով աղաղակում էր,
Դաժան դահիճը իր ձեռքի սուրն է սրում,
Նա կյանքիս թելը կտրել է ուզում,
Սպանի՞ թե կախաղան ինձ տանի:
Ամբողջ քաղաքը մահմեդական,
Ովքե՞ր պիտի դան, որ մահս ողբան,
Աբովյանները դառնագին կողբան,
Մելիքազուն քաջ ախոյան:
Ձեք ասում, որ ես քրիստոնյա եմ, ինձ փրկեցեք
Այս անաստված ու դաժան դահճի ձեռից
Անմեղ արյունս են ուզում թափել:
Իմ նվիրական լեռները վկա,
Հայրենիքի հանդեպ սերս ինձ թշնամու
ձեռքը մատնեց.

Ես սիրել եմ Հայրենիքն իմ ուրախ՝ մեր այս,
Եվ դասերը իմ դյուցազուն նախնիների,
Որ փչրեցին բռնությունը նենգ թշնամու:
Փշրանք մնաց իմ հայ ազգից,
Որ գտնեք այն Պարսկաստանի այս քաղաքում՝
Մի մոռացեք պատմությունն իմ
Եվ փոխանցեք որդուց որդուն,
Թե ինչպես քաջ Առստամը հանուն հայրենյաց սպանվեց:
Թեպետ ցավում եմ, որ չեմ մեռել թշնամու
դեմ տված մարտում,
Ի զեն իմ քաջ ընկերներ՝ հանուն
սուրբ հողի հայրենյաց,
Թուրն իմ ձեռքին, նստում եմ ձի
գնդակների շանթ թափելով՝
Ես կուզենամ այսպես վսեմ զոհը դառնալ Հայրենիքիս:
Կուռ բազուկս՝ հարյուրավոր ուժգին արկեր արձակած.
Ափսոս՝ այսպես ես զոհ դարձա անգութ դահճին:
Այս պատմեցեք վեհ դյուցազուն, զառամյալ իմ հոր:
Քո աչքի լույս քո ծերության միակ նեցուկ
Եվ Աբովյան ճիռ օրհնության մելիքաժառանգ,
Քո նահատակ որդին ձեռքում է պարսիկի
Հաղթանակը նրա պսակ է մահվան:
Մեծ Արեաց, արքայորդիդ Աբաս-Միրզա,
Որ գալիս ես սուրը ձեռքիդ, դահճի հետ,
Թշնամին եմ ես քո ազգի՝ մահվան պատրաստ,
Թե ուզում ես ինձ սպանել, շուտ հրամայիր:
Միայն ողբամ, որ կապված եմ, ազատ չեմ,
Բայց մյուս անգամ, թե երկարի թելը կյանքիս
գեթ մի տարով,
Ազատ ձեռքով, ես ձեզ կտամ մահ վաղաժամ՝
Ընդունեցեք և դուք այս՝ որպես պատգամ»:

Սույն թվականի փետրվարի 18-ին Թավրիզի հրապա-բակներում մի մեծ հանդես էր տեղի ունենում: Մի կտրված

գլուխ՝ ցից խրած շրջեցնում էին բոլոր փողոցներում՝ ցնծու-թյան աղաղակներով: Դա Ցիցիանովի գլուխն էր: Բաքվի Հյուսեյն-Ղուլի-խանի պաշտոնական նամակն այսպես էր ներկայացնում Ցիցիանովի գլխատման դեպքը. «Մեր գլխի թագ և պարծանք Աբաս-Միրզա: Ցիցիանովը Սալյանը գրավե-լուց հետո պաշարեց և Բաքուն: Մենք, ցանկանալով մի խաղ խաղալ Ցիցիանովի գլխին, քաղաքավարությամբ նրան ուղար-կեցինք բերդի բանալիները, բայց հպարտ, գոռոզ և հիմար Ցի-ցիանովը փոխանակ բանալիները վերցնելու, այն հետ ուղար-կեց մեզ, պատճառաբանելով, թե «Ես՝ Ցիցիանովս, ցանկա-նում եմ բերդի բանալիները ստանալ Հուսեյն-Ղուլի-խանի ձեռքից, այլ ոչ թե այլոց»: Սկզբից իմանալով Ցիցիանովի այդ ամբարտավանության մասին՝ դիմեցինք այդ հնարքին: Բանալիները հետ եկան և հենց դա էր մեր խաղալիքը: Վերց-րինք բանալիները և 4 թիկնապահներով հեռացանք բեր-դից: Ցիցիանովը ևս հեռացավ իր բանակից 3 ղազախնե-րի հետ մեզ դիմավորելու և բանալիները մեր ձեռքից վերց-նելու համար: Իրար հանդիպեցինք բերդի և բանակի մեջ-տեղում: Որտեղ էլ մեր կարգադրությամբ թիկնապահներից մե-կը սպանեց Ցիցիանովին: 2 ղազախները նույնպես ընկան: Իսկ 1-ը փախչելով ազատվեց և միացավ բանակին: Ցիցիա-նովի[1] գլուխը իսկույն կտրել տվինք, հետ վերադարձանք և բերդի դռները ռուսների դեմ կրկին փակեցինք: Այս բարի լուրի հետ միասին, Ձեզ ենք ուղարկում նույն գլուխը»:

Իսկ ռուսական բանակը, սպանված տեսնելով իր զո-րավարին՝ փախավ մինչև Թիֆլիս: Ջրաբերդցի Ենիկոլոպյանց Միրզա-Աբրահամը, որ երկար տարիներ մեր արքունատանն էր աշխատում, որպես հայերենի, ռուսերենի, պարսկերենի գրա-գիր, գաղտնի նամակով Ցիցիանովին հաղորդագրում է մեր մտածած խաղի մասին, բայց, բարեբախտաբար, նրա հաղորդա-ծը հավատ չներշնչեց ինքնասիրահարված Ցիցիանովին: Մենք

[1] Ցիցիանովի գերեզմանը գտնվում է Բաքվում:

բանտարկված ենք, Բաքվի հայ երևելիները և Ենիկոլոպյանց, ցանկանում ենք սպանել բոլորին, ովքեր թողել են իրենց նախկին տիրոջը՝ Բարեխնամ Շահին և միացել են մեր թշնամի Ռուսաստանի հետ՝ օգնելով Ցիցիանովի արշավանքին: Սպասում ենք ձեր հրամանին: Ձեր երկնապարգև թագավորության ամենախոնարհ ծառա՝ Հուսեյն-Ղուլի-խան»:

Ենիկոլոպյանը բանտից գաղտնի նամակ է գրում հորս և մի հավատարիմ մարդու միջոցով ուղարկում: «Ազնիվ Բեկնազարյան. Հուսեյն-Ղուլի-խանի Աբաս-Միրզային ուղարկած նամակից երևի արդեն տեղեկացել եք Ցիցիանովի մահվան մասին, ով սպանվեց 1806 թ. փետրվարի 8-ին: Այժմ ես և քաղաքի պատվավոր հայերը բանտարկված ենք: Մահը մեր առաջ է, այն իր սրով պատրաստվում է կոտորել բոլորիս: Մենք՝ բանտարկյալներս, ամեն ժամ սպասում ենք այդ դառը պահին: Մեր ազատությունը կախված է ձեր ազդեցիկ միջամտությունից: Երկար գրելու ժամանակ չկա...

Ձեր նախկին բարեկամ՝ Միրզա-Աբրահամ Ենիկոլոպյանց: Բաքու, 9 փետրվարի»:

Բարեխնամ Շահը հորս խնդրանքով իսկույն Հուսեյն-Ղուլի-խանին հրամայեց, որ անմիջապես ազատի բոլոր հայերին բանտարկությունից, ավելացնելով այս խոսքերը. «Հայերին մազի չափ վնաս տալուց զգուշացեք, մենք բավարարված ենք քո արած քաջությամբ և Ցիցիանովի մահվամբ»: Շահը վարձատրեց Հուսեյն-Ղուլի-խանի ծառայությունը՝ նրան մի առյուծադրոշմ շքանշանով պարգևատրելով:

Մի քանի ամիս հետո նույն խանի և Ենիկոլոպյանցի նամակներն ասում էին, որ բոլոր բանտարկյալներն ազատվել էին, և Բաքուն գրավվել է գեներալ Ֆանդերա Բուլգակովի կողմից: Շամախիի Մուստաֆա խանը ևս գրում է Շահին, որ ռուսները եկել էին Ղարաբաղի և Թիֆլիսի կողմը և, որ ինքը մտադիր էր Թաքուն սպանել Հովհաննես եպիսկոպոսին և այն հայ երևելիներին, ովքեր ամբողջ ուժով օգնել էին ռուսական արշավանքներին, բայց հրամանի էր սպասում:

Շահը ուղարկեց միևնույն հրամանը:

Մեզ համար լավ կլիներ բոլոր նամակները նույնությամբ արտագրել այստեղ, բայց դա անկարելի կլիներ, քանի որ, պետք էր մեծաքանակ հատորներ կազմել դրա համար: Արքունական թղթերի կագադրությունները, գաղտնի նամակների պատասխանները, ներքին կարգադրությունները և արտաքին հարաբերական թղթաբանությունը խլում է մեր ժամանակի մեծ մասը: Ահա դրա պատճառով ենք մենք հաճախ համառոտագրում նամակները:

Մեզ կասկածելի երկյուղ է պատում այդպիսի գաղտնի նամակներն արտագրելու կամ համառոտագրելու ժամանակ, մանավանդ պարսկերենը: Եթե մեր այս գաղտնի արարքները հայտնի դառնային Պարսկական կառավարությանը, մահը մեզ համար պատրաստ էր նույն րոպեին:

Նույն թվականին Իբրահիմ-խանը գրում է Աբաս-Միրզային, որ Ցիցիանովի սպանությամբ թուլացել էր Ռուսական զորությունը, որ վհատվել էին տեղական հայ գործիչները, որ Ղարաբաղում միայն հազար զինվոր կար, որից 500-ը ձմեռը անց էր կացնում Սուլթանուպուտում, իսկ մնացածը՝ Շուշիի բերդում, որ ամենահարմար ժամանակն էր, որ Աբաս-Միրզան հանկարծակի հարձակվի և գրավի Անդրկովկասի բանալի Շուշին, որ այս անգամ հաղթանակը հաստատ էր, թե Աբաս-Միրզան Ջավար-Ղուլի-բեկի առաջնորդությամբ նախ ջնջի Սուլթանուպուտի զինվորներին, ապա գրավի Շահբուլաղի և Ասկերանի բերդերը և ապա շարժվի դեպի Շուշի, ամեն կողմից ապահով, որ ինքը՝ Իբրահիմ-խանն ամեն ինչ կանի գիշերը Շուշիի մեծ դուռը բացել տա և բերդը Աբաս-Միրզային հանձնի, և երբ շահական բանակը հայտնվի Շուշիի մոտակայքում, ինքը գիշերը կմիանա բանակին և անձամբ կառաջնորդի դեպի Շուշի, և երբ Աբաս-Միրզան իր վրանը բերդի ստորոտին զարկած տեսնի, ուրեմն ամեն ինչ կատարյալ է:

Աբաս-Միրզան Իբրահիմին գրեց, որ ընդունում է նրա առաջարկությունը, միայն թե խանը պետք է թաքուն ապստամբեցներ Ղարաբաղի մահմեդականներին, որ նրանք

պատրաստ լինեին միանալ Շահի բանակին: Մարտ ամսին հայրս Մելիք-Ջումշուդից ստացավ Շեյթան Թյունու ձեռքով գրված գաղտնի նամակը. «Սիրելի Բեկնազարյան, Ցիցիանովի անակնկալ մահը մեծ խառնաշփոթություն առաջացրեց նոր գրված երկրներում և նույնիսկ Ղարաբաղում: Իբրահիմ-խանի թելադրանքով և Աբաս-Միրզայի հայտնի կարգադ-րությամբ միացան նաև Արաքսի աջ և ձախ ափերի մահ-մեդականները և մեծամեծ վնասներ պատճառեցին հայերին: Նրանք խումբ – խումբ հարձակվում են Դիզակի, Վարան-դայի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի դաշտային մա-սերի վրա: Ավիրեցին մարդկանց ունեցվածքը, թալանեցին, կոտորեցին անասուններին, վնաս հասցրին նաև մարդկանց: Ռուս պաշտոնյաները խոստովանում էին, որ նրանք անկա-րող էին ճնշել այդ ապստամբությունները: Մենք՝ հարազատ մելիքներս, նկատելով, որ Ռուսաստանի անկարողության պատճառով մեծ վնաս է կրում Ղարաբաղի հայությունը, նկատելով նաև, որ Աբաս-Միրզայի և Իբրահիմի գաղտնի միությունը ամեն ջանք թափելով փորձում է ավերակ դարձնել Ղարաբաղը, ջնջել Ռուսաստանի հեղինակությու-նը Անդրկովկասի ժողովրդի սրտերից ու ցույց տալ Պարս-կաստանի հաղթական գերիշխանությունը, բոլոր քյանդխու-դաների, յուզբաշիների և զորապետերի հետ խորհրդակցե-լով Գյուլիստանի կողմի պահպանությունը հանձնեցինք Քյորօղլուն, Ջրաբերդինը՝ Վանի-Յուզբաշուն, Խաչենինը՝ Նյառաթյովին, Վարանդայինը՝ իմ խորթ թոռ Խուդատատ բեկին, իսկ Դիզակինը՝ Պել-Ճամալին: Այս որոշմանը հավա-նություն տվեց նաև գնդապետ Լիսանևիչը, ով Ցիցիանովի հակապատկերն էր, քանի որ միշտ մեր՝ Քյանդխուդա-Խա-չատուրի և Նյառաթյովի խորհրդով էր շարժվում և գոր-ծերը բավականին հաջող էին լինում: Լիսանևիչը, թեև շատ բարկացող մարդ էր, այնուամենայնիվ, լավ կողմեր ևս ուներ: Որոնցից ամենահատկանշականն այն էր, որ մինչև չխորհրդակցեր հայ գործիչների հետ, ինքնագլուխ որոշում-ներ չէր կայացնում: Զայրացկոտ բնավորության համար Պել-

Ճամալը նրան տվել է «Բարկացող Մայոր» անվանումը: Պել-Ճամալը նրանից մի քանի ռուսերեն բառ էր սովորել-խլեբ, սոլ, վինո, պորըկ, զակուսկի, կուշայ, պաշոլ և այլն: Եվ այս բառերը հաճախակի կրկնելով ցավացնում էր մեր գլուխները: Պել-Ճամալը Լիսանևիչից մի սպիտակ խաչ էր ստացել և մի պղնձյա մեդալ, որը միշտ կախած էր պահում իր կրծքից և ցույց էր տալիս բոլորին: Պել-Ճեմալն իր անունը փոխել, դարձրել էր «Արագահաս Սուրբ Սարգիս», Խուտատատ բեկը անվանվել չին «Սուրբ Գևորգ», Վանի Յուզբաշին՝ «Հայկ դյուցազուն», Նյառաթյովը՝ «Քաջ Տրդատ» և Քյորօղլին՝ «Վարդան Մամիկոնյան», իր զորագունդը՝ «Հրեղեն թուր», Խուտատատինը՝ «Ջուր-Տո-Քշի»[1], Վանի-Յուզբաշունը՝ «Զարապատիժ Դժոխք», Նյառաթյովինը՝ «Հրեղեն Կայծակ», իսկ Քյորօղլունը՝ «Ծեփի՛-անցկաց» (Զարկիր, անցիր): Հիմա այս գնդերն են գործում Աբաս-Միրզայի և Իբրահիմ-խանի ձեռնարկած ամեն բան փչրելու համար, թուրք ավազակներին կոտորում և հալածում էին, մեր հայրենիքը թշնամիների հարձակումներից ազատում և ռուսական երերուն գոյությունը ամրապնդում Ղարաբաղում: «Շեյթանին ուղարկել ենք Աբաս Միրզայի ամեն մի քայլը մեզ հաղորդելու: Մեզ տեղեկություններ հաղորդեք...Ողջ լինեք Աստծով»:

Շեյթանը վերադարձավ Ղարաբաղ՝ անհրաժեշտ տեղեկություններով:

Աբաս Միրզան հրամայեց Անդրկովկասի բոլոր խաներին՝ կազմ ու պատրաստ պահել իրենց զորքը և ռազմամթերքը, իսկ Երևանի հոգևորին հրամայեց պատերազմին կրոնական կերպարանք տալով գրգռել Արարատյան նահանգի ամբողջ մահմեդականներին և հաճախակի հարձակումներ գործել տալ Թիֆլիսի, Գանձակի և Ղարաբաղի սահմանների վրա, բայց ոչ թե պատերազմել, այլ խումբ-

[1] Տեղական բառբարով նշանակում է շատ հորդառատ գետ, որն իսկույն քշում և տանում է ամեն ինչ, ինչ որ պատահի:

խումբ ավազակային հարձակումներ գործել: Դաղստանի խաներին գրեց՝ միանալ ծովեզրյա խաների հետ և այդ կողմից արգելել Ռուսաստանի արշավանքը, եթե այն լիներ Կասպից ծովի կողմից:

ԼԹ.

Սույն թվականին Ջափար-Ղուլի-բեկի առաջնորդությամբ Աբաս-Միրզան մեծ զորքով հարձակվեց Ղարաբաղի վրա, բայց կրկին պարտությամբ վերադարձավ Թավրիզ, բերելով միայն մի քանի ռուս գերիներ: Հայրս պատմեց հետևյալը. «Իմ սիրելի որդի Ապրես, երբ անցանք Արաքս գետը, պարսկական բանակին միացան Ղարաբաղի թուրք, մահմեդականները ևս: Նրանց գլխավորները ցավոք սրտի թագաժառանգին պատմեցին, որ հայազգի Նյառաթյովը, Քյորօղլին, Պել-Ճամալը և Վանի-Յուզբաշին շատ վնասել են և իրենց խմբերով շրջում են դաշտերում, նրանց պետք է պատժել ու բնաջնջել: Բայց Աբաս-Միրզան հետևելով Իբրահիմի թոռան խորհրդին, նախ հարձակվեց Սուլթանպուտի վրա: Այս անակնկալ հարձակումից սպանվեց 500 զինվոր, բացի նրանց գլխավորներից և մի քանի զինվորներից, ովքեր գերևարվելով ուղարկվեցին Թավրիզ: Նրանց անունները չգիտեմ: Այրեցին ռուսների բանակները և առգրավեցին նրանց զենքերն ու պաշարները:

Խեղճ զինվորների մահվան վրեժը լուծեցին վերոնշյալ հայ զորագնդերը, մի անգամ Թառանագետի մոտ, երկրորդ անգամ Ասկերանից ներքև կրակ անելով և պարսկական զորքերը բավականին կոտորելով:

Պարսկական բանակը Թառանագետի և Ասկերանի դատարկ բերդերը գրավելուց և բերդապահ զորք թողնելուց հետո, հաստատվեց Շուշիի՝ մեզ արդեն քաջածանոթ բանակատեղիում: Թագաժառանգը Ճըռ-խանի կողմից հրամանի էր սպասում, բայց չստացավ և այդ իսկ պատճառով ցանկացավ մի գաղտնի նամակ գրել Ճըռ-խանին և տեղեկություն պահանջել: Ո՞վ կտաներ այդ նամակը, եթե տանողին մահ էր սպասվում: Հանկարծ պարսկական միաբանության հատուկ հագուստով հայտնվեց Շեյթան Խորասանը[1], հայտնեց Աբաս-Միրզային, որ ինքը ուղարկվել է այդ պատերազմում օգնելու պարսկական զորքին, թե աղոթքներով, և թե կարևոր ծառայություններով: Թագաժառանգի հրամանով Շեյթանը եռանդուն արտասանեց պարսից նախկին թագավորների, շահերի, շահաժառանգների և զորապետերի մասին գովաբանող պարսկական բանաստեղծությունները, որոնցով հիացան Աբաս-Միրզան և լսողները: Հատուկ ձևով նա խրախուսեց զորքին, հիշեցնելով, որ պատերազմն Աբաս-Միրզան մղում էր Իրանի սուրբ հայրենիքի և Իմամ-Ալու հաստատած սուրբ կրոնի համար: Եվ վերջապես նա հայտնեց Աբաս-Միրզային, որ հանուն դավանանքի, հայրենիքի և ազգի՝ պատրաստ է անգամ ամենածանր ծառայությունը մատուցել: Բաց չթողնելով պատեհ առիթը Աբաս-Միրզան Իբրահիմին գրեց այս կարճ նամակը. «Սպասում ենք Ձեր հրամանին»:

Հետևյալ օրը Շեյթանը թագաժառանգին հանձնեց Իբրահիմ ճըռ-խանի գրած պասխանը, նա շատ ուրախացավ և թեկուզ շատ էր ուզում վարձատրել լրաբերին, ով շատ անընչասեր և անփառասեր էր ձևանում, սակայն անկարելի եղավ: Երեկոյան գիշերը իմ վրան մտավ պարսկական մի հոգևորական և ինձ հանձնեց նույն պա-

[1] Խորասանում է պարսկական 8-րդ Իմամ Ռիզայի գերեզմանը, որը մեծ ուխտատեղի է, ունի մեծ միաբանություն և հարստություն: Այստեղից եկած սովորողներն ամենուրեք հարգվում են:

տասխանի հայերեն թարգմանությունը, որը գրված էր մա-տիտով. «Ամեն ինչ կարգին է: Վաղը երեկոյան դեմ, ես իմ գերդաստանով կերևամ վրանիս առաջ և լուր կուղարկեմ Ձեզ: Ես անձամբ եմ առաջնորդելու Ձեզ դեպի բերդ: Արաքսի ափից գրած Ձեր նամակն ստանալուց հետո, Մեհ-տի-Ղուլի-խան ժառանգս չթողեց, որ տնից դուրս գամ, պատճառաբանելով, որ 40 օրից ավել է, ինչ խիստ հիվանդ եմ: Ահա սա է ռուսների և հայերի խորամանկությամբ քնացնելու քաղաքականության ճևը: Կարգադրել եմ դռնապաններին անձայն խեղդել և բերդի դուռը բացել ուղիղ կեսգիշերին, և այս կարգադրությունը վերահսկելու համար, նշանակել եմ խանժառանգ որդուն: Դուք հետևեք այս հրահանգներին. Ա. 5000 զորքից ավել մարդ չբերել Ձեզ հետ: Բ. Կես գիշերից 2 ժամ առաջ բանակից դուրս գալ և կամաց գալ իմ ուղարկած առաջնորդի հետ: Գործողությունը կսկսվի վաղ երեկոյան: Ձեր ամենահավատարիմ ծառա՝ Իբրահիմ խան»:

Շեյթանն ինձ թաքուն պատմեց. «Բերդում պաշարված հայերի մեջ տիրում է մի ընդհանուր ոգևորություն՝ բերդը քաջաբար պաշտպանելու համար: Բերդում միայն 500 ռուս կա և 100 դազախ, ցավալին այն է, որ ռազմամթերքը ևս քիչ է: Հայ տղամարդիկ բերդի վտանգավոր կիրճերն ու դռները զգուշությամբ են պաշտպանում, քաջերը առանց վարանելու հսկում են Իբրահիմի և թուրքերի բոլոր շարժումները: Մելիքները միշտ գտնվում են Լիսանևիչի մոտ, կարևոր խորհուրդներ տալով և հուսադրելով, երիտասարդներն ու պատանիները նեղ օրվա համար վառոդ ու փամփուշտ են պատրաստում, մետաղ ձուլողները գնդակներ են պատրաստում, վաճառականները բերում են կապար, ծծումբ, երկաթ, պողպատ, սուր պատրաստողները շինում են թուր, երկսայրի, դարբինները թնդանոթների գնդակներ են պատրաստում: Պել–ձամալը Քեօրողլուի հետ ամառանոցներից Շուշի են փոխադրում թուրքերից հափշտակած ոչխար, այծ, եզ, կով, արջառ, երինջ, պանիր ու կարագ: Եվ ահա

հայերի այս ի սրտե աջակցությամբ զորացավ, մխիթարվեց և խրախուսվեց ոչ միայն Լիսանևիչը, այլ նաև նրա սակավաթիվ, զարհուրած և վախեցած զորքը:

Իսկ Իբրահիմ ճըռ-խանը բերանացի ինձ պատվիրեց Աբաս-Միրզային հայտնել այս խոսքերը. «Ես ամեն ինչ անում եմ, որպեսզի գիշերը գաղտնի սպանել տամ Մելիք-Ջումշուդին, Քյանդխուդա-Խաչատուրին, Նյառաթյովին, Վանի- Յուզբաշուն և Մելիք-Առուշանին, ովքեր վտանգ են ներկայացնում Պարսկական զորքի հաղթելու համար և Ղարաբաղում խանության գոյություն ունենալու համար»:

Նշանակված ժամին Իբրահիմ ճըռ-խանը երևաց որոշված տեղում: Նա նստած էր իր վրանի առաջ: Ժամը գիշերվա 10-ին Շեյթանը հաղորդում է թագաժառանգին, որ ինքը անձամբ է գնացել Իբրահիմ-խանի մոտ և պատվեր ստացել Աբաս-Միրզային կանչելու համար: Նույնը ասաց և Շեյթանի հետ եկած հավատարմականը: Սուրհանդակը շուտով հետ դարձավ Իբրահիմին հաղորդելու Աբաս-Միրզայի գաղտնի հարձակումը: Ջափար-Ղուլի ճըռ-բեկն առաջնորդում էր 5000 զինվորների, ինչպես նաև ես ու Աբաս-Միրզան՝ մեր թիկնապահներով: Երբ հասանք Շուշին բանկատեղից անջատող գետակի մոտ, Շեյթանը, պարսիկ հոգևորականը և իր ընկերները ցավագին ասացին. «Սպանվե՛ց, Իբրահիմ-խանը՝ իր բոլոր արու զավակների հետ»: Ամեն ինչ խափանվեց և նորից ետ դարձանք բանակ: Շեյթանը մտավ վրանս և գաղտնի պատմեց ինձ. «Երբ Լիսանևիչը համոզվեց, որ Իբրահիմ-խանը դավաճանությամբ ուզում է բերդը հանձնել թագաժառանգին և սպանել զինվորներին ու ռուսներին օգնող հայ գլխավորներին, իր հետ վերցնում է Մելիք-Ջումշուդին, Քյանդխուդա-Խաչատուրին և Նյառաթյովին և արագ հարձակվում է Իբրահիմի վրանի վրա: Ես իմ աչքով տեսա և ականջով լսեցի, որ Նյառաթյովը թուրը ձեռքին նախահարձակ լինելով, գոչեց. «Իբրահիմ-խան, դու ցանկացար հայ հարազատ մելիքությունը վերացնել և քո մելիքությունը հաստատել: Դու ուզում էիր Շուշին

գաղտնի հանձնել պարսիկներին և կոտորել ռուսներին ու հայերին: Նյառաթյով-Աթան վաղուց էր քեզ մատաղ խոստացել իր սրին: Ահա թե ինչ էիր ցանկանում հայերին և հիմա էլ նույնն ես ցանկանում»: Վերջին խոսքերի հետ միասին Իբրահիմի մարմնից թռավ նրա գլուխը և սպանվեցին նրա արու զավակները, իսկ ընտանիքն ու աղջիկները տեղափոխվեցին Շուշի»:

Խզվեց բերդի կապը գավառների հետ: Աբաս-Միրզան Իբրահիմի մահվամբ փչրված տեսնելով իր հույսը, պատվիրակություն ուղարկեց Մայոր Լիսանևիչի մոտ, որ հանձնվեր և այդ մի բուռ զորքով չկռվեր պարսկական ահագին զորքի հետ և մահվան չենթարկեր իր և իր զորքի կյանքը: Երբ բացասական պատասխան ստացավ, նորից բանբեր ուղարկեց քաղաքավարությամբ համոզելու Լիսանևիչին, որ Շուշիի ամրությանը վստահելով չհամարձակվեր պատերազմել Պարսկաստանի հետ: Դրանով խզված էին ոչ միայն գավառների կապը, այլև Շահբուլաղի և Ասկերանի գրավմամբ Թիֆլիսի և Գանձակի կապը Շուշիի հետ: Եվ երբ նորից բացասական պատասխան ստացավ, դիմեց հայ մելիքներին և քաջերին, նորից ու նորից երդվելով վերականգնել Ղարաբաղի հարազատ մելիքությունը Աղա-Մամադ-Շահի ծրագրի համաձայն, որն ինքն էր հաստատել 1797 թվին, միայն թե հայերը բերդը հանձնեին Աբաս-Միրզային և Պարսկաստանին օգնեին այդ գործում: Վերջապես հայերի կողմից նույնպես բացասական պատասխան ստացավ:

Ռմբակոծությունը սաստիկ էր, իսկ պաշարումը՝ երկարատև: Բայց բերդը մնաց անառիկ և անձեռնմխելի: Այս անգամ բերդը չլռեց, այլ քաջաբար պատասխանում էր, որի գնդակներն առանց վրիպելու հասնում էին նպատակետին: Մի քանի օր բերդի թնդանոթները թափեցին ոչ թե սովորական գնդակներ, այլ երկաթյա կոպիտ գնդակներ, գութանի ճամպարակ, ձիու ոտնաշղթա, երկաթյա կտորներ, հնամաշ պայտեր, որոնք իրար հետևից տեղալով գնդակներից ավելի մեծ վնասներ պատճառեցին:

Երբ մթնում էր, բերդապահ հերթապահները «պահապա՜ն, պահապա՜ն» գոռոցներ և աղաղակներ էին արձակում: Գիշերային հերթապահների բերնեբերան թռչող այդ արտահայտությունը 10 րոպեում պտտվում էր բերդի շուրջը: Բանակից երբեմն լսվում էր Զարպազանի սարսափելի ձայնը և Գայլ-Ուհանի ոռնոցը, որ վտանգավոր կիրճերում հսկում էին Աբաս-Միրզային, ով հայերի և Լիսանևիչի միաձուլված ուժը բերդից անառիկ համարեց, անօգուտ գտավ իզուր վառոդ և գնդակ օգտագործել: Դատարկ վերադարձավ Պարսկաստան, բայց իր անկանոն և ձիավոր զորքը զգալի վնասներ տվեց Վարանդայի գյուղերին: Մեզ հետ մինչև Արաքսի աջ ափ եկավ նաև Շեյթան պարսկական հոգևորականը և ինձ առանձին պատմելով հետևյալը՝ անհետացավ. «Լիսանևիչը սպանված խանի փոխարեն, խան նշանակեց նրա որդի Մեհտի-Ղուլին: Պել-Ճեմալը իմ ներկայությամբ Լիսանևիչին ասաց. «Իմ բարի եղբայր Մայոր, իրոք կատարյալ ես, եթե բարի չլիներիր, նենգ ու դավաճան Իբրահիմի սպանելուց հետո նրա ամենանենգ և ամենադավաճան որդուն խան չէիր կարգի»: Լիսանևիչը չափազանց ծիծաղելուց հետո պատասխանեց Պել Ճամալին. «Շատ օրինավոր անուն ես դրել, այդ մականունը իմ վրա դրոշմելով: Եթե ես բարի չլինեի, մեծ օձը սպանելուց հետո փոքրը կենդանի չէի թողնի, բայց բանը բանից անցել է»[1]:

Ահա այսպես վերջացավ այս պատերազմը ևս, իմ սիրելի որդյակ Ապրես»:

Խ.

Այս թվականի վերջին ամսին հայրս Շեյթանի ձեռ-

[1] Լիսանևիչի այս խոսքերը, որպես ավանդույթ մնացել են: Շուշիի ծերունիները զրույցի ընթացքում նույնությամբ կրկնում են:

քով Մելիք-Ջումշուդից ստացավ հետևյալ նամակը: «Սիրելի Բեկնազարյան: Արդեն գիտեք, որ մենք վաճառել ենք Լոռի գավառը և ընտանիքով ու ժողովրդով տեղափոխվել ենք Վարանդա: Մինաս-աղա Լազարյանցն ինձ գրած նամակներում դժգոհում է բոլոր հարազատ մելիքներից, ի միջի այլոց ասելով. «Ինչ պատճառով են վրացի ազնվականների[1] անունները հիշվում և անգամ փայլում ռուսական պալատում, իսկ հարազատ մելիքների և հայ քաջերի ծառայությունները բացառություն են իրենց պաշտոնավարման ընթացքում» և այլն, և այլն: Մենք Մինաս-աղա Լազարյանցին մանրամասն գրել ենք ռուսներին մատուցած հայերի ցանկացած ժամանակվա բոլոր ծառայությունները: Բայց սարսափելին այն է, ինչ մենք հետո տեսնելու ենք, քանի որ մեր բոլոր նամակները կորել են Ռուսաստանի խորքերում, գուցեև էլի կորչի, այդ իսկ պատճառով ճիշտ համարեցինք միայն այս նամակի արտագրությունը ուղարկել ձեզ. «Գաղտնիք Ղարաբաղ»-ի մեջ մտցնելու, հետևաբար խնդրում ենք չմերժեք: Եթե մենք պահեինք Լազարյանցին ուղղված նամակների սևագրությունները մեծ ուրախությամբ ձեզ կուղարկեինք, որոնք անկորուստ կլինեին պատմության մեջ և ապագա սերնդի համար: Ահա արտագրությունը»:

«Սիրելի՛ Մինաս աղա Լազարյանց,

Թեպետ այս նամակից առաջ պատասխանել եմ մի քանի նամակների, բայց որովհետև ստուգել չգիտեմ, թե արդյո՞ք այս նամակները Ձեզ հասնում են թե ոչ, պարտավորվեցի նորից պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

Նախ դուք շատ դժգոհ եք, որ հայ մելիքների անունները չեն հիշվում վրացի կնյազների անունների շար-

---

[2] Ընթերցողներն, անշուշտ, հիշում են վրաց Ալեքսանդր իշխանազնի Ռուսաստանին հակառակ գործերը, իսկ հայ մելիքների և քաջերի Ռուսաստանին մատուցած արյունալի ծառայությունները:

քում, ովքեր շատ հայտնի էին դարձել տարբեր պատերազմներում: Թեև ես նույնպես շատ տխրել եմ այդ կապակցությամբ, նորից ասում եմ, որ մենք՝ հարազատ մելիքներս, բոլոր պատերազմներում ռուսներին ավելի շատ ծառայություններ ենք մատուցել, քան վրացիները: Հետևաբար մենք պետք է արժանանայինք ավելի բարձր պարգևների և շնորհների, քան վրացիները: Բայց այն ատելությունը հայ ժողովրդի նկատմամբ, որ ամրացած էր Ցիցիանով իշխանի սրտում, չէր թույլատրում ողորմած կայսերը ներկայացնել մեր մատուցած ամենադժվար ծառայությունները և քաջությունները, որ մենք ցուցաբերել ենք ոչ միայն Գանձակի գրավման ժամանակ, այլև Երևանի և Շամախու արշավանքներում: Ցիցիանով իշխանն այդ պատերազմում տեսնելով իմ և իմ զորքի (ամբողջ հայության) սպառազինությունը, որոնք ռուսական կառավարությանն անվճար էին ծառայում և առանց որևէ շահի՝ հիացավ և մինչև անգամ խոստացավ, այդ ամենը մանրամասն հաղորդել և իմ զորքի համար խնդրելով, Կայսրից մի դրոշակ բերել:

Ցիցիանովի սպանվելուց հետո, ես գտնվելով այստեղ (Տփխիսում) և տեղյակ լինելով Պարսկաստանի բոլոր չար մտադրություններին[1]*, գրավոր կերպով բացատրեցի գեներալ-մայոր Նեսվետաևին իմ մի քանի խորհրդածությունները, թե ինչպես և ինչ միջոցով հնարավոր կլիներ հաստատել Ռուսաստանի տիրապետությունը Անդրկովկասում, մանավանդ՝ Ղարաբաղում, իսկ ես անձամբ ռուսական զորքի հետ գնացի Շուշիի բերդը:*

Պարսիկները հենց լսեցին Ցիցիանով իշխանի սպանության լուրը, անմիջապես նրանց բազմաթիվ զորքը Բաբախանի որդի Աբաս-Միրզայի առաջնորդությամբ թափվեց Ղարաբաղ և միանալով տեղացի թուրքերի հետ, ցանկանում էին կոտորել և՛ ամբողջ ռուսական զորքին, և՛ բոլոր հա-

---

[1] Անշուշտ Շեյթան Թյուռնու և Աբ. Բեկնազարյանի միջոցով:
[2] Շուշիի բերդում:

յերին, ովքեր պաշարված էին բերդում[2]: Այդ նպատակով տոգորվել էր Շուշիի Իբրահիմ-խանը և դրա համար էլ ստացավ իրեն արժանի պատիժը:

Իմ գրավոր առաջարկությունները գեներալ-մայոր Նեսվետաևին դուր եկան: Նա իմ խորհրդով Ղարաբաղ ռուսական հավելյալ զորք ուղարկեց՝ Տրոյիցկի զորագունդը: Զորագունդը Գանձակից գալու ժամանակ իր հետ վերցրեց նաև գնդապետ Գարեգինին՝ իր զորքի հետ, և շտապեց մեզ մոտ (Շուշի): Բայց նրանք պարսիկներից վախենալով, ճանապարհից ինձ գրեցին, որ ես իմ հեծելախմբով դիմավորեմ նրանց: Հայկական զորքի մի մասը Շուշիում որպես բերդապահ զորք թողնելով, գնացի և միացա նրանց: Բայց 3 օրից հետո բոլորս միասին պատերազմում էինք, մեր ընդանուր թշնամու դեմ և այն արագությամբ հալածեցինք, որ պարսկական 20000-անոց զորքը սարսափելի երկյուղով անցավ Արաքսի մյուս ափը:

Պատերազմի ժամանակ մեզ տեսան Տրոիցկի զորախմբի գնդապետ Նեբոլսին և Եգերյան զորախմբի Գարեգին գնդապետը: Նրանք տեսան իմ զորախմբի, ամբողջ հայ զորքի քաջությունը և մատուցած անգին ծառայությունը: Վերջապես տեսան և իմ այն ծառայությունը, երբ սովի ժամանակ առատ ուտելիք մատակարարեցի ռուսական զորքին: Նրանց համար այս ամենը հաճելի էր, այդ իսկ պատճառով արագ հաղորդեցին Նեսվետաևին հայերի մատուցած հավատարիմ ծառայությունների մասին և անգամ նրանից խնդրեցին, որ Նեսվետաևը ողորմած կայսերը մանրամասն տեղեկացնի այդ ամենի մասին: Բայց դժբախտաբար, այս ամենը նույնպես տեղ չհասավ մեզ (հարազատ մելիքներիս) համար անհայտ պատճառներով:

Տփխիս եկած օրս, այս ամենը Կայսերը տեղեկացնելու համար, մի խնդրագիր ներկայացրեցի պարոն կոմս Ի.Վ.Գուտովչին: Հույս ունեմ, որ գոնե նա այդ խնդրանքը կանի մեզ համար այն սիրով, որ ունի առ Ձեզ և առ մեր ժո-

ղովուրդը: Եթե այս անգամ էլ զրկվենք մարդկանց օգնու-թյունից, հաստատ չենք զրկվի Աստծո աջակցությունից և Ձեր օգնությունից:

Երկրորդ՝ Դուք գրում եք, թե ինչու մենք՝ հարազատ մելիքներս չենք կազմակերպում մեր զորագունդը: Հավատա-ցե՛ք, որ մենք առանց ոչ մեկի օգնության կարող ենք դա անել, եթե հիմա մենք տեր լինեինք մեր նախկին հարստու-թյանը և մեր ժողովրդին, ովքեր ցրվեցին Շաքիում, Շիրվա-նում, Վրաստանում և այլ երկրներում: Դուք մեզանից այն-պիսի կազմակերպված զորագնդեր եք պահանջում, ինչպի-սիք ունեցել են մեր նախորդ մելիքները և իմ հայր մելիք Շահնազարը: Նրանք տիրում էին ամբողջ Ղարաբաղի հա-յերի և թուրքերի վրա, ովքեր հնազանդ հպատակներ էին: Եթե ցանկանում եք հայ ժողովրդի ազատել բարբարոսնե-րի ձեռքից, եթե Դուք ցանկանում եք, որ մեր նախնինե-րի նման կանոնավոր զորագնդեր պահենք, եթե փափագում եք, որ լավ ծառայություններ մատուցենք ռուսական կա-ռավարությանը, ուրեմն աշխատեք իրականացնել հետևյալ 4 անհրաժեշտ պայմանները.

Ա) Միջնորդեք Ռուսաստանի կառավարությանը Շա-քիում, Շիրվանում և Վրաստանում ապրող հայերին վերա-դառնալ հայրենիք:

Բ) Որ հայ ժողովուրդը 3 տարի հարկ չվճարի:

Գ) Որ հայերը թուրքերի իշխանության տակ չլինեն, քանի որ թուրք և պարսիկ խաները շատ անգամ են ան-հավատարմություն ցուցաբերել և անհնար է, որ նրանք հա-վատարիմ մնան ռուսական կառավարությանը, այլ ինչպես հայտնի է, նրանք փորձում էին հայ ժողովրդին և ռուսնե-րին ուժասպառ անել, որպեսզի հեշտությամբ հասնեն ի-

---

[1] Մելիք Ջումշուդի գրածները, ռուս և վրացի պաշտոնյաներին, հայ մելիք-ների և ժողովրդի մատուցած հավատարիմ և արյունալի ծառայություն-ները և թուրք ու պարսիկ խաների վերջին դավաճանության մասին, թե որքանով են ճիշտ դրանք, խելացի ընթերցողն ամբողջովին տեսավ և տեսնելու է այս պատմության մեջ:

բենց չար դիտավորություններին[1]:

Դ) Որ պետական գանձարանից մեզ մի գումար հատկացվի, որով կարողանանք զենք պատրաստել, հայկական զորքը վերակազմավորելու համար, որպեսզի ինչպես հարկն է կազմ ու պատրաստ օգնենք ռուսական զորքին:

Եթե ռուսական բարեպաշտ Կայսրը մեզ կշնորհի այդ միջոցները, այն ժամանակ նա իրոք կվերանորոգի հայկական ուժերը և դրանից հետո Հայաստանը ստիպված կլինի ավելի մեծ ծառայություններ մատուցել նորին կայսերական մեծությանը: Ավելորդ եմ համարում Ձեզ այսպիսի խնդիրներով ձանձրացնելը, քանի որ դուք ոչ միայն մեզանից լավ գիտեք այդ անհրաժեշտությունների մասին, այլև գիշեր-ցերեկ անդադար աշխատում և մտածում եք, որ հայ ժողովուրդը բարգավաճի և Կայսերը ներկայացնել նրա ամենահավատարիմ ծառայությունները: Հետևաբար վստահ եմ, որ դուք ինքներդ կաշխատեք գլուխ բերել այդ մեծ գործը, թողնելով հավերժական հիշատակ, ինչպես նաև եռանդուն գործունեության հետ մեկտեղ Ձեր անմահ անունը ևս: Աստված Ձեզ պահապան: Մելիք-Զումշուդ Մելիք-Շահնազարյան, ի Շուշի: 1806թ. դեկտեմբերի 2»:

ԽԱ.

1807 թվին հայրս Մելիք-Աբով Գ-ից ստացավ հետևյալ ցավալի նամակը: «Սիրելի Բեկնազարյան, Ձեր նամակը վաղուց եմ ստացել, բայց սրտիս ցավի պատճառով ուշ եմ պատասխանում: Իմ ծերության միակ ապավենը, Աբովյան տոհմի փառքն ու պարծանքը, Հայաստանի նահատակը, Առստամ բեկը զոհ դարձավ հայրենիքի ազատության համար: Եթե անգամ Դուք չկարողանաք անգութ Աբաս-Միրզայի կատաղությունից կենդանի ազատել իմ որդու կյանքը: Ես անգամ չկարողացա մի բուռ հող լցնել նրա վրա:

Միայն մխիթարվում եմ նրանով, որ դուք իմ որդու հու-
զարկավորությունը և թաղումը փառավոր կերպով եք անց-
կացրել և իմ կողմից օրհնած հողը նրա երեսին եք լցրել:

Ռուսներին հայերի մատուցած արյունալի ծառայու-
թյունները ռուսական պալատ չեն հասնում, իսկ վրացի իշ-
խանների չարածները փայլում են այդ պալատում: Քանզի
կրոնական խտրականությունը, ճշմարտության հակառակ
մեծ դեր է խաղում: Ռուս և վրացի պաշտոնյաների սև նա-
խանձը չի թողնում, որ մեր մատուցած ծառայությունները
Կովկասի այն կողմն անցնեն, իսկ մեր գրած նամակները
մեզ համար անհայտ պատճառներով անհայտանում են, իսկ
Մինաս աղա Լազարյանցի գանգատներն անկորուստ մեր
ձեռքն են հասնում: Անցած տարի Մինաս աղան Մելիք-
Ջումշուդի տված տեղեկություններով չբավարարվելով պա-
հանջեց բոլոր հարազատ մելիքների ստորագրությամբ գր-
ված մի տեղեկագիր, որը ստորագրելով, ես, Մելիք-Ջում-
շուդը, Մելիք-Ադամը, Մելիք-Ցրեդյոնը, Մելիք-Բաղը (Մե-
լիք-Ավանյան) և Մելիք-Ղահրամանը մի հատուկ թղթատա-
րի, Կաքև-Զաքու ձեռքով ուղարկեցինք Պետերբուրգ:

Վրացի իշխանազունները բռնացել են մեր սեփական
իրավունքների, կալվածքների, հարստության վրա և կողոպ-
տում են մեր անգին պատիվը, իսկ ռուսները չեն ճանա-
չում մեր այդ արյունով գնված իրավունքները և չեն թող-
նում, որ Մելիք-Ջումշուդի նման Բոլնիսը վաճառենք և վե-
րադառնանք մեր հայրենիք:

Լազարյանցը ինձնից նույնպես տեղեկություն պահան-
ջեց, թե ինչ ծառայություն եմ մատուցել ռուսներին և Բոլ-
նիսի մասին: Տեղեկագիրը ուղարկեցի, բայց ոչ հատուկ
սուրհանդակով: Բայց քանի որ կասկածում եմ, որ այս նա-
մակը նույնպես տեղ չի հասնի և վաղահաս մահը իմ
կյանքի թելը հանկարծ կկտրի, այդ իսկ պատճառով ճիշտ
համարեցի նույն նամակի օրինակը ձեզ ուղարկել «Գաղտ-
նիք Ղարաբաղի» մեջ մտցնելու համար, որպես զգուշու-
թյուն, քանի որ մեր կողմերում պատմագիրներ չկան: Այս

է տեղեկագիրը»:

«Հարգելի Մինաս աղա Լազարյանց, Ռուսաստանին մատուցած իմ ծառայությունները, և Զուբովի ժամանակ Շուշիում ցույց տված իմ քաջությունները հայտնի են բոլորին: Գուցե ձեզ նույնպես անհայտ չէ, թե ինչպես հալածեցինք և մեր երկրից դուրս քշեցինք Աղա-Մամադ-խանի ահարկու զորաբանակը: Այդ իսկ պատճառով Հերակլ թագավորը ցանկանալով մեզ հետ դաշնակցել, երդվեց և ձեռաթղթով մեզ[1] վավերացրեց որպես բնակատեղի Բոլնիսը, Լոռին և Բորչալուն ու իր պալատում մեր պատվին աթոռներ շարեց: Մենք՝ մելիքներս, հավատալով քրիստոնյա թագավորի ճշմարիտ երդմանը և վավերաթղթին, որով տիրանում էինք այդ գավառներին ու աթոռներին, Ղարաբաղից ապահով տեղափոխվեցինք Վրաստան: Մեր այս վիճակը տևեց Հերակլի ժամանակից մինչև Գեորգի թագավորի վախճանը:

Իսկ հիմա մենք ամբողջությամբ զրկվել ենք, թե կալվածքներից, և որ ամենաթանկարժեքն է՝ պատվից: Այժմ բոլորը նեղում են մեզ, ցանկանում են հափշտակել մեզանից Բոլնիսը և մեր հնձաններից բռնի տասանորդ պահանջել (հնձանի բերքի 10%): Այս ապերախտություններն այնքան ծանր են մեզ համար, որ մինչև անգամ ստիպված ենք այստեղ չբնակվել:

Բոլնիսը իմ սեփականությունը համարելով ազատեցի բոլոր թշնամիներից, վայրի լեռնականների հարձակումներից, և երբ գավառը ծաղկեց բնակիչներով, շինվածքներով, շատ տերեր հայտնվեցին: Նրանցից մեկը ջրանցքների և ջրաղացների տեր էր հանդիսանում, երկրորդը՝ ամեն ինչ անում է լեռները սեփականացնելու համար, երրորդը՝ հողը, որը մեր սեփականությունն է, իսկ չորրորդը՝ անօրինաբար

[1] Ընթերցողներն արդեն գիտեն, որ Մելիք Աբովը բնակվում էր Բոլոնիսում, Մելիք Ջամշուդը՝ Լոռիում, իսկ Մելիք Ֆրեդյոնը՝ Բոռչալուում:

ուզում է տիրանալ իմ կյանքին, որն այնքան օգուտ է տվել Վրաստանին և Ռուսաստանին: Ուրեմն, եթե անգամ Բոլնիսի քարերը ոսկի դառնան, այնուամենայնիվ, ես այն-տեղից կհեռանամ: Ոչ մեր ձեռքին փող մնաց, ոչ մեր մեջ համբերություն և ոչ խղճմտանք վրացի իշխանների և ռուս պաշտոնյաների մեջ: Մեր վերջին օրերը անցնում են դատարանում անօգուտ, անընդհատ փորձում ենք բռնա-կալ պաշտոնյաների ձեռքով արդարություն ձեռք բերել:

Ահա այսքան անիրավությունները տեսնելով, ստիպված եղա արդարության ձայնը բարձրացնելու համար դիմել Կայսրին: Նրան ուղարկեցի մի խնդրագիր, որպեսզի թույլ տար մեզ սեփական ժողովրդով հանդերձ տեղափոխվել Ղա-րաբաղ, մեր կյանքի մնացած մասն անցկացնել մեր ժողովր-դի հետ: Ինչ-որ թղթով Կայսրին խոստացել եմ արքունի գանձարանին օգնել, նույնը խոստանում եմ երդվելով:

Բարձրագույն կառավարությունը չգիտի, թե ինչքան մեծ են Կայսրին մատուցած իմ ծառայությունները: Քանի որ մեզ խաբող և մեր թափած արյամբ Անդրկովկասը գրա-վող պաշտոնյաները նախանձելով այդ մասին ոչինչ չեն հաղորդել: Ես Կայսրի համար մինչև անգամ զոհեցի իմ ծերության օրվա ապավենին, իմ միակ զավակին, Աբովյան տոհմի փառք ու պարծանք մելիքաժառանգ, իմ մեծ որդի Առստամ բեկին: Ահա այն ամենամեծ ապացույցը, որ ոչ մեկը չի կարող անել, բայց ես արել եմ ու դեռ անելու եմ:

Էլ ի՞նչ է մնում ինձ անել, ես մի կաթիլ արյուն ունեմ, որ պատրաստ եմ այն էլ թափել հանուն Կայսրի: Ոչ ոք դրանից ավել չի կարող անել:

Սակայն ես մի մեծ հանցանք եմ արել, ես հայ եմ, հայ եմ ծնվել, հայ եմ մկրտվել, հայ եմ մեծացել և հայ-կական եկեղեցու գրկում ապրել: Հենց սա է պատճառը, որ ղեկավարները, հրամանատարները, զորավարները և դա-տավորները ջղայնանում են ինձ վրա: Նրանք նախանձում են իմ կատարած քաջագործությունների վրա, քանի որ այդ

անողը հայ էր: Նրանք չեն ցանկանում իմ և մյուս մե-
լիքների ծառայությունները տեղեկացնել այնտեղ, որտեղ
պետք է: Քանի որ նրանց միակ նպատակն է, որ ես հու-
սահատվեմ իրենց գործած այդ վատություններից և մեռնեմ
նեղսրտվելուց, որ իմ կատարած քաջություններն անհայտ
մնան: Բայց այդ քաջագործությունները պատմության է-
ջերից ոչ կրոնական խտրականությունը կարող է քերել, ոչ
չար նախանձները և ոչ բռնացողները: Աստծո օգնությամբ
դա երբեք չի լինի: Երբեք չեն կարող ինձ հուսահատեց-
նել և տրտմեցնել, վհատեցնել ինձ, մինչև գերեզման մտ-
նելս: Ընդհակառակը՝ այսուհետ ես մտադիր եմ այնպիսի
հաղթանակներ ունենալ, որոնց վրա շատերը կզարմանան:
Աստծո օգնությամբ ես չեմ մեռնելու այն վախկոտների,
թուլամորթների և տկարամիտների նման, ովքեր իրենց հո-
գիները ավանդում են մահվան մահճում: Այլ ես գերեզ-
ման կմտնեմ իմ հատուկ արիությամբ: Ես պետք է մեռնեմ
պատերազմի դաշտում, թուրը ձեռքիս, զենքը վրաս, մա-
հացու վերք ստացած կրծքիս և ոչ թե մեջքիս: Սա է իմ
ծերության խոստումի նշանաբանը:

Թող ինքնագովասանք չհամարվի, ես էի, որ ռուսա-
կան կառավարությանը հավատարիմ մնացի մինչև վերջին
շունչս: Ես էի, որ Աղա-Մամադ-Շահի սարսափելի զորքը
հետ պահեցի Շուշին գրավելուց: Ես էի, որ Զուբովի ժա-
մանակ հայ քաջերով հալածեցի պարսկական ահարկու բա-
նակը, ազատեցի մի բուռ ռուսական զորքը և Գանձակը,
Շամախին ու Շուշին գրավելով՝ ռուսներին հանձնեցի: Ես
էի, որ իմ զորքով բազում անգամ հաղթեցի կովկասաբնակ
ցեղերին և ամոթահար հետ շպրտեցի, ովքեր հաճախակի
հարձակվելով փորձում էին գրավել Կախեթը, որ Վրաս-
տանի դուռն էր: Վերջապես ես էի, որ Տփխիսի և իր բո-
լոր գավառների ժողովրդի կյանքը և ունեցվածքը պահպա-
նեցի, հալածելով շարունակ հարձակվող Ախալցխայի լեռ-
նականների և Վրաստանի սահմանակից պարսիկ և թափա-
ռական ցեղերին: Իմ սիրելի որդի Առստամ բեկն էր, որ

այդ անելանելի իրավիճակում տղամարդկայնորեն Տփխիսից Երևանի օժանդակությամբ ռազմամթերք մատակարարեց ռուս-ներին, որով և զոհ դարձավ:

Գուտովիչ գեներալ կոմսից շատ անգամ խնդրել եմ, որ Մելիք-Ջումշուդի նման ինձ էլ թույլ տալ Ղարաբաղ տեղափոխվել, բայց նա չհամաձայնվեց պատճառաբանելով, որ եթե մենք թողնենք այդ երկիրը՝ Բոլնիսի և Տփխիսի շր-ջակա գյուղարանքները կամայանան Ախալցխայի, լեզգի և սահմանակից ցեղերի հարձակումներից: Իսկ ամենացավալին այն է, երբ մենք ասում ենք, որ Հերակլ թագավորը եր-դմնաթղթով մեզ է տվել Բոլնիսն իր ամբողջ հողերով, ջրերով և անտառներով, ուրեմն՝ կրկին հաստատեցեք մեզ վրա, քանի որ չեք ուզում, որ մենք բացակայենք, կոմսը պատասխանում է.«Ես չեմ կարող ձեզ տալ ուրիշների կալ-վածքները» և այլ նմանատիպ խոսքեր:

Այսպիսին է մեր վիճակը, ոչ Մելիք-Ջումշուդի նման կարողանում ենք վաճառել մեր սեփականությունը և ոչ էլ կարողանում ենք մեզ և մեր ժողովրդին ազատել Վրաստա-նից և հայրենիք վերադառնալ: Վերջապես ես ավելորդ եմ համարում, այս մանրամասն նկարագրություններով Ձեզ ձանձրացնելը: Հիմա միայն խնդրում եմ ձեզանից, տեղեկաց-նել բարեպաշտ Կայսերը, որ նա հիշի իմ մատուցած ծառա-յությունները, խնայի իմ ծերությունը, բավարար համարի իմ կրած այդ տառապանքները և ինձ թույլ տա իմ ժողովրդի հետ միասին Ղարաբաղ վերադառնալ և նրան օրհնելով անց-կացնել իմ կյանքի մնացած մասը: Ողջ լինեք Աստծով: Տփ-խիսից 1807 թիվ, նոյ.23: Վշտալի Մելիք-Աբով»:

ԽԲ.

Երկար ժամանակ Սուլիից տեղեկություն չկար:

1808 թ-ին Սուլին մի նամակով հայտնում է, որ նա վտանգավոր կասկածի պատճառով, ճիշտ էր գտնում որոշ

ժամանակով բացակայել ռուսական պալատից, որ այդ վտանգավոր կասկածը լրտեսություն անելու մասին էր, որ այժմ ինքը նորից Կայսերական գերդաստանի կողմից հրավիրվել էր քարեղենի համար, որ ռուսական կառավարությունն առանձին ուշադրություն է դարձնում Անդրկովկասում գրավված և դեռ գրավվելիք երկրները պաշտպանել պարսիկների և կովկասյան ցեղերի հաճախակի հարձակումներից: Որ Ղարաբաղի հայ մելիքները դիմել էին ռուսական կայսերը, հարազատ մելիքությունը իր նախկին իրավունքներով վերականգնելու համար, որ մելիքները բողոքում էին, որ իրենց ծառայությունները չեն հաղորդվում ռուսական կառավարությանը, որ այդ բոլոր պաշտոնական գրությունները Մինաս աղա Լազարյանցն էր ներկայացնում ռուսական կառավարության ղեկավար նախարարին և երկար խորհրդակցում նրա հետ, որ ամբողջ ակնեղենը վաճառվել է և ինքը կարիք ուներ նոր ակնեղենի և անհամբեր սպասում էր ստանալ դրանք:

Սուլիին հրամայեցին Պարսկաստան վերադառնալ:

Սույն թվականին Մելիք-Ջումշուդը Շուշիից նամակ է գրում հորս. «Սիրելի Բեկնազարյանց, Տփխիսում թունավորումից մահացավ Մելիք-Աբով Գ-ն, թույնը բերել էին վրացի նենգ իշխանները՝ Բոլնիսը յուրացնելու չար դիտավորությամբ: Քանզի այդ խնջույքում, որտեղ թունավորվեց հայ դյուցազուն մելիքը, ես էս ներկա էի: Չարագործությունը հայտնի դարձավ, բայց դատավորները գիտակցաբար անպատիժ թողեցին դավաճան չարագործին:

Գյուլիստանի գաղթականների միասնական որոշմամբ, հանգուցյալ մելիքին փոխարինելու նշանակվեց Մելիք-Ֆրեյդոնը, բայց նա շատ կարճ կյանք ունեցավ: Քանի որ միշտ ժողովուրդը աշխատում էր այս ընտրությունը վավերացնել ռուսական կառավարչի կողմից: Հանկարծ հայտնի դարձավ, որ Մելիք-Ֆրեյդոնը սպանվել է սրով, իր հարազատ եղբայր, անիծյալ Սամի կողմից: Կալանավորված Սամը խոստովանեց, որ այդ ոճիրը նա կատարել է վրաց իշխանների թելադ-

բանքով, ովքեր խոստացել էին իրեն իշխանության նշանակել: Սամի հետ նրանք նույնպես անպատիժ մնացին:

Գաղթական ժողովուրդը միանգամից մերժեց փառատենչ, խաբված և եղբայրասպան Սամին, ով խորամանկ իշխանների սուտ խոստումներին վստահելով փորձում էր բռնի ժառանգել մելիքությունը: Իշխան հաստատվեց Մանաս բեկը, նահատակ Առստամ բեկի փոքր եղբայրը: Վրաց իշխանների և պաշտոնյաների այս արարքներից զզված՝ գաղթականների մեծ մասը Մելիք-Աբովյան Մանաս բեկի հետ, կրկին վերադարձավ Գյուլիստան և նորից սկսեց ծաղկեցնել այդ գավառը: Ուրեմն՝ Մելիք-Աբովի հետ մահացավ Բոլնիսը, իսկ Մելիք-Ֆրեյդոնի հետ՝ Բորչալուի մի մասը:

Մինաս աղա Լազարյանցը մեր ընդհանուր և առանձին նամակներին հուսահատ նամակներով է պատասխանում, մինչդեռ մենք մեծ հույս ունենք, որ գոնե այս անգամ հայերի մատուցած ծառայությունները տեղ կհասնեին և մեծ սիրով կկատարվեին մեր չափավոր պահանջները, որոնք որքան շատ կարևոր էին Ղարաբաղի հայերի, այնքան էլ կարևոր էին Ռուսաստանի շահերի համար, եթե կատարվեին:

Մեհտի ճըռ-խանը սկսեց փող հնչեցնել, բայց ինչպես միշտ՝ գաղտնի: Նրա խնդրանքով և ռուս պաշտոնյաների թույլտվությամբ Քյոլանիները Կուր գետի եզերքից կրկին տեղափոխվեցին Թարթառ գետի ձորը և ճըռ-խանիս թելադրանքով մի քանի անգամ գիշերը գաղտնի հարձակվեցին Մելիք-Մեժլումյան Մելիք-Ադամին սպանելու համար: Արդեն գիտեք, որ այս թշնամությունը տոհմային է և անմահ: Բայց փա՜ռք Աստծուն, դեռ ձեր քաջերը կենդանի են: Արագահաս Սբ. Սարգիս և Քյորօղլին, ովքեր Շեյթանից նախապես տեղեկանալով այդ գաղտնի հարձակումների մասին, ոչ միայն գաղտնի ազատում են մելիքին, այլև կոտրում են թշնամիների մեծ մասը: Վերջին անգամ, երբ Քյոլականների հետ միացել էին նաև թափառական թուրքեր՝ քաջերից կալանավորվում են նրանց գլխավորները և ցույց են տալիս Մեհտի խանից իրենց գրված գաղտնի հրաման-

ները: Մենք այդ հրամանները ներկայացրինք Պել-մայորին՝ մի բողոքի հետ, բայց նկատելով որ ռուս դատավորները և կառավարիչները ոչ միայն անպատիժ են թողնում ճըռ-խանին, այլև ցանկանում են ոչնչացնել այդ թղթերը, որպեսզի Պետերբուրգ չհասնի, դրա համար էլ մի կերպ հետ վերցրինք թղթերը: Մելիք-Ադամը տեսնելով, որ արդարությունը ոտնակոխ է լինում, իսկ անարդարությունը՝ պաշտպանվում, հիասթափվելով իր ժողովրդի մեծ մասի հետ բնակություն հաստատեց Գանձակի շրջակայքում: Որևէ ենթադրությամբ չենք կարող եզրակացնել, թե հիմիկվա ռուս և վրացի կառավարիչները ինչ մեծ վնաս են կրել հայերի այս վերջին, ծայրաստիճան հավատարմությունից և ինչ օգուտ են տեսել պարսիկ և թուրք խաների վերջին անհավատարմությունից, որ այսքան հայերին զրկում են և պաշտպանելով կերակրում ճշմարտության թշնամիներին...

Ամարասի Իսրայել կաթողիկոսը մահացավ և Տփխիսից Գանձասար տեղափոխվեց Ջալալյան Բաղդասար վարդապետը, շուտով Աղվանքից կգա նաև հարազատ Սարգիս կաթողիկոսը:

Ջրաբերդի գավառի իշխան նշանակեցինք Աթաբեկյան Վանի-Յուզբաշուն «Մելիք Վանի» տիտղոսով և Քյորօղլու զորագունդը միացրեց նրա զորքի հետ, որպեսզի Մելիք-Ադամի մահվան պատճառով այս գավառի ժողովուրդն անտեր չմնար և չվնասվեր թշնամական հարձակումներից: Գրաբեր Շեյթանի հետ տեղեկություններ հաղորդեք մեզ: Բոլոր քաջերը և Մելիք Վանին բարևում են Ձեզ: Ողջ լինեք Աստծով»:

Հայրս Շեյթանի հետ ուղարկեց այս պատասխանը.

«Սիրելի Մելիք-Ջումշուդ, ինչ որ ես ժամանակին ասել եմ հարազատ մելիքներին՝ ամեն ինչ կատարվել է, կատարվում է ու դեռ կկատարվի: Դուք մի ցավեք օտարազգի կառավարիչների և պաշտոնակալների վրա, ովքեր հայերի մատուցած ծառայությունները Ռուսաստան չեն հասցնում, դուք մի տխրեք, որ հայերի ամենահավատարիմ ծա-

ությունները, երևելի քաջագործությունները, գանգատներն ու բողոքները լռությամբ են վարձատրվում, իսկ վրացի Ալեքսանդրների, պարսիկ ու թուրք խաների, Ռուսաստանի և Հայաստանի դեմ գործած դավաճանություններն ամենուրեք փայլում են, որպես ամենահավատարիմ ծառայություն: Դուք մի զարմացեք, որ այսպիսիներին ամեն տեղ պաշտում են, և նրանց կատարած բազում նենգությունները պատժելու փոխարեն փայփայում են: Քանի որ կրոնական խտրականությունը սրբագործում է հանցագործներին, անիրավ մամոնան (փողի աստված) կյանք է տալիս խաներին, գրիչն անիրավությունն արդարություն է դարձնում, և կամայականությունը խաղում է իր դերը: «Խորհուրդս մեծ է, բայց ես ասեմ», ի հակադրություն ոսկու, գրչի և կամայականության: Սիրելի մելիք, մի հուսահատվեք, երբ տեսնում եք, որ հայոց հավատարմությունը հակադրության է հանդիպում, երբ կամայականության առջև հայոց հավատարմությունն անարժեք է, տեղ չունի արձանագրության և նամակագրության մեջ, անարժեք է ժամանակի հոսքի առաջ, ամենուրեք Ռուսական կառավարությանն անլսելի և անհասնելի ձայներ են մնում: Բայց այդ ամեն ինչը կգրանցվի ազգային, արդար պատմության էջերում, գին ու արժեք կունենան ընդհանուր պատմության առջև, և բարձրագոչ աղաղակ կլինեն անկաշառ քննադատության առաջ: Այս տողերը գրելով, ես չեմ ուզում ասել, որ այսուհետ հայերը անհավատարմությամբ վարվեն ուրիշների նման, և հավատարիմ լինելով միշտ խաբվեն ու տուժեն, այլ սովորեն այդ փորձից օգուտ քաղել: Ճկուն մտքի ու զորավոր ուժի դար է: Պետք է միացնել խելքն ուժի հետ:

Քանի՜, քանի՜ անգամ եմ ասել մելիքներին, որ օտար հարուստներից ողորմություն խնդրելը հիմարություն է, գթություն հայցելը՝ անխելքություն, վարձ խնդրելը՝ ժամանակի իզուր վատնում: Բացառություններ լինում են երբեմն, բայց աննշան հաջողությամբ: Հիմա շատ ուշ է: Դուք մեր քաջերով նորից կարող եք պաշտպանել մեր հայ-

ընիքը և մեծ գործեր գործել:

Մեհտի ճըռ-խանն այժմ գաղտնի նամակներով շուտ-շուտ Ղարաբաղ է հրավիրում Աբաս-Միրզային, պատճառաբանելով, թե հիմա ռուսները քիչ են Ղարաբաղում, որ հայ մելիքները այլևս նյութական ուժ չունեն, որ կազմավորեն իրենց զորքը և օգնեն ռուսներին: Որ հայ մելիքները խիստ հիասթափված են ռուսներից և, ընդհանրապես, մտադիր չեն օգնել նրանց, որ իրեն հաջողվել է ռուսների և հայերի դեմ տրամադրել Ղարաբաղի թուրք-թափառական և քյոլանի ցեղերին, որոնք բավական մեծ վնաս են պատճառել հայերին, որ ռուսներին ամբողջ սրտով աջակցող և պարսկական ձեռնարկումները քայքայող Մելիք-Ադամը Ջրաբերդից քշվել է Գանձակ: Որ հիմա առավել կազմակերպված են միայն Նյառաթյովի և Քյորօղլու զորքերը, որ սարսափելի մեղք է համարում իրեն ռուսների իշխանության տակ տեսնելը: Որ այդ տրամադրված մահմեդականը պատրաստ է Աբաս-Միրզային դիմավորել Արաքսի ձախ ափին և որ ինքը պատրաստ էր Շուշին թագաժառանգին հանձնելով գլուխ բերեր իր հոր՝ Իբրահիմ խանի սկսած գործը և քաղաքական նպատակը:

Ճըռ-խանի հրավերներին և թագաժառանգի ճգտմանը, ոչ պակաս ուժ ու տրամադրություն տվեց նաև Ջաֆար-Ղուլի ճըռ-բեկը, որն ինչպես գիտեք, որքան տարիներ է, որ գտնվում է Աբաս-Միրզայի մոտ և Ռուսաստանի ու Հայաստանի անհաշտ թշնամին էր:

Երանի՜ թեկուզ հիմա միայն Ռուսաստանը ճանաչեր իր մտերիմ բարեկամին և ոխերիմ թշնամուն: Բայց այդ ճանաչելը շատ դժվար է ռուս կառավարիչների համար, ովքեր հակադրությունն ու ոսկին ավելի լավ բարեկամ են համարում, քան հայերի հավատարմությունը: Թե ե՞րբ է հարձակվելու թագաժառանգը՝ Շեյթանից կտեղեկանանք: Միշտ պատրաստ, արթուն եղեք և հսկեք ճըռ-խանի յուրաքանչյուր շարժում, և Ձեր գործը Ձեր ձեռքով արեք:

Շատ ուրախացա, տեղեկանալով մեր սիրելի քաջերի գործերից, նրանց բոլորին շատ բարևներ: Ողջ լինեք Աստծով»:

Բաքվի խանը հայտնում էր, որ Բաքուն գրավվեց ռուսների կողմից:

ԽԳ.

1809 թվի սկզբին Սուլին վերադարձավ Պարսկաստան և պատմեց այն, ինչ որ մենք արդեն գրել ենք: Բաքվի, Շամախիի և Շուշիի ճըռ-խանից, միևնույն իմաստով գաղտնի նամակներ էին գալիս պարսկական արքունիք, այսինքն՝ Աբաս-Միրզային հրավիրում էին, որ ռուսներին՝ ովքեր քիչ էին այդ ժամանակ, դուրս քշի Անդրկովկասից: Աբաս-Միրզան նրանց միանման գաղտնի նամակներով տեղեկացրեց, որ պատրաստ լինեն և որ ինքն էլ արդեն պատրաստվում է հարձակվելու: Սույն թվականին հայրս մի նամակ ստացավ Մելիք-Ջումշուդից, որով նա հայտնում էր, որ Վրաստանի հայ գաղթականները նորից զգալի կերպով տեղափոխվում են Ղարաբաղ: Իսկ Մեհտի ճըռ-խանը գրում է Աբաս-Միրզային. «Ռուսները մտադիր են գրավել Կապանը, Մեղրին և Բերքաշատը: Դուք ճիշտ կանեք, եթե ամրացնեք Երասխաձորի բերդը և ձեր զորքը կենտրոնացնեք այդ կողմերում, որպեսզի գրավելով այդ տեղերը ռուսները չխզեն Պարսկաստանի և Արարատյան նահանգի կապը: Իսկ այս խոնարհ, բայց կանխագեկույց առաջարկությունը, հուսամ, որ Ձեզ տհաճ չի թվա»:

Այդ առաջարկությունը ձեռնարկած Աբաս-Միրզան, կազմավորվել և պատրաստել էր Արաքսի աջ ու ձախ կողմերի զորաբերդերը: Ամրացվում էին Ալի-Տերեից մինչև Քեափենեկ գետի խառնարանները, որ թափվում էր Արաքս գետը: Աբաս-Միրզայի հեռատեսությունն Անդրկովկասը կրկին գրավելը

տեսնում էր Շուշիի գրավումով, իսկ Արարատյան նահանգի կորուստը՝ Շուշիի կորստով: Այդ պատճառով ամեն ջանք գործադրում էր, որ Կապանի բերդի վրա հանկարծակի հարձակվեր և գրավեր Կապանն ու Շուշին, որով Ղարաբաղը կմիանար Արարատյան նահանգի հետ: Այս որոշման հետ համաձայն էր նաև Մեհտի ճըռ-խանը, ով խոստանում էր այս անգամ Շուշին Աբաս-Միրզային հանձնել, եթե թագաժառանգը հետևեր իր խորհրդին և մի փոքրիկ զորքով անցներ Զաբուղ գետն ու Ղարաղշլաղ գյուղից Քիրս սարի կիրճով մոտենար Շուշիի բերդին, որն էլ ինքը գիշերը բացելով կհանձներ թագաժառանգին:

Աբաս-Միրզային դուր եկավ այս ծրագիրը, քանի որ ռուսներն ու հայերն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին դրսի դարպասների վրա, որոնց վրա կասկածում էին: Բայց Շեյթան Թյունին քնած չէր: Նա սատանայի նման իմանալով բոլոր գաղտնիքները հայտնում է հայ մելիքներին և ռուս պաշտոնյաներին: Բայց այդ հարձակումը հետաձգվեց մի քանի կարևոր պատճառներով:

1810-1811 թվականների գարնանն ամեն ինչ պատրաստ էր, թագաժառանգը հարձակվեց Ղափանի բերդի վրա և պաշարեց: Հանկարծ Շվեցովը ռուսական և մեզ ծանոթ հայկական զորքով հասավ, ազատեց ոչ միայն Ղափանն ու Բերքաշատը, այլև Կոլտարևսկու հետ ռմբակոծությամբ հետզհետե կործանեց Երասխաձորի զորաբերդը և հալածեց Պարսկական զորքը: Հենց այսպես այդ երեք գավառները նույնպես ընկան Ռուսաստանի տիրապետության տակ: Բայց Աբաս-Միրզան ընդհանրապես չվհատվեց:

1812 թվականին Մելիք-Վանին գրում է հորս, որ Աղվանքի հարազատ կաթողիկոսը մի շարք գաղթականներով Հաղպատի վանքից տեղափոխվում է Գանձասար, որ Աղվանքի կաթողիկոսարան Գանձասարը՝ Բաղդասար վարդապետի ջանքերի շնորհիվ, նորից սկսում է ծաղկել, որ Մեհտի ճըռ-խանը, գաղտնի գրգռում և ապստամբեցնում է Ղարաբաղի բոլոր թափառական մահմեդականներին և որ այս ճըռ-խանը նպատակ ունի գաղտնի թունավորել Մելիք-Ջումշուդին, Նյառաթյովին և

Քյանդխուդա-Խաչատուր Բարխուդարյանցին, ովքեր տեղյակ էին այդ բոլոր չար դիտավորություններին:

Սույն թվականին Աբաս-Միրզան մեծ զորքով արշավեց Ղարաբաղի վրա: Բանակին առաջնորդում էր Ջափար-Ղուլի ճրռ-բեկը, ում գաղտնի հրաման էր տվել Մեհտի ճրռ-խանը: Ճանապարհի կեսին լուր հասավ Աբաս-Միրզային, որ ռուսական բանակը Արաքս գետից անցավ և շարժվում է դեպի պարսկական կողմը: Շուտով պարսկական բանակին միացան ճրռ-խանի կողմից ուղարկված թուրք-թափառական ցեղերը: Բանակը հանգստացավ Ասլանտուզի մոտ: Ռուսական բանակի հրամանատարն էր գեներալ Կոտլարևսկին, ում միացել էին Մելիք-Վանին, Նյառաթյովը, Արագահասը և Քյորօղլին իրենց հեծելազորներով:

Պատերազմը սկսվեց Ասլանտուզի մոտ հոկտեմբեր ամսին: Պարսկական թնդանոթաձիգ զորքը ուղղահայաց դիրք գրավեց, թափառական զորքը աջ, իսկ անկանոն ձիավոր զորքը՝ ձախ թևի վրա շարվեցին: Այդպես էլ՝ ռուսական զորքը: Թնդանոթաձիգը մեջտեղ տեղակայվեց, Մելիք-Վանին և Նյառաթյովը՝ ձախից, իսկ Արագահասը և Քյորօղլին աջ կողմից դասավորվեցին: Քիչ ժամանակ անց բանակները կատաղի հարձակմամբ իրար մոտեցան, որոտացին թնդանոթները, պարսկական բանակի աջ թևը շրջապատվեց Մելիք-Վանիի և Նյառաթյովի զորքով, իսկ ձախը՝ Արագահասի և Քյորօղլու: Կործանվեցին պարսկական բանակի աջ ու ձախ թևերը, և փախուստի դիմեցին այդ թևերի ղեկավարներ Փիր-Ղուլի խանը և Ջափար-Ղուլի ճրռ-բեկը: Աբաս-Միրզան իր զորքի հետ ևս պարտություն կրեց և հետ դարձավ: Շահական բանակից սպանվեցին 3459 և վիրավորվեցին 290 զինվոր: Մահացածներից 1250-ը Ղարաբաղի թափառականներն էին, իսկ 1000-ը պարսկական հեծելազորից:

Կոլտարևսկին շարունակեց իր արշավանքը հայկական զորքերի հետ միասին և 1813 թվականին պաշարեց Լենքորանի բերդը: Շատ չանցած, հունվար ամսին այդ բերդը ևս գրավվեց ռուսական բանակի կողմից: Այսպես հերթով հայ և ռուս զորքերի կողմից գրավվեցին և՛ Բաքուն, և՛ Շամախին, իսկ Աբաս-

Միրզան կրկին անգամ պարտված վերադարձավ՝ ռուսներին թողնելով Անդրկովկասը:

Աբաս-Միրզան իր պարտությունը վերագրում էր ոչ թե ռուսներին, այլ՝ հայերին: Ուստի, ավելի շատ հիասթափված էր ոչ այնքան ռուսներից, որքան՝ հայերից, ովքեր ջրի երես էին հանել նրա գաղտնի և ակնհայտ բոլոր ձեռնարկած քայլերը: Բայց, այնուամենայնիվ, նա իր խոսքը ուղղեց հորս և զարմացած գոչեց.

«Աղա-Մամադ-Շահի առաջին արշավանքից մինչև մեր վերջին արշավանքը տևեց 18 տարի: Մեր և Ռուսաստանի պատերազմի կենտրոն դարձած Ղարաբաղը թե՛ նյութապես, և թե՛ բարոյապես ավերվել էր: Ղարաբաղի հայությունը, որ այնքան զավակներ զոհեց մեր և ճըռ-խաների պատերազմում, որ այնքան զավակներ տվեց սովին ու ժանտախտին, Ղարաբաղի հայությունը, որ այնքան գաղթականներ ցրեց իր երկրից, Ղարաբաղի հայությունը, որ իր սիրասուն զավակներից անչափ շատ գերիներ տվեց մեզ, և վերջապես Ղարաբաղի հայությունը, որ զոհ տվեց Աղվանքի հայոց Հովհաննես կաթողիկոսին, Մելիք-Բախտամին, Մելիք-Մելքումին, Մելիք-Աբով Դ-ին և մելիքաժառանգ Առստամին, այնուամենայնիվ, հավատարիմ մնաց մեր թշնամի Ռուսաստանին և հավատարիմ կմնա մինչև իր վերջին շունչը: Ինչպես համոզվեցինք՝ մեր բազմամյա փորձից և տեսանք մեր աչքով: Մեր մղած բոլոր պատերազմներում, որտեղ դուք ևս ներկա էիք, մենք տեսանք, որ մեզ հաղթողները և մեզ ոչնչացնողները հայերն էին, այո՝ ղարաբաղցի հայերը, և ոչ թե ռուսները: Այդ իսկ պատճառով մենք շատ ենք ցավում Ղարաբաղի քաջերի համար, ովքեր հիմարաբար գործիք դարձան Ռուսաստանի ձեռքում և մեզ այսքան վնասներ պատճառեցին՝ թե բարոյական և թե նյութական: Վերջապես Ղարաբաղի հայության այս հավատարիմ ծառայության վարձքը կլինի մելիքության շուտափույթ կործանումը, ազատության կորուստը, խորին ու անբուժելի վերքը: Ժամանակը կհաստատի ասածներս իր անջնջելի գրիչով»:

-Սիրելի թագաժառանգ, միայն Ղարաբաղի հայությունը չէ հավատարիմ օտարին, այլև՝ բոլոր հայերը, ովքեր հավատարիմ են միայն ընդհանուր շահերի և նպատակների համար: Երանի թե բոլոր պետություններից ըստ արժանվույն գնահատեին հայերի հավատարմությունը, և օգտագործեին, որով վնասվում և վնասում էին իշխող տերությունների շահերը նույնպես:

Հայերը, այսինքն՝ մելիքները, Ռուսաստանին աջակցում են Պետրոս Մեծի կառավարման ժամանակից (1727-1813), բայց այդ աջակցության պատճառը, ինչպես ինքներդ շատ լավ գիտեք, ճրռ-խանների գոյությունը պարսկական նախորդ շահերի անհեռատես քաղաքականությունից էր, որը ոմանք ոչնչացնելու փոխարեն կենդանի պահեցին, Աղա-Մամադ-Շահից բացի, ով այդպես էլ չհասավ իր նպատակին: Իսկ ինչ-որ ասացիք Ղարաբաղի հայերի սխալի և ժամանակի մասին՝ համաձայն եմ»:

Թագաժառանգն այլևս չխոսեց:

Այն հայրենասեր, պատվասեր Աբաս-Միրզան, որ երկար տարիներ պատերազմեց, միլիոններ վատնեց, զորք փչացրեց, Անդրկովկասում իր կորցրած պատիվը և երկրները ձեռք բերելու համար, բայց երբ անկարող էր դա անել, ակամա խոնարհվեց, որպեսզի հաշտություն կնքի ռուսների հետ: Պայմանագիրը կնքվեց 1813 թվականին Աբովյանների Գյուլիստան կամ Զեյվա բերդում, երկու կողմից որոշված լիազոր դեսպանների ձեռքով: Այս պայմանագրով Պարսկաստանը Ռուսաստանին թողեց Անդրկովկասը, այն է՝ Կասպից ծովի և Արաքս գետի հյուսիսային կողմերը: Բայց անորոշ և վիճահարույց մնացին Սևանա լճի մոտակայքում գտնվող մի կտոր հող, Կապանի և Մեղրու գետի ու Արաքս գետի միջև տարածությունը:

Պարսկական կառավարությունը Պետերբուրգ դեսպան ուղարկեց Աբդուլ-Հասան-Միրզային, ով ավելի շատ էր տեղյակ քաղաքականությունից:

Ջափար-Ղուլի ճրռ-բեկը ռուսներից ներում խնդրելով՝ վերադարձավ Շուշի:

ԽԴ.

Այս տարիների ընթացքում հայրս ամբողջովին կեր-պարանափոխվել է: Մազերը սպիտակել էին, իսկ ինքը ժա-մանակից շուտ ծերացել: Մի օր հայրս ներկայացավ Շա-հին և հրաժեշտ տվեց զինվորական ծառայությանը, պատ-ճառաբանելով, որ ինքն արդեն ծեր է և պետք է հանգս-տանա: Ֆաթալի-Շահը սկզբից չնորհակալություն հայտնեց հորս, Պարսկաստանին մատուցած նրա ծառայության հա-մար: Ապա բավարար թոշակ նշանակեց մինչև կյանքի վեր-ջը և այս խոսքերով ներքին կառավարումը հանձնեց հորս. «Հաճախ անկարգություններ են տեղի ունենում մեր պա-լատականների և կանանց միջև, այդ իսկ պատճառով մենք ցանկանում ենք Ձեզ նման մի ազդեցիկ կառավարիչ ունե-նալ, ով վերջ կտար այդ անկարգություններին և բոլոր խռովություններին: Մեր համար կառավարիչը մեծ և պատ-վավոր աշխատանք է, քանի որ այն իր մեջ ընդգրկում է Շահի ներքին պատվի հսկողությունը և հավատարմությու-նը: Մեր օրերում արգելվում է այդ պաշտոնը վստահել օտար մարդկանց, որովհետև ժամանակն է ձեզ ընտելացնում, մենք այնպես ենք արել, որ սկզբից ձեզ ընտելացրել ենք և հե-տո միայն ձեզ ենք հանձնել այս պաշտոնը:

-Հայր իմ,- առանձին հարցրեցի, - որտե՞ղ մնաց մեր Ղարաբաղ վերադառնալու հարցը, որտե՞ղ մնացին հայրենի-քին օգնելու ցանկությունները և մեր հարազատ մելիքու-թյունը վերականգնելու նպատակը և ինչ պատճառով զին-վորական բարձր պատվավոր պաշտոնից հրաժարվեցիր և ընդունեցիր, ինձ համար, այդ ոչ պատվավոր թվացող պաշտոնը:

-Իմ սիրելի որդի Ապրես, ես Ղարաբաղ վերադառնա-լով, այսուհետև չեմ կարողանա իմ այս ծերությամբ հայ-

ընենիքիս օգտակար լինել: Այս պատճառով միայն ստանձ-նեցի այս պաշտոնը, որ օգտակար լինեմ պարսկահայերին՝ գոնե այս վերջին ծառայությունը մատուցելով: Ես կարող եմ պալատականների և Շահի կանանց միջոցով ներգործել բարեպաշտ Շահի վրա և բարձր պաշտոնների հասցնել պարսկահայերից շատերին:

Ինչպես արել եմ ու այդպես ապահովել տեղի հայե-րի կացությունը և օրինակ ծառայել ապագա Շահերին: Սա մի խորհրդավոր գաղտնիք է, որը հայտնեցի քեզ:

Իմ վաղահաս ծերության պատճառը ո՛չ մորդ մահն է, և ո՛չ մահացած զավակներիս ցավը, և ո՛չ էլ երկարատև պատերազմները, այլ Ղարաբաղի հարազատ մելիքության մահը, որ ապրել է մոտ 400 տարի, բայց այսօր հոգեվար-քում մեռնում է կրոնական խտրականության սրով: Ուրեմն՝ գնանք Ղարաբաղ ի՞նչ գործ անելու, քանի դեռ հայերի գործած դյուցազնական հրաշագործությունները շարունա-կում են անարժեք մնալ: Մինչդեռ նենգ ճրո-խաների, նենգ արքայազնների դավաճանությունները փայլուն գովերգվում և ապրում են խտրականության ոսկու և գրիչի շնորհիվ: Այս ամենը քեզ ասելով, չմտածես, թե քեզ սխալ խոր-հուրդ եմ տալիս, որ դու միանգամից մոռանաս քո սիրե-լի հայրենիքը, ո՛չ ամենևին: Ես ցանկանում եմ քեզ հաս-կացնել, որ չի կարելի արհամարհել ժամանակի տված օ-գուտները: Ժամանակն ունի իր օգտակար և վնասակար հատկությունները՝ խելացի կամ հիմար պաշտոնյաների ձեռքում: Այժմ՝ մեր այստեղ մնալը ավելի շահավետ է մեր ազգի համար, քան Ղարաբաղում:

Հիմա խոսենք քո ապագայի մասին: Սիրելի որդյակ, դու այստեղ արդեն մեծ պատիվ ունես, պատվավոր պաշ-տոն և բավական գումար: Ուրեմն՝ ապագադ ապահովված է: Ես ցանկանում եմ քեզ ամուսնացնել և դրանով էլ վերջ տալ իմ հայրական պարտականություններին, որպեսզի հան-գստանամ:

- Իմ սիրելի հայր, թողեք, որ այդ հարցերը ապա-

գան լուծի, քանի որ ես չեմ ուզում Պարսկաստանում ա-մուսնանալ: Եվ խնդրում եմ, որ չտխրեք ես չեմ կարող ընդունել ձեր առաջարկությունները, որը լի է հայրախնամ զգացմունքներով:

Հայրս ոչ տխրեց և ոչ էլ ստիպեց, այլ լռեց:

Հետզհետե իրականացան հորս նպատակները: Հայե-րի ձեռքն անցան փոխարքայությունը, դեսպանությունը, գանձարանի ղեկավարումը, գավառապետությունը, դրոշմա-պահությունը, սենեկապետությունը, ներքին կառավարումը, քարտուղարությունը, բժշկությունը, հավատարմատարությու-նը, թիկնապահությունը, արքայական ծախսերը, արքունի վաճառականությունը, վաճառականների ղեկավարումը և այլն, և այլն:

Որքա՜ն էին ուրախանում Շահն ու Աբաս-Միրզան, երբ տեսնում էին, որ ամեն ինչ հետզհետե կարգավորվում է հայերի հավատարմության շնորհիվ, այո՛, ուրախանում էին, երբ տեսնում էին, որ առևտուրը օրեցօր ավելի էր ծաղկում: Կարգավորվում էին ներքին գործերը, ամրապնդ-վում էին արտաքին հարաբերությունները, հավասարակշռ-վում էին գանձարանի ելք ու մուտքը, և օրեցօր ավելի էին բարեկարգվում ներքին և արտաքին գործերը: Այս պատճառով պարսկական կառավարությունը մի առանձին ուրախություն էր զգում, իրեն շրջապատված տեսնելով հա-վատարիմ և գործունյա հայերով, այդ իսկ պատճառով նրանց սերը, վստահությունը և համակրանքը դեպի հայե-րը, օրեցօր բազմապատկվում էր:

Զմոռանամ ասել նաև, որ հայրս անվանվում էր «Իբ-րահիմ-Աղա», իսկ ես անվանվում էի «Միրզա-Ալլահվերդի», բայց հաճախ օգտագործում էի իմ նախկին «Ալլահվերդի-բեկ» անունը:

1814 թվին Մելիք-Վանին հորս գրում է հետևյալ նա-մակը. «Սիրելի Բեկնազարյանց, նախորդ նամակում գրել էի, որ ճըռ-խանը գաղտնի կերպով ուզում է սպանել Մելիք-Ջումշուդին, ով ինչպես գիտեք՝ ստացել էր գնդապետի

տիտղոս: Այժմ, ցավոք սրտի, հայտնում եմ ձեզ, որ նույն Մելիք-Ջումշուդը[1] նույն խանի գաղտնի թույնով 1811 թվի ապրիլ ամսին մահացավ: Եվ մելիքությունը ժառանգեց հանգուցյալի թոռ Խուդատատը, «Մելիք Խուդատատը»[2]: Ճըռ-խանը կրկին անպատիժ մնաց...:

Այժմ՝ Խաչենի իշխանը Գաբրիել-Բեկի որդի Մելիք-Գրիգոր Գալալյանցն է, Դիզակինը՝ Մելիք-Ղահրամանը, Վարանդայինը՝ Մելիք-Խուդատատը, Ջրաբերդինը՝ ինքը Մելիք-Վանին, իսկ Գյուլիստանինը՝ Մելիք-Աբովյան Մուսայել Բեկը: Գյուլ Յաթաղի ճըռ-մելիքությունը կործանված է, միայն Խնձրիստանի վրա իշխում է ճըռ-մելիք Միրզախանյան Ալավերդին: Այս հարազատ մելիքները մի գաղտնի ժողով հրավիրեցին Գանձասարում, որի նպատակն էր անքակտելի միաբանություն ապահովել, հանուն Ղարաբաղի ընդանուր շահերի: Եվ որովհետև ռուս պաշտոնյաները անկարող են զսպել Ղարաբաղում կատարված մարդասպանությունները, գողությունները, հափշտակությունները և պաշտոնյաները չեն հավատում, որ այդ բոլոր չարությունները անում են ճըռ-խանի գաղտնի թելադրանքով, այդ իսկ պատճառով ժողովը որոշեց.

Նախ՝ Արագահասին իր խմբով, որպես հսկող կարգել այդ չարագործությունների դեմն արագ առնելու նպատակով:

Երկրորդ՝ մի նամակով բողոքել և այդ ամենը հայտնել Մինաս-աղա Լազարյանցին, որպեսզի նա էլ տեղեկացներ ռուսական կառավարությանը: Նամակի մեջ նկարագրված էին ռուս պաշտոնյաների անհավատությունը և անհոգությունը, ճըռ-խանի գաղտնի արարքներն ու դավաճանությունները, թուրք թափառական ցեղի չարագործություններ-

---

[1] «...Սա էր թոռն մեծասեռին, ազնիւ Մելիք-Հիւսէինին. խնդրեմ առնել զայս արժանին, միոյ բերան «Հայր մեղային»: Թիվ ՌՄԿԱ, ի Աբրելի ԻԲ»:

[2] «Մելիք-Խուդատատ իշխող Վարանդայ, թոռն ըստ մարմնոյ Մելիք Ջիմշիտայ: Այս նորա տապան, յորում մարմնով կայ, կենդանի հոգւով միշտ և ցապակայ: Ամաց քառասիտց ել յայս աշխարհէ... Թդ. ՌՄՁԲ»:

ը, և հայերի դեմ նյութած դավերը:

Երրորդ՝ թե ի՞նչ պատճառով չեն Ռուսաստան հասնում Քյանդխուդա-Խաչատուր Բարխուդարյանցի, Նյառաթյովի, Արագահասի և Քյորօղլու և նրանց գնդերի կատարած քաջագործությունները: Նրանք մասնակցել էին Անդրկովկասի բոլոր պատերազմներին և հավատարիմ ծառայել էին ռուսական գահին:

Չորրորդ՝ թե ի՞նչ պատճառով են ռուսական պաշտոնյաների կողմից անպատիժ մնում ճըռ-խանը, Ջափար-Ղուլի ճըռ-բեկը և այն բոլոր կալանավորված թուրք չարագործները, որոնց դավաճանությունները բազմիցս անգամ հաստատվել են անհերքելի փաստերով:

Ահա սա էր այդ ժողովի բովանդակությունը, որ Կաքև Զաքու հետ ուղարկեցին Տփխիս, այնտեղից էլ՝ Պետերբուրգ ուղարկելու համար: Բայց խեղճ Կաքև Զաքին Ղարաբաղի և Գանձակի սահմաններին հանդիպում է ավազակների, որոնք այդ նամակից բացի ոչինչ չգտնելով, վերցնում են այն և պատռելով ոչնչացնում: Երկրորդ անգամ ուղարկվեց նույնի արտագրությունը, բայց այս անգամ էլ Տփխիսում կալանավորվեց մի բարձր պաշտոնյայի կողմից: Վերջապես մելիքները տեսնելով, որ բոլոր ճըռերի և թուրքերի կողմն են պաշտպանում, այլևս նամակ չգրեցին: Այս առածներից, թե ինչքան են վշտացել մելիքները, ոչինչ չեն գրում: Ողջ լինեք Աստծով: Մելիք-Վանի»:

Խե.

1816 թվին Ռուսաստանի պարսից լիազոր դեսպանը, ով հետ էր կանչված Պետերբուրգից, Տփխիսից Շահի արքունիքին գրում էր. «...Կնյազ-Մադաթովը բարձրագույն կառավարության կողմից Ղարաբաղի ռուս և հայկական զորքերի վրա զորավար էր նշանակվել և Շուշիի խանու-

թյան կառավարության վերահսկող: Կնյազ-Մադաթովը ազգությամբ հայ էր և ծնվել էր Վարանդա գավառի Զանախչի (Ավետարանոց) գյուղում, Գրիգոր անունով մի աղքատ մարդ էր նրա հայրը: Կնյազը 18 տարեկանում Մելիք-Ջումշուդի հետ գնում է Հաշտարխան, ուր նախ գինեվաճառի խանութում սովորում է ռուսերեն կարդալ ու գրել: Ըստ եվրոպացիների 1799 թվականին ռուսական բանակում մտնում է զինվորական ծառայության: 1808-1810 թթ-ին փայլում է Ռուսաստանի կողմից Օսմանյան տերության դեմ մղած պատերազմում և ստանում է «Հաղթող» մականունը: 1812 - 1815 թթ. Ռուսաստանի Վարշավայի Դքսության և Գաղացիների դեմ մղած պատերազմներում ժառանգում է «Քաջահաղթ» հռչակը, հաղթանակով մտնում է Փարիզ և պաշտոնական նշանակվում վերը թվարկված պաշտոնների վրա: Ահա իմ իմացած տեղեկություններն այս ամենի մասին:

Պատերազմական արձանագրությունները վկայում են, որ Մադաթովը երբեք չի պարտվել, այլ միշտ հաղթող է եղել: Ես նրա հետ մինչև Թիֆլիս գնացի և նա ինձ մի սարսափելի մարդ թվաց, այսինքն՝ պատերազմական կրթության մեջ հասունացած և ռազմագիտական հմտության ամենագագաթին հասած մի հուժկու զինվորական: Արդեն ինձ հայտնի է, որ ռուսական կառավարությունն իր պատերազմական հաշիվները մաքրել է օսմանցիների, գաղիացիների և Վարշավայի դքսության հետ: Այժմ կառավարությունը մտադիր է շուտով գրավել Հյուսիսային Դաղստանը, որն իբր իր անընդհատ հարձակումներով խանգարում էր ամբողջ Անդրկովկասի և Կասպից ծովեզրյա բնակչության անդորրը: Հաստատ տեղեկություն ունեմ, որ այդ գրավման գործը ևս հանձնելու է Մադաթովին: Կարևոր համարեցի իմ գալուց առաջ այս տեղեկությունները հայտնելու արքունիքին: Ձեր ամենախոնարհ ծառա Միրզա-Աբդուլ-Հասան խան»:

Թեև Պարսկաստանի և կովկասցիների միջև մեծ կրոնական խտրականություններ կային (պարսիկները Շիա էին,

իսկ կովկասցիները՝ Սյունի), սակայն մահմեդականությունը անխտիր միացնում է այս երկու ազգերը: Բայց պարսիկ-ների և լեզգիների[1] քաղաքական շահերը գաղտնի միաբա-նություն է պահանջում, քանի որ այդ երկու ազգերն ար-ծիվ դրոշակին նայում էին որպես հակակրոն ազգի և որ-պես ազատ երկրներ կլանող թշնամու: Այս պատճառով Պարսկաստանը կարծես բոլորովին մոռացել էր Նադիր-Շա-հի Իրան-Խարապի մոտ լեզգիներին հաղթելու ցավը:

Հետևաբար՝ Աբաս-Միրզան ամեն ինչ գաղտնի նա-մակներով հայտնեց Հյուսիսային Դաղստանի բոլոր խանե-րին, բեկերին, շեյխերին և մուստաֆաներին: Իսկ Մեհտի ճրռ-խանը գաղտնի նամակով հրամայեց, որ Կնյազ-Մադա-թովի ձեռքով, ցանկացած միջոցի դիմեն և Ղարաբաղի հո-ղերը իր վրա գրանցեին: Այդ ձևով պատժելով Ղարաբա-ղի ամբողջ հայությանը և մելիքներին, ովքեր Ռուսաստա-նին միացած, ապստամբել և պատերազմում էին իր (Աբաս-Միրզայի) և Պարսկաստանի դեմ:

1817 թվին Մելիք-Վանին գրում էր. «Սիրելի Բեկնա-զարյանց, գեներալ Մադաթովը, ում քաջագործություններն արդեն Ձեզ հայտնի են, այժմ գտնվում է Ղարաբաղում և մեծ պաշտոններ ունի: Նա՝ Ղարաբաղի, Նուխու և Շա-մախիի ռուսական և հայկական զորքերի վրա նահանգա-յին զորավար է: Եվ միանգամայն վերահսկողություն է ի-րականացնում այդ խանությունների վրա: Ղարաբաղի հա-յության ուրախությունն անսահման է՝ իր գրկում տեսնե-լով իր արգանդից ծնված դյուցազնին: Կնյազ-Մադաթովը մանրամասնաբար տեղեկագրելով, հաղորդել է ռուսական ողորմած Կայսերը հայ հարազատ մելիքների, քաջերի և հայ զինվորների մատուցած բոլոր ծառայությունները, որը չէին հաղորդել Ցիցիանովը և մյուս պաշտոնյաները: Դրա-նից բացի խոստացավ վերականգնել հարազատ մելիքու-

[1] Լեզգի բառը օգտագործված է չեչեն բառի փոխարեն:

թյունը իր նախկին բոլոր իրավունքներով: Այս կարևոր խոստումը կրկին անգամ հույս արթնացրեց բոլորի սրտում և մի անբացատրելի ոգևորություն առաջացրեց, որով էլ Կնյազի շուրջը հավաքվեցին բոլոր մելիքները և հայ զինվորները: Հետզհետե հավաքվում են նաև ծերունիներ, երիտասարդներ և պատանիներ: Նրանց մեջ էր Շոշ գյուղից հայտնի Սափարի Թարխանյանը, որի նախնիները ինչպես գիտեք, գաղթել են Երևանից: Նոր հավաքված անկանոն հայ զորքի վրա Մադաթովը Յուզբաշի նշանակեց Սափարի Թարխանյանին: Արագահասը՝ ում շնորհիվ վերացել էին անկարգությունները, իր խմբով մնաց նույն պաշտոնում:

Արագահաս Պել-Ճամալի բնավորությունը գիտեք, որ յուրաքանչյուրին մի հիմար մականուն է կպցնում: Մադաթովին անվանեց «Պիծի Աստված»[1]:

Կնյազ-Մադաթովը բոլոր քաջերին պղնձյա մատանիներ նվիրեց, իսկ Քյանդխուդա-Խաչատուրին, Նյառաթյովին, Արագահասին, Քյորօղլուն և Պրախմազին մի-մի արծաթյա խաչ նվիրեց:

Արագահասն իր խմբով ուղարկվեց Արաքսի ձախ ափերը հսկելու, որպեսզի դիմադրի Պարսկաստանից գաղտնի Ղարաբաղ անցնող ավազակներին, ովքեր Մեհտի ճըռ-խանի թելադրանքով երբեմն հարձակվում են Դիզակ գավառի վրա և վնասներ պատճառում:

Կնյազ-Մադաթովը բոլոր հարազատ մելիքների և քաջերի խորհրդով ստորագրություն վերցրեց Մեհտի ճըռ-խանից, Ջափար-Ղուլի ճըռ-բեկից և բոլոր թուրք գյուղապետերից: Նրանք այս ստորագրություններով պատասխանատու դարձան Ղարաբաղում կատարվող ցանկացած գողության, հափշտականության և մարդասպանության համար որպես հանցագործ աքսորվելու Սիբիր, եթե նրանք գաղտնի նամակագրությամբ կապ հաստատեին Պարսկաստանի և

[1] Փոքր Աստված:

կովկասցիների հետ, մանավանդ, երբ բռնագրավվում էին այդ տեսակ նամակները: Այս ստորագրությունները սարսա-փելի ձևով ազդեցին բոլոր մահմեդական ցեղերի վրա:

Մադաթովի բռնած քաղաքականությունը ճիշտ է: Բայց այս ուղղության վրա հաստատ կմնա, թե՞ կփոխվի: Իր հայրենիքին օգտակար կլինի՞, թե՞ վնասակար, իր տված խոստումները կպահի՞, թե՞ անկատար կթողնի: Այս բոլոր հարցերի պատասխանները պետք է ապագան տա: Ողջ լի-նեք Աստծով»:

Հայրս անմիջապես Շեյթանի ձեռքով պատասխանեց. «Սիրելի Մելիք, բավարարված մնացի Ձեր հաղորդած տե-ղեկություններից: Մադաթովը թեև ղարաբաղցի է, սակայն անփորձ մարդ է, այս մասին հաղորդել է Մինաս-Աղա Լազարյանցը, քանի որ առանց փորձի կուրորեն հավատ չի ներշնչի ո՛չ երդումները և ո՛չ էլ նրա բռնած քաղա-քականությունը: Անզգուշությունից մեծ վնաս կծնվի ոչ միայն առանձին անհատի նկատմամբ, այլև՝ ամբողջ Ղա-րաբաղի:

Մադաթովը ունի հողային խնդիրների նկատմամբ ի-րավաբանի պաշտոնը և՛ այդ խանության, և՛ տեղի ժո-ղովրդի նկատմամբ, թերևս Ձեզ հայտնի չէ: Բայց իմ պարտքը համարեցի կանխավ տեղեկացնել Ձեզ, որ Աբաս-Միրզան գաղտնի հրամաններ է ուղարկում այդ խաներին: Գաղտնի կաշառել է և Մադաթովին, որպեսզի հողային հարցը ի օգուտ իրեն լուծվի: Իսկ Մեհտի ճըռ-խանը մաս-նավորապես հրամայել է ցանկացած միջոցով իր վրա գրան-ցել բոլոր հողերը, որպես հայ մելիքների պատիժ:

Ղարաբաղի բոլոր լեռնային և դաշտային հողերը եր-կու բազմադարյան հարստությունների սեփականություն են՝ հարազատ մելիքության և վանքապատական: Մելիքա-կան հողերը մելիքների վրա հաստատված են յուրաքան-չյուր գահակալող շահերի կողմից: Շահերը այդ հողերը մելիքներին են տվել, հիմք ընդունելով որդուց որդի սկզ-բունքը, որը նախկին շահերի արձանագրություններից

վերցնելով դնում եմ այստեղ. «...Որովհետև Ղարաբաղը կազմում է Աղվանքի մի մասը, և հինգ հարազատ մելիք-ները Աղվանքի թագավորների հետագա իշխող սերունդներն են, այդ իսկ պատճառով ինչպես մեր շահ պապերը, որ-պես բազմադարյա սեփականություն, այդ հողերը տվել են հինգ հարազատ մելիքներին՝ որդուց որդի, տեր և իշխան նշանակելով, այդպես էլ՝ մենք մեր շահական հրամանով այ-սինչ Մելիքին տեր և իշխան ենք նշանակում Ղարաբաղի այսինչ մասի հողերի և ժողովրդի վրա, որդուց որդի սկզ-բունքով և այլն»:

Իսկ վանքապատական հողերը և կալվածքները նվի-րել են Վախթանգ, Սմբատ և Վահան արքայազներին և նրանց հետնորդներին և որպես վաչխ այդ ամենը գրանց-վել է շահերի կողմից վանքերի և եկեղեցիների վրա: Այդ հարստությունները զարգացնելու և ազգին օգուտ բերելու հեռատեսությամբ: Բոլոր վանքերի և եկեղեցիների պատե-րի արձանագրությունները կենդանի վկաներ են և անկոր-ծան այդ ամենը կհաստատեն, այդպես էլ Շահական ար-քունիքի այն հրամանների ընօրինակները, որոնց ընդօրի-նակությունը շահերը տվել են Աղվանքի յուրաքանչյուր նոր կաթողիկոսի՝ տեր և տիրակալ կարգելով այդ հողե-րի վրա:

Ո՛չ ավազակապետ Ջարչի-Փանահն է Ղարաբաղ հող բերել Պարսկաստանի խորքերից, ո՛չ Իբրահիմ ճրո-խանը Շիրազի բանտերից, և ո՛չ էլ Կնյազ-Մաղաթովը Ռուսաս-տանից: Հողերն ամբողջությամբ հարազատ մելիքների և ժողովրդի սեփականությունն են: Դուք գիտեք, որ Նադիր-Շահից փախած Ջարչի-Փանահը, Ղարաբաղում անգամ մի մատնաչափ հող չունենալով, ցանկացավ մի ապաստան ու-նենալ. այդ պատճառով նախ փորձեց մի փոքր բերդակ հիմնել Գյուլիստանի ստորին դաշտային մասում, ապա Ջրաբերդի, իսկ հետո՝ Խաչենի: Սակայն մելիքները, որոնց պատկանում էին այդ ամբողջ հողերը, միշտ արգելում էին նրան: Որոշ ժամանակ անց Ջառչի-Փանահը 6000 թուման-

նով Գ.Մելիք-Շահնազարից գնեց միայն Շուշիի ստորին մասը, որն ամառանոց էր Շոշ գյուղի բնակչության համար և 1752 թվին հիմնեց այդ բերդը և գյուղի տառերը փոխելով, այն անվանեց Շուշի: Այդ վայրի վերին մասը պատկանում էր ինչպես Գ.Մելիք-Շահնազարին, այնպես էլ Շահնազարյաններին: Այդ վայրը կոչվում է «Մելիք Տյուղ»[1], որը որպես բարեկամ հանգուցյալ Մելիք-Ջումշուդը անվճար նվիրեց Ռուսաստանին:

Այդպես էլ Իբրահիմ ճբռ-խանը, երբ ցանկանում էր ամուսնանալ Բելոքանի խանի դստեր՝ Բիքայի հետ, օրիորդի հայրը պատասխանում է. «Մահմեդական «Շարիաթ» օրենքը մեզ չի թույլատրում աղջիկ ամուսնացնել, առանց ստանալու նրա նյութական ապահովության երաշխիքը»: Քանի որ Իբրահիմ կեղծ խանը Շուշիի ստորին մասից բացի ոչ մի թիզ հող չուներ Ղարաբաղում, այս հանգամանքից ստիպված, 4000 թուման վճարելով գնեց Զանգիշալու գյուղը և 3000 թուման վճարելով գնեց Աղդամը (Ակնա) Ջալալյան Մելիք-Ալլահվերդուց, և գրավ դնելով ամուսնացավ Բիքայի հետ: Ուրեմն՝ Իբրահիմ ճբռ-խանի որդի՝ Մեհտի ճբռ-խանը, կարող է որպես պապական և հայրական սեփականություն ժառանգել Շուշիի ստորին մասը, Զանգիշալու և Աղդամ գյուղերը, առանց դրանց դաշտերին ձեռք տալու, որոնք իրենը չեն:

Սիրելի Մելիք, Դուք շուտ խորհրդակցեք մյուս հարազատ մելիքների հետ այս հարցի շուրջ և աշխատեք, քանի դեռ ռուսներին եք ծառայում, ձեզ վրա գրանցել վանքապատկան հողերը, եկեղեցապատկանը՝ եկեղեցիների վրա, և մելիքապատկանը՝ մելիքների վրա: Կնյազ-Մադաթովը, որ ծնվել և ապրել է Ղարաբաղում, որ շատ լավ գիտի վերը թվարկված ճշմարտությունները, հույս ունեմ, որ արդարությունը չի փոխի անարդարության հետ և իրավունքները՝

[1] Տիզ նշանակում է դաշտակ: Այդ վայրը մինչև հիմա էլ նույն անունով է կոչվում:

կաշառքի և Պարսից շահերից ստոր չի գտնվի, ովքեր հազարավոր տարիներ անձեռնմխելի են պահել այդ եռապատկան հողային հարստությունները և այսօր իրեն (Կնյազին) հանձնել:

Կարիք չկա ասել, որ ժողովուրդը այդ հողերով են ծառայել մելիքությանը, մելիքությունը՝ ժողովրդին, իսկ վանքերը՝ Ազգի համալրմանը: Ողջ լինեք Աստծով: Բեքնազարյանց[1]»:

Սույն թվականին Աբաս-Միրզան գաղտնի նամակագրությամբ սերտ կապ է հաստատում Հյուսիսային Դաղստանի խաների հետ: Նրանք էին՝ Տորկովի Շամխալը, Ղազի-Ղումուխի Սուրխայ-խանը, Ավարիայի Սուլթան-խանը, Ղարան Ղայտայի Ուցմեյն և այլ մուստաֆաներ ու բեկեր: Գաղտնի հավատարմարարը Ռուսաստանի ոխերիմ թշնամի Շեյխ-Ալի-խանն էր, ով Դերբենդից տեղափոխվել էր Պարսկաստան և Հյուսիսային Դաղստան ու ելումուտ էր անում Շամախիի Մուստաֆա-խանի գաղտնի պաշտպանությամբ: Այս խաները Աբաս-Միրզային հայտնում էին, որ գեներալ Երմոլովը մտադիր է արշավել Հյուսիսային Դաղստանի վրա, որ այդ պատճառով ամեն քաղաքում, ավանում, գյուղում, կիրճում և բլրի գագաթներին կառուցված բոլոր անառիկ բերդերը, ամրոցները, բուրգերը, պատնեշներն ու դարաններն ամրացվել են, որ նրանք 10 թնդանոթի և գնդակների խիստ կարիք ունեին: Որ իրենց պապերը՝ Մուհամեդ ս. Մարգարեի աղոթքով Իրան-Խարապում հաղթել էին Նադիր-Շահի նման սարսափելի մարդուն: Աստծով նրանք հաղթելու են մահմեդականների թշնամի ռուսներին: Որ թշնամու մուտքը Դաղստան անհնար է, քանի որ իրենց լեռների դիրքը վտանգավոր է: Կան զարհուրելի կիրճեր, ան-

---

[1] Ականատես և ստուգաբան Բեկնազարյանցի այս նամակը շա՜տ մեծ լույս է սփռում Ղարաբաղի հողային խնդրի վերաբերյալ և շա՜տ անհերքելի փաստեր է պարունակում իր մեջ: Թող թշնամամետ մարդիկ շոշափեն այս նամակի տողերը, ովքեր անճարությունից փաստաթղթեր կեղծելով փորձում են Ղարաբաղի հողերը վերնագրել Շուշիի խաներին և բեկերին:

դնդախոր ձորեր, խիտ անտառներ, պարսպանման լեռներ և զառիվայր ու զառիվեր անցքեր: Որ իրեն համար այդ պարիսպներից ավելի ամուր պարիսպ է Աստծո պաշտպանությունը, և Մարգարե Մուհամեդի անդառնալի աղոթքը:

Աբաս-Միրզայի գաղտնի կարգադրությամբ անմիջապես 7 միջին չափի և 3 փոքր թնդանոթներ, շատ փամփուշտներ, քաջալերող հանդերձներ և գրգռող նամակներ ուղարկվեց Անդրկովկասի խաներին, ովքեր պետք է գաղտնի օգնեին լեզգիներին թե՛ դրամով, և թե՛ զենք ուղարկելով:

ԽԶ.

Միգուցե ընթերցողը մեզ հարցնի, թե ի՞նչ կապ կամ վերաբերմունք ունի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն Հյուսիսային Դաղստանի հետ: Հեղինա՛կ, դու շեղվում ես քո պատմության ճակատագրի ուղղությունից: - Բայց, որովհետև միևնույն հերոսներին Հյուսիսային Դաղստանում նույնպես տեսնելու ենք, քանի որ ինչպես հայ քաջերի հերոսությունների ամբողջացումը սերտ կապ ունի մեր պատմության հետ, այնպես էլ՝ Ռուսաստանի հայտնի ու Պարսկաստանի գաղտնի քաղաքական ձգտումները կապ ունեն միմիանց հետ: Սա է պատճառը, որ մենք չխուսափեցինք պատմագրության պահանջած անրաժեշտ պայմաններից, այլ ջանասեր աշխատասիրությամբ համառոտագրեցինք ամբողջ անհրաժեշտ նյութը, հույս ունենք, որ ընթերցողի համար հետաքրքիր կլինի և ընթերցողը ավելի շատ գոհ կմնա, քան դժգոհ:

1817 թվականի վերջին Աբաս-Միրզան Հյուսիսային Դաղստանի խաներից ստացավ հետևյալ նամակը. «Առանց կրոնական խտրականության, ամեն կողմից խիստ հարձակումներ գործեցինք ռուսամետ ազգերի վրա: Արշավեցինք Կախեթի, Վրաստանի, Նուխիի, Ղուբայի, Հաշտարխանի և

Դերբենդի գավառների վրա, շատ վնասներ պատճառեցինք մարդկանց, անասուններին և ունեցվածքին»:

Աբաս-Միրզայի նախագահությամբ, ռուս դեսպանից թաքուն, մի ժողով հրավիրվեց, որտեղ ներկա էին Գաղիացիների և Օսմանցիների դեսպանները և ավելի վաղ հրավիրվել էին երկու գաղիացի և օսմանցի ռազմագետ զորավարներ: Կարիք չկա ասել, որ այդ ժամանակ Գաղիացիների և Օսմանցիների կառավարությունները ռուսական կառավարության աշխարհակալ ձգտումների թշնամին էին, որից մի քանի տարի առաջ պարտվել էին: Խորհուրդը ռուսներից անուղղակի վրեժ լուծելու համար մտածեց այս ամենը և շտապեց այն իրականացնել:

Ա) Անմիջապես հաղորդել կովկասցիներին, որ դադարեցնեն հարձակումները և իրենց ուժերը կենտրոնացնեն Երմոլովին դիմագրավելու համար:

Բ) Ռուսական զորքը Կովկասում թուլացնելու և նրա աշխարհակալությունը դադարեցնելու նպատակով, պետք է միասնական աջակցությամբ օգնել լեզգիներին:

Գ) Կասկած չհարուցելու նպատակով, կովկասյան ցեղերի հատուկ համազգեստով և փոքրիկ խմբերով, պետք է լրացուցիչ 10 000 զորք և 3 հմուտ զորավարներ գաղտնի ուղարկել:

Դ) Գաղտնի կերպով ուղարկել անրաժեշտ ռազմամթերքը:

Ե) Ուղարկել նաև մի կլորիկ գումար, որով կարողանայինք հասնել մեր նպատակին: Քանի որ առանց գումարի պատերազմ սկսելն անհնար կլիներ»:

1818 թվականի գարնանը Պարսկաստանին զորք ուղարկեց Հյուսիսային Դաղստանը, Գաղդիան ուղարկեց զորավարներ ու ռազմամթերքը, իսկ օսմանցիները՝ գումարը: Ժողովից միաձև նամակներ ուղարկվեցին Տորկովի Շամխալին Ղալի-Ղումուխի Սուրխայ-խանին, Ղարա-Ղայտայի Ուցմեյին, Մասում-բեկին և Հերսինի Աբդուլա-բեկին, ով Դերբենդի փախստական Շեյխ-Ալի-խանի փեսան էր, որ նրանք բոլոր

հոգևորականների ազդեցիկ քարոզներով գրգռեին լեզգի-ներին և կրոնական պատերազմ անվանմամբ պատերազմի հրավիրեին ամբողջ Հյուսիսային Դաղստանը:

Սույն թվականին Ուցմեյնը գրում էր Աբաս-Միրզա-յին. «Երմոլով գեներալը չեչենների ապստամբությունից Կա-խեթը և Վրաստանն ազատելու համար մի քանի հազար ռու-սական զորքով կամաց-կամաց առաջ եկավ և տեղ – տեղ ամրություններ կանգնեցնելով, գրավեց Թերեք և Սունժա գետերի միջև դաշտավայրերը, հետո հարձակվեց բաշլինցի-ների վրա, այն ևս գրավելու նպատակով: Բայց անտառ-ներում թաքնված ակուշինցիները հանկարծակի հարձակու-մով մեծ ջարդ տվեցին ռուսական զորքին և մնացածին էլ կոտորածով հետ մղեցին: Այս հաղթանակը ամբողջ Կովկա-սում մի անբացատրելի ուրախություն առաջացրեց: Այդ օ-րը տոն դարձավ: Ուրախացան ժողովուրդը, պատերազմից վառված ծերունիները և պատանիները խառնվեցին մեր զոր-քի հետ և միաբերան երդվեցին ջնջել սուրբ Մարգարեի կրոնի թշնամիներին և մեր հայրենիքը ազատ պահել եր-կիրը կործանող թշնամիներից, այս երկրի վրա նրանց պիղծ ոտք դնելուց:

«Տարկովի Շամխալը առերես հպատակություն խոս-տացավ Սար կիասոններին, որպեսզի հետազոտելով իմանար նրանց գործերն ու ձեռնարկությունները և նախօրոք գաղտ-նի հայտնի Ղազի-Ղումուխի Սուրխայ-խանին, ում միայն ընտրել ենք, որպես մեր զորքերի հրամանատար: Սուրխայ-խանը քաջության և վստահության տեսանկյունից աննման է, քանի որ իր շուրջը հավաքվեցին ակուշինացիք, ովքեր հայտնի էին իրենց քաջահաղթ համբավով:

«Անվտանգ մեզ հասան ձեր ուղարկած 10 թնդանոթ-ները, գնդակները, 10 000 զորքը, օսմանցիների ուղարկած կես միլիոն մանեթը, Գաղիացիների զորավարներն ու զեն-քերը և 100 000 մանեթը, Մուստաֆա-խանի, Շուշիի Մեհ-տի-խանի, Նուխիի Սալիմ-խանի ուղարկած փողերը, ձիերը և մարդիկ, Ղազան-Շիհարի ուղարկած թոշակը և թաթար-

ների օգնությունը, շնորհակալ ենք բոլոր նրանցից, ովքեր ձեռք պարզեցին մեզ մեր ամենադժվարին իրավիճակում:

«Ասում են, որ Երմոլովը հասկանալով, որ անկարող է նվաճել Հյուսիսային Դաղստանը, ռուսական թագավորին առաջարկել է այդ գործը հանձնել Մադաթովին, որ իբր նա հմուտ ռազմագետ է, փորձված տոկուն կամքով ու ասիական լեզվագիտությամբ:

Այսպիսով, Ձեզ կհաղորդեմ այս հետևությունը: Ուցմեյ»:

Աբաս-Միրզան այս հաղթանակի լուրը Դաղիացիների և Օսմանցիների դեսպաններին հաղորդելուց անմիջապես հետո, մի նամակով շնորհավորեց Սուրխայ-խանի ընտրությունը և հաղթանակն ու Կնյազ-Մադաթովի մասին մանրամասն տեղեկություններ տվեց, պատվիրեց դաղտնի դարանակալել բոլոր մուտքերում և արգելել Մադաթովի առաջխաղացումը, որը կարող էր շատ վտանգավոր հետևանքներ ունենալ:

1819 թվին Ջրաբերդից գրում էր հորս. «Սբ.Էջմիածնի ազդեցությամբ Աղվանքի Սարգիս Կաթողիկոսը դարձավ Մետրոպոլիտ: Սարգիս Ջալալյան կաթողիկոսի հետ կմեռնի նաև Աղվանքի կաթողիկոսությունը, որն արդեն 1469 տարեկան էր: Սարգիս Մետրոպոլիտը ծերունի լինելով, որոշում է իր եղբայր՝ Դանիել-բեկի որդի Բաղդասար Վարդապետին ուղարկել Էջմիածին և իր կենդանության օրոք եպիսկոպոսի աստիճան շնորհել, որպեսզի իր հաջորդը նշանակի Գանձասարում: Այդ ընտրությունները տեղի ունեցան բոլոր հարազատ մելիքների և Ղարաբաղի հայության միասնական կամքով: Այս երկու հոգևորների քրտնաջան աշխատանքի շնորհիվ, բավականին ծաղկեցին Գանձասար, Խոթ, Սբ.Հակոբ, Եղիշ-Առաքել, Ամարաս, Ղոնդիկ (Ղևոնդյան վանք) և Պետկեսբերք վանքերը, իրենց միաբաններով և ուսումնարաններով:

Ղարաբաղի 4 հարազատ մելիքները նույնն են: Միայն Աստծո կամքով փոխվել են Մելիք-Աբովյան Մուսայել-բեկը, և Գյուլիստանում այժմ իշխում էր Մելիք-Ֆրեյդոնը Մելիք-

Հովսեփ Բ, ով չափազանց ազնիվ և ուժեղ մարդ էր: Դիզակի իշխան Մելիք-Ղահրամանը մի քիչ նեղվում էր մահմեդականացած Բաղր-բեկի Ասլան-որդուց, ով ճըռ-խանի գաղտնի թելադրանքով, ոչ միայն փորձում է մելիքությունն իրենով անել, այլև ցանկանում է սպանել այդ հարազատ մելիքին: Նրա բազմամյա բացակայության պատճառով, կարող է մոռացած լինեք, այդ իսկ պատճառով ճիշտ եմ համարում մի քանի բառով ծանոթացնել Ձեզ Բաղր-բեկի հետ: Բաղր-բեկը Մելիք-Ավանի որդին էր, ով Մելիք-Եսայու մահից հետո, իր երկու որդիների՝ Ասլանի և Վահանի հետ, Իբրահիմ ճըռ- խանի կողմից բանտարկվեց Շուշիի բերդում: Եվ ճըռ-խանի ենթարկած տանջանքներից ստիպված ընդունեց մահմեդականություն, որից հետո միայն ազատվեց բանտից: Բայց հետո սպանվեց նույն խանի կողմից՝ մնալով հավատարիմ քրիստոնյա: Վահանը նույնպես արհամարհելով մահմեդականությունը, հայ ապրեց և հայ մահացավ: Բայց Ասլանը մնաց թրքության մեջ, ով այժմ մտածում է այդպիսի չարիք գործել:

Երբ Կնյազ-Մադաթովը Հյուսիսային Դաղստանը գրավելու համար ռուսական կառավարության կողմից հրամանատար նշանակվեց, նա իր ազդեցիկ հորդորներով համախմբեց Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքների հայկական հեծելազորը, որտեղ ներկա էին նաև հինգ հարազատ մելիքները: Կնյազը մեծ եռանդով արտասանեց այս խոսքերը. «Ղարաբաղի քաջ, հայ տղամարդիկ, իմ սիրելի հայրենակիցներ, Ձեր քաջագործություններն ամենուրեք հիշատակվում են Ղարաբաղ անվան հետ միասին, որի մի զավակն էլ ես եմ: Բայց ես շատ լավ տեսնում եմ, որ դուք վհատվել և սառել եք Ռուսաստանի ամենաողորմած Կայսրից, իբր թե նա ձեր մատուցած ծառայությունները չի գնահատել և չի վարձատրել: Մեղավորությունը ոչ թե ամենաողորմած Կայսրինն է, այլ ինձնից առաջ եկած վրացի և ռուս պաշտոնյաները, ովքեր նախանձից դրդված չեն հաղորդել Անդրկովկասի պա-

տերազմներում Ռուսաստանին մատուցած Ձեր ամենահա-վատարիմ, զոհողություններով և քաջություններով լի ծառա-յությունների մասին: Այժմ ես պատվավոր խոստում եմ տալիս հաղորդել ոչ միայն այդ մատուցած ծառայություն-ների մասին, այլև այն ծառայությունների մասին, որոնք դեռ պիտի լինեն իմ Դաղստանից վերադառնալու ժամանակ: Այո՛, խոսք եմ տալիս մանրամասն հաղորդել և անուն առ անուն պատմել ինչպես մելիքների և քաջերի մասին, այն-պես էլ ժողովրդի աջակցության մասին: Միանգամայն վերա-կանգնել Ղարաբաղի հարազատ մելիքություններն իր նախկին իրավունքներով:

Այժմ Ռուսաստանի ամենաողորմած կայսրը, իմ բե-բանով ձեզ Դաղստան է հրավիրում, նվաճելու չեչեններին և լեզգիներին, ովքեր դեմ են Ռուսաստանի կառավարությա-նը: Դե՛, պատրաստե՛ք Ձեր զենքերն ու ձիերը, որ միա-սին գնանք հաղթենք և շուտով վերադառնանք»:

Կնյազի հանդիսավոր խոստման վրա հայերը չէին կարող կասկածել, այդ իսկ պատճառով մեծ սիրով հետևե-ցին նրան, իրենց զենքով ու ձիերով:

Կնյազը իր մեկնելուց առաջ, Ղարախան Յուզբաշուն Ղարաբաղի դաշտային մասի վրա հսկիչ նշանակեց, Արա-գահասին՝ սահմանագլխին, իսկ Շեյթանին՝ ճրռ-խանի և Ջափար-Ղուլի բեկի վրա կարգեց: Ամբողջ հայկական զորքը բաժանեց 2 գնդի: Առաջին գնդի գնդապետ նշանակվեց Քյանդխուդա-Խաչատուրը, իսկ երկրորդինը՝ Նյառաթյովը:

Մելիքների հավատարիմ և երկար տարիներ որպես սուրհանդակ աշխատած Կաքև Ջաքին մահացավ և մեծ հան-դիսավորությամբ հողին հանձնվեց: Ողջ լինեք Աստծով: Մե-լիք – Վանի Աթաբեկյան»:

ԽԷ.

Սույն թվականին Սուրխայ խանը գրում է. «...Գեներալ Երմոլովը, չկարողանալով նվաճել Դաղստանը, այդ գործը հանձնեց Կնյազ Մադաթովին: Այս սարսափելի մարդը, չնայած մեր զգուշավորությանը, մի անսպասելի կիրճով հանկարծ մտավ Դաղստան: Զցանկանալով, ես ստիպված գրավոր հպատակություն հայտնեցի Մադաթովին՝ ժամանակ շահելու նկրտումներով: Բայց պատերազմի համար գաղտնի գործում եմ բոլոր խաների հետ: Մադաթովի լրտեսներից առգրավվեցին իմ գաղտնի նամակագրությունները Շուշիի, Շամախիի և Նուխիի խաների հետ: Մադաթովի մուտքն ահավոր սարսափ տարածեց անվախ դաղստանցիների սրտերում և մտքերում:

Խոշնի գյուղի մոտ մի սարսափելի պատերազմ տեղի ունեցավ: Խոշնին գրավվեց թշնամու կողմից, վիրավորվեց Խոշնիցի Ալահյար բեկը և Մադաթովի հրամանով կրակի տրվեցին այդ խանի տունն ու այգիները, մեր կողմից վիրավորվեց նաև 100 զինվոր, այդքան էլ թշնամու կողմից: Բայց Մադաթովի այս հաղթանակն ապահովվել էին Ղարաբաղի հայ հեծելազորը, ովքեր մինչև ռուսական զորքի հաղթանակն արդեն հաղթել էին: Այս պատճառով, ինչպես Մադաթովի անվան հռչակն էր փայլում, անպես էլ Ղարաբաղի տղամարդկանց հաղթանակն էր տարածվել ամբողջ հասարակության վրա: Դաղստանի 6 գավառների Ղատիները[1] և գյուղապետերը ակամա դիմեցին Մադաթովին և մինչև անգամ առանց պատերազմի հավատարմություն խոստացան ռուսական կառավարությանը: Մադաթովը այդ 6 գավառների վրա գլխավոր կառավարիչ նշանակեց Ղատու

---

[1] Սյունիների նկատմամբ ղատի կամ գատի նշանակում է հոգևոր գլուխ, որպես վարդապետի աստիճան:

աստիճանով Աբդուլ Ռազախ բեկին, ով Տորկով Շամխալի փեսան է: Մադաթովը որքան ռազմագետ և ահարկու էր, այնքան էլ հմուտ էր լեռնական ժողովրդի սրտերը գրավելու և խաբելու գործում: Այդ իսկ պատճառով նրան ոչ միայն մեծ սիրով ընդունեցին իրեն դիմած մարդիկ, այլև մեծա-մեծ նվերներով պատվեցին: Նա պատվիրեց ժողովրդին մահմեդական կրոնը և ծիսակատարությունները անխախտ պահեն և ազատորեն պաշտեն իրենց պապերի պաշտած աստծուն և դավանանքը:

Մադաթովը Ղարաբաղցի քաջ տղամարդկանց շնորհիվ գրավեց Կուրի գավառը, Սուրի – Թերեքեմա գյուղը իր ամ-բողջ շրջակայքով: Պատերազմի ժամանակ վիրավորվեց Ի-պահ-բեկը և Ղարաբաղցիների կողմից գերի վերցվեցին նաև Պաշլու քաղաք փախչող ժողովրդին, զորքին և Իպահ-բե-կի և մյուս բեկերի 24 թիկնապահներին 3000 անասուններ-ով և 500 սայլերով: Վիրավորվեցին բազմաթիվ լեզգիներ: Մեր կողմից սպանվեց 250 մարդ և 50 զինվոր ռուսական կողմից: Մադաթովը ազատեց բոլոր գերիներին բացի սպա-սավորներից և անասուններից: Սպասավորներին ուղարկեց Դերբենդի բերդի շինության մշակությամբ զբաղվելու, իսկ անասունները թողեց որպես կերակուր իր զորքի համար: Շատ չանցած Մադաթովի կողմից գրավվեց նաև Պաշլու բերդը և Պաշլու գավառը: Մոռացա նշել նաև, որ գերիների հետ չազատվեց նաև Դերբենդի փախստական Շեյխ-Ալի-խանի փե-սա, Հերսենում վիրավորված Աբդուլահ-բեկը, ով համարվում էր հայտնի խռովարար:

Այս բոլոր տխուր անցքերը հայտնելուց հետո, հայտ-նում եմ նաև, որ ռուսահպատակ բոլոր ղատիները, բեկե-րը և Դաղստանի բոլոր խաները և բեկերը, թշնամու դեմ գաղտնի միաբանվել էին, ճուլվել, մի սիրտ, մի հոգի ու մի մարմին էին դառել: Գաղտնի մեծ պատրաստություն ենք տեսնում թշնամուն ուխտով ու երդումով մեր սուրը հողից դուրս չպրտելու համար: Մադաթովին տված իմ գլ-խավոր հպատակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժամանակ

կորզելու միջոց: Նույնիսկ գրավված տարածքների ժողովուրդը, զինավառված մեր հոգևորների գաղտնի և ազդեցիկ քարոզ-ներով, պատրաստ սպասում են մեր հրամանին: Տորկոմի Շամխալը, Ուցմեյնը և մինչև անգամ Կուրի Ասլան-խանը և Դերբենդի Շեյխ-Ալի-խանը, որ այժմ Դաղստանում է, գաղտնի խորհրդակցում են ինձ հետ: Մեր ռազմամթերքը բավական է: Այժմ ոչ մի բանի կարիք չենք զգում, բա-ցի ժողովրդի աղոթքներից:

Ամեն ինչ պատրաստ է, և շուտով կսկսվի ապստամ-բությունը, որից հետո էլ սարսափելի պատերազմը»:

Կարդալուց հետո Աբաս-Միրզան իր մոտ կանչեց հորս և տխուր ձայնով ասաց. «Իբրահիմ աղա, Ղարաբաղի հա-յությունը վնասից բացի, ինչ օգուտ է տեսել ռուսներից, որ չբավարարվեց Անդրկովկասում ռուսական բոլոր արշա-վանքներին աջակցելով: Երևելի քաջություններով վազեցին մինչև Դաղստան և այն գրավելով՝ հանձնեցին ռուսներին: Եթե մեր ոչ քաղաքագետ պապերը՝ Հազկերտ, Լենկ – Թե-մուր, Զինգիզ-խան, Շահ-Աբասներ սպանեցին հայկական թագավորությունը և Աղվանքի տերությունը, բայց Հայաս-տանում կենդանի թողեցին նախարարությունը, մարզպա-նությունը, զորքը և զորապետությունը, այդպես էլ Աղվան-քում՝ նախարարությունը, իշխանությունը, մելիքությունը, զորապետությունը, զինվորականությունը, հողը ու անկա-խությունը: Թագավորությունը մելիքության հետ 400 տա-րի ապրել է Պարսկաստանի հովանավորության տակ: Սա-կայն ցավոք սրտի ստիպված ենք ասել, որ ոչ միայն շու-տով կմահանա այդ մելիքությունն իր բոլոր իրավունքնե-րով, այլև մելիքապատական և վանքապատական հողերը, ո-րոնք մեր շահ պապերի հրամաններով հաստատվել և հա-տուկ խնամքով այդտեղ պահպանվել են որպես ավանդ: Ժամանակը հղի է և շուտով կլինի այն, ինչ ասեցինք: Ա-ռածն ասում է. «Հայի վերջին խելքը»: Ինչքա՜ն կչբերա-նան հայերը, բայց անօգուտ: Ուրիշ անգամ էլ ասել ենք. «Հայերը ուրիշների համար ամենահավատարիմն են, իսկ ի-

րենց համար՝ ամենաանհավատարիմը: Այդ նույնը բազմիցս անգամ Դուք էլ եք կրկնել»:

- «Սիրելի Միրզա: Դուք շատ լավ գիտեք պատմությունները,- պատասխանեց հայրս:- Ներեցեք ինձ՝ Ձեր առաջ ճշմարտությունն ասելու համար: Պարսկաստանը Հայաստանի և Աղվանքի տերությունների կենդանությամբ էր ուժեղ, հուժկու և հաղթող: Բայց երբ Պարսկաստանը սպանեց Հայաստանի և Աղվանքի բազմադարյա թագավորությունները, ինքը նույնպես զգաց իր սխալը: Հայաստանի ուժի թուլացմամբ թուլացավ նաև Պարսկաստանի ուժը: Եթե հույները, թաթարները, արաբները, օսմանցիները և ռուսները հարձակվեցին Հայաստանի վրա և բազում վնասներ պատճառելուց հետո, սեղմեցին պարսկական ընդարձակ պետության սահմանները, ոչ թե հայերն են մեղավոր, որ անթիվ քաջ նահատակներ զոհեցին, տվեցին անհամար գերիներ և աշխարհի չորս կողմը ցրեցին բազմաթիվ զավակներ, այլ պարսկական թագավորների և շահերի անհեռատես քաղաքականությունը: Պետությունը պետությամբ է կենդանի, թագավորությունը՝ թագավորությամբ, իշխանությունը՝ իշխանությամբ, երկիրը՝ երկրով, քաղաքը՝ քաղաքով, գավառը՝ գավառով, գյուղը՝ գյուղով, հարևանը՝ հարևանով, իսկ տունը՝ տնով:

Եթե պարսկական շահերին Ջառչի+Փանահ և բանտարկյալ Իբրահիմ-խան կանվանեն՝ Շուշին կլինի գայթակղության քար, և հայ մելիքները մեղավոր չեն ռուսներին աջակցելով: Անդրկովկասը կորցնելու պատճառն այս ճըռ-խանների գոյությունն է, իսկ այսքան պատերազմների շարժառիթը՝ Շուշին:

ԽԸ.

1820 թվականին Ուսմեյնը գրում է Աբաս-Միրզային. «Այս անգամ Ձեզ մի անմխիթար սգի մասին եմ ուզում

տեղեկացնել, որին ենթարկվեց ամբողջ Հյուսիսային Դաղստանը: Մադաթովը 14 թնդանոթներով և 10 000 զորքով, որից 4000-ը հայեր էին Ղարաբաղից, Շաքիից և Շամախիից, 2000-ն ավշար և թուրք, իսկ մնացածը՝ ռուս և ղազախ: Հայկական զորագնդերի գնդապետներն էին Նյառաթյովը և Բարխուդարյանցը, թուրքերինը՝ Կուրի Ասլան-խանը և ավշարներինը՝ նույն խանի եղբայր, մայոր-Հասան-աղան, իսկ ամբողջ զորքի հրամանատարը Մադաթովն էր:

Հիանալի ուժի և սրտի տեր էին Ղարաբաղի հայերը, քանի որ նրանք էին տեղից տեղ փոխադրում ռուսական թնդանոթները և ձեռքով հեռացնում կիրճերից, մացառոտ, լեռնոտ և անհուսալի տեղերից, և բոլոր պատերազմներում անվախորեն հարձակվում էին և հաղթանակում:

Մադաթովը հետզհետե գրավեց Տապասարանի, Պաշլուի, Ակուշինայի, Զիրախի, Վահենբուրգի, Խոզրեկի, Ղազի–Ղամուխի ամրությունները, գավառներն ու նահանգները, որոնց մեջ առհասարակ ամրացած էին երդումնապահ խաները, բեկերն ու զատիները: Մադաթովի ռազմագիտական հանճարը կայանում է գիշերը բանակը տեղից տեղ տեղափոխելու և անակնկալ հարձակվելու մեջ:

Սուրխայ-խանը Խոզրեկի ամրոցներում հնարավորինս չափ տղամարդկայնորեն պատերազմեց և կարծես թե ուզում էր հաղթել, երբ այդ րոպեին Մադաթովը իր զորքի առաջ անցավ և քաջալերելով հարձակվեց, հափշտակեց հաղթանակը և գրավեց Խոզրեկի ամրությունը: Այս սարսափելի պատերազմում թշնամու կողմից մահացավ 200 զինվոր, 100 թուրք և 55 հայ: Շան նման սատկեց մայոր-Հասան-աղան, Մուհամեդ Սբ. մարգարեի լուսավոր հավատքը փոխել էր ժամանակավոր տիտղոսներով: Վիրավորվեցին Վան-Հալեն, Սաչիանով գնդապետը, 100 զինվոր, 10 ռուս աստիճանավորներ, 150 թուրք և 5 հայ: Իսկ մեր կողմից մահացան 1495 զինվոր. Ղազի Ղումախցու 12 երևելի խանազունները և 100 սոֆտաներ ընթերցողներ (իբր գրագիր) և մի քանի բեկեր: Վիրավորվեցին 2008 մարդ և գերի ընկան 603

մարդ, 11 դրոշակ, 2150 հրացան, Սուրխայ-խանի դրոշակը, վրանը և ռազմամթերքը:

Ամենացավալին այն է, որ Խոզրեկից մահապուրծ փախչող Սուրխայ-խանը՝ այդ հայրենասեր քաջը, ցանկանում էր Ղազի-Ղումուխ հասնել և այնտեղ ամրանալով նորից պատերազմել թշնամու հետ: Բայց քաղաքի դռները նրա համար չբացեցին, այլ քաղաքացիները պարիսպների վրայից պատասխանեցին. «Քաղաքի ժողովուրդս այլևս քեզ խան չենք ճանաչում, այդ իսկ պատճառով այս բերդի դռները փակ են քեզ համար և միշտ էլ փակ կմնան»: Եվ ահա թշնամուց հալածված հայրենասեր Սուրխայ-խանն իր հարազատներից նույնպես հալածվեց և այժմ թափառում էր անմարդաբնակ լեռներում:

Երկու օրից Ղազի-Ղումուխ բերդին մոտեցավ Մադաթովն իր բանակով, որին աղ ու հացով դիմավորեցին բերդի և նրա 8 գավառների հոգևոր և աշխարհիկ առաջնորդները և հանձնեցին բերդի բանալիները: Ղազի-Ղումուխի ժողովուրդը Սուրխայ-խանի փոխարեն խան ընտրեց Ասլանբեկին, իսկ Մադաթովը հանուն Կայսեր վավերացրեց այդ ընտրությունը և 24 անգամ թնդանոթ արձակեց:

Թե՛ Ղազի-Ղումուխում և թե՛ մյուս կռիվներում Ռուսաստանի ձեռքն ընկան Ձեր ուղարկած թնդանոթները, այն երկու հայկական թնդանոթները, որոնք Նադիր-Շահից Իրան-Խապարում ուղարկել էին մեր պապերը և շատ ռազմամթերք: Բայց ազատվեցին բոլոր գերիները և բոլոր վիրավորներին օգնություն ցուցաբերվեց:

Ձեր ուղարկած զորքից 1519-ը մահացել են, 628 զինվոր վիրավորվել, իսկ հետո մահացել են, իսկ մնացած 7853 զորքը և Գաղիացի զինվորները վերադարձել են Ձեզ մոտ: Մեհտի-խանի և Մուստաֆա-խանի Սուրխային ուղարկված նամակները կրկին անգամ առգրավվեցին Մադաթովի կողմից:

Ռուսաստանի Կայսերը հավատարիմ մնալու պայմանով, Մադաթովի ներկայությամբ Սուրբ Ղուրանի վրա

երդվեցին նոր խանը և Ղազի-Ղումախի նահանգի և քաղաքի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները: Հետո Մադաթովը նոր գրավված տեղում ռուս քաղաքապահ զորք թողնելով՝ մեկնեց Ղարաբաղ»:

Ստորագրությունն էր՝ «Վշտալի Ուցմեյ»:

Իսկ Դերբենդի փախստական Շեյխ-Ալի-խանն այդ ամենն ասելուց հետո ավելացնում է, որ ինքը ճիշտ է համարում մնալ Դաղստանում և Սուրխայ-խանի հետ գաղտնի գործել, որ Աբաս-Միրզային ուղարկած իր երեք նամակները առգրավվել են Մադաթովի կողմից, իր դեսպանները՝ Մադաթովի մարդկանցից, և նրանք հայտնել էին իր, Մուստաֆա-խանի միջոցով, Աբաս-Միրզայի հետ ունեցած գաղտնի հարաբերության մասին և որ ինքն ու Սուրխայ-խանն ամեն կերպ աշխատում են Պարսկաստանից դուրս գալ:

Սույն թվականին Շամախիի Մուստաֆա խանը մտավ Թեհրան և պատմեց Աբաս-Միրզային հետևյալը. «Ինչպես Ձեր, այնպես էլ Սալիմ-խանի և Մեհտի-խանի նամակները իմ միջոցով էին Դաղստան հասնում, այդպես էլ իմ միջոցով էին գալիս պատասխանները: Կնյազ-Մադաթովը բազմաթիվ գաղտնի լրտեսներ էր դրել Շամախիում, Դաղստանում և դրանց միջանցիկ ճանապարհներին: Այդ լրտեսների կողմից առգրավվեցին Ձեր մի նամակը, իմ երեք, Մեհտի-խանի երկու և Սալիմ-խանի մի նամակը: Այս ամենն իմանալուց հետո ես սաստիկ կասկածում էի, որ կկանավորվեմ և որպես քաղաքական հանցագործ Սիբիր կաքսորվեմ: Եվ ահա այդ ժամանակ պարեկը ինձ հայտնեց, որ ես գեներալ-Երմոլովի կողմից հրավիրվել եմ մի կարևոր գործի համար: Ժամանակ շահելու խորամանկությամբ սիրով ընդունեցի այդ հրավերը և խոստացա շուտով գնալ: Մանավանդ, երբ մտածեցի, որ Մադաթովը շուտով կվերադառնա: Գաղտնի փախա այստեղ և ամեն ինչից ազատվելով՝ հույս դրեցի Ձեզ վրա...»:

Աբաս-Միրզան մեծ սիրով ընդունեց հյուրին և մեծարելով պատվեց նրան: Բայց Դաղստանի տխուր խաներին

միսիթարելու և սփոփելու համար Ուցմեյին գրեց հետևյալ նամակը, երդումնապահներին նույնպես հաղորդելու պատվերով. «...Ձեր նամակը ստացել ենք: Դաղստանի վիշտը ժամանակավոր կլինի, և ոչ թե երկարատև: Մենք պատրաստվում ենք մի սարսափելի արշավանք գործել Ղարաբաղի, Գանձակի և Թիֆլիսի վրա, բայց սպասում ենք մի պատեհ ժամանակի: Այս արշավանքի ժամանակ Ձեզ համար շատ հեշտ կլինի կրկին ապստամբել և տեղի մի բուռ զինվորներին կոտորելով, կրկին ձեռք բերել Ձեր պապենական անկախությունը:

Երդումնապահ խաները, բեկերը և հոգևորականները արեցին այն, ինչ որ կարող էին անել: Եթե այդ անգամ չհաջողվի հաղթել թշնամուն, հոգ չէ, քանզի կհաջողվի հաղթանակը երկրորդ և երրորդ անգամ: Ամենափորձառու մասնագետները նույնպես շատ անգամներ հանդիպում են այդ իրավիճակին: Վհատությունը կոտրում է մինչև անգամ ամենաուժեղ հայրենասերի թևերը: Վհատությունը տկարների զենքն է, իսկ արիությունը՝ քաջերի»:

ԽԹ.

1821 թվին Նյառաթյովը Խնածախից գրում է հրս. «...Մադաթով-Գեներալը Շամախիում լսելով, որ կովկասցիները Դաղստանի բոլոր մուտքերում դարանակալել են, որ իր ընթացքը կասեցնեն, պատվիրել էր գեներալ-Երմոլովին արագ հասնել Դաղստան, նա հիմնական ճանապարհը թողած, իր ընթացքը Շամախիից ուղղեց դեպի սարը, անտառների և ձորերի միջով, որ նախապես ստուգված էր: Կարելի է ասել, որ մեզնից բացի, այսինքն՝ Մադաթովի բանակից բացի ոչ ոք չէր գնացել այդ տեղով: Անցանք անտառներով, ժայռերով, խիստ զառիվայր ու զառիվեր տեղերով, սեպանման ժայռերի միջով, անդնդախոր ձորերի, պատի նման նեղուցներով, նեղ-նեղ կիրճերով և հորդառատ գետերով: Երբ հասանք

ձյունապատ լեռան գագաթը, զորքի առաջ եկավ մի խոր անդունդ, որի լայնությունը մոտավորապես 20 կանգուն էր, իսկ խորությունը՝ անչափ: Կայծակ-Վանին, Տեով-Գասպարը, Փիլ-Առուշանը, Զարպազանը և Ասրի Բելուլյանը 5 հինավուրց կաղնու ծառեր կտրեցին, շարեցին անդնդի վրա և կամուրջ կառուցեցին: Այդ կամրջով սկզբում անցավ Մադաթովը, իսկ հետո՝ ամբողջ զորքը:

Մի քանի օր հետո վերջապես հասանք Դաղստան, որ դարեր շարունակ անմատչելի էր մնացել Ասիական և Եվրոպական աշխարհակալ պետությունների համար:

Ճրո-խանի երկու ամենավտանգավոր նամակները վերցրել են, այժմ Կնյազ-Մադաթովի մոտ են: Տեսնենք, թե կնյազը ինչպես կվարվի Ճրո-խանի հետ, այս հայտնի քաղաքական հանցագործության մասին իմանալուց հետո:

Ջալալյան Բաղդասար վարդապետը Էջմիածնից վերադարձավ եպիսկոպոսյան աստիճանով, և հիմա վարում է Սարգիս Մետրոպոլիտի փոխնորդի պաշտոնը: Բոլոր քաջերը ողջառողջ վերադարձան Դաղստանից: Արագահասը, Քյորօղլին և Ղարախան-Յուզբաշին շատ զգուշությամբ էին կատարել իրենց գործը, դրա համար Մադաթովից նվեր ստացան Դաղստանից բերված մեկական ընտիր ու հին սրեր:

Այսօր բոլոր քաջերը ներկայացան Մադաթովին, խնդրեցին պահել խոստումը և տեղեկացնել Կայսերը հայերի մատուցած ծառայության մասին: Նա հայտնեց, որ արդեն սևագրությունները պատրաստել է և շուտով մաքուրն ուղարկելու է Գեներալ-Երմոլովին և խնդրելու շուտ հասցնել ամենաողորմած Կայսերը:

Հարազատ մելիքների և կաթողիկոսների հավատարմատար Շեյթան Թյունին, որ շատ օգուտ էր տվել Ղարաբաղին, այսօր մահացավ: Նրա հիշատակը Աստծո օրհնությամբ լինի:

Մեհտի Ճրո-խանի բոլոր դավաճանություններն ի հայտ եկան և գաղտնի արված վատությունները թե՛ ռուսների դեմ, և թե՛ Ղարաբաղի հարազատ մելիքների և վան-

քապատկան կալվածքների դեմ, հայտնի դարձան հայ և ռուս պաշտոնյաներին: Ճըռ-խանը Սիբիր աքսորվելուց ա-զատվելու միակ միջոցը Պարսկաստան փախչելու մեջ է տեսնում: Ողջ լինեք Աստծով:

Ծ.

1822 թվականին Երևանից Մեհտի-Ղուլի Ճըռ-խանը Աբաս-Միրզային գրում է այս երկար նամակը, որը ճիշտ համարվեց ամբողջությամբ ընդօրինակել այստեղ:

«...Ըստ Ձեր բարձր հրամանի պետք է Ղարաբաղի հողերը գրանցել իմ խանության վրա: Բայց այս վտանգավոր և դժվար գործը գլուխ բերելու համար կարևոր է հավաքա-կան ուժը և ընկերությունը: Այս պատճառով ես մի գաղտնի խորհուրդ կազմեցի, որտեղ ներկա էին իմ գաղտնապահ խոր-հրդական Ջափար-Ղուլի-աղան, հորս գրագիր Միրզա-Ատի-Գյո-զալը, իմ գրագիր Միրզա-Ջամալը, կապիտան Առստամ-բեկը և Խանլար-աղան: Խորհուրդը եկավ այս եզրակացությանը. «Քանի դեռ հայկական մելիքությունը թուլացել է Մելիք-Ա-բովի և Մելիք-Ջումշուդի մահվամբ, քանի մահացել է չար Շեյթան-Թյունին, որի պատճառով ոչ մի գաղտնիք չէր մնում, քանի դեռ ռուսական կառավարության կողմից Ղա-րաբաղի հողային և ժողովրդական խնդիրներին ուշադրու-թյուն չէր դարձվել և քանի դեռ Աղվանքի կաթողիկոսու-թյունն ուժասպառ վիճակում է, եպիսկոպոսություն խոնար-հելով շատ հեշտ կլինի հափշտակել ոչ միայն Ղարաբաղի մե-լիքապատկան և վանքապատկան հողերը, այլև հայ և մահմե-դական ժողովրդին, ովքեր պատկանում են հարազատ մելի-քությանը:

Ա) Ղարաբաղի հողը և ժողովուրդն իր կեղծ տարածք-ներով մի քանի հոգու միջև է բաժանվելու: Ովքեր ապա-գայում թև և թիկունք կլինեն խանության զորությունը պահպանելու համար:

Բ) Այդ կալվածաթղթերը վավերացվելու են Իբրահիմ և Մեհտի-Ղուլի խաների կնիքներով և տարածքները ղեկավարող անձանց տրվելու էր «Աղա» կամ «Բեկ» տիտղոսները:

Գ) Տարածքները գրվելու են հին թղթերի վրա, իսկ թվականները հարմարեցվելու են Իբրահիմ խանի կենդանության տարեթվերին: Որպեսզի ռուս պաշտոնյաները չհասկանան, որ այս ամենը կեղծ է: Նույնն էլ պետք է սարքենք Մեհտի-Ղուլի խանի տարեթվերով:

Դ) Եթե այս գաղտնիքը հայտնի դառնա, մենք կշահենք դատը, մենք ի սկզբանե պայմանով անխախտ ենք եղել այստեղ: Այս որոշումները հարմար եղան ինձ և խորհրդականների համար, քանի որ դրանով ոչ միայն հողերից զրկում ու պատժում էին հայկական վանքերն ու մելիքներին, այլև՝ ես ու իմ հավատարիմները տիրանում էինք համարյա թե ամբողջ Ղարաբաղին, մինչդեռ առաջ պապենական և հայրական ոչինչ չունեինք:

Խորհուրդը հորս կնիքով, կեղծ թղթերով, հողերի և գյուղերի ընտիր մասերը գրանցեց Ջափար-Ղուլի-աղայի, Միրզա-Ատի-Գյոզալի, կապիտան Առստամ-բեկի, Միրզա-Ջամալի և Խանլար-աղայի վրա, իսկ մնացած մասերը հաստատեց հորս վրա և իմ հավատարիմ նազիրների, փեսանների, ղալանչիների, քույրերի, ազգականների, պարտիզպանների, ձիապանների, պատշարների և այլոց վրա և պատվիրեց այսուհետ մեկ առ մեկ անվանել «Աղա» և «Բեկ»:

Շատ չանցած գաղտնիքներն սկսեցին քիչ–քիչ հայտնի դառնալ: Մելիքները և Բաղդասար խալիֆը սաստիկ բողոքեցին Գեներալ-Երմոլովին և Կնյազ-Մադաթովին: Այս հր-

---

[1] «Պատուելի՛ Պօլկովնիկ Խանլար-աղա, զկնի բազում ողջունի յայտ լիցի քեզ զի զՋրաղացաքարի հանքսն Առաջաձորոյ յանձնեցաք Բաղդասար խալիփային, զի իշխեսցէ դմա. վասն որոյ ի հասանել գրոյց, ինչ ո՛չ ունիջիք ընդ հանքսդ, այլ թողջիք զայն խալիփային Բաղդասարայ, զի ստանայցէ զարդիւնս դոցա ի ձեռն գործավարաց իւրոց, ևն.:
1255 Տաճկակաց թուականին:
Մեյտի Ղուլի խան:
(Թարգմանված է Շուշիի առաջնորդարանում եղած բնագրից):

դեհի առաջն առնելու համար արագ իմ մոտ հրավիրեցի Բաղդասար խալիֆային և մի թալղայի[1], նրան հակառակ Խանլար-աղայի տված ճրռ-թալղային՝ ջրաղացքարի հանքը կրկին Գանձասարի սեփականություն դարձնելու պայմանով: Վերջին թալղայով ես տիրանում էի Ջրաղացքարի հանքին, բայց միամիտ խալիֆան չնկատեց այդ կետը:

Երմոլովի հրավերով գնացի Թիֆլիս, ով Մադաթովի ներկայությամբ ինձ հայտնեց, որ ես քաղաքական հանցագործ եմ: Պարսիկներին գաղտնի օգնելով և անուղղակիորեն նրանց արշավանքներին աջակցելով: Ես քաղաքական հանցագործ էի՝ հանդգնաբար թալղաներ կեղծելով, Ղարաբաղի վանքապատկան և մելիքապատկան հողերը և գյուղերը, ասածիս նման գաղտնի բաժանելով, մինչդեռ առաջ որպես հայրական ժառանգություն, ես ոչինչ չունեի, բացի Աղդամ (Ակնա) գյուղից: Վերջապես Երմոլովը խոսքն ավարտելով գոչեց. «Եվ այս բոլոր հանցանքներն անհերքելի փաստերով գրանցված են քեզ վրա՝ ուրիշ ոչ մի միջոցով չես կարող ազատվել պատժից, եթե չհրաժարվես քո խանությունից և չհեռանաս Ղարաբաղից, քանի որ դու քրեական և քաղաքական հանցագործ ես»:

Այս վճիռը սոսկալի էր: Երբ ես վերադարձա Շուշի, դիմեցի Կնյազ-Մադաթովին՝ առանձին խնդրանքով, ասելով նրան, որ Վարանդան 15 գյուղերով և իր ժողովրդով հանդերձ որպես նվեր ընդունի ինձանից:

Երբ այս գաղտնիքը նույնպես հայտնի դարձավ, Մելիք-Խուդատատը Մելիք-Շահնազարյանների հավաքական ողջ ուժով բողոքեցին Կուտուզովին իմ ու Կնյազի արածից և պահանջեցին իրենց պապենական սեփական ժառանգություն մնացած այս գյուղերը և հողերը: Գեներալ-Կուտուզովն ինձանից գրավոր բացատրություն պահանջեց, թե ի՞նչ իրավունքով և ինչ հիմքով եմ ես այդ գյուղերը տվել Մադաթովին: Ես պատասխանեցի, որ այդ գյուղերն իմ հայրական ժառանգությունն են, որոնք ես հոժարակամ նվիրել եմ Կնյազ-Մադաթովին: Բայց գեներալ-Կուտուզովը խորամանկո-

րեն գրում է ինձ. «Եթե այդ գյուղերն իրոք Ձեր սեփակա-նությունն են, պետք է Կնյազից հետ վերցնեք, կամ յու-րաքանչյուր գեներալի նույնչափ գյուղեր նվիրեք»: Ես այդ կեղծ փաստաթղթերի գոյությունը ցույց տալու համար, երբ Մադաթովն ու Երմոլովը Դաղստանում էին, վստահորեն փոր-ձեցի հետ վերցնել գյուղերը: Սակայն այդտեղ շատ սխալ-վեցի՝ Կուտուզովի նպատակը սխալ հասկանալով: Նրա նպատակն իմ և Մադաթովի մեջ թշնամանք առաջացնելն էր և նա ցանկանում էր կրկին անգամ սպաներ Մադաթո-վի կողմից կենդանացրած խանությունս և պատիվս: Բայց ինձ թվում էր, թե Մադաթովին տված փաստաթուղթը Կայ-սերը չէր ներկայացվելու, այլ Կնյազի հետ մեռնելու էր պատերազմում:

Դաղստանից վերադարձան Երմոլովը և Մադաթովը: Երմոլովն ինձ նամակ գրեց, որ Կայսրը փաստաթղթի տրա-մադրումով գյուղերը հաստատել է Կնյազ-Մադաթովի վրա և ինձ հրամայել էր, որ ես ուրիշ գյուղեր և ժողովուրդ էլ ավելացնեմ Մադաթովի անունով: Իսկ Մադաթովն ինձ ա-ռանձին ցույց տվեց Սուրխայ-խանին իմ ուղարկած գաղտնի նամակները, որոնք առգրավված էին և սպառնալից խոսքն ինձ ուղղելով, ասաց. «Դու արժանի չես բարության, դու քո խանության հետ մեկտեղ արժանի ես մահվան: Դու՛, քո այս նամակով ու քո խանության հետ շուտով կմեռնես Սիբիրի խորքերում, ապերա՛խտ»: Ես ինձ ամեն ինչով հան-ցավոր ճանաչեցի և փորձելով հանգստացնել այս կատաղի մարդու հանգստությունը, ընկա նրա ոտքերը, խոստովանեցի բոլոր հանցանքներս, հիշեցի իմ հանդեպ արած նրա բարու-թյունները և իմ ապերախտությունները նրա հանդեպ: Եվ իր մասին Կուտուզովին գրած վատ–վատ բաները: Բայց Մա-դաթովը չտվեց ինձ առգրավված նամակները, սաստիկ կա-տաղած լինելով ինձ վրա, որ ես ոչ միայն իր բարու-թյան փոխարեն փորձել էի իմ կամքով տվածներս ետ խլել իրենից, այլև՝ իր մասին շատ բաներ էի ասել Կուտուզովին:

Բայց Բաղդասար խալիֆան և հարազատ մելիքներն այս

ամենն իմանալով, նորից բողոքեցին Երմոլովին և իմ ու Մա-դաթովի դեմ, սակայն Մադաթովը համոզիչ խոսքերով խա-բեց հայերին, հավատացնելով, որ ինքը Ղարաբաղի բոլոր հողերն ու գյուղերը տալու էր մելիքներին և վանքերին:

Մի քանի շաբաթից հետո Կնյազ-Մադաթովը Երմոլովի թելադրանքով առաջարկեց ինձ, որ ես Երմոլովի թուրք և ա-պօրինի կնոջից ծնած երկու որդիներին՝ Բախտիարին և Ալլա-հյարին տայի ծննդյան վկայականներ և Ղարաբաղի գյուղե-րից, ժողովրդից և հողերից բաժին հատկացնեի նրանց հա-մար: Բայց այս անգամ խոստացավ անպատճառ ինձ հանձնել առգրավված նամակները, որոնց գոյությունը տակավին գաղտ-նիք էր: Երմոլովի բարեկամությունը շահելու քաղաքականու-թյամբ, խոստացա կատարել այս առաջարկությունը, դրա մեջ մեծ օգուտներ տեսնելով խանությանս գոյության, բոլոր կեղծ փաստաթղթերի հաջողության և պատվիս վերա-կանգման համար: Սակայն այդ րոպեին Մադաթովը մի նա-մակ ստացավ Երմոլովից, շտապ Թիֆլիս գնաց և այս ա-ռաջարկությունն անկատար մնաց և նամակներն էլ մնացին Կնյազի մոտ:

Կնյազ-Մադաթովը Ղարաբաղ վերադարձավ, բայց իր նախկին վերաբերմունքն ամբողջովին փոխված էր: Սրանից հետո Մադաթովի հրամանով բանտարկեցին Միրզա-Ատի Գյուզալին, Միրզա-Ջամալին և կապիտան Առուստամ-բե-կին, արքունիքի կողմից գրավեցին վերջինիս շարժական և անշարժ գույքը և գնդակով վիրավորվեց Ջափար Ղուլի ա-ղան, բայց, բարեբախտաբար, վերքն անվնաս էր: Ես իսկույն դիմեցի գեներալ Հախվերդովին, Պավել Իվանովիչ Մա-կիլևսկուն և կապիտան Մուրաչանովին և խնդրեցի նրան-ցից բացատրել ինձ այս բանտարկության պատճառները: Նրանք պատասխանեցին զայրացած. «Քո ընկերները բան-տում խոստովանել են իրենց և քո հանցանքները, նրանք բացահայտել են իրենց և քո արած բոլոր չարություննե-րը: Կրկին բացատրելու կարիք չկա՝ ինչ-որ դու գործել ես, քաջ գիտես:

Արդեն սպասավոր զինվորները սպասում էին հրամանի, որպեսզի ինձ ևս կալանավորեն և բանտարկեն: Երբ երեքը միասին նստեցի՝ Թախծագին խնդրեցի. «Ես իմ սիրահոժար կամքով թողնում եմ Ռուսաստանին իմ խանությունն իր ամբողջ իրավունքներով և երդվում եմ շուտով ոչնչացնել այն բոլոր կեղծ փաստաթղթերը, միայն թե ազատեցեք բոլոր բանտարկյալներին և խնայեցեք իմ կյանքը»: Նրանք պատասխանեցին. «Առանց քո ասելու էլ արդեն մեռած է քո խանությունը, առանց ոչնչացնելու խարդախությունն արդեն ոչնչացրած է, այն փաստաթղթերն ու իրավունքներն այսուհետև Ռուսաստանին են պատկանում, իսկ հողերը, ժողովուրդը և գյուղերը՝ Ղարաբաղին: Բանտարկվեուց ազատության համար իրավունք չունես խնդրել, քանի որ քրեական հանցագործ ես: Այսքան շնորհքը դու կարող ես ունենալ, քանի որ այդքան խնդրում ես: Ահա քեզ 3 ժամ ժամանակ, որ դու կարող ես փախչել ու ազատել քո կյանքը»: Այնքան թաքուն փախա Ղարաբաղից Երևան, որ չհասցրի անգամ Միրզա-Ատի-Գյոզալից և Միրզա-Ջամալից հետ վերցնել իմ և հորս կնիքները, որոնք թողել էի էլի կեղծ փաստաթղթեր պատրաստելու համար: Այս ամենը գրեցի միայն Պարսկաստանի շահի համար:

Այսքան տխուր լուրերը ձեզ հայտնելուց հետո, մնում է Ձեզ հաղորդել մի լավ լուր, այն է՝ որ ռուսական Անդրկովկասի այժմյան պաշտոնյաները իրենց սեփական շահերից ելնելով, խիստ գաղտնապահ են դառել և մելիքների ու հոգևորականների արդարացի բողոքներին կարևորություն չեն տալիս: Ներկայիս պաշտոնյաները կամ բոլորովին թաքցնում են ճշմարտությունը ռուսական կառավարությունից, կամ միայն մի հարցի են պատասխանում, շեղվելով բուն եղելությունից, խանության գոյությունն Անդրկովկասում պահպանելու համար: Քանի որ հողն ու ոսկին ամեն ինչ անում են: Սա Ձեզ հիշեցնելով հայտնում եմ, որ թեպետ ես հիմա բացակայում եմ Ղարաբաղից, սակայն այնտեղ են իմ հավատարիմ համախոհները, ովքեր շու-

տով կազատվեն բանտարկությունից, որոնց մոտ 1000 ոսկի եմ թողել: Այդ գումարին պետք է ավելացնել ևս 600 ոսկի, որպեսզի վճարելով այդ գումարը, կարողանան հայերի ձեռքից վերցնել հողերը, գյուղերը և ժողովուրդը: Եվ այդ ամենը կանվի նույն կեղծ փաստաթղթերով:

Ահա այսպես պատժվեցին և դեռ կպատժվեն Ղարաբաղի հայ մելիքները, հոգևորականները և ժողովուրդը, ովքեր թողնելով պարսկական բարեպաշտ կառավարությունը, սկսեցին ապավինել ռուսական կառավարությանը:

Ես որոշ ժամանակ մնալու եմ այստեղ, որպեսզի նամակագրությամբ օգնեմ ընկերներիս: Բայց շուտով կգամ Պարսկաստան՝ Ձեզ մոտ...»:

ԾԱ.

1823 թվականին Խնածախից Քյանդխուդա-Խաչատուր Բարխուդարյանը գրում է հորս. «... Արդեն գիտեք, որ Մեհտի ճըռ-խանը չկարողացավ թաքցնել իր գաղտնի դավաճանությունները, Շուշիից փախավ Երևան և ապավինեց տեղի Սարդարին: Ռուսական պաշտոնյաները անտեղյակ չէին փախստական ճըռ-խանի հորինած կեղծ փաստաթղթերից և նրա բոլոր չար գործերից, քանի որ հիմա ամեն ինչ պարզ էր:

Բանտարկված Առստամ-բեկը, Միրզա-Ատի-Գյոզալը և Միրզա-Ջամալը ազատվեցին, իսկ Ջափար-Ղուլի-աղան աքսորվեց Ռուսաստան, ով, ինչպես գիտեք, իր քրեական և քաղաքական հանցագործությունների պատճառով, արդեն երկրորդ անգամ ուխտի է գնում այդ երկիր: Թեև առաջին անգամ Թարթառ գետով փախավ Պարսկաստան, բայց այս անգամ չի կարող փախչել:

Մեծ Գեներալ-Երմոլովի հրամանով, որ Անդրկովկասի կառավարիչն էր, Շուշիում մի ժողով հրավիրեց, որը պետք է քններ և տեղեկագրեր մելիքապատկան և վանքապատկան հողերը: «Կայսերական խորհուրդը» ամեն մի կալվածք,

հող կամ ժողովուրդ իր սեփականության վրա գրանցելու նպատակով: Ժողովի նախագահ նշանակվեց Կնյազ-Մադաթովը, իսկ մյուսներն են՝ փոխգնդապետ Փոքր-Երմոլովը, նախագահի խորհրդական Պ.Ի. Մակիլևսկին, Մուրաչանովը և Գեներալ Ռեուտը: Ժողովը որոշեց վավերական ճանաչել Իբրահիմ և Մեհտի ճրռ-խանների կնիքներով կնքված փաստաթղթերը, այսինքն՝ այն ամենը, որ Մեհտի ճրռ-խանը իր համախոհների հետ պատրաստել և փախչելուց առաջ իր ուզած մարդկանց բաժանել էր:

Եվ ահա մի օրվա մեջ Ղարաբաղի տերը դարձան Պարսկաստանից այստեղ փախչող, ռուսներին և հայերին դավաճանող ճրռ-խանները և նրանց ջորեպանները, ձիապանները, դրագիրները, դահիճները, պարտիզպանները, սիրուհիները, ղալանչիները և դայակների որդիները: Իսկ տեղի հայ մելիքները զրկվեցին իրենց բազմադարյան իրավունքներից, պապենական ժառանգությունից: Ահա այսպես վարձատրվեցին այն հայ հոգևորականները, մելիքները, վանքերը, քաջերը և ժողովուրդը, ովքեր 28 տարի անձնվիրաբար և արյամբ ծառայեցին, և այսպես կատարվեցին բոլոր խոստումները:

Եթե Ռուսական կառավարությունն ուզղի ժողովի սխալը, շատ ճիշտ կանի, իսկ եթե իր որոշումը կայացնի հիմնվելով այս սխալ տեղեկագրության վրա, երկար տարիներ անկարող կլինի մաքրել նրա գործած սխալները և ուղղել նրա սխալ գործերը:

Խոյեցի պարտիզպան Ապրահը[1], ով ամուսնացած էր Մեհտի ճրռ-խանի քրոջ՝ Ազաթբեկյումի հետ նույն կեղծ փաստաթղթերից մեկով տիրացավ Ղայբալու և Խնածախ գյուղերին, իբր Իբրահիմ ճրռ-խանն իր կենդանության օրոք, այդ փաստաթղթերով գյուղերը բաժին է տվել իր քրոջը: Իմանալով այս ամենը, հայ քաջերը բողոքեցին: Բայց Մա-

[1] Նա անվանվում է նաև Ապութալիբ բեկ:
[2] Տես ԺՌ գլխում:

կիլևսկին և Փոքր-Երմոլովը ոչ միայն պատռեցին բողոքագիրը, այլ նաև՝ այն պայմանագիրը[2], որ Խնածախը հիմնադրելու ժամանակ Իբրահիմ-խանը տվել էր մեզ: Մակիլևսկին և Փոքր-Երմոլովը մի քանի անգամ հրամայեցին պարտիզպան Ապրահին գալ և մեր գյուղում բնակվել: Բայց վերջինս վախից ելնելով՝ չկատարեց հրամանը: Վերջապես Մակիլևսկին և Երմոլովը պարտիզպանին ու նրա կնոջը 100 ղազախով բերեցին և որպես գյուղապետ բռնի նստեցրին Խնածախում: 10 օր Ազաթբեկյումի տաղավարում զվարճացան և ապա ղազախներին պահակ թողնելով վերադարձան Շուշի: Դուք չգիտեք, թե որքան գեղեցիկ է Ազաթբեկյումը: Թեև քաջերը շատ անգամներ խնդրեցին պաշտոնյաներից, որ այսպիսի անարդարություն չանեն և այդ ճըռին բռնի ուժով գյուղում չդնեն, բայց ապարդյուն: Այժմ Անդրկովկասում իշխում էր ոչ թե հավատարմությունը և արդարությունը, այլ՝ դեղին գլորը և չքնաղ գեղեցկությունը: Ահա այսպես վարձատրվեցին Խնածախ գյուղի քաջերը: Վշտալի Քյանդխուդա-Խաչատուր Բարխուդարյանց»:

ԾԲ.

Բուռն են պատվի զգացումի կրքերը և անբուժելի: Բարոյական վերքերը, որով շատ անգամ վիրավորված մարդիկ վիրավոր արծվի նման, հանդիսանում են անպարտելի ախոյաններ, պատիվ վերականգնելու վրեժխնդրության ասպարեզում, որտեղ մինչև անգամ իրենք շնչասպառ կընկնեին: Պարսից պատվախնդիր թագաժառանգն անկարող էր մոռանալ Անդրկովկասի կորստյան ցավը և Պարսկական տերության պատվի անկումը, այն տերության, որտեղ Կյուրոս թագավորից սկսած մինչև Աղա-Մամադ-Շահը պարսկական կառավարությունը փայլում էր տիեզերքում «Հաղթող» անվանումով: Այս տերության շառավիղը՝ Աբաս-Միրզան, պատվախնդրության զգացումից դրդված, ցանկանում էր վերա-

կանգնել այդ տերության փառքն ու պատիվը ինչպես իր ժողովրդի, այնպես էլ՝ ամբողջ տերության առաջ:

Արդեն կային չորս պատրաստ միջոցներ: Դրանցից էին՝ պատրաստի գումարը, ներքին միաբանությունը, պատերազմի նախապատրաստությունը և արտաքին աջակցությունը:

Ա) Գանձասարը հերիքելու չափ գումար էր հայթհայթել:

Բ) Ալլահյար-խանը, որ Ֆաթալի-Շահի սիրելի փեսան էր և այդ ժամանակվա գլխավոր նախարարը, ամբողջովին համաձայն էր մի նոր և հուժկու պատերազմ ևս մղել Անդրկովկասում: Նրա հետ համաձայնվեցին բոլոր խաները, ազգը, զորքը, իսկ Շահը, որ խիստ խաղաղասեր էր, շատ դժվար համաձայնվեց:

Գ) Վերակազմավորվեց պատերազմական սպառազինությունը, որոնք էին՝ 100 նոր թնդանոթ իրենց վառոդապարկերով և գնդակներով, 100 000 հրացան իրենց փամփուշտներով, 80 000 կանոնավոր և 20 000 անկանոն զորք:

Դ) Այս ամենի հետ միացել էին նաև արտաքին ուժերը, որոնք էին՝ դաղիացի, իտալացի և օսմանցի ռազմագետ սպաները և բոլոր փախստական խաները, Ղազի-Ղումուխի Սուրխայ-խանը, Շամախիի Մուստաֆա-խանը, Նուխիի Սալիմ-խանը, Շուշիի Մեհտի ճրռ-խանը, Վրաց Ալեքսանդր արքայազնը՝ 3000 վրացի ապստամբ, կամավոր հեծելազորով, քրդական Նովրուզ-Ալի-խանը 8000 ձիավոր զորքով: Օսմանցիների Օսման դեսպանը իր տերության կողմից խոստացված 40 000 լրացուցիչ զորքով, Ղարաբաղի, Գանձակի, Շամախիի, Նուխիի, Ղազախի, Փամբակի և Շամշադինի գավառներից այս ամենի հետ միանալիք ապստամբած մահմեդական ցեղերը: Ահա այս համախմբված ուժից ոգևորված, Աբաս-Միրզան համարձակ ցանկանում էր արշավել Անդրկովկասի վրա:

Ռուսները 1813–1823 թթ. պարսկական արշավանքի քաղաքականությունից և կեղծ հարաբերություններից խաբված, մտածում էին, թե Գյուլիստանի պայմանագրով խաղաղու-

թյունը վերահաստատվել էր իրենց և Պարսկաստանի միջև: Բայց Պարսկաստանը ներքուստ հակառակ պատկերն էր ներկայացնում, քանի որ 10 տարի էր արդեն, որ պատերազմի էր պատրաստվում:

Բայց քանի որ Գյուլիստանի պայմանագիրն արգելում էր գաղտնի կամ հայտնի արշավել հակառակ տերության վրա, Աբաս-Միրզան մի նոր շարժառիթ էր փնտրում, որն այսպես ասած, իրավունք կտար իրեն խախտել պայմանագիրը: Առիթն ինքնին եղավ, այն է՝ սահմանագլխի անորոշ և վիճահարույց գիծը: Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանը Ռուսաստանին է թողնում Կասպից ծովի և Արաքս գետի հյուսիսային կողմերը, բայց դեռ անորոշ էին մնացել Սևանա լճի հյուսիսային մասը շրջապատող լեռները և Արաքս, Մեղրի և Կապան գետերի միջև տարածությունը, որը կոչվում է Քյափանակ: Հորս ասելով բնության կարկինը այս երկու տերությունների միջև հաշտարար միջնորդ հանդիսանալով, արդեն գծել է երկուսի համար էլ ընդունելի սահմանագիծ: Այն է՝ Ղարաբաղի հարավային կողմից Արաքս գետը և արևմտյան կողմից՝ Գողթան լեռնաշղթան, որը ձգվում էր Արաքսից մինչև Գեղամա լճի հյուսիսային մասը և այնտեղից էլ մինչև Արագած: Ահա Գողթան լեռնաշղթայի շարունակության այս գագաթնագիծն է, որ Ղարաբաղը բաժանում է Արարատյան նահանգի սահմաններից և Արարատյան Փամբակի ու մյուս գավառներից:

1823 թվին Պարսկաստանի և Ռուսաստանի կողմից որոշված լիազոր դեսպանները[1] ելնելով Գյուլիստանի պայմանագրից, փորձեցին որոշել այդ անորոշ մնացած սահմանագիծը, բայց անհամաձայնության պատճառով, փոխզիջման չեկան: Այն փաստը, որ իրավունք կտար խախտել Գյուլիստանի պայմանագիրը, Աբաս-Միրզան տեսնում էր սահ-

[1] Կոմիսար:

մանագլուխներն անորոշ թողնելու քաղաքականության մեջ: Ահա թե ինչու դեսպանները չհամաձայնվեցին:

Նույն թվականին Կնյազ-Մադաթովն Արաքսի աջ ափին ներկայացավ Աբաս-Միրզային, ով այդ ժամանակ իր որդիներով և խորհրդականներով գտնվում էր Խուդափերինի աջ կողմում: Կնյազը ներկայացավ, բայց ոչ թե առանձին, այլ մի գունդ թնդանոթաձիգ ռուսական զորքով և մի գունդ զարդարված Ղարաբաղի հայ հեծելազորով, որի մեջ մտնում էին Խնածախի, Բալուջայի քաջերը և Արագահասի գունդը: Թագաժառանգը մեծ պատվով ընդունեց իր դյուցազուն այցելուին և մեծարեց որսի համադամ (համեղ) խորտիկներով և թանկարժեք նվերներով ու ինքնակամ համաձայնվեց սահմանագլխի որոշման մասին Կնյազի առաջարկությանը: Թագաժառանգի ցանկությամբ և Մադաթովի հրամանով զինվորները գեղեցիկ զորավարժանքներ և օղում սքանչելի հրախաղ կատարեցին, իսկ հայկական հեծելազորը՝ հիանալի ձիարշավ, որի վրա զարմանալով, Թագաժառանգը Կնյազին հայտնեց իր գոհունակությունը:

Ճաշի ժամանակ ես հնարավորություն ունեցա տեսնել և ծանոթանալ իմ մորեղբայր Բաղդասարի և Քյանդխուդա-խաչատուրի հետ, ովքեր անչափ ուրախանալուց հետո, ցավոք սրտի՝ հայտնեցին, որ հարազատ մելիքները և ամբողջ ժողովուրդը շատ էին տխրել հողային անարդար բաժանումից: Որ հայերը օտարացել էին ռուսներից ոչ այնքան իրենց մատուցած ծառայությունները չվարձատրելու համար, որքան իրենց սեփական իրավունքները բռնի հափշտակելու ու թուրքերին տալու համար: Կնյազն իրենց խնդրել և բերել է այստեղ, որ Ղարաբաղի տղամարդկանց քաջությունները ցույց տար Աբաս-Միրզային, թե ինչպես են նրանք մինչև անգամ նժույգների արագավազ ընթացքի ժամանակ նշանակետին զարկում գնդակները: Որ հայերն իրենց հացով ու գործիքներով անվճար կառուցել են Շուշիից Ասկերան տանող գեղեցիկ ճանապարհը, որ ոչ միայն փոսի կառքերը, այլև անգամ գոմշասայլերը կարո-

ղանան երթևեկել: Քարհատի ապառաժ լեռը վառոդով կրակել և հարթելով ճանապարհ էին բացել: Որ այժմ Խնածախի տերը Աբրահամ ճրո-բեկն է, ով Բալուջայի Ջափար-Ղուլի աղայի ազգականն է:

Ինչպես հատուկ է կեղծ քաղաքականությանը, թագաժառանգը իր պատվելի հյուրին ճանապարհելիս խոստացավ շուտով կատարել նրա սահմանագծի մասին արած առաջարկությունը, որը Մեծ Երմոլովի կողմից էր և Մադաթովի գլուխը յուղելով[1] *ճանապարհեց:*

Թագաժառանգը այդտեղ էր եկել ոչ թե որսորդության համար, այլ ուզում էր գաղտնի տեսնվել Բերքաշատի, Կապանի, Մեղրիի, Շուշիի և Ղարաբաղի գործող մահմեդականների հետ, անձամբ հրահանգներ տալ նրանց և ցույց տալ, թե ինչպես պիտանի գործիքներ պատրաստել: Թագաժառանգը որսորդության պատրվակով այդտեղ երկար ժամանակ մնաց և հաճախ բարեկամական նամակներ էր գրում Մադաթովին, շուշեցի Գյանճում աղայի միջոցով հայտնում, որ ինքը շարունակ զվարճանում է որսորդությամբ: Եվ ահա ամեն ինչ կարգադրելուց և Մադաթովին խաբելով քնեցնելուց հետո, վերադարձավ Թավրիզ:

ԾԳ.

1825 թվականին, ռուսական Սենիամինով հյուպատոսից գաղտնի Սալթանի գյուղում ժողով հրավիրեց, որտեղ ներկա էին Ֆաթալի-Շահը, թագաժառանգը, բոլոր նախարարները, բոլոր փախստականները և Օսմանյան Օսման դեսպանը: Այս ժողովը որոշեց գործադրել հետևյալ որոշումները.

---

[1] Ղարաբաղյան ոճով նշանակում է՝ կեղծ խոստմամբ խաբեց և դատարկ հույսով ճանապարհեց:

Ա) Արտաքուստ ամուր պահել Ռուսաստանի հետ հարաբերությունները, իսկ ներքուստ՝ խզել:

Բ) Վեճի տակ եղած հողերի առիթով կասկած չհարուցելով կրկին ամրացնել Արաքսի աջ կողմի այն բրգաշատ բերդերը, որը ռուսները կործանել էին 1811 թվականին:

Գ) Ռուսական լրտեսներին կասկած չհարուցելու քաղաքականությամբ հետզհետե Արաքսի աջ ափին գաղտնի տեղում հավաքել ամբողջ զորքը և ռազմամթերքը, բայց փոքր խմբերով:

Դ) Գաղտնի գրգռելով՝ Ռուսաստանի դեմ ապստամբեցնել Կովկասի և Անդրկովկասի բոլոր մահմեդական ցեղերին:

Ե) Որևէ կերպ պարսկական կողմը գրավել հայ մելիքների և քաջերի սրտերը, որոնք արդեն հեռացել էին ռուսներից:

Զ) Առանց կանխավ նախազգուշացնելու հարձակվել Ռուսաստանի վրա:

Է) Այդ հարձակման ժամանակ 2 մասի բաժանել զորքը, այնպես, որ միևնույն ժամանակ առաջին մասը հարձակվի Թիֆլիսի գավառների վրա և նրա կապը կտրի Գանձակից և Շուշիից, իսկ մյուս մասը՝ Ղարաբաղից:

Ը) Գաղտնի հարձակման ժամը կախված է ամենահարմար պահից:

Յուրաքանչյուր փախստական խան ձեռնամուխ եղավ ապստամբեցնել իր գավառի մահմեդական ցեղերին, որոնց մեջ ամենադժվարը Հյուսիսային Դաղստանն էր, որին Ռուսաստանը մեծ ուշադրություն էր դարձնում և ռուսական զորքը տեղակայված էր այնտեղ, և Ղարաբաղը, որը՝ Արագահասի և Քյորօղլու խմբերի հետ հսկում էր նաև Մաղաթովը: Սուրխայ-խանն իր հետ ուներ 10 քաջ տղամարդիկ, որոնց մեջ հայտնի էին Նուրի և Ղազի բեկերը: Նրանց հետ միանալով գնալու էին Հյուսիսային Դաղստանը ապստամբելու, նաև Երևանի Սարդարի եղբայր Հասան

խանը, Կապանի 3 թուրքերը, որոնց Հասան-Փիր-Մաշաթ Օղ-լին Դաղստանի պատերազմի ժամանակ գրգռող և գաղտնի նամակներ էր գրում Սուրխայ-խանին և պատասխաններ բերում և Մեհտի ճըռ-խանի 5 գաղտնի սուրհանդակները, ում Կնյազ-Մադաթովը կալանավորել էր վտանգավոր նա-մակները տեղափոխելու համար:

Մեհտի ճըռ-խանն Գարա-Զոռնուկ և Հաճի-Աղալարի ձեռքով արդեն ապստամբեցրել էր Զանգեզուրի գավառի և Ղարաբաղի մահմեդական ցեղերին նույնպես: Բերքաշատն ապստամբեցրեց ավազակապետ Ալիի ձեռքով, Կապանը՝ Նա-յիպ Մուսթաֆայի, Սիսիանը՝ Սափար-Ալի-բեկի, Գյուլիստանի, Գանձակի և Ջրաբերդի դաշտային մասը՝ Միրզա-Ատի-Գյոզա-լի, Շուշիում բնակվող թուրքերը՝ Միրզա-Ջամալի, Խաչեն և Վարանդա գավառների դաշտաբնակ թուրքերը՝ Շիրին-Թամ-բազ-օղլու և Ալմամաթ՝ Թանդրի-Վերտի-Օղլու կողմից, իսկ Մուղանի թափառական ցեղերը՝ Զերկեր, Տիլաղարտա և Շահսևեն ցեղերի ձեռքով, որ շատ հաճախ Պարսկաստանից Ղարաբաղ և Ղարաբաղից Պարսկաստան էին գնում և գաղտնի գործեր անում: Այս ամենի հետ միացել էին նաև Շուշիի բոլոր ճըռ-բեկերը:

Իսկ Երևանի Սարդարն ապստամբեցնում է Ղազախի, Շամշադինի և Փամբուկի գավառների մահմեդականներին և տեղի բոլոր թուրք բեկերին: Կարելի է ասել, որ այդ ժա-մանակ գրեթե ամբողջ Կովկասն ու Անդրկովկասը, գաղտ-նի ապստամբած սպասում էին Աբաս-Միրզայի հրամանին:

Սույն թվականին հանկարծ լուր ստացվեց, որ ռուսա-կան Ալեքսանդր Ա կայսրը վախճանվել է և նրան փոխա-րինում է Պետրոս Ա. կայսեր որդի Նիկոլայ Պավլովիչը, քանի որ Ալեքսանդրը որդի չուներ: Պարսկաստանը մի կող-մից ցավակցական և շնորհավորական նամակ գրեց Ռու-սաստանի նոր գահակալին, մյուս կողմից՝ ներքին հրամաններ արձակեց արշավանքի պատրաստություն տեսնելու համար:

Այդ ժամանակ ռուսական պաշտոնյաներն էին. Տփխի-սում՝ Գեներալ-Երմոլովը՝ որպես ընդհանուր կառավարիչ, Շա-

մախիում՝ Ստարկով պարեկը (քաղաքապետ), Թավրիզում՝ Գե-ներալ-Սենիամինով հյուպատոսը, Խուդափիրինում՝ սահմա-նապահ Մոլչանովը, Ղափանում՝ Պարուչիկ-Շակալովսկին, Բռ-նակոթում՝ Պետրոս-բեկ Մադաթյանը, Գորիսում՝ Նագիլիկը, Նորաշենում՝ Շոպալովսկին, Ավետարանոցում՝ Կնյազ-Մադա-թովը և Ռեուտը, իսկ Շուշիում՝ Զիլաևը:

Թեև Աբաս Միրզան 2 խորամանկ մոլլաների ձեռքով ա-մեն ինչ արեց, որպեսզի Պարսկաստանի կողմը գրավի Ղա-րաբաղի հայ մելիքների, քաջերի և ղեկավարների սրտերը, սակայն իր բոլոր ձեռնարկածներն իզուր էին: Քանի որ հայերը չխաբվեցին ոչ թանկարժեք պարգևների խոստում-ներին, ոչ հարազատ մելիքության վերականգնելու երդմա-նը և ոչ էլ դրամական նվերներին, այլ մնացին Ռուսաստանի հավատարիմ հպատակության տակ:

ԾԴ.

1826 թվականին լրտեսները հայտնեցին Աբաս-Միրզա-յին, որ Մադաթովը Ղարաբաղից բացակայում էր, գնացել էր բուժվելու Կովկասյան հանքային ջրերում: Թիֆլիսում, Գան-ձակում և Ղարաբաղում քչացել էին զինվորները և որ նրանց մեծ մասը գտնվում էր Հյուսիսային Դաղստանում: Բայց թագաժառանգին մեծ ուրախություն պատճառողը, ոչ թե ռուսական նոր գահակալի անփորձությունն էր կամ ռուսական զորքի քչությունը, այլ՝ Մադաթովի Ղարաբա-ղից բացակայությունը, որից ավելի շատ էր վախենում պարս-կական զորքը:

Ահա այս ժամանակ Մենշիկովը որպես գլխավոր դեսպան Ռուսաստանից հասավ Թեհրան, բայց Աբաս-Միրզայի հրամա-նով իսկույն կալանավորվեց: Թագաժառանգը ցանկանալով քնեցնել Ղարաբաղի ռուսական պաշտոնյաներին, հրամայեց իր արտաքին գործերի նախարար Ամիր-Ասլան-խանին գրել Շու-

չիի Զիլաևին հետևյալը. «Շնորհավորում եմ Ձեզ: Հուլիսի 15-ին մեր կառավարությունից հրաման ստացա Ձեզ հայտնել, որ թեև մեր և ռուսական կառավարությունների միջև սկզբից անհամաձայնություն կար և սիրո կապը սառեցնող վիճաբանություն, բայց հետո ռուսական կայսեր կողմից մարդ եկավ խաղաղության պայմանագիրը նորոգելու: Հօգուտ մեր տերության են թողնվում Կեքճան և Քափենյակը և սրա համար արդեն մարդ է ուղարկվել Պետերբուրգ»:

Ամեն ինչ պատրաստ էր, և եկել էր գործելու ժամանակը: Աբաս-Միրզայի թույլտվությամբ Մենշիկովը փախավ Տփխիս, սակայն նրա հրամանով վերստին կալանավորվեց Երևանում: Բայց երբ Պարսկաստանի հարձակման մասին հայտնեց Ռուսաստանին, ապա Երևանում նույնպես ազատվեց:

Պարսկական 100000-անոց բանակը բաժանվեց 2 մասի: Առաջին մասի հրամանատարը Աբաս-Միրզան էր, իսկ երկրորդինը՝ Ֆաթալի-Շահի սիրելի փեսա Ամիրխան-Սատրապն էր և թագաժառանգի ավագ որդի՝ Մամաթ-Միրզան:

Աբաս-Միրզայի բանակին էին միացել Բեջան-խանը և շատ պարսիկ խաներ, Շամախիի Մուսթաֆա-խանը, Մեհտի ճրռ-խանը, Նազար-Ալի-խանը, Ասատ-սուլթանը, Հաճի-Աղալարի և Կապանի, Բերքաշատի, Օրդուբադի, Զանգեզուրի բոլոր ճրռ-բեկերը: Նրանց հետ էր և Պարսկաստանից եկած Իմամ-Հուսեյն հայտնի հոգևորականը, որն իր ասելով այդ դարի մարգարեն և գուշակն էր ու իր աղոթքով կարող էր հրաշքով հետ մղել թշնամի ռուսների թնդանոթի և հրացանի գնդակները, անվնաս վերադարձնել պարսկական հաղթանակած զորքը: Բայց նա մարգարեաբար գուշակում էր Ռուսաստանի անկումը և Պարսկաստանի հաղթանակը:

Ամիրխան-Սարդարի բանակաբաժնին միացել էին Իրզախանը, քրդական Նովրուզ-Ալի-խանն իր 8000 ձիավորները, վրաց Ալեքսանդր արքայազնն իր 3000 վրացի և թուրք ապստամբներով: Նրանց հետ կմիանար նաև Նուխիի Սալիմ-խանը Գանձակի սահմաններում:

Ամիրխան-Սատրապն իր 40000-անոց զորքով հարձակ-

վեց Շորագյալի, Փամբակի, Ղազախի և Շամշադինի վրա, որպեսզի տիրելով այս գավառներին խզեր Գանձակի ու Շուշիի կապը և ապահովեր Աբաս-Միրզայի կապը Գանձակի հետ, որտեղ Շուշին գրավելուց հետո պիտի միանային բանակները:

Իսկ Աբաս-Միրզան, որ Մեհտի ճըռ-խանից տեղեկացել էր, որ Ղարաբաղի 1000 զինվորներից 400-ը գտնվում էին Գորիսում, 400-ը Ավետարանոց ավանում, իսկ 200-ը Շուշիում, ցանկացավ հանպատրաստից հարձակվել, նախ կոտորել զինվորներին, ապա գրավել Շուշին, որը համարվում էր Անդրկովկասի բանալին: Այս պատճառով Մեհտի ճըռ-խանի կողմից առաջնորդված գետախառնուրդի մոտով մտավ Զանգեզուր, կոտորեց 400 զինվորներին, ովքեր Շուշի էին շտապում, ապա մտավ Ավետարանոց և Ռեուտին իր զորքով այնտեղից փախած տեսնելով, կրակի տվեց Մադաթովի սեփական տունը, մի քանի գեղեցիկ շենքեր և ռուսական զորանոցը: Ապա իր բանակը դրեց Շուշիում մեզ քաջածանոթ տեղում, որտեղ բանակին միացան նաև մահմեդական մնացած Մելիք-Ավանյան Բաղր-բեկի որդի Մելիք-Ասլանի առաջնորդությամբ Ղարաբաղի բոլոր մահմեդական ցեղերի տղամարդիկ: Աբաս-Միրզան Նազար-Ալի-խանի առաջնորդությամբ 20000-անոց զորք ուղարկեց Գանձակը գրավելու, պատվիրելով, որ Գանձակը գրավելուց հետո միանար Ամիրխան-Սարդարին և հետևեր Միրզա-Ատի-Գյոզալի խորհրդին, ով Գանձակի մոտ մոտենալու էր իր զորքի հետ: Այս զորաբաժնի հետ էին Մուստաֆա-խանը, Իմամ-Հուսեյն մարգարեն և Ղարաբաղի թափառական թուրք ցեղերի կեսը: Մելիք-Ասլանի, Ալմամաթ-Թանգրիվերդի-Օղլու և Հաճի-Աղալարի առաջնորդությամբ հայերին պատժելու համար ասպատակեց Ղարաբաղի գավառների վրա, իսկ մնացած զորքով ինքը պաշարեց Շուշին:

Բերդի կապն ամեն տեղի հետ խզված էր: Շուշիում կար միայն 500 զինվոր և 100 ղազախ: Բայց ո՛չ պատրաստ հաց կար, ո՛չ ալյուր և ո՛չ էլ ուտելու պաշար՝ ոչ

միայն զինվորների, այլև պաշարվածների համար: Ռուսական զորքը համարյա թե անզեն էր, քանի որ Ավետարանոցից Շուշի փախչելու ժամանակ, ամեն ինչ թողել ու փախել էին և Աբաս-Միրզայի ձեռքն էր անցել 2 թնդանոթ, բավականին հրացան և շատ կենսական իրեր: Արտաքուստ զինավառված պարսիկներին պաշարման ժամանակ մահ էր սպառնում, իսկ ներքուստ հացի պակասություն, ռազմամթերքի քչություն և թուրքերի անհավատարմությունը և միանգամայն ռուսական զորքի աննշան քանակություն:

Այնուամենայնիվ, այդ դժվար պահին փայլեցին Ղարաբաղի հայերի քաջագործությունները և անձնվիրությունը, որոնց կողքով անհնար է լուռ անցնել: Խնածախի և Բալուջայի քաջերը իրենց մեջ բաժանելով բերդի վտանգավոր կիրճերը, բուրգերը և այն դուռը, որ կասկածում էին թուրքերի անհավատարմության վրա, պահում էին իրենց իսկական զենքով ու հացով: Իսկ մնացած հայ տղամարդիկ հսկում էին մյուս բերդերը, էլի իրենց ծախսերով: Անգործ չէին հայ ոսկերիչները, ձուլիչները, ծերունիները, տարեցները, պատանիները, հարսները, օրիորդները և աղջիկները: Նրանք պատրաստում էին վառոդ, գնդակ, փամփուշտ, հաց և կերակուր իրենց տղամարդկանց համար: Արագահասը և Քյորօղլին Խաչենի անմատչելի անտառներից և Կաչաղակաբերդից, որտեղ թաքնվել էր Վերին Խաչենի ժողովուրդը, գիշերով Շուշի են տեղափոխում ոչխարներ, հորթեր, եզներ, կովեր և այծեր: Նրանք մերթընդմերթ ամառանոցները բարձրացած թափառական մահմեդականներից հոտերով ոչխարներ էին հափշտակում և տեղափոխում Շուշի, որպեսզի բերդում սով չլինի և ներքին խռովություն չառաջանա սովածության անդիմադրելի զգացումի պատճառով: Թարխանյան Սափարի-Յուզբաշին, 300 արիասիրտ տղամարդկանցով գիշեր ու ցերեկ ալյուր է հասցնում պաշարվածների համար, մի կողմից անընդհատ կռվելով պարսիկ և թուրք ավազակների դեմ և մյուս կողմից՝ ջրաղացներն անվնաս օգտագործելով: Յորենն աղացվում է Շոշ,

Հունոտ և Քարին Տակ գյուղերի ջրաղացներում, որոնք գտնվում էին Շուշիի բանակատեղից հեռու մի խորանդունդ ձորում: Ոչ միայն տղամարդիկ, այլև քաջասիրտ կանայք իջնում էին այդտեղ ցորենի պարկը շալակած աղում և վերադառնում: Այդ կանանցից մեկը մի անգամ պարկով բերդ վերադառնալիս, հետ նայեց և տեսավ, որ 5 զինվոր հետապնդում են իրեն: Նա գետնին դրեց ալյուրով պարկը և Դավիթ մարգարեի նման քարերով սպանեց զինվորներից 3-ին, իսկ 2-ը վերցրեցին իր բեռը և տարան բերդ: Այս ամենը հեռադիտակով տեսնելով՝ Աբաս-Միրզան հիացած բացականչեց. «Եթե Ղարաբաղի կանայք են այսպիսին, ապա տղամարդիկ ինչպիսին կլինեն»:

Թագաժառանգը բազմապատկեց բերդի արտաքին մուտքը պաշտպանող զորքը, որպեսզի բերդը սովից ստիպված հանձնվի: Բայց այդ ժամանակ կոտորվեցին թե՛ շատ զինվորներ, և թե՛ շատ թուրքեր, որոնք Սափարի-Յուզբաշու, Քյորօղլու, Արագահասի մարդկանցից ու բերդապահներից էին: Այդ ամենադժվար իրավիճակում հայերը հորինեցին, որ գիշերը ձորից պարաններով ալյուրի պարկերը բերդը բերեն, իսկ կանայք բովելով ցորենը, կերակրեն իրենց երեխաներին:

Թագաժառանգը տեսնելով, որ իզուր անցավ 20 ժամվա ռմբակոծությունը և ձեռնարկած բոլոր միջոցները բերդը գրավելու համար, սկսեց խնդրանքով դիմել: Պատգամավորներ ուղարկեց Ռեուտին, որ բերդի ամրությունը վստահելով, իզուր մի քանի զինվորներով չպատերազմեր պարսկական ահագին զորքի դեմ, այլ կամավոր բերդը հանձներ Պարսկաստանին և հանդիստ ապրեր: Բայց քանի որ Գանձակը արդեն գրավված էր պարսիկների կողմից և խզվել էր Շուշիի կապը Տփխիսի, Գանձակի, Նուխիի և Շամախիի հետ, այդ իսկ պատճառով Ռեուտի դրությունն անտանելի էր և վտանգավոր: Այս ամենի հետ մեկտեղ Ռեուտը, որ միշտ հետևում էր Քյանդխուդա-Խաչատուրին և Նյառաթյովին, մերժում է այդ առաջարկությունը՝ հայերի աջակցությունը, հա-

վատարմությունը, բերդի ամրությունից ավելի անառիկ համա-
բելով: Այս պատգամավորներին միացել էր նաև մեզ ծա-
նոթ Շուշեցի հայ Գյանջում-աղան, որ բերդի կողմից նշա-
նակվել էր սուրհանդակ:

Երբ երրորդ անգամ բերդի կողմից մերժվեց այս ա-
ռաջարկությունը, Աբաս-Միրզան դիմեց պարգևների խոստ-
մանը: Բեջան-խանի միջոցով, ով պարսից պատգամավոր էր,
և Գյանջում-աղայի ձեռքով երդվեց սուրբ Ղուրանի վրա,
որը Բեջան-խանի պարանոցից կախելով ուղարկեց Քյանդ-
խուդա-Խաչատուրին և Նյառաթյովին՝ ասելով. «Եթե այս
հայ տղամարդիկ ինձ հանձնեն Շուշին կամ հետ քաշեն ի-
րենց օգնությունն ու օժանդակությունը, Ռեուտին ապաս-
տան թողեն Շուշին, ես սիրով կկատարեմ իմ պապ՝ Աղա-
Մամադ-Շահի, որոշածը, Ղարաբաղի հարազատ մելիքությունն
իր նախկին իրավունքներով վերականգնելու և ճրռ-խանու-
թյունը կործանելու համար: Բացի այդ՝ երդվում եմ կա-
տարել Քյանդխուդա-Խաչատուրի և Նյառաթյովի բոլոր ա-
ռաջարկությունները, ինչպես պահանջում է իմ երդման
սրբությունը»: Բեջան-խանին Ղուրանով ուղարկեց նաև
Թարխանյան Սափարի-Յուզբաշու մոտ, այդ նվիրական գրքի
վրա երդվելով, հավատացնելով, որ եթե Սափարի-Յուզբաշին
դադարեցնի բերդ ալյուր մատակարարել շահական կնիքով
հաստատված հրաման կստանար և կդառնար Ղարաբաղի
խանության հարազատ մելիքների նախագահը: Պատգամա-
վորների երթևեկությունը մի քանի անգամ կրկնվեց թե՛
Ռեուտի, թե՛ այլ 2 հերոսների և թե՛ Թարխանյանի մոտ
և ամեն անգամ բացասական պատասխան ստացավ:

Աբաս-Միրզան նկատելով, որ բերդը պաշտպանողնե-
րը հայեր են, և ոչ թե ռուսներ, նկատելով, որ անկարող
է իր կողմը դարձնել հայերին, նկատելով նաև, որ Կնյազ-
Մադաթովը կարող էր Տֆխիսից հասնել և իր բազմամյա
պատրաստությունը ջուրը գցել, դիմեց սպառնալիքի և գաղտ-
նի թելադրության: Իր բանակը փոխադրեց Շուշիի հյուսիսա-
յին կողմի սարահարթը և գիշեր ու ցերեկ անընդհատ սարսա-

փելի կերպով ոմբակոծեց բերդի պարիսպները: Իսկ Մեհտի ճըռ-խանը գաղտնի կերպով ստացավ իր պաշարած համա-խոհ ճըռ-բեկերին, որպեսզի նրանք որևէ կերպ բերդի արևելյան կամ հյուսիսային դուռը գիշերով միջից բացեին և բերդը հանձնեին Աբաս-Միրզային: Ճըռ-խանն այս ամե-նը գլուխ բերելու համար արդեն շատ վաղուց կաշառել էր այդ ճըռ-բեկերին մեծաքանակ ոսկով: Բայց այս ձեռնարկում-ներն էլ ապարդյուն անցան, քանի որ բերդի պարիսպները մնացել էին անկործան, իսկ ճըռ-բեկերի մարդիկ վախեցան հայ քաջերից:

Վերջապես թագաժառանգն օտարազգի ռազմագետների որոշմամբ, այսինքն՝ իտալացի, գաղիացի և օսմանցի պատերազ-մագետների խորհրդով փորձեց ականներ փորել տալ բեր-դի պարսպի գնդակն ընկնող հեռավորությունից, որպեսզի վառոդով պայթեցներ պարիսպը և ճանապարհ հարթելով գրավեր Շուշին: Այդ որոշումը նույնպես ապարդյուն անցավ:

Մի կարևոր բան, որն անկարելի էր անուշադրության մատնել և պակասության կեղտ դնել պատմագրության վրա: Ինքս գտնվելով պարսկական բանակում, ամեն ինչի ակա-նատես էի: Երկար ժամանակ պատերազմական ասպարեզ դարձած և պատմական մեծ նշանակությամբ փայլած Ղա-րաբաղը շատ Մադաթովներ էր ծնել և կրթել էր իտալա-ցի, գաղիացի, օսմանցի և պարսիկ ռազմագետներից ավե-լի հմուտ մասնագետներ, որոնք էին՝ Նյառաթյովը, Քյանդ-խուդան, Օշափը, Կայծակը, Սափարի-Յուզբաշին և բոլոր քաջերը: Ահա նրանք էին Շուշին պաշտպանում պարսկա-կան ահագին զորությունից և ջրի երես հանում այդ ռազ-մագետների բոլոր ձեռնարկությունները և հմտությունները: Բայց այդ դյուցազուն քաջերը մերժեցին բերդը թշնամուն հանձնել և վատ անուն թողնել Ղարաբաղի տղամարդկանց վրա, մահն ավելի լավ համարելով, քան անանուն կյանքը:

Ականահատներից շատերը քաջերի գնդակներից մա-հացան, այդ գործը որոշվեց անել գիշերով: Սակայն Գայլ-Ուհանի գիշերը տեսնելու կարողությունը այդ ձեռնարկու-

մը ևս խաթարեց, նրա արձակած գնդակները նշանակետին չէին հասնում: Բացի Գայլ-Ուհանից, ռազմագետ քաջերն ամեն գիշեր վառելիք էին լցնում և վառում հին վեր-մակ, անկողին և ուրիշ հին իրեր էին նետում պարսպի կասկածելի թվացող ուղղությամբ, որպեսզի դրանց լույսով երևան և սպանվեն ականապատողները: Կարելի է ասել մինչև առավոտ այդ ջահերը պարսպի արտաքին կողմից աստղաշղթայի էին նմանվում, որոնք արգելում էին հան-դուգն ականապատողներին՝ հետ կանգնել իրենց անզուսպ ձեռնարկությունից: Պետք չէր մոռանալ, որ օտարազգի ռազմագետները զարմացած էին Ղարաբաղի ռազմագետ հայ քաջերի հմտությունների վրա:

Պաշարումը տևեց 48 օր: Բերդը մնաց անառիկ, հա-մախմբված հայերն անկոտրում, օտարազգի ռազմագետները՝ զարմացած, Աբաս-Միրզան՝ հուսահատ, Մեհտի ճրռ-խանը՝ գլուխը կախ, իսկ պարսկական զորքը՝ ամոթահար:

Այնուամենայնիվ, հայ գավառաբնակների վնասները շատ էին, քանի որ անպատրաստ ժողովուրդը ենթարկվել էր պարսիկ ավազակների հանկարծակի հարձակումներին, չփոթ-ված էր և ժամանակ չէր ունեցել ամրացնել իր գույքն ու անասուններն անմատչելի տեղում: Եվ որ ամենամեծն էր, անգամ իրենք չկարողացան պաշտպանվել միասնական բերդերում: Հետևաբար, պարսիկ և թուրք ավազակները բանակը բերեցին Խաչեն, Ջրաբերդ ու Գյուլիստան, և այդ գավառներից շատ գերդաստաններ գերի վերցրին, որոնց մեջ էին Ջալալյան Սարգիս մետրոպոլիտը, Բաղդասար եպիս-կոպոսը, մի քանի վարդապետեր, Մելիք-Վանի Աթաբեկյա-նը և Մելիք-Ցրեյդոնյան Մելիք-Հովսեփ Բ-ն: Թեև թագա-ժառանգը սաստիկ բարկացած էր հայերի վրա, ովքեր բեր-դը իրեն չհանձնեցին, բայց փափկեց տեսնելով գերիների խղճալի դրությունը և լսելով այդ հոգևոր ու աշխարհիկ ազ-գապետերի աղաչանքները: Բացի Վարանդա և Դիզակի գա-վառների գերիներից, ովքեր ուղարկվել էին Պարսկաստան, ազատեցին բոլոր գերիներին, իսկ անասունների կեսը նա

վերցրեց որպես կերակուր իր զորքի համար:

Բերդի պաշարման 48-րդ օրը, թագաժառանգն իր որդի Մամադ-Միրզայից, ստացավ հետևյալ նամակը:

Ծե.

«...Վրաց Ալեքսանդր արքայազնն իր զորքով սարսափ տարածեց Թիֆլիսի և նրա գավառների բոլոր բնակիչների վրա, բավականին ավերածություններ պատճառելով և այս սպառնալի լուրը արագ-արագ Թիֆլիս ուղարկելով: «Իմ սիրելի վրացիներ, Մադաթովի հրաշագործությունների վրա հույս մի դրեք, նա արդեն ռուս է: Հույս մի դրեք սակավաթիվ ռուս զորքի վրա, որ ոչինչ է համեմատելով պարսկական անթիվ զորքի հետ: Մի՛ հավատացեք Երմոլովի դատարկ խոստումներին և անհույս մեծախոսություններին: Ռուսական զորքից փրկություն մի ակնկալեք, որ Թիֆլիսից շատ հեռու և բացակա է և դեռ Դաղստանում է՝ իր տեղում անշարժ: Շուտով, շատ շուտով Աբաս-Միրզան Թիֆլիս կմտնի իր 100000 զորքով, որն արդեն Շուշին և Գանձակը գրաված մոտենում է ձեզ: Հիշեք, Աղա-Մամադ-Շահի Թիֆլիսում արած բարբարոսությունները և իմ հայր Հերակլի գերևարությունն անհնազանդության պատճառով: Ուրեմն, իմ սիրելի վրացիներ, շտապեք շուտով ենթարկվել պարսկական բարեպաշտ թագաժառանգին, որ վայելեք կյանքի և ունեցվածքի ապահովությունը, ապա եթե չենթարկվեք, Թիֆլիսը կտեղափոխվի»:

Մի քանի օրից հետո, հրեշտակի պես, Աղստափում հայտնվեց Մադաթովը Ներսես անունով մի հայ եպիսկոպոսի հետ, սակավաթիվ զորքով, որին թողնելով դաշտերում, ինքը եպիսկոպոսի հետ բարձրացավ լեռները և խնդրելով ռուսական զորքին, միացրեց լեռներն ապաստանած գավառացի հայ տղամարդկանց հեծելազորը: Զեկյամ գետի

մոտ պարտվում է Մադաթովի զորքից Ալեքսանդր արքայազ-նի զորքը և փախչում է դեպի մեր բանակը, որը հաստատ-ված էր Շամխորում: Ամիրխան-Սարդարն այս լուրը լսելուն պես Զոհրաբ-խանի առաջնորդությամբ մի գունդ թնդանո-թաձիգ զորք ուղարկեց Մադաթովի դեմ, Մամաթ-Զաման-խանը, Իրզա-խանը, Միրզա-խանը և Ալեքսանդր արքայազնն՝ իրենց զորախմբերով: Բայց այս զորքը նույնպես պարտված ետ դարձավ: Այդ պատերազմում կային Իրզա և Միրզա խա-ները, 70 ձիավոր պատմում էին հայ հեծելազորի բուռն հարձակման մասին:

Մադաթովն արծվի արագությամբ հասավ Շամխոր գետի մոտ իր փոքրիկ բանակը եռաթև կազմեց, եռաթև պատե-րազմեց նաև մեր բանակը, երկու կողմից որոտացին ահեղ թնդանոթները: Միմյանց բախվեցին բանակները, սաստկա-ցավ պատերազմը, մեր զորքը քաջաբար կռվեց, սպանվեցին Ամիրխան-Սարդարը, մի քանի խաներ, 2400 հետևակ, 386 ձիավոր, 60 թնդանոթաձիգ զորք: Մեր կողմից դերի ընկավ 100 թնդանոթաձիգ, 1000 ձիավոր և 100 հետևակ զորք՝ 2000 հրացանով, 3 թնդանոթով և շատ ռազմամթերքով հանդերձ: Այս պատճառով ես վերցրի մնացած զորքս և շտապեցի միանալ մեր Գանձակի զորքին: Մեր զորքը հի-մա ամրացած է Գանձակի բերդում և ես սպասում եմ Ձեր հրամանին: Դիլիջանի կիրճը բաց մնաց թշնամու առաջ, որը մեծ վտանգ է սպառնում Երևանի բերդի և Արարատ-յան նահանգին: Բայց Կնյազ-Մադաթովը, մեզ հետապնդե-լով, ընկել է մեր հետևից: Մեր դրությունն ամեն ժամ ա-վելի է բարդանում Մադաթովի վախից: Ձեր վիճակն ինչ-պե՞ս է: Շուշին գրավվե՞ց, թե՞ դեռ առանց գրավելու է մնում...»:

Աբաս-Միրզան, թեև շատ տխրեց Ամիրխան-Սարդարի և սպանված խաների մահվան և գերի ընկած զորքի հա-մար, բայց սփոփվեց իր որդու ազատությամբ: Զտխրելով, ա-ռանց գրավելու թողեց Շուշին և իր բանակով շտապեց Գանձակ, որպեսզի ռուսներին հետ մղեր: Պարսկական բա-

նակը Թարթառ գետի աջ ափին թողեց իր ավելորդ ծանրությունը և շուտով միացավ Քյուրակ-Զայի աջ ափին գտնվող իր մյուս զորաբանակին: Մամաթ-Միրզան պատմեց, որ ինքը տեսնելով, որ Մադաթովը մոտենում է Գանձակին, նախընտրում է թշնամուն թողնել գրաված Գանձակը, քան ընկճված զորքով պատերազմել Մադաթովի հետ և կրկին պարտվել: Պարսիկ հեծելազորը շատ էր ընկճվել հայկական զորքի հնարամիտ և կատաղի հարձակումներից, ովքեր կիրթ հարձակմամբ անվնաս էին մնում, իսկ հակառակորդին կոտորում և վիրավորում, որ Իմամ-Հուսեյն մարգարեն մնացել էր Գանձակում՝ տեղի հուսահատված մահմեդականներին խրախուսելու համար:

Փոքր ինչ հետո 2 թուրք ձիավոր սրընթաց եկան և պատմեցին թագաժառանգին. «Ռուսաց Նիկոլայ Կայսեր Պասկևիչ գեներալը, որ նշանակվել էր ռուսական բանակի հրամանատար, մի գունդ հատուկ զորքով մտավ Գանձակ և միացավ Մադաթովի զորքին»:

Տակավին անխզելի էին պարսկական բանակի կապերը Նուխիի, Շամախիի, Բաքվի և Պարսկաստանի հետ: Նույն օրը պարսկական բանակին միացան Սուրխայ-խանը 1000, Նուխիի Սալիմ-խանը 1100, Մուստաֆա-խանը 800 և Միրզա-Ատի-Գյոգալը՝ 500 ձիավոր զորքով: Բայց սրանից 10 օր առաջ Շահը գրել էր Աբաս-Միրզային, որ ինքը Արտավիլում 50000 զորք էր գումարել, որով ինքը շուտով միանալու էր թագաժառանգի բանակին և անձամբ է գտնվելու պատերազմի դաշտում և խրախուսելու իր զորքին, ինչպես հատուկ է պարսկական շահերին: Այս հավաքական և սարսափելի ուժը վերականգնեցին թագաժառանգի եռանդը հարձակվելու ռուսական զորքի վրա և բնաջնջելու նրանց: Մանավանդ, երբ տեղեկացավ այն 2 զինվորներից, որ ռուսական բանակը կազմված էր 2000 անկանոն, 6000 հետևակ կանոնավոր զորքից, 1000 ձիավոր ղազախներից, 2500 հայկական հեծելազորից, 1000 վրացի աղքատ զորքից և 24 թնդանոթից, ավելի վստահ դարձավ և իր

հաղթանակը հաստատ համարեց: Որովհետև ռուսական զորքի թիվն իր զորքի թվից 20 անգամ պակաս էր, այնպես, որ նա թշնամու մի զինվորի գլխին 20 զինվոր էր կանգնեցնում, այդ իսկ պատճառով չտապեց ապահովել Դիլիջանի կիրճը, որպեսզի թշնամին չմտնի Երևան և գրավեր Արարատյան նահանգը, որը ազատ էր պարսկական զորքից: Այդ պատճառով վրաց Ալեքսանդր արքայազնին իր հեծելազնդով ուղարկեց, որ լեռնային ճանապարհով գնա և պաշտպանի կիրճը:

Աբաս-Միրզայի նախագահությամբ ռազմագիտական ժողովը որոշեց անմիջապես պաշարել Գանձակը, խզել դրա կապը Թիֆլիսի հետ, որով էլ Գանձակը կգրավեին մինչև Շահի հասնելը՝ քանի որ այս բերդը չուներ Շուշիի ամրությունը: Պարսկական բանակը Քյուրակ-Զայից Գանձակ գնաց այս ստվերագիծը իրականացնելու: Բայց քանի որ զորքը հոգնած էր՝ կես գիշերին որոշեց հանգստանալ Գանձակից մեկ ու կես ժամվա ճանապարհ հեռավորության վրա:

Նույն առավոտյան, այն է՝ սեպտեմբերի 13-ին, հանկարծ երևաց Մաղաթովն իր բանակով, եռաթև դասավորեց իր զորքը, թնդանոթաձիգ և հետևակ զորքը մեջտեղում, հայկական հեծելազորը 500 զազախներով՝ աջ և վրաց հեծելազորը նույնքան զազախներով՝ ձախ թևում: Թագաժառանգն էլ միևնույն ձևով դասավորեց իր զորքը, աջ թևի վրա կառավարիչ նշանակեց Ալլահյար-խանին և նրան օգնական՝ Նազար-Ալի-խանին, ձախ թևի վրա նշանակեց իր որդի Մամաթ-Միրզային, իսկ Նովրուզ-Ալի-խանին փախստական խաներով հանդերձ կարգեց նրան օգնական: Ապա քաջալերեց և խրախուսեց իր զորքին այս խոսքերով. «Արիացե՛ք զավակներ, Մուհամեդ սուրբ մարգարեի Իսլամ (ուղղափառ) կրոնը, սուրբ Իմամ Ալիի լույս հավատը, Պարսկաստանի պահապան հրեշտակը, նախնի շահերի հոգիները, պարսից ազգի ամբողջությունը և Ֆաթալի-Շահի սերը հրամայում են ձեզ շրջապատել և ջնջել մեր թշնամուն: Մեր

սուրբ հայրենիք Իրանը սպասում է ողջունել ձեր դարձը և գովաբանել ձեր փառավոր հաղթանակը»:

Պարսկական ուղղաձիգ զորքի գլուխ անցավ Աբաս Միրզան, իսկ ռուսականի՝ Կնյազ-Մադաթովը: «Կրա՛կ, ա-ռա՛ջ, կրա՛կ, առա՛ջ».- գոչեց թագաժառանգը, որոտացին թնդանոթ ու հրացան, թնդաց օդը, դղրդացին սար ու ձոր, ամպը ծածկեց մթնոլորտը, արագ առաջ անցավ պարսկա-կան զորաշղթան և շտապեց շրջապատել հակառակորդին: Իսկ ռուսական զորքն անշարժ և անկրակ մնաց այդ վայրում: Ռազմագետ Կնյազ-Մադաթովը ռուսերեն բարբառով գոչեց, իր լայնալանջ կուրծքը քաջաբար թշնամու գնդակին տված. «Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ սլացեք»: Երկու ուղղաձիգ ճակատ-ները բախվեցին միմյանց: Սրերով կատաղի խոցեցին մեկը մյուս-սին: Պարսկական ուղղաձիգ զորքը հետ մղվեց, որին հետևեց ռուսական անընդհատ նետահարումը: Հետ մղվեց և պարս-կական ձախ թևը հայ[1] սուսերամերկ աջ թևից՝ մեծ կոտո-րած թողնելով ռազմի դաշտում: Միայն պարսկական աջ թևից հաջողությամբ հետ մղվեց ռուսական ձախ թևը, բայց աջ թևի հայերն ու դազախները, Մադաթովի հրամանով, օգ-նության շտապելով աղեղնաձև թրերով և երկար նիզակներով՝ հաղթեցին: Մեծաթիվ մահմեդականներ կոտորվեցին, վիրավոր-վեցին և գերի ընկան, հաղթողին ավար մնացին շատ թնդա-նոթներ, հրացաններ, դրոշակներ և ռազմամթերք, Աբաս-Միրզան իր ամբողջ բանակով փախուստի դիմեց: Մադաթովը հետապնդեց փախստական բանակին հայ, դազախ և վրացի հեծելազորով և հինգ ժամվա ճանապարհ անցավ: Պարսկական զորքից շատերը հետզհետե փախան մոտակա լեռները, թաքնվեցին այգիներում, Մեհտի ճրռ-խանը փախստական

[1] Ընթերցողները թերևս հիշում են դեռևս սովի ժամանակ Վրաստանի գա-վառները գաղթող հայ ժողովրդին: Հիշում են նաև, որ գաղթականների մի մասը մնաց Շամխորի, Դազախի, Շամշադինի գավառներում: Որ-տեղ մինչ այսօր էլ կան: Այս 2000–անոց հայ հեծելազորը այդ գաղ-թականներից էր:

խաներով գնաց դեպի Դիզակի կողմերը, իսկ հայրենասեր Աբաս-Միրզան բանակի տասերորդ մասով պարտված մտավ Պարսկաստան, թաքուն և առանց հետ նայելու անցավ Արաքս գետը: Անկարելի եղավ հաշվել սպանվածների, գերեվարվածների, վիրավորվածների և ցիրուցան փախածների թիվը:

Այդ ժամանակ մի պարսիկ զինվորական Գանձակից փախած Պարսկաստան մտավ, թագաժառանգին պատմեց, որ Գանձակի հայերը մեծ հանդիսավորությամբ դիմավորեցին և պատիվ տալով շնորհավորեցին նրա հաղթանակը և որ Միսկին Պուրճի անունով մի հայ բանաստեղծ մի բանահյուսական երգով գովում և փառաբանում էր Մադաթովի հաղթանակը, ծաղրում՝ պարսկական զորքի վախկոտությունը: Այդ երգը, որը հորս միջոցով հետո ձեռք բերեցի հենց նույն Միսկին Պուրճուց, տեղադրում ենք այստեղ թե՛ բանաստեղծի անունը անմահացնելու, և թե՛ ընթերցողների հետաքրքրությունը շահելու համար, թեև այն գրած է թուրքերեն լեզվով:

«Տինը խալամ՝ էյլիբը, կեօ՛ըն նէչա ջան գյալըը.
Շահի-Աբաս-Միրզա աբը, Իրանայ Սուլթան գյալըը.
Օն մին Արաղ ղօշունի, ալլի մին թյուրքմանգյալըը,
Աճալլարի ազուփ տըը, պաշլարինան գան գյալըը.
Տինի խալամ՝ էյլիբը. (նաքարատն է):
Պու գյալան օթուզ իլին թէնթէնէ տըը,
Ուչ յուզ թօփչիպաշի աբը, յուզ ալի թօփխանա տըը,
Պէշ յուզ թէնէ զենպէրէկ [1], ալթը մին ճապխամէ տըը,
Սեկկիզ յուզ աշպազի վար, տէօրա յուզ զաֆէխանէ տըը
Օնտէօրա մին յուզպաշի տըը, ետտի յուզ սուլթան տըը,
Պէթպիտպուռ օլմազայ քյուլլու Արաղստան գյալըը:
Օն մին ղօշունի յուզ չէվիրտի Գյանջայի [2] ալմազալ,
Ղըրխ մինի օրտա կալտի Ղարաբաղի ալմաղայ

---

[1] Փոքրիկ թնդանոթ:
[2] Գանձակ քաղաքը:

Ղալա[1] յուչյուվն չալրշըր, կիրասընա սալմաղայ.
Գյանջալը քեաֆին կէյուպ, հազըր օլուբ կեթմազայ,
Շահզատայա քէօմէկ կէտր գըլիճ ալուբ չալմաղայ.
Պու տահըր տէօվթէլէր[2] էյզան մուսուրման գեալըր:
«Սարը – Կեավուր» տեյիպան Զուռնապաթա չաքըլաի,
Օրտա թափ էյլամատի, «Գեանջա՛» տէյուբ աքլտի.
Սրհեր չազի Գեանջալը եարազլանուբ թէօքլտի,
Խան–Բաղընըն կապաղընտա պարխանալար սէօքըլաի,
Պեօլա չարխը կեարտիչ սըրատա չօխ մուսուրման սիքըլտի.
Թալանուբ չէյլարնի, համի լիվթի իվրեան[3] գեալըր:
Ամիրխան-Սարտար ինան կէօնաէրտիլար Արազըրլարի,
Ղըլիճ, թիվէնկ թափլմազ, ղէկէնէկ եարազլարի,
Եախշը թէփմէ քեչատան սընտըրմիչ փափազլարի.
Գէալէն քիմի երխալար էրմէնլարըն բաղլարի.
Էշշէկլէրէ իվքլամիչ օ նամազ պարտաղլարի.
Համի սէնէտ, էսնաֆքետր, չէքիվճ ի զընտան գեալըր:
Ղըրխ կիվն կեչտի արատան, գեալտի ռուս սատասի,
«Աղասաէփտա կուրուբ օրտու[4] պազար ատասի,
Իկիրմի պօլկովնիկ տըր Մատաթովն սէրքէրտասի.
Գեանջայա եթիշմազա իվչ կիվն կօյուփ վէտասի:
Ամիրխան–Սարտար ալտի Մատաթովն ղատասի,
Ջանի չըխտի Շամքոռտա, լէշինա ղուրզուն[5] գյալըր:
Ուղուրլու – խան շատ օլուպ թայ պասուպ ենկիվնա,
Յուչ փէնէ թափխուր[6] չախտի քիհեր ալթըն թէրքինա,
Էրմէնի պախտ պիլմազ մուսուրման ռէնկինա,
Զօխ հէօքմինան տանըշըր, կիվանուբ թիվէնկինա
Երիչ պասուբ կէթտիլար Լէմսալարն[7] ճէնկինա

---

[1] Շուշի բերդը թուրքերեն Ղալա (քերդ) է կոչվում:
[2] Աճապարանքով:
[3] Բոլորովին մերկ:
[4] Բանակը դրած է:
[5] Արծիվ թռչուն:
[6] Փորքաշ ձիու:
[7] Գաղթական գերմանացիք, որ այդ Գանձակի մոտերում բնակվելով կոտորվեցին Ուղուրլու խանից:

Ուզուրլու-խան եանընա Լեմսա թէրի հեյվան գյալըր:
Թօփ սէսի պիզ էշիթտըխ, քի Շամբոսա տըր
Ղըզըլպաշատ թավ յլմազ, պէօիվկ, քիվէիվկեսփա տըր
Պաշէիլարը Շահզատա Բաբախան–Շահն նավա[1] տըր.
Փէրնամազա կետէնտա ղըզըլտան ալթավա տըր:
Ուռուս գեալտի սել քիմի, էօզկէ թէ հըր հավա տըր.
Նէճակիվնէքետը իվէունպիր պէօլլէ շեյթան գեալըր:
Իքի մին դրակոն տըր, պեղենուր լար աղինան.
Ալթի մին սալտաթի վար ղազան փափազինան,
Էքի մին աթլուէրմինի տըր էօզ եարազլարինան,
Օն իքին մին ղօշունի[2] տարաճախտըր տազլար ինան,
Մաթատով իշարուր տըր դօշունիթիվնդ արազինան
Քեա՛լ[3] քիմի տէօկիվշաճազ աշմազա մէյտան[4] գյալըր
Մաթատովն դաղապի թուլթտի մուսուրման ինան,
Ղօշունա հէօքմ պուեեուրտի. «Տօգրիրն նիզամինան».
Շամքոռն օ ախզլարի լէշ տէօշաթտի ջանինան,
Եօ աշուբ սել տխտի օ կըրմըզի կանինան.
Պու պէշէրա Ղրզլպաշ գեալմիշիտի զուրբանինան.
Շահզատա էօզի կեօնտէրուբ իվզ տեվե իվքը
քեաֆան գետլըր:
Կալտը, քի կէճա օլտը, սարվազ չըխտի ղալադան[5],
Նազար–Ալի–խան համըտան էվէլ կաշտի կապազատն,
Մուսուրմանլար չաղըրըր, սէս կէօթիվրուբ նալատան,
Եալվարըյլար սարվազայ, քի «Պիզի կուրթար բալատան»
Մատաթովա Պասկևիչ քէօմէկ գեալտը տալըտա,
Սարվազ կաշար տալպատալ. «Մատաթովասլան գեալըր»
Ղարաբաղտան խապար եթիշտի Շահզատիա,
Տէտիլար քի զօշուն համի կեթտիպատիա,
Ղափիլտան ռեասա գեալտի պիր էօզկեա ճիվան իկիատ.

---

[1] Բաբախան Շահի թոռ Մամատ Միրզան:
[2] Զորք:
[3] ոմեշի նման:
[4] Պատերազմի ասպարեզ:
[5] Գանձակի բերդից:

Շահզատա մէթէլ ղալուբ պիլմիր քի քիմա տիյա.
Թէզ պուեուրտի խանլարա, տահը պախմրը վէտիյա.
Խանլար իվէիվն Շահզատա պիր պելա Ֆերման գեալըր:
Շահզատանըն իւր մին ղօշունի կաթտիլար Շեյխըն[1] եանընա.
Մատաթով ինան Պասկևիչ ճալատրլար ջանընա.
Տէօշէթտի լէշլէրընի, պախ ախտըղը կանընա.
Ղըզրլպաշն ղօշունի ղաչար, կիտէր վաթանընտ.
Արազըն օ թայընտա Շահզատա եթիշի սայրնա.
Կէօրտի քի իվզ մին ղօշունտան օն մին սէքսէն գեալըր:
Ուռուս թօփի աթանատ օլար ղաչաղա տիվշտի,
Քիմիսի քեօլա ասրը, քիմիսի տաղա տիվշտի.
Քիմիսի եօլ թափմազ, վաթանտէն ուզախ տիվշտի,
Քիմիսի կիվլլէ ալուբ թարփաղա տիվշտի.
Քիմիսի Գեանջայա ասրը ղաչուբ բաղլարա տիվշտի.
Տէսնէն քի թազիտան ղաչմիշ տովշան գեալըր:
Պէշէրա Միսկին–Պուրճի[2] եալան ղաթմազ սեօզընա.
Շահ ղոշունի ղաչանատ թամաշա տըր թօզընա.
Սալտաթլար ղուտուրուբ լար, կան տօլուբ կէօգլարընա.

---

1 Կրոնամոլ Իմամ Հուսեյն մարգարեն, որ պարծենում էր հետ մղել աղոթքով թշնամու թնդանոթի և հրացանի գնդակները:

2 Հայոց աշուղներն իրենց սազերով և երգերով փոքր ծառայություն չեն արել մեր սիրելի ազգին, այլ իրենց սազերը վերցրած ժողովուրդն իրենց գլխին հավաքած՝ տներում, հրապարակներում և բացօդյա տեղերում երգել են սեր ի Աստծո, սեր ի կրոնը, սեր ի Ազգ, սեր ի Հայրենիք և այլն, և այլն և այսպիսով ժողովրդին առաջնորդել դեպի բարին, առաքինությունը և դեպի օգտակարը: Պուրճին գանձակեցիներ և Հայաստանի հայ աշուղներից առաջին կարգի բանաստեղծներից մեկը: Նա երգում էր հայերեն և օտար լեզուներով, հայրենասիրական, ազգասիրական, գովերգական, ծաղրական և սիրային շատ երգեր, որոնց մեջ փայլում են իր բնատուր հանճարը և բանասիրական վառ ավյունը: Բայց ցավալի էր տեսնել, որ նրա երգերի մեծ մասը ոչ լույս տեսավ և ոչ էլ գոնե գրվեց, այլ մնալով ավանդության մեջ կամաց – կամաց անհետանում է: Այս հայտնի բանաստեղծը 1848 թ-ին Ասկերանում սպանվեց Մռղ Զաման ավազակի կողմից: 1881 թվականին խնդրեցինք Թադևոս եպիսկոպոս Տեր Դանիելյանից այն երգը, որ ավանդությամբ մնացել էր Դանձակի ժողովրդի բերանում: Բաժանված ժամանակ տեղ – տեղ տարբերություններ կային: Մենք ձեռագիրը ամբողջությամբ նույնը թողեցինք:

Շահզատանը՝ զօշունի զաչտի Արազ տիվզընա.
Մատաթովը՝ զարպընտան Թավրիզի Թէհրան գեալը.
Աբաս–Միրզա–Շահզատա պասլմիչ փէչման գեալը:

ԾԶ.

Փախստական խաները երկու մասի էին բաժանված: Մեհտի ճրռ-խանը մի մասի պարագլուխ լինելով՝ մտնում է Վարանդա, Դիզակ, Զանգեզուր, Կապան, Մեղրի, Բերքաշատ ու Օրդուբադ և փորձում է Պարսկաստան տեղափոխել այդ գավառների հայ ժողովրդին, հավատացնելով, որ Մադաթովը արդեն մեռել է պատերազմում, որ Աբաս-Միրզան գրավել էր ոչ միայն Շուշին, Գանձակը, Բաքուն, Շամախին, Նուխին, այլև՝ Թիֆլիսն ու Վրաստանը: Սակայն հայերը ոչ միայն չեն հավատում, այլև՝ հալածում են պարսիկներին իրենց համախոհներով: Իսկ Մուստաֆա-խանը, որ մյուս մասի պարագլուխն էր, միևնույն ստերը հեղեղելով Շամախիի հայերի ականջներին, փորձում էր Պարսկաստան տեղափոխել հայերին, բայց տեսնելով, որ անկարող է այդ գործը գլուխ հանել, մի քանի հայկական գյուղերի ա-նասուններ է կողոպտում և ավազակի նման մտնում Պարսկաստան: Իսկ Մադաթովն արագ մտնում է Շուշի, մխիթարում և շնորհակալություն հայտնում հայերին, որ քաջությամբ պաշտպանել են բերդը և ազատել Ռեուտին և ռուսական զորքը: Ապա ցանկանալով պարսիկներին սարսափեցնել, հավաքում է Ղարաբաղի, Նուխիի և Շամախիի քաջ տղամարդկանց, որպեսզի արշավեն Պարսկաստան: Իսկ Պասկևիչը որոշում է հարձակվել Արարատյան նահանգի վրա և այն գրավել:

Մադաթովը, ում բանակը բաղկացած է լինում 3000 հայ հետևակից և 5000 հայ հեծելազորից իրենց առանձին դրոշակներով, մի գունդ ռուս հետևակից, 600 ձիավոր դա-

զախ զորքից և մի քանի թնդանոթից: Նույն թվականի (1826) դեկտեմբեր ամսում անցնում է Արաքս գետի աջ կողմը, ներս մտնում Թիլավուրտի կիրճով, հարձակվում այն թափառական մահմեդականների վրա, ովքեր անընդհատ ասպատակում էին Ղարաբաղի վրա: Հետո հարձակվում է Միշկինի գավառի վրա և այդտեղի ցեղերից հափշտակում 80000[1] ոչխար, 15000 եզ, կով, հորթ, երինջ, 4000 ձի, 3000 ուղտ և ավանակ, որոնք իսկույն փոխադրվում են Ղարաբաղ: Մադաթովը հաղթանակով մտնում է Միշկինի Լոռի քաղաքը, հետո Ղարաբաղ և ապա մոտենում է հեքերի քաղաքին, այն ևս գրավելու համար: Բայց քաղաքի կողմից պատգամավորներ են ներկայանում Մադաթովին և հպատակություն խոստանում Ռուսաստանին: Վերջապես Մադաթովն ստիպված, ձմռան ցրտին այսքանը բավական համարելով, վերադառնում է Ղարաբաղ:

Այս հայ դյուցազնի Պարսկաստան մտնելը և հաղթանակով առաջ գնալու լուրը տարածվեց ամբողջ Իրանում: Ամենուրեք բերնեբերան անցան այս խոսքերը. «Շիրի նառ Նյառաթյով, տիշմունի Ալի Մադաթո՛վ» (գալիս է արծիվների թագավորը, ալիականների թշնամի Մադաթովը): Սոսկաց Պարսկաստանը, սարսափեց Թավրիզն ու Թեհրանը, զարմացավ հասարակությունը, զարհուրեցին շատերը և դողացին փախստական խաները: Այդ իսկ պատճառով բոլորն շահերն ու խաներն իրենց գերդաստանները տեղափոխեցին այլ տեղեր, որպեսզի ազատեն Մադաթովի ձեռքից: Ինչպես սաստիկ վախեցած մարդու արյունը հոսում է դեպի սիրտը, ծանրացնում և թրթռացնում այն, այդպես էլ՝ Արաքս գետի աջ ափին տեղ–տեղ հավաքված զինվորները սարսափած վազեցին դեպի Պարսկաստանի սիրտը, Թավրիզ և այն նույնպես թրթռացրին: Փախչելուց առաջ այս զորքերն Աբաս-Միրզայի հրամանով այրեցին Միշկինում, Հեքերում և

[1] Այս թվերը գրված էին հայերեն տառերով:

նրանց շրջակայքում ցորենի, գարու, խոտի և հարդի շատ ամբարներ և դեզեր, որպեզի չանցնեն թշնամի Մադաթովի ձեռքը:

Ռուսական աշխարհակալությունն այս հաղթանակներով չբավարարվեց, այլ ձգտեց գրավել նաև Արարատյան նահանգը: Բայց ինչպես հատուկ էր ռուսական քաղաքականությանը, Մադաթովի բացակայության պատճառով պետք է ունենար մի հայ մարդ, մի փորձված, հավատարիմ և անձնվեր տղամարդ, ով ազդեցություն ունենար Սբ. Էջմիածնի միաբանության վրա, ով վհատված էր, հպարտ Ցիցիանովի արարքով և հայոց կաթողիկոսի գերությամբ, ով հեղինակություն կունենար Արարատյան նահանգի ժողովրդի մեջ, ով քաջածանոթ կլիներ այդ նահանգի կիրճերին և ծակուծուկին, ով կարողանար միացնել այդ ժողովրդական միաբան ուժերը ռուսական թույլ ուժի հետ և որին Պասկևիչն անձամբ առաջնորդեր Երևան, նախապես ապահովելով հաղթանակը: Այս բոլոր առանձնահատկություններով անթերի էր Աշտարակեցի Ներսես Եպիսկոպոսը, որ այդ ժամանակ Տփխիսի թեմի հայոց առաջնորդն էր և Երմոլովի ամենասիրելին:

Երմոլովն արդեն իմանալով, որ Ներսես Սրբազանը Ցիցիանովի ժամանակվանից մինչև այսօր քաղաքական նպատակներով մեծամեծ ծառայություններ էր մատուցել ռուսական տերությանը, խնդրում է Ներսեսից ընդունել այդ պաշտոնը և խոստանում է Արարատյան նահանգը գրավելուց հետո անձամբ տեղեկացնել ողորմած Կայսերը և իրագործել այն, ինչ որ մինչև այդ խոստացել էր: Ներսես եպիսկոպոսը ընդունում է այդ դժվար պաշտոնը, հավատալով Երմոլովի խոստմանը, նախ գաղտնի Էջմիածնից Հաղպատի վանք է տեղափոխել տալիս ծերունի Եփրեմ կաթողիկոսին և ապա գաղտնի նամակներով և քարոզներով պատրաստում Էջմիածնի ժողովրդի միաբանությունը և հետո խաչն իր աջ ձեռքն առած, իսկ ավետարանը ձախ՝ Դիլիջանի կիրճով առաջնորդում է Պասկևիչի զորքը: Աղստեվում և Երևանի մոտակայքում ռուսական զորքին միանում են Գանձակի, Ղազախի, Շամշադինի, Փամբակի, Շորագյալի գավառների

հայերը՝ առանձին դրոշակներով: Վերջապես այս համախմբված ուժերով գրավվում է Երևանը և հետո Արարատյան նահանգը: Սակայն մեծ Երմոլովը փոխվում է, Ներսեսը ուղարկվում է Բեսարաբիա և կրկին ամեն ինչ մնում է կիսատ: Երևանի Սարդար Հուսեյն խանը Պարսկաստան է քաշվում իր պարտված զորքով:

ԾԷ.

1827թ. Աբաս-Միրզան լսում է, որ Կնյազ-Մադաթովն իր ռուս և հայ զորքից բաղկացած բանակը տեղակայել է Արաքսի ձախ ափին և պատրաստ է գարնանը արշավել պարսիկների վրա: Ապրիլ ամսվա վերջին թագաժառանգին հայտնում են, որ Խուդափերինի կամուրջը կոտրվել էր և քշվել Արաքս գետից, որ Մադաթովը հետ էր կանչված ու նրա հրամանատարության պաշտոնը հանձնվել էր գեներալ-մայոր Պանկրատովսկուն: Աբաս-Միրզան ուրախացավ ոչ այնքան կամրջի փլվելուց, որքան Մադաթովի փոխվելով: Ոչ միայն նրա աչքն էր վախեցած Մադաթովից[1], այլև ամբողջ Պարսկաստանն էր ահաբեկված: Սակայն այս ուրախությունը կարճատև եղավ և անօգուտ անցան Աբաս Միրզայի բոլոր ջանքերը, քանի որ Խուդափերինի կամուրջը շատ շուտով կառուցվեց և ռուսները կրկին մտան Պարսկաստան և առաջ գնացին: Վերջապես Պարսկաստանը պարտված խոստովանեց և ակամա խոնարհվեց: Նա առաջարկեց պայ-

---

[1] Կնյազ Մադաթովը ամուսնացած էր մի ռուս կնոջ հետ, որից ժառանգ չուներ: Կնյազը 5 ամիս Տփխիսում անգործ նստելուց հետո Պետերբուրգ է հրավիրվում, նշանակվում Եգերյան 17 և 18 գնդերի ուրիշ գնդերի վրա, մասնակցում է ռուս-օսմանյան 1828թ. պատերազմին, հիվանդանում Շուլմա քաղաքի մոտ և մահանում նույն թվականի սեպտեմբերի չորսին: Հանգուցյալի դիակն իր կնոջ խնդրանքով տեղափոխվում է Ռուսաստան և ամփոփվում Ալեքսանդր Նևյան վանքում: Ինչպես վկայում են պատմությունները, Կնյազ Մադաթովը բոլոր պատերազմներում անհաղթելի էր մնացել: Կնյազ Մադաթովը Ռուսաստանի ամենահավատարիմ, քաջահաղթ, արդյունավետ և եզակի զինվորական է եղել:

մանագիր կնքել և վերականգնել հաշտությունը: Դաշինքը կնքվեց Թուրքմենչայում: Պարսկաստանը Ռուսաստանին վճարեց մեծաքանակ պատերազմական տուգանք, և հօգուտ Ռուսաստանի թողեց ոչ միայն Անդրկովկասը, այլև՝ Արարատյան նահանգը, որպես սահման որոշելով Արաքս գետը:

Երբ կանոնակարգվեցին այդ երկու կառավարությունների հարաբերությունները, Պարսկաստան վերադարձան բոլոր գերի զինվորները, Պարսկաստանը մոտ 26000 հայ գերդաստան տվեց Ռուսաստանին: Այդ գերդաստաններից շատերը բնակվեցին Արարատյան նահանգում[1], ոմանք Ղարաբաղում[2], իսկ ոմանք Նուխիի գավառում[3]:

Փախստական խաների թվում Մեհտի ճըռ-խանը ևս ստերով լի մեղայականով[4] դիմելով Ափխազովին՝ խնդրեց միջնորդել ռուսական կայսերը և թույլտվություն ստանալ Ղարաբաղ վերադառնալու: Հետո հրաման ստանալով՝ վերադարձավ Շուշի: Մեհտի ճըռ-խանն իր հանցագործ էությունը ճանաչելով, որոշել էր ցմահ ապրել Պարսկաստանում, բայց երբ իմացավ, որ մեծ Երմոլովն արդեն հեռացված էր, իր գաղտնի նամակները պահող Մադաթովը Ղարաբաղից բացակայում էր: Իր կեղծ փաստաթղթերը ընդունել և հուշատեր էր դարձել Ղարաբաղում, բայց նկատելով, որ ինքը բոլորովին ընկած էր և՛ Շահի, և՛ Թագաժառանգի աչքին ու անկարելի էր Պարսկաստանում բնակվելը, անհնար էր նաև Շուշի վերադառնալը, քանի որ իր բոլոր դավաճանությունները հայտնի էին ողջ ռուս պաշտոնյաներին: Մի հնարք մոգոնեց, այն է՝ քաղաքական հանցագործությունը ծածկել դրամով: Այս մեղայականը 15 անգամ սրբագրել տալով փոփոխեց, որով ինքն անպարտ ներկայացավ, իսկ հանցանքները բարդեց Մեծ-Երմոլովի, Կնյազ-Մադաթովի և Կուտուզովի վրա, նրանց անունները նույնպես աղտոտելով: Հետո այդ թուղթը,

---

[1] Այդ ժողովուրդը արարատցիներից տարբերվում է, իր պահպանած լեզվի ոճով և սովորություններով:

[2] Մարաղայում, Չայլուլում և Մեգտի շենում բնակվող ժողովուրդը:

[3] Ղայապաշի և այլ գյուղերի բնակիչներ (Նաիրի գավառ):

[4] Այդ թղթի օրինակը ընթերցողները կարող են կարդալ պատմության վերջում:

առանձին նամակի հետ մի հավատարմարարի ձեռքով, որպես հիշեցում ուղարկեց Կ.Ն. Ափխազովին: Ահա այսպես նրան հաջողվեց մաքրվել բոլոր հանցանքներից, քավել մեղքերը և արդարացած վերադառնալ Շուշի:

ԾԸ.

Հայրս երկու ամսից ավել է սաստիկ հիվանդ էր և անկողնում պառկած: Բարձր ջերմություն ուներ, այնուամենայնիվ, Շահի բժիշկները հուսադրում էին, որ կառողջանա: Թե ինչքան հոգ տարավ Ֆաթալի-Շահը հորս առողջության համար, անկարելի կլիներ այստեղ նկարագրել: Պատերազմների պատճառով Ղարաբաղի և Պարսկաստանի հարաբերությունները միանգամից ընդհատվել էին: Հայրս Ղարաբաղից նամակ կամ տեղեկություն չէր ստանում, այդ իսկ պատճառով անհանգիստ էր և բազմիցս տրտմագին կրկնում էր. «Հազար ափսո՜ս, եթե ողջ լիներ մեր սիրելի Շեյթանը, անգամ օդով մեզ համար նամակներ և տեղեկություններ կհասցներ»: Շատ չանցած, Փիլ-Առուշանը Բաղդասար եպիսկոպոսից մի նամակ բերելով հանձնեց հորս, ով իր թուլացած ուժերը հավաքեց, անկողնում նստեց, գրկեց իր վաղեմի ընկերոջը և կարդաց հետևյալ նամակը:

«Սիրելի Բեկնազարյանց, դեռևս չեք իմանում, թե այս երեք տարիների ընթացքում ինչեր անցան Ղարաբաղի վրայով, այդ իսկ պատճառով կարևոր համարեցինք ձեզ հայտնել այս տեղեկությունը:

Գանձակի հաղթանակից հետո Գեներալ-Մադաթովը, երբ մտավ Շուշի, իսկույն կալանավորեց Գալալյան Սարգիս կաթողիկոս Մետրոպոլիտին, Մելիք-Վանի Աթաբեկյանին և Մելիք-Ֆրեյդունյան Մելիք Հովսեփ Բ-ին: Որպես քաղաքական հանցագործներ առաջիններին աքսորեց Տփխիս, իսկ վերջիններին՝ Բաքու: Եթե կարելի է հանցանք համարել այն, որ նրանք ներկայացել էին Ռուսաստանի անհաշտ թշնամի Աբաս-Միրզային և

նրանից ազատություն խնդրել հայ գերիների համար: Ահա Մադաթովի ամբողջ ապացույցը: Այսպես վարձատրվեցին Ղարաբաղի հայ հոգևոր և աշխարհիկ ղեկավարները, բազմամյա, տաժանակիր և անձնվեր ծառայությունների համար: Մադաթովը, որ այնքան օգտակար եղավ Ռուսաստանին, այնքան էլ վնասակար եղավ վանքապատկան և մելիքապատկան հողերը հափշտակելով և դրանք ճըռ-խաներին նվիրելով: Ռուսաստանին մինչև վերջին շունչը հավատարիմ հայերը մի օրում ամեն ինչից զրկվեցին, իսկ Ռուսաստանին մինչև վերջին շունչը թշնամի ճըռ-խաները՝ հարստացան:

Աքսորյալները մնացին խոնավության, խավարի և սաստիկ հսկողության տակ, որպեսզի ոչ մեկին նամակներ չգրեին, հրավիրվեց դատ: Մանրակրկիտ քննություն անցկացվեց, հայտնի դարձավ նրանց անմեղությունը և այս տարի բանտերից ազատվեցին: Բայց անգամ ազատությունն ուրախալի չեղավ ամեն կողմից տուժած Ղարաբաղի ժողովրդի համար: Քանզի մահացավ Սարգիս կաթողիկոս Մետրոպոլիտը, իսկ անցյալ տարի հարազատ եղբայր Մելիք-Ալլահվերդի Բ-ն: Մելիք-Վանին և Մելիք-Հովսեփը ծանր հիվանդ են, քանի որ բանտերի խոնավությունը, ամբողջովին մաշել է նրանց առողջությունը: Կասկած չկա, որ Սարգիս կաթողիկոսի հետ մահացավ և մութ գերեզմաններում թաղվեց նաև Աղվանքի 1503 տարի ապրող կաթողիկոսությունը, իսկ Գալալյան տոհմի վերջին «Օրհնության ջիղ» Մելիք-Ալլահվերդի Բ-ի հետ՝ Խաչենի բազմադարյան մելիքությունը: Ավա՜ղ, այսպես կործանվեց մեր տոհմի իշխանական և քահանայապետական միացյալ գավազանը, քանի որ չեն թողնում, որ մեր ազգից մելիք ընտրվի, ուրեմն շուտով կմեռնի նաև Ղարաբաղի հայկական իշխանությունը՝ Մելիքությունը:

Բայց Աստծո ողորմությամբ ես դեռ կենդանի եմ, պետք է ամբողջ ուժով ձգտեմ վերացնել այդ կեղծ փաստաթղթերը և հետ բերեմ բոլոր հողերը, որ մեր սեփականությունն են, այլ ոչ թե՝ ճըռ-խաների ու ճըռ-բեկերի: Սուրբ գիրքը ասում է. «Արդարի ճշմարտությունը մեծ ու զորավոր է, քան անարդարինը, ամեն երկիր թող ապավինի ճշմարտությանը, և օրհնեն ճշմար-

տությունը, և ամեն գործ սկսեն, և դողան ճշմարտության համար, տեղ չտալով անիրավությանը»: Հույս ունեմ, որ Ռուսական կառավարությունը կճանաչի այս անժխտելի ճշմարտությունը, կփշրվեն բոլոր անիրավ խարդախությունները և այս ճշմարտությամբ մենք կրկին կտիրանանք մեր արդար իրավունքներին:

Մեհտի ճըռ-խանը, որ անթիվ չարիքներ և աններելի գործեր է կատարել Ռուսաստանի դեմ, չգիտեմ թե որ քավարանում սրբված, մտել է Շուշի: Հայ և թուրք ժողովուրդը մտածում են, որ երկրի վրա այլևս արդարություն չկա:

Հիմա ուրիշ բանից խոսենք: Ես մտադիր եմ երևան հանել Ղարաբաղի և Աղվանքի ամբողջ պատմությունը, և հրապարակայնորեն ցույց տալ աշխարհին Ղարաբաղի հարազատ մելիքների ծագումը, որը սկզբնավորվել է Առանից և հասնում է մինչև մեր օրերը: Քանի որ դու երկար ժամանակ Գանձասարի Ներսես կաթողիկոսի մոտ արտագրել ես այդ բոլոր պատմությունները, լավ գիտես, որ այդ անգին գանձերը թաքցված են, և որովհետև այժմ իմ ձեռքում չունեմ այդ ձեռագրերը, դիմում եմ քեզ: Լուսահոգի Սարգիս կաթողիկոսը մահանալու ժամանակ ինձ պատվիրեց շուտ արտագրել տալ այդ ձեռագիր պատմությունները: Երբ հարցրեցի, թե ուր են այդ ձեռագրերը, նա պատասխանեց. «Այդ գրքերը երեք տեղում թաքցրել են Մելիք-Աբով Գ-ն, Մելիք-Մեժլումը, Ազրայել-Աբրահամը, Տյոնմազ-Պելուն, Պրախմազ-Հովսեփը, Զափարը և Տելի-Մահրասան: Բացի Ազրայելից, ով բացակայում է, բոլորը մահացել են: Ես մտադիր էի Շահից խնդրել և վերադարձնել Ազրայելին, որպեսզի գտնեմ այդ ձեռագրերը, բայց ամեն ինչ խափանեց իմ անսպասելի բանտարկությունը, հիվանդագին վերադարձս և վերահաս մահս, որ այժմ ստիպում է ինձ հեռանալ այստեղից: Ուրեմն՝ շտապիր Փիլ-Առուշանին ուղարկել Ազրայելի մոտ և տեղեկանալով գտնել այդ ձեռագրերը, որպեսզի չոչնչանան՝ հողի կերակուր դառնալով: Գրիր Ազրայելին, որ Սարգիս Մետրոպոլիտը մահացավ, հավերժ հիշելով քո անունը և անգամ երկնքում աղոթելու է քեզ համար: Սիրելի Բեկնազարյանց, եթե դու չկարողանաս շու-

տով գալ Ղարաբաղ, գոնե նամակաբերիս ձեռքով գրիր ինձ այն ձեռագրերի պահպանման վայրերը, բայց նկարագրիր մանրակրկիտ անուններով, մոտակա նշաններով, և գտնելը հեշտացնող առարկաները ցույց տալով:

Ո՛ղջ եղեք Աստծով: Բաղդասար եպիսկոպոս Հասան Ջալալյան, 1828թ. Սեպտեմբերի 20, Գանձասար»:

Հայրս կարդալն ավարտելուց հետո, երկար ժամանակ տխուր մնաց: Կարծես ամենադառը մտածմունքները կրծում էին նրա միտքը, ուղեղը և սիրտը: Մի քանի անգամ հառաչեց, աչքերը բարձրացրեց երկնքին և մտքում աղոթեց: Ես նկատեցի, որ այդ նամակում գրված ցավը միախառնվելով մարմնի ցավի հետ, տխրեցնում էր հիվանդին: Վերջապես այս միախառնված ֆիզիկական և բարոյական ցավերը սպառեցին հորս ուժերը: Նա մի քահանա խնդրեց, խոստովանեց և հաղորդություն ստանալուց հետո, թույլ ձայնով գոչեց:

«Սիրելի-Փիլ Առուշան, վեր կա՛ց, զինվիր իմ զենքով, որ վերջին անգամ մի զինված հայրենակից տեսնեմ և հետո միայն հանգիստ մեռնեմ»:

Երբ հրամանը կատարվեց՝ հայրս նորից գոչեց: «Սիրելի Փիլ, իմ անզուգական պատերազմի ընկեր, այդ անգին զենքը, որով պաշտպանեցի սուրբ հայրենիքս և կյանքս, քեզ եմ նվիրում: Բայց մի փոքր էլ այստեղ մնա, ինձ քո ձեռքով գերեզմանում դիր, երեսիս 3 բուռ օրհնված հող լցրու, ապա Ղարաբաղ վերադարձիր, իմ կողմից ողջունիր իմ բոլոր քաջ ընկերներին և ասա նրանց, որ ես մեռա, նրանց հիշելով:

Հետո իր արխալուղի պինդ կարած ծոցագրպանի կարերը քանդելով մի կարմիր ծրար հանեց և այն ինձ տալով ասաց. «Դու՛ նույնպես, իմ սիրելի որդյակ Ապրես, վերցրու այս ծրարը: Դրա մեջ են Պետրոս Մեծի Ղարաբաղի հարազատ մելիքներին գրած, Եկատերինա Բ կայսրուհու Աղվանքի կաթողիկոսին և մելիքներին ուղարկած պայմանաթղթերի պատճենները: Սա այն գաղտնի գրված պայմանաթղթերի պատասխանների օրինակներն են, Հովսեփ Արղության եպիսկոպոսին, Ներսես Աշտարակեցի եպիսկոպոսին, Մինաս-աղա Լազարյանին, Մադաթովին,

Մելիք-Վանուն, մեծ-Երմոլովին Ներսես եպիսկոպոսի ձեռքով հայերեն գրել տված և ինձ ուղարկած ամենագաղտնի և վտանգավոր նամակները: Այս բոլոր թղթակցություններն են, որոնք վերաբերվում են Ռուսաստանի հայերի հետ կապված պայմաններին և գաղտնի հարաբերություններին: Ըստ ժամանակագրության կարգավորելով, տեղադրիր այն քո «Գաղտնիք Ղարաբաղի» պատմության մեջ, որով ընթերցողին հետաքրքիր կլինի քո պատմությունը և չեն կորչի Ղարաբաղի ձեռագիր պատմությունների նման: Հայոց պատմության վրա ինչքա՜ն լույս կսփռի ինչպես «Գաղտնիք Ղարաբաղին», այնպես էլ այս նամակները: Բայց զգուշացիր, որ քո պատմության գլխին փորձանք չգա:

Վերցրու այս բանալին, արկղիս մեջ 15000 թուման փող կա, որ քեզ համար եմ պահել: Կաշխատես վերադառնալ քո հայրենիք և ամուսնանալ խնածախում, որպեսզի Բեկնազարյան տոհմի շղթայի շարունակության օղակը քեզնով չվերջանա: Ապրի՛ր քո հայրենիքում, ինձնից կենդանի օրինակ վերցնելով՝ սիրի՛ր քո հայրենիքը, կրոնը, լեզուն: Բայց քանի դեռ այստեղ ես, օգնիր Հայաստանից գաղթած և այստեղ բնակված պանդուխտ եղբայրներիդ: Եվ վերջապես, իմ սիրելի որդյակ Ապրես, աշխատիր, որ քո կյանքի մնացած մասը ևս օգտակար լինի քեզ համար, ինչպես նաև հայ ազգի համար: Շուտ տպագրության չտաս «Գաղտնիք Ղարաբաղին», և քո կյանքը վտանգի չենթարկես:

Ես իմ կարողության չափով պատերազմեցի Ղարաբաղի թշնամիների դեմ, պաշտպանեցի սուրբ Հայրենիքս, Ազգս, Եկեղեցիս, Կրոնս և Լեզուս: Այսուհետև ասպարեզը թողնում եմ քեզ, իմ սիրելի որդյակ, քաջությամբ սիրիր քո Ազգը, Եկեղեցին և Լեզուն, ապրիր նրա գրկում, քանզի հայի համար դրանք են մխիթարություն, սրբություն և կյանք:

Իմ մահից հետո, Փիլ-Առուշանի ձեռքով գրիր Բաղդասար արքայազնին, որ ես չգիտեմ այդ ձեռագրերի տեղը, այլ միայն հաճախակի լսել եմ Մելիք-Մեջլումից, Մելիք-Աբովից, Պրախմազ-Հովսեփից, Թելի-Մահրասայից և Տյոնմազ-Պելուից, որ գրերի առաջին մասը թաղված է Գանձասարի և Խոթավան-

քի միջև մի քարայրում, որի մուտքը փակված է մի քարակերտ պատով, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մելիքարանի տակ, իսկ երրորդը՝ Հոռեկա վանքի մոտերքում»:

Հետո հայրս անկողնու մեջ ծնկի եկավ «Հավատանք Աստծուն»-ը ասաց և ապա թուլանալով՝ հոգին ավանդեց: Ես չեմ կարող նկարագրել այն դառը վշտերը և անփարատելի ցավերը, որ ապրեցի հորս մահվան պատճառով: Բայց շատ մխիթարվեցի հուղարկավորության փառավորությամբ, որ կարգադրել էր Աբաս-Միրզան: Հուղարկավորության հանդեսը կատարվեց զինվորական կարգով, որտեղ ներկա էին շատ բարձր զինվորականներ, Աբաս-Միրզան և ամբողջ հայ ժողովուրդը: Հորս մարմինը հոկտեմբերի 10-ին ամփոփվեց Թավրիզի հայկական եկեղեցու բակում, Մելիք-Աբովյան մելիքաժառանգ Առստամ-բեկի գերեզմանի մոտ:

Մի քանի օր հետո հորս մահվան մասին նամակներով հայտնեցի իր բոլոր բարեկամներին, որոնք վերցնելով՝ Փիլ-Առուշանը վերադարձավ Ղարաբաղ:

Երբ բացեցի այն ծրարը, որտեղ նամակների կրկնօրինակն է, որպեսզի տեղադրեմ այստեղ, Աստված իմ ինչ տեսա... Տեսա, որ մի տառ անգամ չեր մնացել այդ թղթերի վրա: Թղթերը քրտինքներից փտել, հաճախակի շարժումներից տրորվել, և տառերն ամբողջովին անհետացել էին: Քանի օր, գիշեր ու ցերեկ հայրս իր վրա էր կրում այդ ծրարը և թաքցնում անգամ ինձնից: Լացելով, ծրարով հանդերձ այրեցի այդ անօգուտ թղթերը:

ԾԹ.

1834թ. մահացավ Ֆաթալի-Շահը, և հանդիսավորությամբ թաղվեց շահերի հատուկ դամբարանում: Թեև գահակալությունը Մամաթ-Միրզային չէր պատկանում, բայց նրան հաջողվեց գահ բարձրանալ, ով և կոչվեց Մամաթ-Շահ:

Մամաթ-Շահը բնավորությամբ ազնիվ էր, տեսքով գեղե-

ցիկ, հայտնի էր իր հպարտությամբ և գթասրտությամբ: Կարիք չկա ասել, որ նրա օրոք շահական կարևոր պաշտոնները ևս հանձնվեցին հայերին:

1805թ. պատերազմի ժամանակ Ղարաբաղից Պարսկաստան տեղափոխված հայ գերիների մեջ հայտնի էին հաղրութեցի Հովսեփ Ներսիսյանցը և Փառուխ Ամիրխանյանցը: Նրանք լինելով խելացի պատանիներ, Աբաս-Միրզայի հոգատարությամբ, լավ կրթություն և պարսկերեն ուսում ստացան և, որպես գրագիր, մտան շահական արքունիք: Նրանք հետզհետե այնպես կատարելագործվեցին այդ մասնագիտության մեջ, որ մինչև անգամ ստացան «Միրզա» տիտղոսը: Նրանք անվանվեցին Միրզա-Յուսուֆ (Հովսեփ) և Միրզա-Ֆարուխ: Երկուսն էլ բնավորությամբ ազնիվ էին, ընկերասիրությամբ՝ անկեղծ, հայրենասիրությամբ՝ քաջ, կրոնասիրությամբ՝ ջերմեռանդ և աստվածապաշտությամբ՝ վառված ու բորբոքված: Ինչպես գինետան ծառայողներին, այնպես էլ շատ պարսիկների հայտնի էին նրանց քրիստոնեական հաստատուն հավատքը, անգայթակղելի հավատարմությունը: Մի խոսքով Պարսկաստանի պանդուխտ և ցեղակրոն հայերը պարծենում էին նրանց ճշմարիտ հայությամբ, մխիթարվում և սփոփվում էին և փորձում նրանց նմանվել: Սակայն այնուամենայնիվ «Գաղտնիք Ղարաբաղի»-ի գոյությունը նրանցից անգամ թաքցրեցի, ինչպես նախապես խոստացել էի հորս:

Մանավանդ հորս մահից հետո, նրանք դարձան իմ միակ մխիթարությունը և սփոփանքը: Բայց մի քանի տարուց հետո Միրզա-Յուսուֆը[1] և Միրզա-Ֆառուխը[2], իմ այս երկու աննման

---

[1] Հանգուցյալ Միրզա Յուսուֆը 3 բարեհիշատակ զավակներ է թողել՝ Նիկոլայ, Ալեքսանդր և Ներսես

[2] Ցավալի է տեսնել, որ Միրզա Ֆառուխը Պարսկաստանում գերի լինելով հանդերձ, բոլոր ճնշումներից և հրապուրանքներից անխախտ պահպանել է իր հայությունը, դավանանքը, եկեղեցին և կրոնը, իսկ նրա որդի Աբրահամ Ամիրխանյանն իր ազատ պահվածքով հանդերձ, ուրացավ իր առաքելական եկեղեցու անդամներին, կրծող ցեց համարելով նրանց: Ցանկանում էր այդ պարզամիտներին խլել ազգի ծոցից և խառնել օտար ազգի հետ: Ինչպիսի տարբերություն հոր և որդու արարքների միջև:

ընկերներն ազատության հրաման ստանալով, 1828թ. վերադարձան Ղարաբաղ:

Այս երկուսը, ովքեր հորս շնորհիվ ուսում էին ստացել և այդ աստիճան բարձրացել, հորս մահվամբ ինձնից պակաս ցավ չապրեցին: Ես նույնպես շատ խնդրեցի, որ ազատության հրաման ստանամ և հայրենիք վերադառնամ նրանց հետ: Բայց անկարելի եղավ: Քանի որ Աբաս-Միրզան միշտ պատճառաբանում էր, թե հորդ և քո ոխերիմ թշնամին Մեհտի ճրռ-խանը և Ջափար-Ղալի-աղան, որ աքսորից վերադարձել էր, քեզ կսպանեն, որ պատմական անհերքելի փաստը վկայում է որ Փանահ ճրռ-խանի տոհմն անազնիվ բնավորության տեր սերունդ էր և ընդհանրապես անմարդկային: Հետևաբար այս կեղծ ազգից ամեն ինչ կարելի էր սպասել: Իմ սիրելի ընկերների բացակայությամբ, իմ վիճակն էլ անտանելի դարձավ:

Սույն թվականի վերջին ամսում շատ մխիթարական նամակներ ստացա հորս այն բարեկամներից, որոնց արդեն հայտնել էի նրա մահվան ցավալի լուրը:

1836թ. Միրզա-Յուսուֆը և Միրզա-Ֆառուխն ինձ գրեցին այս նամակը: «Մենք մեծ ընդունելության արժանացանք Բաղդասար սրբազանի կողմից, բնակություն հաստատեցինք Շուշիում, ամուսնացանք և զբաղվում ենք պարսկերեն ուսուցանելով:

Բաղդասար Սրբազանը Մետրոպոլության տիտղոս ստանալով, Գանձասարից փոխադրվում է Շուշի և Էջմիածնի Ներսես Կաթողիկոսից Ղարաբաղի առաջնորդ է հաստատվում: Այս հաջորդի հսկողության ներքո և նախագահությամբ հաստատվում է մի հոգևոր կառավարություն «Կոնսիստորիա» անվանվամբ, որը պետք է քններ թեմի հոգևոր գործերը, դատեր և կարգադրեր: Այս հոգևոր իշխանությունը հաստատվեց այս տարի ռուսական «Պոլոժենիե» անվանումով մի օրինագրով:

Մեհտի-Ղուլի ճրռ-խանն աքսորից հետ դարձած Ջափար-Ղուլի ճրռ-աղայի, Միրզա-Ատի-Գյուլալի և բոլոր ճրռ-բեկերի գաղտնի թելադրանքով Ղարաբաղն ավազականոց դարձրեց: Գողությունը, ավազակությունը, հափշտակությունը, մարդաս-

պանությունն այստեղ սովորական են դառել:

Մեռած է Ղարաբաղի հարազատ և ճրռ-մելիքությունը, մահացած է հայ զինվորականությունը և զորքը: Մահացան Քյորօղլին, Զարպազանը, Փիլ-Առուշանը, Նյառաթյովը, Ազնավուրը, Գայլ-Ուհանը և 20 բալուջեցի քաջեր:

Բաղդասար Մետրոպոլիտին հաջողվեց գտնել թաքցրած ձեռագրերի մի մասը: Մի թուրք որսորդ պատահական մի քարայր է գտնում, որը լի էր գրքերով, իսկ դուռը ծածկված էր քարե պատով: Քարայրը գտնվում էր Գանձասարի և Թարթառ գետի միջև: Քարայրից գտնվեցին «Աղվանքի պատմություն»-ը, շահական հրամաններ և մի քանի եկեղեցական գրքեր: Բաղդասար Մետրոպոլիտը հետամուտ էր եղել գտնել նաև մյուս մասերը, դրա համար խուզարկուներին առատ վարձատրելով: Որքա՜ն ուրախալի կլինի, եթե գտնվեին և մյուս մասերը: Բաղդասար Մետրոպոլիտը ձգտում է հետ խլել ճրռ-բեկերից հափշտակված վանքապատկան հողերը: Անշուշտ կհաջողվի, քանի որ իր ձեռքում ունեն զորավոր փաստեր:

Ձեր սիրելի ընկերներ Միրզա-Յուսուֆ և Միրզա-Ֆառուխ»:

Կ.

Մտադիր լինելով Պարսկաստանից հեռանալ, ուրիշ հնարք մտածեցի: Այն է՝ Սբ. Երուսաղեմ ուխտի գնալ: Անցաթղթի հետ միասին ուխտագնացության հրաման ստացա: Միրզա-Յուսուֆին և Միրզա-Ֆառուխին նամակով հայտնեցի իմ Պարսկաստանից դուրս գալը, որպեսզի ինձ այլևս նամակ չգրեին և այդ նամակները ուրիշի ձեռքը չընկնեին և 1838թ. աշնանը հեռացա Թավրիզից:

Սբ. Երուսաղեմում ուխտելուց հետո, ինը տարի մնացի այնտեղ և ստացա այնտեղի միաբանի հատուկ կերպարանք՝ թե հագուստով և թե երկար մորուքով: 1846 թվականին ստացա Սրբազան կաթողիկոսի օրհնությունը և հրամանն ու հեռացա

Երուսաղեմից: Այդ ժամանակ կաթողիկոսը Մշո Գավառի Կոպ գյուղի Զաքարիա կաթողիկոս Տեր-Գրիգորյանցն էր, ով սուրբ Հակոբանց վանքի հայոց Միության գլուխն ու կառավարիչն էր:

Շրջեցի Հոպպե, Բեյրութ, Թարսիս, Կիլիկիա, Զեյթուն, Մարաշ, Հռոմկլա, Սիս, Երզնկա, Մանյա-Այր, Մեծ-Ներսեսի վանք, Կեսարիա, Նիկոմիդա, Արմաշի վանք, Կոնստանդնուպոլիս, Տրապիզոն, Կարին, Սբ. Կարապետ, Մուշ, Վան, Նարեկ, Վարագ, Աղթամար, Կտուց, Լիմ և Սբ. Ստեփանոս վանքերով, Էջմիածնի բոլոր վանքերով, Սևան, Գեղարդ, Խոր Վիրապ վանքերով, Հին Նախիջևանով, Ապրակունիսով, Տաթևով և Շուշիով:

Ես չեմ նկարագրում ոչ վանքերի, ոչ քաղաքների, ոչ միաբանության դիրքերը, գեղեցկությունները և այլն, և այլն, որոնք կապ չունեն այս պատմության հետ: Չեմ նկարագրում նաև այս շրջագայության ժամանակ Հայաստանում ապրած իմ տխուր զգացողությունները, այլ ցանկանում եմ ընթերցողին ծանոթացնել պատմության վերջաբանի հետ: Շրջագայությունս տևեց երեսունինը տարի: Ոսկու փոխարինած փողերս կարել էի աղքատի հնոտիների վրա՝ գողերից և հափշտակողներից անվնաս պաշտպանելու նախազգուշությամբ: Մեն-մենակ ապրում էի մի վանքում, աղոթում հանգուցյալ հորս և եղբայրներիս համար, առատ նվերներ շնորհում, ամենայն ջերմեռանդությամբ պատարագ մատուցել տալիս նրանց հոգիների համար և ապա հեռանում:

Պետք չէ մոռանալ, որ շատ վանքերում, քաղաքներում ու գյուղերում ինձ Սուրի գյուղացի խաչագողի տեղ դնելով, սառն էին ընդունում և հյուրընկալում: Բայց, այնուամենայնիվ, ես ստիպված էի այդ հնոտիները միշտ կրել: Այդ հնոտիների մեջ էին իմ հոգեպահուստ փողը և այս ձեռագիր պատմությունը, որի մեջ «Հայոց պատմության» համար թաքնված էին թանկագին նյութեր և հին գանձեր:

Ղարաբաղի հինգ գավառները շրջելու ժամանակ մի անբացատրելի տխրություն զգացի, քանի որ քայքայվել և ավերակ էին դարձել հինգ հարազատ մելիքների առանձին բերդերը, որոնք պատմական մեծ նշանակություն ունեին: Ավերակ տեսա

մելիքարանները, որոնք Ղարաբաղի հայերի բազմադարյա պա-
լատներն էին: Մեռած գտա բոլոր հարազատ մելիքներին և ճըռ-
մելիք Ղահրամանին[1], մեռած գտա հարազատ մելիքությունը,
բոլոր քաջերին և զինվորականներին:

Թեև միայն մի մելիք թողել է իր հետագա սերունդը, ինչ-
պիսիք են՝ Մելիք-Եսայանները, Մելիք-Շահնազարյանները, Մե-
լիք-Բեգլարյանները, Ամբաբեկյանները, Ջալալյանները և ճըռ-
Մելիք-Միրզախանյանները: Բայց այս սերնդի մեծ մասը ցանկա-
նում էր տերության ծառայության մեջ մտնել և ձեռք բերել զա-
նազան տիտղոսներ, շքանշաններ և աստիճան, թոշակ ստանալ
և դրանով զեկավարվել: Բոլոր գյուղերում տեսա սևացած, ցեց
կերած և անօգտագործելի զենքեր, որոնք կախված էին այուներ-
ի վրայից: Երբ հարցնում էի անգործածության պատճառները,
վերագրում էին ժամանակի փոփոխությանը:

Բայց ամբողջովին կենդանի գտա ճըռ-խանությունը,
ճըռ-բեկությունը և նրանցից ոմանց ձեռքերով կատարված և
կատարվող գողությունները, սպանությունները, հափշտակու-
թյունները և չարագործությունները, որոնք պահպանվել էին և
դեռ կպահպանվեն, քանի պաշտոնյաները կամքով թույլ են: Տե-
սա նաև որ Ղարաբաղի վանքապատկան և մելիքապատկան հո-
ղերի մեծ մասը այդ ճըռ-խաների ձեռքում է, որոնք վնասակար
են ինչպես ռուսական կառավարության, այնպես էլ Ղարաբաղի
հայության համար:

Բաղդասար Մետրոպոլիտի հետ մահացան վանքերի պայ-
ծառությունը, ճոխ միաբանությունները և ստեղծած գեղեցկու-
թյունները: Այս ամենի պատճառն այն է, որ այդ ազգային բազ-
մադարյան հաստատությունները պահպանող հողերը վանքերից
հափշտակած և տրված է ճըռ-մելիքներին:

Մի շաբաթ մնացի Բալլուջա գյուղում և 10 օր՝ Խնածախ
գյուղում: Տեսա բոլոր քաջերի թոռներին, ծոռներին, ովքեր երկ-
րագործությամբ էին զբաղվում և պահպանում էին իրենց նախ-

[1] Մելիք Միրզախանյանների վերջին մելիքն է:

նիների քաջ ոգին ու հայրենասիրության նշանները: Միայն Սենեկյար Ասրին զավակ չուներ, քանի որ ամուլ էր:

Իմ մոր եղբայր Օշափ-Բաղդասարի տանը մնացի երկու օր, բայց առանց ծանոթանալու: Պետք է ասել, որ ավելի մեծ հյուրասիրություն ցույց տվեցին ինձ Օշափ-Բաղդասարի, Քյանդխուդա-Խաչատուրի թոռները և Զափար-Սարասարի թոռը:

Միայնակ գնացի հանգստարան: Խիստ դժվարությամբ գտա մորս ու եղբորս շիրիմները, որոնք շրջապատված էին շատ գերեզմաններով: Այդ գերեզմաններն իմ մանկության ժամանակ չկային: Բայց քանի որ միայնակ էի, խոստովանում եմ՝ շատ լաց եղա, քանի որ խիղճս ինձ հանգիստ չէր տալիս: Հորս վերջին ցանկությունը չէի կատարել, այն է՝ ես չէի ամուսնացել և զավակ չունեի և ինձնով կընդհատվեր Բեկնազարյանցների տոհմի շղթան: Խոստովանում եմ մեղքս, փոխանակ պապիս և հորս նման պատերազմի դաշտում քաջությամբ կրթվելու և քաջանալու, ես իմ կյանքն անցկացրեցի արքունատան ու ճանապարհորդությունների մեջ և ստացել էի մի տեսակ վախկոտ, խեղծ և կասկածամիտ բնավորություն: Ահա սրանք են Ղարաբաղ վերադառնալու և իմ չամուսնանալու պատճառները: Զարմանալի՛ երևույթ, անգամ ծերության ժամանակ վախենում եմ մահից և զգուշանում կյանքից: Այսքան ուժեղ ներգործություն ունեն մարդու վրա պատերազմական կրթությունը և դիվանական խեղճության ունակությունները:

Հետո գնացի տեսնել այն տանձի ծառը, որը կոչվում էր «Բեկնազարյանց տանձենի»[1]: Բայց ավա՜ղ, այն ևս մեռած կամ ավելի լավ է ասել՝ սպանված գտա և շատ տխրեցի: Այդ ճըռերը, ովքեր ուզում էին սպանել և՛ ինձ, և՛ հորս, որ հետապնդում էին բնաջնջել Բեկնազարյանց ցեղի հիշատակը, ահա այդ ճըռերից մեկը, այսինքն՝ Խնածախում բնակվող Ապրահ ճըռ-բեկի թոռան Մամաթ ճըռ-աղայի սպասավոր Ալջափար անունով անի-

[1] Ցայսօր այդպես է կոչվում հանդավայրը և այնտեղ աճած տանձենին, որը շատ պտղաբեր է:

ծյալ թուրքն էր երեք օր առաջ կտրել այդ ծառն արմատից: Մեր ազգանունի հիշատակը միայն այդ ծառով էր կենդանի մնացել խնածախ գյուղի ժողովրդի մեջ: Այդ ծառը ևս մահացավ, շու-տով մահանալու եմ և ես: Ուրեմն մեր ազգատոհմի միակ հիշա-տակը մնում է սույն «Գաղտնիք Ղարաբաղի» պատմությունը, եթե, իհարկե, այն լույս տեսնի և չմեռնի անգութ մարդկանց ձեռքով:

Վերջ

Ահա Մեհտի-Խանի մեղայականի կրկնօրինակը, որը ձեռք ենք բերել մեր ամենասիրելի բարեկամ գնդապետ Հակոբ Դավի-թիչ Լազարևի շնորհիվ, բայց այն ամենամեծ տարբերություններ-ը, որ կան Մեհտի Ղուլի խանի Աբաս-Միրզային և Կ.Ն. Աբխա-զովին գրած նամակների մեջ, թողնում ենք, որ խելացի ընթեր-ցողները կարդան, համեմատեն, քննադատեն և որոշեն որպես անկողմնակալ քննիչ և դատավոր:

Մեհտի-Ղուլի խանի նամակը Կ. Ն. Աբխազովին, 1827թ. հունիսի 21: (Թարգմանություն պարսկերենից[1]):

«Երբ 1816թ-ին (Մեծ) Երմոլովն այստեղ (Անդրկովկա-սում) նշանակվել էր գլխավոր հրամանատար, ես կատարեցի այն, ինչ որ ինձանից պահանջում էր ծառայողական պարտակա-նություններս: Այդ ժամանակ Երմոլովի մոտ էր և Մադաթովը: Երկու օր գտնվելով նրանց մոտ, ինձ առաջարկեցին, որ Ղարա-բաղը հանձնեմ Կայսերը: Քանի որ ես Ռուսաստանի անձնվեր ծառան եմ, ուստի այդ նահանգը ևս պատկանում էր նորին Կայ-սերական Մեծությանը, իսկ ես բնակվում եմ նրա բարձր հովա-նու տակ, կկատարեմ այն ամենը, ինչ որ պահանջում է ջերմե-ռանդությունը»: Այնուհետև ինձ մոտ եկավ գեներալ-Մադաթո-վը և ասաց. «Ցանկանում եմ քեզանից խլել նահանգը և խա-նությունը, բայց դու միացիր ինձ և հետ ինձ նվիրիր քո հողե-րից և նպատակներից մի քանիսը, իսկ ես այսուհետ այնպես կա-նօրինեմ, որ քեզանից ո՛չ նահանգը կխլեմ և ո՛չ էլ խանու-թյունն ու այս մտքով քեզ փաստաթուղթ կտամ: Այնուհետև բերեցին ավետարանը, որով էլ երդվեց մի քանի անձանց ներ-կայությամբ և թուղթ գրեց, որն այժմ ինձ մոտ է գտնվում: Այդ թղթի մեջ ասվում է, որ այսուհետև ոչինչ իմ դեմ չի գործելու և չի թողնելու որևէ մեկի կողմից, անգամ Երմոլովի կողմից

---

[1] Տես VII том, Акты Археографической Коммисии, изд. Берже.

որևէ վնաս հասցնել ինձ: Այս երդումից հետո նա ինձնից վերցրեց գյուղերը, արտերը, ամառանոցները, ձմեռանոցները և կապալները, որոնք գրամով էին իրերով և գրավականներով:

Գեներալ-Երմոլովը որոշ ժամանակ անց գնաց Պարսկաստան, իսկ Գեներալ-Կուտուզովը պահանջեց ինձանից բացատրություն: Թե արդյոք Մադաթովը կնյազական ծագում ունի, թե ոչ և նմանատիպ տեղեկություն այն մասին, թե արդյոք ես իմ կամքով եմ տվել այդ գյուղերը կամ թե նա է բռնի խլել ինձնից, կամ թե վաղուց էին նրան պատկանում այդ գյուղերը: Որովհետև Ղարաբաղում Մադաթովը մի հասարակ հայ էր (նրա հայրը, ում անունը Գեորգի (Գրիգոր) էր, հարկատու էր, ուրեմն նա նույնպես ստոր դասակարգի մարդկանցից էր, մանավանդ նա անգամ տանուտեր չէր, այլ հասարակ մարդ էր) այդ ինչպես կարող է նա հողեր և հարկատուներ ունենալ: Ես նրանից վախենալով պատասխանեցի, որ այդ գյուղերը ես եմ տվել նրան, ոչ թե աչքերիս առաջ ունենալով նրա կնյազության արժանավորությունը, այլ ինչպես մի կայսեր գեներալի: Այսուհետև Կուտուզովը կրկին անգամ գրեց, որ Կայսրը շատ զինվորներ ունի և եթե ես յուրաքանչյուրին տամ այդքան գյուղ, ապա ի՞նչ կմնա ինձ: Այսպես անցավ մի որոշ ժամանակ: Այդ ժամանակ, երբ Պարսկաստանից վերադարձավ Երմոլովը, այդ ժամանակ հայտնի դարձավ, որ Կուտուզովն ամեն ինչ հասկանալով հրամայել էր ինձ, որ ես Մադաթովից հետ վերցնեմ իմ հողերը, հետևաբար ես նրանից հետ վերցրի բոլորը: Սրանից հետո շուտով մահացավ գեներալ Կուտուզովը:

Երմոլովը կրկին ինձ ուղարկեց իր սեփական ձեռքով գրած և Մադաթով Միրզաջանի միջոցով թարգմանված մի թուղթ (որը թարգմանել էր Երմոլովի մոտ), որով հրամայում էր գյուղերը տալ Մադաթովին: Չիմանալով ինչ անել, ես այդ թուղթը ցույց տվեցի գեներալ Հախվերդովին, Պավել Իվանովիչ Մակիլևսկու և Կապիտան-Մուրաչովին, խորհուրդ հարցնելով, թե ինչ անեմ: Սակայն նրանք ոչ մի խորհուրդ չտվեցին: Այսպիսով, ես ճարահատյալ մի թուղթ տվի Մադաթովին՝ գլխավոր կառավարչի հրամանի համաձայն: Մադաթովն այս թուղթը

ստանալուց հետո գաղտնի խորհրդակցեց Երմոլովի հետ և խնդրեց Կայսերը ուղարկել այն թուղթը, որի տրամադրությամբ ես նրան էի տվել գյուղերը և մնացած ամեն ինչ: Որոշ ժամանակ հետո նա վերադարձավ և հայտնեց ինձ, որ Կայսրը հաստատել է նրա թուղթը: Նրան իմ տված գյուղերը և հողերը բավական չեն իր համար, ուստի պետք է նույն թղթի մեջ ավելացնել ևս մի քանի ուրիշ հողեր, որոնց մասին ոչ մեկը չպետք էր իմանար և որով կճշտվեին նրա գործերը: Ուստի ես այդ թղթում ավելացրի ուրիշ գյուղեր, հողեր և թափառական ժողովուրդ, որոնցից մեկը Գարա-Թեմիլու անվանումով թափառական ժողովուրդն էր, որ հնուց պատկանում էր Ղարաբաղին (մելիքներին), բայց հետո Ղարաբաղից դուրս գալով բնակվում են Բորչալուի գավառում: Հետո հողի պակասության պատճառով, թույլտվություն խնդրեցին Երմոլովից, որ նորից գան Ղարաբաղ և նրանց թույլ տրվեց: Այդ ժամանակ բարձրագույն ատյանները նրանցից սկսեցին պահանջել հարկերը, որոնք ես հավաքում էի Արքունի պալատ ուղարկելու համար: Այդ թղթում Մադաթովն ավելացրեց նաև այդ թափառական ժողովրդին, նման ձև վարվեց նաև Ղլիճու կոչվող թափառական ցեղի հետ: Շամախիի Մուստաֆա-խանի հեռանալուց հետո այդ ցեղը բնակվեց նաև Շաքիում և ապա Ղարաբաղում: Բայց դրանից հետո նա հրամայեց գծագրել երկրաչափորեն, որով իրեն էր սեփականացնում Ղարաբաղի կեսը, այն է՝ ամառանոցները, ձմեռանոցները, և թափառական ցեղերը: Ես այդ ծրագրի մասին ո՛չ տեղեկություն ունեմ, և ո՛չ էլ փաստաթուղթ եմ տրամադրել այն իրագործելու համար: Նույն թղթի մեջ նա ավելացնում էր նաև ներկարարության կապալը և Ավետարանոցի կապալը, որը գտնվում է գյուղերի միջև: Հաջորդ տարի հրամայեց հարկ սահմանել վրացի սայլապանների համար, ովքեր երթևեկում էին Կուր գետի ափերով: Այնուհետև, նա տիրեց նաև անցաթղթի կապալին, որով ամեն տարի և ամեն ամիս, ինչ-որ նա մտածում էր և ինչ-որ նրան հարկավոր էր այդ գյուղերից, ավելացնում էր այդ թղթում: Տիրում էր հողերին, գյուղերին, և այսպիսի կապալներին: Բայց մի քանի ամսվա ընթացքում ես նրան տվել եմ 500 ոսկի, որը պար-

տավորվում էին վճարել նշված գյուղերը, իսկ նա նախապես հավաքել էր այդ գումարը գյուղերից և դրանով Թիֆլիսում կառուցել իր համար մի գեղեցիկ առանձնատուն: Դրա համար նա տարել էր մշակներ, բեռնակիրներ և Ավետարանոցի իր շինության համար կենդանիներ: Այդ ամենի մասին ես ոչ-ոքի ոչինչ չասացի: Խորհատ գյուղը ես տվել եմ նրա հորեղբորը՝ Պետրոսին և տարբեր առիթներով մի քանի գյուղեր իր եղբոր որդիներին՝ Միրզաջանին և մյուսներին: Այդպես, ըստ իր ցանկության գլուխ բերեց իր գործերը և ազգականների գործերը: Հետո նա ինձնից խնդրեց մի թուղթ, այն նպատակով, որ Երմոլովի որդիները՝ Բախտիարն ու Ալլահյարը հաշտվեին Իբրահիմ խանի որդիների հետ: Ես չհամաձայնվեցի, ուստի նա բարկացավ և գնաց Թիֆլիս: Վերադառնալուց հետո հրամայեց, որ ոչ ոք չգա նրա մոտ և բոլոր պաշտոնյաներին ամրոցում (Շուշի) հավաքելով, ասաց որ ես ոչ մի բանի չխառնվեմ: Այդպես ես մնացի միայնակ:

Սրանից հետո նա մտածեց խորամանկություններ և բամբասանքներ, իմանալով թե կարող է ես փախչեմ Ղարաբաղից: Ես ոչինչ չարեցի, համբերեցի և հանգիստ մնացի իմ տեղում: Վերջապես ես ցանկացա գնալ նրա մոտ և խոսել նրա՝ իմ դեմ ցուցաբերած վերաբերմունքից, սակայն նա ինձ իր մոտ չթողեց: Այլ այնպիսի բաներ արեց, որոնց մասին պատմելը չափազանց երկար կլինի: Ի վերջո նա բանտարկեց Կապիտան Ռուստամ բեկին, ցուցակագրեց նրա ունեցվածքը և նրանից խլեց շարժական և անշարժ գույքը:

Ես չիմանալով թե ինչ անեի, խնդրեցի նրան իմ մոտ ուղարկել քեռի Պետրոսին: Նա այդպես էլ արեց: Ես ասացի նրան, որ ամեն բան, ինչ-որ Գեներալը պահանջեց խոնարհաբար նրան տվեցի, այժմ ես այդ պատճառով ցանկանում եմ իմ հողերը թողնել Կայսրին, բայց այն պայմանով, որ ինձ թույլատրվեր իմ կյանքի մնացած մասն անցկացնել հայրենիքում: Իսկ նա պատասխանեց, որ այսպիսի առաջարկությունները չեն անցնի: Նա ասում էր. «Դու զրկված ես խանությունից և եթե ցանկանում ես մնալ այստեղ՝ այն ժամանակ բանտարկված կլինես»: Ղարա-

բաղցիներից ոչ ոք չկար ինձ մոտ, բացի Միրզա-Ատի-Գյոզալից, այդ իսկ պատճառով ես նրան ուղարկեցի Պետրոսի մոտ, որ նա խնդրի Կապիտան Ռուստամ-բեկի խառնակչությունից ազատելու հնար:

Հետո, երբ ես ոչ մի ընդդիմություն չցուցաբերեցի, նրա խարդախություններն իզուր անցան: Մտադրվեցի, ինչ էլ որ լինի, գնալ Թիֆլիս և մեկ առ մեկ պատմեմ նրա բոլոր արաքների մասին: Բայց հանկարծ լուր եկավ, որ գնդապետ Ջափար-Ղուլի-Աղային[1] վիրավորել են հրազենով: Մադաթովն իսկույն հայտարարեց, որ դա իմ ձեռքի գործն է, և ես դա արել եմ ատելությունից: Մարդիկ ուղարկեց, ովքեր բռնեցին և բերեցին իմ երկու ծառաներին, նրանց գախտնի հարցաքննեցին և իսկույն բանտարկեցին: Այդ իրողությունն ինձ գցեց իմ վիճակի նկատմամբ տարակուսանքի մեջ և ես մտածեցի գնալ Թարթառ, այնտեղ որոշ մարդիկ գտնել և նրանց հետ մեկնել Թիֆլիս՝ իմ դրությունը բացատրելու, սակայն մելիք Վանին, որին հրամայված էր ոչ միայն իմ Թիֆլիս գնալուն խոչընդոտել, այլ նաև դուրս չգալ Ղարաբաղից, հասավ ինձ, և ես, երկյուղելով, գնացի Երևան: Ճշմարիտն ասած՝ ես չպետք է դուրս գայի Ղարաբաղից, բայց որովհետև Ջաֆար-Ղուլի-աղայի հետ պատահած դիպվածը կարող էր պատուհասել նաև ինձ, փրկվելու համար մեկնեցի Երևան: Չնայած գնացի, սակայն չդրժեցի Թագավոր-Կայսրին տված իմ երդումը, որտեղ էլ որ գտնվում էի, արտահայտում էի իմ ջերմեռանդությունն ու հպատակությունը: Իմ մեկնելուց հետո, Մաշատի-Ղասումի դրդմամբ, Մադաթովը հրամայում է բանտարկել Ռուստամ-բեկին և Միրզա-Ատի-Կեոզալին և խոստանում ազատել նրանց միայն այն ժամանակ, եթե նրանք կկնքեն այն թուղթը, որով գյուղերը, հողերն ու այգիները ընծայվում են Մեհտի-Ղուլի-

[1] Սա նույն Ջափար Ղուլի Աղան է, որ բազում անգամներ պարսկական զորքը Աբաս Միրզայի հետ Ղարաբաղ է առաջնորդել և Սուլթանապատում կոտորել տվել 500 զինվոր և մի անգամ, Սիբիր աքսորվելու ժամանակ Թարթառ գետով փախավ Պարսկաստան:

խանին: Հետո բերում են կնիքը, որ ես մոռացել-թողել էի, գրում են մի թուղթ՝ գյուղերը, հողերը, այգիները և մնացած ամեն ինչ հանձնելու մասին, բռնի խլում է նրանցից (կնիքը): Ինձ պատկանող ձիերը, եղջերավոր, բեռնակիր և մյուս չլրքոտանիները, այն ամենը, ինչ լավ էր, որոշում է պահել իր համար, իսկ մնացածները հանձնում է արքունիք: Այդ ժամանակ Պարսկաստանի և Ռուսաստանի միջև խաղաղություն կնքվեց, և ես, կյանքս փրկելու համար, մեկնեցի Պարսկաստան՝ սպասելով, որ ինձ նեղացնողները հեռացված կլինեն երկրից, և, պաշտպաններ գտնելով, կկարողանամ իմ խնդրանքը հասցնել Թագավորին:

Այս նպատակով Ալի-բեկին Պարսկաստանից ուղարկեցի Մազարովչի մոտ: Ալի-բեկի միջոցով ինձ հայտնեցին, որ ինձ Թիֆլիսով գնալ չեն թույլատրել, և հազիվ թե կարողանալի գնալ Տաճկաստանով: Ինձ մնաց սպասել հարմար դիպվածի: Այժմ, գոհություն Աստծո, ողորմած և մեծապանծ գործերով հայտնի մի նոր Գլխավոր-Կառավարիչ կա: Աղոթում եմ, որ իմ խնդրագիրը որչափ կարելի է փութով հասցվի Գլխավոր-Կառավարչին այն պայմանով, որ նա իմ գարշապարը մատուցի իմ Մեծ Թագավորին»:

ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆՑ

ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ

Վերահրատարակման
հեղինակ՝ **Նելսոն ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Էջադրումը՝ Մնացական ԱԶԻԶՅԱՆԻ
Համակարգչային
շարվածքն ու
սրբագրությունը՝ Կարինե ԲԱԽՇԻՅԱՆԻ
Անի ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
Լուսինե ԷԼՅԱԶՅԱՆԻ
Սաթենիկ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ։ Թուղթը՝ օֆսեթ։ Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 21 տպ. մամուլ։ Տպաքանակը՝ 1000։ Գինը՝ պայմանագրային։

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում։
375000, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25
Հեռ. /+374/47946360, /+374/97302002 Էլ. հասցե՝ dizak-plus@mail.ru